ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

3

2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

2023, 3 (224)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
PUBLISHING HOUSE «GITUTYUN» NAS RA

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN
2023

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

The journal has been published since 1958
Editor-founder M. G. Nersisyan

Խմբագրական խորհուրդ

Նախագահ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ
Անդամներ՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ, ԲԱՐԴԱԿՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ),
ԶԵՔԻՅԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ,
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ,
ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ),
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН
Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН
Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНЯН
Ответственный секретарь – СТЕПА ПЕТОЯН
Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕЛ, БАРДАКЧЯН ГЕВОРГ (США),
ЗЕКИЯН ЛЕВОН (Италия), КАТВАЛЯН ВИКТОР, АСРАТЯН МУРАД,
ОГАНИСЯН ГЕНРИК, ОГАНЕСЯН НИКОЛАЙ, МУРАДЯН САМВЕЛ,
ТЕР-ГЕВОНДЯН ВААН, ТЕРЯН АБРААМ (США), ТОНАПЕТЯН АНАИТ (Франция)

Editorial Board

Chair: ASHOT MELKONYAN
Editor-in-Chief: ANUSHAVAN ZAKARYAN
Deputy Editor-in-Chief: AELITA DOLUKHANYAN
Responsible secretary: STYOPA PETOYAN
Members: ABRAHAMYAN LEVON, AVETISYAN PAVEL, BARDAKJIAN KEVORK (USA),
ZEKIYAN LEVON (Italy), KATVALYAN VIKTOR, HASRATYAN MURAD,
HOVHANNISYAN HENRIK, HOVHANNISYAN NIKOLAY, MURADYAN SAMVEL,
TER-GHEVONDYAN VAHAN, TERIAN ABRAHAM (USA), TONAPETYAN ANAHIT (France)

Պատմաբանասիրական հանդես, 2023
© Историко-филологический журнал, 2023
Historical and Philological Journal, 2023

Հապավումը՝ ՊԲՀ
Аббревиатура – ИФЖ
Abbreviation: HPhJ

ՀՏԴ 070(479.25) + 947.25
Doi:10.54503/0135-0536-2023.3-3

ON THE 65-TH ANNIVERSARY OF THE
«HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL»

UNFAILING DEVOTION*

LILIT HOVHANNISYAN

This year marked the 65th anniversary of the “Historical and Philological Journal” of the National Academy of Sciences of the Republic of Armenia. The journal has its specific role in the centuries-old history of the Armenian scientific periodicals. For more than six decades, having gone through a difficult and complicated scientific-research, scientific-organizational and scientific-publishing way, the journal has become not only one of the authoritative publications in the field of Armenian studies, successfully fulfilling its program tasks, but also a well-known school for the preparation of scientific specialists.

The journal was founded in 1958, during the period of the “Khrushchev Thaw” in the USSR that began in the mid-1950s, also the rapid development of the Soviet economy, education and science, and the awakening of Armenian national self-awareness.

The “Historical and Philological Journal” began to be published when the Academy of Sciences of the Armenian SSR already had a periodical of social science and Armenian studies: “Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR: Social sciences”, founded in 1940 [in 1940–1943 it was called “Bulletin” of social and natural sciences (of Armenian branch of the USSR Academy of Sciences), and since 1966, it has been called “Herald of Social Sciences”]. That is why it was more important to clearly define the goals and objectives of the journal.

The first issue of the journal, created by the decision of the Presidium of the Academy of Sciences of Arm. SSR, was published in 1958. It was opened with the introductory article “From the Editorial staff”, in which the program goals and objectives of the new Armenological edition were presented. According to it, the main goal of the journal is to support the discussion and solution of the unelucidated problems and questions in need of scientific scrutiny and reappraisal from the standpoint of modernity in the field of historical-philological sciences. Then, the directions of the activity that have always been primary for the periodical are listed in detail: the elucidation both of the issues of history, language, literature, philosophy, art

* Submitted on 15. XI. 2023, approved for publication on 29. XI. 2023.

and other fields of culture of the Armenian people, the theoretical problems of Armenian studies in general, political, economic and cultural relations of the Armenian people with other peoples, also the contribution to the discussion of scientific problems, the dilatation of creative debates and the publication of originals, reviews, scientific news and information (1958, № 1, pp. 3-4). In addition, one of the most important tasks of the journal is to acquaint Armenian readers abroad with the works of Armenian scientific research institutions, as well as to inform Armenian readers about the works of foreign Armenologists. The main goal of the periodical is to unite Armenian and foreign scientists around the journal and contribute to the further development of Armenian studies with joint efforts. Emphasizing the creation and activity of the Armenological journal of the Academy of Sciences, academician Joseph Orbeli in his letter to the editors on July 28, 1960 evaluates the "Historical and Philological Journal" as a "serious academic journal", the entry of which into arena was determined by such social prerequisites as universal progress and the aspiration of the Armenian people to value its past.

Such well-known historians and philologists as Babken Arakelyan, Sen Arevshatyan (Secretary-in-Chief), H. G. Grigoryan (Deputy Editor-in-Chief), Suren Yeremyan, Levon Khachikyan, Artashes Karinyan, V. E. Hamazaspyan, Ashot Hovhannisyan, Gurgen Hovnan, Ararat Gharibyan, Vache Nalbandyan were included in the Editorial board of the new periodical established by the decision of the Presidency of the Academy of Sciences. A prominent historian, Vice-president of the Academy of Sciences, Academician Mkrtich Nersisyan was appointed the Editor-in-Chief and supervised the journal for over forty years. Thanks to his efforts, the journal has become the most prestigious Armenological periodical with international recognition. After his death in 1999, this post was entrusted to Academician of NAS RA, prominent historian Vardges Mikaelyan. In 2005, after his decease, one issue of the journal was edited by the Doctor of historical sciences Paruyr Muradyan; the next was edited by the Deputy Editor-in-Chief and Secretary-in-Chief of the journal, Doctor of philological sciences Anushavan Zakaryan. In 2006 the well-known philologist-folklorist, Corresponding member of the NAS RA Sargis Harutyunyan was elected Editor-in-Chief of the journal. Since June 13, 2018, the periodical has been headed by A. Zakaryan. And Academician of the NAS RA Ashot Melkonyan is the Chairman of the Editorial board of the same journal. They are both elected by the Presidium of NAS RA.

During the past years, the journal's Editorial board included such famous Armenologists and Orientalists as: Boris Piotrovsky, Ilia Abuladze, Vlad Bănăţeanu, Aram Ghanalanyan, Karo Ghafadaryan, Gevorg Jahukyan, Edvard Jrbashyan, Gagik Sargsyan, Gevorg Brutyan, Emanuel Pivazyan, Hrach Bartikyan, Vardan Devrikyan. Currently, the Editorial board consists of: Academician of the NAS RA Ashot Melkonyan (Chairman), Correspondent members of the NAS: Aelita Dolukhanyan (Deputy Editor-in-Chief), Levon

Abrahamyan, Pavel Avetisyan, Murad Hasratyan, Henrik Hovhannisyan, Doctors of philology: Professor Samvel Muradyan, Victor Katvalyan, Anushavan Zakaryan (Chief Editor), Doctors of historical sciences: Professor Nikolay Hovhannisyan, Vahan Ter-Ghevondyan, Foreign members of the NAS, Professors: Gevorg Bardakchyan and Abraham Teryan (USA), Levon Zekiyan (Italy), Anahit Tonapetyan (France). Styopa Petoyan is the Secretary-in-Chief of the journal.

Throughout its existence, "Historical and Philological Journal" has been steadily published with content consistent with its program objectives and tasks. From the first issue of the periodical, its content structure was also formed and has been preserved the same for years. The sections and subsections of the journal ("Articles", "Reports", "Debates", "Historical and cultural reviews", "Publications", "Discussions", "Reviews", "Armenian Diaspora Life", "Our honoured scholars", "Scientific news", "Scientific life", "Our Jubilees", "Letter to the Editorial board") were subsequently subjected to some additions and adjustments. The works of Armenian and foreign specialists, in which the various problems of history, literature, language, folklore, ethnography, archeology, lithography, philosophy, law, arts, architecture of the Armenian people in different eras, as well as the important scientific and cultural events in Armenia, Diaspora and abroad are analyzed, the life and activities of prominent Armenologists are presented, and are included in sections of articles, reports, publications and discussions (previously: debates). The journal has a significant contribution to the field of Caucasian studies, Oriental studies, and Byzantine studies. As a periodical with wide scientific coverage, "Historical and Philological Journal" always focuses on problems of general cultural and historical interest, which further expands the journal's scientific field of view. It should be noted that the materials published in the journal are distinguished by a rich source and historiographical base.

Unpublished letters from prominent figures in science and culture, as well as archival documents of various kinds are regularly published, important publications of Armenian, oriental and general cultural significance are analyzed, the historical and cultural life of Armenian colonies is comprehensively elucidated, information about important anniversaries, Armenian and international conferences is presented in sections "Reviews", "Our Jubilees", "Scientific life" and "News" (previously: "Scientific news", "Scientific information") of the journal.

The editors of "Historical and Philological Journal" are also consistent in publishing new sources, materials summarizing the results of archaeological excavations, and newly discovered bibliographic documents. The editors of the periodical, showing high professionalism and dedication to their work, managed to gather around the journal many Armenian and foreign scientists from Armenia, Transcaucasia, Russia, Ukraine, Moldova, Europe, the countries of the Near and Middle East, and America. Thanks to this, "Historical and Philological Journal" not only successfully completed its

tasks, but also contributed to the development of creative discussions, the establishment of scientific connections and cooperation in the field of studying Armenian history and culture. The following foreign scientists have collaborated with the journal: D. Angelov, V. Guzelev from Bulgaria, L. Motalova from Czechoslovakia, V. Bănăţeanu (for many years he was also a member of the Editorial Board) from Romania, J. F. Bonfante, V. Pisani, P. Cuneo, A. Alpago-Novello, J. Longo, Al. Orengo from Italy, F. Feydit, J.-P. Mahé, Ch. Renu from France, R. Thomson, J. Greppin, R. Jacobson, D. Stronach, E. R. Anderson from the USA, St. Michael, M. Stone from the Netherlands, J. J. Wittenberg from Belgium, E. Schutz, J. Trocani, E. Kibshan from Hungary, H. Walter Paul from Germany, V. Toporov, O. Shirokov, T. Ismayilova, A. Tereshchenko and Y. Baranov from Russia, I. Kripyakevich, N. Rashban, S. Averbuch, A. Zinczenko, S. Y. Dashkevich, A. Bozhko and I. Hayuk from Ukraine, I. Abuladze (he was also a member of the Editorial Board) D. Chkhikishvili, G. Melikishvili from Georgia, Vl. Besolov from the Republic of North Ossetia-Alania, M. Malek Mohammad and A. Yahyamasihi from Iran, B. Bilmez from Turkey and many others. Such a large inclusion of authors proves that the journal has achieved wide international recognition and enjoys a high scientific reputation. The attitude of high trust and respect towards the journal in the international scientific circles has been reflected in many letters addressed to the Editors of the periodical by famous scientists from different countries, and in articles of appreciation on the subject published in Soviet and foreign newspapers and journals.

The financial support of "Calouste Gulbenkian Foundation" and the Head of its Armenian department – Honorable Doctor of the NAS RA Z. Yekavyan greatly contributed to the publication of the "Historical and Philological Journal" in 1997–2009.

Since its inception, "Historical and Philological Journal" has presented itself to the reader as a bilingual periodical with a circulation of 1500–2400 printing units, in which materials were published in Armenian and Russian with summaries in relevant languages. Currently, summaries in English are also attached to them, thanks to which the general content of the materials published in the periodical has become accessible to a much larger number of foreign-language readers. Moreover, the title page and contents of the periodical are currently being created in English as well. Also, the number of English articles included in different issues of the periodical is increasing. Being published in "Historical and Philological Journal" has always been an honor for the senior and middle, as well as the younger generations of scientists. Unfortunately, in the last thirty years, the republic's scientific journals faced obstacles of a different nature and difficult to overcome, starting from financial shortages to maintaining the periodicity of the publication, decreasing circulation, impossibility of paying royalties, and therefore, objective and subjective circumstances related to sourcing and ordering articles. Regardless of those circumstances, "Historical and

Philological Journal" maintains its scientific reputation, which is the most difficult thing in our reality. This implies maintaining and raising the scientific level of the journal, involving young researchers in the composition of the Editorial board, as well as more daring attitude towards the revision of old and hardened views and ideas in historiography and philology by developing the directions for debate and discussion.

"Historical and Philological Journal" overcomes all difficulties with honor. Today, although the number of the printing units of the journal has decreased (250 copies), it reaches its readers worldwide as in the past. Another remarkable fact: until 1990, 4 issues of the Journal were published annually, in 1991–1997 – 1 or 2 issues, up to 2000 there were united issues, and in 2000 the three-month Journal turned into a four-month periodical, and 3 issues are published annually at real time.

Over the past 65 years, 223 major issues of the "Historical and Philological Journal" have been published, each with a volume of 15-20 presses, on average, 25 articles have been included in each issue, that is, during its existence, the journal has presented the reader with about 6100 print units.

In 1983, in Armenian and Russian, and in 2009 in Armenian, Russian and English, the bibliographic lists of the "Historical and Philological Journal" for the years 1958–1982 and 1983–2007 were published. The number of publications listed, respectively 2828 and 1909 units, represents the development directions and scientific research processes of Armenian studies and other related scientific fields for more than half a century. By the way, the bibliographic list of "Historical and Philological Journal" for the years 1983–2007 was published with the funds of "Calouste Gulbenkian Foundation".

"Historical and Philological Journal" has a special significance in the centuries-old history of the Armenian periodical press. It also stands out among the periodical scientific publications of the Republic of Armenia as an authoritative periodical for Armenian studies. The long-term experience of the staff, the stable traditions, the ability to properly present the achievements of Armenian studies to the reading public oblige the editors to constantly maintain the journal's scientific rating. And this is done in the last decades with a small salary, thanks to great efforts, hard and stressful editorial-proofreading work. Nevertheless, summoning up the activities of the "Historical and Philological Journal" over the past six and a half decades, it may be surely stated: this Armenological periodical of the NAS RA has brought together a large number of Armenologists from the Homeland and foreign countries around itself, and has done effective work to realize its program goals and objectives. It should also be noted that several generations of Armenologists have found their self-affirmation in the very pages of this journal. "Historical and Philological Journal" is currently known as renowned organ of Armenian studies and gained universal recognition in our country and abroad. To imagine Armenology without this journal is hardly ever possible. At present, in the conditions of independent statehood, when the importance of Armenian studies in the Republic of Armenia has much risen

and has become one of the orientations of state political and national security, we believe that the new upsurge of the editorial work and the moral and financial care of the state should also be pursued.

Congratulating the Editorial staff of the “Historical and Philological Journal”, members of the Editorial board, the entire author’s staff and the scientific community on the occasion of the 65th anniversary of the publication of the periodical and wishing new successes, we fully hope that the periodical will continue to make a significant contribution to the development of modern Armenian studies staying faithful to its vocation.

Lilit Hovhannisyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide at the NAS RA Institute of History, Associate Professor at the Ijevan branch of YSU and the International scientific and educational center of the NAS. Scientific interests: the main issues of history and historiography of the Armenian question and Genocide of Armenians. Author of 2 monographs, 5 methodical textbooks and about 50 articles. lilithovannisian@yahoo.com; l_hovhannisyan@ysu.am; lilit.hovhannisyan@isec.am

ԱՆՄՆԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄ
(«Պատմաբանասիրական հանդես»-ի 65-ամյակի առթիվ)

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ամփոփում

Հայ պարբերական մամուլի դարավոր պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսը»: Ավելի քան վեց տասնամյակ անցնելով բարդ ու դժվարին հետազոտական, գիտակազմակերպչական և գիտահրատարակչական ուղի՝ ամսագիրը դարձել է իր ծրագրային խնդիրները հաջողությամբ իրականացնող հայագիտական հեղինակավոր պարբերականներից մեկը, նաև՝ գիտական կադրեր պատրաստող հայտնի դպրոց:

ՀԽՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ ստեղծված ամսագրի առաջին համարը լույս է տեսել 1958 թ.: Նրա «Խմբագրության կողմից» ներածական հոդվածում ներկայացված էին հայագիտական նոր պարբերականի ծրագրային նպատակներն ու խնդիրները: Հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմում ընդգրկվեցին անվանի պատմաբաններ ու բանասերներ: Նրա գլխավոր խմբագիր նշանակվեց ականավոր պատմաբան, ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, ով ավելի քան 40 տարի ղեկավարել է ամսագիրը: 1999 թ.՝ Մ. Ներսիսյանի մահից հետո, այդ պաշտոնը վստահվեց ակադեմիկոս, անվանի պատմաբան Վարդգես Միքայելյանին: Վերջինիս մահից հետո՝ 2005 թ., հանդեսի մեկ համար լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր Պարույր Մուրադյանի, մեկն էլ՝ հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքար-

յանի խմբագրությամբ: 2006 թ. հանդեսի գլխավոր խմբագիր ընտրվեց ԳԱԱ թղթակից անդամ, հայտնի բանագետ-բանասեր Սարգիս Հարությունյանը: 2018 թ. հունիսից «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիրն Անուշավան Զաքարյանն է, խմբագրական խորհրդի նախագահը՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Նրանք ընտրվել են ԳԱԱ նախագահության կողմից:

Ամսագրի առաջին համարից ձևավորված և պահպանված բաժինների ու ենթաբաժինների կառուցվածքը տարիների ընթացքում միայն լրացվել է և ճշգրտվել: Նյութերը հրատարակվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն, դրանց կցվում են ռուսերեն, անգլերեն և հայերեն ամփոփումներ: Ներկայումս պարբերականը լույս է տեսնում չորս ամիսը մեկ անգամ: Արդեն լույս է տեսել 223 համար, որոնցից յուրաքանչյուրն ունի 15–20 մամուլ ծավալ: Դրանցում զետեղված է միջին հաշվով 25 անուն նյութ, այսինքն՝ իր գոյության ընթացքում ամսագիրն իր ընթերցողին ներկայացրել է շուրջ 6100 տպագիր միավոր:

Հանդեսը տարածվել է 1500–2400 տպաքանակով (ներկայումս՝ 250) ոչ միայն Հայաստանում, այլև՝ արտասահմանում: Գոյության 65 տարիների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսն» իր շուրջն է համախմբել բազմաթիվ հայագետների աշխարհի տարբեր ծայրերից՝ կատարելով բեղմնավոր աշխատանք Հայոց պատմության, լեզվի, գրականության, մշակույթի, փիլիսոփայության և գիտության այլ բնագավառների կարևոր հիմնահարցերի ուսումնասիրման ուղղությամբ: Հանդեսի էջերում լուսաբանվել են նաև արևելագիտության, կովկասագիտության, պատմագիտության և բանասիրության խնդիրներ, Հայաստանի ու հարևան երկրների տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի ու հարաբերությունների պատմության, Սփյուռքի գիտական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի հարցեր: 1997–2009 թթ. «Պատմաբանասիրական հանդեսը» հրատարակվել է «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի» և նրա հայկական բաժանմունքի ղեկավար, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Զավեն Եկավյանի ֆինանսական օժանդակությամբ: Նշենք, որ ամսագրի երկրորդ մատենագիտական ցանկի հայերեն, ռուսերեն և անգլերեն (առաջինը վերաբերում է 1958–1982 թթ., հրատարակվել է 1983 թ. հայերեն և ռուսերեն) հրատարակությունը, որում ընդգրկված են 1983–2007 թթ., նույնպես ֆինանսավորվել է այս հիմնադրամի կողմից:

Վերջին տասնամյակներում ամսագիրն ունի ֆինանսական խնդիրներ և դժվարություններ՝ կապված հրատարակության պարբերականության պահպանման, տպաքանակի կրճատման, հոնորար վճարելու անհնարինության, ըստ այդմ՝ հոդվածների հայթայթման ու պատվիրման, աշխատակիցների ցածր աշխատավարձի հետ: Եվ այս ամենն անկախ պետականության պայմաններում, երբ հայագիտությունը ռազմավարական ուղղություն է մեր երկրի համար և ունի գործնական մեծ նշանակություն:

Ներկայումս անհնար է պատկերացնել հայագիտությունն առանց «Պատմաբանասիրական հանդեսի»՝ ծանրակշիռ պարբերական հրատարակության, որը լայն ճանաչում ունի թե՛ մեր երկրի և թե՛ արտերկրի գիտական հանրության շրջանում:

Լիլիթ Հովհաննիսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում և ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցեր: Հեղինակ է 2 մենագրության, 5 գիտամեթոդական ձեռնարկի և շուրջ 50 հոդվածի:
lilithovannisian@yahoo.com; l_hovhannisyan@ysu.am; lilit.hovhannisyan@isec.am

БЕЗЗАВЕТНАЯ ПРЕДАННОСТЬ
(К 65-летию «Историко-филологического журнала»)

ЛИЛИТ ОГАНИСЯН

Резюме

В многовековой истории армянской периодической печати особое место занимает «Историко-филологический журнал» Национальной академии наук Республики Армения. На протяжении более шести десятилетий, пройдя трудный и сложный научно-исследовательский, научно-организационный и научно-издательский путь, журнал стал одним из авторитетных арменоведческих изданий, успешно выполняющим свои программные задачи, также – известной школой подготовки научных кадров.

Первый номер журнала, созданного решением Президиума Академии наук АрмССР, вышел в 1958 г. Он открывался вступительной статьей «От редакции», в которой были представлены программные цели и задачи нового арменоведческого издания. В редколлегию журнала вошли видные историки и филологи. Главным редактором журнала был назначен выдающийся историк, вице-президент Академии наук, академик Мкртыч Нерсисян, который свыше сорока лет руководил журналом. После кончины М. Нерсисяна в 1999 г. эта должность была доверена академику НАН РА, видному историку Вардгесу Микаеляну. С уходом В. Микаеляна из жизни в 2005 г. один номер журнала вышел под редакцией доктора исторических наук П. Мурадяна, а следующий – под редакцией заместителя главного редактора, ответственного секретаря, доктора филологических наук Анушавана Закаряна. В 2006 г. главным редактором журнала был избран известный филолог-фольклорист, член-корреспондент НАН РА Саргис Арутюнян. С июня 2018 г. главным редактором периодического издания является А. Закарян: он избран Президиумом НАН РА. Редакционный совет того же издания возглавляет академик НАН РА Ашот Мелконян.

Принятая с первого номера журнала и сохранявшаяся на протяжении последующих лет структура – разделы и подразделы – впоследствии подверглась некоторым дополнениям и уточнениям. Материалы публикуются на армянском, русском и английском языках, с приложением резюме на

русском, английском и армянском языках. Ныне журнал выходит раз в четыре месяца. Вышло 223 номеров, каждый из которых имеет объем 15 – 20 печатных листов. В каждом номере помещено в среднем по 25 материалов, т. е., со дня основания было опубликовано почти 6100 материалов. Журнал распространялся в количестве 1500 – 2400 экземпляров (ныне – 250) не только в Армении, но и за рубежом. За 65 лет своего существования «Историко-филологический журнал» НАН РА сплотил вокруг себя многих арменоведов со всего мира, проводя плодотворную работу по изучению важных вопросов истории армянского народа, литературы, языка, искусства, философии и других областей науки. На страницах журнала освещались также проблемы востоковедения, кавказоведения, историографии и филологии, вопросы истории экономических, политических и культурных связей и взаимоотношений Армении с соседними странами, научной, общественно-политической и культурной жизни армянской диаспоры. В 1997–2009 гг. «Историко-филологический журнал» выходил в свет при финансовой поддержке фонда «Галуст Гюльбенкян» и руководителя его армянского филиала, почетного доктора НАН РА Завена Екавяна. Отмемим, что издание второй библиографии журнала на армянском, русском и английском языках (первая охватывала 1958–1982 гг. и вышла в свет в 1983 г. на армянском и русском языках), включающей 1983–2007 гг., также было финансировано этим фондом.

В последние десятилетия журнал испытывает финансовые проблемы и трудности, связанные с сохранением периодичности издания, сокращением тиража, заказыванием и добыванием статей, по причине невозможности выплаты гонорара, низкой зарплатой сотрудников. И все это в условиях независимой государственности, когда арменоведение является для нашей страны стратегическим направлением и имеет огромное практическое значение.

Сегодня невозможно представить арменоведение без «Историко-филологического журнала» – весомого периодического издания, получившего широкое признание научной общественности нашей страны и за рубежом.

Лилит Оганисян – к. и. н., старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян Института истории НАН РА, доцент Иджеванского филиала ЕГУ и Международного научно-образовательного центра НАН. Научные интересы: вопросы истории и историографии Армянского вопроса и Геноцида армян. Автор 2 монографий, 5 научно-методических пособий и около 50 статей. lilithovannisian@ yahoo.com; l_hovhannisyan@ysu.am; lilit.hovhannisyan@isec.am

ՀՏԴ 281.6 + 956.94 +947.925

Doi:10.54503/0135-0536-2023.3-12

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՆՆԱՅԻ ԵՐԿԸ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ*

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհաննես Հաննա, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Գրիգոր Շիրվանցի, Հովհաննես Կոլոտ, քրիստոնեական միաբանությունները Երուսաղեմում, Ս. Տեղիք, Ս. Հակոբյանց վանքի սեփականություններ, «Հաննայի նզովքներ», թարգմանական աստվածաբանական գրականություն:

Նախաբան

Հովհաննես Հաննան Երուսաղեմի Հայոց պատրիարքության և Ս. Հակոբյանց վանքի պատմության ճանաչված հեղինակներից է, որի գործը հնագույնն է XVIII դ. հայկական սկզբնաղբյուրների մեջ[1]: Աշխատությունն ընդգրկում է Ս. Հակոբյանց վանքի և Ս. Տեղյաց հայկական սեփականությունների պատմությունը, որի առասպելախառն սկզբնավորման խնդիրը մի կողմ դնելով՝ նկատենք, որ մեզ հատկապես հետաքրքրում են իր՝ Հաննայի ժամանակաշրջանի (1700–1730-ական թվականների սկզբներ) համապատասխան անցքերն ու իրական պատմական դեմքերը, որոնք առնչվում են նաև Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությանը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հաննան հանդես է գալիս որպես Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունների առնչություններն ու ընդհանրապես պատմությունը հավաստի վերարտադրող և դրան իր սեփական գնահատականը տվող հեղինակ, այս դեպքում առանց հրաշապատում կամ կրոնաբարոյախոսական շեղումների, որպիսիք քիչ չեն, ի դեպ, Ս. Հակոբյանց վանքի պատմական նախորդ ժամանակաշրջանների վերաբերյալ նրա շարադրանքում: Եվ այդ հասկանալի է, որովհետև Հաննան ամենից առաջ իր դարաշրջանի և միջավայրի մարդն է, աստվածաբան՝ իր կրոնափիլիսոփայական ուրույն աշխարհայացքով ու համոզմունքներով: Եվ այս բոլոր դեպքերում նա իրեն դրսևորում է իբրև հայ ազգի և եկեղեցու, նրանց իրավունքները Երուսաղեմում և այլուր անձնվիրաբար, անգամ ինքնամոռացության չափ

** Ներկայացվել է 09. X. 2023 թ., գրախոսվել է 30. X. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] Գիրք Պատմութեան Սրբոյ և մեծի քաղաքին Աստուծոյ Երուսաղէմի և Սրբոց տնօրինականաց տեղեաց (այսուհետ՝ Գիրք Պատմութեան). 1734: Այստեղ և այսուհետ բնագրի համառոտագրությունները գերազանցապես մեջբերվում են վերծանված տեսքով:

պաշտպանող հոգևորական, այն բացառիկ անձանցից մեկը, առանց որոնց դժվար է պատկերացնել հայկական զույգ պատրիարքությունների ընթացքն ու նկարագիրը հատկապես այս հեղինակի կյանքի վերջին տասնամյակներին՝ 1715–1733 թթ.: Եվս մեկ կարևոր հանգամանք՝ Հաննան ներկայացնում էր ժամանակի հայ առաջավոր ու կրթված այն եկեղեցականների սերունդը կամ գործունյա խումբը, որի վրա անմիջականորեն հենվում էին Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքներ Հովհաննես Կոլոտն ու Գրիգոր Շիրվանցին (Շղթայակիր)՝ նշված պատրիարքությունները բարեփոխելու, ազգի հոգևոր ու գործնական պահանջմունքներին ընդառաջելու և ազգապահպան մղումներին կենսունակություն ներարկելու իրենց գործունեության ընթացքում:

Իր՝ Հաննայի կենսագրությունը բացառապես և ամբողջովին կապված է Երուսաղեմի Ս. Հակոբի վանքի և Ս. քաղաքի շրջակայքում հայկական սեփականությունների պահպանության ու բարեկարգման խրողությունների հետ, իսկ 1715 թվականից սկսած, երբ Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի ազգային գործերի ղեկավարությունը ստանձնում են Հովհաննես Կոլոտը և նրա համախոհ ու աջակից Գրիգոր Շիրվանցին, նրանց հետ կազմում է յուրօրինակ եռյակ, որը պետք է իրավական ուժով օժտված օրինականություն հաստատեր երկու պատրիարքությունների փոխհարաբերություններում:

Հեղինակը և գրության ժամանակը

Հաննայի կենսագրական կարևոր դրվագներն արտացոլված են իր իսկ գրքի առաջին տպագրության շարադրանքում և առաջին ու վերջին հիշատակարաններում: Երուսաղեմում պահվող մի ձեռագրից պարզվում է, որ այնտեղ ապրել է մոր հետ՝ քաղաքի բազմաբնակարան «բակերից» (հյուրատուն, կացարան) մեկում[2], որը գտնվում էր հայոց թաղում: Պետք է կարծել՝ կրթությունը ստացել է Ս. Հակոբի վանքում և համալրել նրա միաբանության շարքերը: Գործուն մասնակցություն է ունեցել նորընտիր պատրիարքներ Հովհաննես Կոլոտի և Գրիգոր Շիրվանցու՝ Ս. Հակոբյանց վանքը տնտեսական ու կազմակերպական քայքայումից փրկելու, նրա ինքնուրույն կարգավիճակը վերականգնելու, ինչպես և վանքի սեփականություններն այլ միաբանությունների հավակնություններից Երուսաղեմի դատարանում պաշտպանելու գործում[3]: 1717 թվականից մինչև իր մահը՝ 1733 թ., Հաննան Երուսաղեմի հայոց պատրիարքի տեղապահ՝ աթոռակալն էր: Երկու պատրիարքները 1719 թ. նրան են վստահել Երուսաղեմի Ս. Հարության եկեղեցու, ինչպես և իրենց դավանակից ասորիների ու ղպտիների բաժինների նորոգության գործը, երբ իրենք մայրաքաղաքում զբաղված էին վանքի պարտքը մարելու և նորոգման թույլտվությունը ձեռք բերելու դժվարին հարցով[4]: Հաննային նրանք պատվիրում են շտապ ձեռնամուխ լինել նորոգությանը, որը հետո կարող էր ուշ լինել, և այդ այն դեպքում, երբ, ինչպես Հաննան է գրում, «գրէթէ տասն ղուրիշ ոչ գտանէր ի վանքս»[5]: Հաննան հաջողությամբ գլուխ է բերում այդ գործը: Նա վախճանվել է երիտասարդ հասակում՝ «կենձ էր հասակաւն և մատղաշ»,

---

[2] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1967, 538:*
[3] *Տէր Յովհաննէսեանց. 1890, հ. Ա, 450:*
[4] *Տէր Յովհաննէսեանց. 1890, հ. Ա, 443–444:*
[5] *Գիրք Պատմութեան. 1734, 189–190:*

ատված է վերոհիշյալ ձեռագրում[6], կարելի է կարծել, ուրեմն, որ ծնված պետք է լինի 1690-ական թվականների երկրորդ կեսին: Թաղվել է Երուսաղեմում, երբեմնի պատրիարք Մինաս Ամդեցու կողքին[7]:

Իր՝ Հաննայի գործունեությունը բացառապես և ամբողջովին կապված է Ս. Հակոբի վանքի և Ս. քաղաքի շրջակայքում հայկական սեփականությունների պահպանության ու բարեկարգման խրողությունների հետ, որպիսին մեզ ներկայանում է նրա աշխատության նպատակը և բովանդակությունը: Գրքի տիտղոսաթերթին նշված է. «Նորապէս շարադրեցաւ ... յումեմնէ Հաննայ վերաձայնեալ գործակալ ծառայէ Սբյն Յակոբայ Սաղիմացւոյ»: Կնշանակի, Հաննան ձեռագիրը շարադրել է կամ ավարտել «Յամի տեառն 1727 և ի Թուոյս մերում 1176 Յունվարի Ա ի սբ քաղաքս Եէմ»[8]: Նրա աշխատությունը, մինչդեռ, լույս է տեսել ավելի ուշ, որի մասին վկայում է գրքի վերջում զետեղված «Յիշատակարան տպեցման» վերնագրի ներքո՝ «աւարտեցաւ տպումն պատմութեան գրքոյն Աստուածային Սբ քաղաքիս Երուսաղէմի ... ի թուականութեան մերում ՌՃՁԳին և ի յունիսի ԻԶ» (1734, հունիսի 26)[9]:

Հաննայի ձեռագրի ավարտը (1727) պայմանական նշանակություն ունի, որովհետև դրանից հետո ևս նա իր աշխատությունը հագեցրել է հետագա տարիների անցքերի հիշատակումով: Այսպես, նա հիշում է 1729 թ. մեծ ավերածություններ պատճառած հրդեհը, որի ընթացքում այրվել էր Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցին և երբ Կոլոտը մահտեսի Սեղբեստրոսի միջոցով նորոգման ֆերման է ստանում, որ և իրականացնում է ճարտարապետ կեսարացի մահտեսի Միլտոնը՝ «ի ՌՃՀԹ (1730) թուականութեանս կատարեցաւ»[10]: Գրքում իր հավելումները Հաննան շարունակել է ներառյալ 1732 թ., երբ նշում է դրան նախորդող՝ Ղալաթիայի Ս. Լուսավորչի այրվելը: Հովհաննես Կոլոտը շատ է չարչարվում, նկատում է Հաննան, «վասն հրամանի շինութեան և ոչ եղեւ հնար յումեքէ», մինչև որ արքունական դռանը «ծայրագոյն վաճառապետի» պաշտոնը կզբաղեցներ մահտեսի Սեղբեստրոսը, որը և գլուխ է բերում եկեղեցու նորոգման թույլտվությունը[11]: Ավելի ուշ շրջանի դեպքեր գրքում չկան՝ 1733 թ. հունիսի 11-ին վախճանված Հաննան արդեն «շատոնց խօթացեալ եւ տկարացեալ էր», ինչպես նշում է Մ. Օրմանյանը[12], ուստի վերոհիշյալ՝ 1732 թ. նոր ամպեր են կուտակվում Ս. Հակոբյանց վանքի վրա, ծայր է առնում հույն-հայկական հայտնի բանավեճը վանքի պատկանելության և հաբեշական ժառանգության շուրջ, որ տևում է հայերի համար դրամատիկական շրջադարձերով՝ մինչև 1739 թ., երբ վերջիններս անօրինակ համառության և

---

[6] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1967, 643: Տե՛ս նաև՝ Աղաւնունի. 1929, 359:

[7] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1967, 643:

[8] Տե՛ս Գիրք Պատմութեան. 1734, 2-րդ, չթվակալված էջը:

[9] Գիրք Պատմութեան. 1734, 376: Այս առթիվ մատենագետներն իրավացիորեն նկատում են, որ անվանաթերթի 1727-ը գրքի շարադրման տարեթիվն է, «որը Լեոն և Թեոդիկը սխալմամբ ընդունել են որպես տպագրության թվական» (Ոսկանյան, Կորկոտյան, Սավալյան. 1988, 322):

[10] Գիրք Պատմութեան. 1734, 168: Տե՛ս նաև՝ Բամպուքճեան. 1984, 51:

[11] Գիրք Պատմութեան. 1734, 168–169:

[12] Օրմանեան. 2001, 3328:

ջանքերի շնորհիվ կարողացան վերահաստատել իրենց ավանդական իրավունքները Ս. Տեղյաց սեփականությունների նկատմամբ: Այսուհանդերձ, Հաննայի աշխատությունն անմասն չէ Երուսաղեմում ազգային իրավունքների պաշտպանության բանավիճային ու գործառութային ուղղվածությունից, ուրեմն և նշանակությունից: Այն ուղղված է նաև Երուսաղեմում հայկական սեփականությունները վիճարկող քրիստոնեական և ոչ քրիստոնեական դավանական մենատիրական հավակնությունների դեմ և հեղինակային մտահղացմամբ պետք է հիմնավորեր Ս. Տեղյաց տարածքներում հայերի ներկայության պատմական իրավունքները: Այս լոգիստիկային է հենվում Հաննան, երբ ձևակերպում է իր շարադրանքի հիմնական շարժառիթը՝ հատկապես ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ Երուսաղեմում այլ դավանանքների միաբանություններն ունեն սեփական պատմության վերաբերյալ իրենց շարադրանքները, որպիսին ամբողջական տեսքով, չուներ Ս. Հակոբի վանքը, եթե չհաշվենք առանձին պատմական և ավանդական ցաքուցրիվ աղբյուրներն ու դրվագները, որոնք կուտակվել էին դարերի ընթացքում: Օտար միաբանությունները ձեռքներին ունեն գրքեր իրենց պատմության մասին «ընդարձակապէս գրեալ ուրոյն ուրոյն», բովանդակելով «յոյժ գովութեան վարկայ զնոցայն, քան զմերն»: Եվ ինքը լցվում է բարի նախանձով և «յորդորմամբ ոմանց եղբարց անդ բնակողաց (միաբանների – Ա. Խ.)» որոշում է գրել հայկական Երուսաղեմի պատմությունը՝ հավաքելով Ս. Տեղյաց մասին ազգերի պատմությունները «և ծրեցի զհամառօտ տետրակս առանձուկ սրտիս»[13]:

Ինչ ասել կուզի, Հաննան խստիվ հետևել է իր մտահղացման իրագործմանը, որտեղ առանձնանում են իրեն հուզող խնդիրներից մի քանիսը, որպիսիք են Երուսաղեմում հայկական միաբանության պատմությունը, նրա սեփականությունների օրինականության հիմնավորումը, Ս. Հակոբի վանքի նյութական կացության և կուտակված պարտքի պատճառները, Երուսաղեմի պատրիարքությունը Կոստանդնուպոլսի պատրիարքությանը կցելու աղետալի հետևանքները և վերջիններիս նյութական ու բարոյական վերածնունդը՝ Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Շիրվանցի պատրիարքների ժամանակաշրջանում (1716–1730-ականի սկիզբ):

Հաննայի շնորհիվ, անկախ նրա աշխատության մեջ օգտագործված անվավեր և հրաշապատում սյուժեներից (կրոնական հավատալիքներ, առասպելական պատմություններ ու ավանդություններ՝ կապված Ս. Տեղյաց ուխտատեղիների և այլնի հետ), Երուսաղեմի հայոց պատրիարքությունը հայության հետ ստանում էր Ս. Տեղիքում իր ներկայության անհերքելի և օրինական իրավունքի հիմնավորումը, Առաքելական եկեղեցու համակարգում իր ուրույն և ընդհանրական տեղի տեսական վավերացումը: Միաժամանակ, Հաննայի պատմությունը հագեցած է սկզբնաղբյուրի բազմաթիվ արժանիքներով, այն հենվում է փաստական առատ տվյալների վրա՝ վերցված Ս. Հակոբի վանքում պահվող վավերագրերից, այլ, օտար հեղինակներից (այս վերջինները կարոտ են առանձին հետազոտության՝ Հաննայի աշխատության համադրմամբ) ու փաստաթղթերից: Եվ պատահական չէ, որ Հաննայի գործն իր ժամանակակից

[13] Գիրք Պատմութեան. 1734, 7:

պատմության հավաստիության և արժանահավատության շնորհիվ քանիցս օգտագործվել է հայ պատմագիտության մեջ՝ գիտական շրջանառության տիրույթում շարունակելով իր կենսունակությունը նաև մեր օրերում: Մ. Չամչյանն անվերապահորեն հենվում է Հաննայի աշխատության վրա՝ նրան համարելով ստուգապատում հեղինակ. «Բազում ինչ գրէ յովհաննէս վրդպ Հաննէ … ի գիրսն զոր արար ի վերայ տեղեաց Երուսաղէմի, յորմէ գրեցուք և մեք աստ համառօտիւ»[14],– գրում է նա: Յուրահատուկ մի բծախնդրություն, որով նա ընդգծում է իր հարգալիր վերաբերմունքը խնդրո առարկա աշխատության նկատմամբ:

Իր հերթին, Մ. Օրմանյանը մասնավորապես բարձր է գնահատում Հաննայի գործի սկզբնաղբյուրային արժեքը (չհաշված տոմարագիտական որոշ վրիպումներ)՝ այն չափանիշ համարելով Երուսաղեմի պատրիարքության պատմության անցքերը ճշտելու հարցում: Հովհաննես Կոլոտին ընդհուպ նախորդող Հովհաննես Գանձակեցու կենսագրական եզրափակիչ փուլի վերաբերյալ անճիշտ տեղեկությունները նա ժխտում է Հաննային վկայակոչելով: «Մեր տեսութեամբ թիւրիմացութեան հետեւանք պէտք է ըսել այս դարձուածը (Երուսաղեմի գործերում, իբր, Գանձակեցու կատարած չարաշահումների և դատապարտվելու մասին– Ա. Խ.), որովհետեւ Հաննա, որ ականատես և գործակից էր, այդպիսի պարագաներէ տեղեկութիւն չունի»[15],– գրում է նա: Մ. Օրմանյանն ընդգծում է Հաննայի անձնվեր գործակցությունը Հովհ. Կոլոտին ու նրա վերանորոգչական ջանքերին, նաև Երուսաղեմի հայոց պատրիարքի «կարող եւ հաւատարիմ փոխանորդի և մատակարարի» կարևոր նշանակությանն ու «Կոլոտի և Շղթայակիրի միտքերուն արժանաւոր գործադիր» լինելը[16]:

Կարելի է կարծել, որ Հաննային, որպես ուղիղ մտածողության տեր միաբանի, Երուսաղեմում հայտնաբերել էր ինքը՝ Հովհաննես Կոլոտը 1712/1713-ին, երբ, որպես աթոռակալ և վեքիլ, մեկնել էր այնտեղ՝ վանքի խառնակ գործերը կարգավորելու առաքելությամբ[17]: Հաննան երբեմն հիշում է իր հանդիպումները մայրաքաղաքից եկած վարդապետի հետ. փաշայի հետ հանդիպումից հետո, գրում է նա, «Եւ նա (Կոլոտը– Ա. Խ.) առեալ զմիաբանս յորոց և ես մի էի ի նոցանէ, գնաց ջերմեռանդ սիրով»[18]: Քիչ անց Հաննան մեկ անգամ ևս հիշում է իր և միաբանների հանդիպումը Կոլոտի հետ, երբ վերջինս «խորհրդակցութեամբ ոմանց գլխաւոր միաբանից, ընդ որոց և յետնեալս էի ի միջի, կոտրատեաց զհասարակ կնիքն Սբյ վանուցս, որով ամենայն վեքիլ եղեալքն զմուրհակս պարտուց կնքէին …»[19]:

Հիրավի, Երուսաղեմում Հաննան դարձավ երկու պատրիարքների անփոխարինելի աջակիցը, պաշտոնապես՝ 1717 թվականից, երբ նրան պատրիարք Գրիգոր Շիրվանցին նշանակեց իր փոխանորդ՝ հնարավորություն ընձեռելով այս վարդապետին իր բացակայության պայմաններում կազմակերպել միաբա-

---

[14] *Չ ա մ չ ե ա ն ց. 1786, 769:*
[15] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3252:*
[16] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3256, 3298:*
[17] *Բ ա մ պ ո ւ ք ճ ե ա ն. 1984, 25:*
[18] *Գիրք Պատմութեան. 1734, 133:*
[19] *Գիրք Պատմութեան. 1734, 135:*

նության և վանքի տնտեսական կացության բարելավումը այդ դժվարին ժամանակներում: Հաննան դարձյալ արձագանքել է իր անձի հետ կապված այդ իրողությանը: «Իսկ յետ սակաւ ժամանակի (Շիրվանցու պատրիարք դառնալուց հետո – Ա. Խ.),– գրում է նա,– առաքեցին զկոնտակ իմն աթոռակալութեան ի վերայ անարժիւն ծառայիս յետնեցելոց, այսինքն որ կոչիմ Յոհաննէս վարդապետ Երուսաղէմացի և արաբացւոց լեզուաւ Հէննէ վարդապետ»[20]: Այս օրերին Շիրվանցին գտնվում էր Կոստանդնուպոլսում՝ հույժ զբաղված լինելով վանքի «լեռնակուտակ պարտքով» և նրա առջև ծառացած պաշտոնական ու անպաշտոն խոչընդոտները հաղթահարելու խնդրով: Երուսաղեմում վանքի նորոգման արտոնությունը, որ Հովհ. Կոլոտի և Շիրվանցու ջանքերով տրվեց հայերին 1720 թ., չտապ գործունեության դուռ բաց արեց Հաննայի համար: Պատրիարքները նրան պատվիրեցին, որ մյուս միաբանությունների հետ ինքն էլ սկսի նորոգման աշխատանքները հայկական հատվածներում, այլև հայերի իրավասության ներքո գտնվող սորինների ու ղպտիների տեղերում: Ավելացրած՝ նաև մասնակցությունը Ս. Գերեզմանի գմբեթի նորոգմանը՝ մյուս միաբանությունների հետ: Հաննան իր հոգևոր գլխավորների աջակցությամբ գլուխ բերեց այդ պատվերը:

Հաննան և Հայոց պատրիարքությունների փոխհարաբերությունները XVIII դ. առաջին տասնամյակներին

Որպես իր շարադրանքի առանցքային խնդիր, Հաննան հետամտում է Ս. Հակոբյանց վանքի ու նրա միաբանության պատմության վերհանումը: Նա կանգ է առնում հատկապես իր ժամանակներում XVII դ. վերջին տասնամյակներից սկսած՝ վանքի աղետալի դրության վրա, երբ պարտքերի տակ ընկած միաբանությանը սպառնում էր անխուսափելի սնանկացումը՝ պարտատերերի օգտին վանքի սեփականությունները վաճառելու կամ նրանց տնօրինությանը հանձնելու պարտադրանքով: Շատ ուշագրավ են վանքն այդ վիճակին հասցնող պատճառները վերհանելիս հարցում Հաննայի հիմնավոր մոտեցումները: Դրանց մեջ նա նշում է վանքի եկամուտների (որ գոյանում էին ուխտավորների նվիրատվություններից և սեփականությունների արդյունքներից) կլանումն ու յուրացումը Կոստանդնուպոլսի պատրիարքների և նրանց մարդկանց կողմից, որ պետք է վերածվեր անողորմ թալանի: Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռն ինքն էր դարձել անզուսպ շահատակության առարկա, կաշառքով և բռնություններով դրան տիրացած անձանց կամայականությունների ասպարեզ, որի մեջ էին ներքաշվել նաև Ս. Հակոբյանց վանքը կառավարելու քողի տակ հայտնված կողոպտիչները: Այս վիճակն իր ծայրահեղ չափերին հասավ, ինչպես հայտնի է, իբրև այդ կողոպուտի օրինականացում, Ավետիքի պատրիարքության ժամանակ, երբ Երուսաղեմի պատրիարքությունը, որպես առաջնորդություն, իրավականորեն միացվեց Կոստանդնուպոլսի պատրիարքությանը (ըստ Մ. Օրմանյանի՝ 1702 թ.)[21]:

Անտարակույս, օսմանյան կառավարության վճռով իրականացված այս միացումը Ս. Հակոբյանց վանքի նյութական կարողությունները մատչելի էր

[20] Գիրք Պատմութեան. 1734, 144–145:

[21] Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3138:

դարձնում Կոստանդնուպոլսի կղերական և աշխարհիկ ընչաքաղց շրջանների համար: Նրանց Հաննան անվանում է «չարաճճիք և անխիղճ ոմանք, անուամբ եւեթ քրիստոնեայք», որոնք «զերկու աթոռոց Սրբ Առաջնորդութիւնն … մի առաջնորդութիւն արարին և յայսմանէ բազում և պէս պէս չարիք պատճառեցան»[22]*:*

Հաննան՝ դաստիարակված հայ եկեղեցու ավանդական արժեքներով և Երուսաղեմի համազգային նշանակության խորին համոզմունքով, չի վարանում ցույց տալ այդ միացման դառն հետևանքները. ինքնակոչ առաջնորդները (նկատի ունի Ավետիքին և նրան հաջորդող պատրիարքներին՝ մինչև Հովհ. Կոլոտ, 1702–1715 թթ.) «փառամոլ չարութեամբ» և «բազմածախ կաշառօք» սկսեցին միմյանցից խլել երկու պատրիարքությունների միացյալ և հույժ եկամտաբեր դարձած աթոռը: Կոստանդնուպոլսում չդադարող պատրիարքական կռիվների հետևանքը եղավ այն, նկատում է Հաննան, որ մեկ տարվա ընթացքում երկու-երեք պատրիարք էր փոխվում[23]*: Նա հանգամանորեն պատմում է, որ պատրիարքների կողմից կատարվող Ս. Հակոբյանց վանքի թալանն արվում էր մշակված եղանակներով: Պատրիարքի անունով Երուսաղեմ էին ուղարկվում* պապա, դապգիմպ, վեքիլ *և այլ կոչումներով արտոնված անձինք, որոնք Կոստանդնուպոլիս էին ուղարկում վանքի եկամուտները՝ դրանց մի զգալի մասն իրենք յուրացնելով, այլև հափշտակում էին նրա ինչքը՝ սկիհներ, բուրվառներ, ուրարներ, ծիսակատարությունների համար հատկացված թանկարժեք զգեստներ, խաչեր և այլն*[24]*: Պատրիարքներն այս կողոպուտից գոյացած գումարները ծախսում էին իրենց աթոռն ամուր պահելու, բազմաթիվ ծախսերի, կաշառատվության և նման նպատակներով: Բանը հասել էր այնտեղ, որ Կոստանդնուպոլսում նստած պատրիարքները նախքան ուխտավորների՝ Երուսաղեմ մեկնելը, նրանցից գանձում էին վանքին հատկացված դարպասական տուրքերը («զդարպասն, զքառասնիցն և զայլս»)՝ փոխարենը նրանց մուրհակներ տալով և վանքին հարկադրելով պարտքի տակ մտնել՝ այդ մուրհակները մարելու համար*[25]*:*

Տ. Սավալանյանցը նշում է Ավետիք պատրիարքի ժամանակից ծայր առած՝ դարպասական տուրքերը (նվիրատվություններ) Կոստանդնուպոլսում հավաքելու աչքակապությունը: Ոմն Հայրապետի և նրա ընկերակցին պատրիարքը Երուսաղեմ է ուղարկում և «չորս հարիւր դահեկանի փոխանակագիր տալով անոր ձեռքը՝ կը սկսի Պոլսոյ մէջ գանձել Երուսաղէմ մեկնող ուխտաւորներուն դարպասական տուրքերը»[26]*:*

Կողոպուտն իրականացնում էին միշտ պատրաստի մարզինալ խավերը՝ նախկին բանտարկյալներ, աքսորյալներ, բախտախնդիրներ, որոնց Հաննան նզովում և դատապարտում է անխուսափելի հատուցման սպառնալիքով: Իսկ կողոպտիչները Կոստանդնուպոլսում ի լուր ամենքի բանն այնպես էին ներկա-

---

[22] *Գիրք Պատմութեան. 1734, 118–119:*
[23] *Գիրք Պատմության. 1734, 119:*
[24] *Գիրք Պատմութեան. 1734, 123:*
[25] *Գիրք Պատմութեան. 1734, 120:*
[26] *Սաւալանեանց. 1931, հ. Ա, 655:*

յացնում, թե իրենք ազգօգուտ գործ են արել, մինչդեռ, նկատում է Հաննան, «այն ամենայն էր պատրանք և խաբէութիւնք»[27]:

Նույն Ավետիքի ժամանակ Ս. Հակոբի վանքի պարտքը հասավ զգալի չափերի: Ավետիքից հալածված Երուսաղեմի պատրիարք Մինաս Ամդեցին իր հայրենակիցներին հղած կոնդակում այդ պարտքը հաշվում էր 400 քսակ[28], իսկ Գրիգոր Շղթայակրից ու Հովհ. Կոլոտից ոչ շատ առաջ այն արդեն կրկնապատկվել էր՝ հասնելով 800 քսակի (kese)[29]*:*

Անփոխարինելի նշանակություն ունեն Հաննայի տեղեկությունները Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների՝ 1710–1720-ական թվականների անցքերի, դրանց դահավեժ զարգացումները կասեցնելուն ուղղված՝ Հովհաննես Կոլոտի և Գրիգոր Շիրվանցու գործողությունների վերաբերյալ: Այս պատմական հատվածն առանցքային տեղ է զբաղեցնում Հաննայի շարադրանքի ընթացքում, իբրև երկու աթոռների վերածնության սկիզբ և իրողություն, որոնց նա քանիցս անդրադառնում է իր աշխատության հետագա էջերում: Այդպիսիք են, եթե առանձնացնենք Հաննայի՝ն հուզող ժամանակակից թեմաները՝ Հովհ. Կոլոտի և Գր. Շիրվանցու պատրիարքական գործունեության սկիզբը, նրանց բարեկարգիչ գործերն ազգային-հոգևոր իրականության մեջ՝ կրթական-լուսավորական ասպարեզներով հանդերձ, Երուսաղեմի հայկական պատրիարքության ինքնուրույնության վերականգնումը և Ս. Տեղյաց մեջ նրա իրավունքների վերահաստատումը: Հովհ. Կոլոտի գործունեության նկարագիրը նա սկսում է այն պահից, երբ Կոստանդնուպոլսում առաջավոր երևելիների և Սահակ Ապուչեխցի պատրիարքի առաջարկով, որպես աթոռակալ և վեքիլ մեկնում է Երուսաղեմ՝ վանքի անկառավարելի գործերը կարգավորելու համար[30]:

Հաննայի հետագա շարադրանքը հագեցած է ականատեսի ստուգապատում հայեցվածքով, որից երևում է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքարանում կատարված փոփոխությունները շտապ և անմիջականորեն են ազդում Ս. Հակոբյանց վանքի կառավարման վրա: Սահակ Ապուչեխցուն փոխարինած Հովհ. Գանձակեցու գործողությունները ցույց են տալիս, որ վերստին իշխանության է եկել Կոստանդնուպոլսի վերնախավի հետադիմական տարրը, որն ի դեմս Գանձակեցու, փաստորեն, կասեցնում է Կոլոտի արդյունավետ գործունեությունը Երուսաղեմում: Նա վերականգնում է վեքիլների ինստիտուտը և

---

[27] Գիրք Պատմութեան. 1734, 122:

[28] Սաւալանեանց. 1931, հ. Ա, 667: Վանքի պարտքը ավելի հին ժամանակներում էր գոյացել: 1690 թ. մի սաղմոսի հիշատակարանում ասվում է, որ պապա Մինասի (իր անբասիր գործունեությամբ՝ XVII դ. երկրորդ կես– XVIII դ. սկզբներին, նա բացառություն է կազմել գիշատիչ վեքիլների բազմության մեջ) ժամանակ վանքի պարտքը հասնում էր մինչև 200 քսակի: Այս Մինասը, հարում է հիշատակագիրը, «Վասն ծանրանալոյ պարտուցն ի վերայ վանացն … ելեալ եկեալ յԸստամպօլ քաղաքս լալով եւ հառաչանօք առ իշխանս եւ տօլվաթաւորս ազգիս հայոց թերեւս լիցի ճար եւ օգնութիւն պարտուց սուրբ վանացն …» (տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1972, հ. 6, 284):

[29] Բառնաբաս Գանձակեցի. 1782, 60: Տե՛ս նաև՝ Ակինեան. 1952, 364:

[30] Գիրք Պատմութեան. 1734, 128–129:

Երուսաղեմ է առաքում Հովհ. Պալըքեսերցուն. վանքի կողոպուտի պատմության մեջ սա արդեն իրեն խայտառակած մեկն էր համարվում և մեկ անգամ արդեն պաշտոնանկ էր արվել 1711 թ., որովհետև վանքի հասույթներն ու նվիրատվությունները վատնել էր՝ ավելացնելով պարտքը[31]: Հաննան գրում է միանգամից չորս վեքիլների ժամանման մասին, որոնք պետք է մտածեին և գործեին հին կամայականությունները վերածնելու ոճով: Պարտատերերի ճնշման ներքո նրանք Կոստանդնուպոլսից ֆերման են բերում, որի ուժով պատրաստվում էին վաճառել վանքի սեփականությունները, այդ թվում և Ս. Փրկիչ «զգեղեցիկ վանքն»[32] պարտքը մարելու համար: 1714 թ. գարնան իրադարձությունների այս ընթացքին միջամտած Հովհ. Կոլոտը և պարտատերերը համաձայնում են փուլ առ փուլ մարել պարտքը՝ քառամյա ժամկետում[33]: Այս և վանքի սեփականությունների հետ կապված կնճիռները չտապ հաղթահարելու համար Կոլոտը մեկնում է Կոստանդնուպոլիս՝ 1715 թ. ապրիլին:

Հաննան առաջնահերթ նշանակություն է տալիս հայկական պատրիարքությունները միմյանցից բաժանելու՝ Կոլոտի մտահղացմանը: «Վարդապետն մեր գերապայծառ … մանաւանդ աւէր առ ամենեսին … եթէ կամիք զչինութիւն և զպայծառութիւն Սբյ Երուսաղէմի եւ Քրիստոսական Աթոռոյն, բաժանեցէք ի միմեանց զերկու աթոռոց պատրիարքութիւնն, այսինքն զԵրուսաղէմինն ի Բիւզանդիոյ, զի չարն խափանեսցի, քանզի անհնար է ազատիլ սուրբ տունն ի պարտուց, մինչ վարի միով դիտապետիւ»[34],– գրում է նա:

Կոստանդնուպոլսում, միաժամանակ, վճռական գործողությունների անցան Հովհ. Կոլոտին սատարող «ուխտադիր պարոնայք»՝ համայնքի վերնախավում թափ առած ազդեցիկ մարդիկ: Հաննան մեկ առ մեկ պատմությանն է հասցրել նրանց անունները՝ Ապուչեխցի մահտեսի Մուրատեան Հարություն, Ապուչեխցի մահտեսի Հարություն Թեվեքելյան, մահտեսիներ Իսրայելն ու Լութվին, Երևանենց Սեղեբեստրոսը՝ Բ. Դռան հետ պաշտոնական և ոչ պաշտոնական կապեր ունեցող անձինք: Նրանք Հովհ. Կոլոտին առաջարկում են ստանձնել Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը, համաձայնելով զույգ պատրիարքությունները բաժանելու նրա առաջարկին՝ նրան թողնելով Երուսաղեմի պատրիարքական թեկնածուի ընտրության խնդիրը՝ «գիտութեամբ բոլոր իշխանաց»[35]: Այս բոլոր հանգամանքներում Հաննան հանդես է եկել որպես Երուսաղեմի միաբանության գործունյա անդամ, Կոլոտի և նշված երևելիների համախոհ:

Հովհաննես Կոլոտի պատրիարք հռչակվելու հետ միաժամանակ բաժանվեցին երկու պատրիարքությունները. Երուսաղեմի պատրիարք հայտարարվեց նրա համախոհ և գործակից Գրիգոր Շիրվանցին: Պատրիարքությունը ստանձնելուց հետո, նա պարանոցին է անցկացնում ծանր շղթա, ուխտելով չհանել այն, մինչև որ չմարվի վանքի «լեռնակուտակ պարտքը», գրում է Հաննան[36] (այստեղից՝ նրա Շղթայակիր մականունը): Ժամանակի համար այս ազդեցիկ

---

[31] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3236:*
[32] *Գիրք Պատմութեան. 1734, 131:*
[33] *Գիրք Պատմութեան. 1734, 131–132:*
[34] *Գիրք Պատմութեան. 1734, 136–137:*
[35] *Գիրք Պատմութեան. 1734, 138:*
[36] *Գիրք Պատմութեան. 1734, 146:*

պատումը (մի հայտնի չափով այն նպաստեց վանքի օգտին ծավալուն հանգանակություններին) Երուսաղեմի պատմագիրը հասցնում է ավարտին՝ նկատելով, որ Գրիգորը ութ տարի կրեց այն, ապա հրաժարվեց դրանից՝ տեղի տալով ժողովրդի, Կոլոտի և կաթողիկոսի խնդրանքին[37]:

«Հաննայի նզովքները» կամ Ս. Հակոբյանց վանքի կանոնադրությունը

Մասնավոր ուշադրության են արժանի Հաննայի տեղեկությունները Երուսաղեմի պատրիարքության կանոնադրության կամ իր անվամբ հիշվող՝ Հաննայի նզովքների վերաբերյալ: Կանոնադրությունը հրապարակել էր Կարապետ Ուլնեցի կաթողիկոսը, Մ. Օրմանյանի տոմարական հաշվարկներով, 1726 թ. օգոստոսի 21-ին՝ Օրթաքյոյի եկեղեցու օծման օրը[38]: Վերջինս այս կանոնադրությունը ամենայն իրավամբ համարում է Կոլոտի և Շղթայակրի մտահղացման արդյունք, Հաննային՝ այդ մտահղացման «արժանաւոր գործադիր», որը այս առթիվ Երուսաղեմից եկել էր Կոստանդնուպոլիս[39]:

Եթե Մ. Չամչյանը բավարարվում է կանոնների համառոտ թվարկմամբ[40], ապա Մ. Օրմանյանը դրանց քննարկմամբ հանդերձ, կարևորում է երրորդ կետը, արգելքը՝ Երուսաղեմի պատրիարքությունը կցելու կամ միացնելու Կոստանդնուպոլսի կամ մեկ այլ տեղի առաջնորդությանը[41]: Անկախ կանոնադրության ձևակերպումների եկեղեցական-հրահանգիչ բնույթից, այն ուներ գործնական նշանակություն, որով հայ եկեղեցական կազմակերպությունը Օսմանյան Թուրքիայում և առաջին հերթին ի դեմս Կոստանդնուպոլսի պատրիարքության, հանդես էր բերում պահպանողականության վրա հենվող կենսունակություն՝ վերականգնելով հնավանդ կարգը վերջինիս հետ Երուսաղեմի ունեցած փոխհարաբերություններում: Ավելին, այդ կարգը խախտողներին ուղղված արմատական ձևակերպումները (նզովքներ) ցույց են տալիս, որ եկեղեցին հետամտում էր ապագայում ևս օրենքի ուժով կանխել իր միասնությունը քայքայող մարտահրավերները: Այնուհետև, կանոնադրության շնորհիվ սահմանվում էր Երուսաղեմի պատրիարքության ինքնավար կրոնավարչական կարգավիճակը հայ եկեղեցու համակարգում՝ նրա արտատարածական առանձնահատկություններին համապատասխան, և որը պետք է ապահովեր Երուսաղեմի պատրիարքությանը, Հաննայի ձևակերպմամբ, «բացարձակ լինիլ ինքնին իշխանութեան»[42]:

---

[37] Գիրք Պատմութեան. 1734, 155:

[38] Օրմանեան. 2001, 3297–3298:

[39] Օրմանեան. 2001, 3298:

[40] Չամչեանց. 1786, 802:

[41] Օրմանեան. 2001, 3300: Նկատի առնելով այս՝ երրորդ կանոնը, Մ. Օրմանյանն այն համարում է կանոնադրության ոչ միայն հիմնական, այլև միակ նպատակը՝ կասկածի տակ առնելով առաջին երկուսի գոյության իրավունքը: «Ճիշդ այս երրորդն է երեք կանոններուն հիմնականը եւ կարժէր զայն առաջին ընել, մինչև իսկ միակ ըլլար՝ բաւական էր իսկական նպատակը յայտնել»,– գրում է նա (տե՛ս Օրմանեան. 2001, 3300):

[42] Գիրք Պատմութեան. 1734, 158:

Նշված ինքնավարությանն էին հետամտում բոլոր երեք կանոնները՝ սկսած պատրիարքի անձին վերաբերող դրույթներից, Երուսաղեմ ուղարկվող պապա և նազըր կոչվող գործակալների վերացումից և վերջացրած Կոստանդնուպոլսի պատրիարքությանը Ս. Հակոբի վանքը կցելու փորձերով, և որոնցից յուրաքանչյուրը բացառվում էր նզովքով[43]: Այդ կանոնները լրացնում էին միմյանց և կազմում մեկ ամբողջություն, ունենալով գործնական նշանակություն՝ առաջին հերթին Երուսաղեմի աթոռը Կոստանդնուպոլսի պատրիարքության բացասական ազդեցությունից կամ ցնցումներից զերծ պահելու համար: Կանոններն ընդունելու պահին դեռ թարմ էր Երուսաղեմի ծանր պարտքերը մարելու և վանքի սեփականությունները պարտատերերից ազատելու հիշողությունը, դեռ թարմ էին Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռը անհատների կամ խմբերի քմահաճույքների նշանախեց դարձնելու նախընթաց բազում օրինակները, որոնց հետագա կրկնության վտանգն էին կանխում «նզովքների» հեղինակները: Անցյալից հրաժարվելու այս մտայնությունը պետք է արտահայտվեր այդ «սահմանադրության» մեջ՝ անգամ օրենքի աստիճանի բարձրացրած և ինքնին ենթադրվող մանրամասների թվարկումներով, որի նպատակը Երուսաղեմի պատրիարքությունն անվթար պահելն էր հայ եկեղեցու նվիրապետության մեջ:

Հաննայի գործի այլ արժանիքներ. Թարգմանական գրականության հիմնավորումը

Հաննայի աշխատությունը պահպանում է իր սկզբնաղբյուրային եզակի նշանակությունը Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունների, հայ համայնքի ու եկեղեցու պատմության, այլև XVIII դ. առաջին երեսնամյակի պոլսահայ մշակութային այն հզոր շարժման արտացոլման տեսակետից, որ ձևավորվեց և զարգացավ Հովհաննես Կոլոտի և նրա բազմաթիվ համախոհների ջանքերով: Եվ այս իմաստով առավել արժեքավոր են Հաննայի՝ իբրև ականատեսի ու ժամանակակցի տեղեկությունները մտավոր-լուսավորական բնագավառում Կոլոտի գործունեության մասին: Նա ուշադրության կենտրոնում է պահում հայ եկեղեցին և աստվածաբանական միտքը արևմտյան զուգահեռ գաղափարախոսությամբ զորացնելուն միտված այն ուղղությունը, որ զարգացնում էին Հովհաննես Կոլոտը և յուրայինները՝ ինքը ևս, որպես հեղինակ, լինելով դրա գործուն գաղափարախոսներից մեկը: Սակայն այստեղ Հաննային վերապահված էր նաև բացառիկ դեր՝ հիմնավորելով այդ շարժման կարևորությունը հայ եկեղեցու և իրականության համար՝ ըստ էության, տեսականորեն ամրապնդելու Կոլոտի ու նրա կողմնակիցների գործունեությունը կաթոլիկական աստվածաբանական-իմաստասիրական գրականության թարգմանությունների ասպարեզում: Անմիջական բանավիճային բնույթ ունեն Հաննայի դիտողություններն ու բնութագրումները թարգմանական գործի քաղաքակրթիչ նշանակության և բուն իսկ քրիստոնեական կրոնի տարածման գործում, որ նա մասնավորեցնում է հայերի ու այլ ազգերի օրինակով: Մեծարելով Սահակի և Մեսրոպի թարգմանական ուղղությունը, նա ընդգծում է դրա համաքրիստոնեական կարևորությունը, «որ և այսու պանծալի երկնաձիր շնոր-

---

[43] *Գիրք Պատմութեան. 1734, 157–158:*

հիւս ոչ միայն եկեղեցիս մեր պանծայ, այլև ամենայն եկեղեցիք այլազգ քրիստոնէից»[44]:

Թարգմանական գրականությունը Հաննան համարում է ազգերի փոխհաղորդակցության միջոց և վկայակոչում Պողոս առաքյալին, որը թարգմանական բարիքը՝ բարությունը, դասում է «ի կարգս շնորհաց հոգւոյն Սբյ, ասելով ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց»[45]:

Պահպանողական կարծրամտության դեմ Հաննայի բանավեճը սուր շեշտադրումներ է ստանում մանավանդ այն ժամանակ, երբ առաջինը կտրականապես առարկում էր կաթոլիկական գրականությանն առնչվելուն կամ այն թարգմանաբար հանրությանը ներկայացնելուն: Մերժելով այսպիսի դիրքորոշումը, Հաննան, անտարակույս, ձգտում էր տեսական զենքեր մատուցել Հայրենի եկեղեցուն՝ ճանաչելու կաթոլիկական աստվածաբանության արժեքները և ի հարկին յուրացնելու դրանց ընդունելի կողմերը: Ժամանակին Ն. Ադոնցը խորաթափանց հայացքով էր խորանում հայ-կաթոլիկական աղերսների և դրանց հետևանքների պատմական բովանդակության մեջ՝ վերհանելով դրա երկակի կողմերը իրենց դրական ու բացասական հետևանքներով հանդերձ: Գր. Գալեմքյարյանի աշխատության գրախոսականում նա անդրադարձել է այդ կողմերից յուրաքանչյուրին, որ հարկ ենք համարում այստեղ մեջբերել: «Մեր վերածնության գործում,– գրում է նա,– կաթոլիկությունը խոշոր դեր է կատարել իր բոլոր պակասավոր կողմերով հանդերձ: Հայ հասարակության զարթումի առաջին տարիներից ի վեր նրա բարձր տենչանքները հանգում էին երկու կարապետող ձգտումների՝ քաղաքական ազատության և մտավոր վերակենդանության … Առաջին ձգտման ողջակեզ եղան անձնվեր ուժեր և տենչանքը մնաց … իբր երազանք: Իսկ կրթական կենդանությունը հետզհետե իրականացավ»[46]:

Բացասականը, որով Ադոնցի ձևակերպումն այսօր էլ ուժի մեջ է մնում, կաթոլիկ քարոզիչների սադրիչ աշխատանքն էր, այն դեպքում, հավելում է նա, երբ նրանք հայ ուսումնատենչ խավերում ունեին կրթական գերազանցություն և համակրություն, որոնց «երբեմն նույնիսկ … հակազդեցիկ լինելու նպատակով» հայ հոգևորականներն օգտվում էին կաթոլիկական հրատարակություններից և կամ դրանց օգնությամբ տպագրում նոր գործեր[47]: Վերջին դեպքում խոսքը վերաբերում էր նաև XVIII դ. թարգմանական գրականությանը, որի ջատագովներն էին Հովհ. Կոլոտը, Գր. Շղթայակիրը, Հաննան և ուրիշներ:

Մ. Օրմանյանը նկատում է, որ Հաննան պաշտպանում էր Կոլոտի ընթացքը կաթոլիկական գործերն ընտրողաբար թարգմանելու և հրատարակելու ասպարեզում և որ այստեղ վերջինս բնավ չի մեղանչել հայադավանության դեմ: Քաջալերելով լատիներենից ու իտալերենից Ղուկաս Խարբերդցու ձեռքով տասը հատորների թարգմանությունը, հայոց պատրիարքը պահպանում էր իր

[44] Գիրք Պատմութեան. 1734, 172:
[45] Գիրք Պատմութեան. 1734, 172–173:
[46] Ա դ ո ն ց. 2006, 557:
[47] Ա դ ո ն ց. 2006, 558:

դավանական անաղարտությունը և «ոչ թէ այդ բոլոր գիրքերուն կատարելապէս համամիտ էր»[48]*:*

Հաննան ևս իմաստավորում էր թարգմանված երկերի ճանաչողական նշանակությունը, հատկապես հրատապ բնույթը՝ օտար դավանությունների դեմ մղվող պայքարում, երբ հակառակորդների դեմ պետք է ելնել նրանց իսկ զենքերով: «Որքանիցս յաւէտ տեղեկանաք գրոց նոցին, այնքանիցս քաջապէս և արիաբար կարեմք պատասխանատրել ընդդիմադրեալ առարկութեանց նոցին, իբր թէ զինուք նոցին ընդ նոսա քաջագինիմք»[49]*,— գրում է նա:*

Հաննայի աշխատությունը, նվիրված լինելով Երուսաղեմի հայկական միաբանության դարավոր պատմությանն ու հայերի ներկայությանը Սուրբ Տեղյաց մեջ հիմնավորելու կարևոր նպատակին, չէր կարող շրջանցել ազգային սեփականությունների օրինականության և դրա պաշտպանության խնդիրը: Եվ այս իմաստով այն ունի բանավիճային ու մարտնչող բնույթ՝ ուղղված Ս. Հակոբի վանքի սեփականությունների նկատմամբ այլ միաբանությունների ոտնձգությունների դեմ: XVIII դ. քրիստոնեական տարբեր դավանանքների միջև առկա հակասություններն ուղղություն էին ստանում հենց Ս. Տեղյաց սեփականությունների շուրջ նրանց մերթ բացահայտ, մերթ թաքնված ընդհարումների ձևով: Հայ-հունական դարավոր տարաձայնություններն այս ասպարեզում պոռթկացին այդ հարյուրամյակի 30-ական թվականներին, վերընշված հաբեշական ժառանգության շուրջ, որպիսին ոչ այլ ինչ էր. բայց եթե պայքար Ս. Տեղյաց՝ հաբեշների լքած սեփականություններին տիրանալու համար: Հովհաննես Կոլոտը և Գրիգոր Շիրվանցին 1710—1720-ական թվականներին արել էին իրենց ազգանվեր գործը՝ փրկելով Ս. Հակոբի վանքը ներքին կեղեքիչներից: Սակայն շարունակվում և սպառնալի տեսք էր ստանում արտաքին վտանգը՝ վանքի սեփականություններին այլ դավանությունների կողմից սպառնացող վտանգը: Ի տես դրա, Հաննան իր երկի առանձին հատվածներում շոշափել է սեփականությունների հին խնդիրը՝ հիմնականում հույների և հայերի, ինչպես և վերջիններիս ու կաթոլիկների միջև: Տնօրինական սրբավայրերի եկեղեցիները, վանքերը կամ դրանց առանձին բաղադրիչներն ու հատվածները յուրացնելը կամ դրա վիճարկումը՝ դատաստանի առարկա դարձնելով (այդպիսիք կարգավորելու իրավասությամբ օժտված Երուսաղեմի դատարանում), անսովոր բան չէին տարադավան միաբանությունների փոխհարաբերություններում: Հաննան անդրադառնում է այդպիսի յուրացումների բազմաթիվ օրինակների՝ չմոռանալով հիշել նաև ասորիներին պատկանող Ս. Թովմայի եկեղեցու հափշտակումը թուրքերի կողմից[50]*, նաև 1439 թ. վրացիների կողմից՝ Ս. Գողգոթայի հայկական մասում մի եկեղեցու տիրանալու փաստին և այլն*[51]*: Հաննան պատմում է նաև փոխանակությունների մասին (հայերը Հովսեփի գերեզմանին դրած իրենց սեղանը տվել էին ղպտիներին՝ փոխանակելով այն Եգիպտոսում գտնվող մի եկեղեցու հետ)*[52]*:*

[48] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3387:*
[49] *Գիրք Պատմութեան. 1734, 178:*
[50] *Գիրք Պատմութեան. 1734, 180:*
[51] *Գիրք Պատմութեան. 1734, 187, 227:*
[52] *Գիրք Պատմութեան. 1734, 233:*

Այս փոխադարձ պայքարների մեջ Հաննան հիշատակում է հույն-հայկական հակասությունները. հույները, գրում է նա, բազում կաշառքների միջոցով իբրև անտերունչ սեփականություն, 1656 թ. խլեցին հաբեշների ամբողջ մուլքը և տիրեցին նրանց վանքերին, որ հայերին պետք է անցներ իբրև հաբեշներին դավանակից միաբանության: Այստեղ նկատենք, որ Հաննան չի անդրադառնում ճիշտ այդ նույն ժամանակ բուն Ս. Հակոբի վանքի նկատմամբ հունական հավակնություններին, երբ հույները մի պահ անգամ տիրացել էին այդ վանքին[53]: Նկատենք, որ Երուսաղեմում հայկական կորուստները Հաննան իրավացիորեն բացատրում է որպես իր ազգակիցների անհոգության ու համակերպման արդյունք:

Հաննայի այս իրավացի եզրահանգումը՝ Ս. Տեղյաց տարածքներում հայկական սեփականությունների կորստյան պատճառների վերաբերյալ՝ լիովին կիսում էին Հովհաննես Կոլոտն ու Գրիգոր Շղթայակիրը: 1735 թ. սուլթան Մահմուդ Ա-ին հղած ամբաստանագրում՝ ուղղված Ջատկի առթիվ Երուսաղեմում հունական միաբանության հավակնությունների դեմ, նրանք գրեթե նույն բացատրությունն էին տալիս այնտեղ Հայոց պատրիարքության թուլացմանը: Եթե Երուսաղեմում հույների պատրիարքը իր պաշտոնին է մնում անփոփոխ և ցմահ, ապա «կարգադրութիւն պատրիարքութեանն Հայոց խանգարեալ է ի բազում ժամանակաց հետէ, մինչև ցաւուրս իշխանութեան ձերոյ, զի ի շրջանի միոյ կամ երկու տարւոյ լինէր փոփոխութիւն պատրիարքաց և նոցա զբաղեալ ի վէճս և ի կռիւս իւրեանց անփոյթ արարեալ էին զկարգաց և զկանոնաց Երուսաղէմի և ի չփոթութենէ աստի համարձակութիւն գտեալ Յունաց, անկան ի սնոտի տենչանս առաջնութեան (նկատի ունեն Երուսաղեմում առաջինը Ս. գերեզման մուտք գործելու իրավունքը – Ա. Խ.)»[54],– գրում են նրանք:

Եթե Հաննան իր հոգևոր առաջնորդների խրախուսանքով գրում էր իր երկը՝ դրան տալով խորապես մտածված, Երուսաղեմի հայկական սեփականությունները օտար դավանանքների ոտնձգություններից պաշտպանելու ուղղվածություն՝ ընդհուպ մինչև XVIII դ. երեսնական թվականները, ապա նույն այդ տասնամյակին գրվեց և հրապարակ իջավ այդ սեփականությունները վիճարկող այլև բացասող հունական մի ուշագրավ աշխատություն՝ դարձյալ սկզբնաղբյուրային նշանակությամբ, Երուսաղեմում հույների և հայերի հակասությունների մասին: Հեղինակը հույն ուղղափառ եկեղեցու երևելի դեմքերից մեկն էր՝ Պարթենիոս Աթենացին, Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտը, իսկ այնուհետև Երուսաղեմի հունաց պատրիարքը 1730-ականի վերջերին: Հայագիտությունն այս երկին ծանոթ չէր, իսկ ինքը՝ Պարթենիոսը, հայ հեղինակների աշխատություններում հիշատակվում է որպես հայերի հետ դատական վեճերի մեջ մտած և համաձայնագիր կնքած հունական կողմի հոգևորական ակտիվ գործիչ[55]: Ակադեմիկոս Հ. Բարթիկյանի թարգմանության շնորհիվ

---

[53] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 804: Տե՛ս նաև՝ Խ ա ռ ա տ յ ա ն. 2007, 355:*

[54] *Տ է ր-Յ ո վ հ ա ն ն է ս ե ա ն ց. 1890, հ. Ա, 448: Տե՛ս նաև՝ Բ ա մ պ ո ւ ք ճ ե ա ն. 1984, 56:*

[55] *Ս ա ւ ա լ ա ն ե ա ն ց. 1931, հ. Բ, 730: Տ է ր-Յ ո վ հ ա ն ն է ս ե ա ն ց. 1890, հ. Բ, 45:*

Պարթենիոսի այդ գործը[56] հունարեն բնագրով և հայերեն, արժանի տեղ է զբաղեցնում մեզ մատչելի դարձած օտարալեզու հայագիտական գրականության մեջ:

Եզրակացություն

Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբան Հովհաննես Հաննայի «Գիրք պատմութեան ...» աշխատությունը, որպես սկզբնաղբյուր, առանձնանում է իր հավաստիությամբ, մասնավորապես, երբ հեղինակը քննարկում է ժամանակակից իրադարձություններն ու գնահատում անձանց: Մասնավոր արժեք ունեն Հաննայի տեղեկությունները Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի պատմության, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության հետ վանքի ու նրա միաբանության փոխհարաբերությունների մասին: Երուսաղեմում Ս. տեղյաց սրբավայրերի վերաբերյալ Հաննայի՝ հաճախ եզակի հաղորդումներն ունեն համաքրիստոնեական ընդգրկումներ, որով և ընդգծվում է նրա աշխատության ճանաչողական նշանակությունը, որպես սկզբնաղբյուրի: Հեղինակը հանդես է գալիս որպես Ս. Տեղյաց հայկական սեփականությունների պաշտպանության նվիրյալ և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի պատրիարքությունների կարգավորված փոխհարաբերությունների ջատագով: Լինելով միասնականորեն գործող պատրիարքներ Հովհաննես Կոլոտի և Գրիգոր Շիրվանցու գործակիցն ու հետևորդը, Հաննան գործուն մասնակցություն է ունեցել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքը տնտեսական քայքայումից փրկելու, նրա ինքնուրույն կարգավիճակը վերականգնելու և նրա ունեցվածքը այլ միաբանությունների ոտնձգություններից ապահովելու գործում: Հայ Առաքելական եկեղեցուն տեսական զենքեր տրամադրելով, նա հիմնավորում է արևմտյան եկեղեցական հայրերի երկերի հայերեն թարգմանության հրատապությունը, որ կազմակերպվում և խրախուսվում էր վերոհիշյալ պատրիարքների կողմից: Մասնավորապես ուշադրության է արժանի Հաննայի դերակատարությունն իր անվամբ հիշվող՝ «Հաննայի նզովքներ» կոչված կանոնները մշակելու գործում: Այդ կանոնադրության (1726) շնորհիվ, անկախ հետագայում դրա հետևողական կիրառման շուրջ եղած մեկնաբանություններից, իրավականորեն առանձին սուբյեկտներ ճանաչվեցին Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունները, որով և ապահովվում էր առաջինի ինքնավար կարգավիճակը հայ եկեղեցու նվիրապետության մեջ:

Ալբերտ Խառատյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր մասնագետ, հայ մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հասարակական քաղաքական մտքի և մամուլի պատմություն, Օսմանյան Թուրքիայի հայ գաղթօջախների պատմություն: Հեղինակ է 8 մենագրության և ավելի քան 200 հոդվածի: alkhar39@mail.ru

---

[56] *Պարթենիոս Աթենացու. 2006, 170:*

GՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 648 էջ:

Ակինեան Ն. 1952, Բաղէշի դպրոցը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 364 էջ:

Աղաւնունի Մ. 1929, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 544 էջ:

Բամպուքճեան Գ. 1984, Յովհաննէս պատրիարք Կոլոտ, Ստամպուլ, Մուրադ օֆսեթ, 415 էջ:

Բառնաբաս Գանձակեցի. 1782, Յաջորդութիւն պատրիարքացն Երուսաղէմի, Կ. Պոլիս, տպագրութիւն Յովս. Գավաֆեան, 106 էջ:

Գիրք Պատմութեան Սրբոյ և մեծի քաղաքին Աստուծոյ Երուսաղէմի և Սրբոց տնօրինականաց տեղեաց. 1734, Կոստանդնուպօլիս, տպարան մահտեսի Աստուածատուր, 378 էջ:

Խառատյան Ա. 2007, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, Երևան, ԵՊՀ հրատ., 471 էջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, ԺԷ դար (1641–1660), հ. Գ, կազմ. Հակոբյան Վ. , Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1015 էջ:

Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1967, հ. 2, կազմ. Պողարեան Ն., Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 671 էջ:

Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1972, հ. 6, կազմ. Պողարեան Ն., Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 624 էջ:

Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք. Ա., Սավալյան Ա. Մ. 1988, Հայ գիրքը 1512–1800 թվականներին, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, Ալ. Մյասնիկյանի անվ. Պետական գրադարան, 863 էջ:

Չամչեանց Մ. 1786, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենէտիկ, ի տպարանի յովհաննու փիացեանց, 896+195:

Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի Պատմություն հունաց և հայոց տարաձայնության. 2008, առաջաբանը, թարգմանությունն ու ծանոթագրությունները Հրաչ Մ. Բարթիկյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 170 էջ:

Սաւալանեանց Տ. 1931, Պատմութիւն Երուսաղէմի, հ. Ա, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 688 էջ:

Սաւալանեանց Տ. 1931, Պատմութիւն Երուսաղէմի, հ. Բ, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 1387 էջ:

Տէր Յովհաննէսեանց Ա. 1890, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. Ա, Երուսաղէմ, ի տպարանի Ս. Յակովբեանց, 461 էջ:

Տէր Յովհաննէսեանց Ա. 1890, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. Բ, Երուսաղէմ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Ս. Յակովբեանց, 560 էջ:

Օրմանյան Մ. 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 3894 էջ:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ТРУД ОВАНЕСА ХАННЫ КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРМЯНСКИХ ПАТРИАРШЕСТВ ИЕРУСАЛИМА И КОНСТАНТИНОПОЛЯ

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

Ключевые слова: Ованес Ханна, Армянское патриаршество Иерусалима, Армянское патриаршество Константинополя, Григор Ширванци, Ованес Колот, христианские конгрегации в Иерусалиме, Святые места, “Анафемы Ханны”, переводческая богословская литература.

Труд архимандрита Иерусалимской церкви Святых Иаковов Ованеса Ханны “Книга истории…” как первоисточник отличается своей достоверностью, в частности, изложением событий, современником которых был автор, и оценкой тех или иных личностей.

Сведения Ханны касающиеся иерусалимских Святых мест, имеют общехристианское содержание, чем и подчеркивается познавательное значение его труда в первоисточника. Автор выступает как защитник армянской собственности Святых мест и как сторонник урегулирования отношений между армянскими патриаршествами Иерусалима и Константинополя. Являясь последователем совместно действующих патриархов – Ованеса Колота и Григора Ширванци, Ханна принял деятельное участие в спасении церкви от экономического распада, в восстановлении ее самостоятельного статуса и защите ее собственности от притязаний других конгрегаций. Предоставляя Армянской Апостольской церкви идеологические средства, он обосновывал безотлагательность перевода на армянский язык сочинений западных церковных авторов. Следует отметить роль Ханны в вопросе разработки упоминаемых под его именем канонов “Анафемы Ханны”. Блогадаря этим канонам (1726 г.) отдельными юридическими субьектами были признаны армянские патриаршества Иерусалима и Константинополя, что обеспечивало автономный статус первого из них в структуре Армянской церкви.

Альберт Харатьян – д. и. н., проф., член-корреспондент НАН РА, главный научный сотрудник Института истории НАН РА, заведующий отделом истории армянской периодической печати и общественной мысли. Научные интересы: история армянской общественно-политической мысли и периодической печати, история армянских общин Османской Турции. Автор 8 книг и более 200 статей. alkhar39@mail.ru

THE WRITINGS OF HOVHANNES HANNA AS A PRIMARY SOURCE ON THE HISTORY OF THE ARMENIAN PATRIARCHIES OF JERUSALEM AND CONSTANTINOPLE

ALBERT KHARATYAN

S u m m a r y

Keywords: Hovhannes Hanna, Armenian Patriarchate of Jerusalem, Armenian Patriarchate of Constantinople, Grigor Shirvantsi, Hovhannes Kolot, Christian congregations in Jerusalem, holy places, "Anathemas of Hanna", translated theological literature.

"The Book of History..." by Hovhannes Hanna, the Archimandrite of St. Jacob's Cathedral of Jerusalem, as a primary source is distinguished by its reliability, in particular, by the presentation of events, the contemporary of which the author was, and by the assessment of certain personalities. Hanna's information related to Jerusalem holy places has a general Christian content that emphasizes the cognitive importance of his work as a primary source. The author acts as a defender of the Armenian property of the holy places and as a supporter of the settlement of relations between the Armenian patriarchates of Jerusalem and Constantinople. Being a follower of the jointly acting patriarchs, Hovhannes Kolot and Grigor Shirvantsi, Hanna took an active part in saving the church from economic collapse, in restoring its independent status and protecting its property from the claims of other congregations. By providing the Armenian Apostolic Church with ideological means, he substantiated the urgency of translating the works of Western church authors into Armenian. It should be noted the role of Hanna in the development of the canons mentioned under his name ("Anathemas of Hanna"). Thanks to these canons (1726), the Armenian patriarchates of Jerusalem and Constantinople were recognized as separate legal entities, which ensured the autonomous status of the former in the structure of the Armenian Church.

Albert Kharatyan – Doctor of Historical Sciences, Professor, Corresponding Member at the National Academy of Sciences of the Republic of Armenia, Chief Researcher at the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Head of the Department of Armenian History of Press and Social Thought. Scientific interests: the history of the Armenian socio-political thought and periodical press, the history of the Armenian communities of Ottoman Turkey. Author of 8 books and more than 200 articles.
alkhar39@mail.ru

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ՀՏԴ 28 + 297

Doi:10.54503/0135-0536-2023.3-30

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՇԱՔԻԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑԱԾ ՈՒԴԻ ՀԱՅԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ* (IX–XIX դդ.)

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Շաքի, քրիստոնյա, հայ, ուդի, մահմեդականացում, Աղվանից եկեղեցի, խանություն, խնդրագիր:

Նախաբան

Արևելյան Այսրկովկասի քրիստոնյա բնակչության իսլամացման գործընթացը սկսվել էր դեռևս տարածաշրջանի արաբական նվաճման ժամանակաշրջանից՝ VIII դարից: Այն՝ հակառակ տեղի քրիստոնյաներին դավանափոխությունից ետ պահելու Աղվանից եկեղեցու մշտական ջանքերին ու պայքարին, կարողացել է դարերի ընթացքում տեղի և հարևան մահմեդական իշխանությունների խրախուսմամբ մեծ հաջողություններ գրանցել: Թեև Հայ Առաքելական եկեղեցու և նրան ենթակա Աղվանից եկեղեցու հետևորդները հիմնականում տիրապետում էին հայերենին ու շարունակում էին մեծ թիվ կազմել ընդհուպ մինչև XIX դ., այնուամենայնիվ, մահմեդական տիրապետությունը տարածաշրջանում՝ սկսած XI դ. Սելջուկյան ժամանակաշրջանից, աստիճանաբար փոխել էր ու շարունակում էր փոխել տեղի բնակչության էթնիկ և կրոնական դիմագիծը:

Շաքիի քրիստոնյա բնակչության համար հատկապես ծանր էր XVIII դարը, երբ, Իրանի Սեֆյան պետության թուլացմանը և ապա անկմանը զուգընթաց, տարածաշրջանում ուժգնանում էին ռազմական բախումները, հետապնդումներն ու բռնությունը ոչ մահմեդականների նկատմամբ՝ Հյուսիսային Կովկասի լեռնաբնակ ցեղերի և տեղի մահմեդական իշխանությունների կողմից:

Քրիստոնյաները Շաքիի և Շիրվանի շրջաններում IX–XVIII դարերում. նրանց մահմեդականացումը խթանող գործոնները

Շաքի տեղանունը «Շաքէ» ձևով հիշատակվում է VII դարի «Աշխարհացույց»-ում՝ որպես բուն Աղվանք աշխարհի գավառներից մեկի և նրա կենտրոնը հանդիսացող ներկայիս Նուխի շրջանի անվանում[1]: Այդ շրջանը գտնվում էր Շիրվանից դեպի արևմուտք ու հյուսիս-արևմուտք և մեծապես կապված էր Հայաստանի ու Վիրքի հետ: Ըստ Մովսես Դասխուրանցու (Կաղանկատվացի)՝ IX դարում, երբ Աշոտ I Բագրատունին վերականգնում է

** Ներկայացվել է 25. II. 2023 թ., գրախոսվել է 27. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.: Հոդվածը հրատարակվում է ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի 21T–6A163 ծածկագրով թեմատիկ ծրագրի շրջանակներում:*

[1] *Ե ր ե մ յ ա ն. 1963, 73, 120:*

թագավորությունը Հայաստանում, Շաքիում նախապես հաստատված Տարոնի Բագրատունիներից Համամի կողմից 894 թ. սկիզբ է դրվում տեղի հայ Բագրատունիների թագավորությանը[2]: Այս տեղեկությունը հաստատվում է նաև վրացական Քարթլիս Ցխովրեբայում առկա Համամի որդու՝ Ատրներսեհի ծագման և Շաքին Արչիլ թագավորի կողմից որպես կալվածք ստացած լինելու մասին տվյալներով[3]: Շաքիի հայ Բագրատունիների իշխանությունը գոյատևում է մինչև X դարավերջ[4]: Արաբ հեղինակներ Իբն Ռուսթան, ալ-Մասուդին ու ալ-Մուկադդասին տեղեկություններ են հաղորդում Համամի որդի Ատրներսեհի և նրա քրիստոնյա հպատակների մասին, որոնք կազմում էին Շաքիի բնակչության մեծամասնությունը[5]: Դեռ ավելին, X դարի պարսկական սկզբնաղբյուր «Հուդուդ ալ-ալամի» անանուն հեղինակը Շաքին համարում է ոչ միայն մահմեդական ու քրիստոնյա բնակչություն ունեցող իշխանություն, այլև՝ Հայաստանի շրջաններից մեկը[6], որի պատճառը, թերևս, հայ հոծ բնակչության առկայությունն էր այնտեղ: Հայկական ու արաբական աղբյուրները պահպանել են նաև Ատրներսեհի թոռ Իշխանակի (կամ՝ Իշխանիկի)՝ ալ-Մալիքի անունը[7]:

Հետագայում Շաքիի շրջանը վիճաբանության առարկա է դառնում Վրաց Բագրատունիների թագավորության ու Շիրվանշահերի պետության միջև, և շուտով՝ XII–XIII դդ., Ղաբալայի (կամ՝ Կապաղակի) շրջանը միացվում է Բագրատունիների տիրույթներին[8]: Շաքիի Ղարաքեշիշի[9] տոհմից սերած կառավարիչները XV դարում ժամանակի թելադրանքով դավանափոխ են լինում՝ դառնալով մահմեդական[10]:

Շաքիում էր գտնվում հայկական նշանավոր Ճալեթի վանքը՝ որպես այդ շրջանի հոգևոր կենտրոն՝ շրջապատված հայկական և ուդիական գյուղերով: Ճալեթը նաև հայկական մշակույթի ու գրչության կենտրոն էր[11]: 1406–1516 թթ. այստեղ, Գանձասարի կաթողիկոսարանին զուգահեռ, եղել է Աղվանքի հոգևոր իշխանությունը վարող կաթողիկոսների նստավայրը[12]:

Սեֆյան տիրապետության ներքո Շաքիի շրջանի մեծ մասը մտնում էր Շիրվանի բեկլարբեկության, մնացածը՝ Քարթլի-Կախեթի վալիության տարածքի մեջ: Հետազոտող Արմեն Այվազյանն աղբյուրագիտական լայն հենքի վրա կատարած իր ժողովրդագրական հետազոտության մեջ հայերի թիվը Շաքի-Շիրվանում XVII դարի վերջին համարում է շուրջ 100.000[13]:

---

[2] *Կաղանկատուացի. 1983, 335:*
[3] *Մելիքսեթ-Բեկ. 1934, 196:*
[4] *Շաքիի Բագրատունիների մասին մանրամասն տե՛ս Ադոնց. 1948:*
[5] *Արաբական աղբյուրներ. 2005, 526, 652:*
[6] Hudud al-alam. 1937, 144, 398.
[7] *Յակոբեան. 2020, 229–230:*
[8] Маркарян. 2011, 28.
[9] *Ղարաքեշիշ (թուրք.՝ սև քահանա): Հայ հոգևորականների սև հանդերձանքի հետ կապված կա նաև պարսկերեն «սիյահքոլահ» – «սև վեղարավոր, սևագլուխ» անվանումը, որը հաճախ է հանդիպում պարսկերեն վավերագրերում:*
[10] Karīm Āqa Fātiḥ. 1384, 136.
[11] *Ստեփանյան. 2021ա, 99, 130:*
[12] *Ստեփանյան. 2021ա, 113, 116:*
[13] *Այվազյան. 2022, 63:*

Մահմեդականացման գործընթացը տարածաշրջանում Սեֆյան տիրապետության ներքո հիմնականում ընթանում էր տնտեսական գործոնների ու խթանների միջոցով, որոնցից առավել «արդյունավետ» էին ոչ մահմեդական՝ զիմմի հպատակների կողմից գլխահարկի՝ ջիզյայի[14] *վճարումը, Իմամ Ջա՚ֆարի օրենքը*[15]*, ինչպես նաև՝ Սեֆյան վարչական ապարատում բարձրաստիճան պաշտոնների զբաղեցման ցանկությունը, որովհետև իսլամի օրենքները հիմնականում թույլ չէին տալիս անհավատներին պետական կառավարման ապարատում բարձր դիրք զբաղեցնել:*

Չնայած հայերի ու տեղի մյուս քրիստոնյաների մահմեդականացմանը խթանող սոցիալ-տնտեսական այս իրողություններին և օրենքներին՝ Սեֆյան կառավարությունը, այնուամենայնիվ, ապահովում էր նրանց կենսագործունեության համար քիչ թե շատ տանելի պայմաններ՝ պաշտպանելով տեղական մահմեդական իշխանությունների բռնություններից ու կրոնական անհանդուրժողականությունից: XVIII դ. սկզբին Արևելյան Այսրկովկասի քրիստոնյա բնակչությունը միավորված էր Շիրվանի թեմի մեջ, որի անմիջական ենթակայությունն Աղվանից կաթողիկոսությանը XVII–XVIII դդ. վիճարկում էր Էջմիածնի կաթողիկոսը[16]*:*

Ոչ մահմեդականների և, մասնավորապես, հայերի վիճակն Արևելյան Այսրկովկասում կտրուկ սկսում է վատթարանալ Սեֆյան պետության անկման շրջանում՝ XVIII դարասկզբին, երբ ակտիվանում են Հյուսիսային Կովկասի լեռնաբնակ ցեղերը, որոնք սկսում են հաճախակի արշավել դեպի հարավ և ոչ միայն կողոպտել, այլև բռնություններ գործադրել հատկապես տեղի ոչ մահմեդականների նկատմամբ՝ հարկադրելով նրանց դավանափոխ լինել[17]*: Նման անհանդուրժողականության պայմաններում քրիստոնյաները մահմեդականանում էին՝ երբեմն ջանալով ծածուկ պահպանել իրենց քրիստոնեական հավատքը, ինչի մասին նշում են, մասնավորապես, տեղի ուդիները Ռուսաստանի կայսր Պետրոս I-ին ուղղված մի խնդրագրում*[18]*:*

Առանձնապես ծանր էր հայերի ու մյուս քրիստոնյաների դրությունը տարածաշրջանում կարճատև Թուրքական տիրապետության շրջանում՝ 1720-ական թվականներին և XVIII դարի երկրորդ կեսին:

Արևելյան Այսրկովկասի՝ Կուրից հյուսիս ընկած շրջաններում Նադիր շահի տիրապետությունը կարճատև է լինում՝ 1735–1740 թթ., և բնորոշվում է տեղի բնակչության հետ հաճախակի ռազմական բախումներով ու ավերածություններով: Թեև, Աբրահամ Կրետացու հավաստմամբ, Շամախու հայերի խնդրանքով նա Իրանի այս տիրակալից հրովարտակ էր ձեռք բերել, որը սահմանում էր գլխահարկ ըստ նախկին կարգի՝ ամուսնացած տղամարդուց 3 ղուռուշի (օսմանյան դրամական միավոր), ամուրիից՝ 1,5 ղուռուշի չափով[19]*, այնուամենայնիվ, քանի որ իրանական տիրապետությունը տարածաշրջանում թույլ էր, չի կարելի պնդել՝ այդ հրովարտակը երկար ժամանակ գործած լինի: Հարկ է*

---

[14] *Ջիզյայի մասին տե՛ս* Moreen. 2008.
[15] *Այս օրենքի մասին տե՛ս Փ ա փ ա զ յ ա ն. 1956ա, Կ ա ր ա պ ե տ յ ա ն. 1988:*
[16] *Մ կ ր տ ո ւ մ յ ա ն. 2006, 13, 16–23:*
[17] *Ս տ ե փ ա ն յ ա ն. 2021բ, 21–30:*
[18] *Տե՛ս* Армяно-русские отношения в первой трети XVIII веке. 1967, 90–91.
[19] *Կ ր ե տ ա ց ի. 1973, 135:*

նաև նշել, որ Ղարաքեշիշի տոհմից սերած Հաջի Չելեբի խանը դեռևս 1743 թ. գլխավորել էր ապստամբությունը Նադիր շահի իշխանության դեմ և անկախություն ձեռք բերել՝ սկիզբ դնելով Շաքիի խանությանը, որտեղ իշխում էր մինչև իր մահը՝ 1754/1755 թ.[20]:

Ժամանակակիցները հավաստի փաստեր են արձանագրել Նադիր շահի մահից հետո Արևելյան Այսրկովկասում ստեղծված կիսանկախ խանություններում, այդ թվում՝ նաև Շաքիում տեղի ոչ մահմեդականներից ջիզյա և այլ տարբեր հավելյալ հարկեր գանձվելու վերաբերյալ[21]: Հայերի և մյուս այլադավանների նկատմամբ հաճախակի էին դարձել տեղի մահմեդական իշխանությունների խտրական վերաբերմունքի ու կրոնական անհանդուրժողականության դրսևորումները, որոնք հանգեցնում էին հայության և մյուս քրիստոնյաների շրջանում վախի մթնոլորտի ուժգնացմանն ու արտագաղթին[22]:

Վարդաշեն ու Նիժ գյուղերի մահմեդականացած ուդի հայերի խնդրագիրը

Այն, որ տնտեսական ծանր կացությունը երբեմն դրդում էր քրիստոնյաներին դավանափոխ լինել, փաստում է նաև մի վավերագիր, որն իրենից ներկայացնում է Վարդաշեն և Նիժ գյուղերի մահմեդականացած ուդ անձանց երդմնագիր-խնդրագիրը՝ ուղղված վրացահայ թեմի առաջնորդ Հովհաննես Սրբազան արքեպիսկոպոսին, որպեսզի նա այն հանձնի Այսրկովկասի ռուսական իշխանության ներկայացուցիչներին և, մասնավորապես, զորքերի գլխավոր հրամանատար, կոմս Ի. Գուդովիչին: Փաստաթուղթը թվագրված չէ: Այն հանգամանքը, որ ուղղված է Ի. Գուդովիչին, ով Այսրկովկասում պաշտոնավարել է 1806–1809 թթ.[23], ինչպես նաև՝ գրեթե նմանատիպ բովանդակությամբ խնդրագիր էին հղել վերոհիշյալ անձին 1807 թ. նաև տեղի քրիստոնյա բնակիչները[24], թույլ է տալիս ենթադրել՝ փաստաթուղթը գրվել է եթե ոչ միևնույն ժամանակ, ապա՝ 1806–1809 թթ.:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ընթանում էր ռուս-պարսկական առաջին պատերազմը (1804–1813 թթ.): Շաքիի խանությունը, ի դեմս նրա Սելիմ խանի, ինչպես և Ղարաբաղի ու Շիրվանի խանությունները, Ռուսաստանի հետ 1805 թ. կնքել էին հպատակության պայմանագիր: Այդուհանդերձ, մեկ տարի անց Սելիմ խանը, փոխած լինելով իր քաղաքական կողմնորոշումը և հեռանալով Իրան[25], նրան Շաքիի խանի դիրքում փոխարինում է Խոյի նախկին խան Ջա՛ֆար Ղուլին: Վերջինս, դեռ 1799 թ. ըմբոստացած լինելով Իրանի Ֆաթհալի շահի դեմ, իշխանազուրկ էր արվել[26] և հեռացել Այսրկովկասի տարածքներ: 1804 թվականից ի վեր Ջա՛ֆար Ղուլին նամակագրական կապի

[20] Karīm Āqa Fātiḥ.1384, 144.

[21] *Այս մասին տե՛ս* Мхитарян. 2022, 31–32.

[22] Мхитарян. 2022, 31–32.

[23] Присоединение Восточной Армении к России. 1972, 651.

[24] Присоединение Восточной Армении к России. 1972, 429–430.

[25] Акты, собранные Кавказской археографической комиссией (*այսուհետ՝* АКАК). 1869, 69.

[26] АКАК. 1869, 271.

մեջ էր Կովկասի ռուսական զորքերի հրամանատարության հետ, համագործակցում էր նրանց հետ[27] և շահել կոմս Ի. Գուդովիչի համակրանքը, որի միջամտությամբ էլ նշանակվում է Շաքիի խան[28]:

Երդմնագիր-խնդրագրով Վարդաշեն և Նիժ գյուղերի 8 մահմեդականացած «նախկին հայեր» երդվում են, որ երբ Շաքիի նախկին խաներից մեկը սկսել էր «աբրիշում-ե դին» հարկ պահանջել, դավանափոխ էին եղել: Նրանց պնդմամբ իրենց պապերը հայեր էին, և իրենք ունեն «գիմմի հայ» հարազատներ՝ հայր, եղբայր: Նշվում են նաև այդ 8 դավանափոխ անձանց ու նրանց ոչ մահմեդական ազգականների անունները: Մահմեդականացածների անունները հիմնականում մահմեդական և իրանական անուններ են (Փարվարդին, Մարդան, Ալլահվիրդի, Իվանի որդի Ուսուֆ, Իբրահիմ, Ալի, Մարտիրոսի որդի Ուսուֆ, Ահմադ), իսկ հայ գիմմիների անունները՝ հայկական և իրանական են (Խալաֆ, Արիթուն, Մարտիրոս, Ակոբ): Ե՛վ այս երդմնագիր-խնդրագրում, և՛ նույն գյուղերի՝ իրենց հայ անվանող քրիստոնյաների ներկայացրած վերը նշված խնդրագրում մատնանշվում է՝ այդ հարկը հավատքի համար էր գանձվում, որը նաև նրա անվանումից է բխում: Խնդրո առարկա վավերագրում այդ հարկը նշվում է «աբրիշում-ե դին» և հակառակ կողմում՝ «իփաք դինի»[29] ձևով, որը պարսկերեն և թուրքերեն միևնույն իմաստն ունի՝ «հավատքի մետաքս»:

Ս. Ջալալյանցի հավաստմամբ՝ հիշյալ հարկը մտցվել էր Շաքիի Հաջի Չելեբի խանի կողմից, և Նիժ գյուղի բնակիչները «յօժարեցան լնուլ զանյագ բաղձանս Հաճի Ջալապւոյ հատուցանել զմետաքսն սակ հարկի անուանեալ … և մնացին ի հայրենի կրօնս»[30]:

Այնուամենայնիվ, մեր կողմից դիտարկվող վավերագրի համաձայն՝ 8 անձ դավանափոխ էր եղել: Ընդ որում, մահմեդականացած անձանց կողմից ներկայացված փաստաթղթում շեշտվում է նաև, որ վերոհիշյալ «աբրիշում-ե դին» կոչված հարկը մալոջահաթը[31] չէ: Փաստորեն, սա նախկին ջիզյան էր, որը գանձվում էր մահմեդական երկրներում այլադավաններից, և, թերևս, այն պատճառով, որ Շաքիում դա գանձվում էր տեղում արտադրվող մետաքսով, ուստի և ստացել էր վերը նշված՝ «աբրիշում-ե դին» և «իփաք դինի» անվանումը:

---

[27] AKAK. 1868, 577, 583, 617 *և այլն:*

[28] AKAK. 1869, 271.

[29] *Թուրքերեն այս տարբերակի փոխարեն այլ աղբյուրներում հանդիպում են նաև «դին իփայ», «դին իփակի» ձևերը:*

[30] *Ջ ա լ ա լ ե ա ն ց. 1858, 381:*

[31] *«Մալոջահաթ» (مالوجهات) եզրույթը կազմված է «մալ» (ապրանք, հարստություն) և «ջահաթ» (կողմեր, վայրեր, վարելահողեր) բառերից: «Մալը» սեփականության հարկն էր, իսկ «ջահաթը» գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկը: Այս երկու հարկերը միշտ միասին էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Մալոջահաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասն էր կազմում և մի անգամ որոշված լինելով՝ անփոփոխ չափերով գանձվում էր ռայաթներից: Դրա համար էլ շատ հաճախ այս անվան տակ հասկանում էին տվյալ օբյեկտից գանձվող նաև այլ հարկերը (տե՛ս Փ ա փ ա զ յ ա ն. 1956բ, 112):*

Հավատքի հարկը ռուսական՝ քրիստոնեական իշխանության ներքո օրինական չէր կարող դիտարկվել, և այս պատճառով, ինչպես դիտարկվող վավերագիրն է փաստում, Շաքիի Ջա՛ֆար Ղուլի խանը խորամանկության էր դիմել՝ այդ հարկը սկսելով գանձել նաև տեղի մահմեդականացած անձանցից: Այս հանգամանքն էր պատճառ դարձել նշված երդմնագիր-խնդրագրի ստեղծման համար, որովհետև նախկինում նրանք ազատված են եղել այդ հարկից:

Քրիստոնյա և մահմեդականացած ուդի հայերի վերոնշյալ խնդրագրերը հաշվի առնելով՝ Ի. Գուդովիչը նամակ է գրում Ջա՛ֆար Ղուլի խանին՝ պահանջելով դադարեցնել հավատքի հարկի գանձումը Շաքիի հայերից[32]: Այնուամենայնիվ, ինչպես հայտնի է դառնում Եփրեմ կաթողիկոսի՝ այս հարցը շոշափող մի նամակից, Ջա՛ֆար Ղուլին ռուսական զորքերի գլխավոր հրամանատարին բացատրել էր՝ այդ հարկը հավատքի համար չի գանձվում, և վերջինս էլ այլևս չի պնդում, որ այդ հարկի գանձումը դադարեցվի[33]: Հավելյալ հարկը, որի դեմ բողոք էր ներկայացվել, շարունակում է գանձվել: Երկու տարի անց՝ 1809 թ., Հովհաննես արքեպիսկոպոսն այս հարցով դիմում է անգամ ռուսաց կայսր Ալեքսանդր I-ին՝ պնդելով, որ տեղի մահմեդականներից ավելի քիչ հարկեր են գանձվում, քան քրիստոնյաներից[34]:

1805 թ. հպատակության պայմանագրով Շաքիի խանը պարտավորվել էր ռուսաց կայսրին որպես ամենամյա հարկ վճարել 7000 չերվոն[35] գումար: Դա արդեն բավական մեծ էր, որը վճարում էր նաև նրա հաջորդ Ջա՛ֆար Ղուլին և նույնիսկ հավելավճարով, որի մասին նշվում է 1812 թ. ռուսական հրամանատարության նամակագրության մեջ: Թերևս, ջանալով ապացուցել իր նվիրվածությունը ռուսական իշխանություններին՝ Շաքիի խանն այդ տարի վճարում է հավելյալ 2000 չերվոն, և սույն թվականից 9000 չերվոն է հաստատվում Շաքիի խանության վճարելիք ամենամյա հարկը[36]:

Այս խնդրի առաջին ուսումնասիրողներից էր Պ. Զոբանյանը, ով կարողացել էր բացահայտել դրա շուրջ հետագա զարգացումները: 1814 թ. խանության 300 բնակիչ գնում են Թիֆլիս՝ բողոքելու ռուսական կառավարությանը խանի բռնապետությունից և դրամաշորթությունից՝ պահանջելով հարկային զիջումներ: Բայց այնտեղ նրանց շրջապատում են զինվորները և 25 հոգու ձերբակալում, ապա՝ աքսորում[37]: Պ. Զոբանյանի կողմից լուսաբանվում են XIX դ. հայ քաղաքական գործիչ Հարություն Արարատյանի ձեռնարկած քայլերը հավատի հարկի դեմ բողոքի մասնակիցներին արդարացնելու ուղղությամբ, որոնք, սակայն, հաջողություն չեն ունենում և հանգեցնում են ռուսական իշխանությունների կողմից նրա հանդեպ սկսված հետապնդումներին[38]: Հ. Արա-

---

[32] Տե՛ս Присоединение Восточной Армении к России. 1972, 430–431.

[33] Присоединение Восточной Армении к России. 1972, 534–535.

[34] Տե՛ս Russia and the Armenians of Transcaucasia, 1797–1889, A Documentary Record. 1998, 171–172.

[35] Չերվոնը (червонец) ռուսական ոսկեդրամն էր՝ 3 ռուբլի արժեքով՝ իտալական դուկատի համարժեքը: XIX դ. առաջին կեսին այն հատվում էր 88 հարգի ոսկուց (Энциклопедический словарь. 1903, 531):

[36] АКАК. 1873, 549–550.

[37] Զ ո բ ա ն յ ա ն. 1981, 134:

[38] Զ ո բ ա ն յ ա ն. 1981, 135–136:

րատյանն այս առթիվ զեկուցագիր է գրում ցարական իշխանությանը, որտեղ մատնանշում է՝ հավատքի համար գանձվող «ղին խփագ» հարկը գանձվում էր Շաքիի Վարդաշեն, Ճալեթ և Նիժ գյուղերից 60 բաթման[39] կամ 1440 ֆունտ չափով[40]: Այսինքն՝ այս հարկը գանձվում էր Շաքիի, թերևս, միայն հիշյալ երեք գյուղերից, որը խոսում է, բնականաբար, խտրական վերաբերմունքի մասին և արդարացի չէր քրիստոնեական պետության իշխանության պայմաններում: Ս. Ջալալյանցը փաստում է՝ Վարդաշեն և Նիժ իր կողմից կատարած այցելության ժամանակ ևս, որը XIX դարի կեսերին էր, այդ «դեն խփակի» կոչվող հարկը տեղի բնակիչները վճարում էին[41]:

Իհարկե, տնտեսական միայն այս գործոնը չէր, որ հանգեցնում էր Շաքիի շրջանում և ողջ Արևելյան Այսրկովկասում XIX դարում էլ ավելի լայն թափ հավաքած դավանափոխությանը (մյուս գործոնների դիտարկումը դուրս է սույն հոդվածի շրջանակներից): Դավանափոխության ծավալն Արևելյան Այսրկովկասում առավել հստակ պատկերացնելու համար բավական է հիշել խլամացած հայերի քանակի մասին XIX դարավերջին առկա վիճակագրական տվյալները՝ 14.000[42]–15.480 ընտանիք[43]:

Վարդաշեն և Նիժ գյուղերի բնակիչների էթնիկ պատկանելության հարցը

Որոշ պարզաբանման կարիք ունի երդմնագիր-խնդրագրի հեղինակների էթնիկ ինքնության հարցը: Խնդրո առարկա փաստաթղթում նշվում է հեղինակների նախնիների և ազգականների հայ լինելու մասին՝ «ամենանվաստներիս հայրերն ու պապերը հայ էին և են»: Կարծում ենք՝ խնդրարկուներն այդ կերպ ցանկանում էին շեշտել իրենց պատկանելությունը Հայոց եկեղեցուն, որովհետև հայցում էին իրենց թեմական առաջնորդի՝ Հայոց եկեղեցու վրացահայ թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննեսի աջակցությունն իրենց խնդրի լուծման հարցում:

Սկսած XIX դարից՝ Վարդաշեն և Նիժ գյուղի բնակիչների ուդիերեն լեզուն գրավել է մասնագետների ուշադրությունը[44]: Այստեղ ապրող ուդիների մասին տվյալներ է հաղորդում Ս. Ջալալյանցը, որը միաժամանակ մատնանշում է Ճալեթ գյուղի հայաբնակ լինելը[45]: Ըստ նրա՝ Վարդաշենի 300 ուդի բնակիչները վրացադավանության էին անցել «ի հարստահարութենէ ումեմն ընչաքաղց եպիսկոպոսի»[46]: Այս դավանափոխությունը, ըստ ամենայնի, մեր վավերագրի գրությունից հետո է տեղի ունեցել, այլապես նրանք ու նրանց քրիստոնյա աջակիցները վրացահայ թեմի առաջնորդին չէին դիմի և վերջինս

[39] *Թավրիզի մեկ բաթմանը կամ մանը XIX դարում 3,175 կգ էր* (H i n z. 1955, 19)*:*

[40] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 41, էջ 1:*

[41] *Ջ ա լ ա լ ե ա ն ց. 1858, 381:*

[42] *Ջ ա լ ա լ ե ա ն ց. 1858, 368:*

[43] *Բ ա ր խ ո ւ տ ա ր ե ա ն ց. 1999, 291–292:*

[44] K l a p r o t h. 1814, 177.

[45] *Ջ ա լ ա լ ե ա ն ց. 1858, 376:*

[46] *Ջ ա լ ա լ ե ա ն ց. 1858, 379:*

էլ նրանց չէր աջակցի: Ըստ Ջալալյանցի՝ Նիժում բնակվում էր 500 ուդի, որոնք հայերեն գիտեին և Հայոց եկեղեցու հետևորդ էին:

Ուդիերենը (կամ ուտիերեն) համարվում է կովկասյան լեզվաընտանիքի լեզգիական լեզուների խմբին պատկանող լեզուներից և միջնադարի կովկասյան աղվաներենի հետագա փուլը[47]*: Ըստ այդմ՝ այն միակն է Արևելյան Այսրկովկասի հին լեզուներից, որով պահպանվել են գրավոր նյութեր: Աղվանական կրկնագիր ձեռագրերի ուսումնասիրության արդյունքում գերմանացի արևելագետներ Յոստ Գիպերտը և Վոլֆգանգ Շուլցեն հանգել են այն եզրակացության, որ դրանք բովանդակում են Հովհաննեսի Ավետարանի մասեր՝ թարգմանված հին ուդիերեն 670 թ., այսինքն, այն ժամանակ, երբ գրաբարով քրիստոնեական ավանդույթն արդեն առկա էր քրիստոնյա Աղվանքում*[48]*:*

Ա. Հակոբյանը, հենվելով պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի (898–924/9) կողմից ուդի էթնոնիմի կիրառման վրա, ուդիների էթնիկ համախմբման ավարտը համարում է X դարի սկիզբը և հավանական համարում, որ այդ ժողովուրդը ձևավորված լինի տվյալ տարածքի աղվանական քրիստոնյա այլ ցեղերի հիմքի վրա[49]*: Այնուամենայնիվ, այդ էթնոնիմն աղբյուրներում սակավ է վկայված, և հաջորդ հիշատակությունն արդեն վերաբերում է XVIII դարին*[50]*:*

Թե՛ ուդիներին, թե՛ հայերին ու թե՛ Արևելյան Այսրկովկասի մյուս քրիստոնյաներին գրեթե բոլոր համաժամանակյա աղբյուրները «քրիստոնյա» կամ «հայ» էին անվանում[51]*: Հայտնի է նաև այն, որ էթնիկ ինքնության հարցում մինչև XX դ. շատ ավելի կարևոր դեր ուներ դավանանքը, քան լեզուն և բնակության վայրը:*

Արդեն կարելի է ընդունված տեսակետ համարել, որ որոշակի կապ կա կրոնի և էթնիկ ինքնության միջև[52]*: Որոշ դեպքերում կրոնն ընդհուպ հավասարվում է էթնիկ պատկանելությանը, ինչպես, օրինակ, ամիշների, մորմոնների, հուտերիտների և հրեաների դեպքում է*[53]*: Նույն երևույթին ականատես ենք նաև հայության շրջանում: Ընդհանրապես, հայկական ինքնության կարևորագույն բաղկացուցիչն է համարվում կրոնը և Հայ առաքելական եկեղեցին՝ Հայոց թագավորության կողմից քրիստոնեության որպես պետական կրոն ընդունումից մինչև XVIII դար*[54]*: Ըստ ամենայնի, նմանատիպ իրավիճակ էր նաև Արևելյան Այսրկովկասում միջնադարում և XVII–XIX դդ., երբ կրոնը նշանակալի դեր ու ազդեցություն ուներ ազգային ինքնագիտակցության և ինքնության վրա, իսկ դրա փոփոխությունը հանգեցնում էր նաև էթնիկ պատկանելության փոփոխության:*

---

[47] *Տե՛ս* Gippert. 2011, 208–209.

[48] Gippert, Schulze. 2007, 209.

[49] Акопян. 2015, 144.

[50] Армяно-русские отношения в первой трети XVIII века. 1967, 90–91.

[51] Подробное описание путешествия Голштинского посольства. 1870, 526, 532–534; Early Voyages and Travels to Russia and Persia. 1886, 136; Письма и донесения иезуитов. 1904, 107.

[52] Oppong. 2013, 13.

[53] Oppong. 2013, 14.

[54] *Հմմտ. Զաքարյան. 2014, 6–7, 24:*

Հայոց եկեղեցու դերը զգալիորեն աճեց Կիլիկիայի հայոց թագավորության անկումից և, հատկապես, Մայր Աթոռը Վաղարշապատում հաստատվելուց հետո: Սբ. Էջմիածնի կաթողիկոսները մահմեդական իշխանությունների կողմից ընդունվում էին որպես բոլոր հայերի հոգևոր առաջնորդ ու միջնորդ դեր ունեին այդ իշխանությունների և նրանց գիմմի հայ հպատակների միջև: Հայոց կաթողիկոսների, ինչպես նաև հայոց վանքերի առաջնորդների դերի ընկալման տեսանկյունից շատ բնութագրական է մահմեդական իշխողների կողմից նրանց տրված «խալիֆա» տիտղոսը[55], որը չեղարկում էր վերջիններիս վերապահված ոչ միայն հոգևոր բարձր դիրքը, այլև աշխարհիկ իշխանությունը իր հետևորդների ներքին կյանքի կառավարման հարցում՝ հայերի միջև զանազան գործարքների վավերացում, վեճերի լուծում և կրոնական օրենքների կիրառման հարցում վերահսկողություն:

Դավանափոխությունը Հայոց եկեղեցին համարում էր անընդունելի, և այն անխուսափելիորեն հանգեցնում էր դավանափոխի օտարմանը ոչ միայն եկեղեցուց, այլև՝ էթնիկ հանրությունից: Այս իրողությունն արտացոլվել է նաև հայերենում առկա դավափոխությունը մատնանշող բառերով, որոնք, կախված, թե ինչպիսի միջավայրում է տեղի ունեցել դավանափոխությունը, հայտնի են հետևյալ տարբերակներով՝ «ֆռանգանալ կամ լեհանալ» կաթոլիկացման դեպքում, իսկ մահմեդականացմանը համարժեք՝ «տաճկանալ, թրքանալ, քրդանալ և պարսկանալ»[56]:

Հայոց եկեղեցին երբեմն իր վրա էր վերցնում կարիքավորների փոխարեն գլխահարկի վճարումը: Հայության մեջ կար չունևորների մի ստվար զանգված, որի համար դժվար էր ջիզյայի կանոնավոր վճարումը: Այդ մարդկանց փոխարեն, XVII դարում մի քանի անգամ Արևելյան Հայաստան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեի հավաստմամբ, հաճախ փոխհատուցում էր Հայոց եկեղեցին (կամ էլ՝ հայ մեծահարուստները): Այդ մասին կաթողիկոսին հատուկ տեղեկանք էր ուղարկում յուրաքանչյուր արքեպիսկոպոս[57]: Նույն փաստն է արձանագրում նաև XVIII դարասկզբի ֆրանսիացի ճանապարհորդ Տուրնեֆորը՝ նշելով, որ հակառակ դեպքում այդ հայերը բռնի հավատափոխ էին արվում կամ ստրկացվում[58]: Այնուամենայնիվ, Հայոց եկեղեցին, թերևս, հաճախ ի վիճակի չէր վճարել բոլոր կարիքավորների փոխարեն:

Այսպիսով, ինչպես փաստում է դիտարկվող վավերագիրը, անհրաժեշտության դեպքում ուդի-հայերը, իրենց համարելով հայ, դիմում էին Հայոց եկեղեցուն, և վերջինս էլ ջանում էր պաշտպանել նրանց շահերն ու իրավունքները, որքանով որ դա հնարավոր էր թե՛ մահմեդական իշխանությունների և թե՛ ռուսական իշխանությունների պայմաններում: Հետևաբար, էթնիկ ինքնության տեսանկյունից, կարծում ենք, ճիշտ են և՛ հայ, և՛ ուդի ձևերը:

Սխալ է ժխտել նրանց ինքնության հայկական բաղադրիչը, քանի որ ինչպես դիտարկվող վավերագիրը, այնպես էլ տարբեր ժամանակների բազմաթիվ աղբյուրներում տեղի բոլոր քրիստոնյաներին հայ են համարում: Պատահական չէ, որ Արևելյան Այսրկովկասի քրիստոնյա և մահմեդական հայերին բնորոշելով՝ XX դարասկզբի ուսումնասիրող Ղազար Հովսեփյանը նրանց կենցա-

---

[55] Կոստիկյան. 2019, 122–123:
[56] Տե՛ս, օրինակ, Գյուրջինյան. 2019, 163, 167, 168:
[57] Tavernier. 1678, 11.
[58] Tournefort. 1740, 301–302.

ղին, ավանդույթներին և ազգային նկարագրի այլ բաղադրիչների հետազոտությանը նվիրված իր աշխատության[59] վերնագրում նշում է «ուտեացի և մահմեդական հայեր» ձևակերպումը, որոնցից առաջինը մատնանշում է նրանց լեզուն, իսկ երկրորդ դավանանքը՝ այդ կերպ առանձնացնելով հայադավան հայերից հիշյալ էթնո-դավանական խմբերը:

Երդմնագիր-խնդրագրի նկարագիրը

Ներկայացվող երդմնագիր-խնդրագիր վավերագիրը պարսկերեն է և մատնանշում է այն իրողությունը, որ այդ լեզուն կարևոր դեր ուներ տարածաշրջանում, հատկապես՝ միջէթնիկ շփումների ու պաշտոնական գրագրության մեջ: Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել են պարսկերեն բազմաթիվ վավերագրեր՝ գրված Արևելյան Այսրկովկասի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Շաքիի խանության տարածքում XVII դարից XIX դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում:

Խնդրո առարկա երդմնագիր-խնդրագիրը գրանցված է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում, թղթ. 1ը, վավ. 1526: Բնագրի մեծությունը՝ 20,5 x *34 սմ, գրված է կապույտ, ռուսական, լուսադրոշմով* (Я М П J) *թղթի վրա, գիրը՝ նասթա՛լիղ՝ շիքասթեի տարրերով, պարսկական խնդրագրերին բնորոշ կաղապարային ձևով: Հակառակ կողմում հայերենով՝ «Հոգևորական ծայրագոյն հայոց կառավարիչ Յօհաննէս Սրբազան Արքեպիսկոպոս»-ի ուղեկցող գրությունն է:*

The Persian text

1 هو اله الواحد القهار

2 دو کلمه عرض بندکان فقرا و بیچارکان جماعت تازه مسلمانان وارطاشن و نیج بذروهٔ عرض میرسانند که
3 چون درینوقت بر خاطر شریفت پوشیده و مستور نماناد که این چند نفر جماعت
4 مسلمانان اولا بقسم خدایی تعالی و یمین رب العزة و ثانیا فرقمبارک پادشاه روسیه می نماییم که آباء و اجداد
5 کمترینان ارامنه بوده و هستند و وقتی از اوقات حاکم ولایت شکی ازین مردمان ابریشم
6 دین می خواست وطلب نموده در آن حال بعضی قبول کرده مسلمان نگردید و بعضی قبول
7 نکرد مسلمان شد از آن جماعت که ابریشم دین را قبول نکرد مسلمان شد یکی پروردین نام که
8 پسر او الله ویردی نام و پسر الله ویردی جعفر نام است مسلمان شده است و یکی مردان نام مسلمان
9 است و پدر او خلف نام است ذمی است ذمی می بود و یکی الله ویردی نام که مسلمان شده است و پدر او
10 سردار نام است ذمی می بود و یکی اوسوف نام مسلمان است و پدر او ایوان نام است ذمی می بود
11 و یکی ابراهیم نام مسلمان است و برادر او اریتون نام است ذمی است و یکی علی نام مسلمان است و پدر
12 او پروردین نام است ذمی می بود و یکی اوسوف نام مسلمان است و پدر او مردرس نام است ذمی است
13 و قودان اغلی یکی پسر او احمد نام مسلمان است و یکی پسر او عقوب نام ذمی است و این کمترینان
14 علی سبیل الانفراد یعنی علی حدة علی حدة اداء شهادت و یمین و قسم نماییم که والله العظیم و باالله الکریم
15 و بقسم سر پادشاه روسیه که این مردمان مزبور آن ابریشم دین را قبول نکرده مسلمان شده ایم
16 و هر کس که ابریشم دین را قبول کرده اند مسلمان نشده اند تا الی الآن هرچه که از ابریشم داده اند
17 ابریشم دین است و مالوچهات نیست است بعد از آن صاحب اختیار است چون درینوقت
18 هرچیزی که برین جماعت مسلمانان که پنج نفر وارطاشن بود و سه نفر نیج بودند لازم بود ادا و قضا
19 نمودیم تا دانند و ذره خلاف نشده است من بعد صاحب اختیار است

[59] *Յ ո վ ս է փ ե ա ն. 1904:*

[8 մատնահետք]

Երդմնագիր-խնդրագրի հակառակ կողմում հայերենով գրված է.

«Հոգևորական ծայրագոյն հայոց կառավարիչ Յօհաննէս Սրբազան Արքեպիսկոպոս

Բոլոր Նուխուայ հասարակութիւնս խնդրեմք, որ զայս ութն անձանց ՚ի հայոց տաճկացելոց է որ խիակ դինի ոչ տան, զնոցա երդմնական թուղթն մատուցես պայծառափայլ կնեազ Օրբելեանին և Պայծառափայլ ղրափ Գուդովիչին»:

Վավերագրի թարգմանությունը

«Նա է Աստված: Միակը և Ամենազորը:

Վարդաշեն և Նիժ գյուղերի խեղճ ու թշվառ, նոր մահմեդականացած ծառաների համայնքի կարճ խնդրագիրը:

Խոնարհաբար զեկուցում ենք, որպեսզի ազնվական մտքից գաղտնի ու նրան անհայտ չլինի, որ այս մի քանի մահմեդականներս նախ Բարձրյալ Տիրոջ, ապա Ռուսիայի Նորին Մեծություն օրհնյալ միապետի [անունով] երդվում ենք, որ ամենանվաստներիս հայրերն ու պապերը հայ էին և ենք: Օրերից մի օր Շաքիի շրջանի (վիլայեթ) կառավարիչը (հաքիմ) այս մարդկանցից աբրիշում-ե դին պահանջեց: Այդ ժամանակ ոմանք համաձայնվեցին և մահմեդական չդարձան, ոմանք էլ չհամաձայնվելով մահմեդականացան. մեկը՝ ոմն Փարվարդին, նրա որդին է Ալլահվերդին և Ալլահվերդիի որդին է Ջա՚ֆարը, որոնք մահմեդական են, մյուսը՝ Մարդան անունով մահմեդականը, իսկ նրա հայրը՝ Խալաֆ անունով, զիմմի է և զիմմի է եղել, մեկն էլ ոմն Ալլահվերդին է մահմեդականացել, և նրա հայրը՝ Սարդար անունով, զիմմի է. մեկն էլ Ուսուֆ անունով մահմեդականն է, և նրա հայրը՝ Իվանը, զիմմի է. մեկն էլ Իբրահիմ անունով մահմեդականն է, և նրա եղբայրը Արիթուն անունով, զիմմի է. ոմն Ալի անունով մահմեդականը, և նրա հայրը՝ Փարվարդին անունով, զիմմի էր. Ուսուֆ անունով մահմեդականը, և նրա հայրը՝ Մարդիրոս անունով, զիմմի է, ոմն Վաղուղանօղլիի որդիներից մեկը՝ Ահմադ անունով, մահմեդական է, մյուսը՝ Ակոբ անունով, զիմմի է: Այս նվաստներս առանձին-առանձին վկայում և երդվում ենք հանուն Ալլահի, Բարձրյալ և Ողորմած, և Ռուսիայի տիրակալի գլխով, որ այս անձինք չհամաձայնվելով աբրիշում-ե դինի [վճարմանը] մահմեդականացել ենք: Եվ ով, որ համաձայնվել է աբրիշում-ե դինին, մինչ այժմ, որքան որ մեռաքս են տվել, աբրիշում-ե դին է, և մալոջհաթ չէ: Այսուհետև Ձերն է իշխանությունը, քանի որ այն ամենը, ինչ այս մահմեդականները,

որոնցից հինգը Վարդաշենից և երեքը Նիժից են, պարտավոր էին, վճարել են՝ առանց աննշան թերանալու: Մնացածը՝ Ձեր հրամանով»:

Եզրակացություն

Քրիստոնյաների դավանափոխությունը Շաքիի շրջանում, սկսված լինելով վաղ միջնադարից, շարունակվել է ընդհուպ մինչև XIX դար: Ներկայացված փաստերը և վավերագրերի տեղեկությունները ցույց են տալիս, որ դավանափոխությունը խթանվում էր թե՛ տեղի և թե՛ արտաքին ուժերի ճնշմամբ, տնտեսական ազդակների խթանմամբ, ինչպես նաև բռնի մեթոդների կիրառմամբ: Անգամ քրիստոնյա Ռուսաստանի գերիշխանությունը չի բարելավում տեղի քրիստոնյաների դրությունը: Նրանք հակառակ այդ երկրից ունեցած իրենց ակնկալիքներին, որի գերիշխանության հաստատմանը տարածաշրջանում մեծապես նպաստել էին, արժանանում էին խտրական և դաժան վերաբերմունքի: Շաքիի քրիստոնյա բնակիչներից շարունակվում էր գանձվել հավաքի հարկ, որի դեմ ըմբոստությունը պատժվում էր: Այն, ի վերջո, հանգեցնում էր զանգվածային դավանափոխության ու արտագաղթի:

Քրիստինե Կոստիկյան – պ. գ. դ., ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանին հարակից երկրների պատմության ամբիոնի և Հայ-ռուսական համալսարանի արևելագիտության ինստիտուտի պրոֆ., Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանի արևելագիտության բաժնի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտության ու պատմագրության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ժողովրդի և Իրանի պատմություն, պարսկական աղբյուրագիտություն: Հեղինակ է 7 մենագրության և շուրջ 30 հոդվածի:
kr.kostikyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամ Կրետացի. 1973, Պատմություն, քնն. բնագիր, ռուս. թարգմ., առաջ. թարգմ. Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 314 էջ:

Ադոնց Ն. 1948, Բագրատունեաց փառքը. – Պատմական ուսումնասիրութիւններ, Լոյս ընծայեց Ա. Խոնդկարեան, Պարիս, էջ 125–134:

Այվազյան Ա. 2022, Արևելահայության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց զորքի թվակազմը 1720-ական թվականներին, Երևան, «ՆՏ Հոլդինգ», 664 էջ:

Արաբական աղբյուրներ. 2005, հ. Գ, Արաբ մատենագիրներ IX–X դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 703 էջ:

Բարխուտարեանց Մ. 1999, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երեւան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 416 էջ:

Գյուրջինյան Դ. 2019, Ազգային ինքնության փոփոխություն նշանակող հայերեն բառերը.– «Վէմ» (Երևան), թիվ 4, էջ 161–181:

Երեմյան Ս. Տ. 1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 153 էջ:

Զաքարյան Ս. 2014, Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցը (ձևավորման և կայացման փուլ). – «Հայոց ինքնության հարցեր», 2, Երևան, «Լիմուշ» հրատ., էջ 6–24:

Կարապետյան Մ. Մ. 1988, Իմամ Ջաֆարի օրենքը և արևելահայերը.– ՊԲՀ, № 1, էջ 219–221:

Կոստիկեան Ք. 2019, Պարսից գրագրութեան մէջ Հայոց կաթողիկոսներին տրուած տիտղոսն ու պատուանունները. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), թիւ 1–12, էջ 121–133:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 41:

Մելիքսեթ-Բեկ Լ. 1934, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա, Յերեվան, հրատ. Մելքոնյան ֆոնդի, 270 էջ:

Մկրտումյան Լ. 2006, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII–XIX դարերում, Երևան, «Տնտեսագետ», 270 էջ:

Մովսէս Կաղանկատուացի. 1983, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 384 էջ:

Յակոբեան Ա. 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Երեւան, «Գիտություն» հրատ., 440 էջ:

Յովսեփեան Պ. 1904, Ակնարկներ ուտեացի և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, տպ. Հերմէս, 106 էջ:

Չոբանյան Պ. 1981, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 200 էջ:

Ջալալեանց Հ. Ս. 1858, Ճանապարհորդութիւն 'ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Բ, Տփխիս, տպ. Ներսիսեան Հոգևոր Հայոց Ճեմարանի, 517 էջ:

Ստեփանյան Գ. 2021ա, Ճալեթի վանքը պատմության քառուղիներում. – «Բանբեր Մատենադարանի», № 32, էջ 92–145:

Ստեփանյան Գ. 2021բ, Հայերի էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության իրագործման փուլերն Արևելյան Այսրկովկասում (XI–XX դդ.) (մաս 1). – «Գիտական Արցախ» (Երևան), № 1, 2021 (9–35), էջ 21–30:

Փափազյան Հ. 1956ա, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը. – «Բանբեր Մատենադարանի», № 3, էջ 85–99:

Փափազյան Հ. 1956բ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պր. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 315 էջ:

Акопян А. А. 2015, К хронологии завершения этноконсолидации удинов и лезгин (период ослабления Арабского халифата). – Albania Caucasica, Сборник статей, вып. I. Предисл., подготовка А. К. Аликберов, М. С. Гаджиев. М., с. 129–147.

Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК). 1868, т. II, III, VI ч. II, VIII. Тифлис. Тип. Главного Управления Наместника Кавказского, 1238 с.

АКАК. 1869, т. III. Тифлис. Тип. Главного Управления Наместника Кавказского, 767 с.

АКАК. 1873, т. V. Тифлис. Тип. Главного Управления Наместника Кавказского, 1187 с.

Армяно-русские отношения в первой трети XVIII века. 1967, т. 2, ч. II, Сост. П. Арутюнян, С. А. Тер-Авакимова, В. Акопян. Ереван, Изд. АН АрмССР, 420 с.

Маркарян С. 2011, Независимое ханство Шакки в XVII–XIX вв. – Caucasica. «Труды института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона», т.1. М., с. 27–42.

Мхитарян Г. 2022, Армяне в этноландшафте Восточного Закавказья во второй половине XVIII века. – «История, археология и этнография Кавказа», т. 18, № 1, с. 26–38.

Письма и донесения иезуитов о России конца XVII начала XVIII века, 1904, т. III. СПб., Сенатская типография, 382 с.

Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах, составленное секретарем посольства Адамом Олеарием, 1870, перевел Павел Барсов. М., Изд. Общество истории и древностей российских при Московском университете, 1174 с.

Присоединение Восточной Армении к России. 1972, т. I. Ред. Ц. Агаян, Ереван, Изд. АН АрмССР, 715 с.

Энциклопедический словарь. 1903. СПб., Изд. Ф. Брокгаузъ, И. Ефрон, т. XXXVIII[a], 960 с.

Early Voyages and Travels to Russia and Persia, by Anthony Jenkinson and other Englishmen, (vol. I, II), 1886, edited by E. Delmar Morgan and C. H. Coote, Burt Franklin publisher. New York, MDCCCLXXXVI, vol. I., 177 p.

Gippert J., Schulze W. 2007, Some Remarks on the Caucasian Albanian Palimpsests (a special internet edition). – "Iran and the Caucasus", vol. № 2,11, pp. 201–212.

Gippert J. 2011, Relative Clauses in Vartashen Udi Preliminary Remarks. – "Iran and the Caucasus", vol. № 1/2,15, pp. 207–230.

Hudud al-alam. The regions of the World. A Persian geography (372 A. N. – 982 A.D.). 1937, Transl. and expl. by V. Minorsky. London: E. J. W. Gibb memorial series, 255 p.

Karīm Āqa Fātiḥ. 1384, 'Tārīkh-i khānāt-i Shakī', Si risālah dar bāra-i Qafqāz, muqaddamah, taṣḥīḥ va yāddāshtha Ḥusayn Aḥmadī, Tihrān: Mū'assasah-i muṭāli'āt-i tārīkh-i mu'āṣir-i Īrān, pp. 131–151.

Klaproth Julius von. 1814, Beschreibung der russischen Provinzen zwischen dem Kaspischen und schwarzen Meere. Berlin, 269 p.

Moreen V. 2008, Jizya. – "Encyclopaedia Iranica", vol. XIV, Fasc. 6, pp. 643–645. –http://www.iranicaonline.org/articles/jezya

Oppong Steward. 2013, Religion and identity. – "American International Journal of Contemporary Research", vol. 3, № 6, pp. 10–16.

Russia and the Armenians of Transcaucasia, 1797–1889, A Documentary Record. 1998, Annotated Translation and Commentary by G. A. Bournoutian, Mazda Publishers, 578 p.

Tavernier J. 1678, The six voyages of John Baptista Tavernier, Jean-Baptiste Tavernier, Translated by John Phillips. London, printed for R. L. and M.P., 658 p.

Tournefort J. 1749, A voyage into the Levant Performed by Command of the Late French King…, vol. II. London, printed for Midwinter, D. Brown, A. Bel, M.DCC. XVIII, 416 p.

ХРИСТИАНЕ В ШЕКИНСКОЙ ОБЛАСТИ И ПЕТИЦИЯ ИСЛАМИЗИРОВАННЫХ АРМЯН-УДИНОВ (IX–XIX вв.)

КРИСТИНЕ КОСТИКЯН

Резюме

Ключевые слова: Шеки, христианин, армянин, удин, исламизация, Агванская церковь, ханство, петиция.

Исламизация христиан в Шекинской провинции усилилась с начала XVIII века, когда ослабленный Сефевидский Иран был не в силах удержать власть над регионом. Не было больше силы в регионе, способной противостоять частым набегам северокавказских племен, которые обращались с иноверцами с особой жестокостью. Короткие периоды преобладания Османской империи и власти Надир Шаха также характеризуются большими разрушениями, причиненными региону.

Джизья или подушная подать с иноверцев области являлась одним из экономических стимулов принятия ислама. Она значительно увеличилась со времен правления Гаджи Челеби Хана Шекинского в середине XVIII века и взималась до середины XIX века.

Клятвенная петиция на персидском языке восьми армян-удинов, принявших ислам с целью освобождения от уплаты налога, называемого «абришом-и дин» и «дин ипаки» (перс. – тур. «шелк за веру»), местного названия налога, равнозначного подушной подати, взимаемой шелком, является важным аргументом, доказывающим неравноправное положение христиан в данном ханстве. В клятвенной петиции выражено недовольство исламизированных армян-удинов по поводу навязывания им того же налога местным ханом уже под властью Российской империи. Другие документы и события, связанные с данной проблемой, а также дальнейшие развития вокруг нее показывают не только безразличие царских властей по отношению к нуждам своих подданных христиан, страдающих от гнета мусульманского хана, но и заинтересованность в получении высоких доходов за счет тяжелого налога.

Кристине Костикян – д. и. н., проф. кафедры истории соседних с Арменией стран исторического факультета ЕГУ и Института востоковедения Российско-армянского университета, ведущий научный сотрудник Института древних рукописей им. М. Маштоца (Матенадаран) и отдела восточного источниковедения и историографии Института востоковедения НАН РА. Научные интересы: история армянского народа и Ирана, персидское источниковедение. Автор 7 монографий и около 30 статей.
kr.kostikyan@gmail.com

CHRISTIANS IN THE SHEKI REGION AND THE PETITION OF THE ISLAMISED ARMENIAN-UDINS (IX–XIX centuries)

KRISTINE KOSTIKYAN

Summary

Keywords: Sheki, Christian, Armenian, Udi, Islamization, Church of Aghvank, khanate, petition.

The Islamization of the Christians in the Sheki region was intensive from the very beginning of the XVIII century when the weakened Safavid Iran was not able to keep control over the region. There was no longer a force in the region capable to withstand the frequent raids of the North Caucasian tribes who treated the infidels with particular cruelty. The short periods of the Ottoman Empire dominance and Nadir Shah's rule were also characterized by great destruction caused to the region.

The jizya or poll tax from the infidels of the region was one of the economic incentives for adopting Islam. It had significantly increased since the reign of Haji Celebi Khan of Sheki in the middle of the XVIII century and was levied until the middle of the XIX century. The oath petition, in Persian language, of eight Armenian-Udins who converted to Islam in order to be exempted from paying the tax called "abrishom-i din" and "din ipaki" (Persian - Turkish "silk for faith"), the local name of the tax equivalent to the poll tax levied by silk, is an important argument proving the unequal position of Christians in this khanate. The oath petition expresses the dissatisfaction of the Islamized Armenian-Udins about the imposition of the same tax by the local khan already under the rule of the Russian Empire. Other documents and events related to this problem, as well as further development around it, show not only the indifference of the tsarist authorities towards the needs of their Christian subjects suffering from the oppression of the Muslim khan, but also an interest in obtaining high incomes due to heavy taxes.

Kristine Kostikyan – Doctor of Historical Sciences, Professor at the Department of History of Neighboring Countries with Armenia at the History Faculty of YSU and the Institute of Oriental Studies of the Rassian-Armenian University, Leading Researcher at the Institute of Ancient Manuscripts after M. Mashtots (Matenadaran) and the Department of Oriental Source Studies and Historiography at the Institute of Oriental Studies of NAS RA. Scientific interests: history of Armenian people and Iran, Persian source studies. Author of 7 monographs and about 30 articles. kr.kostikyan@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ՀՏԴ 947.925 + 947.0

Doi:10.54503/0135-0536-2023.3-46

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր՝ Արևելյան Հայաստան, Ռուսաստան, պատերազմ, միացում, պատմագրություն, Լեո, Թուրքմենչայի պայմանագիր, նշանակություն, ինքնավարություն, թագավորություն, գնահատական:

Նախաբան

Հայոց պատմության, հատկապես՝ խորհրդային ժամանակաշրջանի պատմագիտական գրականության մեջ, թերևս, ամենաուսումնասիրված թեմաներից է XVIII–XIX դդ. հայ-ռուսական հարաբերությունների ու դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հիմնահարցը: Հայտնի է, որ պատմական այդ իրադարձության կապակցությամբ հրատարակվել են փաստաթղթերի և նյութերի բազմահատոր ժողովածուներ, ստեղծվել պատմագեղարվեստական բնույթի հարուստ գրականություն, համապետական մակարդակով կազմակերպվել են հոբելյանական գիտաժողովներ, կառուցվել՝ հուշարձաններ, անվանակոչվել՝ բնակավայրեր, թողարկվել՝ հուշամեդալներ և այլն:

Կարելի է արձանագրել, որ երկու դար է, ինչ այդ հիմնահարցը՝ Արևելյան Հայաստանի միացման նշանակության ու գնահատականի առումով, բուռն քննության առարկա է դարձել հայ հասարակական-քաղաքական, գրական և պատմագիտության շրջանակներում՝ սկսած Ներսես Աշտարակեցուց ու Խաչատուր Աբովյանից մինչև մեր ժամանակները, և, ըստ պատմափուլերի, հասարակական-քաղաքական ու գաղափարական նպատակահարմարությամբ պայմանավորված, պատմաքաղաքական այդ իրադարձությանը տրվել են ամենատարբեր գնահատականներ՝ հայ ժողովրդի համար մեծագույն բարիքից ու պատմական վերածնունդ-շրջադարձից ընդհուպ մինչև չարիք:

Բայցևայնպես, եթե մի կողմ թողնենք ժամանակաշրջանի ու հանգամանքների թելադրանքով հայ հասարակական-քաղաքական մտքում ու պատմագիտական գրականության մեջ երբեմն պարտադրված հակասական գնահատականները, մի բան անառարկելի է՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին անսակարկելի ու անբեկանելի պատմական նշանակություն ունեցող իրադարձություն պիտի համարել, քանզի այդ միացմամբ չանտեսելով, իհարկե, հետագայում դրան ուղեկից բացերն ու դժվարությունները՝ արևելահա-

---

* *Ներկայացվել է 07. V. 2023 թ., գրախոսվել է 30. V. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

յության համար ստեղծվեցին սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, ժողովրդագրական, հոգևոր-մշակութային առաջընթացի համար նպաստավոր միջավայր ու պայմաններ: Իսկ հետագայում՝ հենց արևելահայ այդ հողատարածքի վրա էլ դարավոր ընդմիջումից հետո, գերմարդկային ճիգուջանքերով ու մարդկային վիթխարի կորուստներով, ի վերջո, վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումը՝ իբրև «Հայոց պատմության պարբերացման նոր շրջափուլ» վարկածի շուրջ

Սկսած ուշ միջնադարից՝ Կիլիկիայի հայկական վերջին պետականության անկումից հետո, հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների քաղաքական մտքի կիզակետում է եղել պետականության վերականգնման գաղափարը: Եվ այդ տեսլականով հայ հանրույթը ոտք դրեց XIX դար: Հայ հասարակական-քաղաքական մտքի ու շարժման նշանավոր գործիչների՝ Ի. Օրու, Հ. Էմինի և մյուսների չհաջողած քաղաքական ռեգերումներից հետո դարասկզբին մեծապես հույսը կապվեց դեպի Անդրկովկաս մուտք գործող Ռուսաստանի հետ:

Հայտնի է, որ 1801 թ. հունվարի 18 (30)-ին Ռուսաստանի կայսր Պավել I-ի բարձրագույն հրամանագրով Արևելյան Վրաստանը (Քարթլի-Կախեթը) միացվեց Ռուսաստանին, ինչը վերահաստատվեց նրա իրավահաջորդ Ալեքսանդր I-ի՝ սեպտեմբերի 12 (24)-ի հրամանագրով[1]*:*

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման գործընթացը գործնականում սկսվեց հենց 1801 թ. Արևելյան Վրաստանի Ռուսաստանին միացումով: Այս կապակցությամբ տեղին է ակադեմիկոս Ա. Մելքոնյանի արձանագրումը, որ Հյուսիսային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռի-Փամբակը, Շամշադինը, Ղազախը, մինչ այդ գտնվելիս են եղել Վրաստանի թագավորության կազմում, ինչը նշանակում է՝ Արևելյան Վրաստանի միացումով Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև արևելահայ այդ շրջանները[2]*: Այլ խոսքով, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման գործընթացը սկսվել է 1801 թվականից: Այնուհետև, ռուս-պարսկական հետագա երկու պատերազմների արդյունքով՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով, որով Շորագյալի սուլթանությունը (Արևելյան Շիրակ), Ղարաբաղն ու Սյունիքը՝ Ղարաբաղի խանություն անունով, միացվեցին, իսկ ապա, հատկապես, 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով՝ Երևանի ու Նախիջևանի խանությունները, ու դրանով գործնականում ամբողջ Արևելյան Հայաստանը միակցվեց Ռուսաստանին, որի առաջադիմական նշանակությունը պատմագիտական գնահատականի առումով անվիճարկելի է: Այն նշանակալի էր արևելահայության համար ոչ միայն սոցիալ-տնտեսական, հարկային նախկին ծանր բեռի թեթևացման, ազգային ու կրոնական խտրականության մեղմացման, վարչաիրավական հարաբերությունների որոշակի կանոնակարգման, այլ՝ առավելապես հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության, անձի ու գույքի*

---

[1] *Տե՛ս* Присоединение Восточной Армении к России (1801–1813) (сб. док.). 1972, т. 1, 44; *նաև՝* Внешная политика России XIX и начала XX в. 1960, 93–94.

[2] *Տե՛ս Մ ե լ ք ո ն յ ա ն. 2011, 257, Մ ե լ ք ո ն յ ա ն. 2021, 174: Այդ մասին տե՛ս նաև՝ Հայ ժողովրդի պատմություն. 1985, 244, Պ ա ր ս ա մ յ ա ն. 1967, 44:*

ապահովության տեսակետից: Եվ, բացի այդ, քաղաքական հեռանկարի իմաստով առանձնապես գնահատելին այն էր, որ, ինչպես արդեն ասվեց, արևելահայ այդ հատվածը դարձավ արևելահայության համախմբման համար հիմք, ֆիզիկական, ժողովրդագրական, հոգևոր-քաղաքական այն միջուկն ու խարիսխը, որ հետագայում՝ շուրջ մեկդարյա սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական ու հասարակական-քաղաքական զարգացումները պիտի հանգեցնեին նրան, որ դարավոր ընդմիջումից հետո, թեկուզև պատմական Հայաստանի մի կտոր հողահատվածում (1/10-րդ մասում), պիտի տեղի ունենար Հայաստանի անկախության հռչակումն ու պետականության վերականգնումը:

Խորհրդահայ պատմագրության մեջ, ավելի հաճախ՝ քաղաքական-քարոզչական նպատակով, հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը հատուկ ընդգծելու համար բանը հասցրել են նրան, որ հայոց նոր շրջանի պատմության պարբերացումը փորձ է արվել սկսել XIX դ. սկզբներից[3], այսինքն՝ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից, ինչը հասկանալիորեն կրել է զուտ գաղափարաքաղաքական հնչերանգ և ո՛չ հայաստանյան, և ո՛չ էլ համաշխարհային պատմության չափումներով չի կարելի համարել գիտականորեն հիմնավոր: Բանն այն է, որ համաշխարհային պատմագիտական գրականությամբ նոր շրջանի պատմության սկզբնավորումը ընդունված է համարել XVII դարի կեսերը, այսինքն՝ սկսած Անգլիայի բուրժուական համարվող հեղափոխության դարաշրջանից: Բնականաբար, հայոց պատմությունը կազմում է ընդհանուր պատմության մի մասը: Բացի այդ, նման պարբերացման ընդունման պարագայում այդ շրջափուլից դուրս է մնում բուն Արևմտյան Հայաստանը: Ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների գործոնին, ապա դժվար չէ նկատել, որ XIX դ. սկզբներին իր սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման մակարդակով Ռուսաստանն առանձնապես չէր տարբերվում ո՛չ Թուրքիայից և ո՛չ էլ Պարսկաստանից: Դրանք, ըստ էության, համարվում էին ասիական տիպի ռազմաավատական, ամբողջատիրական կայսրություններ: Ավելին, դեռ տասնամյակներ պիտի անցներ, որպեսզի նոր խոսք բացվեր Ռուսաստանում 1861 թ. փետրվարի 19-ի Ալեքսանդր II կայսեր հրամանագրով ճորտատիրական իրավունքի վերացման մասին և այլն:

Դիտարկումներ միացման պատմագիտական գնահատականի շուրջ

Պատմագիտական քննության ու գնահատականի տեսակետից խորհրդահայ պատմագրության մեջ, և ոչ միայն նրանում, ժամանակաշրջանի հրամայականով ամենաբարձր, նույնիսկ չափազանցությունների հասնող արժևորումներ ու գնահատականներ են տրվել Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման իրադարձությանը: Այդ առումով, Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո թեմային առաջիններից մեկն անդրադարձավ պատմաբան Զ. Գրիգորյանը՝ այդ իրադարձությունը համարելով նախահեղափոխական (մինչև 1917 թ.) Հայաստանի ամենախոշոր պատմական իրադարձությունը[4]: Մեկ այլ տեղ էլ նա այդ իրադարձությունը գնահատել է՝ «շրջադարձային»[5]:

---

[3] *Աբրահամյան. 1947, 44, Պարսամյան. 1967, 20:*
[4] *Գրիգորյան. 1978, 3:*
[5] *Գրիգորյան. 1967, 54:*

Անվանի պատմաբան Վ. Պարսամյանն Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին համարում է «Նոր էրա հայ ժողովրդի պատմության մեջ»[6]: Ավելի ուշ, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում լույս ընծայված նրա՝ ավելի շատ քարոզչական նպատակներ հետապնդող, ռուսերենով լույս տեսած աշխատությունում շեշտվում է, որ «Ռուսաստանի օգնությամբ Արևելյան Հայաստանը փաստորեն վերածնվեց»[7]: Միացման 150-ամյակի առիթով ակադեմիկոս Ծ. Աղայանի խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի երկհատոր ժողովածուի նախաբանում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին համարվում է «շրջադարձային կետ հայ ժողովրդի պատմական ճակատագրում»[8]: Նույն կերպ, ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գնահատմամբ՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին «լուսավոր էջ բացեց հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ»[9]: Ականավոր պատմաբան, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանն ավելի հեռագնա բովանդակություն էր տեսնում այդ միացման մեջ: Նրա բնութագրմամբ՝ «Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին օբյեկտիվորեն դիտված նախապայմաններ էր ստեղծում արևելահայ ժողովրդի ազգային ազատագրման համար (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[10]: Խորհրդային դարաշրջանի վերջին տասնամյակների պատմագիր հեղինակներից Ն. Սարուխանյանը ևս խորհրդահայ պատմագրությանը բնորոշ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին համարում է «անկյունադարձային ու բախտորոշ» իրադարձություն: Նրա կարծիքով՝ «Մինչհեղափոխական (նկատի ունի՝ 1917 թ. – Ա. Հ.) Հայաստանի վերջին հարյուրամյակների պատմության ընթացքում ոչ մի իրադարձություն այնքան մեծ նշանակություն չի ունեցել հայ ժողովրդի կյանքում, որքան 1828 թ. փետրվարի 10-ին Պարսկաստանի փոքրիկ ու աննշան գյուղում՝ Թուրքմենչայում կնքած դաշնագրությունը»[11] և այլն: Այս և նման ձևակերպումները, պատմական արձանագրումներից զատ, ինչպես ասվեց, ավելի հաճախ հետապնդել են ոչ այնքան զուտ օբյեկտիվ պատմագիտական, որքան գաղափարական, քաղաքականքարոզչական, դաստիարակչական նպատակներ, որպեսզի «Հավերժ ռուս ժողովրդի հետ» նշանաբանով մեծարվի ու փառաբանվի Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին՝ ընդգծելու «սոցիալիզմ ու կոմունիզմ» կառուցող հայ, ռուս և մյուս ժողովուրդների դարավոր անխախտ եղբայրական կապերն ու բարեկամությունը: Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ, որ խորհրդային-կոմունիստական իշխող գաղափարաքաղաքական նպատակահարմարության ու հարկադրանքի պայմաններում նրանք չէին կարող ազատորեն արտահայտել սեփական տեսակետները:

Այդ ամենով հանդերձ՝ հարկ է արժանին մատուցել խորհրդահայ պատմագրության այն հեղինակներին, ովքեր վիթխարի աշխատանք են կատարել

---

[6] *Պ ա ր ս ա մ յ ա ն. 1946, 49:*

[7] П а р с а м я н. 1978, 3.

[8] Присоединение Восточной Армении к России (1814–1830) (сб. док.). 1978, 5.

[9] *Հայ ժողովրդի պատմություն. 1985, 258:*

[10] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1959, 635:*

[11] *Տե՛ս Ս ա ր ո ւ խ ա ն յ ա ն. 1971, 5:*

հայ-ռուսական հարաբերությունների ու Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հիմնահարցի համապարփակ ուսումնասիրության ուղղությամբ, որոնց արդյունքում բազմահատոր փաստաթղթերի ժողովածուների և մենագրությունների ձևով գիտական շրջանառության մեջ են դրել հսկայական արխիվային ու այլ փաստավավերագիր նյութեր:

Եթե միացմանը խորհրդային հեղինակների տված գնահատականները համեմատում են նախախորհրդային հեղինակների հետ, ապա վերջիններս հանդես են բերել անհամեմատ ավելի անաչառություն ու հավասարակշռվածություն՝ չժխտելով, իհարկե, դրա առաջադիմական նշանակությունը: Այսպես, օրինակ, շատ ավելի զուսպ է XIX դ. նշանավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցի գնահատականը. «… հայերը ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նրանց մի անտանելի, անարգական ստրկությունից, և բացել նոցա առջևւ մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»[12]: Պատմագիր Ստ. Պալասանյանը ևս ընդհանուր առմամբ դրական է գնահատում Արևելյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից, որի հետևանքով, ըստ նրա, խաղաղ ու աշխատասեր հայ ժողովուրդը ձեռք բերեց կյանքի և ստացվածքի ապահովություն, կրթական ու տնտեսական առաջադիմություն[13]: Արևելահայ հասարակական-քաղաքական կյանքի զարգացման առումով միացմանը նույնպիսի դրական գնահատական է տվել ՍԴԲՀԿ («սպեցիֆիկ») հայտնի գործիչ Դ. Անանունը[14]: Դրանց կողքին կարելի է տեսնել, որ XIX դարի պատմաբան Ա. Երիցյանը ավելի քան շատ բարձր է գնահատում արևելահայ երկրամասերի նվաճումը Ռուսաստանի կողմից: Նա գրում է, որ «Ներկա դարուս մեջ ոչ մի քաղաքական անցք այնքան նշանավոր չէ եղած Հայ ազգի համար, որքան պարսկական Թուրքմենչայ խղճուկ գյուղի մեջ կայացրած հիշյալ պայմանագիրը»[15]: Իսկ Մեծն Հովհ. Թումանյանի բնորոշմամբ՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի առումով՝ «հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան»[16] և այլն:

Ավելին, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացմանը իրադարձությանը հայ պատմագիտական գրականության մեջ, ըստ պատմափուլերի, գաղափարաքաղաքական հանգամանքներով պայմանավորված, արձանագրվել են ավելի սուր, նույնիսկ՝ իրարամերժ քաղաքական գնահատականներ՝ սկսած «չարիքներից փոքրագույնից» մինչև իսկ «չարիք»: Բայց, ընդհանուր առմամբ, ավելի շատ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումը դիտվել ու որակվել է իբրև «բարիք»[17]: Այդ իմաստով առավել հակասական է ժամանակին ռուս պատմաբան Մ. Պոկրովսկու, այսպես կոչված, վուլգար (գռեհիկ) սոցիոլոգիզմի տեսության դպրոցին տուրք տալու մեջ մեղադրվող, վաստակաշատ պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյանի) տված գնահատականը: Նա խորհրդային պատմափուլում, ժամանակի մտածելակերպի հրամայականով, ցարական տիրապետությունը հայերի համար որակել է իբրև «չա-

---

[12] *Ն ա զ ա ր ե ա ն ց. 1913, 96:*
[13] *Տե՛ս Պ ա լ ա ս ա ն ե ա ն. 1902, 499–500:*
[14] *Ա ն ա ն ո ւ ն. 1916, 10:*
[15] *Ե ր ի ց ե ա ն ց. 1894, 308:*
[16] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1959, 256:*
[17] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1990, 10:*

րիք»[18]: Ի լրումն ասվածի՝ Լեոն Երևանի գրավման 100-ամյակին նվիրված լրագրական հոդվածում պարսկական տիրապետությունը գերադասել է ռուսականից: Այսպես՝ նա գրում է. «Հայ գյուղացիությունը համայնական ինքնավարություն էր վայելում և ազատ էր, մինչդեռ յեկողը ճորտատիրական Ռուսաստանն էր, և նրա ներկայացուցիչները, զանազան Յերմոլովներ, Վորոնցովներ աշխատում էին պարսկական խանությունների մեջ էլ հաստատել ռուսական ճորտատիրական կարգերը»[19]: Ընդ որում, այդ պաշտոնաթերթի խմբագրությունը համաձայն չի եղել հոդվածագրի որոշ մտքերին: Բայց նա, ինչպես նաև պատմաբաններ Վ. Պարսամյանն ու Ս. Մարկոսյանը, պայմանավորված ըստ պատմաշրջանի քաղաքական նպատակահարմարության, ռուսական տիրապետությունը բնորոշել են «չարիքներից փոքրագույն»[20]: Նույն կերպ, պատմաբան Վ. Պարսամյանը, ևս ժամանակի ոգուն համապատասխան, ընդգծելով ցարիզմի գաղութային քաղաքականությունը, պարսկական և թուրքական բռնապետությունների համեմատ, հայ ժողովրդի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը որակել է «չարիքներից փոքրագույն»[21]: Բայց հետագայում՝ 1940-ական թվականների կեսերից, վերանայեց այդ մոտեցումը և մյուս պատմաբանների՝ Զ. Գրիգորյանի, Մ. Ներսիսյանի, Ա. Ռ. Հովհաննիսյանի, Ա. Գ. Հովհաննիսյանի և այլոց նման սկսեց բարձր գնահատել միացման նշանակությունը: Եթե ընդունենք, որ ազատության, զարգացման ու քաղաքակրթության ձգտող յուրաքանչյուր ազգի համար քաղաքական բարիքը սեփական ինքնիշխան, անկախ պետականություն ունենալն է, ապա ծայրահեղությունների մեջ չընկնելով՝ կարելի է արձանագրել, որ պատմագիտական գնահատականի առումով, արդի իրողությունների ու պահանջների դիտակետից, կարծում ենք՝ ավելի հիմնավոր և ընդունելի է Լեոյի, Վ. Պարսամյանի, Ս. Մարկոսյանի և մյուսների ժամանակին արած այն ձևակերպումը, ըստ որի՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին կարելի է համարել «չարյաց փոքրագույն»-ը:

Նկատառումներ Հայոց պետականության վերականգնման տեսլականի շուրջ

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման խրարից զանազանվող գնահատականների կողքին մեր պատմագրության մեջ գիտական քննության նյութ է նաև Հայաստանի հետագա ճակատագրի ու պետականության վերականգնման հեռանկարի հարցը: Իհարկե, ակներև է, որ XVIII դարի սկզբներից մինչև XIX դ. առաջին երեք տասնամյակները հայ ազատագրական միտքը, Հայոց պետականության վերականգնման ծրագրերը և դրան հասնելուն միտված հայ ազգային-ազատագրական շարժումները հիմնականում կրում էին դեպի Ռուսաստանն ուղղված քաղաքական կողմնորոշման բնույթ: Սակայն այս կապակցությամբ հարկ է անել մի վերապահում՝ սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե նախընթաց հայ ազատագրական գաղափարա-

[18] Լ ե ո. 1926, 162:
[19] «Խորհրդային Հայաստան» (Երևան), 13. X. 1927:
[20] Տե՛ս Լ ե ո. 1927, 251–253, Պ ա ր ս ա մ յ ա ն. 1967, 20, 96, նաև՝ Մ ա ր կ ո ս յ ա ն. 1935, 97, 133:
[21] Պ ա ր ս ա մ յ ա ն. 1940, 103:

բանության ու պայքարի նպատակը եղել է ընդամենը Հայաստանը Ռուսաստանին միացնելը: Պատմական իրականությունն ու իրողությունն այն է, որ հայերը մեծ ձգտում են ունեցել պարզապես Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել թուրք-պարսկական լծից: Ավելին, հայ ազատագրական շարժման գործիչների նպատակն էր՝ Ռուսաստանի օգնությամբ վերականգնել հայկական պետականությունը:

Այս համատեքստում դժվար է համակարծիք լինել ակադեմիկոս Գ. Գալոյանի այն տեսակետին, թե չնայած ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությանը՝ «այնուամենայնիվ պատմական զարգացման և ոչ մի փուլում հայ ժողովուրդի և ոչ մի խավ ու հասարակական հոսանք հարց չդրեց հայերի՝ Ռուսաստանից անջատվելու մասին»[22]: Նույն կերպ, դժվար է համակարծիք լինել նաև հարգարժան մյուս ակադեմիկոս Հր. Սիմոնյանի արտահայտած այն մտքին, թե Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո «հայ քաղաքական միտքը առաջ չքաշեց Ռուսաստանից անջատվելու պահանջ»[23] և այլն: Յուրաքանչյուր արժանապատիվ ազգ-ժողովրդի գերագույն նպատակը պետք է համարվի նրա ազատության ու անկախության ձգտելն ու դրան հասնելը, ինչը որ բոլոր ժամանակներում եղել ու մնում է հայ ժողովրդի կենսունակության գլխավոր առհավատչյան: XIX դարասկզբներից հայ ազգամետ աշխարհիկ և հոգևոր գործիչների հասարակական-քաղաքական մտայնության մեջ առաջնային պլանում է կանգնում ոչ թե միայն զուտ ազգապահպանության խնդիրը, այլ նաև հայոց հող-հայրենիքի ազատագրման, հետագա զարգացման ու բարգավաճման հեռանկարը, իսկ այդ նպատակների իրագործմանը հասնելու ամենահուսալի երաշխիքն ու ապավենը կարող էր լինել սեփական ազգային անկախ պետականության վերականգնումն ու համակարգային կայացումը:

Հարկ է ընդգծել, որ ավելի վաղ՝ XVIII դարում, Հայաստանի ազատաբաղձությամբ տարված հայ նշանավոր քաղաքական ու ռազմական գործիչների՝ Ի. Օրու, Դավիթ Բեկի, Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի, Հ. և Խ. Լազարյանների, Հ. Արղությանի և մյուսների առաջ քաշած գաղափարների ու ծրագրերի առանցքը եղել է Հայաստանի ազատագրումը՝ իհարկե, չմոռանալով հիմնականում Ռուսաստանի օգնությամբ: Նրանք գտնում էին, որ այդ օգնությունը պիտի միջոց դառնար և ոգեշնչեր հայերին ոտքի կանգնել ու միասնական ուժերով վերջին հաշվով հասնել հայոց ինքնիշխան պետականության վերականգնմանը:

Այս առնչությամբ, պատմագիտական գնահատականի տեսակետից, հարկ է հատուկ ընդգծել ճանաչված պատմաբան Վ. Դիլոյանի կողմից իր ժամանակների պայմաններում հնչեցրած բավականին համարձակ ու ճշմարիտ այն դիտարկումը, որ XVIII դարում և XIX դարի սկզբի հայ ժողովրդի ազատագրական շարժումը նպատակ չի հետապնդել՝ սոսկ միանալ Ռուսաստանին[24]: Հիրավի, XVIII դ. վավերագրերը, Հայաստանի ազատագրության ծրագրերը, հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների քայլերը և գործողությունները գալիս են

---

[22] Գ ա լ ո յ ա ն. 1982, 94–95:
[23] Ս ի մ ո ն յ ա ն. 2003, 6:
[24] Տե՛ս Դ ի լ ո յ ա ն. 1989, 5:

վկայելու, որ այդ շարժման ու պայքարի բաղձանքն է եղել այս կամ այն կերպ Անդրկովկասում հայկական պետականության վերականգնումը կամ հայ-վրացական միացյալ քրիստոնեական թագավորության ստեղծումը՝ Ռուսաստանի հովանու տակ: Երբ հայ հանրային ու հասարակական-քաղաքական ստվար շրջանակները ցանկություն ու ձգտում են հանդես բերել՝ Հայաստանը միացվի Ռուսաստանին, դա ամենևին էլ չի նշանակել, թե նրանք հեռագնա նպատակ չեն ունեցել հասնելու բաղձալի՝ հայոց անկախ պետականության վարականգնմանը: Դժվար չէ հասկանալ, որ նրանք Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացումը դիտել են որպես միջանկյալ օղակ այդ դժվարին ու բաղձալի նպատակին հասնելու ճանապարհին:

Մյուս կողմից, դժվար է պատրանք ունենալ, թե Ռուսաստանը, անկախ նրա պետական դրոշների գույնից, երբևէ մտադրություն է ունեցել մեր տարածաշրջանում իր նվաճումների ճանապարհին վերականգնել հայոց պետականությունը: Նման պարագայում ամեն ինչ պետք է քննել ու գնահատել դրա վերջնարդյունքով: Իրականության մեջ դժվար չէ տեսնել՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին «միակցումից» հետո գրեթե մեկ դար տևած հետագա գործընթացները ցույց տվեցին, որ ցարական, իսկ հետագայում՝ գույնն ու դրոշը փոխած Խորհրդային Ռուսաստանը, իսկ վերջին տասնամյակներին արդեն Ռուսաստանի Դաշնությունը բնավ էլ մտադրություն չեն ունեցել վերականգնել ու պաշտպանել հայկական պետականությունը կամ էլ, իբրև դաշնակից, ուղղակի աջակից լինել նրա անվտանգությանը, իսկ եթե ռուսական բարձր իշխանությունների կողմից, սկսած Պետրոս Մեծի ժամանակներից, հայանպաստ կոչեր ու մտքեր են արտահայտվել, ապա դրանք կրել են ընդամենը մարտավարական, քարոզչական խոստումների բնույթ հեշտացնելու այն ժամանակներից Հայաստանի ու Անդրկովկասի «միակցումը» Ռուսաստանին և ամրապնդվելն այնտեղ: Հյուսիսի մեր մեծ հարևանը, անկախ քաղաքական գունավորումներից, իր արտաքին ծավալապաշտական քաղաքականությամբ միշտ էլ ցանկացել է Հայաստանը, և ոչ միայն նա, դարձնել հսկա կայսրության օրգանական մաս. մի ծրագիր, որն ունի արդիական հնչեղություն նաև մեր ժամանակներում: Նկատի առնելով Ռուսաստանի ծավալապաշտական հավակնությունները՝ տեղին է հիշեցնել ՀՅԴ ականավոր գաղափարախոս Վ. Նավասարդյանի՝ շուրջ մեկ դար առաջ հնչեցրած խոսքը. «Ռուսաստանը միշտ նույնն է, փոփոխվում են նրա գույները միայն և, ըստ գույների, նաև նպատակները»[25]:

Այնպես որ, ժամանակակից գիտական ու հանրային ընկալումների դիտակետից, արևելահայ երկրամասերի՝ Ռուսաստանին միացումը պետք է արժևորել հենց այդ իմաստով, թեև պետք է հասկանալ, որ «խաչապաշտ» ռուսական կայսրերն Այսրկովկասում և այլ երկրամասերում իրենց նվաճումները կատարելիս ամենևին իրենց հաշվարկների մեջ ներառված չէին, թե դրանք մի օր կարող են պայքարի դրոշ բարձրացնել, անջատվել կայսրությունից ու անկախանալ: Բայց համաշխարհային պատմության փորձը ցույց է տալիս, որ, որպես կանոն, պատմականորեն այդպես են եղել մետրոպոլիայի (մայր տերության) և նվաճված երկրների ու ժողովուրդների հետագա ճակատագրերը: Միաժամա-

[25] *Ն ա վ ա ս ա ր դ յ ա ն. 1925, 131:*

նակ պետք է ընդգծել նաև պատմական այն իրողությունը, որ հայ ժողովուրդը հավաքական մեծամասնությամբ վտանգելով, ֆիզիկականը, քաղաքականապես կողմնորոշված լինելով դեպի ռուս ժողովուրդն ու Ռուսաստանը, գրեթե բոլոր ռուս-պարսկական և, հատկապես, ռուս-թուրքական պատերազմների ժամանակ մեծ ոգևորությամբ ու չափերով մասնակցություն և աջակցություն է ցուցաբերել ռուսական զենքի հաղթանակի գործում: Բայց դրա դիմաց, ցավոք, քաղաքական պատշաճ վարձատրություն չի ստացել:

Եզրակացություն

Այսպիսով, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հիմնահարցը խորհրդահայ պատմագրության մեջ, ըստ պատմաշրջանների՝ հասարակական-քաղաքական, գաղափարական, երբեմն էլ՝ զուտ քարոզչական նպատակահարմարությամբ պայմանավորված, գնահատվել է ամենատարբեր կերպով՝ մեծագույն բարիքից ու չարյաց փոքրագույնից մինչև իսկ՝ չարիք:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական ճակատագրի հետագա գործընթացները միանշանակ համոզում են, որ անվիճարկելի է միացման ու ռուսական տիրապետության օբյեկտիվորեն առաջադիմական նշանակությունը Հայաստանի և հայ ժողովրդի համար: Իսկ մյուս կողմից, այնքան էլ հիմնավոր չէ խորհրդային այն հեղինակների տեսակետը, թե հայ ժողովրդի միակ ձգտում-ցանկությունը եղել է սոսկ Հայաստանի միացումը Ռուսաստանին:

Մինչդեռ անցյալի փաստավավերագիր նյութերն ու պատմական իրողությունները ցույց են տալիս, որ XVIII դ. և XIX դարասկզբի հայ հասարակական-քաղաքական ու ռազմական գործիչների՝ Ի. Օրու, Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Հ. Արղությանի, Հ. և Խ. Լազարյանների և մյուսների ազատագրական գաղափարներն ու կազմած ծրագրերը միտված են եղել Հայաստանի ազատագրության և Հայոց պետականության վերականգնման նպատակին, իհարկե, առաջին հերթին, Ռուսաստանի օգնությամբ ու նրա հովանու տակ:

Արարատ Հակոբյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նոր և նորագույն պատմաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի, հայ քաղաքական կուսակցությունների, Հայաստանի առաջին Հանրապետության, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, հայ պատմագրության, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական ու կոլեկտիվ ձեռնարկի և ուսումնամեթոդական աշխատանքի, ավելի քան 100 հոդվածի: ararathakobyan47@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. 1947, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջ. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ հաս. գիտ., № 2, էջ 29–44:

Անանուն Դ. 1916, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870), h. 1, Բաքու, «Տրուդ Բերլադիրի և ընկ.» տպ., 444 էջ:

Գալոյան Գ. Ա. 1982, Պատմության քառուղիներում, Երևան, «Հայաստան» հրատ., 464 էջ:

Գրիգորյան Զ. Տ. 1967, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 464 էջ:

Գրիգորյան Զ. Տ. 1978, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 404 էջ:

Դիլոյան Վ. 1989, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 356 էջ:

Երիցեանց Ա. 1894, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800–1830 թթ.), Թիֆլիզ, «Մ. Մարտիրոսեանի եւ ընկ.» տպ., 658 էջ:

Երիցեանց Ա. 1895, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Բ (1831–1842 թթ.), Թիֆլիզ, «Մ. Մարտիրոսեանի եւ ընկ.» տպ., 592 էջ:

Թումանյան Հովհ. 1959, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 800 էջ:

Լեո. 1926, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 1, Երևան, «Պետ. Համալսարան» հրատ., 228 էջ:

Լեո. 1927, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 2, Երևան, «Պետ. համալսարան» հրատ., 440 էջ:

«Խորհրդային Հայաստան» (Երևան), 13. X. 1927:

«Հայ ժողովրդի պատմություն». 1985, պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի խմբ., Երևան, ԵՊՀ հրատ., 528 էջ:

Հարությունյան Շ. 1990, Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964–1988, Երևան, «Հայաստան» հրատ., 485 էջ:

Հովհաննիսյան Ա. 1959, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 695 էջ:

Մարկոսյան Ս. 1935, Ռուս-ֆրանսիական յեվ ռուս-անգլիական հակամարտությունը Պարսկաստանում, Անդրկովկասի նվաճման կապակցությամբ, Յերեվան, «Պետհրատ», 141 էջ:

Մելքոնյան Ա. 2011, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Երևան, «Միտք» վերլ. կենտ., 456 էջ:

Մելքոնյան Ա. 2021, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշար, 489 էջ:

Նազարեանց Ստ. 1913, Երկեր, հ. 1, Թիֆլիս, տպ. «Ն. Աղանեանի», 428 էջ:

Նավասարդեան Վ. 1925, Դաշնակցութեան քաղաքական ուղին (10-րդ Ընդհանուր ժողովի առիթով), Գահիրե, «Յուսաբեր» տպ., 179 էջ:

Պալասանեան Ստ. 1902, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, հրատ. «Կենդրոնական գրավաճառանոցի», 599 էջ:

Պարսամյան Վ. 1940, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, «Արմֆան» հրատ., 206 էջ:

Պարսամյան Վ. 1946, Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ հաս. գիտ., Երևան, № 11–12, էջ 46–72:

Պարսամյան Վ. Ա. 1967, Հայ ժողովրդի պատմություն (1801–1917 թթ.), հ. 3, Երևան, «Լույս» հրատ., 535 էջ:

Սարուխանյան Ն. 1971, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 230 էջ:

Սիմոնյան Հր. 2003, Ազատագրական պայքարի ուղիներում, գ. 1, Երևան, «Հայագիտակ», 816 էջ:

Внешная политика России XIX и начала XX в. 1960, серия 1, т. 1. М., «Госполитиздат», 800 с.

Парсамян В. А. 1978, Присоединение Восточной Армении к России и его историческое значение (к 150-летию). Ереван, Изд. ЕГУ, 67 с.

Присоединение Восточной Армении к России (1801–1813) (сб. док.). 1972, т. 1, под ред. академика Ц. П. Агаяна. Ереван, Изд. АН АрмССР, 715 с.

Присоединение Восточной Армении к России (1814–1830) (сб. док). 1978, т. 2, под ред. академика Ц. П. Агаяна. Ереван, Изд. АН АрмССР, 658 с.

https://yhm.am, archives. (18. III. 2023):

ИСТОРИЧЕСКАЯ ОЦЕНКА ПРОБЛЕМЫ ПРИСОЕДИНЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

АРАРАТ АКОПЯН

Резюме

Ключевые слова: Восточная Армения, Россия, война, присоединение, историография, Лео, Туркменчайский договор, значение, автономия, королевство, «Армянская область», оценка, благо.

В XIX–XX вв. в армянской историографии вопрос о присоединении Восточной Армении к России в силу общественно-политической, идеологической, а иногда и просто чисто пропагандистской целесообразности оценивался по-разному. Этому событию давались самые разные оценки: от величайшего блага для армянского народа до наименьшего из зол, вплоть до зла. Присоединение Восточной Армении к России и последующие процессы ее исторической судьбы убеждают нас в том, что русское правление имело объективно прогрессивное значение для Армении и армян. С другой стороны, точка зрения советских авторов о том, что единственным стремлением, желанием армянского народа было лишь присоединение Армении к России, не очень обоснована. Между тем документальные материалы и исторические факты убедительно показывают, что освободительные идеи и планы армянских общественно-политических и военных деятелей всего XVIII и начала XIX веков, таких, как И. Ори, О. Эмин, Ш. Шахамирян, Ов. Аргутян, Ов. Лазарян, Х. Лазарян и других были направлены на

освобождение Армении и восстановление армянской государственности, конечно, в первую очередь, с помощью России и под ее покровительством.

В советско-армянской историографии данная точка зрения не является научно обоснованной, а преследовала чисто идеологически-пропагандистские цели, когда была предпринята попытка считать началом истории нового периода Армении начало XIX века. Однако началом истории нового периода Армении в мировой историографической литературе принято считать середину XVII века.

Арарат Акопян – д. и. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: проблемы общественно-политической мысли нового и новейшего периодов истории Армении, армянских политических партий, Первой Республики Армения, Московского и Карсского договоров 1921 г., армянской историографии, советских политических репрессий, армянской периодической печати. Автор 20 монографий, 12 индивидуальных и коллективных учебных пособий и учебно-методических работ и более 100 статей.
ararathakobyan47@gmail.com

HISTORICAL ASSESSMENT OF THE ISSUE OF JOINING EASTERN ARMENIA TO RUSSIA IN THE SOVIET ARMENIAN HISTORIOGRAPHY

ARARAT HAKOBYAN

Summary

Keywords: Eastern Armenia, Russia, war, joining, historiography, Leo, Treaty of Turkmenchay, significance, N. Ashtaraketsi, Kh. Lazaryan, I. Paskevich, autonomy, kingdom, "Armenian region", assessment, good.

In the last two centuries, in Armenian historiography, the issue of joining Eastern Armenia to Russia, due to socio-political, ideological, and sometimes simply due to propaganda expediency, was assessed differently. This event was rated from the greatest good for the Armenian people to the least of evils, down to evil. Joining Eastern Armenia to Russia and the subsequent processes of its historical fate convince us that Russian rule was objectively progressive for Armenia and Armenians. On the other hand, the point of view of the Soviet authors that the only aspiration, the desire of the Armenian people was joining Armenia to Russia, is not very substantiated. Meanwhile, documentary materials and historical facts convincingly show that the liberation ideas and plans of such Armenian socio-political and military figures throughout the 18th and early 19th centuries, as I. Ori, H. Emin, Sh. Shahamiryan, Hovsep Argutyan, Hovannes and Khachatur Lazaryans and others, were aimed at the

liberation of Armenia and restoration of Armenian statehood, of course, first of all, with the help of Russia and under its patronage.

In the Soviet-Armenian historiography, this point of view is not scientifically grounded but it pursued merely ideological and propaganda purposes when an attempt was made to consider the beginning of the XIX century as starting point of the history of the new period of Armenia. However, in the world historiographical literature, the beginning of the history of the new period of Armenia is generally accepted to be the middle of the XVII century.

Ararat Hakobyan – Doctor of Historical Sciences, Professor, Leading Researcher at the Department of the New History of the Institute of History of NAS RA. Scientific interests: social and political thought of the new and recent periods of Armenian history, history of Armenian political parties, the first Republic of Armenia, Turkish-Armenian war in 1920, Moscow and Kars Treaties of 1921, Armenian historiography, Soviet political repressions, Armenian periodical press. Author of 20 monographs, 12 individual and collective manuals, educational materials and more than 100 scientific articles. ararathakobyan47@gmail.com

ՀՏԴ 070 + 321](420)

Doi:10.54503/0135-0536-2023.3-59

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՆԴՈՆԻ «ՆՈՐ ԿՅԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ (1898–1902 թթ.)*

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ «Նոր կյանք», Արփիարյան, Վերակազմյալ Հնչակյան կուսակցություն, Օսմանյան Թուրքիա, ազատագրական գաղափարախոսություն, Արևմտյան Հայաստան, Եվրոպա, Ռուսաստան, Արզույան:

Ն ա խ ա բ ա ն

1890-ական թվականներին Հնչակյան կուսակցության ծավալած գործունեությունը ցույց տվեց պայքարի՝ իրենց ընտրած ուղու անարդյունավետությունը: Հնչակյան գործիչների միջև գաղափարական տարաձայնությունների խորացումը հանգեցրեց կուսակցության պառակտմանը: Նախկին գործելակերպը քննադատող և սոցիալիզմի քարոզչությունն Արևմտյան Հայաստանում մերժող գործիչները՝ Արփիար Արփիարյանի գլխավորությամբ, հեռացան կուսակցության ղեկավար Ավետիս Նազարբեկյանից ու ստեղծեցին զուտ ազգային հիմքի վրա կանգնած նոր կուսակցություն, որն ավելի ուշ՝ 1898 թ., կոչվեց «Վերակազմյալ Հնչակյան» անունով[1]: 1896 թ. բաժանումից հետո Արփիարյանի կողմնակիցները 1897 թ. Լոնդոնում սկսեցին հրատարակել «Մարտ» թերթը, որը, փոքրածավալ էր և հնարավորություն չէր տալիս հայ ժողովրդին հուզող խնդիրների վերաբերյալ իր էջում զետեղել կուսակցության առաջնորդ ու տեսաբան Ա. Արփիարյանի և իր համախոհ այլ գործիչների տեսակետներն ազգային խնդիրների վերաբերյալ: Այդ պատճառով 1898 թ. Լոնդոնում սկսեց հրատարակվել «Նոր կյանք» անունով հանդեսը[2]: Այն լուսաբանելու էր թե՛ ազգային ժամանակակից կյանքը, թե՛ Եվրոպական երկրների քաղաքականությունը Հայկական հարցում: Արփիարյանն առաջ էր քաշում մամուլի միջոցով հայ կյանքի բացասական երևույթները վեր հանելու խնդիրը, որովհետև, նրա համոզմամբ, ժողովուրդները հզորանում են միայն իրենց կյանքի ամենախիստ քննադատությամբ[3]:

---

* *Ներկայացվել է 12. IX. 2023 թ., գրախոսվել է 20. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] *Տե՛ս Պատմութիւն Սոցիալ-Դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան, 1887–1962. 1962, Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1968, 19–39, Հ ա մ բ ա ր յ ա ն. 1990, Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2012, Մ ա ն ո ւ կ ե ա ն. 2014:*

[2] *Հայ պատմագիտության մեջ խնդրո հարցին անդրադարձել են՝ Ա. Համբարյանը (Հ ա մ բ ա ր յ ա ն. 1990, 188–190), Ս. Սարգսյանը (Ս ա ր գ ս յ ա ն. 2017, 623–628), Գ. Հովհաննիսյանը (Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2012):*

[3] *«Նոր կեանք» (Լոնդոն), 1898, թիւ 1, 1:*

Պարբերականի ընդհանուր բնութագիրը

«Նոր կյանքը» հրատարակվել է ամիսը երկու անգամ: Ա. Արփիարյանի խմբագրության շրջանում այն եղել է որպես ազգային, գրական ու քաղաքական հանդես: Ազգային-քաղաքական բնույթի հոդվածների մեծ մասը գրել է Արփիարյանը, ով ստորագրել է «Ա. Արփիարյան», ինչպես նաև՝ «Սկեպտիկ», «Հրազդան» ծածկանուններով: Պարբերականին աշխատակցել են Արշակ Չոպանյանը, Երվանդ Օտյանը (Երօտ), Լևոն Բաշալյանը (Լ. Զարթումյան), Սուրեն Պարթևյանը, Վահրամ Սվաճյանը և այլոք: Արփիարյանի խմբագրությամբ «Նոր կյանքը» հրատարակվել է մինչև 1901 թ. մայիս ամիսը, որից հետո խմբագրությունն անցել է Վերակազմյալ հնչակյան հայտնի գործիչ Ա. Արգությանի (Վահե Զավեն) և նրա համախոհների ձեռքը: Պարբերականը՝ «Հրատարակութիւն Հնչակեան կուսակցութեան» վերտառությամբ[4], վերածվում է չեչտված մարտական օրգանի: Նրա հոդվածները դառնում են անստորագիր, իսկ բովանդակությունը հիմնականում հանգում է մեկ գլխավոր մտքի՝ դա հայ ժողովրդի վճռական ու հարատև պայքարն է իր ազատության համար: «Նոր կյանքը» լույս է տեսնում մինչև 1902 թ. հունիսի 15-ը: Պարբերականն ունեցել է «Թուրքիոյ չորս կողմը», «Թղթակցութիւններ», «Նամակ Կ. Պոլիսնէն», «Ասպատակները», «Ազատ խոսք» բաժինները:

Ազգային-հասարակական խնդիրների քննարկումը պարբերականում

Ազգային ճիշտ քաղաքականություն մշակելու համար Արփիարյանն անխուսափելի և հրատապ պարտականություն էր համարում ոչ վաղ անցյալի արևմտահայերի ազգային իշխանությունների վարած քաղաքականության համակողմանի ուսումնասիրությունը: Այդ քաղաքականությունը վարում էին ազգային պահպանողականները: Այն ժամանակագրական առումով ընդգրկում է 1870–1890-ական թվականները: «Կ. Պոլսի պահպանողական վարչությունը» վերնագիրը կրող այդ ուսումնասիրությունն ընդարձակ հոդվածաշարով լույս տեսավ «Նոր կյանքի» 1898, 1899 թթ. համարներում[5]:

Առաջին իսկ հոդվածում հրապարակախոսը պարզում է իր նպատակը, ըստ որի՝ ազգի ճանապարհն ապահով շարունակելու համար «միշտ նայենք ետեվնիս, ուր թողած ենք մեր հանրային իմաստութեան կամ տխմարութեան արձանագրութիւնները կրող յիշատակները»[6]: Այս միտքը, ըստ էության, պարբերականի գաղափարական ուղենիշների մեջ առանցքային տեղ է գրավում: Հոդվածաշարում ցույց է տրվում, որ պահպանողական վարչությունը, ունենալով Հով. Նուրյանի, Սիմոն Մաքսուդ Բեյի նման ղեկավարներ, ընդառաջելով սուլթանի ցանկությանը՝ ձգտում էր սահմանափակել պատրիարքի ընտրության ազգային իրավունքը և վերանայել արևմտահայերի ազգային սահմանադրությունը[7]: Հրապարակախոսը շեշտում է այն միտքը, որ չնայած Կ. Պոլսի պահպանողական վարչությունների գործունեության թուրքամետ

---

[4] Նկատենք, որ պարբերականը Վերակազմյալ հնչակյանների օրգանն էր:

[5] «Նոր կեանք», 1898, թիւ 1, 2, 3, 5, 6, 9, 10, 11, 12, 13, 15, 1899, թիւ 10, 11, 12, 14, 16, 17:

[6] «Նոր կեանք», 1898, թիւ 1, 3:

[7] «Նոր կեանք», 1898, թիւ 2, 17–18:

ընույթին՝ այնուամենայնիվ, դա սպասվածին հակառակ արդյունք տվեց. կաթողիկոս և պատրիարք ընտրվեցին ազգային հզոր դիմագիծ ունեցող անձնավորություններ՝ Մկրտիչ Խրիմյանն ու Մատթեոս Իզմիրլյանը: Արևմտահայերի ազգային սահմանադրությունը, որն արգելվել էր 1891 թ., նորից գործադրվեց 1894 թ., իսկ Պատրիարքարանից վտարվեցին կառավարության հլուհնազանդ հայ պաշտոնյաները:

«Նոր կյանքի» էջերում Արփիարյանն արժևորում է արևմտահայ հասարակական կյանքի նշանավոր դեմքերի գործունեությունը: Եթե նա բարձր է գնահատում Գրիգոր Օտյանին, Նահապետ Ռուսինյանին՝ համարելով արևմտահայ կյանքի վերածննդի «նախակարապետ ռահվիրաներ», ապա խիստ քննադատության է ենթարկում պահպանողականներ Հովհ. Նուրյանին և Սիմոն Մաքսուդին, որոնք, արևմտահայ հասարակական կյանքում լինելով ազդեցիկ անձնավորություններ, իրենց եռանդն ու ազդեցությունը վատնեցին ազգադավ գործերի վրա և չծառայեցին ժողովրդին[8]:

Պետք է ընդգծել, սակայն, որ ազգային պահպանողականների նկատմամբ Արփիարյանը տարբերակված մոտեցում էր ցույց տալիս: Եթե նա դատապարտում էր Նուրյանին ու Մաքսուդին, ապա դրվատանքի խոսքեր էր ուղղում Պալյան գերդաստանին, Գրիգոր Աղաթոնին, Հովհաննես Տերոյենցին, Ռեթեոս Պերպերյանին, որոնք բազում ազգանպաստ գործեր են կատարել: Արփիարյանը կարողացավ վեր բարձրանալ ազգային պահպանողականների հետ ունեցած գաղափարական տարաձայնություններից և գնահատել նրանց մեջ եղած մեծություններին[9]:

«Նոր կյանքի» էջերում արծածվում էին արևմտահայ «ութսունականների» գաղափարական ուղենիշները: XIX դ. 80-ական թվականներին ձևավորված գրական այդ հոսանքի նպատակն ազգային ինքնագիտակցության, նրա պատմական հիշողության վառ պահելն էր, օտարամոլության դեմ պայքարը, խնդիրներ որոնց լուծման ուղիներից մեկն անցնում էր հայ գրականության բովով: Գրական այդ շարժման գաղափարական առաջնորդն Ա. Արփիարյանն էր: Այս նպատակադրումների իրականացման գործում խոշոր նշանակություն ունեցավ Կ. Պոլսում, 1884 թ. հունվարին «Արևելք» թերթի հրատարակությունը, որի մասին խոսվում է նաև «Նոր կյանքում»[10]:

Հանդեսը մեծ տեղ է հատկացրել նաև հայ ժողովրդի կյանքում եկեղեցու և հոգևորականության դերի հարցին: Հոգևորականների արատների քննադատությունից զատ՝ որպես հայրենասեր հոգևորականների տիպարներ պարբերականում բարձր են գնահատվել Մկրտիչ Խրիմյանն ու Ղևոնդ Ալիշանը: Արփիարյանի համոզմամբ՝ Խրիմյանը ժողովրդի «մեծագոյն ներկայացուցիչ, որի անձին մեջ նուիրագործած էր հայ հայրենիքի ու հայ ազգութեան գաղափարը»[11]:

Պարբերականի էջերում լուսաբանվել է 1870–1880-ական թվականներին Վան-Վասպուրականում «Արարատեան ընկերութեան» ծավալված կրթական-

[8] «Նոր կեանք», 1900, թիւ 2, 28:
[9] «Նոր կեանք», 1900, թիւ 2, 27–30:
[10] «Նոր կեանք», 1900, թիւ 22, 341–346:
[11] «Նոր կեանք», 1898, թիւ 10, 156:

լուսավորական գործունեությանը և դրանում Մ. Փորթուգալյանի, Մ. Խրիմյանի, Ա. Արփիարյանի, Մ. Ավետիսյանի, Գր. Արծրունու ունեցած դերակատարությանը[12]*:*

Եվրոպական պետությունների, Ռուսաստանի քաղաքականությունը և Հայաստանը

«Նոր կյանքի» էջերում լուսաբանվում է հայկական հարցում եվրոպական պետությունների վարած քաղաքականությունը: Բեռլինի կոնգրեսից հետո (1878 թ.) մի որոշ ժամանակ արևմտահայ մտավորականությունը դեռևս տարված էր մեծ պետությունների կողմից Արևմտյան Հայաստանի նահանգներում բարենորոգումների իրականացման պատրանքով: Պարբերականում բացահայտվում են մեծ պետությունների քաղաքական նպատակները: Ցույց է տրվում, որ եվրոպական պետությունների միջև պիտի լիներ ընդհանուր նպատակի շուրջ համագործակցություն, որը, սակայն, բացակայում էր: Դրա փոխարեն ավելի էր խորանում նրանց միջև տնտեսական հակամարտությունը: «Քաղաքական ծրագրեր» հոդվածում Արփիարյանը գրում էր, որ Գերմանիան նպատակ ուներ դուրս մղել Անգլիային իր գաղութներից: Հետևաբար, նրա վարած քաղաքականությունն Արևելյան հարցում բոլորովին հակառակ էր Անգլիայի քաղաքականությանը[13]*:*

Հրապարակախոսը տալիս է նաև թուրք-գերմանական հարաբերությունների օբեկտիվ գնահատականը: Ընդգծվում էր, որ Գերմանիան ինքն էր ձգտում իր ազդեցությունը տարածել Թուրքիայի վրա: Նա պատահական չէր համարում այն հանգամանքը, որ թուրքական բանակը մարզում են գերմանական սպաները[14]*: Արփիարյանը միանգամից ընդգծում էր, որ բացի Գերմանիայից, Թուրքիայում իրենց շահերն ունեին նաև Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, որոնք բացահայտ դժգոհ էին Թուրքիայում աճող գերմանական ազդեցությունից: Այդ հողի վրա հրապարակախոսն ուրվագծում էր ապագա Եռյակ համաձայնությունը (Անտանտ) և Գերմանիայի հետ նրա բախման անխուսափելիությունը: Պարբերականում ընդգծվում էր, որ մեծ պետություններին չի մտահոգում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ճակատագիրը: Արփիարյանն ընդունում էր եվրոպական պետությունների դերակատարությունը փոքր ժողովուրդների ճակատագրում: «Եվրոպան» հոդվածում նա գրում էր, որ Եվրոպայի համակրանքը կամ հակակրանքը արհամարհելու համար կամ հիմար պետք է լինել, կամ դավաճան: Ռուս-թուրքական (1877–1878 թթ.) պատերազմի օրինակով Արփիարյանը ցույց էր տալիս, որ Ռուսաստանի հաղթանակն իրենց շահերին անհամապատասխան գտնելով՝ եվրոպական պետությունները սահմանափակեցին Ռուսաստանի հաղթանակի պտուղները*[15]*: Սրանով հանդերձ հրապարակախոսը ճիշտ չէր համարում Եվրոպային չափից դուրս վստահելը և գտնում էր՝ հայ ժողովուրդը չպետք է զբաղվի ինքնախաբեությամբ, այլ պետք է կարողանա հմտորեն օգտվել այն*

[12] *«Նոր կեանք», 1899, թիւ 15, 228–232, թիւ 16, 243–248, թիւ 18, 275–278:*
[13] *«Նոր կեանք», 1898, թիւ 6, 81–83:*
[14] *«Նոր կեանք», 1899, թիւ 20, 314–317:*
[15] *«Նոր կեանք», 1898, թիւ 16, 241–242:*

հանգամանքներից, որոնք առաջ են գալիս մեծ պետությունների հակամարտությունների ժամանակ[16]*:*

XIX դարի 80-ական թվականներին՝ Ալեքսանդր III ցարի օրոք, Ռուսաստանում խստացան ազգային հալածանքները, ուժեղացան հետապնդումներն առաջադիմական գործիչների նկատմամբ: Հետադիմական այդ քաղաքականությունը քննադատվեց Արփիարյանի կողմից «Նոր կյանքում»[17]*: Նա ցույց էր տալիս, որ Ալեքսանդր III ցարի սպանությունից հետո (1881 թ.) Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականությունն արմատապես փոխվեց: Պարբերականի էջերում Արփիարյանը խարազանում էր Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի հայատյաց քաղաքականությունը*[18]*: «Ռուս պաշտոնական գաղտնի տեղեկագիր մը Կովկասի մասին» հոդվածում Արփիարյանը լուսաբանում էր կայսրության հպատակ ժողովուրդների նկատմամբ Ռուսաստանի վարած գաղութային քաղաքականությունը*[19]*:*

Հրապարակախոսն ընդգծում էր ուշագրավ այն հանգամանքը, որ տնտեսական մի շարք ցուցանիշներով Լեհաստանը, Ֆինլանդիան առաջ են անցել գաղութացնող երկրից՝ Ռուսաստանից: Կովկասում ցարիզմի վարած ռուսիֆիկացման քաղաքականության հարցերն են շոշափված «Կովկասի հայոց հիւծումը» հոդվածում[20]*:*

Զանտեսելով Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայերի տնտեսական, մշակութային զարգացման փաստը՝ Արփիարյանը գտնում էր, որ ինքնակալության որդեգրած քաղաքական ուղղությունը տանում է «դեպի աշխարհակալող ցեղի բացարձակ տիրապետությանը»[21]*:*

Հայ ժողովրդի ազատագրության հիմնահարցը

«Նոր կյանքում» առանձին ուշադրության էր արժանացրել Հայկական հարցը: Պարբերականի խմբագիր Արփիարյանը համոզված էր, որ Հայկական հարցն արևմտահայ իրականության ծնունդ էր և ուներ իր առաջացման օբեկտիվ պատճառները: Այդ հարցը նա մանրազնին ուսումնասիրության է ենթարկել «Ծագում հայկական խնդրին» հոդվածաշարում[22]*: Այստեղ Արփիարյանը փաստերով ցույց է տալիս, որ թուրքահպատակ հայ ժողովրդի արդար բողոքը պատրիարքների ու արևմտահայերի Ազգային ժողովի միջոցով բազմիցս ներկայացվել է կառավարության քննությանը, սակայն ոչ մի քայլ չի ձեռնարկվել հայերի դրությունը լավացնելու համար*[23]*: Արևմտյան Հայաստանի գավառներից ստացված բազմաթիվ բողոքագրերի հիման վրա 1870 թ. արևմտահայերի Ազգային ժողովը կազմում է «Հայաստանի հարստահարութեանց քննիչ հանձնաժողով» կազմված 4 հոգուց: Այն, ուսումնասիրելով*

---

[16] *«Նոր կեանք», 1898, թիւ 8, 117–121:*
[17] *«Նոր կեանք», 1898, թիւ 8, 117–121:*
[18] *«Նոր կեանք», 1899, թիւ 9, 130–134:*
[19] *«Նոր կեանք», 1899, թիւ 10, 146–147:*
[20] *«Նոր կեանք», 1899, թիւ 20, 314-317:*
[21] *«Նոր կեանք», 1898, թիւ 12, 178–179*
[22] *«Նոր կեանք», 1900, թիւ 10, 148–152, թիւ 12, 180–183, թիւ 14, 215–219, թիւ 16, 245–250:*
[23] *«Նոր կեանք», 1900, թիւ 11, 169:*

արևմտահայերի հարստահարությունների մասին բոլոր բողոքները, կազմում է «Տեղեկագիր», որը 1872 թ. փետրվարին ներկայացվում է Ազգային ժողովի նիստում: Այն Արփիարյանը համարում է «Հայկական խնդրի հիմնաքարը»[24]: Նա խորին երախտագիտության խոսք է ուղղում Խրիմյան Հայրիկին՝ «Մեծ հայրենասերին, որը ցնցեց հայության իրականությունը ամենուն աչքերուն առջև դնելով»[25]:

Հայկական հարցին նվիրված հոդվածներում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ Օսմանյան կայսրության մեջ արևմտահայերի դրությունը մազաչափ չի փոխվել, և ինչպես XIX դ. կեսերին, այնպես էլ դարավերջին թուրքական կառավարությունը «անխոտոր կերպով շարունակում է տիրապետող ցեղի ձգտումը՝ քրիստոնեաներին իր հայրենիքում բարոյապէս ու նյութապէս քայքայելու քաղաքականութիւնը»[26]: Ըստ հրապարակախոսի՝ քրիստոնյաների վրա իսլամի գերիշխանության անխախտ պահպանումը եղել է օսմանյան Թուրքիայի քաղաքականության առաջնորդող գաղափարը[27]: «Նոր կյանքի» էջերում Արփիարյանը ցրում է հայ ազգային շրջաններում տարածված պատրանքը բարվոք թուրքական վարչություն հաստատելու վերաբերյալ՝ գրելով, որ Հայաստանի նկատմամբ թուրքական կառավարության վարած նենգ քաղաքականության մեջ ո՛չ հին Թուրք կա, ո՛չ նոր Թուրք, ո՛չ երիտասարդ Թուրք, ո՛չ ծեր Թուրք, այլ միայն՝ Թուրք[28]:

Հրապարակախոսը ցույց էր տալիս, որ, բացի թուրքական կառավարությունից, հայ ժողովուրդը բռնության ու հարստահատության է ենթարկվում նաև քրդերի և չերքեզների կողմից, որոնք հայ ժողովրդի համար կատարյալ պատուհաս էին դարձել: Շեշտվում էր հատկապես այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը դիտավորյալ չի զինաթափում նրանց, ովքեր դարձել էին իր հակահայկական քաղաքական գործիքը[29]:

Իսկ մինչ այդ պարբերականում այն միտքն էր արծածվում, որ Հայկական հարցը դրսից ներմուծված չէր: Ցանկանալով հասնել իր օրինական, արդար, անվիճելի ազգային իրավունքների լուծմանը՝ հայ ժողովուրդը չի ձգտել օտար պետություններին ներքաշել իր և օսմանյան իշխանությունների միջև առաջացած խնդիրների լուծման մեջ[30]:

Հայկական հարցի լուծումը կապելով եվրոպական երկրների հետ՝ պարբերականն առաջ էր քաշում Արևմտյան Հայաստանում եվրոպական վարչություն հաստատելու խնդիրը: Արծարծելով Օսմանյան կայսրության վարչական բարեկարգության հարցը՝ «Նոր կյանքը» առաջ էր քաշում այն տեսակետը, ըստ որի՝ այդ պետությունը հնարավոր չէ բարեկարգել ներսից, «միայն իսլամներու միջոցով»[31]:

---

[24] «Նոր կեանք», 1900, թիւ 10, 148:
[25] «Նոր կեանք», 1900, թիւ 12, 180:
[26] «Նոր կեանք», 1900, թիւ 12, 180–183:
[27] «Նոր կեանք», 1900, թիւ 14, 215–219:
[28] «Նոր կեանք», 1900, թիւ 16, 246–250:
[29] «Նոր կեանք», 1900, թիւ 12, 180–183:
[30] «Նոր կեանք», 1898, թիւ 14, 210–213:
[31] «Նոր կեանք», 1899, Բ., թիւ 4, 49–52:

«Թուրքիայի բարեկարգմանը» հոդվածում Արփիարյանը բացահայտում է այն պատճառները, որոնք անհնարին են դարձնում երկրում բարենորոգումների իրականացումը: Նա չեշտում էր, որ դրա գլխավոր արգելանքներից մեկը իսլամն էր. մի կրոն, որը չի հանդուրժում տիրապետող Թուրքի հավասարությունը քրիստոնյա «ռայաների» հետ: Մյուս կողմից՝ հրապարակախոսը Թերահավատ էր Թուրքերի առաջադիմության ձգտման հանդեպ: Նա նկատում է նաև, որ Թուրքերի պատմության ասպարեզ մտնելը մարդկությանը բացի ավերածություններից որևէ օգուտ չտվեց[32]: Դրանից ելնելով՝ արվում էր այն եզրակացությունը, որ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրությունը կարելի է ապահովել միայն այդ ժողովուրդների ապստամբության ու եվրոպական զինական աջակցության միջոցով[33]:

Ազատագրական պայքարի հետագա ճիշտ ուղին գտնելու համար «Նոր կյանքը» կարևորում էր հայ բազմադարյան ազգային-ազատագրական շարժման, նրա անհաջողությունների պատճառների քննությունն ու իմաստավորումը: Մտորելով այս հարցի մասին՝ Արփիարյանը գտնում էր, որ ազատագրական շարժման անհաջողությունների գլխավոր պատճառը ժողովրդի կողմից իր փրկությունը իրենից դուրս փնտրելու մեջ էր: Ըստ նրա՝ հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչների՝ Ի. Օրու, Հ. Էմինի, Հ. Արղությանի, Մ. Խրիմյանի և այլոց ժամանակի պահանջներին համեմատ կազմված ծրագրերը չիրականացան, որովհետև «արտաքին հույսերեն զատ իրեն ուրիշ ապավեն պատրաստելու պետքը չզգաց հայ ժողովուրդը»[34]: Հրապարակախոսն իրավացիորեն գտնում էր, որ, օտարին դիմելուց զատ, պետք էր մտածել «սեփական ապավենի» ստեղծման մասին[35]:

Հայ ազգային-ազատագրական շարժման անհաջողության պատճառներից մեկն էլ Արփիարյանը համարում էր հայ ունևոր խավերի կողմից շարժմանն անհրաժեշտ չափով չաջակցելը: «Հրեաներեն օրինակ» հոդվածում նա ունևորներին կոչ էր անում օրինակ վերցնել հրեաներից, որոնք, չնայած ցրված են աշխարհով մեկ, բայց միավորվում են ազգային պետության ստեղծման գաղափարի շուրջը, իսկ հրեա հարուստներն իրենց դրամական միջոցները չեն խնայում այդ նպատակի իրագործման համար[36]: Հրապարակախոսը դատապարտում է արևմտահայ առևտրական դասին պատկանող «խումբ մը հայերի», որոնք մտահոգված միայն սեփական բարօրությամբ՝ քննադատում են անցյալի ազատագրական շարժումները, ոճիր են համարում ցանկացած ազատագրական գաղափար՝ որով հայ ժողովրդին մղում են հուսահատության[37]:

XIX դարավերջին Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջանում սուլթանական բռնապետության դեմ ծավալվեց երիտթուրքական շարժումը: «Երիտասարդ Թուրքերը» հոդվածաշարում խոսելով 1896 թ. Փարիզում երիտթուրքերի առաջնորդների հետ հնչակյանների հանդիպումների մասին, որոնց մասնակցել էր

---

[32] «Նոր կեանք», 1899, Գ., թիւ 5, 66–68:
[33] «Նոր կեանք», 1899, Բ., թիւ 4, 49–52:
[34] «Նոր կեանք», 1898, թիւ 18, 274:
[35] «Նոր կեանք», 1898, թիւ 18, 274:
[36] «Նոր կեանք», 1898, թիւ 20, 306:
[37] «Նոր կեանք», 1900, թիւ 2, 28–30:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

նաև ինքը՝ Արփիարյանը, գրում էր՝ ընդհանուր համաձայնություն չկայացավ այն պատճառով, որովհետև երիտթուրքերի առաջնորդները հայտարարում էին, որ հայերը պետք է հրաժարվեն Արմտյան Հայաստանում բարենորոգումների պահանջից[38]: Այդ հանդիպումների ժամանակ երիտթուրքերը նաև պահանջել են հայերից համաձայնվել իրենց պայմաններին և հայկական նահանգների բարենորոգումները դիտարկել միայն Օսմանյան կայսրության բոլոր նահանգների բարենորոգումների համատեքստում[39]: Արփիարյանը կոչ էր անում հայ ազգային կուսակցություններին իրատես լինել, չոգևորվել ու վերացական գաղափարների հետևից չընկել[40]:

Ինչպես նշել էինք, 1901 թ. մայիսի 15-ից պարբերականն անցավ Վ. Արզումանի ձեռքը, ով կուսակցության արմատական թևի ամենաակտիվ գործիչն էր ու պատահական չէր, որ նրա ու համախոհների (Լ. Լարենց, Զ. Գոչյան, Ե. Ջավուշյան և այլն) տեսակետներն իրենց արտահայտությունը գտան «Նոր կյանքում»: Պարբերականի անստորագիր հոդվածներն ուղղված էին հայ ժողովրդի բոլոր խավերին: Օրինակ՝ «Հայեր» հոդվածը կոչ է համայն հայությանը դուրս գալու երկչոտության, անտարբերության, վախկոտության թմբիրից: Ըստ խմբագրականի՝ «Վատհոգի և ստրուկ ժողովուրդ մը արժանի չէ հոգածութեան: Արհամարհանքն է իր բաժինը…»[41]: Հոդվածագիրը գտնում է, որ անօգուտ է հույսը դնել միայն դիվանագիտական միջամտության վրա, և կոչ է անում՝ ոչ թե հանդուրժել, դիմակայել բռնություններն ու հարստահարությունները, այլ ուժի դեմ ուժ հանել: Որպես օրինակ են բերվում թուրքական բռնապետության դեմ ծավալված մակեդոնացիների, արաբների, ալբանացիների ապստամբական շարժումները[42]: Հոդվածի հեղինակի համոզմամբ՝ ազատագրական պայքարի ելած ժողովուրդը չպիտի մտածի պարտության մասին, այլ պետք է զինվի ու պայքարի: Որպես հայ ազատագրական պայքարի հերոսական օրինակ՝ բերվում է հայտնի հայդուկ Մինաս Օղլուի (Հովհաննես Մինասյան) 1880-ական թվականներին թուրք-քրդական հարստահարությունների դեմ Փոքր Հայքում ծավալված պայքարը, որը պարբերականի էջերում տպագրվում է «Ասպատակները» խորագրի տակ[43]: Հայ ազատագրական պայքարի մարտավարության հանդեպ այս մոտեցումը արծարծվում է նաև 1901 թ. մայիսի 15-ից հետո լույս տեսած «Նոր կյանքի» բոլոր համարների հոդվածներում[44]:

Պարբերականում խոսվում է հայ կուսակցություններին դրամական աջակցության խնդրի մասին ևս: «Նոր եղանակը» հոդվածում խիստ քննադատության են ենթարկվում բոլոր նրանք, ովքեր դեմ են հայ հեղափոխական կուսակցություններին դրամ տալուն[45]: Այս համատեքստում է տեղավորվում «Հայ

---

[38] *«Նոր կեանք», 1900, թիւ 21, 323–326:*
[39] *«Նոր կեանք», 1901, թիւ 9, 116–117:*
[40] *«Նոր կեանք», 1900, թիւ 14, 210–212:*
[41] *«Նոր կեանք», 1901, թիւ 10, 145–146:*
[42] *«Նոր կեանք», 1902, թիւ 2, 18–20, թիւ 3, 34–35:*
[43] *Հանդեսի 1901 թ. թիվ 14-ից 24-ը ներառյալ:*
[44] *«Նոր կեանք», 1901, թիւ 11, 162–167, թիւ 12, 182–185, թիւ 13, 193–194, 194–198, թիւ 14, 210–211, թիւ 16, 241–243, թիւ 22, 321–322:*
[45] *«Նոր կեանք», 1902, թիւ 1, 2–3:*

Հարուստը» հոդվածը, որտեղ հեղինակը ցասումով է գրում, որ «Հայ հարուստը երբեք չկարողացավ իր նյութական օժանդակությունն ինքնաբերաբար բերել «Հայ յեղափոխութեան» այն ջերմեռանդ փութկոտութեամբ, որ ստրկական դարերու ընթացքին մղեր էր զինքը եկեղեցիներ կառուցանելու ու անոնց խնկուող պատերուն վրայ իր անունին ծախու առնուած փառքը յաւերժացնելու»[46]:

«Նոր կյանքի» էջերում լուսաբանվում են XIX դ. վերջին և XX դ. սկզբին մի կողմից ՀՅԴ-ի և Վերակազմյալ հնչակյանների, մյուս կողմից հին հնչակյանների միջև ընթացող «միության» բանակցությունները, որոնք, ցավոք, անարդյունք եղան[47]:

Եթե հայ ազատագրական պայքարի մարտավարության հարցում Արփիարյանի և Արղությանի միջև գոյություն ունեին հակասություններ, ապա հայ բանվորների դասակարգային պայքարի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու սոցիալիզմի քարոզչության հարցում նկատելի է՝ Արղությանի «Նոր կյանքը» շարունակում է Արփիարյանի գաղափարական գիծը: Այս հանգամանքն արտահայտվում է մասնավորապես «Օսմանցի ազատականների համաժողովը»[48] և «Վտանգը»[49] հոդվածներում:

«Նոր կյանքից» Ա. Արփիարյանի հեռանալը ընդհանուր առմամբ ծանր անդրադարձավ հանդեսի վրա: Նրանից հետո հանդեսին դադարեցին աշխատակցել Զոպանյանը, Օտյանը, Բաշալյանը, որից հետո «Նոր կյանքը» շուտով կորցրեց իր հեղինակությունը, բաժանորդների մեծ մասին և 1902 թ. ընդամենը հինգ համար լույս տեսնելուց հետո փակվեց:

Եզրակացություն

«Նոր կյանքում» ներկայացվում էր հայ ժողովրդի քաղաքական դաստիարակության զարգացման խնդիր՝ ընդգծելով, որ նրա հրատարակությամբ ձգտել է նպաստել հայ ազատագրական պայքարի ծավալման և արդյունավետ ուղու ընտրության գործին: Իր կարճատև հրատարակության ժամանակաշրջանում պարբերականը բարձրացրեց XIX դ. վերջին հայ ազգային կյանքում կարևոր նշանակություն ունեցող հարցերի մի մեծ խումբ: Պարբերականում արծարծված հայ ազատագրական շարժման վերաիմաստավորման, հայ ժողովրդի ճակատագրում եվրոպական մեծ պետությունների դերի, ազգային առաջընթացի գործում կրթության-լուսավորության նշանակության հարցերն ունեն արդիական հնչեղություն:

«Նոր կյանքը» վեր հանեց ազգային կյանքի բացասական երևույթները՝ իրավացիորեն ընդգծելով, որ առանց դրա անհնար է ազգային ճիշտ քաղաքականության մշակելը: Այնուամենայնիվ «Նոր կյանք» պարբերականում առաջ քաշված գաղափարները հարստացրին հայ հասարակական-քաղաքական միտքը, իսկ այն ամբողջությամբ իր արժանավոր տեղը գրավեց հայ մամուլի և հրապարակախոսության պատմության մեջ:

---

[46] *«Նոր կեանք», 1902, թիւ 2, 18–20:*

[47] *Տե՛ս «Նոր կեանք», 1901, թիւ 15, 225–227, թիւ 17–18, 257, թիւ 21, 305–306, 1902, թիւ 1, 4–8, թիւ 3, 41–45:*

[48] *«Նոր կեանք», 1902, թիւ 1, 4–8:*

[49] *«Նոր կեանք», 1902, թիւ 5, 65–67:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

Գեղամ Հովհաննիսյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազգային կուսակցությունների և հասարակական քաղաքական մտքի պատմություն: Հեղինակ է 2 մենագրության և ավելի քան 30 հոդվածի: gegham.hovhannisian@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արփիարեան Ա. 1898, Նոր կեանք. – «Նոր կեանք» (Լոնդոն), թիւ 1, էջ 1:

Արփիարեան Ա. 1898, Ժամանակակից պատմութեան էջեր. – «Նոր կեանք», թիւ 1, էջ 3:

Արփիարեան Ա. 1898, Վերաքննութիւն Սահմանադրութեան. – «Նոր կեանք», թիւ 2, էջ 17–18:

Արփիարեան Ա. 1898, Քաղաքական ծրագիրներ. – «Նոր կեանք», թիւ 6, էջ 81–83:

Արփիարեան Ա. 1898, Օրուան կեանքը. – «Նոր կեանք», թիւ 6, էջ 117–121:

Արփիարեան Ա. 1898, Խաբուեցանք. – «Նոր կեանք», թիւ 10, էջ 156–158:

Արփիարեան Ա. 1898, Տիրապետութեան մը հետեւանքը. – «Նոր կեանք», թիւ 12, էջ 178–179:

Արփիարեան Ա. 1898, Զինադադար. – «Նոր կեանք», թիւ 14, էջ 210–213:

Արփիարեան Ա. 1898, Եվրոպան. – «Նոր կեանք», թիւ 16, էջ 241–242:

Արփիարեան Ա. 1898, Երկու դար. – «Նոր կեանք», թիւ 18, էջ 274:

Արփիարեան Ա. 1898, Հրեաներեն օրինակ. – «Նոր կեանք», թիւ 20, էջ 306:

Արփիարեան Ա. 1899, Թուրքիոյ բարեկարգումը, Բ. – «Նոր կեանք», թիւ 4, էջ 49–52:

Արփիարեան Ա. 1899, Թուրքիոյ բարեկարգումը, Գ. – «Նոր կեանք», թիւ 5, էջ 66–68:

Արփիարեան Ա. 1899, Ռուսական քաղաքականութիւնը ընդդէմ հայերուն. – «Նոր կեանք», թիւ 9, էջ 130–134

Արփիարեան Ա. 1899, Ռուս պաշտոնական գաղտնի տեղեկագիր մը Կովկասի մասին. – «Նոր կեանք», թիւ 10, էջ 146–147:

Արփիարեան Ա. 1899, Հայաստան եւ Կ. Պոլիս. – «Նոր կեանք», թիւ 15, Դ, էջ 228–232:

Արփիարեան Ա. 1899, Հայաստանը եւ Կ. Պոլիս. – «Նոր կեանք», թիւ 16, Ե, էջ 243–248:

Արփիարեան Ա. 1899, Հայաստանը եւ Կ. Պոլիս. – «Նոր կեանք», թիւ 18, Է, էջ 275–278:

Արփիարեան Ա. 1899, Եվրոպական քաղաքականութիւնը. – «Նոր կեանք», թիւ 20, էջ 314–317:

Ա. Ա. 1990, Անցեալի դէմքեր. – «Նոր կեանք», թիւ 2, էջ 27–30:

Արփիարեան Ա. 1900, Անցյալի դեմքեր. – «Նոր կեանք», թիւ 2, էջ 28–30:

Արփիարեան Ա. 1900, Ծագում հայկական խնդրին. – «Նոր կեանք», թիւ 10, էջ 148–152, թիւ 11, էջ 169, թիւ 12, էջ 180–183, թիւ 14, էջ 215–219, թիւ 16, էջ 245–250:

Արփիարեան Ա. 1900, Մենք եւ երիտասարդ թիւրքերը. – «Նոր կեանք», թիւ 21, էջ 323–326:

Արփիարեան Ա. 1990, Նուիրական յիշատակը մը. – «Նոր կեանք», թիւ 22, էջ 341–346:

Արփիարեան Ա. Երիտասարդ թիւրքերը. – «Նոր կեանք», 1900, թիւ 14, էջ 210–212, 1901, թիւ 9, էջ 116–117:

Ամիլքար Չիբրիանի. 1901, Հայեր. – «Նոր կեանք», թիւ 10, էջ 145–146:

Ազատ խօսքեր. Խօսք եւ գործ. – «Նոր կեանք», 1901, թիւ 11, էջ 162–167:
Ազատ խօսքեր. Չէզոքները. – «Նոր կեանք», 1901, թիւ 12, էջ 182–185:
Ազատ խօսքեր. Շիտակ ճամբան. – «Նոր կեանք», 1901, թիւ 13, էջ 194–198:
Ազատ խօսքեր. Նոր եղանակ. – «Նոր կեանք», 1902, թիւ 1, էջ 2–3:
Ազատ խօսքեր. Հայ հարուստը. – «Նոր կեանք», 1902, թիւ 2, էջ 18–20:
Ապրէ. – «Նոր կեանք», 1901, թիւ 14, էջ 210–211:
Երէկ եւ այսօր. – «Նոր կեանք», 1901, թիւ 16, էջ 241–243:
Կատաղի սերունդ. – «Նոր կեանք», 1901, թիւ 22, էջ 321–322:
Համբարյան Ա. 1990, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայերի ազատագրական ուղիների մեջ, Երևան, «Հայաստան» հրատ., 480 էջ:
Հայ հարուստը. – «Նոր կեանք», 1902, թիւ 2, էջ 18–20:
Հովհաննիսյան Աշ. 1968, Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները. – ՊԲՀ, № 2, էջ 19–39:
Հովհաննիսյան Գ. 2012, Հնչակյան կուսակցության պատմություն, Երևան, Մեսրոպ Արք. Աշճեան մատենաշար, 352 էջ:
Մակեդոնիան եւ մենք. – «Նոր կեանք»,1902, թիւ 3, էջ 34–35:
Մանուկեան դոկտ. Աբէլ քհն. 2014, Հայրենիքի ազատագրութեան բանակի համոզուած զինուորները (Ժընեւ եւ հնչակեան կուսակցութեան կազմավորումը), Ժընեւ, հրատ. ՍԴՀԿ «Արարատ» տպարան, 158 էջ:
Միութեան խնդիրը. Երկդիմութիւն չենք ուզեր. – «Նոր կեանք», 1901, թիւ 15, էջ 225–227, թիւ 17–18, 257 էջ:
Միութեան խնդիրը. Կը սպասենք ուրեմն. – «Նոր կեանք», 1901, թիւ 21, էջ 305–306:
Միութեան խնդիրը. Դրօշակեան թաքթիքը. – «Նոր կեանք», 1902, թիւ 3, էջ 41–45:
Պատմութիւն Սոցիալ-Դեմոկրատական հնչակեան կուսակցութեան, 1887–1962. 1962, հ. Ա. Պէյրութ, Ս. Դ. Հ. Կ., հրատ.,616 էջ:
Պիտի ջարդեն. – «Նոր կեանք», 1901, թիւ 13, էջ 193–194:
Սարգսյան Ս. 2017, Հնչակյան մամուլ. – Հայ պարբերական մամուլի պատմություն (1900–1922), հ. 2, խմբ. կոլ.՝ Ա. Խառատյան, Լ. Գևորգյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 623–628:
Վտանգը. – «Նոր կեանք», 1902, թիւ 5, էջ 65–67:
Օսմանցի ասպատակներու համաժողովը. – «Նոր կեանք», 1902, թիւ 1, էջ 4–8:

НАЦИОНАЛЬНЫЕ ВОПРОСЫ В ЛОНДОНСКОМ ПЕРИОДИЧЕСКОМ ИЗДАНИИ «НОВАЯ ЖИЗНЬ» (1898–1902 гг.)

ГЕГАМ ОВАННИСЯН

Резюме

Ключевые слова: «Новая жизнь», Арпиарян, Реорганизованная партия Гнчакян, Османская Турция, идеология освободительного движения, Западная Армения, Европа, Россия, Арзуян.

Одним из первых периодических изданий сформированной в 1896 г. Реорганизованной партии Гнчакян был журнал «Новая жизнь», издававшийся в Лондоне в 1898–1902 гг. На страницах периодического издания обсуждался вопрос политического воспитания армянского народа. Журнал способствовал развитию армянского освободительного движения и его эффективности, обращался к самым значимым вопросам армянской национальной жизни конца XIX в. Озвученные на его страницах вопросы, касающиеся, в частности, переосмысления освободительного движения, роли великих европейских держав в судьбе армянского народа, значения образования и просвещения в национальном прогрессе, являлись злободневными для армянской действительности этого исторического отрезка. Периодическое издание откликалось и на негативные явления в национальной жизни, подчеркивая при этом, что без их акцентирования невозможно высветить верную политическую линию. Хотя между редакторами «Новой жизни» – А. Арпиаряном и А. Арзуяном, возглавлявшими журнал на разных этапах его издания (1898–1901 и 1901–1902 гг.), имелись идеологические расхождения, тем не менее, выдвинутые на его страницах идеи обогатили армянскую общественно-политическую мысль, и журнал занял свое достойное место в истории армянской периодики и публицистики.

Гегам Ованнисян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела новой истории Института истории НАН РА. Научные интересы: история армянских национальных партий и общественно-политической мысли. Автор 2 монографий и более 30 статей. gegham.hovhannisian@mail.ru

NATIONAL ISSUES IN THE LONDON PERIODICAL“NEW LIFE” (1898–1902)

GEGHAM HOVHANNISYAN

Summary

Keywords: the “New Life”, Arpiar Arpiaryan, Reorganized Hunchak Party, Ottoman Turkey, ideology of the liberation movement, Western Armenia, Europe, Russia, A. Arzuyan.

One of the first periodicals of the Reorganized Hunchak Party, formed in 1896, was the “New Life” journal, which was published in London in 1898–1902. The issue of political education of the Armenian people was discussed on the pages of the periodical. The journal contributed to the development of the Armenian liberation movement and its effectiveness and addressed the most significant issues of the Armenian national life of the late XIX century. The issues covered on the pages of the journal were topical for Armenian reality of that historical period, especially those concerning the reassessment of the liberation

movement, the role of the great European powers in the fate of the Armenian people, the importance of education and enlightenment in the national progress. The “New Life” periodical also revealed the negative phenomena in national life, rightly emphasizing that it is impossible to develop a true national policy without laying stress on them. Although there were ideological differences between the editors of the “New Life” – A. Arpiaryan and A. Arzuyan, who headed the journal at different periods of its publication (1898–1901 and 1901–1902), nevertheless, the ideas put forward on its pages enriched the Armenian social and political thought, and the journal completely took a worthy place in the history of the Armenian press and journalism.

Gegham Hovhannisyan – Candidate of Historical Sciences, Associate Professor, Senior Researcher at the Department of New History of the Institute of History of NAS RA. Scientific interests: history of Armenian national parties and socio-political thought. Author of 2 monographs and over 30 articles.
gegham.hovhannisian@mail.ru

ՀՏԴ 929:891.981 Զոհրապ + 327(470+430)

Doi:10.54503/0135-0536-2023.3-72

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ԴԵՐԸ 1913 Թ. ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Գրիգոր Զոհրապ, հայկական բարենորոգումներ, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնություն, Հ. Վանգենհայմ, Մ. Գիրս, Ա. Մանդելշտամ:

Նախաբան

Գրիգոր Զոհրապը (1861–1915) XIX դարավերջի և XX դարասկզբի արևմտահայ մտավորականության կարկառուն դեմքերից է: Նրա ինքնատիպ տաղանդը դրսևորվել է առաջին հերթին գրական-գեղարվեստական ստեղծագործություններում: Գ. Զոհրապը նորավեպի հայ արքան է. գրական ստեղծագործություններն աչքի են ընկնում արևմտահայ իրականության գերազանց իմացությամբ և մարդասիրության վեհ գաղափարներով:

Արևմտահայերի ծանր գոյավիճակի և Հայաստանի ապագայի նկատմամբ ունեցած անհանգստությունը Գ. Զոհրապին դեռ երիտասարդ տարիքից մղել են զբաղվելու նաև հասարակական-քաղաքական գործունեությամբ: Նրա համար շրջադարձային էր 1908 թ., երբ արևմտահայ մյուս վտարանդի գործիչների նման Փարիզից վերադարձավ Կ. Պոլիս և ծավալեց հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն: Ժողովրդական բարձր հեղինակությունը նրան հնարավորություն տվեց 1908–1914 թթ. երեք անգամ անընդմեջ ընտրվել երիտթուրքական խորհրդարանի պատգամավոր: Պատգամավորական գործունեության ընթացքում նա օսմանյան խորհրդարանում քննարկման առարկա դարձրեց ազատական բնույթի բազմաթիվ օրինագծեր, որոնց ընդունումը կայսրության տնտեսական, մշակութային և քաղաքական զարգացումը կտեղափոխեին առաջադիմական ուղու վրա: Իբրև պատգամավոր՝ ելույթներում մշտապես հանդես է եկել արևմտահայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ՝ փորձելով խոչընդոտել երիտթուրքերի վարած հակահայ քաղաքականությանը:

1912–1914 թթ., երբ Հայկական հարցը կրկին միջազգային դիվանագիտության օրակարգում էր, Գ. Զոհրապն ակտիվ մասնակցություն ունեցավ դրա շուրջ ծավալված բանակցային գործընթացին: 1913 թ. նոյեմբերի 17-ին Արշակ Չոպանյանին ուղղված նամակում Զոհրապը գրում էր. «Մեր դժբախտ դատին համար կաշխատիմ գիշեր ու ցորեկ … Աստված օգնե անոր, քանի որ մարդիկ կը հեռանան անկե նորեն»[1]:

* Ներկայացվել է 10. IV. 2023 թ., գրախոսվել է 02. V. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:

[1] Զ ո հ ր ա պ. 2003, 270:

Դիրքավորումներ ռուս-գերմանական բանակցային գործընթացի նախօրեին

1913 թ. հուլիսին հայկական բարենորոգումների ռուսական նախագիծը քննարկելու համար Կ. Պոլսի Ենի-Քյոյ թաղամասում վեց տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի մասնակցությամբ հրավիրված համաժողովը մտավ փակուղի: Համաժողովի աշխատանքների վերլուծությունից ռուսական դիվանագիտությունը եզրակացրեց, որ իր ներկայացրած նախագծի մի քանի անկյունաքարային հիմնադրույթներ առանձնակի սկզբունքայնությամբ ու համառությամբ են մերժվել Եռյակ դաշինքի՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի կողմից: Կոշտ ընդդիմության հանդիպած գլխավոր պահանջներն էին՝ հայկական վեց վիլայեթների միավորումը մեկ նահանգի մեջ, տերությունների համաձայնությամբ եվրոպացի նահանգապետի նշանակումը, բարենորոգումների նկատմամբ տերությունների կողմից իրականացվող վերահսկողության մեխանիզմը և հայկական նահանգի պաշտոնեության ձևավորման սկզբունքը, այսինքն՝ ըստ ազգային պատկանելիության համեմատական, թե ըստ հավատքի հետևորդների հավասար ներկայացուցչության[2]: Հիմնախնդիրների հստակեցումից հետո ռուսական դիվանագիտությունը որոշեց փոխել մարտավարությունը: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը հետագայում հիշում էր. «Ենի-Քյոյի համաժողովում չհասնելով որևէ արդյունքի՝ ռուսական կառավարությունը որոշեց այդ անհաջողության առջև կանգ չառնել, փոխարենը այլ ճանապարհներով հասնել հայկական վիլայեթների թուրքական վարչակազմի գործողությունների նկատմամբ եվրոպական հսկողության հաստատման իր նպատակին»[3]: Ենի-Քյոյի անհաջողությունից հետո ռուսական նոր մարտավարությունը ենթադրում էր նախ վիճելի հարցերի շուրջ փոխզիջումների միջոցով համաձայնություն կայացնել Գերմանիայի հետ, իսկ այնուհետև այդ տարբերակը պարտադրել թուրքական կառավարությանը: Տրամագծորեն հակադիր տեսակետների տեղիք տված հիմնադրույթների մեջ ռուսական դիվանագիտությունն առանձնացրեց տերությունների համաձայնությամբ եվրոպացի նահանգապետի նշանակումը: Դա այն կարմիր գիծն էր, որից նահանջելն անթույլատրելի էր, քանի որ այդ դեպքում կարելի էր առհասարակ «խաչ քաշել» բարենորոգումների ամբողջ գործընթացի վրա: Ռուսաց դեսպան Մ. Գիրսը գտնում էր, որ եթե չթույլատրվի տերությունների մասնակցությունը եվրոպացի նահանգապետի նշանակման գործում և մերժվի նրանց հսկողությունը բարենորոգումների իրականացման վրա, ապա հայկական բարենորոգումները գործնականում կլինեն անգործադրելի[4]: Ինչ վերաբերում է մեկ ամբողջական հայկական նահանգ կազմավորելու դրույթին, ապա այդ հարցում զիջումն որքան էլ անցանկալի լիներ, այդուհանդերձ, ինչպես դեսպանն էր ենթադրում, թույլատրելի էր[5]: Ռուսական

---

[2] Архив внешней политики Российской империи (*այսուհետ*՝ АВПРИ), ф. Посольство в Константинополе, оп. 517/2, д. 3728, л. 122–123.

[3] С а з о н о в. 2002, 157.

[4] АВПРИ, ф. Канцелярия МИД, оп. 470, д. 114, л. 413.

[5] *Տե՛ս* АВПРИ, ф. Посольство в Константинополе, оп. 517/2, д. 3728, л. 124.

դիվանագիտությունը գտնում էր՝ իր ներկայացրած նախագծի գլխավոր հակառակորդ Գերմանիայի կողմից հնչեցվող մեղադրանքը, թե Ռուսաստանը ցանկանում է Օսմանյան կայսրությունում ստեղծել ինքնավար միավոր ու հետո այն բռնակցել, կարելի էր ի չիք դարձնել՝ գնալով ծայրահեղ քայլի՝ համաձայնվել միասնական նահանգը երկու սեկտորի տրոհելու առաջարկի հետ: Փոխզիջման այս տարբերակն ընտրելով հանդերձ՝ ռուսական դիվանագիտությունը կատարում էր երկու կարևոր վերապահում: Նախ՝ սեկտորների պետք է բաժանվեր միայն այն տարածքը, որը սահմանագծված էր ռուսական նախագծով, այսինքն՝ զուտ մահմեդական բնակչություն ունեցող որևէ տարածք չպետք է կցվեր: Երկրորդ՝ սեկտորների գեներալ-նահանգապետերը պետք է նշանակվեին տերությունների համաձայնությամբ և ունենային բացարձակ իրավասություն նշանակելու և ազատելու իրենց ենթակա պաշտոնյաներին[6]:

Ռուս-գերմանական բանակցային փուլը սկսելիս դեսպան Մ. Գիրսը պետք է հաշվի առներ ոչ միայն հնարավոր զիջումների սահմանը, այլև դրանք համաձայնեցներ հայկական շրջանակների հետ: Հակառակ դեպքում ռուսական դիվանագիտությունը կդադարեր հայկական ձգտումների արտահայտիչը լինելուց և Գերմանիայի հետ մրցապայքարում կարող էր զրկվել բարենորոգումներ նախաձեռնողի կարգավիճակից: Հայկական շրջանակների և ռուսաց դեսպանության միջև կարծիքների ու տեսակետների լիակատար համերաշխությունն անհրաժեշտ էր նաև այն պարզ պատճառով, որ գերմանացի դիվանագետների մոտ չստեղծվեր տպավորություն, թե արևմտահայ գործիչներն ավելի զիջող են, քան ռուսական դեսպանությունը: Եվ երբ ռուսաց դեսպանը օգոստոսի 3-ին Գ. Զոհրապի միջոցով դիմեց պատրիարքարանին՝ պարզելու վերջինիս տեսակետը հայկական միասնական նահանգը երկու հատվածի բաժանելու վերաբերյալ, պատրիարքական հանձնախմբերը քննարկումների փուլն ավարտելուց հետո՝ օգոստոսի 15-ին, հատուկ նիստ հրավիրեցին: Պատրիարքական շրջանակների համար ծայրահեղ ծանր էր համակերպվել տրոհման անհրաժեշտության հետ. չէ որ դա իրենց առանցքային պահանջներից էր:

Գ. Զոհրապը դեսպանի հետ հանդիպման ժամանակ հայտնեց իր կարծիքը՝ այդ զիջման հետ ծայրահեղ դեպքում կարելի էր համակերպվել, սակայն վտանգավոր էր համարում այն, որ սեկտորներից մեկին պետք է միանար Տրապիզոնի վիլայեթը, որն ուներ գրեթե մեկ միլիոն մահմեդական բնակչություն: Այդ սեկտորում խնդիր էր առաջանալու ընդհանուր վարչական խորհուրդներում, ինչպես նաև՝ պաշտոնյաներ նշանակելիս ազգային պատկանելությամբ համեմատական սկզբունքի կիրառումը: Ակնհայտ էր, որ այդտեղ հայազգի պաշտոնյաներ չէին լինելու: Դեսպան Մ. Գիրսը համոզում էր՝ հայկական նահանգը տրոհելու դեմ որքան էլ պատրիարքարանը դժգոհի, այդուհանդերձ, պետք է համակերպվել, քանի որ «մեր ծրագրին մեջ մեծ Հայաստան մը կազմելու մասին հայտնված դիտողությունները ջրելու համար ըսինք ի հարկին թե հայկական շրջանին երկուսի բաժնվելն ալ կընդունինք հայտնված կաս-

---

[6] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 261–262:

կածները վերցնելու համար»[7]*: Պատրիարքարանի դժգոհությունները փարատելու համար դեսպանը Գ. Զոհրապին հավաստիացնում էր, որ Տրապիզոնի վիլայեթը սեկտորին կցելու մասին դեռ խոսք չկա, իսկ լինելու պարագայում իրենք կպայքարեն համեմատական ներկայացվածության դրույթը չընդունելու համար*[8]*:*

Պատրիարքարանի հանձնախմբերը ուսումնասիրելով խնդիրը՝ գտան, որ եթե տերությունների միջև հայկական բարենորոգումների շուրջ համաձայնություն կայացնելու համար խոչընդոտ է միասնական հայկական նահանգը, ապա ծայրահեղ դեպքում կարելի է համաձայնվել բաժանման հետ: Միաժամանակ ռուսական դիվանագիտությանը տեղեկացվեց, որ մարտավարական նպատակներով այդ զիջման մասին գերմանական կողմին պետք էր հայտնել միայն վերջին պահին, երբ սպառված կլինեին դիվանագիտական զինանոցի մյուս միջոցները: Օգոստոսի 16-ին պատրիարքարանի ներկայացուցչին այցելած ռուսական դեսպանության առաջին թարգման Ա. Մանդելշտամը հայտնում էր, որ սեկտորների բաժանման հետ հարկավոր է համակերպվել նաև Տրապիզոնի վիլայեթը կցելու առաջարկի հետ, ինչը կարագացներ տերությունների միջև համաձայնության կայացումը[9]*:*

Ենի-Քյոյի բանակցությունների ձախողումից հետո ստեղծված իրավիճակը չէր համապատասխանում նաև Գերմանիայի շահերին: Նա թեև համաժողովում պաշտպանեց երիտթուրքերին, սակայն դա կատարեց «հայկական բարենորոգումների հակառակորդի» տխրահռչակ անուն վաստակելու գնով: Հուլիսի 9-ին, երբ դեռ Ենի-Քյոյի համաժողովի նիստերը չէին ավարտվել, դեսպան Հանս Վանգենհայմն անհանգստացած Բեռլին հարցում էր ուղարկում, թե ռուսական նախագծի տապալումից հետո պատասխանատվությունից խուսափելու համար իրենք ի՞նչ արդարացումներով պետք է ներկայանան հայ հանրությանը[10]*:*

Անցանկալի պիտակավորումներից անհանգստացած էր նաև պետքարտուղար Գոթլիբ ֆոն Յագովը, ով համոզված էր՝ Գերմանիայի համար խնդրի կարգավորման լավագույն միջոցը փոխզիջումային տարբերակի հանգելն է: Հուլիսի 15-ին Վանգենհայմին ուղղված նամակում նա գրում էր, որ եթե Գերմանիայի դիմադրության պատճառով ռուսական նախագիծը տապալվի, ապա «ամենայն հավանականությամբ պետք է սպասել, որ Ռուսաստանը և նրան միացած տերությունները կաշխատեն իրենց հերթին տապալել մեր ցանկացած նախաձեռնություն: Հետևաբար, մեր շահերից է բխում ռուսական առաջար-

---

[7] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 165: Այս վավերագրում Գ. Զոհրապի անունը բացակայում է: Նրա անվան փոխարեն գրված է «պատվիրակ», և միայն տարբեր երկրների արտգործնախարարությունների արխիվներից հանված փաստաթղթերի համադրմամբ հնարավոր է դարձել հիմնավորել, որ հայկական կողմի ներկայացուցիչը եղել է Գ. Զոհրապը (մանրամասն տե՛ս Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 2022, 90–110):*

[8] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 165:*

[9] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 165, 194–195:*

[10] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 106.

կությունների նկատմամբ չգրավել ժխտողական դիրք և միայն փորձել փոխզիջումների միջոցով հարթեցնել ամենազգայուն կետերի անկյունները»[11]:

Կարևորելով արևմտահայության դերն Օսմանյան կայսրությունում իր տնտեսական և քաղաքական ծրագրերի իրականացման գործում՝ գերմանական կառավարությունը մտադիր չէր համակերպվել հայկական շրջանակներում հակագերմանական տրամադրությունների տարածման հետ: Ռուսաց դեսպան Մ. Գիրսի շնորհիվ Էնի-Քյոյի համաժողովի մանրամասներին պատրիարքական շրջանակները տեղեկացվել էին Եռյակ զինակցության պահվածքի մասին: Վերջիններիս դեսպանները հայ գործիչների հետ իրենց հանդիպումներով ու զրույցներով ևս համոզվել էին, թե ինչպիսի հիասթափեցնող տպավորություն են ստացել արևմտահայ հասարակական-քաղաքական ու հոգևորական շրջանները: Դեսպան Հ. Վանգենհայմը համոզված էր, որ հայկական միջավայրում հակագերմանական տրամադրությունները ռուսական նպատակասլաց քարոզչության արդյունք են: Գերմանական դեսպանությունը համաժողովի աշխատանքների արդյունքներից գոհ էր այնքանով, որքանով որ տապալվել էր ռուսական նախագծի ընդունումը: Սակայն դժգոհ էր, որ Գերմանիան ներկայանում է որպես հայկական բարենորոգումներին հակառակորդ պետություն: Ուստի հուլիսի 22-ին կանցլեր Բեթման Հոլվեգին ներկայացրած հաշվետվությունում հակագերմանական «թունավորումները» կանխելու և Ռուսաստանին թուրքական լծից հայերին ազատագրողի կերպարից զրկելու նպատակներով դեսպան Հ. Վանգենհայմն առաջարկում էր մյուս տերությունների հետ հնարավորինս արագ հանդես գալ բարենորոգումների միասնական ծրագրով, որի առանցքային պահանջը կլիներ տերությունների կողմից իրականացվող միջազգային վերահսկողության սկզբունքի ընդունումը:

Բանակցություններին մարտավարական ճիշտ ընթացք ապահովելու նպատակով Հ. Վանգենհայմը կանցլեր Բ. Հոլվեգին առաջարկում էր անմիջական բանակցություններ սկսել Ռուսաստանի հետ և նրան համոզել միանալու ապագա ռուս-գերմանական համատեղ ծրագրին: Դեսպանը կարծում էր՝ Ռուսաստանի համար ռուս-գերմանական համատեղ ծրագիրը կարող էր ընդունելի լինել, քանի որ նրանում ընդգրկվելու էին նաև Ա. Մանդելշտամի նախագծի մի շարք պահանջներ: Համատեղ ծրագրին Ռուսաստանի չմիանալու պարագայում դեսպան Հ. Վանգենհայմը, հենվելով Բ. Հոլվեգից ստացած տեղեկությունների վրա, առ այն որ Անգլիան և Ֆրանսիան հակակրանքով են վերաբերվում ռուսական նախագծին, առաջարկում էր բանակցություններ սկսել Մեծ Բրիտանիայի հետ: Դեսպանը ծայրահեղ դեպքում թույլատրելի էր համարում նաև համատեղ ծրագիրն Անգլիայի հետ Բ. Դռանը պարտադրելը: Հ. Վանգենհայմի կարծիքով՝ Ռուսաստանն արդեն ստիպված կլիներ միանալ գերմանական այս նախաձեռնությանը, քանի որ միայնակ չէր կարող թուրքական կառավարությանը պարտադրել իր նախագիծը, իսկ այդ անկարողությունն արևմտահայերի շրջանում կվարկաբեկեր նրան և կաթվածի կենթարկեր բարենորոգումներին միտված ռուսական դիվանագիտության հետագա գործողությունները[12]:

---

[11] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 110.

[12] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 116.

Ակնհայտ էր՝ գերմանական դիվանագիտության մարտավարության նպատակը ոչ այնքան բարենորոգումների կիրառումն ապահովելն էր, որքան դրանցում Ռուսաստանի նախաձեռնության չեզոքացումն ու հայկական շրջանակներում Գերմանիայի խարխլված հեղինակության վերականգնումը: Ինչ վերաբերում է թուրքական կառավարությանը, ապա դեսպանի համար ամենևին էլ մտահոգիչ չէր, որ նման մարտավարությամբ գերմանական դիվանագիտությունը կհարուցեր բարեկամ երիտթուրքերի դժգոհությունը: Վանգենհայմը դրա դեղամիջոցն էլ ուներ: Նախ՝ համատեղ ծրագրում կլինեին նաև թուրքական առաջարկները, և երկրորդ՝ կմեկնաբաներ, որ այդպիսի մարտավարությամբ «խանգարում են Ռուսաստանին հանդես գալու Թուրքիայի ամբողջականությունը վտանգող բարենորոգումների հեռագնա նախագծով»[13]:

Գրիգոր Զոհրապը գլխավոր բանակցող

Ենի-Քյոյի համաժողովի ավարտից հետո Ռուսաստանը և Գերմանիան, պայմանավորված տարբեր չարժառիթներով ու նպատակներով, շահագրգիռ էին վերսկսել բանակցությունները: Ուստի կողմերը հուլիսի կեսին երկկողմ ձևաչափով սկսեցին դեսպանատների թարգմաններ՝ Մանդելշտամի և Շյոնբերգի մակարդակով: Դրանցում շոշափելի առաջընթաց չարձանագրվեց: Ռուս-գերմանական բանակցությունները փակուղում էին, երբ հուլիսի 18-ին՝ Միջագետք և Կիլիկիա կատարած շրջագայություններից հետո, Կ. Պոլիս վերադարձավ գերմանացի նշանավոր արևելագետ Յոհաննես Լեփսիուսը, ով հայտնի էր հայասիրական բազմաթիվ հոդվածներով, զեկուցումներով, հարցազրույցներով և մեծ հեղինակություն էր վայելում հայկական շրջանակներում: Գերմանական դեսպանությունն օգտվեց անվանի գիտնականի ներկայությունից և փորձեց նրա միջոցով ուղիղ բանակցություններ սկսել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հետ: Լեփսիուսը գրեթե մեկ ամիս մնաց այդտեղ. սկզբում մասնավոր, այնուհետև պաշտոնական հանդիպումներ ունեցավ պատրիարքարանի Ապահովության հանձնաժողովի նախագահ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի, քարտուղար Վահան Փափազյանի (Կոմս), նախկին պատրիարքներ Մաղաքիա Օրմանյանի և Հովհաննես Արշարունու, ՀՅԴ ղեկավար որոշ անձանց ու «Ազատամարտ» թերթի խմբագրակազմի, ինչպես նաև՝ Գ. Զոհրապի հետ: Որպես Գերմանիայի Արևելյան առաքելության ղեկավար՝ Լեփսիուսը պատրիարքարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներն անցկացնում էր գերմանական կառավարության անունից, հետևաբար, պարտավոր էր կարծիքներ ու տեսակետներ շոշափելու ընթացքում պաշտպանել իրեն լիազորող իշխանությունների տեսակետները: Սակայն մեծ հայասերը, օգտագործելով իր կարգավիճակից բխող հնարավորությունները, սեփական կառավարության ուղղված հաշվետվություններում առաջարկում էր հայերի համար անխախտ համարվող պահանջներում ցուցաբերել բարի կամեցողություն, ինչը համակրանքի ալիք կառաջացնի նրանց շրջանում[14]:

[13] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 117.

[14] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 122–125.

Մասնավոր հանդիպումների միջոցով խնդիրն ուսումնասիրելուց հետո Յո. Լեփսիուսը հուլիսի 27-ին այցելեց պատրիարքարան ու հայտարարեց, որ Գերմանիան կատարել է զիջումներ, ուստի ինքը խնդրում է պաշտոնական ներկայացուցիչ բանակցություններ սկսելու համար: Պատրիարքարանը պաշտոնական ներկայացուցիչ նշանակեց Գ. Զոհրապին[15]*, ում հետ էլ դոկտոր Լեփսիուսի բանակցություններն ամփոփվեցին վեց կետից բաղկացած կիսապաշտոնական գրավոր պայմանավորվածություններում: Դրանք էին. «1 Ընդհանուր քննիչները պիտի ըլլան Եվրոպացի և նշանակուած Բ. Դռան կողմէ՝ Պետութեանց համաձայնութեամբ: 2 Ընդհանուր քննիչը իրավունք պիտի ունենայ պաշտօնէ զրկելու ամէն կարգի պաշտօնատարներ, մեջը ըլլալով վալիներ: 3 Խառն ազգաբնակութիւն ունեցող սանճագներու մէջ, ընդհանուր և վարչական խորհուրդներու աթոռներու բաշխման ընթացքին, մահմեդականներու և ոչ-մահմեդականներու հավասարութեան սկզբունքի կիրառում: 4 Հանրային պաշտօններու բաշխման ընթացքին, նոյն սկզբունքի կիրառումը՝ մահմեդական և ոչ մահմեդական պաշտօնաւորներու նկատմամբ: 5 Մահմեդական գաղթականներ, ընդհ. քննիչներու համաձայնութեամբ միայն կրնան հաստատուիլ, 7 վիլայեթներէն ոևէ մէկուն մէջ: 6 Շրջանային զինուորական ծառայութիւնը ընդունված է՝ պայմանով որ ոևիցե կերպով չը վնասէ կայսրութեան ապահովութեանը»*[16]*:*

Պատրիարքական շրջանակները գոհ էին փոխհամաձայնության կայացումից: Պարզապես նրանց անհանգստացրել էր մեկ այլ հանգամանք. Գ. Զոհրապի հետ բանակցությունների ժամանակ դոկտոր Լեփսիուսը[17] *բարեկամաբար խորհուրդ էր տվել հրաժարվել Հայկական հարցի միջազգայնացումից ու Կ. Պոլիս հրավիրել Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային, չվստահել ռուսներին, որոնք ցանկանում են բարենորոգումների հարցը կապել Բալկանյան Երկրորդ պատերազմի հետևանքով առաջացած Ադրիանապոլսի խնդրի հետ*[18]*, և, վերջապես, արագացնել Թուրքերի հետ բա-*

---

[15] *Բանակցային գործնթացին Զոհրապի մասնակցությունը երիտթուրքերի վրեժխնդրությունից հեռու պահելու նպատակով որոշակիորեն գաղտնիացվել է, ուստի գլխավոր բանակցող անձ նշանակվելու մասին գրավոր վկայություն գոյություն ունենալ չի կարող: Սակայն Կ. Պոլսի դիվանագիտական կորպուսի հետ իր բանակցությունների հաճախականության, բովանդակության և արդյունքների ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ 1913 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հայկական կողմից գլխավոր բանակցողը եղել է Գ. Զոհրապը (մանրամասն տե՛ս Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 2022, 90–110):*

[16] *Փ ա փ ա զ ե ա ն. 1952, 589:*

[17] *Զոհրապի հետ հանդիպումից հետո Լեփսիուսը մեկնեց Եվրոպա և Պողոս Նուբար փաշային աջակցեց գերմանական հասարակական կարծիքը՝ հօգուտ Հայկական հարցի տրամադրելու աշխատանքներում (տե՛ս Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 2022, 90–110):*

[18] *Բալկանյան Երկրորդ պատերազմի (1913 թ. հունիսի 29–օգոստոսի 10) ընթացքում Օսմանյան կայսրությունը վերագրավել էր նախորդում կորցրած Ադրիանապոլիսը: Ռուսաստանը դիվանագիտական ճնշումների միջոցով ցանկանում էր այն վերադարձնել Բուլղարիային, ինչը Զոհրապի մոտ ողջամիտ կասկած էր հարուցել, որ Ռուսաստանն այդ նպատակին հասնելու համար կարող էր զոհաբերել հայկական բարենորոգումների խնդիրը:*

բենորոգումների շուրջ համաձայնության կայացումը: Դոկտոր Լեփսիուսի խորհուրդների վերլուծությունը պատրիարքական շրջանակներին բերեցին այն համոզման, որ դեսպան Հ. Վանգենհայմը գործում էր երիտթուրքական կառավարության հետ համաձայնեցված: Դրա վառ ապացույցն էր նաև այն փաստը, որ Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը հուլիսի 30-ին իր մոտ էր հրավիրել թուրքական խորհրդարանի հայազգի պատգամավորներ Գ. Զոհրապին և Վարդգեսին (Հովհաննես Սերինկյուլյանին) ու նրանց հորդորել խնդիրը լուծել թուրքերի և «հայերի անմիջական բանակցություններով»[19]*: Նա նույնպես խորհուրդ էր տվել Կ. Պոլիս հրավիրել Պ. Նուբարին, հրաժարվել եվրոպական երկրների հետ բանակցություններից և չվստահել ռուսներին, քանի որ նրանց ծրագիրը Ենի-Քյոյում արդեն մերժվել է: Ինչ վերաբերում է եվրոպական վերահսկողությանը, ապա Թալեաթը վստահեցնում էր՝ այն սկզբունքորեն առկա է, քանի որ «դեսպանները տալիս են իրենց ցուցումները Բ. Դռան ամեն անգամ, երբ քուրդը սպանում է հային»*[20]*:*

Լեփսիուսի և Թալեաթի հետ բանակցությունների ամփոփումից հետո և դրանց արդյունքների նկատմամբ ռուսական դիվանագիտության դիրքորոշումը հստակեցնելու նպատակով օգոստոսի 3-ին Գ. Զոհրապն այցելում է Կ. Պոլսի ռուսական դեսպանատուն[21]*: Նա դեսպան Մ. Գիրսին տեղյակ պահեց ինչպես Լեփսիուսի հետ բանակցություններում գրանցված գոհացուցիչ արդյունքների, այնպես էլ գերմանական դիվանագիտության ու Թալեաթի նույնաբովանդակ խորհուրդների հետ: Դեսպանը հավաստիացրեց, որ Ռուսաստանը երբեք Ադրիանապոլսի խնդրի լուծման համար չի զոհաբերի Հայկական հարցը, քանի որ «հայկական բարենորոգմանց գործադրությունը մեր ասիական սահմանին կից կարգ-կանոն հաստատելու հարցն է, ինչ որ ուղղակի ռուսական շահ մը կներկայացնե»*[22]*: Ինչ վերաբերում է շտապելու ու թուրքերի հետ արագ համաձայնության գալու Յո. Լեփսիուսի խորհրդին, ապա դեսպանը նկատեց, որ գերմանական դիվանագիտությունը ցանկանում է իր միջնորդությամբ թուրքերի և հայերի միջև կայացնել փոխըմբռնում, ինչը գերմանական դեսպանության ծանրակշիռ հաջողությունը կլինի: Պատահական չէր, որ Եռյակ դաշինքի երկրների Կ. Պոլսի երեք դեսպաններն էլ անհամբեր սպասում*

---

[19] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 266:*

[20] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 266:*

[21] *Ռուսաստանի արտգործնախարարության 1915 թ. հրատարակած* «Сборник дипломатических документов. Реформы в Армении» *փաստաթղթերի, ինչպես նաև Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թիվ 288 վավերագրերի ժողովածուներում չի նշվում, թե ո՞վ է բանակցել Մ. Գիրսի, Լեփսիուսի և Թալեաթի հետ: Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվի թիվ 733 գաղտնի հեռագրում թվագրված «3 օգոստոսի 1913 թ.» Մ. Գիրսն արտգործնախարար Ս. Սազոնովին հայտնում է, որ Լեփսիուսի և Թալեաթի հետ բանակցություններ վարող անձը Գ. Զոհրապն է, ով հիշյալ օրը «այցելել է իրեն խորը երախտագիտություն հայտնելու հայ ժողովրդի շահերը հոգալու համար»* (*տե՛ս* АВПРИ, ф. Канцелярия 1913г., д. 115, л. 98)*:*

[22] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 166:*

էին Պողոս Նուբար փաշայի ժամանելուն և նրա հետ համաձայնություն կայացնելուն:

Օգոստոսի 19-ին գերմանական դեսպանությունը վերջին փորձն արեց բարենորոգումների խնդիրը միջազգային կարգավիճակից զրկելու և հայ-թուրքական բանակցությունների դաշտ տեղափոխելու համար: Այդ օրը գերմանական դեսպանատան երկրորդ թարգման Շյոնբերգն Մանդելշտամին հայտնեց՝ բոլոր այն զիջումները, որոնք կատարվել են իր և Յո. Լեփսիուսի միջոցով, չեղյալ են հայտարարվում: Ա. Մանդելշտամն ուղղակի ապշած էր: Անակնկալ դիմափոխությունը (volte-face)[23] *նշանակում էր վերջակետ դնել ռուս-գերմանական բանակցություններին: Ա. Մանդելշտամին այլ բան չէր մնում քան խիստ տոնով դատապարտել գերմանական կողմի պահվածքը և որպես վերջին խոսք հայտարարել, որ «ռուսները իրենց ծրագրեն ոչ մեկ զիջում պիտի ընեն բացի մեկ կետեն, այն է ի հարկին երկու* secteur *ընդունիլ հյուսիսեն հարավ բաժնելով, բայց անհողդողդ պիտի մնան մյուս բոլոր կետերուն մասին, զոր գերմաններն ալ գրեթե ընդունած էին»*[24]*:*

Գերմանացիների դիմափոխության մասին Ա. Մանդելշտամի զեկուցումը հիասթափեցնող տպավորություն թողեց նաև դեսպան Մ. Գիրսի վրա: Նա Մանդելշտամին արգելեց շարունակել բանակցությունները և հայտարարեց, որ դեսպան Հ. Վանգենհայմը պետք է բացատրություններ տա այս տգեղ դիմաշրջության համար:

Հայկական պատրիարքական շրջանակները, մասնավորապես՝ Գ. Զոհրապը, օգոստոսի 20-ին Ա. Մանդելշտամից տեղեկացան գերմանական կողմի դիմաշրջության մասին: Նրա համար ևս նորությունն անսպասելի էր, բայց առավել անհանգստացնող էր Ա. Մանդելշտամի հուսահատվածությունն ու ընկճվածությունը: Զրույցի ընթացքում վերջինս նկատեց, որ «եթե հայկական խնդիրը պետութեանց ոմանց և Թուրքիո հակառակության հետևանքով խափանվի և եթե լռությամբ ընդունեն այս վիճակը աշխարհը պիտի ըսե թե հայերը բան մը չէին պահանջեր, և թե ռուսներ հայերու անունով և շինծու կըողոքեին և ռեֆորմ կպահանջեին»[25]*: Հայկական հարցի վերաբացումից հետո ռուս բոլոր դիվանագետներն էլ մշտապես վստահ էին եղել հայկական բարենորոգումների բարեհաջող ավարտի մեջ, և սա առաջին դեպքն էր, երբ դիտարկվում էր տապալման հնարավորությունը:*

Գերմանական դիմափոխության մասին շփոթեցնող տպավորությունն արագ հաղթահարելուց հետո Գ. Զոհրապն Ա. Մանդելշտամին ներկայացրեց կատարվածի մասին իր վերլուծությունը, ինչը տրամաբանական համարեց նաև առաջին թարգմանը: Բանն այն է, որ օգոստոսի 17-ին Գ. Զոհրապն իր տանը հյուրընկալել էր ներքին գործերի նախարար Թալեաթ, Պետխորհրդի

---

[23] Volte-face-*ը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է դիմափոխություն: Դիվանագիտական վարվելակարգում համարվում է տգեղ և դատապարտելի, քանի որ նշանակում է հրաժարում բանակցային գործընթացում ձեռք բերված պայմանավորվածություններից:*

[24] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 200, Մ ա ր տ ի ր ո ս - յ ա ն. 2022, 96:*

[25] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 198, Մ ա ր տ ի ր ո ս - յ ա ն. 2022, 95:*

նախագահ Խալիլ և Իթթիհատ կուսակցության գլխավոր քարտուղար Ֆեհմի բեյերին: Զոհրապից բացի՝ հանդիպմանը մասնակցել էին նաև պատրիարքարանի Ապահովության հանձնաժողովի անդամ Հարություն Շահրիկյանը և օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վարդգես Սերինկյուլյանը: Հանդիպման մասնակիցները ոչ պաշտոնական քննարկել էին հայկական բարենորոգումներին առնչվող ընդհանուր բնույթի հարցեր: Քանի որ կողմերը պայմանավորվել էին մի քանի օր անց կրկին հանդիպել ու շարունակել քննարկումները, Գ. Զոհրապը կարծում էր՝ «հավանաբար մեզի հետ իրենց համաձայնությունը հաջողեցնելու համար անոնք դիմած են Վանգենհայմին որ մեզ չքաջալերեն գիջումներ ընելով, որովհետև այդ պարագային հայերը չպիտի ուզեին Թուրքերու հետ բանակցիլ և խնդրած ըլլան որ դեսպանը հաշտեցնե զմեզ, որպեսզի իրենց դիմենք»[26]:

Գ. Զոհրապի այս վարկածի հիմնավորվածության մասին է վկայում նաև այն փաստը, որ նույն օրը՝ օգոստոսի 20-ի առավոտյան, մինչ Ա. Մանդելշտամին հանդիպելը, նրան էր այցելել գերմանական դեսպանատան հայազգի մի պաշտոնյա, ով հայտնել էր՝ դոկտ. Շյոնբերգը ցանկանում է հանդիպել և մտքեր փոխանակել հայկական բարենորոգումների շուրջ: Հանդիպումը կայանալու էր Կ. Պոլսի Թարապիա թաղամասում գտնվող Թոգաթլյան սրճարանում Շյոնբերգի նախընտրած ժամին: Համոզված, որ գերմանական դիվանագիտության դիմափոխությունը Թուրքական կառավարության պատվերն է՝ Զոհրապը որոշեց Շյոնբերգի հետ հանդիպման ժամանակ հայկական պահանջներում անդրդվելի մնալ: Իսկ երիտթուրքերի հետ հանդիպումը չեղարկեց:

Նույն օրը գերմանական դեսպանությունում տիրող մթնոլորտին ծանոթանալու և ընդհանուր տրամադրություններ շոշափելու նպատակներով Գ. Զոհրապն այցելեց իր վաղեմի բարեկամներից “Frankfurter Zeitung” *թերթի թղթակից Վայսին, ով մեծ հեղինակություն ուներ գերմանական դեսպանությունում և հայտնի էր նաև հայասիրական տրամադրություններով: Նա Գ. Զոհրապին վստահեցրեց, որ Բեռլինի վերաբերմունքը հայկական բարենորոգումների նկատմամբ չի փոխվել, պարզապես Հ. Վանգենհայմը կարծես «հմայված» լինի վարչապետ Սայիդ Հալիմի գործունեությամբ: Վայսը համոզմունք հայտնեց, որ ստեղծված արհեստական դժվարությունները շատ արագ կհաղթահարվեն և խորհուրդ տվեց խնդրագրով դիմել հայասիրական տրամադրություններով հայտնի Գերմանիայի կայսրուհի Ավգուստա Վիկտորիային, ով արքունիքում մեծ ազդեցություն ուներ, նաև խոստացավ գերմանական դեսպանությունում աշխատել հօգուտ հայկական բարենորոգումների ու թերթում հանդես գալ հատուկ հոդվածով[27]:*

Գերմանական դիվանագիտության դիմաշրջությունը զայրացրել էր նաև մեծ հայասեր դոկտոր Լեփսիուսին, ով գրեթե մեկ ամիս շարունակ բանակցություններ էր վարել Կ. Պոլսի պատրիարքարանի հետ և հենց իր մասնակցությամբ էր ձևաք բերվել կիսապաշտոնական գրավոր պայմանավորվածությունները: Այցելելով Գերմանիայի պետքարտուղարի տեղակալ Արթուր Ցիմ-

---

[26] Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 200, Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 2022, 96:

[27] Տե՛ս Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 203, Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. 2022, 97:

մերմանին՝ Լեփսիուսն իր զայրույթն ու վրդովմունքն արտահայտեց կատարվածի նկատմամբ: Երկարատև զրույցի ընթացքում Ա. Ցիմմերմանը հավաստիացրեց՝ ինքը հայկական բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական համաձայնության կողմնակից է և կատարվածի մեղքը բարդեց Շյոնբերգի վրա, իսկ դեսպան Վանգենհայմի մասին ասաց, թե նա «ռուս քաղաքականության մասին ավելի կասկածոտ է, քան պետք է»[28]:

Երիտթուրքերը, օգտվելով գերմանական դիվանագիտության դիմաշրջությունից և խեղաթյուրելով օգոստոսի 17-ին Գ. Ջոհրապի տանը տեղի ունեցած հանդիպման էությունն ու նշանակությունը, հայտարարեցին, որ հայկական շրջանների հետ իրենք արդեն գտել են համաձայնության եզրեր, ուստի տերությունների միջամտությունն ավելորդ է[29]: Ակնհայտ էր, որ գերմանական դիվանագիտության կազմակերպած դիմաշրջությունը նպատակ ուներ հայկական շրջաններին ցույց տալ՝ Ա. Մանդելշտամի ռուսական ծրագիրը հիմնովին անընդունելի է, և նրանց մնում է միայն մեկ ելք՝ համաձայնության գալ թուրքական կառավարության հետ: Ըստ էության, հայկական բարենորոգումների դեմ գերմանական և օսմանյան կայսրությունները հանդես էին գալիս միասնական մարտավարությամբ:

Թուրքական հայտարարությունները և գերմանական դիվանագիտության շրջադարձը պատրիարքական շրջանակների վրա ուղղակի շշմեցուցիչ տպավորություն թողեցին: Պատրիարքարանը, իրեն խաբված զգալով, օգոստոսի 29-ին տերությունների Կ. Պոլսի դեսպաններին հանձնեց հատուկ հուշագիր, որում առաջադրված էին հայկական բարենորգումների հինգ ծրագրային պահանջներ. 1) վեց հայկական վիլայեթի միավորումը եվրոպացի նահանգապետի գործադիր իշխանությամբ, 2) նահանգապետի նշանակումը տերությունների համաձայնությամբ, 3) հայկական նահանգի վարչական ու դատական բոլոր պաշտոնյաներին նշանակելու և ազատելու գեներալ նահանգապետի բացառիկ իրավունքը, 4) մահմեդականների ու քրիստոնյաների միջև հավասար ներկայացուցչության սկզբունքի կիրառումը, 5) եվրոպական վերահսկողության հաստատումը[30]: Պատրիարքարանը գտնում էր՝ այս պահանջները բոլոր դեպքերում անխախտ են, քանի որ դրանք հայկական բարենորոգումների անկյունաքարերն էին: Վերոհիշյալ հուշագիրն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Անհայտության և ծայրահեղ լարվածության այն դրությունը, որի մեջ արդեն կես տարի է ինչ գտնվում է հայ ժողովուրդը չի կարող շարունակվել առանց մտքերի հանգստության համար վտանգների և չառաջացնել հիասթափություններ»[31]:

Թեև հուշագիրը հանձնվել էր Կ. Պոլսի մեծ պետությունների բոլոր դեսպանատներին, սակայն հասկանալի էր, որ հիմնական հասցեատերը գերմանականն էր: Ընդառաջելով գերմանական դեսպանատան ցանկությանը՝ օգոստոսի 30-ին Ջոհրապը հանդիպեց Շյոնբերգին: Պատրիարքարանի համար այս հանդիպումը կարևորվում էր այնքանով, որ նախ՝ օգոստոսի 19-ից հետո դա-

---

[28] Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 283:

[29] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 35, թ. 20:

[30] Տե՛ս АВПРИ, ф. Посольство в Константинополе, оп. 517/2 , д. 3734, л. 183.

[31] АВПРИ, ф. Посольство в Константинополе, оп. 517/2 , д. 3734, л. 183.

դարել էին Մանդելշտամ–Շյոնբերգ հանդիպումները և հայկական բարենորոգումների շուրջ բանակցությունները մտել էին փակուղի, և երկրորդ՝ անհրաժեշտ էր ճշտել օգոստոսի 29-ի հուշագրի նկատմամբ գերմանական դիվանագիտության վերաբերմունքն ու դիրքորոշումը: Կ. Պոլսի գերմանական դեսպանատան համար հերթական քայլն էր բարենորոգումների խնդիրը հայ-թուրքական հարաբերությունների դաշտ տեղափոխելու համար: Հանդիպման նպատակը Շյոնբերգը ձևակեպեց հետևյալ կերպ. «Կուզե ցրել այն կարծիքը հայոց որ դեսպանատունը կդիմադրե բարենորոգմանց, ընդհակառակն նա անոր հաջողելուն կըաղձա»[32]*: Նա, ըստ էության, գեմանացի դիվանագետների առաքելությունը տեսնում էր բարենորոգումների հայկական և թուրքական ծրագրերի մերձեցման մեջ: Սակայն Գ. Զոհրապը ճշտեց, որ հանդիպումը նվիրված է հայկական և գերմանական տեսակետների քննարկմանը, այլ ոչ թե՝ հայկական ու թուրքական ծրագրերի «մերձեցմանը», մանավանդ որ հայկական բարենորոգումների թուրքական ծրագիր գոյություն էլ չուներ: Ինչ վերաբերում է գլխավոր վերատեսուչների լիազորությունների թուրքական օրինագծին, ապա Գ. Զոհրապն ապացուցեց՝ դա կազմվել էր գերմանական դեսպանատան խորհրդով և այնքան հապճեպ, որ անգամ չէին էլ հասցրել համապատասխանեցնել թուրքական գործող օրենսդրությանը, ինչը նույնիսկ Թալեաթն էր իրեն խոստովանել:*

Շյոնբերգը պնդում էր՝ երիտթուրքերը երբեք և ոչ մի պարագայում չեն ընդունի մեկ միասնական հայկական նահանգի ձևավորումը, գլխավոր վերատեսուչներին տերությունների համաձայնությամբ նշանակելը, որ հայերը պետք է լինեն ավելի զիջող, տերությունները թուրքերի վրա երբեք ուժ չեն գործադրի հայկական բարենորոգումները պարտադրելու համար, հայկական բարենորոգումների կիրառման հաջողությունը պետք է փնտրել համակայսերական բարենորոգումների շրջանակներում և այլն:

Ի պատասխան Շյոնբերգի պնդումների, Զոհրապը ներկայացրեց հայկական տեսակետները: Առաջին՝ հայերը ինքնավարություն չեն պահանջում, ինչպես այդ օրերին պնդում ու դրանից չէին հրաժարվում արաբական վիլայեթները: Եթե բարենորոգումների նկատմամբ եվրոպական վերահսկողություն չլինի, ապա անօգուտ է բարենորոգումներով զբաղվելը. հետևաբար, Գերմանիան պետք է ընտրություն կատարի կամ, առհասարակ, հրաժարվել բարենորոգումներից կամ ընդունել եվրոպական վերահսկողության անհրաժեշտությունը: Խնդրի էությունը ոչնչով չի փոխվի, եթե թուրքական կառավարությունը գլխավոր վերատեսուչ նշանակի եվրոպացի պաշտոնյայի, քանի որ, Զոհրապի կարծիքով, «եթե օտար պաշտոնյան Բ. Դռնեն կախում ունենա ոչինչ պիտի կրնա ընել: Իր ամսեկանը անկե պիտի ստանա և տաճկաց հաճելի լինելուն պիտի նայի»[33]*: Երկրորդ՝ համակայսերական բարենորոգումների մեջ հայկականը տարրալուծելը և դրանով հարցը փակելը, ինչպես Գ. Զոհրապը նկատեց, հին հնարք է, քանի որ թուրքերի «խոսած բարենորոգումներն ալ հինցած փտած բաներ են: Ամեն անգամ որ ընկճված ազգ մը բարենորոգում մը պա-*

---

[32] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 222, Մարտիրոսյան. 2022, 100:*

[33] *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 226, Մարտիրոսյան. 2022, 102:*

հանջեր է, անոնք հիմնական reforme-ը ուզած են, ընդհանուր բարենորոգում, եվրոպացի պաշտոնյաներու աջակցություն, ասոր վրա ավելի խոսիլ չարժեր»[34]:

Քանի որ Շյոնբերգը բանակցություններում հանդես էր գալիս Թուրքիայի փաստաբանի դիրքերից, հանդիպման սկիզբը շատ կոշտ ու այլընտրանք չընդունող տոնով էր ընթանում: Մի պահ զրուցակիցները նույնիսկ կանգ առան. ենթադրվում էր, որ բանակցություններն ավարտված են: Սակայն կողմերից և ոչ մեկին ձեռնտու չէր ձեռնունայն հեռանալը: Մի կողմ թողնելով հայ-ռուսական, հայ-թուրքական հարաբերությունները և, անգամ, բարենորոգումների խնդիրն առհասարակ՝ Գ. Զոհրապն առաջարկեց քննության առարկա դարձնել հայ-գերմանական հարաբերությունները, որոնք նա ամփոփեց ընդամենը մեկ հարցում. Գերմանիան ցանկանո՞ւմ է Օսմանյան կայսրությունում ունենալ թշնամի, թե՞ բարեկամ հայ ժողովուրդ: Այսպիսի ձևակերպումը Շյոնբերգից պահանջում էր հստակ պատասխան, իսկ Զոհրապից՝ հայ-գերմանական շահերի ներդաշնակեցման տեսլական: Արժևորելով Հայկական լեռնաշխարհ Գերմանիայի ներթափանցմամբ հայ ժողովրդի անվտանգության և ապահովության մակարդակի բարձրացման բացառիկ հնարավորությունը՝ Գ. Զոհրապը հայտարարեց. «Մեր քաղաքական ուղղությունը հետևյալն է. նախ հաշտ ըլլալ Օսմանյան պետության հետ, ուր պիտի ապրինք, երկրորդ՝ ռուս պետության հետ որ սահմանակից է, և ուր այնքան հայեր կընակին և հանգիստ կյանք կվարեն, երրորդ՝ Գերմանիո բարեկամությունն հենուլ Կիլիկիո և Միջին Ասիո (նկատի ունի Փոքր Ասիայի տարածքները – Մ. Մ.) մեջ»[35]: Զոհրապը Շյոնբերգին զգուշացրեց՝ միայն հայ-գերմանական բարեկամությանը չվնասելու անկեղծ մղումից ելնելով է, որ պատրիարքարանը հանրային հնչեղություն չի տվել Լեփսիուսի միջոցով ձեռք բերված պայմանավորվածություններից հրաժարվելու գերմանական դիվանագիտության դատապարտելի վարքագծին: «Մենք,– ասաց Զոհրապը,– փոքրամասնություն մըն ենք որ Գերմանիո և հայոց մերձեցման կաշխատինք: Արդ, եթե այս իմացվեր, մեծ հարված մը պիտի ըլլար մեր գործին: Ես կուզեի որ ոչ միայն Գերմանիո ընդդիմությունը չըլլար, այլ անոր աջակցության պարտեինք մեր հաջողությանը, գոնե մասամբ»[36]:

Այսպիսի հիմնավորումներից հետո գերմանացի դիվանագետը ստիպված էր տեղի տալ: Կողմերը հանդիպումն ամփոփեցին հետևյալ կերպ. ա) պատրիարքարանի հատուկ հուշագրի ծրագրային հինգ պահանջները մնում են ուժի մեջ, բ) եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյան պետք է նշանակվի տերությունների համաձայնությամբ, գ) երկու գլխավոր վերատեսուչներ նշանակելու պարագայում պետք է ընդլայնել նրանց լիազորությունները՝ ընդհուպ վալիներին նշանակելու ու ազատելու իրավասության, դ) վարչական հիմնարկներում քրիստոնյաների և մահմեդականների միջև հավասարության սկզբունքի կի-

[34] Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 226, Մարտիրոսյան. 2022, 102:

[35] Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 228, Մարտիրոսյան. 2022, 103:

[36] Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 229–230, Մարտիրոսյան. 2022, 103:

բառումը, ե) հայկական բարենորոգումները կայսրությունում իրականացվող ընդհանուր բարեկարգման մեջ չպետք է տարրալուծել, քանի որ դրանք ունեն միջազգային բնույթ[37]:

Զոհրապի և Շյոնբերգի օգոստոսի 30-ի հանդիպումը ցույց տվեց, որ դիմաշրջությամբ հայերին հիասթափեցնելու ու հայկական բարենորոգումների խնդիրը միջազգային հարթակից հայ-թուրքական հարաբերությունների դաշտ տեղափոխելու գերմանական դիվանագիտության հույսերը ձախողված են: Հայկական կողմն անդրդվելի էր, քանի որ հիասթափված էր բարենորոգումների վերաբերյալ թուրքական բազում խոստումներից և լիակատար անվստահություն ուներ երիտթուրքական իշխանությունների նկատմամբ: Նոր իրավիճակում գերմանական դիվանագիտությունը, ընդունելով հայկական մի շարք առանցքային պահանջների հիմնավորվածությունը, արդեն պետք է փոփոխություններ կատարեր իր մարտավարությունում:

Օգոստոսի 30-ին Բեռլինում տեղի էր ունեցել ևս մի կարևոր հանդիպում, որը թեև որոշակի դեր խաղաց հայկական բարենորոգումների նկատմամբ Ռուսաստանի ու Գերմանիայի դիրքորոշումները հստակեցնելու գործում, սակայն բանակցային գործընթացում որևէ առաջընթաց չգրանցեց: Այդ օրը Բեռլինում ռուսական հավատարմատար Բրոնևսկին այցելել էր Գերմանիայի պետքարտուղար Գոթլիբ ֆոն Յագովին և ըժգոհել, որ, չնայած իրեն տրված խոստումներին, թե Կ. Պոլսի գերմանական դեսպան Հ. Վանգենհայմը զիջումներ կկատարի ռուսական նախագծի որոշ դրույթների ընդունման օգով, այնուամենայնիվ դեսպանի գործողություններում որևէ առաջընթաց չի նկատվում: Պարզվեց, որ երկու տերությունների Կ. Պոլսի դեսպանները չեն կարողանում համաձայնության գալ հայկական միասնական նահանգը երկու հատվածի բաժանելու ձևի շուրջ: Ռուսական կողմը պնդում էր հատվածների սահմանազատումը կատարել հյուսիսից հարավ, իսկ գերմանական կողմը՝ արևելքից արևմուտք: Հյուսիսից հարավ, այսինքն՝ ուղղահայաց տրոհման պարագայում Ռուսաստանը սահմանակցելու էր մեկ սեկտորի հետ, իսկ արևելքից արևմուտք, այսինքն՝ հորիզոնական բաժանման դեպքում՝ երկու սեկտորների հետ: Գերմանական կողմը, ընդառաջելով Թուրքերին, պնդում էր հորիզոնական սահմանազատման վրա նաև այն մտադրությամբ, որ դա հնարավորություն կտար ավելի շատ Թրքաբնակ և քրդաբնակ տարածքներ միացնել հայկական երկու սեկտորին:

Բրոնևսկու և ֆոն Յագովի հանդիպումը մտահոգող էր նաև մեկ այլ առումով. պետքարտուղարը հասկացրեց՝ Գերմանիան փոշմանել է, որ համաձայնություն է տվել վարչական հիմնարկներում ազգային պատկանելիությամբ համեմատական սկզբունքի կիրառմանը, ինչպես նախատեսում էին ռուսական առաջարկները: Դեսպան Հ. Վանգենհայմի ցանկությամբ ֆոն Յագովն առաջարկում էր հայկական սեկտորների վարչական հիմնարկներում կիրառել ազգությունների միջև հավասար ներկայացվածության սկզբունքը, ինչը կապահովեր Թուրքերի ու քրդերի միասնական մեծամասնություն հայերի ներկա-

---

[37] *Տե՛ս Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288, 231–233, Մարտիրոսյան. 2022, 104–105:*

յացվածության նկատմամբ: Պետքարտուղարը նույնիսկ չէր էլ կարողանում մանրամասնել, թե ո՞ր հիմնարկություններում պետք է կիրառվեր համասար ներկայացվածության սկզբունքը: Ակնհայտ էր, որ նա առանց խնդրի մեջ խորամուխ լինելու պարզապես ասաց այն, ինչ իրեն փոխանցել էր դեսպան Վանգենհայմը[38]: Ըստ էության, ֆոն Յագովը գերմանական ճշտապահությամբ կրկնում էր այն, ինչ ասել էր Շյոնբերգը Զոհրապին:

Հայկական բարենորոգումների խնդիրը փակուղուց դուրս բերելու համար դեսպան Մ. Գիրսը փոխարտգործնախարար Ա. Ներատովից հանձնարարություն ստացավ ուղիղ բանակցություններ սկսել Հ. Վանգենհայմի հետ և դիմել փոխզիջումների: Սակայն, հաշվի առնելով պատրիարքարանի օգոստոսի 29-ի հուշագրի հինգ անխախտ պահանջները՝ դեսպան Մ. Գիրսին անհրաժեշտ էր ճշտել փոխզիջումների սահմանները և գտնել խնդիրների կարգավորման ընդունելի տարբերակ: Ռուսական դիվանագիտության համար այս բարդ ու պատասխանատու հարցի լուծումը ստանձնեց Գ. Զոհրապը, ով սեպտեմբերի 1-ին այցելեց գերմանական դեսպանատուն և գրավոր տարբերակով ներկայացրեց իր անձնական մոտեցումները: Հ. Վանգենհայմը քաջատեղյակ էր Զոհրապի և Շյոնբերգի նախորդ հանդիպման մանրամասներին, որի մասին էլ տեղյակ էր պահել նաև ֆոն Յագովին: Սակայն Գ. Զոհրապի այս այցելությունը նպատակ ուներ խնդրի կարգավորմանն այլընտրանքային լուծումներ առաջարկելու միջոցով նոր լիցք հաղորդել ռուս-գերմանական բանակցություններին: Թեև դա ներկայացվում էր իբրև մասնավոր բնույթ կրող, սակայն ինքնին հասկանալի էր, որ գերմանացի դիվանագետները բանակցում են Օսմանյան կայսրության ամենաազդեցիկ հայի հետ:

Զնայած պատրիարքարանն իր՝ օգոստոսի 29-ի հուշագրում առաջադրած պահանջները համարում էր անխախտ, այդուհանդերձ, օսմանյան պառլամենտի հայազգի պատգամավորը հասկանում էր, որ առանց փոխզիջումների բանակցությունները վերջնականապես կտապալվեն: Այլընտրանքային լուծումների և փոխզիջումների անխուսափելության Գ. Զոհրապի մոտեցումը Հ. Վանգենհայմը ֆոն Յագովին զեկուցեց հետևյալ կերպ. «Թեև Զոհրապը հանուն կարգի իր պատրիարքի պաշտոնապես հայտնած տեսակետի հետ ուղղակի հակասության մեջ չմտնելու համար հայտարարեց, որ վերջինիս կողմից առաջ քաշված 5 կետերի ընդունումը պարտադիր է, մասնակի կարգով այնուամենայնիվ ավելացրեց, թե հինգ հիմնական կետերում այս կամ այն փոփոխությանը թերևս կարելի է համաձայնվել միայն այն ժամանակ, երբ իսկապես ձեռնամուխ կլինեն ռեֆորմների անցկացմանը»[39]:

Ելնելով փոխզիջման տրամաբանությունից՝ Գ. Զոհրապը հայտնեց, որ հայերի համար պարզապես բաղձալի է մեկ միասնական հայկական նահանգի հիմնումը, սակայն եթե ինչ-ինչ պատճառներով տերություններն անհնար կհամարեն հայկական այդ երազանքի իրագործումը, ապա հայերի համար միևնույն է, թե նահանգը ինչպես կորոհվի՝ հյուսիսային ու հարավային, ինչ-

[38] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 270–271:

[39] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 119–120; «Երկիր» (Երևան), 23. IV. 1994:

պես Թուրքական կառավարությունն էր ուզում, թե՝ արևելյան ու արևմտյան, ինչպես առաջարկում էր ռուսական կողմը: Գ. Զոհրապի համոզմամբ՝ պատրիարքական շրջանակներն ավելի մեծ կարևորություն տալիս են հուշագրի երկրորդ և երրորդ պահանջներին, որոնք վերաբերում էին գլխավոր վերատեսուչների նշանակման կարգին ու դրանց լիազորություններին: Նա տերությունների կողմից գլխավոր վերատեսուչների նշանակման անհրաժեշտությունն առարկությունների տեղիք չտվող այնպիսի հիմնավորումներով ներկայացրեց, որ Հ. Վանգենհայմը հանդիպումից հետո ֆոն Յագովին զեկուցեց՝ «այս հարցում տերությունները պետք է ընդառաջեն հայերին»[40]: Թուրքական կառավարման համակարգի գերազանց իմացությունը Գ. Զոհրապին հիմք էր տալիս կարծել, որ Թուրքական կառավարությունն առավել կոշտ ընդդիմություն կցուցաբերի պատրիարքարանի հուշագրի երրորդ պահանջի, այսինքն՝ գլխավոր վերատեսուչների կողմից իրենց ենթակա սեկտորների բոլոր պաշտոնյաներին ու դատավորներին, այդ թվում նաև՝ վալիներին նշանակելու և ազատելու լիազորությունների նկատմամբ: Գ. Զոհրապը պարզաբանեց, որ գլխավոր վերատեսուչներին կադրային հարցերում այդպիսի ընդարձակ լիազորություններ տալը հակասում էր սուլթանի ինքնիշխան իրավունքներին: Ուստի նա այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր համարում գտնել այնպիսի բանաձև, որը չէր նսեմացնի երիտթուրքական կառավարության ինքնասիրությունը: Զոհրապը գտնում էր, որ այս մոտեցումը պետք է պահպանվի նաև վերատեսուչների նշանակման կարգը ձևակերպելիս: «Ինձ թվում է,— ասաց նա,— որ եթե դիվանագիտությունը, իսկապես ոչինչ չփոխելով, կընտրի Թուրքիայի ինքնասիրությունը չոյող ձևակերպում, ապա հայերը դրան չեն առարկի»[41]:

Ինչ վերաբերվում է հուշագրի չորրորդ պահանջին, ապա գերմանացի դիվանագետները Զոհրապի հետ այդ հարցը նույնիսկ չքննարկեցին, քանի որ արդեն ընդունել էին մահմեդականների և քրիստոնյաների միջև հավասար ներկայացվածության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը:

Պատրիարքարանի հուշագրի հինգերորդ պահանջը մեկնաբանելիս Գ. Զոհրապը չեշտադրում էր այն հանգամանքը, որ հայկական բարենորոգումները պետք է դիտարկել Օսմանյան կայսրությունում նախատեսվող բարենորոգումներից անջատ: Նա կարծում էր, որ անթույլատրելի է համակայսերական այլ բարենորոգումների մեջ հայկականը տարրալուծելը, քանի որ վերջիններիս իրականացման համար կային միջազգային իրավական ակտեր[42]: Հայկական բարենորգումների միջազգային իրավական կարգավիճակի մասին չեշտադրումներով Գ. Զոհրապն ի չիք դարձրեց Թուրքական ծրագրի հիման վրա հատուկ հանձնաժողով հրավիրելու գերմանական առաջարկը, ինչը դեսպան

[40] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 120; «Երկիր», 23. IV 1994:

[41] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 120; «Երկիր», 23. IV. 1994:

[42] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, 120–121; «Երկիր», 23. IV. 1994:

Գիրսը գնահատել էր որպես «վերին աստիճանի անցանկալի և աննպատակահարմար»[43]:

Գ. Զոհրապի սեպտեմբերի 1-ի այցելությունը գերմանական դեսպանատուն և հայկական պահանջների փոխզիջումային ու այլընտրանքային մոտեցումների գրավոր ձևակերպումը շրջադարձային էին ռուս-գերմանական երկկողմ բանակցությունների համար: Բանակցային արագացված փուլի սկիզբը դրվեց: Դեսպաններ Մ. Գիրսի և Հ. Վանգենհայմի հանդիպումները դրեթե ամենօրյա դարձան: Հենց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 2-ի հանդիպման ընթացքում Մ. Գիրսը համաձայնվեց հայկական վիլայեթները սահմանազատել հորիզոնական գծով, իսկ Հ. Վանգենհայմն ընդունեց հավասար ներկայացուցչության, ինչպես նաև՝ գլխավոր վերատեսուչներին տերությունների համաձայնությամբ նշանակելու և վերահսկողությունը դեսպանների ու տեղական հյուպատոսների միջոցով իրականացնելու սկզբունքները[44]:

1913 թ. սեպտեմբերի 10-ին Մ. Գիրսը և Հ. Վանգենհայմը կայացրին փոխզիջումային համաձայնություն հայկական բարենորոգումների վեց կետից բաղկացած ծրագրի շուրջ: Ըստ ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնության՝ Արևելյան Անատոլիայում ստեղծվելու էին երկու սեկտորներ, որոնցից առաջինն ընդգրկելու էր Տրապիզոնի, Էրզրումի և Սվազի, իսկ երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները: Երկու սեկտորի գլուխ կանգնելու էին Բ. Դռան խնդրանքով և տերությունների համաձայնությամբ ընտրված երկու գլխավոր վերատեսուչ, ովքեր իրավասու էին թուրքական կառավարությանը հաստատման համար ներկայացնել սեկտորների բարձր պաշտոնյաների ու դատավորների թեկնածուների ցուցակը: Նրանց էր պատկանում սեկտորների, առանց բացառության, բոլոր պաշտոնյաների հեռացման իրավունքը: Զույգ սեկտորում հիմնվելու էին հավասար թվով մահմեդականներից և քրիստոնյաներից բաղկացած ընտրովի ժողովներ: Հավասարության այս սկզբունքը պահպանվելու էր բոլոր պաշտոնյաների նշանակման ժամանակ: Տերությունները բարենորոգումների գործադրման հսկողությունն իրականացնելու էին ինչպես Կ. Պոլսի իրենց դեսպանների, այնպես էլ՝ տեղական հյուպատոսների միջոցով: Մեծ պետությունները Բ. Դռան համաձայնությամբ կարող էին երկու սեկտորում իրականացնել նաև այլ բարենորոգումներ[45]:

Ռուսական և գերմանական կառավարությունները գոհունակությամբ և բավականությամբ ընդունեցին փոխզիջումային համաձայնություն կայացնելու մասին Կ. Պոլսից ստացված լուրը, և յուրաքանչյուրն իր դաշնակից պետություններին տեղյակ պահեց գրանցված հաջողության մասին: Անտանտի և Եռյակ դաշինքի երկրները ոչ միայն իրենց համաձայնությունը տվեցին ծրագրին, այլև պատրաստակամություն հայտնեցին թուրքական կառավարության մոտ պաշտպանել ռուս-գերմանական համատեղ ծրագիրը: Հոկտեմ-

---

[43] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 273:*

[44] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 273–274:*

[45] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 276–277:*

բերի 4-ին դեսպան Մ. Գիրսը Սայիդ Հալիմ փաշային ներկայացրեց փոխզիջումային համաձայնության բնագիրը: Հայկական բարենորոգումների շուրջ դիվանագիտական մրցապայքարում սկսվեց նոր շրջափուլ, որն ավարտվեց 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրմամբ:

Եզրակացություն

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Գ. Զոհրապը ծավալել է հասարակական և քաղաքական ակտիվ գործունեություն, եղել է օսմանյան խորհրդարանի բոլոր գումարումների պատգամավոր, Կ. Պոլսի արևմտահայ ազգային ժողովի երեսփոխան, իսկ 1912–1914 թթ.՝ ակտիվորեն զբաղվել հայկական բարենորոգումների խնդրով: Լինելով Հայկական հարցը հետապնդող Կ. Պոլսի պատրիարքարանի Ապահովության հանձնաժողովին սատարող ու արտաքին կապերը տնօրինող Հարստահարական հանձնաժողովի հինգ անդամներից մեկը՝ նա աստիճանաբար դարձել է ռուսական և գերմանական դեսպանատների հետ բանակցություններ վարող պատրիարքարանի գլխավոր բանագնացը: Դրանցում Գ. Զոհրապի մասնակցությունը կրել է հնարավորինս խորհրդապահական բնույթ, քանի որ օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների հետ բանակցություններ վարելը չէր բխում օսմանյան խորհրդարանի պատգամավորի կարգավիճակից: Լինելով ողջախոհ և իրատես գործիչ՝ նա գլխավոր բանակցողի գործառույթը կատարել է մեծագույն պատասխանատվությամբ ու ջանասիրությամբ. բանակցային գործընթացում ցուցաբերել է այլընտրանքային մոտեցումներով փոխզիջումային համաձայնություն կայացնելու հմտություններ:

Կ. Պոլսի ռուսական և գերմանական դեսպանների, ինչպես նաև նրանց ներկայացուցիչների հետ բանակցություններում Գ. Զոհրապը դրսևորել է դիվանագիտական հմտություններ՝ մշտապես առաջնորդվելով փակուղային իրավիճակներից խուսափելու և փոխզիջումային տարբերակներն ընդունելի դարձնելու սկզբունքներով: Անուրանալի է նրա դերը Ենի-Քյոյի բանակցություններից հետո հայկական բարենորոգումների խնդիրը փակուղուց դուրս բերելու և ռուսական ու գերմանական կայսրությունների բանակցությունների սեղանի շուրջ վերադարձնելու, ապա նաև՝ բարենորոգումների փոխզիջումային տարբերակը հակամարտող կողմերին ընդունելի դարձնելու անհավանական թվացող գործում: Օտարերկրյա դիվանագետների, հասարակական-քաղաքական գործիչների ու երիտթուրք բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ բանակցություններում Գ. Զոհրապն առաջնորդվել է արևմտահայությանը վտանգավոր մարտահրավերներից հեռու պահելու և նրա կյանքի ու գույքի ապահովության երաշխիքներ ստանալու ցանկություններով: Սեպտեմբերի 10-ի ռուս-թուրքական փոխզիջումային համաձայնությունից հետո էլ նա ակտիվ գործունեություն ծավալեց՝ ձեռք բերված համաձայնությունը թուրքական կառավարությանը պարտադրելու համար: Եվ, անգամ, վերջինիս հետ բանակցություններում ռուսական դիվանագիտությանը հորդորում էր առաջնորդվել փոխշահավետության սկզբունքով երիտթուրքերի համար ընդունելի նախագիծ ստանալու տարբերակով, այլ ոչ թե ճնշումների ճանապարհով, ինչը պայմանավորված էր արևմտահայ ժողովրդին թուրքական վրեժխնդրությունից հեռու պահելու մտահոգություններով:

Միքայել Մարտիրոսյան – պ. գ. թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-ռուսական առնչություններ, Հայկական Հարցի պատմություն: Հեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկի և շուրջ 30 հոդվածի: martirosyanmiqael02@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Երկիր» (Երևան), 23. IV. 1994:

Գրիգոր Զոհրապ. 2003, Երկերի ժողովածու, հ. Դ, Երևան, ԳԱԹ, 656 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 35, թ. 20:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատ., 810 էջ:

Մայր Աթոռ Սբ էջմիածնի ձեռագրատուն, վավ. 288:

Մարտիրոսյան Մ. 2022բ, Նորահայտ վավերագրեր Գրիգոր Զոհրապի գործունեությունից. – «Բանբեր Արևելագիտության ինստիտուտի», հ. II, № 2, Երևան, էջ 90–110:

Փափազեան Վ. 1952, Իմ յուշերը, հ. Երկրորդ, Պէյրութ, տպ. Համազգային ընկերութիւն, 610 էջ:

Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). 1995, отв. ред. В. А. Микаелян. Ереван, «Гитутюн», 643 с.

Архив внешней политики Российской империи, ф. Посольство в Константинополе, оп. 517/2, д. 3728, л. 45, 122–123, 124; д. 3734, л. 183; ф. Канцелярия МИД, оп. 470, д. 114, л. 413; ф. Канцелярия 1913г., д. 115, л. 98.

Сазонов С. Д. 2002, Воспоминания. Минск, «Харвест», 368 с.

РОЛЬ ГРИГОРА ЗОГРАПА В ЗАКЛЮЧЕНИИ РОССИЙСКО-ГЕРМАНСКОГО СОГЛАШЕНИЯ 1913 Г.

МИКАЕЛ МАРТИРОСЯН

Резюме

Ключевые слова: Григор Зограп, армянские реформы, Армянский Константинопольский патриархат, российско-германское компромиссное соглашение, Г. Вангенхайм, М. Гирс, А. Мандельштам.

Григор Зограп – один из корифеев западноармянской интеллигенции конца XIX – начала XX в. Обеспокоенность тяжелым положением западных армян и будущим Армении подтолкнула его к общественной и политической деятельности с юных лет. Высокая народная репутация дала возможность Зограбу в 1908–1914 гг. трижды подряд избираться депутатом младотурецкого парламента. Его политическая деятельность является ярким примером непоколебимой самоотверженности и политического мужества в служении родному народу, что заслуживает восхищения и благо-

дарности. Летом и осенью 1913 г., когда вопрос об армянских реформах был предметом конфликта между Антантой и Тройственным союзом, он стал главным посланником Армянского Константинопольского патриархата, ведя переговоры с посольствами России и Германии. В этих переговорах деятельность Зограпа держалась в секрете, поскольку ведение переговоров с иностранными дипломатическими представительствами не исходило из его статуса члена османского парламента. Роль главного переговорщика Г. Зограп выполнял с максимальной ответственностью, добросовестностью и конфиденциальностью. В этих переговорах он продемонстрировал навыки дипломатической работы, всегда стараясь избегать тупиковых ситуаций и принимать компромиссные варианты.

Роль Г. Зограпа в выводе вопроса армянских реформ из тупика после переговоров в Еникё и в возвращении Российской и Германской империй за стол переговоров, а также в том, чтобы сделать компромиссный вариант реформ приемлемым для конфликтующих сторон, неоспорима. Накануне Первой мировой войны, когда державы неудержимо шли к разжиганию войны, Зограп благодаря упорному труду, смог вывести враждующие стороны, Антанту и Тройственный союз, на конструктивное поле переговоров. В переговорах с иностранными дипломатами и высокопоставленными младотурками Г. Зограпом двигало желание уберечь западных армян от опасных испытаний и получить гарантии безопасности их жизни и имущества.

Микаел Мартиросян – к. и. н., доцент кафедры всемирной истории и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: армяно-русские связи, история Армянского вопроса. Автор учебно-методического пособия и около 30 статей. martirosyanmiqael02@gmail.com

THE ROLE OF GRIGOR ZOHRAP IN THE CONCLUSION OF THE RUSSIAN-GERMAN AGREEMENT OF 1913

MIKAEL MARTIROSYAN

S u m m a r y

Keywords: Grigor Zohrap, Armenian reforms, the Armenian Patriarchate of Constantinople, Russian-German compromise agreement, H. Wangenheim, M. Girs, A. Mandelstam.

Grigor Zohrap is one of the luminaries of the Western Armenian intelligentsia of the late 19th and early 20th centuries. The concern for the plight of the Western Armenian people and the future of Armenia pushed him to social and political activities from a very young age. The high public reputation made it possible for Zohrap to be elected a deputy of the Young Turk Parliament for three times in a row, from 1908 to 1914. His political activity is a

vivid example of serving his native people with unwavering dedication and political courage, which deserves admiration and gratitude. In the summer and autumn of 1913, when the issue of Armenian reforms was a subject of conflict between the Entente and the Triple Alliance, he became the chief envoy of the Armenian Patriarchate of Constantinople who negotiated with the Russian and German embassies. In these negotiations, Zograp's activities were kept in secret, since negotiating with foreign diplomatic missions did not proceed from his status as a member of the Ottoman Parliament. G. Zohrap performed the role of the chief negotiator with maximum responsibility, integrity and confidentiality. In those negotiations, G. Zohrap demonstrated diplomatic skills, always trying to avoid deadlocks and accept compromise options.

G. Zohrap's role in bringing the issue of Armenian reforms out of the impasse after the negotiations in Yenik and in returning the Russian and German Empires to the negotiating table, as well as in making a compromise version of the reforms acceptable to the conflicting parties, is undeniable. On the eve of the First World War, when the powers were relentlessly stoking war, G. Zohrap, thanks to his hard work, was able to bring the warring parties, the Entente and the Triple Alliance, to a constructive field of negotiation. In negotiations with foreign diplomats and high-ranking Young Turks, G. Zohrap was motivated by the desire to protect Western Armenians from dangerous trials and to receive guarantees for the safety of their lives and property.

Mikael Martirosyan – Candidate of Sciences in History, Associate Professor at the Chair of World History and its Teaching Methods of the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Armenian-Russian relations, history of the Armenian Question. Author of a study guide and about 30 articles.
martirosyanmiqael02@gmail.com

ՀՏԴ 947.0

Doi:10.54503/0135-0536-2023.3-93

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

(Քննական դիտարկումներ և վերլուծություն)*

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Կովկասյան ռազմաճակատ, Ի. Ի. Վորոնցով-Դաշկով, Ն. Ն. Յուդենիչ, հայ կամավորական շարժում, Անդրանիկ, Դրո, Համազասպ, Քեռի, Ա. Մանուկյան, Հ. Զավրյան, հայերի ցեղասպանություն, Հայկական հարց, Սարիղամիշ, Վան, Էրզրում, Տրապիզոն, Երզնկա:

Նախաբան

Առաջին համաշխարհային պատերազմի մասին գրվել և հրատարակվել են ուսումնասիրություններ, հետազոտություններ, վերլուծություններ, հոդվածներ և մասնակիցների հուշեր, սակայն դեռևս շատ հարցեր մնում են չլուսաբանված: Պատճառներից մեկն այն է, որ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում հիմնականում եղել են եվրոպական թատերաբեմում ընթացած մարտական գործողությունները, իսկ պատերազմի բաղկացուցիչ մաս՝ Կովկասյան՝ ավելի ստույգ՝ ռուս-թուրքական ռազմաճակատը[1] *գրեթե անուշադրության էր մատնվել: Եվ դա այն դեպքում, երբ միակ ռազմաճակատն էր, որտեղ ռուսական բանակը փայլուն հաղթանակներ էր տանում: Սակավ են նաև ռազմաճակատում ընթացած մարտական գործողություններին վերաբերող փաստաթղթերի և նյութերի ժողովածուների հրատարակությունը:*

Վերջերս գիտական և ընթերցող հասարակությանը ռուսերենով ներկայացվեց «Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատը: Փաստաթղթերի ժողովածու. 1914–1917 թթ.» վավերագրերի բացառիկ, եզակի և ծավալուն ժողովածուն[2]*: Շրջանառության մեջ դրվել են ՌԴ արխիվային*

** Ներկայացվել է 07. VI. 2023 թ., գրախոսվել է 29. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] Կովկասյան ռազմաճակատ օպերատիվ-ռազմավարական հասկացությունը շրջանառության մեջ մտավ միայն 1917 թ. մարտին:

[2] ***Տե՛ս*** Кавказский фронт Первой мировой войны. 1914–1917 гг. Сборник документов. Отв. ред. А. Н. Артизов, сост. к. и. н. Б. Б. Давыдов, Н. Г. Захарова, к. и. н. И. В. Карпеев, С. А. Харитонов, к. и. н. О. В. Чистяков, Е. Е. Колоскова, к. и. н. М. Е. Малевинская, к. и. н. Д. Г. Мартиросян, Ю. В. Басенко, к. и. н. Г. Г. Авагян, к. и. н. С. С. Мирзоян. М., Фонд «Связь эпох», 2020, 1168 с., 16 с. илл. *Հրատարակությունը իրականացվել է* «Электронные офисные системы» *ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Վլ. Էդ. Բալասանյանի նյու-*

գործակալության, Ռուսաստանի պետական ռազմական-պատմական, Ռուսաստանի ռազմածովային նավատորմի պետական, ՌԴ արտաքին գործերի Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության, Ռուսաստանի պետական կինոֆոտո-փաստաթղթերի, ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտի (ռազմական պատմություն) և Հայաստանի ազգային արխիվների փաստաթղթերը (էջ 40–41), որոնց մեծ մասն առաջին անգամ է հրատարակվում: Վավերագրերը, ինչպես տեսնում ենք, հիմնականում ռուսական արխիվներից են:

Ժողովածուն կազմված է առաջաբանից (էջ 7–44), փաստաթղթերի երկու բաժնից: Առաջինում ներկայացված են տարաբնույթ գրագրություններ՝ զեկուցագրեր, հաշվետվություններ, հետախուզական տեղեկություններ, ռազմաքաղաքական իրավիճակի գնահատականներ, ծրագրվող մարտական գործողությունների պլանավորում Գերագույն գլխավոր շտաբի (այսուհետ՝ Ռազմակայան) և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար, փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի, ապա՝ Ն. Ն. Ռոմանովի (կրտսեր), բանակի շտաբի պետ, հետո՝ հրամանատար, գեներալ Ն. Ն. Յուդենիչի և զորատեսակների հրամանատարների, հայ հասարակական-քաղաքական ու կրոնական գործիչների միջև: Ներկայացված են տեղեկություններ հայ, ինչպես նաև՝ վրաց, ասորի աշխարհազորային-կամավորական ու ազգային զինվորական կազմավորումների, հայերի բռնագաղթի և կոտորածի՝ ցեղասպանության, Օսմանյան կայսրությունից գրավված տարածքների ապագայի վերաբերյալ, հայ փախստականների դրության, օպերատիվ—մարտավարական և ռազմադիվանագիտական բնույթի, Պարսկաստանում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի ու մարտական գործողությունների մասին փաստաթղթեր (էջ 46–815, 641 փաստաթուղթ):

Երկրորդ բաժինը վերաբերում է Թուրքերից գրավված Արևմտյան Հայաստանում ռուսական ռազմաքաղաքացիական վարչակարգի՝ «Պատերազմի իրավունքով Թուրքական Հայաստանի և Թուրքիայի այլ գրավված մարզերի» գեներալ-նահանգապետի, ապա գլխավոր կոմիսարի վարչության կազմակերպման, գործունեության ու հարաբերությունները տեղական բնակչության հետ և այլն (էջ 817–991, 92 փաստաթուղթ): Բաժնի 2 հավելվածներում ներկայացվել են՝ պատերազմի պլանը Թուրքիայի դեմ կռվելու դեպքում (էջ 992–995, 1 փաստաթուղթ) և ցեղասպանությունից փրկվածների վկայությունները, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում (էջ 996–1009, 7 փաստաթուղթ):

Ժողովածուն ունի ծանոթագրությունների (էջ 1010–1029) և անձնանունների կենսագրականների (էջ 1030–1062), անձնանունների (էջ 1063–1080), տեղանունների (էջ 1082–1115), աղբյուրների, հապավումների (էջ 1116–1118), աղբյուրների ու գրականության ցուցակ (էջ 1119) և տպագրված փաստաթղթերի ցանկեր (էջ 1120–1166): Հրապարակվել են 741 փաստաթուղթ և 6 փաստագրական ֆիլմերից 16 լուսանկար: Վավերագրերը ներկայացված են ժա-

---

թական աջակցությամբ: Շնորհակալություն ենք հայտնում պ. գ. թ. Սոնյա Միրզոյանին՝ փաստաթղթերի ժողովածուն տրամադրելու համար:

մանկագրական հաջորդականությամբ և ընդգրկում են 1914 թ. հուլիսի 16-ից մինչև 1917 թ. դեկտեմբերի 19-ը:

Ժողովածուն ծավալուն է, հիմնախնդիրները՝ բազմազան, ուստի նախընտրել ենք պատմաքննական հայացքով դիտարկել ժողովածուի նյութերը, դրանք ներկայացնելիս վերնագրել ու բաժանել ըստ թեմատիկ հարցերի:

Մարտական գործողությունները Կովկասյան (ռուս-թուրքական) ռազմաճակատում

Խնդրո առարկա ժողովածուում մեծաթիվ են այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հայ կամավորական շարժմանը, հայ փախստականներին, հայերի ցեղասպանությանը, Հայկական հարցին, Արևմտյան Հայաստանում ռուսական վարչակարգ հիմնելուն և ռուսական իշխանության վարած քաղաքականությանը: Ըստ այդմ՝ նախ քննարկենք դրանք:

Առաջին աշխարհամարտի սկզբին Թուրքիայի համար Միջագետքի և Կովկասյան ճակատներից թուրքերի համար գլխավորը ռուս-թուրքական ճակատն էր, քանզի նրանք հնարավորություն ունեին ոչ միայն համալրել իրենց ուժերը, այլև լրացնել ի հաշիվ տեղի մահմեդականների (էջ 50): Պատերազմի նախօրյակին թուրքական և գերմանական հետախուզությունները ռուսահպատակ լազերից ու աջարներից կազմել էին հետախուզական և դիվերսիոն ցանց[3], որի «աշխատանքը» երևաց թուրքական հարձակումից անմիջապես հետո Կարսի և հատկապես Բաթումի մարզերում (էջ 101, 102, 128, 182, 296–297, 829): Ի դեպ, 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Բաթումի մարզում առաջին անգամ հայտնվեցին «Թեշքիլաթը մահսուսեի» («Հատուկ կազմակերպություն») մահվան ջոկատները[4]: Հետախուզական տեղեկության համաձայն՝ թշնամին նախատեսում էր ապստամբություն հրահրել Կովկասում (էջ 71):

1914 թ. հոկտեմբերի 16-ին գերմանա-թուրքական ռազմական նավատորմի հարձակումով սկսվում են մարտական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում: Ռուսների դեմ գործում էր թշնամու 3-րդ բանակը: Հոկտեմբերի 19-ին ռուսական զորքն անցնում է հարձակման (էջ 80): Սկզբնական փուլում հրամանատարության հապշտապ գործողությունները հանգեցրին նրան, որ թուրքերը կարողացան ետ մղել ռուսներին և անցնել հակահարձակման: Նոյեմբերի 5-ին թշնամին, մահմեդական բնակչության աջակցությամբ, գրավեց Արդվինն ու Արդահանը՝ ընդհուպ մոտենալով Բաթումին: Նոյեմբերի վերջին ռազմաճակատ է գալիս ռազմական նախարար Էնվեր փաշան և սկսում է ռուսների գլխավոր ուժերի շրջապատման ու ոչնչացման օպերացիան[5]: Առաջին խոշոր ճակատամարտը տեղի է ունենում Սարիղամիշի շրջանում:

---

[3] Пипия. 1978, 35–38.

[4] Մանրամասն տե՛ս Կ ի ր ի մ յ ա ն. 2005, 3–17, Мартиросян. http://regnum.ru/news/1236705.htm (մուտք՝ 19. XII. 2009); Ս ա հ ա կ յ ա ն. 2012, 257–276; Ս ա հ ա կ յ ա ն. 2013, 7–45:

[5] 1914 թ. դեկտեմբերի 9-ին Հայկական IV դրուժինայի հրամանատար Քեռին (Ա. Գափաֆյան) հայտնում է հակառակորդի զգալի ուժերի առաջխաղացման մասին, սակայն Կովկասյան 1-ին կորպուսի հրամանատար, գեներալ Գ. Է. Բերխմանը և նրա շտաբը դա համարում է չափազանցված. տե՛ս Масловский. 1933, 74.

Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի զինվորական գծով օգնական (տեղակալ), գեներալ Ա. Զ. Միշլաևսկին, գալով ռազմաճակատ և չկողմնորոշվելով իրավիճակում, եզրակացնում է, որ պարտությունն անխուսափելի է. հրամայում է նահանջել և դեկտեմբերի 18-ին փախչում է Թիֆլիս (էջ 125), որտեղ խուճապ էր սկսվել[6]: Գեներալի կարգադրությամբ շտապ դուրս է բերվում նույնիսկ Հյուսիսային Պարսկաստանում հաջող գործողություններ ծավալած զորքը, որը կասեցվում է փոխարքայի հրամանով, որին հեռագրով դիմել էր Հայկական I դրուժինայում ծառայող հայ հասարակական-քաղաքական և պետական գործիչ, բժիշկ Հակոբ Զավրյանը (Յակով Զավրիև), խնդրելով բեկանել հրամանը, որը և կատարվում է[7]:

Դեկտեմբերի 22-ին ռուսական զորքն անցնում է հարձակման Սարիղամիշի շրջանից և շրջապատում է Թուրքական 9-րդ կորպուսը, գերում հրամանատար Իհսան փաշային[8], 3 դիվիզիաների պետերին ու այլոց (էջ 150–151)[9]: Այս անգամ ռուսները, օգտվելով Էնվերի սխալներից, կարողանում են ջախջախիչ պարտության մատնել Թուրքերին: Զորավարական տաղանդով փայլում է Կովկասյան բանակի շտաբի պետ, ապա՝ հրամանատար, գեներալ Ն. Ն. Յուդենիչը: Ռուսների կորուստը հաշվում է 26 հազար, իսկ Թուրքերինը՝ 70 հազար[10] (էջ 13):

Գեներալ Թ. Նազարբեկյանը, վերլուծելով պատերազմի առաջին փուլը, գտնում է, որ չէր կարելի Թերագնահատել Թշնամու հնարավորությունները, ուստի նրա տարածքում խորանալիս անհրաժեշտ էր ամրացնել Թիկունքը, ապա նոր միայն առաջանալ, այլ ոչ Թե անիմաստ նահանջել ու կործանման եզրին հասցնել քրիստոնյա բնակչությանը[11]:

Հալիլ բեյի դիվիզիան[12] անսպասելի հարված է հասցնում Ատրպատականում գտնվող Կովկասյան բանակի աջ Թևին, և 1915 Թ. ապրիլի 16-ին գրավում է Դիլմանը: Թուրք-քրդական ուժերի հաջողությունը սպառնում էր ոտքի հանել ոչ միայն Պարսկաստանի, այլ Կովկասի մահմեդականությանը: Սակայն ապրիլի 18-ին Թշնամուն կասեցրեց Թ. Նազարբեկյանի Դիլմանի ջոկատը, որի կազմում էր Անդրանիկի (Օզանյան) I դրուժինան: Թշնամու կորուստը կազմում է շուրջ 2 հազար[13], իսկ ռուսներինը՝ 600 սպանված և 800 վիրավոր: Կա-

---

[6] 1914 Թ. դեկտեմբերի 18-ի նամակում ռազմական նախարար, գեներալ Վ. Ա. Սուխոմլինովը Ռազմակայանի շտաբի պետ, գեներալ Ն. Ն. Յանուշկևիչին գրում է. «... այժմ Կովկասում երկու Թշնամի կա՝ Թուրքերը և Միշլաևսկին, երկուսն էլ հաջողությամբ են գործում». տե՛ս Переписка В. А. Сухомлинова с Н. Н. Янушкевичем. 1923, т. второй, 152.

[7] Սահակյան. 2019, № 1, 290–291:

[8] 1915 Թ. մայիսի 23-ին Իհսանը և մի քանի սպաներ Իրկուտսկում ընդհատակում գործող Թուրք-Թաթարական կոմիտեի օգնությամբ կարողանում են փախչել և կրկին հայտնվել ռազմաճակատում. տե՛ս Габдрафикова, Абдуллин. 2015, 216.

[9] Корсун. 1937, 110.

[10] Ըստ գեներալ Ե. Մասլովսկու՝ 90 հազար. տե՛ս Масловский. 1933, 133.

[11] Սահակյան. 2019, № 1, 293:

[12] Корсун. 1940, 33.

[13] 1915 Թ. ապրիլի 21-ի զեկուցագրում փոխարքան Դիլմանի ճակատամարտում Թուրքերի կորուստը նշում է 3,5 հազարից ավելի (էջ 329):

մավորներից զոհվել էր 21 և վիրավորվել 55 հոգի[14]: Ճակատամարտում Թ. Նազարբեկյանի վճռական դերի մասին վկայում է հետևյալը՝ նա պարգևատրվում է սպայական Սբ. Գեորգիի IV աստիճանի խաչով, իսկ ժամանակ անց՝ ֆրանսիական “Médaille militaire” («Զինվորական մեդալ»), որը երկրորդն էր համարվում «Պատվո լեգեոն» շքանշանից հետո:

Պարտությունից հետո Հալիլը փորձում է անցնել Վան, որտեղ ապրիլի 7-ից հայերը կենաց մահու կռիվ էին տանում Այգեստան և Քաղաքամեջ թաղամասերը պաշարած թուրք-քրդական ուժերի դեմ[15]: Սակայն ռուսական անսպասելի առաջխաղացումը ստիպում է հրաժարվել մտադրությունից[16]: Զորամասերին հանձնարարվում է հետապնդել Հալիլին, սակայն՝ ապարդյուն, քանի որ հետախուզությունը սխալվում է թուրքերի նահանջի ուղղությունը որոշելիս՝ գտնելով, որ դա Ուրմիան է (էջ 340): Անդրանիկի հետախույզներին հաջողվում է պարզել իրական ճանապարհը, սակայն հրամանատարությունը ուշադրություն չի դարձնում, քանի որ ավելի շատ վստահում էր իր հետախուզությանը:

Մայիսի 4-ին Վանը ազատագրվում է թշնամուց: Մայիսի 5-ի առավոտյան ժամը 6-ին, քաղաք է մտնում Խեչոյի (Խ. Ամիրյանց–Գևորգյան) հեծելավաշտը[17], մայիսի 6-ին՝ Արարատյան գունդը, ապա՝ Անդրկասպյան կազակային բրիգադը (Բայազետի ջոկատ) (էջ 368):

Ժողովածուում կրկնվում են ռուսական ու խորհրդային պատմագրությունում[18] արդեն «դասական» դարձած հակառակորդի 70 հազար զորքի (էջ 396) ռազմաճակատում հայտնվելը, որի հետևանքով Կովկասյան 4-րդ բանակային կորպուսը հարկադրված էր հուլիսին նահանջել և պատճառ դառնալ Վասպուրականի հայության աղետալի փախուստին: Իր հուշերում Թ. Նազարբեկյանը գրում է. «… ես մեծ տարակուսանքի մեջ էի, քանի որ Վան քաղաքին որևէ վտանգ չէր սպառնում, և, բացի այդ, ճանապարհը դեպի Վան հարավային ծովեզրից ապահովված էր գեներալ Տրուխինի[19] ջոկատով (Հայկական 3-րդ և 4-րդ դրուժինաների գումարտակները, սահմանապահների 1 գումարտակ և սիբիրյան կազակ(ային– Ռ. Ս.) գունդը՝ մեկ մարտկոցով)… »[20]:

Ռուսական զորքի հուլիսյան նահանջը և Վասպուրականի հայության ծանր կորուստը խորը հիասթափություն են առաջացնում հայության՝ հատկապես, կամավորների շրջանում: Բոլորի համար անհասկանալի էր՝ ինչու՞ Վանում տեղակայված գեներալ Ա. Մ. Նիկոլաևի Բայազետի ջոկատը հապշտապ նահանջեց, վանեցիներին զենք չտրամադրեց՝ քաղաքը պաշտպանելու համար և նույնիսկ չտարհանեց հոսպիտալում գտնվող հիվանդ ու վիրավոր զինվոր-

---

[14] Ս ա հ ա կ յ ա ն. 2019, № 2, 315–316:

[15] Թուրքական բանակ է ուղարկվում սադրիչ հաղորդագրություն, թե, իբր, զինուժը թուլացնելու և ռուսներին օգնելու նպատակով Վան է գալիս գեներալ Մ. Տ. Լորիս-Մելիքովի որդին (տե՛ս էջ 285): Երևում է, որ թուրքերի մոտ թարմ էր 1877–1878 թթ. պատերազմի ժամանակ Լորիս–Մելիքովից կրած պարտության դառը հուշերը:

[16] Ս ա հ ա կ յ ա ն. 2019, № 2, 321:

[17] Մ ե հ ր ա բ յ ա ն. 2022, 54, 203:

[18] К о р с у н. 1940, 120–121; Ш и ш о в. 2001, 527.

[19] Տրուխին Իվան Եվդոկիմի (1852–1922) – ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, Անդրբայկալյան 2-րդ կազակային բրիգադի հրամանատար:

[20] Ս ա հ ա կ յ ա ն. 2019, № 4, 284–285, տե՛ս նաև՝ К о р с у н. 1940, 194.

ներին[21]: Նշենք, որ գեներալը մեկ տարի անց ազատվեց իր պաշտոնից՝ հարևան մարտական տեղամասին օգնություն չցուցաբերելու համար (էջ 630):

Տեղեկանալով՝ դաշնակիցների գործողությունները Դարդանելի շրջանում ավարտվելու են, որից հետո թուրքերը զորքեր կտեղափոխեն ռուսների դեմ՝ Ն. Ն. Յուդենիչը նախաձեռնում է Էրզրումի գրավման փայլուն օպերացիան, որը մտել է համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ: Երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1915 թ. դեկտեմբերի 28-ին, սկսվում է գրոհը, որն ավարտվում է 1916 թ. փետրվարի 3-ին՝ ամրոցի և քաղաքի գրավումով (էջ 444): Նույն օրը ռուսները գրավում են Մուշը (էջ 450), ապա՝ Բիթլիսը (Բաղեշ), իսկ ապրիլի 5-ին՝ Տրապիզոնը (էջ 519): Շարունակելով առաջխաղացումը՝ ռուսները հուլիսի 3-ին տիրում են Բաբերդին (էջ 579), իսկ հուլիսի 12-ին՝ Երզնկային (էջ 594): Նախատեսվում էր ծովային դեսանտային օպերացիա Կ. Պոլիսը գրավելու համար, որը չիրականացավ[22]:

1917 թ. մարտի 3-ին հայտնի է դառնում Նիկոլայ II-ի հրաժարականի և Նախարարների խորհրդի նախագահ իշխան Գ. Ե. Լվովին նշանակելու մասին (էջ 653): Կովկասյան ռազմաճակատում շարունակում են ընթանալ մարտական գործողությունները, և մարտի 22-ին ռուսները գրավում են Կասրե-Շիրինն ու կազակային հարյուրյակ են ուղարկում Իրաքում գտնվող բրիտանացիների հետ կապ հաստատելու համար (էջ 662):

Հոկտեմբերի 14-ին Ուրմիայի ջոկատի շտաբի պետ Ն. Ե. Կակուրինը Կովկասյան ռազմաճակատի շտաբին զեկուցում է, որ ասորիների հոգևոր առաջնորդ Մար Շիմուն XIX-ի աջակցությամբ ասորական գումարտակը համալրվել է 1000 հոգուց կազմված կամավորական դրուժինայով (էջ 984–985): Քաղաքական հետագա արմատական փոփոխությունները, մատակարարման գրեթե բացակայությունը և զանգվածային դասալքությունը հարկադրում են 1917 թ. նոյեմբերի 3-ին ռուսներին նախաձեռնել հայերից և վրացիներից կազմել ազգային զորամիավորումներ (էջ 778–784):

Նոյեմբերի 11-ին օսմանյան 3-րդ բանակի հրամանատար Վեհիբը Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ի. Զ. Օդիշելիձեին ուղղված նամակում առաջարկում է զինադադար կնքել (էջ 783): Նոյեմբերի 26-ին Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը ստանում է Խորհրդային Ռուսաստանի զինուժի Գերագույն գլխավոր հրամանատար, բոլշևիկ Ն. Վ. Կրիլենկոյի հրամանը՝ Քառյակ միության երկրների հետ նախնական հաշտության պայմանագիր ստորագրելու մասին: Նա հայտնում է, որ Բրեստ-Լիտովսկում ստորագրվել է համաձայնագիր, ըստ որի՝ նոյեմբերի 24-ից (դեկտեմբերի 7-ից) դադարեցվում են մարտական գործողությունները (էջ 790–791): Դեկտեմբերի 4-ին հրապարակվում է գեներալ Մ. Ա. Պրժևալսկու հրամանը, ըստ որի՝ կովկասյան-պարսկական ռազմաճակատում ժամը 14-ից դադարեցվում են մարտական գործողությունները (էջ 798): Դեկտեմբերի 5-ին Ի. Զ. Օդիշելիձեն ազդարարում է զորքին զինադադարի կնքման մասին (էջ 801–802)[23]:

[21] К о р с у н. 1940, 112.
[22] В е р х о в с к и й. 1959, 113, 116.
[23] *Ավելի մանրամասն տե՛ս Մ ե լ ի ք յ ա ն. 1997:*

Հայ կամավորական շարժումը Կովկասյան (ռուս-թուրքական) ռազմաճակատում

Առաջին համաշխարհային պատերազմի տարբեր ռազմաճակատներում մասնակցություն են ունենում նաև հայերը, որի մասին գրվել են ուսումնասիրություններ, հոդվածներ ու առանձին անհատների գործունեությունը և մարտական գործողությունները լուսաբանող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ[24]*: 1914–1918 թթ. Ռուսաստանում բնակվող 2,054 միլիոն հայերի մոտ 13%-ը՝ շուրջ 250 հազար հոգի, զորակոչվել է բանակ, իսկ Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից և ԱՄՆ-ից՝ 50 հազար: Անդրկովկասի 1,8 միլիոն հայերից զորակոչվել է 147344-ը, որոնցից ծառայության համար պիտանի են ճանաչվել 121921 հոգի*[25]*: Շուրջ 300 հազար հայ զինծառայողներից պատերազմի ընթացքում 60 հազարը սպանվել կամ վիրավորվել է*[26]*:*

Կռիվների ընթացքում զոհվել են մոտ 800 կամավոր, որոնց թվում՝ հրամանատարներ Գրիգոր Ավշարյանը և Քեռին[27]*:*

Ժողովածուում կան փաստաթղթեր, որոնք վերաբերվում են հայ կամավորական դրուժինաների կազմավորմանը, մասնակցությունը մարտական գործողություններին և այլն: 1914–1916 թթ. ռուս-թուրքական ռազմաճակատում կամավորների ընդհանուր թվի վերաբերյալ կան տարակարծություններ՝ մինչև 6 հազար և 9 հազար հոգի[28]*: Ընդունված է, որ, ընդհանուր առմամբ, շարժման մեջ ընդգրկվել է շուրջ 10 հազար հոգի:*

Սեպտեմբերի 16-ին Երևանի նահանգապետ Վ. Ֆ. Տիզենհաուզենը Էջմիածնի գավառապետ Լ. Լ. Լեմերմանին հայտնում է, որ ձևավորվում են հայկական պարտիզանական երկու ջոկատ: Նահանգապետը հրահանգում է աջակցել, քանի որ զեկուցել են հարուցվող արգելքների մասին (էջ 69): Դրուժինաների[29] *ձևավորման ու համալրման անմիջական աշխատանքները ղեկավարում էր «Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմինը»:*

[24] *Ներկայացրել ենք բացառապես փաստաթղթերի և նյութերի ժողովածուները. տե՛ս* Андраник Озанян. Документы и материалы. 1991, 130–221; *Կ ա ր ա պ ե տ յ ա ն. 1999,* Армяне в Первой мировой войне (1914–1918 гг.). 2014; Офицеры-армяне Первой мировой войны. Офицеры армии Республики Армения. 1914–1920 гг.: Историко-биографический словарь. 2022. *Վերջինի գրախոսությունը տե՛ս* S a h a k y a n. Armenian officers in the World War I. Officers of the army of the Republic of Armenia. 1914–1920: Historical and Biographical Dictionary, 2022, (Doctor in History A. S. Virabyan, Candidate of Historical Sciences S. S. Mirzoyan). Yerevan, National Archives of Armenia, 1382 p., 40 p. of illustrations, “Fundamental Armenology”, № 1 (17), 157–164, https://fundamentalarmenology.am/datas/pdfs/899.pdf.

[25] А р у т ю н я н. 1971, 317.

[26] Офицеры-армяне Первой мировой войны. Офицеры армии Республики Армения. 2022, 4.

[27] *Ն ա զ ա ր յ ա ն. 1999, 63–64:*

[28] А р у т ю н я н. 1971, 297.

[29] *Հայկական աշխարհագրային ստորաբաժանումները հայտնի են խումբ, գունդ և բանակ, իսկ պաշտոնական հաղորդագրություններում՝ դրուժինա անվամբ:*

Հ. Ջավրյանը կազմում է դրուժյուն կամավորական շարժման առաջին փուլի՝ 1914 թ. սեպտեմբերից 1915 թ. հունվար, մասին (էջ 250–260): Նա ներկայացնում է խմբերի մղած կռիվներն ու առավել հանգամանալի անդրադառնում III և IV խմբերի մարտերին: Հ. Ջավրյանը պարզաբանում է՝ 1914 թ. դեկտեմբերի 8-ին III դրուժինայի և կազակների գիշերակացի ժամանակ անիմաստ կորստի պատճառը կազակ ժամապահների անփույթ ծառայությունն էր: Դա նշվում է, քանի որ Ա. Ջ. Միշլաևսկին մեղավոր էր հայտարարել կամավորներին[30]: Զոհվում են շուրջ 30 կամավորներ և ավելի շատ կազակներ (էջ 257): Միաժամանակ վկայակոչվում է դեկտեմբերի 27-ին Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Մ. Ա. Պրժևալսկու հրամանը, որտեղ նա ընդգծում է հայ մարտիկների և հրամանատար Համազասպ Սրվանձտյանցի քաջությունն ու անձնազոհությունը (էջ 257–258):

Հ. Ջավրյանը ներկայացնում է Քեռու IV դրուժինայի մարտական ուղին: Կամավորները հաջողությամբ կատարում են հետախուզական գործողություն, որը չէր հաջողվել կատարել ռուսներին (էջ 258): Դրուժինան աչքի է ընկնում մի քանի կռիվներում և ունենում 16 սպանված ու 28 վիրավոր (էջ 258)՝ արժանանալով գեներալ Է. Գ. Բերխմանի գովասանքին: Դեկտեմբերի 9-ին IV դրուժինան և ռուսական ջոկատը ծանր դրության մեջ է հայտնվում թուրքական ընդհանուր հարձակման ժամանակ (էջ 133–134): Քեռին ծանր կռիվներից հետո կարողանում է շրջապատումից դուրս բերել ոչ միայն յուրայիններին, այլև՝ ռուս զինվորներին[31]: Համատեղ գործողությունների համար նա դիմում է Օլթիի ջոկատի հրամանատար, գեներալ Վ. Դ. Գաբաևին, սակայն վերջինս մերժում է՝ պատճառաբանելով, որ պատկերացում չունի հայ կամավորների մասին և առաջարկում է հեռանալ Կարս: Ի տարբերություն Գաբաևի՝ Կովկասյան բանակի շտաբը բարձր է գնահատում IV դրուժինայի մարտերը. Քեռին պարգևատրվում է Գեորգիևյան II աստիճանի ոսկե, իսկ նրա օգնական Մ. Արզումանյանը՝ III աստիճանի արծաթե մեդալներով (էջ 260):

Սարիղամիշի հաղթանակից հետո փոխարքան հաստատում է դրուժինաների նոր հաստիքների նախագիծը, որոնք կազմված են լինելու 4 վաշտից, յուրաքանչյուրում՝ 237 հոգի (էջ 272–274): Նա Ռազմակայանի շտաբի պետ, գեներալ Ն. Ն. Յանուշկևիչին հայտնում է, որ կամավորները զինված են 3 հազար ռուսական եռագիծ[32] և 2 հազար «Մանլիխեր»[33] մարտական հրացաններով (էջ 846):

Մայիսի 20-ի զեկուցագրում Հայկական կենտրոնական ազգային բյուրոյի նախագահի տեղակալ Հ. Խունունցը հայտնում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին, որ կամավորների թիվը 5 հազար է և բաժանված են 5 ջոկատի: Նշում է, որ II, III, IV և V խմբերը միավորվել են՝ կազմելով երեք գումարտակ՝ հազարական զինվորներով ու ստացել Հայկական Արարատյան գունդ անվանումը: Հրամանատարն է Վարդանը (Ս. Մեհրաբյան): Գումարտակները գլխա-

---

[30] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2015, 174:

[31] IV դրուժինայի ընդհանուր կորուստը կազմել է 106 սպանված և 44 վիրավոր. տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 29–30:

[32] Հայտնի են նաև «Մոսին» անունով:

[33] Հիմնականում զինում էին աշխարհազորային կազմավորումները, թիկունքային զորամասերը և նավատորմը:

վորում են Դրոն, Համազասպը և Քեռին: Գնդի անմիջական մասնակցությամբ հաջողվել է ազատագրել Վանը, իսկ I դրուժինան Դիլմանի ճակատամարտից հետո շարժվում է Վան (էջ 841):

Հ. Խունունցը նշում է, որ զինվորական իշխանությունների հետ բանակցում են կամավորների թիվը հասցնել մինչև 10 հազարի, սակայն, չնայած Կովկասյան բանակի շտաբի բարյացակամ վերաբերմունքին, հնարավոր չէ զենքի աղետալի պակասի հետևանքով (էջ 842):

Փետրվարի 19-ի հրամանում Ա. Զ. Միշլաևսկին Ադրբեջանի (Ատրպատականի) ջոկատի հրամանատար, գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովին տեղեկացնում է, որ պարսկական դեսպանորդը բողոքում է հայ, ասորի փախստականների և կամավորների կողմից իրականացվող կողոպուտի մասին: Ատրպատականում տեղի է ունեցել բախում պարսիկ կազակների հետ, եղել են զոհեր: Նա պահանջում է անհապաղ միջոցառումներ ձեռնարկել՝ դադարեցնելու անօրինականությունները, և իրեն զեկուցել (էջ 819): Այսպես կոչված՝ «կողոպտիչ» հայերն ու ասորիներն Ատրպատականի բնակիչներ են, որոնք իրենց ունեցվածքը կորցրել էին 1914 թ. դեկտեմբերյան նահանջի ժամանակ և այժմ փորձում են վերադարձնել կողոպտվածը:

Մարտի 4-ին Կովկասյան բանակի շտաբը Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանին ուղղված գրությունում զգուշացնում է, որ հայկական մամուլում կամավորների վերաբերյալ հոդվածներում չափազանցվում են նրանց մղած կռիվները, իսկ հաջողությունները որոշ դեպքերում վերագրվում են բացառապես կամավորներին, որով նվազեցնում են մյուս զորամասերի մասնակցությունը: Առաջարկվում է՝ մարտերի մասին տպագրվող հոդվածներն ու հեռագրերը հեղինակեն դրուժինաներում ծառայողները: Հաղորդագրությունները պետք է լինեն անկողմնակալ և անաչառ ներկայացնեն իրադարձությունները (էջ 299):

Ապրիլի 29-ին Ռուսաստանի ՆԳ նախարարի ընկեր (տեղակալ) և ժանդարմական առանձին կորպուսի հրամանատար[34], գեներալ Վ. Ֆ. Ջունկովսկին գեներալ Ն. Ն. Յանուշկևիչին զեկուցում է, որ Դաշնակցությունը որոշել է պատերազմի ավարտից հետո մի շարք արտոնություններ պահանջել, որոնք չկատարելու դեպքում դիմելու է ուժի (էջ 829): Նա եզրակացնում է, որ հայերը « … ուժեղ թափով պատրաստվում են գործել Ռուսաստանի դեմ, որպեսզի ուժով հասնեն (Արևմտյան Հայաստանի – Ռ. Ս.) ինքնավարությանը, որի համար Դաշնակցություն կուսակցությունը հիմք է նախապատրաստում կովկասյան զորքերում քարոզել զինվորներին հող բաժանելու մասին, այն հաշվարկով, որ կհրահրեն զինվորական խռովություն» (էջ 829):

Պատերազմի սկզբում սահմանամերձ որոշ շրջանների բնակչությանը, այդ թվում՝ հայերին, բաժանվել էր զենք, որը, սակայն, թուրքական հարձակման ձախողումից հետո շարունակում է մնալ տեղացիների ձեռքում: Վ. Ֆ. Ջունկովսկին հայտարարում է. «Կովկասյան գործերին տեղյակ մարդիկ համառորեն պնդում են, որ սպառազինությունը հայերին պետք է ոչ թե կարճեցյալ

[34] Այս պաշտոնը, չգիտես ինչու, անուշադրության էր մատնվել փաստաթղթի վերնագրում և միայն հիշատակվում է անձնանունների կենսագրականում (էջ 1038):

թշնամուց պաշտպանվելու, այլ ապագայի համար» (էջ 832)։ Գեներալին զայրացրել էր այն՝ կամավորները երևակայում են, որ Կովկասում կա հայկական բանակ (էջ 833)։

Զեկուցագրում գեներալը սարսափեցնում է գալիք «հեղափոխությամբ», որը կարող են սկսել հայերը, և կխլեն ռուսական արյունով և փողերով գրավված տարածքները։ Նա հավաստիացնում է, որ վրացիների և կովկասյան թաթարների մոտ «հեղափոխական» տրամադրություններ չեն նկատվում, սակայն անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել, որպեսզի հայկական «հեղափոխությունը» օրինակ չդառնա նրանց համար։ Հանձին Վ. Ֆ. Ջունկովսկու՝ Ռուսաստանի ՆԳ նախարարությունն աստիճանաբար հիմք էր նախապատրաստում լուծարելու հայկական դրուժինները։

Առաջին փորձն արվեց մայիսի 15-ին, երբ ՆԳ նախարարությունը, ելնելով «պետական շահերից» և կայսրության ժողովուրդների «բարեկամական» հարաբերությունները պահպանելու ցանկությունից, կասկածի տակ է դնում հայկական դրուժինների անհրաժեշտությունը։ Առաջարկվում է բոլոր դրուժիններից, այդ թվում՝ վրացականից, հավաքել հրացանները, քանի որ բանակը մեծ կարիք ունի հրազենի, և դադարեցնել դրուժինների կազմավորումը։ Ինչպես նշում է ռազմական պատմաբան, գեներալ Ն. Գ. Կորսունը, Կովկասյան բանակի շտաբը ճիշտ արեց, որ բողոքարկեց հրամանը, որը «հավասարազոր էր հակառակորդի հետ մարտում գտնվող և մարտական արժեքավոր որակներ ցուցաբերած հայկական դրուժինների լուծարմանը»[35]։ Ընդունվում է միջանկյալ որոշում՝ բացի առկա յոթ կամավորական կազմավորումներից դադարեցնել հայկական դրուժինների կազմավորումը և նրանց չզինել եռագիծ հրացաններով[36]։

Դրուժինների զինաթափմանը դեմ է արտահայտվում Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը։ Նա գտնում է, որ անհնար է 1915 թ. ապրիլի 24-ից մարտերում գտնվող հայկական ու վրացական դրուժիններից վերցնել եռագիծ հրացաններն ու փոխարինել բարոյապես մաշված «Բերդան» հրացաններով (էջ 846)։ Փոխարքան հերքում է, որ շուրջ հինգ հազար հայ կամավորները կարող են վտանգ սպառնալ իշխանությանը, քանի որ գտնվում են հայրենի սահմաններից հեռու և հրամանատարության հսկողության տակ։ Նա հետևյալ հիմնավորումն է տալիս՝ նույնիսկ եթե Վանը վերադարձվի թուրքերին, «դրուժինիկները խաղաղ ժամանակ կհանդիսանան Թուրքիայի դեմ պայքարի միջուկ և հենց այնտեղ կգնան բոմբիստները[37] և ընդհանրապես անհանգիստ հայ տարրը» (էջ 846)։

Այսպիսով, կարելի է վերոգրյալից եզրակացնել, որ հայկական դրուժինները հայտնվել էին ռուս պաշտոնյաների «ուշադրության» կենտրոնում, և Վ. Ֆ. Ջունկովսկին կատարում էր կառավարության հանձնարարությունը՝ ստեղծել հայերի «անվստահ» ու «հեղափոխական» լինելու առասպելը։ Հետագայում տպագրված հուշերում նա այլ սպառնալիք է տեսնում՝ վտանգավոր էր համա-

[35] К о р с у н. 1937, Приложение 4, 189.

[36] К о р с у н. 1937, Приложение 4, 189.

[37] *Նկատի ունի այս կամ գործողության ժամանակ ինքնաշեն ռումբ օգտագործող ահաբեկիչներին կամ հեղափոխականներին։*

րում Անդրկասպյան մահմեդականներին ու կովկասյան թաթարներին[38]*, և որևէ խոսք կամ ակնարկ չկա «հեղափոխական» հայերի մասին:*

Օգոստոսի 10-ին Կովկասյան բանակի շտաբի գեներալ-կվարտիրմեյստեր, գեներալ Պ. Ա. Տոմիլովը Ն. Ն. Յուդենիչին հայտնում է, որ Դիլման են եկել Քեռիի և Համազասպի դրուժինաները՝ «բացարձակապես կազմալուծված ու հոգնած և խնդրում են գնալ Երևան վերակազմավորման համար, սակայն կորպուսի հրամանատարը մերժել է» (էջ 403): Որոշումն առաջ է բերել Համազասպի կամավորների դժգոհությունը, որը ճնշվել է Ֆ. Գ. Չեռնոզուբովի կողմից: Բռնության գործադրումը բացասաբար է ընդունվել տեղի հայերի և հայ փախստականների կողմից (էջ 404): Ֆ. Գ. Չեռնոզուբովը գտնում է, որ անհրաժեշտ է թույլատրել կամավորներին գնալ Երևան, «որով մենք կազատվենք շատ լուրջ բարդություններից» (էջ 404)[39]*:*

Օգոստոսի 11-ի զեկուցագրում Կովկասյան բանակի շտաբի պետի պաշտոնակատար, գեներալ Դ. Մ. Բոլխովիտինովը Պ. Ա. Տոմիլովին հայտնում է Ն. Ն. Յուդենիչի հրամանի բովանդակությունը՝ ուղղված Պ. Պ. Կալիտինին ու Ֆ. Գ. Չեռնոզուբովին: Հրամանատարը կարգադրում է՝ զինված հայերի հանդիպելու դեպքում վարվել հետևյալ կերպ. եթե դրուժինիկներ են՝ հանձնել ռազմադաշտային դատարանին, եթե զինված տեղացիներ են, ապա զենք թաքցնելու համար ենթարկել երեք ամսյա բանտարկության, կամ տուգանել 3 հազար ռուբլով: Եթե բռնվել են կողոպուտի կամ ավազակության ժամանակ՝ հանձնել ռազմադաշտային դատարանին (էջ 404–405)[40]*:*

Ն. Ն. Յուդենիչը հրամայում է. «Հայկական դրուժինաները մի ինչ-որ հատուկ արտոնություն ունեցող զորք չեն, ուստի ոչ մի ներողամտություն նրանց ցույց չտալ: Նրանք պարտավոր են ճշտորեն և առանց առարկության կատարեն այն, ինչ-որ հրամայված է: Մեր կարգադրություններին չհնազանդվելու դեպքում նրանցից խլել զենքը, հանդերձանքը և պետական իրերը, իսկ դրուժինաները լուծարել: Զենթարկվելու դեպքում ուժով հնազանդեցնել...» (էջ 405): Այնուամենայնիվ, ռուսական հրամանատարությունը չգնաց դրուժինաների լուծարմանը (էջ 416), քանի որ դեռևս զգում էր նրանց կարիքը:

Թ. Նազարբեկյանի վկայությամբ՝ Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար Պ. Ի. Օգանովսկին «Գեներալներից գրեթե միակն էր, որ լավ էր վերաբերվում հայերին և գնահատում էր հայկական դրուժինաների աշխատանքը»[41]*:*

1915 թ. մայիսի 31-ի զեկուցագրում Պ. Ի. Օգանովսկին Ն. Ն. Յուդենիչին հայտնում է, որ Վանի շրջանում կողոպուտ կատարող հայ կամավորները կրակել են ռուսների վրա, որոնք արգելել են գողոնը տեղափոխել (էջ 374): Այս

---

[38] Д ж у н к о в с к и й. 1997, 575.

[39] *Այս փաստաթուղթը հրատարակել է թուրք հեղինակ Մ. Փերինչեկը. տե՛ս* П е р и н ч е к. 2011, 116–117. *Նրա հրատարակած փաստաթղթում, չգիտես ինչու, Դիլմանը դարձել է Դիլիջան. տե՛ս* П е р и н ч е к. 2011, 116*: Նշենք, որ գրքի վերնագիրը հիմնականում չի համապատասխանում բովանդակությանը:*

[40] *Կամավորական Ս. Զենտիկյանը հետևյալն է հուշագրում. «… մեր մէջ ամէն գոյնի մարդ կար՝ ոճրագործից աւազակ և կրթուած, պարկեշտ մարդիկ». տե՛ս Ս ա հ ա կ յ ա ն. 2020, № 129, 143:*

[41] *Ս ա հ ա կ յ ա ն. 2020, № 1, 280:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

դեպքի մասին նրան տեղեկացրել է գեներալ Ա. Մ. Նիկոլաևը: Հուլիսի 19-ին Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, դիմելով կաթողիկոս Գևորգ Ե-ին, տարակուսանք է հայտնում վերը նշվածի վերաբերյալ: Փոխարքան նշում է, որ Ա. Մ. Նիկոլաևը հրամանատարությանը մի բան է զեկուցում, իսկ Ա. Խատիսյանին գրավոր հայտնում է հակառակը: Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը տեղեկացնում է, որ հրամայել է հետաքննել և պարզել իրականությունը (էջ 858), բացի այդ՝ խստիվ արգելել է քրիստոնյաներից առգրավել զենքը՝ բացառությամբ եռագիծ հրացաններից (էջ 859): Քննությունն այդպես էլ չավարտվեց, քանի որ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին փոխարքայի պաշտոնում փոխարինեց Ն. Ն. Ռոմանովը, որը ուղիներ էր փնտրում քրդերի հետ «բարեկամանալու», դրուժինաները լուծարելու համար:

Հավելենք, ռազմական հանդես «Военный Вестник»*-ի թղթակիցը, վկայակոչելով հրամանատարության կարծիքը հայ կամավորների մասին, գրում է. «Կռվում են գերազանց, ինչպես առյուծները և մեր ընդհանուր գործին մեծ օգուտ են բերում»*[42]*:*

Փախստականների հիմնախնդիրը պատերազմի տարիներին

Առաջին աշխարհամարտի տարիներին լուրջ խնդիր էին ներկայացնում փախստականները: Նրանց ընդունելու և տեղավորելու համար պետական զգալի միջոցներ էին հատկացվում: Իրենց հերթին ռուսական և, հատկապես, հայկական ու օտարերկրյա բարեգործական կազմակերպություններն ուժերի ներածին չափ օգնում էին պատերազմական գործողությունների շրջաններից կամ թուրք-քրդական կոտորածներից փրկված հայ գաղթականներին: Սկզբնապես նրանց զգալի մասը կենտրոնանում էր Կարսի մարզում, որն այնքան էլ «ընդունելի» չէր իշխանության համար: Ն. Ն. Յուդենիչն անցանկալի տարր էր անվանում հայ փախստականներին, պահանջում էր անհապաղ հեռացնել Կարսի մարզից ու Երևանի նահանգից՝ գտնելով, որ նրանք բացասական քաղաքական ազդեցություն կունենան տեղական բնակչության վրա: Նա պահանջում է հարմար առիթի դեպքում նրանց վերադարձնել իրենց բնակության վայրերը (էջ 847): Սակայն նկատենք, երբ եկավ պահը իշխանությունը զանազան առիթներ էր փնտրում՝ արգելելու արևմտահայերին վերադառնալ, քանի որ, օրինակ, Ալաշկերտի հովիտը նախատեսվում էր բնակեցնել ռուսներով ու կազակներով:

1915 թ. մայիսի 5-ի զեկուցագրում Վ. Ֆ. Ջունկովսկին կովկասյան իշխանությանը մեղադրում է հայերին հովանավորելու համար, որն ապագայում կարող է լուրջ բարդություններ առաջացնել: Նա վտանգավոր է համարում փախստականների զգալի թվի մուտքը փոխարքայություն: Այսպես, միայն 1914 թ. դեկտեմբերի 23-ին Պարսկաստանից Ջուլֆա է եկել 20 հազար, իսկ 1915 թ. հունվարի կեսերին՝ 30 հազարից ավելի մարդ (էջ 830): Վ. Ֆ. Ջունկովսկու գնահատմամբ՝ Սարիղամիշի կռիվների ժամանակ Թիֆլիս են հասել շուրջ 130 հազար հոգի, հիմնականում՝ հայեր (էջ 830), որը դժգոհություն է առաջացրել բնակչության շրջանում: Գեներալը գտնում է, որ նրանց պետք է տեղավորել Երևանի նահանգում, որտեղ բնակվում են 600 հազարից ավելի

---

[42] А-Тъ. 1916, 141.

հայեր (էջ 831)։ Նա մեղադրում է փոխարքայի տիկնոջը՝ Ե. Ա. Վորոնցովա-Դաշկովայի՝ փախստական հայերին հովանավորելու համար. նրանց կեցության համար տրամադրում է զգալի դրամական միջոցներ, կազմակերպում դրամահավաքներ ու բարեգործական համերգներ[43]։ Գույները խտացնելով՝ հայտնում է, թե, իբր, հայերը տիկնոջը ողջունում են «Կեցցե՛ մեր փոխարքայուհին» կոչով (էջ 831)[44]։ Ինչպես տեսնում ենք, Վ. Ֆ. Ջունկովսկին փոխարքային ու նրա ընտանիքը գրպարտելու համար օգտագործում է բամբասանքներ, որոնք ընդունվում էին կառավարության և քաղաքական գործիչների մի մասի կողմից։

1915 թ. հունիսի 4-ին կաթողիկոս Գևորգ Ե-ն փոխարքային ուղղված նամակում խնդրում է միջամտել և կասեցնել գեներալ Դ. Կ. Աբացիևի ոչ բարեկամական վերաբերմունքը Մանազկերտի և շրջանի ողջ մնացած հայերի նկատմամբ։ Նա չի պաշտպանում քրիստոնյա բնակչությանը, որն էլ առիթ է տալիս քրդերին ու չերքեզներին շարունակել անօրինականությունները։ Վերջինները, որոնք օրեր առաջ կռվում էին ռուսների դեմ, այժմ սպառազինված, անպատիժ հարձակվում են հայկական գյուղերի վրա։ Հայ բնակչությունը, որը զենքը ձեռքին պայքարել է ընդհանուր թշնամու դեմ, ենթարկվում է խուզարկությունների։ Վեհափառը խնդրում է Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին պաշտպանել տեղի հայության իրավունքները (էջ 848–849)[45]։

Հունիսի 9-ի «շտապ» վերնագրված գրությամբ գեներալ Լ. Մ. Բոլխովիտինովը փոխարքայի քաղաքացիական մասով օգնական Ն. Լ. Պետերսոնին տեղեկացնում է, որ Ն. Ն. Յուդենիչը հրամայել է վտարել Կարսի մարզի Վերին Սարիղամիշի 184 բնակիչների և մոտ հազար թուրքահպատակ հայերին (էջ 849)։ Օգոստոսի 27-ի զեկուցագրում Պ. Ի. Օգանովսկին Ն. Ն. Յուդենիչին հայտնում է, թե որ պայմաններում հայերը կարող են վերադառնալ Ուրմիայի և Վանի շրջանները (էջ 862)։ Այս զեկուցագրի վրա Լ. Մ Բոլխովիտինովի կողմից արվել է մակագրություն՝ բանակի հրամանատարը հարցում է կատարել Եղբայրական օգնության կոմիտեի կազմի մասին Երևանի նահանգապետին, սակայն պատասխան չի ստացել, ուստի, քանի դեռ կոմիտեի կազմը հայտնի չէ, չի կարելի թույլատրել նրանց գործունեությունը և «Ընդհանրապես արգելել (կոմիտեի – Ռ. Ս.) մուտքն Ալաշկերտի հովիտ» (էջ 862)։

---

[43] 1915 թ. հուլիսի 30-ին և օգոստոսի 4-ին Նախարարների խորհրդի նիստի ժամանակ քննարկում են Կովկասյան բանակի հաղթանակները՝ գտնելով, որ դրանք վնասում են Ռուսաստանի շահերը։ Փոխարքային մեղադրում են, որ նա ցանկանում է վերականգնել Մեծ Հայաստանը. տե՛ս Исмаил–Заде. 2005, 404.

[44] Տիկինը և փոխարքայության ղեկավարությունը նույնիսկ ամբաստանվեցին ցանկացած օպերացիա տապալելու ու խուճապ ստեղծելու մեջ, տե՛ս Переписка В. А. Сухомлинова с Н. Н. Янушкевичем. 1923, 158. տե՛ս նաև Арутюнян. 1971, 315–316.

[45] Հովհ. Թումանյանի որդին՝ Մուշեղը, 1915 թ. մայիսի 26-ին Մանազկերտից գրած նամակում հայտնում է. «Սպաների մեծագույն մասի մէջ տիրում է հայատեաց տրամադրութիւն …։ Բարեբախտաբար, էստեղ կան մի քանի հայ օֆիցերներ եւ, որոնք իրանց ազգասիրական տրամադրութեամբ մի противоядие (հակաթույն – Ռ. Ս.) էն ստեղծում». տե՛ս Ռ. Սահակյան. 2009, 188–189։

Այս վերջին արգելքը, անշուշտ, հասկանալի է: Իշխանությունն Ալաշկերտի հովիտը հարմար էին գտնում գաղութացման համար: Դեռևս 1915 թ. ապրիլի 5-ի զեկուցագրում Ն. Ն. Յուդենիչը փոխարքային առաջարկել էր ռուսական գաղութացման վայր ընտրել Ալաշկերտի հովիտը, որը հարուստ է խոտհարքներով: Գեներալն խորհուրդ է տալիս կայսրության կենտրոնական նահանգներից ուղարկել հնձվորներ, որոնք ոչ միայն կզբաղվեին հողագործական աշխատանքներով, այլև կկազմակերպեին վերաբնակիչների տեղափոխումն Ալաշկերտի հովիտ[46]: 1916 թ. մինչև 1917 թ. հոկտեմբեր ռուսական իշխանությունը իրականացնում է Արևմտյան Հայաստանում հետազոտություններ՝ պարզելու համար տնտեսության զարգացման և գաղութացման հնարավորությունները:

Նկատենք՝ փախստականների հիմնախնդիրն այդպես էլ չլուծվեց: Ինքնին հասկանալի է, որ ռուսական ռազմական իշխանությունը խոչընդոտներ ու տարբեր արգելքներ էր հարուցում, որպեսզի հայերը չվերադառնան Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի շրջաններ: Այսպես, Ն. Ն. Յուդենիչի հրամանի համաձայն՝ վերը նշված վայրեր կարող են վերադառնալ միայն տեղաբնիկ հայերը (էջ 868): Հարց է առաջանում՝ ի՞նչպես կարող էին հայերն ապացուցել, որ տեղաբնիկ են, քանի որ հապշտապ փախուստի ժամանակ շատերը չէին հասցրել վերցնել ոչ միայն անձը, այլև՝ սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ: Ո՞վ կամ ո՞ր մարմինն էր հաստատելու, որ նրանք համարվում են տեղաբնիկներ և այլն:

1915 թ. հոկտեմբերի 23-ին եպիսկոպոս Խ. Մուրադբեկյանը Կովկասում փախստականների տեղավորման գլխավոր լիազոր, գեներալ Վ. Մ. Թամամշևին խնդրում է աջակցել Երևանի նահանգում գտնվող փախստականների կեցության հարցում: Սրբազանը տեղեկացնում է, որ միայն Երևանում ապաստանել են 17 հազարից ավելի արևմտահայ՝ հիմնականում Վանից (էջ 864), իսկ նահանգում՝ 100 հազար հոգի (էջ 866): Նա հայտնում է՝ Բայազետի ու Դիադինի օկրուգներում ապաստանել են մինչև 10 հազար հոգի (էջ 867):

Հայկական հարցի հիմնախնդիրը և ռուսական իշխանությունը

Հայկական հարցի լուծման հետ կապված խնդիրները մեծապես անհանգստացրել են ռուսական իշխանությանը: Հիմնահարցն իր արտացոլումն է գտել ժողովածուի փաստաթղթերում: Դեռևս 1915 թ. մարտի 16-ին Ռազմակայանին կից գեներալ-կվարտիրմեյստեր Յ. Ն. Դանիլովը ներկայացրել է Թուրքիայի հետ ապագա հաշտության պայմանագրով նախատեսվող նախագիծը, որտեղ մանրամասն անդրադառնում է Էրզրումի գրավման հետ կապված խնդիրներին: Գեներալը նշում է, որ քաղաքի՝ 40-ից 50 հազարի բնակչության մոտ կեսը հայեր են (էջ 308:) « … Էրզրումի գրավումը մեզ դեմ առ դեմ կկանգնեցնի ցավոտ Հայկական հարցի հետ …», որը կստիպի շարունակել նվաճումները դեպի արևմուտք: Յ. Ն. Դանիլովի կարծիքով՝ հավանաբար, այս մտավախությունն է ստիպել կովկասյան ղեկավարությանը հրաժարվել Էրզրումի գրավումից՝ այն թողնելով թուրքերին (էջ 308): Նա գտնում է, որ առավել շահավետ է միացնել Ալաշկերտի և Բայազետի հովիտները (էջ 308): Սակայն Գերագույն

---

[46] *Տե՛ս* Арутюнян. 1971, 341; Татищев. 2001, 237.

գլխավոր հրամանատար Ն. Ն. Ռոմանովը պարտադիր էր համարում Էրզրումի գրավումը (էջ 310)՝ իհարկե, ելնելով ռուսական պետության շահերից:

Մարտի 2-ին Հ. Զավրյանը Հայոց ազգային կենտրոնական բյուրոյին ուղղված նամակում ներկայացնում է իր հանդիպումները Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության աշխատակից Ա. Ն. Մանդելշտամի և Պետական դումայի պատգամավոր Պ. Ն. Միլյուկովի հետ, որոնց ընթացքում քննարկել է Կիլիկիան ինքավար Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու հարցը: Պ. Ն. Միլյուկովն աննպատակահարմար է գտել Հ. Զավրյանի առաջարկը: Ա. Ն. Մանդելշտամը խորհուրդ է տվել հանդիպել նախարարին և ներկայացնել Կիլիկիայի խնդիրը (էջ 824):

Մայիսի 4-ին Փարիզում ռուսական դեսպան Ա. Պ. Իզվոլսկին արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին զեկուցում է Հ. Զավրյանի հետ ունեցած հանդիպման ու քննարկված հարցերի մասին: Հանդիպման ժամանակ վերջինս ներկայացրել է ռուսական արտաքին գործերի նախարարությանը տրամադրած հուշագիրը, որտեղ ասվում է, որ Ռուսաստանը մտադիր է դաշնակիցներին առաջարկել Թուրքիայի ավատիշխանության և Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի հովանավորության տակ հիմնել ինքնավար Հայաստան (էջ 334): Դեսպանը հարցնում է նախարարին՝ արդյո՞ք ծրագիրը հավանություն է ստացել նախարարության կողմից: Մայիսի 5-ի պատասխանում Ս. Դ. Սազոնովը հայտնում է. «Հայերի հետ զրույցներն ունեցել են ակադեմիական բնույթ: Զավրիևի ծրագրին որևէ որոշակի ցուցում չի տրվել» (էջ 335):

Հունիսի 16-ին Ս. Դ. Սազոնովը Ն. Ն. Ռոմանովին ուղղված նամակում իր կարծիքն է հայտնում ռուսական զորքերի կողմից Մեծ Հայաստանի հետագա ճակատագրի մասին: Դիվանագետի համոզմամբ՝ ռուսական իշխանությունը կանգնած է մի բարդ խնդրի՝ Հայկական հարցի լուծման հետ (էջ 887): Նախարարը հիշեցնում է, որ գրավված տարածքներում հայերը երբեք թվապես չեն գերազանցել մահմեդականներին, առավել ևս՝ կտորածներից հետո: Ս. Դ. Սազոնովի կարծիքով՝ հայերը դժվար թե կազմեն տեղի բնակչության մեկ քառորդը և «... հայերին ինքնավարություն տալը կհանգեցնի փոքրամասնության կողմից մեծամասնության շահագործմանը» (էջ 888)[47]: Դիվանագետը առաջարկում է արևմտահայերին թույլատրել ինքնուրույն տիրապետել դպրոցական և եկեղեցական կապիտալներն ու գույքը, ներկայացուցիչներ ունենալ քաղաքային և գյուղական մարմիններում: Նույն կերպ պետք է վարվել մահեդականների հետ՝ հաշվի առնելով տեղական պայմանները և կուլտուրական զարգացման մակարդակը (էջ 888): Նա ահազանգում է, որ մահմեդականները զավթում են բռնագաղթված կամ սպանված հայերի սեփականությունը (էջ 888):

Հունիսի 26-ին կաթողիկոս Գևորգ Ե-ն հանդիպում է փոխարքա Ն. Ն. Ռոմանովի հետ: Վեհափառը հայտնում է, որ Հայկական հարցը գոյություն ունի միայն Թուրքահայաստանում (Արևմտյան Հայաստանում), հույս ունի՝ հայերի

---

[47] Վանում նախկին ռուսական փոխհյուպատոս Ս. Պ. Օլֆերևի համոզմամբ՝ նախընտրելի է ստեղծել ինքնավար Քրդստան, այլ ոչ թե՝ ինքնավար Հայաստան, քանի որ Կովկասում բնակվում են 1,5 միլիոն հայեր և ընդամենը 130 հազար քրդեր: Հայերին ինքնավարություն շնորհելը կհանգեցնի ռուսահպատակ հայերի անջատողական գործողություններին. տե՛ս М о с а к и. 2019, № 1, 45.

ահռելի կորուստները կգնահատվեն, և արևմտահայությունը իրավունք կունենա իր հողի ու պատվի տերը լինել: Մեծ իշխանը հավաստիացնում է, որ «իր կարծիքով հայ ժողովրդին լուսավոր ապագա է սպասում իր հայրենիքում և համոզված է, որ հայությունը ամբողջությամբ գոհ կլինի ռուսական կառավարությունից» (էջ 889): Միաժամանակ փոխարքան հայտնում է, որ Բիթլիսի շրջանում որոշ դեպքեր են տեղի ունեցել[48], որի մասին նա առայժմ լռում է՝ խնայելով կաթողիկոսին: Հրամայել է հետաքննել, ուստի խնդրում է կաթողիկոսին երկու ներկայացուցիչ նշանակել, որպեսզի նրանք ևս ընդգրկվեն քննիչ հանձնաժողովում: Փոխարքա Ն. Ն. Ռոմանովը հայտնում է, որ գեներալ Ն. Ն. Պեշկովը շուտով նշանակվելու է «Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մարզերի» գեներալ-նահանգապետ, և նա հանդիպում կունենա Գևորգ Ե-ի հետ (էջ 889)[49]:

Փոխարքայի հետ հանդիպման ընթացքում կաթողիկոսը բարձրացնում է փախստականների հիմնախնդիրը, քանի որ նրանց թույլ չեն տալիս վերադառնալ իրենց բնակավայրերը և տիրապետել ունեցվածքին, որի համար պահանջում են սեփականությունը հաստատող փաստաթղթեր: Գևորգ Ե-ն նշում է, որ հայերի ունեցվածքը կողոպտված է, իսկ տները՝ հրկիզված կամ ավերված, ուստի, եթե եղել են փաստաթղթեր, ապա դրանք ոչնչացվել են: Վեհափառը վկայակոչում է Ռուսաստանը, որտեղ գյուղացիները դարերով չունեն սեփականության վերաբերյալ որևէ վկայական (էջ 890):

1916 թ. հուլիսի 3-ին Ս. Դ. Սազոնովին գրած նամակում՝ խնդրո առարկա Հայկական հարցի առնչությամբ, Ն. Ն. Ռոմանովը պարզաբանում է. «Իմ խորին համոզմամբ Հայկական հարցը ներկայումս գոյություն ունեցող Ռուսական կայսրությունում բացարձակապես գոյություն չունի, և նույնիսկ չպետք է թույլ տալ դրա մասին հիշատակություն…» (էջ 891): Ըստ փոխարքայի՝ Ռուսաստանը նաև չի կարող հաշվի չառնել հայ ժողովրդի տառապանքները, որը նա կրել է պատերազմի ժամանակ: Նա համաձայնվում է նախարարի հետ, որ արևմտահայերին կարելի է թույլատրել տնօրինել եկեղեցական ու դպրոցական գործերը, ներկայացուցիչներ ունենալ քաղաքային և գյուղական ինքնավարություններում: Նույն մոտեցումը պետք է դրսևորել նաև ոչ քրիստոնյա բնակչության նկատմամբ (էջ 892):

Ինչևէ. ռուսական կառավարությունը Հայկական հարցը «լուծեց» 1916 թ. հունիսի 5-ին, երբ հրապարակվեց Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ, գեներալ Մ. Վ. Ալեքսեևի հրամանը Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մարզերի ժամանակավոր կանոնադրությունը, որը հաստատվել էր Նիկոլայ II-ի կողմից (էջ 870–887):

---

[48] 1916 թ. հունիսի 29-ին զինվորական քահանա Ռ. Բեկգուլյանցը, Թ. Նազարբեկյանին գրած նամակում անդրադառնալով փոխարքայի ակնարկին, հաղորդում է. «Զարմանալի է, ասես բոլոր չար դևերը հավաքվել են մեր ազգի կործանման համար: Ամեն զզվելի, ամեն ստոր, ամենը, որ կարող է վնասել հայերին, ներկայացվում է փոխարքային խտացված, մեր գործին ամենավնասակար տեսքով: Ամեն ինչ մոռացվում է, ինչ որ անում են հայերը, չեն նկատում». տե՛ս Սահակյան. 2021, № 2, 269:

[49] Արևմտյան Հայաստանի վարչական կառավարման վերաբերյալ տե՛ս էջ 817–992:

Իրավիճակը փոխվում է 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, հատկապես՝ ապրիլի 26-ին ժամանակավոր կառավարության կողմից Թուրքահայաստանի մասին որոշումն ընդունելուց հետո: Ռուսական զորքի կողմից գրավված Արևմտյան Հայաստանը դուրս է բերվում կովկասյան ու զինվորական իշխանությունների ենթակայությունից և անմիջականորեն ենթարկվում ժամանակավոր կառավարությանը: Լուծարվում է զինվորական գեներալ-նահանգապետի պաշտոնը, և իշխանությունն անցնում է Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստանի) գլխավոր կոմիսար, գեներալ Պ. Ի. Ավերյանովին (էջ 978): Վերջինս 1917 թ. նոյեմբերի 9-ի հրամանում կարգադրում է գրավված տարածքներում՝ Վանի, Խնուսի և Էրզրումի շրջաններում, հայերին ևս ներգրավվել՝ վարչական ու տնտեսական խնդիրները լուծելու համար (էջ 988): Դեկտեմբերի 18-ին գլխավոր կոմիսարը հրամայում է հայերից կազմել չորս գունդ (էջ 989): Դա տեղին էր, սակայն՝ բավական ուշ: Արդեն 1918 թ. փետրվարին դեռևս կազմավորումը չավարտած հայոց զինուժը հարկադրված էր դիմագրավել թշնամու հարձակմանը և Մայիսյան հերոսամարտերում ապացուցել իր գոյատևման իրավունքը:

Ցեղասպանության հիմնախնդրի լուսաբանումը

Ժողովածուում կան որոշ փաստաթղթեր, որոնք վկայում են արևմտահայության զանգվածային կոտորածների՝ ցեղասպանության մասին: Պատերազմի սկզբում կոտորածների մասին տեղեկություններն անորոշ էին, մի շարք դեպքերում՝ հակասական, սակայն, երբ ռուսական բանակը 1915 թ. գարնանը խորացավ հակառակորդի տարածքում, տեղեկությունները սկսեցին հաստատվել նաև ռուս հրամանատարների կողմից: Այսպես, 1915 թ. մարտի 6-ի ռուսական զեկուցագրում նշվում է՝ Դիլմանի շրջանում հայերի ջարդի ոգեշնչողը Վանի նահանգապետ Ջևդեթն էր (էջ 303): Մարտի 13-ին գեներալ Լ. Մ. Բոլխովիտինովը հրաման է ստանում պաշտպանել Ուրմիայի և Դիլմանի քրիստոնյաներին թուրք-քրդական հարձակումներից: Ամերիկյան միսիոներ Լաբորիի հաղորդման համաձայն՝ թուրք ժանդարմները նպատակ ունեն կոտորել քրիստոնյաներին (էջ 825):

Ապրիլի 5-ի ռուսական տեղեկությունների համաձայն՝ թուրքերի կողմից ոչնչացվել է Վանի նահանգի 14 հայկական գյուղ (էջ 316, 319): Արճեշցի փախստականները հայտնում են երկու հազար հայերի կոտորածի մասին (էջ 318): Ապրիլի 7-ին կաթողիկոսը Ս. Դ. Սազոնովին ուղղված հեռագրում հայտնում է, որ հավաստի տեղեկություններ է ստացել Էրզրումում, Զեյթունում, Բիթլիսում, Վանում հայ բնակչության կողոպուտի և կոտորածների մասին: Վեհափառը խնդրում է նախարարին դիմել չեզոք երկրներին, որպեսզի միջամտեն ու պաշտպանեն հայերին (էջ 826–827):

Ապրիլի 12-ին փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, Ն. Ն. Ռոմանովին զեկուցելով ռազմաճակատում ընթացող կռիվների մասին, միաժամանակ հայտնում է Վանում սկսված ապստամբության մասին (էջ 319): Ռուսական օպերատիվ ամփոփագրերում շարունակվում են հիշատակվել Վանի շրջանում քրդերի կողմից հայերի զանգվածային կոտորածների մասին (էջ 320–321): Ապրիլի 19-ին Պ. Ա. Տոմիլովը հայտնում է. «Վանի շրջանում հայերի կոտորածը կազմակերպված բնույթ ունի: … որպես բանվորներ տանում են 18-ից 80 տարե-

կան բոլոր տղամարդկանց, ձերբակալում, ապա գնդակահարում վաղօրոք նախատեսված վայրերում…» (էջ 321):

Հուլիսի 8-ին Պ. Ի. Օգանովսկին, Պ. Ա. Տոմիլովին զեկուցելով ընդհանուր իրավիճակը, միաժամանակ հայտնում է Մշո դաշտում հայերի զանգվածային կոտորածների մասին: Քաղաքից տարհանվել են մահմեդականները, «որից հետո, իբր, սկսել է քաղաքի ռմբակոծությունը» (էջ 390): Թուրքական բանակը հրետակոծել է Մուշի հայկական թաղամասում ինքնապաշտպանության դիմած հայերին: Ժողովածուում բերվում են երկու ռուս սպաների վկայությունները Մուշի և գավառի հայության զանգվածային կոտորածների մասին (էջ 896–898, 900):

Նկատենք, որ ժողովածուում ցեղասպանության վերաբերյալ հիմնական տեղեկությունները ներկայացվել է Հայաստանի ազգային արխիվի կողմից, որոնք ջարդերից փրկված հայ փախստականների վկայություններ են (էջ 896–898, 900, 996–1009):

Դիտողություններ և ցանկություններ

Ամփոփելով ժողովածուում ընդգրկված նյութերի մասին շարադրանքը՝ կազմողների ուշադրությանն արժանի մի շարք դիտողություններ և ցանկություններ հայտնենք: Այսպես.

1. առաջաբանում նշվում է, որ Սարիղամիշի շրջանում մարտական գործողությունները շարունակվում են մինչև 1915 թ. հունվարի 6-ը (էջ 13): Ընդհանրապես, պատմագրությունում ավարտը համարվում է հունվարի 5-ը, իսկ հունվարի 6-ին տեղի են ունեցել տեղական բախումներ փախչող թշնամու հետ:

2. Առաջաբանում անդրադառնալով Վանի 1915 թ. ապրիլ–մայիս ինքնապաշտպանությանը՝ նշվում է, որ քաղաքի հայկական թաղամասերը շրջապատվել էին թուրքական ժանդարմական ուժերի կողմից (էջ 16), սակայն մոռացության է մատնվել, որ հիմնական մարտական ուժը հանդիսացել են թնդանոթներով ու գնդացիրներով զինված օսմանյան բանակը, քրդական և չերքեզական ջոկատները: Դրա վերաբերյալ կան օտարերկրացիների, այդ թվում՝ թուրքական ծառայության մեջ գտնվողի վկայությունը:

Առաջաբանում նաև նշվում է՝ թուրք պատմաբանները, հիմնվելով թուրքական փաստաթղթերի վրա, հայտարարում են, որ վանեցիների ապստամբությունը համաձայնեցվել է ռուսական զորքի հարձակման հետ, այսինքն՝ եղել է մի ինչ-որ «դավադրական» պլանի մաս, այլ ոչ թե՝ պայքար սեփական կյանքի (ինքնապաշտպանության) համար: Տրվել է հետևյալ ձևակերպումը. «Ռուսական արխիվային փաստաթղթերը չեն հաստատում այդ ողբերգական իրադարձությունների նման մեկնաբանումը» (էջ 16): Հայտնի է, որ, այսպես կոչված, «այդ ողբերգական իրադարձությունը» կամ «Թուրքիայի հայ բնակչության նկատմամբ բռնության փաստեր» (էջ 41, 42) արտահայտությունները կիրառելով՝ խուսափել են գործածել հանցագործության իրավական անվանումը՝ ցեղասպանություն: Առաջաբանում չկա որևէ բացատրություն, թե ինչո՞ւ էին երիտթուրքերը զանգվածաբար կոտորում և բռնագաղթի ենթարկում արևմտահայերին: Նույնը վերաբերում է ինքնապաշտպանական մարտերին: Նշվում է, որ ժողովածուում ներկայացված հայ փախստականների վկայությունները հայերենից ռուսերեն թարգմանվել են Հայաստանի ազգային արխիվի մասնագետների կողմից 2012–2013 թթ. (էջ

43): Այս կերպ կարծես ակնարկում են՝ նշված փաստաթղթերը ռուսական չեն, այլ՝ հայկական, այն էլ՝ թարգմանված. այսինքն՝ կարելի է ենթադրել, որ իրենք պատասխանատվություն չեն կրում թարգմանության համար:

3. Ցեղասպանության առաջին դեպքերը տեղի են ունեցել 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ռուսահպատակ հայերի նկատմամբ՝ Բաթումի մարզում գործել են հատուկ նշանակության «Թեշքիլաթը մահսուսեի» ջոկատները, որոնց մասին որևէ տեղեկատվություն բացակայում է: Թուրքերին աջակցել են մարզի աջար ու լազ բնակչությունը, որի համար ռուսական կառավարությունը քննարկել էր մահմեդականներին սեփականությունից զրկելու և Օսմանյան կայսրություն աքսորելու հարցը: Դա շատ լավ հայտնի էր առաջաբանի պատմական մասի հեղինակ Դ. Գ. Մարտիրոսյանին, որն այդ մասին հոդված ունի: Նշենք, որ արևմտահայության ցեղասպանության վերաբերյալ կան օտարերկրացի ականատեսների՝ դեսպանների, հյուպատոսների, միսիոներների և այլոց բազմաթիվ վկայություններ:

4. Բացակայում են փաստաթղթեր ռուս-թուրքական ճակատում հունական, ասորական և մահմեդական կամավորական խմբերի կազմավորման մասին: Չի պարզաբանվում, թե ինչո՞ւ ռուսական հրամանատարությունը լուծարեց մահմեդականներից կազմված փոքրաթիվ խումբը: Նաև չի նշվում, թե ի՞նչ պատճառով վրացական դրուժինները Տրապիզոնից տեղափոխվեցին Հյուսիսային Պարսկաստան:

5. Բայազետի ջոկատի կազմում նշվում են երեք հայկական դրուժիններ. իրականում դա Արարատյան գունդն էր ու կազմված էր II, III և IV դրուժիններից (էջ 16):

6. Ինչպե՞ս ռուսական հրամանատարության մոտ հասունացավ Վանին «օգնության» հասնելու որոշումը: Իրականում Անդրկասպյան կազակային բրիգադը հրաման էր ստացել ջախջախել Դիլմանի ճակատամարտից հետո նահանջող Հալիլին, որն ուղղվում էր Վան: Միայն այդ պատճառով էր, որ ռուսական զորքերը հասան Վան տանող ճանապարհը, սակայն հրաման չունեին օգնության հասնել քաղաքին: Իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, որ գեներալ Ա. Մ. Նիկոլաևի Բայազետի ջոկատին հանձնարարվել էր օգնել Վանի հայերին (էջ 16): Գեներալը հրաման էր ստացել մնալ Բերկրիում, որի մասին հայտնում է Արարատյան գնդի հրամանատար Վարդանին: Վերջինս հրավիրում է հրամանատարների խորհրդակցություն և որոշվում է առաջանալ առանց ռուսական աջակցության[50]: Առաջաբանում նշվում է, որ Բայազետի ջոկատը գրավում է Վանը (էջ 16): Իրականում առաջինը Վան է մտնում Արարատյան գունդը, ավելի ստույգ՝ հետախուզական հեծելաջոկատը, ապա՝ գունդը և նոր միայն՝ Բայազետի ջոկատը: Պարզապես անհրաժեշտ էր նշել, որ ռուսական զորքի անսպասելի առաջացման պատճա-

---

[50] Բայազետի ջոկատի սպա Ֆ. Ելիսեևը հետևյալ կերպ է բացատրում Վան առաջանալուց հրաժարվելը. «Հեծյալ գնդերը չէին կարող շարժվել: Գիշերով հեծելազորին մոտենալ այդ մեծ գրեթե եվրոպական քաղաքին, ինչպիսին հանդիսանում էր Վանը, վտանգավոր էր: Այդպես էին ասում շտաբերում …: Սակայն հայկական դրուժինները չդիմացան՝ գիշերը գնացին իրենց «ավետյաց քաղաքը» կամ «Հայկական Մոսկվան», ինչպես նրանք անվանում էին Վանը». տե՛ս Մ ե լ ք ո ն յ ա ն. 2004, 183–184:

ռով էր, որ թուրք-քրդական ուժերը դադարեցրին Վանի պաշարումը: Սա է իրականությունը:

7. Առաջաբանում որևէ հիշատակություն չկա երիտթուրքերի ռազմավարական ծրագրի՝ «Մեծ Թուրան» երևակայական պետություն ստեղծելու և նրա սահմանների մասին, որի համար էլ կայսրությունը մտավ պատերազմի մեջ: Նշենք, որ մեր օրերում Թուրքիան շարունակում է փայփայել նման ծրագրի իրականացումը:

8. Նախաբանում անհրաժեշտ էր նշել, որ իրականությանը չեն համապատասխանում ժանդարմական զեկուցագրերը հայերի «հեղափոխական» գործունեության մասին, որը նպատակ ուներ հեղափոխություն առաջացնել Ռուսաստանում: 1917–1918 թթ. ու հետագա իրադարձությունները ցույց տվեցին, թե ովքեր էին իրական հեղափոխականները, ավելի ստույգ՝ խռովարարները:

9. Ռուսական հրամանատարությունը խմբերը օգտագործում էր առանձինառանձին՝ աշխատելով, որպեսզի նրանք ցրված լինեն ռազմաճակատի տարբեր հատվածներում և երբեք միավորված չլինեն: Միայն 1915 թ. հուլիսին դրուժինաները միավորվեցին գեներալ Տրուխինի ջոկատի մեջ. դրանից հետո այլևս նման փորձ չկատարվեց: Կառավարության հակահայ դիրքորոշումը թույլ չտվեց դրուժինաների թիվն ավելացնել արդեն հայտնի պատճառներով: Իշխանությունը նպատակամղված վարկաբեկիչ լուրեր էր տարածում կամավորների վերաբերյալ՝ նման կերպ հող ստեղծելով նրանց լուծարման համար:

10. Վանն ազատագրելուց հետո անդրադարձ չի կատարվել Վանի և ազատագրված նահանգների ժամանակավոր վարչության (նահանգապետության) կազմակերպման և գործունեության, Ա. Մանուկյանին ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) նշանակելու մասին: Կարելի է ենթադրել, որ նախաբանում հարկադրված կլինեին բացատրել, թե ինչո՞ւ 1915 թ. հուլիսյան նահանջից հետո, երբ քաղաքը վերագրավվեց ռուսների կողմից, սակայն հայերից կազմված իշխանությունը չվերականգնվեց:

11. Մեղադրելով հայերին քրդերին ու թուրքերին կոտորելու մեջ՝ մոռացության են մատնվում Վանի թուրքական թաղամասում մնացած մոտ հազար մահմեդական կանանց ու երեխաների վերաբերյալ հայերի ցուցաբերած մարդկային վերաբերմունքը: Նրանց հոգածությունը ստանձնել էին ամերիկյան միսիոներները և գրող Լև Տոլստոյի դուստրը՝ Ալեքսանդրան:

12. Առաջաբանում, որտեղ մանրամասն խոսվում է մարտական գործողությունների մասին, որևէ մեկնաբանություն կամ կարծիք չի հայտնվում, թե ինչո՞ւ էր ռուս-թուրքական ռազմաճակատը համարվում երկրորդական, համաշխարհային պատերազմի ընթացքի վրա որևէ ազդեցություն չունեցող ռազմաթատերաբեմ: Վկայակոչված փաստերն այնքան էլ համոզիչ չեն: Արդյո՞ք միտումնավոր չէր նման վերաբերմունքը: Այստեղ իրենց դերն են ունենում անգլիացիները, որոնք ռուսներից պահանջում էին ակտիվացնել գործողությունները եվրոպական ռազմաբեմում: Հարցեր, որոնց պատասխանը չի երևում ժողովածուում ընդգրկված փաստաթղթերում: Օսմանյան կայսրությունը Քառյակ միության թույլ օղակն էր, որի պարտությունը վճռական նշանակություն կունենար պատերազմի ընթացքի վրա, և, հավանաբար, պատերազմը կավարտվեր ոչ թե 1918 թ., այլ՝ ավելի վաղ:

13. Որևէ ակնարկ չի արվում Էրզրումի գրոհի ժամանակ կարևոր դեր խաղացած հայ-ասորական հետախուզական խմբի մասին, որը, գործելով ռուսների հետ, կարողանում են ձեռք բերել հետախուզական կարևոր տեղեկութ-

յուններ, որոնք վճռական նշանակություն են ունենում ամրոցի գրավման համար:

14. Հրամանատարներն իրենց զեկուցագրերում հայտնում էին քրդական հարձակումների մասին, որոնց դեմ հաջողությամբ պայքարում էին հայ ու ասորի կամավորները, քանզի լավ գիտեին տեղանքը, լեզուները, թշնամուն և կարողանում էին հիմնականում կասեցնել քրդերի գրոհները: 1916 թ. հայերից կազմված դրուժինաների լուծարումը հնարավորություն տվեց, որպեսզի քրդերն ուժեղացնեն հարձակումները բնակավայրերը վերականգնող հայերի ու ռուսական զորամասերի վրա:

15. Փաստաթղթում օգտագործվել է «Արևելյան Հայաստան» աշխարհագրական եզրույթը, որը պետք էր պարզաբանել, որ նկատի ունեն Էրզրումից արևելք ընկած հայկական տարածքները (էջ 308):

16. Ժողովածուում որևէ ակնարկ չկա Սեծովյան ռազմական նավատորմի և հայ կամավորների համատեղ դիվերսիոն-հետախուզական գործողությունների մասին:

17. Ժողովածուում չի հիշատակվում, որ Տրապիզոնի անցումը ռուսներին հնարավորություն էր ստեղծում նախապատրաստել Կ. Պոլսի գրավման օպերացիան, և ինչո՞ւ այն չիրականացվեց:

18. Կարծում ենք, որ ռազմաճակատը պետք էր անվանել ռուս-թուրքական, քանի որ մարտական գործողությունները չեն ընթացել Կովկասում:

Եզրակացություն

Հարկ ենք համարում կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Ժողովածուի կազմողները կատարել են զգալի հետազոտական աշխատանք: Ովքեր ուսումնասիրություններ են կատարել արխիվներում, գիտեն, թե դա ինչ երկարատև և համբերատար աշխատանք է պահանջում: Անշուշտ, դա արվել է կազմողների կողմից, սակայն կա մի բաց՝ կապված հայ կամավորական շարժման ու արևմտահայության ցեղասպանության հետ: Կովկասում կամավորական շարժման հիմնական նախաձեռնողը Կովկասի փոխարքայությունն էր: Թույլատրվեց հետախուզման մեջ գտնվող ՀՅԴ գործիչներին վերադառնալ և մասնակցել դրուժինաների ձևավորմանը: Կամավորական շարժումը ներկայացնող փաստաթղթերը հիմնականում միակողմանի են: Հեղինակները (խոսքը վերաբերվում է ռուսաստանցի կազմողներին) ընտրել և տեղադրել են այն փաստաթղթերը, որոնք բացասական կողմից են ներկայացնում կամավորական շարժումը, որտեղ հայերը հանդես են գալիս որպես ավազակներ, անկարգապահ և անկազմակերպ զինվորական կազմավորումներ, իսկ հարձակման հիմնական թիրախը ՀՅ Դաշնակցությունն է: Ընթերցողի մոտ այն տպավորությունն է ստեղծվում, որ նման վավերագրեր բացակայում են կամ էլ, ընդհանրապես, գոյություն չունեն: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել մեծ թվով կամավորների պարգևատրումը ռուսական մարտական շքանշաններով և մեդալներով:

Հայկական աղբյուրներում նմանապես նշվում է կամավորների կողմից զինվորական կարգապահության խախտման դեպքերի մասին: Ավելին, Անդրանիկի հրամանով դրուժինայում կազմակերպվում է ռազմական ոստիկանություն և ռազմական դատարան: Ժողովածուում չեն բացահայտվում պատճառները, որոնց հետևանքով տեղի էին ունեցել զանցանքներն ու հանցանքներ:

Թուրքական «անսպասելի» հարձակումը հնարավորություն չի տալիս կամավորականների ընտրություն կատարել: Դեռ ամբողջությամբ չկազմակերպված ու չհամալրված խմբերը շտապ ուղարկվում են ռազմաճակատ: Հավաքվել էին տարբեր տարիքի, սոցիալական ծագման, միմյանց անծանոթ և բազմաբարբառ մարդիկ, որոնք երբեմն միմյանց դժվար էին հասկանում: Կամավորները չունեին ձմեռային հագուստ, ապահովված չէին պարենով, բուժծառայությամբ, կապի միջոցներով, դաշտային խոհանոցներով և այլնով: Դա պատճառ է դառնում, որպեսզի առաջանան դժգոհություններ և դասալքություն: Այս ամենը հաշվի առնելով՝ շարժման ղեկավարությունը 1915 թ. հունվարից հետո սկսեց ավելի ուշադիր վերաբերվել զինվորագրվողներին, և նրանց հետ անց էին կացվում զինվորական պարապմունքներ, ուսուցանվում էին կարգապահական կանոնադրություն և այլն:

Հարկավ, հայկական դրուժինաների մարտական հաջողությունները պայմանավորված էին ռուսական զորքի հետ համատեղ գործողություններում, որը անհերքելի է, սակայն դա չի նվազեցնում կամավորների մղած մարտերը: Դրուժինաների շնորհիվ փրկվում են տասնյակ հազարավոր հայեր: Կամավորների ներկայությունը հարկադրում է քրդերին վերադարձնել հափշտակած կանանց ու երեխաներին:

Կամավորների մարտական աշխատանքը գնահատվում էր նրանց հետ անմիջականորեն կռվի մեջ գտնվող ռուս, կազակ զինվորների և ստորին ու միջին օղակի սպաների կողմից:

Մեկ այլ կարևոր հանգամանք. 1916 թ. ապրիլին գերմանական հետախուզությունը Բեռնում հիմնում է «Ռուսաստանի ոչ ռուս ժողովուրդների» լիգա, որի նպատակն էր կայսրությունում ազգային փոքրամասնություններին շրջանում հրահրել անջատողական շարժումներ և խռովություններ: Նշենք, որ գերմանական փողերից, միջնորդավորված, իրենց բաժինն են ստանում նաև բոլշևիկները: Միակը հայերն էին, որոնք հրաժարվեցին որևէ մասնակցություն ունենալ լիգային, նույնիսկ այն բանից հետո, երբ լուծարվում են դրուժինաները, և Արևմտյան Հայաստանին չի տրվում ինքնավարություն: Այնպես որ, հայերին մեղադրել հակառուսական քաղաքականության և «հեղափոխություն» նախապատրաստելու մեջ, անհիմն են: 1917 թ. վերջին Հայաստանից հեռացող ռուս զինվորը և սպան հայերի կողմից որևէ հարձակման չենթարկվեց՝ ի տարբերություն կովկասյան թաթարների:

Կազմողների ուշադրությունից վրիպել է հետևյալը՝ 1. ինչո՞ւ փետրվարյան հեղափոխությունից հետո Ժամանակավոր կառավարությունն առաջնահերթ էր համարում հայերից կազմել զինվորական կանոնավոր ստորաբաժանումներ: Զգալի թվով ռուս սպաներ մնացին ծառայելու ՀՀ զինված ուժերում:

2. Արևմտահայության ցեղասպանության հետ կապված փաստաթղթերը ամբողջական չեն: Փաստաթղթերում միայն կան ակնարկներ, ոչ հստակ փաստեր: Միայն հայ արխիվիստների կողմից ներկայացված վավերագրերից կարելի է որոշակի պատկերացում կազմել հայերի ցեղասպանության մասին:

3. Հայկական հարցը ներկայացնող փաստաթղթերն ամբողջությամբ բացահայտում են ցարիզմի երկդիմի քաղաքականությունը: Գրագրությունից հետևում է, որ կառավարությունն որևէ նպատակ չի ունեցել արևմտահայերին շնորհել ռուսական հովանավորության ներքո ինքնավարություն: Փորձ է արվում հայերին փոխարինել քրդերով, սակայն՝ ապարդյուն: Ռուսների համար միակ հենարանը կարող էին լինել հայերը և ասորիները, որոնց թողեցին բախտի քմահաճույքին: Նրանց հնարավորությունները գնահատվեցին բավականին ուշ՝ 1917 թ., երբ Ռուսաստանում տեղի էին ունենում քաղաքական լուրջ

իրադարձություններ, որոնց հետևեց ռուսական զորքի հեռացումը ռուս-թուրքական ռազմաճակատից:

Ժողովածուից այն տպավորությունն է ստեղծվում, որ այն կազմվել է քաղաքական նկատառումներով, այլ ոչ թե՝ պատմական անաչառությունից ելնելով:

Ռուբեն Սահակյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, հայկական ոստիկանության պատմություն: Հեղինակ է 14 գրքի, փաստաթղթերի և նյութերի ժողովածուների, շուրջ 100 հոդվածի:
rubensahakyan58@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասրյան Ա. 2007, Վանի նահանգապետության և ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տեսակետները նահանգապետության տարածքում քրդերի վերաբնակեցման մասին.– «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1–2, էջ 31– 36:

Կարապետյան Մ. 1999, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Երևան, «Գիտություն», 335 էջ:

Կիրիմյան Ա. 2005, Վարդան Մազմանյանի վկայությունները Բաթումի մարզի Տանձոտ գյուղի հայ բնակչության կոտորածների մասին.– «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 3–17:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 29–30:

Մելիքյան Վ. Հ. 1997, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, «Մխիթար Գոշ», 320 էջ:

Մելքոնյան Ա. 2004, Ուշագրավ աշխատություն. Ֆյոդոր Ելիսեև. «Կազակները Կովկասյան ճակատում 1914–1917.– «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 176–193:

Մեհրաբյան Ս. 2022, Խանասորի Վարդանի հիշատակարանը. հրատարակության պատրաստեց՝ Ռ. Սահակյանը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 260 էջ:

Նազարյան Ա. Ս. 1999, Հայկական զորամասերի կազմավորումը կովկասյան ճակատում (1914–1918 թվականներին), Երևան, «Զանգակ-97», 240 էջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2015, ԺԱ հատոր, հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ Երուանդ Փամպուքեանի, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեանի հրատարակչատուն, 448 էջ:

Սահակյան Ռ. 2009, Մուշեղ Թումանյանի նամակ զեկուցագիրը «Հայոց գյուղատնտեսական ընկերության» լիազոր Արշակ Թադևոսյանին Ալաշկերտում տարվող վերականգնողական աշխատանքների մասին.– «Վէմ» (Երևան), № 3, 186–190:

Սահակյան Ռ. 2012, Փաստաթղթեր Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսահպատակ հայերի զանգվածային կոտորածների մասին.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 4, էջ 257–276,

Սահակեան Ռ. 2013, Բաթումի նահանգի հայութեան կողոպուտն ու սպանութիւնները Ա. Համաշխարհայինին սկզբում՝ 1914ի աշնան (փաստաթղթեր).– «Հայկազեան Հայագիտական Հանդէս» (Պէյրութ), թիւ ԼԳ, էջ 7–45:

Սահակյան Ռ. 2019, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը.– «Վէմ» (Երևան), № 1, էջ 264–296:

Սահակյան Ռ. 2019, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը.– «Վէմ», № 2, էջ 292–328:

Սահակյան Ռ. 2019, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը.– «Վէմ», № 4, էջ 270–299:

Սահակյան Ռ. 2020, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը.– «Վէմ», № 1, էջ 254–300:

Սահակյան Ռ. 2020, Կամավորական Սուրեն Չեթիկյանի հուշերը Առաջին համաշխարհայինն պատերազմի մարտական գործողությունների մասին. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 129, էջ 139–167:

Սահակյան Ռ. 2021, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը.– «Վէմ», № 2, էջ 258–288:

Андраник Озанян. Документы и материалы. 1991. Составители: руководитель Арутюнян А. О., Арутюнян Г. Г., Эвоян В. С., Мирзоян С. С., Сафарян П. Г., Шатирян Г. М.– «Вестник архивов Армении» (Ереван), 493 с.

Арутюнян А. О. 1971, Кавказский фронт 1914–1917 гг. Ереван, «Айастан», 414 с.

А–Тъ. 1916, Из дневника участника Кавказского фронта.– «Военный Вестник» (Петроград), июль, № 7, с. 133–142.

Верховский А. И. 1959, На трудном перевале. М., Воениздат, 448 с.

Габдрафикова Л. Р., Абдуллин Х. М. 2015, Татары в годы Первой мировой войны (1914–1918 гг.). Казань, Институт истории им. Ш. Марджани, 396 с.

Джунковский В. Ф. 1997, Воспоминания, т. второй. Предисл. и примеч. И. М. Пушкарёвой и З. И. Перегудовой. М., «Издательство им. Сабашниковых», 685 с.

Исмаил–Заде Д. И. 2005, Граф И. И. Воронцов–Дашков. Наместник Кавказский. М., Центрополограф, 512 с., илл.

Кавказский фронт Первой мировой войны. 1914–1917 гг. Сборник документов. 2020. Отв. ред. Артизов А. Н. М., Фонд «Связь эпох», 1168 с., 16 с. илл.

Корсун Н. Г. 1937, Сарыкамышская операция на Кавказском фронте мировой войны в 1914–1915 году. М., Государственное военное издательство Наркомата обороны Союза ССР, 164 с., илл.

Корсун Н. 1940, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году. М., Государственное военное издательство Наркомата обороны Союза, 200 с., 11 л. карт.; табл.

Масловский Е. В. 1933, Мировая война на Кавказском фронте 1914–1917 г. Стратегический очерк. Париж, «Возрождение» – "La Renaissance", 503 с., 16 л. илл.

Мартиросян Д. Трагедия батумских армян: просто "резня" или предвестник армянского геноцида? –http://regnum.ru/news/1236705.htm (մուտք՝ 19. 12. 2009).

Мосаки Н. З. 2019, «Письма из Турции» вице–консула в Ване С. П. Олферьева.– «Восточный архив» (Москва), № 1, с. 41–48.

Офицеры-армяне Первой мировой войны. Офицеры армии Республики Армения. 1914–1920. Историко-биографический словарь. 2022, сост. д. и. н. А. С. Вирабян, к. и. н. С. С. Мирзоян. Ереван, Национальный архив Армении, 1392 с., 40 с. илл.

Переписка В. А. Сухомлинова с Н. Н. Янушкевичем. 1923. – «Красный архив», Москва–Петроград, т. второй, с. 130–175.

Переписка В. А. 1923, Сухомлинова с Н. Н. Янушкевичем.–«Красный архив». Москва–Петроград, т. третий, с. 29–74.

Перинчек М. 2011, Армянский вопрос в 120 документах из российских государственных архивов. М., «Лаборатория книги», 256 с., илл.

Пипия Г. В. 1978, Германский империализм в Закавказье в 1910–1918 гг. М., «Наука», 223 с.

Ратцингер И. Адвокатам каннибализма: Факты о резне армян и айсоров в Турции и Иране. https://web.archive.org/web/20180627144503/https://reg num. ru/news/1173806.html (մուտք՝ 28. 08. 2023):

Саакян Р. 2014, Отчет профессора В. В. Сапожникова о предворительном исследовании некоторых районов Западной Армении, завоеванных русскими войсками во время Первой мировой войны.– «ИФЖ», № 1, с. 236–245.

Саакян Р. 2016, Роль генерала Т. Назарбекяна в битве под Дильманом 1915 года (по архивным материалам).– «ИФЖ», № 2, с. 209–229.

Стрелянов (Калабухов) П. Н. 2007, Казаки в Персии. 1909–1918 гг. М., Центрполиграф, 442 с.

Татищев А. А. 2001, Земли и люди. В гуще переселенческого движения (1906–1921). М., «Русский путь», 376 с., илл.

Тер-Оганов Н. К. 2012, Персидская казачья бригада. 1879–1921 гг. М., Институт востоковедения РАН, 352 с., илл.

Шишов А. В. 2001, Полководцы Кавказских войн. М., Центрполиграф, 559 с.

КАВКАЗСКИЙ ФРОНТ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ В ДОКУМЕНТАХ

(Критические замечания и анализ)

РУБЕН СААКЯН

Р е з ю м е

Ключевые слова: Первая мировая война, Кавказский фронт, И. И. Воронцов – Дашков, Н. Н. Юденич, армянское добровольческое движение, Андраник, Дро, Амазасп, Кери, А. Манукян, Я. Заврян, Геноцид армян, Армянский вопрос, Сарыкамыш, Ван, Эрзерум, Трапезунд, Ерзнка.

В 2020 году в Москве был издан сборник документов «Кавказский фронт Первой мировой войны. 1814–1917 гг.». Ответственный редактор: А. И. Артизов. Составители: к. и. н. Б. Б. Давыдов, Н. Г. Захарова, к. и. н. И. В. Карпеев, С. А. Харитонов, к. и. н. О. В. Чистяков, Е. Е. Колоскова, к. и. н. М. Е. Малевинская, к. и. н. Д. Г. Мартиросян, Ю. В. Басенко, к. и. н. Г. Г. Авагян, к. и. н. С. С. Мирзоян. Составителями сборника была проделана огромная исследовательская работа. Однако ознакомление с опубликованными в нем документами вызывает ряд вопросов, по которым хотелось бы высказать нашу точку зрения, в связи с чем представляем ряд критических замечаний:

1. В качестве одного из упущений в предисловии сборника следует указать на отсутствие подтверждения того факта, что главным инициатором добровольческого движения на Кавказе было Кавказское наместничество, а также партия Даш-

накцутюн (АРФД, находившаяся под следствием), которой разрешено было вернуться и принять участие в формировании добровольческого отряда.

2. В связи с самообороной жителей г. Вана в апреле – мае 1915 г. в предисловии сборника отмечено, что армянские кварталы города были окружены силами турецкой жандармерии (с. 16), но при этом нет упоминания о том, что основными силами были османская армия, курдские и черкесские войска, вооруженные пушками и пулеметами. Об этом свидетельствуют иностранцы, в том числе служившие в османской армии.

В предисловии также отмечено, что турецкие историки на основании своих документов заявляют о том, что восстание ванских армян было согласовано с наступлением русских войск и являлось частью какого-то заговора, а не борьбой за выживание (самооборона). В примечании дается следующее пояснение: «Русские архивные документы не подтверждают подобную трактовку этих трагических событий» (с. 16). Известно, что такие определения, как «трагические события» или «факты насилия над армянским населением» (с. 41), «свидетельства армянских беженцев о фактах насилия над мирным армянским населением Турции» (с. 42) имеют свою юридическую дефинцию – геноцид. В предисловии не дается каких-либо объяснений, почему османское правительство в массовом порядке депортировало и истребляло западных армян. Сказанное относится и к оборонительным боям армянского населения. В предисловии сборника указано, что показания армянских беженцев были переведены с армянского на русский сотрудниками – специалистами Национального архива Армении в 2012–2013 годах (с. 43), тем самым создается впечатление, что авторский коллектив не несет ответственности за перевод.

3. Нет упоминаний об имевших место случаях геноцида (в ноябре – декабре 1914 г. в Батумской области) в отношении русскоподданных армян. В регионе орудовало турецкое спецподразделение «Тешкилят-и Махсуса» (отряд специального назначения), о действиях которого нет каких-либо упоминаний в сборнике. Турки получили поддержку со стороны жителей региона – аджарцев и лазов; по окончании войны русское правительство намеревалось лишить их имущества и выслать в Османскую империю. Этот факт известен Д. Г. Мартиросяну, который подготовил историческую часть предисловия и является автором отдельной научной статьи об этих событиях. Следует отметить, что существуют многочисленные свидетельства иностранцев о Геноциде армян. Факт Геноцида был признан многими государствами, в том числе Государственной Думой РФ (1996 г.).

4. В сборнике отсутствуют документы о формировании греческих, ассирийских и грузинских добровольческих отрядов, а также не раскрыты причины расформирования отрядов, состоявших из курдов и кавказских татар. Помимо сказанного, не упоминается о том, почему две грузинские дружины из Приморья были переведены в Северную Персию.

5. В предисловии указано, что в составе Баязетского отряда действовали три армянские дружины (с. 16). Фактически это был Араратский полк, в состав которого входили II, III и IV дружины.

6. Чем руководствовалось русское командование, приняв решение об оказании «помощи» жителям г. Ван? Изначально частям 4-го Кавказского армейского корпуса, в том числе Закаспийской казачьей бригаде (Баязетский отряд), было приказано окружить и уничтожить остатки дивизии Халил-бея, отступившего к Вану после поражения в битве при Дильмане. Лишь по этой причине русские войска вышли на дорогу, ведущую в Ван. Не соответствует действительности ут-

верждение о том, что начальнику Баязетского отряда генералу А. М. Николаеву было приказано оказать помощь ванским армянам, обороняющимся от турецких войск (с. 16). Фактически генерал получил приказ оставаться в Беркри, о чем он сообщил командиру Араратского полка Вардану. Последний созвал совещание командиров отрядов, на котором было принято решение оказать поддержку жителям г. Ван без русских. В предисловии сказано, что Баязетский отряд занял г. Ван (с. 16). Однако первым в город вошел Араратский полк, а точнее – его разведывательный отряд, а затем – Баязетский отряд. Следовало всего лишь отметить, что благодаря продвижению русских войск турецко-курдские силы были вынуждены снять осаду и поспешно отступить, что соответствует действительности.

7. Умалчивается о том, что младотурецкое правительство разработало стратегический план по созданию воображаемого «Великого Турана» с огромной протяженностью границ, из-за чего и Турция развязала войну. Отметим, что и сегодня Турция продолжает лелеять эту программу.

8. Боевая деятельность армянских добровольцев представлена в основном в негативном плане. К сожалению, была выбрана подборка документов, дискредитирующих армянских дружинников. В начале боевых действий было допущено много ошибок, поскольку турки атаковали «внезапно» и командование спешно отправило на фронт еще не полностью сформированные отряды. Командиры приложили все усилия по установлению воинской дисциплины в дружинах. Русские командиры, ценившие боевую «работу» дружинников, нередко проявляли к ним неоднозначное отношение.

9. На наш взгляд, в предисловии следовало отметить, что доклады жандармерии о «революционной» и «антирусской» деятельности армян, преследовавших цель начать революцию в России, не соответствуют действительности. События 1917–1918 гг. показали, кто истинные революционеры, а точнее – повстанцы.

10. Возникает вопрос, если армянские добровольцы были недисциплинироваными, то как объяснить факт награждения солдат российскими боевыми орденами и медалями?

11. Русское командование старалось использовать армянские добровольческие дружины на разных участках фронта, чтобы они не могли действовать совместно. Лишь однажды, в июле 1915 года, дружины были объединены в отряд генерала И. Трухина. В дальнейшем подобные попытки не повторялись. Антиармянская позиция правительства не давала возможности увеличить число дружинников. Власти целенаправленно распространяли компрометирующую информацию о добровольцах, тем самым подготавливая почву для ликвидации дружин.

12. В предисловии сборника не упоминается о формировании и деятельности Временной администрации Вана и назначении А. Манукяна по приказу русского командования временным управляющим (губернатором) после освобождения города. К сожалению, не был должным образом рассмотрен вопрос о том, почему армянская власть не была восстановлена после июльского отступления 1915 года и завоевания Вана и провинции русскими войсками.

13. Расплывчатым обвинениям армян в убийствах турок и курдов следовало бы противопоставить тот факт, что около тысячи мусульманских женщин и детей в Ване не были убиты армянами. Они были переданы находившимся в городе американским миссионерам. Заботу о них взяла на себя дочь писателя Льва Толстого – Александра.

14. При описании боевых действий не рассматривается вопрос о том, почему русско-турецкий фронт считался второстепенным, не оказывавшим влияние на

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ход мировой войны? Разве подобное отношение не было преднамеренным? Англичане сыграли в этом определенную роль, потребовав от русских активизации действий на европейском фронте.В опубликованных документах нет ответа на эти вопросы. Османская империя была слабым звеном в Четверном союзе, поражение которого могло иметь решающее значение и, возможно, война закончилась бы не в 1918 г., а гораздо раньше.

15. Не отмечен факт, что при штурме Эрзурума важную роль сыграла армяно-айсорская разведывательная группа, которая совместно с русскими добыла первоочередную разведывательную информацию, имевшую решающее значение при взятии крепости.

16. Командиры сообщали об атаках курдов, против которых эффективно действовали армянские и айсорские добровольцы, хорошо знавшие местность и сумевшие остановить их атаки. После расформирования армянских отрядов в 1916 г. участились нападения курдов на русские части и армян, которые восстанавливали свои населенные пункты.

17. В одном из документов упоминается географический термин «Восточная Армения». Следовало уточнить, что имеются в виду армянские территории к востоку от Эрзурума (с. 308).

18. В сборнике отсутствуют документы о совместной диверсионно-разведывательной деятельности Черноморского военного флота и армянских добровольцев.

19. Не упоминается крайне важный факт, что захват Трапезунда давал русским возможность подготовить операцию по взятию Константинополя. Не рассматривается также вопрос о том, почему Константинополь не был захвачен.

20. Полагаем, что правильнее было бы назвать фронт русско-турецким, поскольку боевые действия происходили не на Кавказе.

Рубен Саакян – д. и. н., заведующий отделом новой истории Института истории НАН РА, ведущий научный сотрудник. Научные интересы: российско-турецкий фронт Первой мировой войны, добровольческое движение, Геноцид армян, самооборонительные сражения, история армянской полиции. Автор 14 книг, сборников документов и материалов, около 100 статей.
rubensahakyan58@gmail.com

THE CAUCASUS FRONT OF THE FIRST WORLD WAR IN THE DOCUMENTS
(Critical remarks and analysis)

RUBEN SAHAKYAN

Summary

Keywords: The Caucasus Front, I. I. Vorontsov-Dashkov, N. N. Yudenich, Armenian volunteer movement, Andranik, Dro, Hamazasp, Keri, A. Manukian, H. Zavrian, Armenian Genocide, Armenian Question, Sarikamish, Van, Erzerum, Trapezund, Erzenka.

In 2020, a collection of documents ''The Caucasus Front of the First World War, 1914-1917'' was published in Moscow. Executive editor A. N. Artizov, compilers -

candidate of historical sciences B. B. Davidov, N. G. Zakharova, candidate of historical sciences I. V. Karpeyev, S. A. Kharitonov, candidate of historical sciences O. V. Chistyakov, E. E. Koloskova, candidate of historical sciences M. E. Malevinskaya, candidate of historical sciences D. G. Martirosyan, Yu. V. Basenko, candidate of historical sciences G. G. Avagyan, candidate of historical sciences S. S. Mirzoyan. The compliers of the collection did a significant research work, but when getting familiar with the published documents a number of questions come up, therefore we present some observations.

1. One of the gaps in the preface is the absence of the fact that the main initiator of the volunteer movement in the Caucasus was the Caucasian governorship, and also, that the persecuted members of the ARF Dashnaktsutyun Party were allowed to return and take part in the formation of squads.

2. In the preface, regarding the self-defense of Van in April - May 1915, it is noted that the Armenian quarters of the city were surrounded by the forces of the Turkish gendarmerie (p. 16), omitting the fact that the main forces were the Ottoman army along with Kurdish and Circassian troops armed with cannons and machine guns. This fact is evidenced by foreigners, including those serving in the Ottoman army.

The preface notes that the Turkish historians, referring to their documents, state that the uprising of the Van Armenians was coordinated with the offensive of Russian troops, i.e. it was part of some kind of conspiracy, and not a struggle for survival (self-defense). The note provides the following explanation: “Russian archival documents do not support such an interpretation of these tragic events” (p. 16). It is known that such expressions as “these tragic events”, or “facts of violence against the Armenian population” (p. 41), “testimonies of Armenian refugees about facts of violence against the peaceful Armenian population of Turkey” (p. 42) have a legal definition - Genocide. There is no explanation in the preface for what purposes the Ottoman government massively deported and exterminated Western Armenians. The same applies to the defensive battles of the Armenian population. It is noted that the testimonies of Armenian refugees were translated from Armenian by specialists from the National Archives of Armenia in 2012–2013 (page 43). This sounds more like an attempt to put the onus on the translation.

It was also necessary to provide data from American missionaries about the fact that about 55.000 Armenians were killed by the Turks and Kurds in the Van vilayet, and the Russian command, in order to avoid an epidemic, was forced to collect the bodies and set them on fire.

3. There is no reference to the first recorded cases of the genocide in the Batumi region, in November–December 1914, against Russian citizen Armenians. The collection does not give any mention on the activities of the Turkish special units “Teshkilat-i Mahsusa” (“Special detachment”) operating in the region. The Turks were supported by the inhabitants of the region - Adjarians and Laz people, whom the Russian government intended to deprive of their property after the war and deport to the Ottoman Empire. This is well known to D. G. Martirosyan, who wrote a special article about this and who prepared the historical part of the preface. It should be noted that there are numerous testimonies from foreigners about the Armenian genocide. The fact of the genocide was recognized by many states, including the State Duma of the Russian Federation (1996).

4. The collection contains no documents on the formation of Greek, Syrian and Georgian volunteer squads, and it does not disclose the reasons for the disbandment of squads formed from Kurds and Caucasian Tatars. It is silent about why two Georgian squads from Primorye were transferred to Northern Persia.

5. The preface notes that three Armenian squads operated in the Bayazet detachment (p. 16). In fact, it was the Ararat regiment, which consisted of II, III and IV squads.

6. How did it happen that the Russian command decided to “help” the residents of Van? In fact, the units of the 4th Caucasian Army Corps, including the Transcaspian Cossack

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

Brigade (Bayazet detachment), were ordered to surround and destroy the remnants of Khalil Bey's division, which retreated to Van after the defeat in the battle of Dilman. Only for this reason, the Russian troops took the road leading to Van. The statement that the head of the Bayazet detachment, General A. M. Nikolayev, was ordered to go to the aid of the Van Armenians defending against the Turkish troops, is not true (p. 16). The general was ordered to remain in Berkri, about which he informed the commander of the Ararat regiment, Vardan. The latter called a meeting of squad commanders, where a decision was made to rescue Armenians without help from Russians. The preface notes that the Bayazet detachment occupied the city of Van (p. 16). In fact, the Ararat regiment was the first to enter Van, more precisely, its reconnaissance detachment, and only then the Bayazet detachment. It was only necessary to note that the advance of Russian troops made the Turkish-Kurdish forces to end the siege and hastily retreat. This is the historical truth.

7. The preface does not mention the fact that the Young Turk government developed a strategic plan to create an imaginary "Great Turan" with a huge length of borders for which Turkey started the war. Let us note that even today Turkey cherishes this program.

8. The combat activities of Armenian volunteers are presented mainly from a negative point of view. Unfortunately, the documents selected by compilers discredit the combatants. Certainly, at the beginning of the hostilities, there were many omissions and mistakes, since the Turks attacked "suddenly", and the command hastily sent the newly formed squads to the front. The commanders made every effort to ensure that there was military discipline in the squads. Russian commanders, who valued the combat "performance" of the combatants, did not know what to do with them after the battles, as if they were stepchildren.

9. In our opinion, it should have been noted in the preface that the gendarme reports on the "revolutionary" and "anti-Russian" activities of the Armenians aiming to start a revolution in Russia do not correspond to reality. The events of 1917 – 1918 showed who the true revolutionaries or, more precisely, the rebels were.

10. The question arises, if the Armenian volunteers were undisciplined, then how to explain the numerous Russian military orders and medals awarded to the combatants.

11. The Russian command tried to use the Armenian volunteer squads separately from each other, in different sectors of the front, so that they could not act together. Only once, in July 1915, the squads were united into the detachment of General Trukhin. Such attempts were not repeated in the future. The anti-Armenian position of the government did not make it possible to increase the number of squads. The authorities purposefully disseminated compromising information about the volunteers, thereby preparing the ground for the liquidation of the squads.

12. There is no mention of the formation and activities of the Provisional Administration of Van and the appointment of A. Manukyan as temporary administrator (governor), by order of the Russian command, after the liberation of the city. The preface does not pay due attention to the question why Armenian power was not restored after the July retreat of 1915 and the recapture of Van and the province by Russian troops.

13. Vague accusations against Armenians of killing Turks and Kurds should have been countered with the fact that the Armenians did not kill about a thousand Muslim women and children in Van. They were handed over to the American missionaries in the city. The daughter of the writer Lev Tolstoy, Alexandra, took care of them.

14. The preface describes the battles without making any comments and considering the question of why the Russian-Turkish front was considered a secondary battlefield that did not affect the course of the world war. Wasn't this attitude intentional? The British played their part here demanding that the Russians intensify their actions on the European battlefield. These are questions to which there are no answers in the documents included in the collection. The Ottoman Empire was a weak link in the Quadruple Alliance, the

defeat of which could have been decisive and, perhaps, the war would have ended not in 1918 but much earlier.

15. It is not noted that during the assault on Erzurum, an important role was played by the Armenian - Syrian reconnaissance group, which together with the Russians, obtained the most important intelligence information that was decisive for the capture of the fortress.

16. The commanders reported about Kurdish attacks against which the Armenian and Syrian volunteers effectively acted, since they knew the terrain and the enemy well and basically stopped the Kurdish attacks. After the disbandment of the Armenian squads in 1916, the Kurds intensified attacks on Russian units and on the Armenians who were rebuilding their settlements.

17. In one of the documents of the collection, the geographical term "Eastern Armenia" was used. It should have been clarified that the Armenian territories to the east of Erzurum are meant (p. 308).

18. The collection contains no hint about the joint sabotage and reconnaissance activities of the Black Sea Navy and Armenian volunteers.

19. The collection does not mention that the capture of Trapizund gave the Russians the opportunity to prepare an operation for the capture of Constantinople, and does not address the question of why it did not take place.

20. In our opinion, it would be correct to name the front Russian-Turkish, since the fighting did not take place in the Caucasus.

Ruben Sahakyan – Doctor of Sciences in History, Head of the Department of Modern History of the Institute of History of the NAS RA, Leading Researcher. Scientific interests: Russian-Turkish Front of the First World War, volunteer movement, Armenian Genocide, self-defense battles, history of the Armenian police. Author of 14 monographs, collections of documents and materials, around 100 articles. rubensahakyan58@gmail.com

ՀՏԴ 663.4(479.25)(091)

Doi:10.54503/0135-0536-2023.3-124

ԳԱՐԵՋՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)*

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ գարեջուր, գործարան, արտադրություն, ալկոհոլային խմիչքներ, Երևանի նահանգ, Նիկոլայ Սմանով, Մկրտիչ Ջիթողցյան, Եգոր Օսկանով (Ոսկանյան), Խաչատուր Ավետյանց, Հարություն Ավետյանց, Համազասպ Ծաղիկյան:

Նախաբան

Հազարամյակներ շարունակ Հայաստանում գարեջուր են օգտագործել՝ չնայած, ի տարբերություն գինու, այն առավել սահմանափակ կիրառություն է ունեցել: Գարեջրի արտադրության և կիրառության վերաբերյալ եղած տեղեկությունները սակավ են: Այս հանգամանքով պայմանավորված՝ հայկական գարեջրագործության պատմությունն ուսումնասիրողների ուշադրությանը չի արժանացել: Նշյալ հանգամանքով է պայմանավորված XIX դարի վերջին և XX դարի սկզբին Երևանի նահանգում գործած հայկական գարեջրի գործարանների պատմության ուսումնասիրության կարևորությունը:

Գարեջրագործությունը հին և միջնադարյան Հայաստանում

Հայաստանի տարածքում գարեջրի պատրաստումն ունի հազարամյակների պատմություն: Այդ մասին են փաստում հնագիտական պեղումների արդյունքները և մատենագիտական վկայությունները: Ներկայումս հայտնի ամենավաղ վկայությունները վերաբերում են Բիայնական թագավորության (Ուրարտու) ժամանակաշրջանին (Ք. ա. IX–VI դդ.): Թեյշեբաինի քաղաքի (Կարմիր բլուր) տարածքում կատարված հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են գարեջրի պատրաստման արհեստանոցներ, գարեջրագործության համար օգտագործվող քարե տաշտեր, անոթներ, նաև՝ գարու մնացորդներ: Թեյշեբաինիից բացի, Բիայնական թագավորության այլ բնակավայրերում ևս զբաղվել են գարեջրի պատրաստմամբ: Այսպես, Արգիշտիխինիլիի միջնաբերդում և քաղաքի տարածքում իրականացված հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են գարեջրի պատրաստման սիգարաձև անոթների բեկորներ և դրա արտադրությունը փաստող այլ վկայություններ[1]: Ք. ա. V–IV դդ. հույն նշանավոր պատմիչ և զորավար Քսենո-

** Ներկայացվել է 02. X. 2023 թ., գրախոսվել է 10. X. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] Пиотровский. 1959, 147; *Տիրացյան, Կարապետյան. 1982, 91:*

փոն Աթենացու «Անաբասիս» աշխատության մեջ պահպանվել է ամենավաղ գրավոր վկայությունը Հայաստանի տարածքում գարեջրի պատրաստման մասին. «Այնտեղ (հայերի տներում – Հ. Ս., Գ. Ղ.) կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների մեջ գարուց պատրաստած գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին. իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»[2]:

Քսենոփոնին հաջորդող շրջանում Հայաստանում գարեջրի արտադրության վերաբերյալ գրավոր վկայություններ հայտնի չեն կամ չեն պահպանվել, ինչը կարող է նշանակել՝ այն, ի տարբերություն գինու, հայերի շրջանում լայն կիրառություն չի ունեցել: Գինեգործությունը Հայաստանում էլ ավելի մեծ ծավալներ ընդունեց քրիստոնեության ընդունումից հետո: Արշակունյաց Հայաստանի արքունիքում գոյություն ուներ մատովակի պաշտոն: V դ. պատմիչ Մովսես Խորենացին հաղորդում է, որ Գնունյաց տոհմի անվանադիր Գինը Հայոց Վաղարշակ թագավորի համար ընտիր և համեղ գինիներից ըմպելիքներ էր պատրաստում[3]: Եթե միջնադարի հայ պատմիչների երկերում, վիմագիր արձանագրություններում, նաև հնագիտական պեղումների արդյունքում բազմաթիվ ու բազմապիսի վկայություններ կան Հայաստանում գինեգործության վերաբերյալ[4], ապա գարեջրի վերաբերյալ տեղեկությունները սուղ են: Այն հիշատակվում է միջնադարյան բժշկարաններում (այդ թվում՝ Ամիրդովլաթ Ամասիացու, Մխիթար Հերացու գործերում)՝ իբրև աղեստամոքսային համակարգի, երիկամային, տենդային հիվանդությունների բուժման ժամանակ օգտագործվող դեղամիջոց, նաև՝ իբրև ցավազրկող ու հանգստացնող միջոց[5]: Գոյություն ունեցող աղբյուրագիտական նյութը հնարավորություն է տալիս արձանագրել, որ միջնադարյան Հայաստանում գարեջուրը հիմնականում օգտագործվել է սահմանափակ քանակով՝ առավելապես բժշկության նպատակով: Հայաստանում գարեջրագործությունը նորովի վերելք ապրեց արդեն XIX դարում՝ Ռուսական կայսրությանը Արևելյան Հայաստանի միանալուց հետո:

Հայկական գարեջրագործական ավանդույթի վերականգնումը

Ռուսական կայսրությունում գարեջրի արտադրությունը մեծ զարգացում ապրեց Պետրոս I-ի (1682–1725) օրոք, ով ռուսական գարեջրի որակը բարձրացնելու և դրա արտադրությունը տնայնագործականից արդյունաբերական արտադրության վերածելու նպատակով Մեծ Բրիտանիայից հրավիրեց բարձր որակավորում ունեցող գարեջրագործների: Մոսկվայում, Սանկտ Պետերբուր-

---

[2] Քսենոփոն. 1970, 97:

[3] Մովսես Խորենացի. 1968, 136:

[4] Տե՛ս Հարությունյան, Քալանթարյան, Պետրոսյան և այլք. 2005, Հովհաննիսյան, Եսայան, Բոբոխյան և այլք. 2017, Հոբոսյան, Գասպարյան, Հարությունյան և այլք. 2021:

[5] Նահապետյան. 2019, 196:

գում և կայսրության մի շարք նահանգներում կառուցվեցին գործարաններ: Արդեն XIX դարասկզբին ընդունված նոր օրենքներով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին գարեջրագործների համար՝ արտադրության տեխնոլոգիան յուրացնելու առումով: Այդ ըմպելիքի արտադրության ծավալների ավելացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1861 թ. հունիսի 4-ին Պետական խորհրդի ընդունած որոշումը՝ գարեջրագործության մեջ նոր ակցիզային համակարգի ներդրման վերաբերյալ, որով այն արտադրողներին ավելի լայն իրավունքներ շնորհվեց: Այս որոշման կենսագործումը նպաստեց, որ գարեջրագործությունը զարգացում ապրի արտադրական փոքր ծավալներով: Արդյունքում՝ նոր գործարաններ հիմնվեցին մեծ ու փոքր քաղաքներում և, նույնիսկ, խոշոր գյուղերում. զարգացավ շշալցված գարեջրի արտադրությունը[6]:

Ռուսական կայսրությունում գարեջրի արտադրության ծավալումը տարածվեց նաև Անդրկովկասում: Արդեն XIX դ. երկրորդ կեսին ու XX դ. սկզբին երկրամասի մի շարք քաղաքներում մեկը մյուսի հետևից գարեջրի գործարան-արտադրամասեր հիմնադրվեցին: Դրան նպաստեց եվրոպացի և ռուս արդյունաբերողների հետ անդրկովկասցի վաճառականների պարբերական շփումները, ինչպես նաև՝ կրթություն ստանալու նպատակով եվրոպական ու ռուսական քաղաքներ մեկնած երիտասարդների շրջանում արդյունաբերական գործի նկատմամբ եղած հետաքրքրությունը[7]:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Երևանի նահանգում գարեջրի առաջին գործարանը բացվել է 1862 թ. Երևան քաղաքում: Հիմնադիրը Նիկոլայ Սեմյոնի Սմանովն էր[8]: Գործարանի հիմնադրման համար նպաստավոր էր եղել նոր ակցիզային համակարգի ներդրման մասին վերը նշված որոշումը: Գարեջրագործության զարգացման համար նպաստավոր հանգամանք էր նաև այն, որ, համաձայն կայսրությունում գործող օրենսդրության, այդ գործարաններն օդի և ջրի մաքրության տեսակետից դասվում էին քիչ վտանգավորություն ունեցող արտադրական ձեռնարկությունների թվին, ուստի թույլատրվում էր դրանց գործունեությունը քաղաքային բնակավայրերի ցանկացած մասում[9]: Արգելք չլինելով պայմանավորված՝ Երևանի նահանգում գարեջրի գործարաններ հիմնվել և գործել են բացառապես քաղաքներում:

Սմանովի գործարանում արտադրվող գարեջրի հիմնական սպառողները քաղաքի ռուս պաշտոնյաներն էին: Այն նոր ըմպելիք էր երևանցիների համար, քանի որ անցած դարերի ընթացքում հայերը գարեջուր օգտագործելուց հետ էին վարժվել: Տարբեր ծավալների արտադրողականությամբ դիմանալով ժամանակի վայրիվերումներին՝ սույն գործարանը գործել է մինչև XX դարի սկիզբը:

---

[6] А к у л и ч. 2020.

[7] «Մուրճ» (Թիֆլիս), 1893, № 1, 105–117:

[8] Указатель фабрик и заводов окраин России: Царства Польши, Кавказа, Сибири и Средней Азии. 1895, 176.

[9] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 94, ց. 1, գ. 1664, թ. 12 շրջ., 18:

Գարեջրագործությունը XIX դ. վերջին

Երևանում գարեջրի հաջորդ գործարանի հիմնադրի մասին ստույգ տեղեկություններ մեզ չի հաջողվել հայթայթել: Երևան քաղաքի պատմության հետազոտող Թադևոս Հակոբյանը գրում է. «Երևանում 1881 թվականից հիշատակվում է գարեջրի երկու գործարանի գոյության մասին, բայց դրանցից գործել է միայն մեկը»[10]: Այդուհանդերձ, 1883–1886 թթ. նահանգային հաշվետվություններում գարեջրի գործարաններ չեն հիշատակվում[11]: Հավանաբար, եղած գործարաններն (այդ թվում՝ Սմանովին պատկանողը) այդ տարիներին պարապուրդում են գտնվել:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 1887 թ. Երևանի նահանգում գործում էր գարեջրի 2 գործարան: Մեկը Երևանում գտնվող Ն. Սմանովի գործարանն էր, մյուսը՝ Ալեքսանդրապոլում գտնվող երկրորդ գիլդիայի վաճառական Մկրտիչ Կարապետի Ջիթողցյանինը: Առաջինն ուներ 2 աշխատակից, տարեկան՝ 1600 ռուբլու արտադրանք, երկրորդը՝ 6 աշխատակից և տարեկան 8400 ռուբլու արտադրանք[12]: Եվրոպական գարեջրագործության նորագույն տեխնոլոգիային ծանոթանալու և համապատասխան կրթություն ստանալու նպատակով Մ. Ջիթողցյանը որդիներին ուղարկել էր Բելգիայի Լիեժ քաղաքը[13]: Նա գարեջրի մասնագիտացված խանութներ ու պահեստներ ուներ Ալեքսանդրապոլ և Թիֆլիս քաղաքներում, ուր վաճառվում էր գործարանի արտադրանքը[14]:

Արդեն 1890 թ. Ալեքսանդրապոլում՝ Ղասաբյանների տան տարածքում, բացվում է գարեջրի հաջորդ գործարանը: Այն պատկանում էր Թելավի բնակիչ Եգոր Օսկանովին (Ոսկանյան)[15]:

1890-ական թվականների սկզբին Երևանի նահանգում գործող գարեջրի 3 գործարաններից երկուսն ունեին 2000 ռուբլուց ավել արտադրություն: Ամենամեծը Նիկոլայ Սմանովի գործարանն էր՝ ուներ 4 աշխատակից, տարեկան արտադրում էր 4000 դույլ գարեջուր, որի արժեքը 4000 ռուբլի էր: Ե. Ոսկան-

---

[10] *Հ ա կ ո բ յ ա ն. 1963, 75–76:*

[11] Обзор Эриванской губернии за 1883 год. [1884], [№ 2. Ведомость о фабриках и заводах в Эриванской губернии за 1883 год]; Обзор Эриванской губернии за 1884 год. [1885], [№ 2. Ведомость о фабриках и заводах в Эриванской губернии за 1884 год]; Обзор Эриванской губернии за 1886 год. [1887], [№ 2-й. Ведомость о фабриках и заводах в Эриванской губернии за 1886 год]. *1881 թ. հրատարակված* «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» *հատորյակում ևս Երևան քաղաքում գարեջրի գործարան չի հիշատակվում* (Сборник материалов для описания местностей и племен Кавказа. 1881, 38)*:*

[12] Обзор Эриванской губернии за 1887 год. [1888], [№ 2-й. Ведомость о заводах в Эриванской губернии за 1887 год].

[13] *«Մշակ» (Թիֆլիս), 18. VIII. 1890:*

[14] *Ջ ա վ ա դ յ ա ն. 2021, 17:*

[15] Указатель фабрик и заводов окраин России: Царства Польши, Кавказа, Сибири и Средней Азии. 1895, 176.

յանի գործարանն ուներ 2 աշխատակից և տարեկան արտադրում էր 2000 դույլ գարեջուր՝ 2000 ռուբլի արժեքով[16]:

1893 թ. տարեսկզբին երևանցի ճանաչված գործարար, արդյունաբերող, երկրորդ գիլդիայի վաճառական Խաչատուր Արտեմի Ավետյանցը քաղաքում բացեց գարեջրի հաջորդ գործարանը[17]: Այն կրում էր «Զանգա» անունը՝ Զանգու (ներկայումս՝ Հրազդան) գետի ափին կառուցված լինելու պատճառով: Այստեղ էին գտնվում նաև գործարանատիրոջ բրնձի մաքրման ջրաղացն (դինգ) ու այգին: 1893–1894 թթ. Առևտրի և մանուֆակտուրայի կայսերական դեպարտամենտում (Սանկտ Պետերբուրգ) հավաքված տեղեկատվության հիման վրա հրատարակված տեղեկատուում սույն գործարանը չի հիշատակվում[18], ինչը, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ նորաբաց լինելով՝ գործարանի մասին Պետերբուրգ տեղեկատվություն դեռևս չի ուղարկվել:

Եթե 1892 թ. Երևան քաղաքում գործող միակ (Ն. Սմանովին պատկանող) գարեջրի գործարանն ուներ 4 աշխատակից՝ 1000 ռուբլու արտադրանքի ծավալով, ապա 1893 թ. Ն. Սմանովի և Խ. Ավետյանցի գործարանները միասին ունեին 14 աշխատակից՝ 13.770 ռուբլու արտադրանքի ծավալով: Այն է՝

---

[16] Указатель фабрик и заводов окраин России: Царства Польши, Кавказа, Сибири и Средней Азии. 1895, 176. *Ինչ վերաբերում է Անդրկովկասի հայկական մյուս տարածքներին, ապա Կարսի մարզում կար գարեջրի մեկ գործարան, որը պատկանում էր Ադամ Բաուերին: Այն հիմնադրվել էր 1883 թ., գտնվում էր Կարս քաղաքի Իմերեթյան փողոցում գտնվող Բաուերի տանը, ուներ 3 աշխատակից: Գործարանը տարեկան արտադրում էր 8000 դույլ գարեջուր՝ 10000 ռուբլի արժողությամբ: Թիֆլիսի նահանգի Ախալցխա քաղաքում գործում էր գարեջրի երկու գործարան: Մեկը 1884 թ. հիմնադրված Կարապետ Կիրիչչևի գործարանն էր (իր տանն էր տեղակայված), որը տարեկան արտադրում էր 5000 դույլ գարեջուր՝ 4000 ռուբլի արժողությամբ, ուներ 6 աշխատող, իսկ մյուսը՝ 1888 թ. հիմնադրված Եվգրաֆ Իվանովինը (կրկին իր տանն էր տեղակայված), որը տարեկան արտադրում էր 4000 դույլ գարեջուր՝ 3000 ռուբլի արժողությամբ և ուներ 3 աշխատող: Ելիզավետպոլի նահանգի հայկական բնակավայրերում (այդ թվում՝ Շուշիում և Գորիսում) գարեջրի գործարաններ չկային (*Указатель фабрик и заводов окраин России: Царства Польши, Кавказа, Сибири и Средней Азии. 1895, 175–176*):*

[17] *ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 1885, թ. 8 շրջ., Երևան քաղաքի պատմության թանգարան (ԵՔՊԹ), Մայր մատյան (այսուհետ՝ ՄՄ), 2315-8, փ. 1386,* Обзор Эриванской губернии за 1893 год. [1894], [№ 2. Ведомость о числе фабрик и заводов в Эриванской губернии за 1893-й год]*: Խորհրդային տարիներին պատրաստված մի փաստաթղթում սխալմամբ Ավետյանցների գարեջրի գործարանի հիմնադրման տարեթիվ է նշված 1892 թվականը (ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 312, թ. 29): Հիմնվելով այս փաստաթղթի վրա՝ Թ. Հակոբյանը գրում է, թե գործարանն «անխափան արտադրանք էր տալիս 1892 թվականից սկսած» (Հ ա կ ո բ յ ա ն. 1963, 76): Ի դեպ, խորհրդային տարիներին պատրաստված մեկ այլ փաստաթղթում (այն ունի Հ. Ավետյանցի ստորագրությունը) կրկին սխալմամբ գարեջրի գործարանի հիմնադրման տարեթիվ է նշված 1891 թ. (ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2145, թ. 56):*

[18] Указатель фабрик и заводов окраин России: Царства Польши, Кавказа, Сибири и Средней Азии. 1895.

Ավետյանցի գործարանի բացումից հետո երկու գործարանի միջև մրցակցություն էր սկսվել, որի հետևանքով էլ կտրուկ ավելացել էր գարեջրի արտադրությունը: Փոխարենը կրճատվել էր Ալեքսանդրապոլի երկու գործարանների աշխատակիցների թիվը (10 աշխատակցից մնացել էին 4-ը) և արտադրանքի ծավալը (5000 ռուբլու արտադրանքի փոխարեն՝ 1400 ռուբլու արտադրանք)[19]*: Այս հանգամանքը պայմանավորված էր նահանգում գարեջրի սպառման սահմանափակ ծավալով: Երևանում արտադրվող գարեջրի որոշ մասն արտահանվում էր Ալեքսանդրապոլ, սակայն անմիջապես չվաճառվելու դեպքում այն երկար ժամանակ հնարավոր չէր պահել. շուտ էր փչանում (թթվում էր): Հաջորդ տարիներին Երևանում և Ալեքսանդրապոլում գարեջրի արտադրության ծավալներն ու գործարանատերերի միջև մրցակցության խնդիրն առավել կանոնավորվեց:*

XIX դարավերջին Ռուսական կայսրությունում ամենևին դյուրին չէր արդյունաբերական ձեռնարկությունների (այդ թվում՝ գարեջրի գործարանների) շահագործումը: Ստացվող եկամուտներն ավելացնելու և պետական փոնդի պակասորդը վերացնելու նպատակով՝ 1892 թ. դեկտեմբերի 21-ին կայսրությունում ընդունված օրենքով արդեն 1893 թ. նկատելիորեն ավելացել էին ձեռնարկություններից գանձվող հարկերը: Գործընթացը վերահսկելը նահանգներում և շրջաններում ակցիզային հարկերի վարչության կամ ֆինանսների նախարարության ներկայացուցիչների պարտականությունն էր[20]*: Բնականաբար, նմանատիպ իրավական ակտերը կայսրության ծայրամասերում (այդ թվում՝ Երևանի նահանգում) ֆաբրիկաների և գործարանների զարգացման, արտադրական ծավալների ընդարձակման համար լրացուցիչ դժվարություններ էին ստեղծում: Նույնիսկ այս պայմաններում 1893 թ. Երևանի նահանգում գործող գարեջրի 4 գործարանն էլ նկատելի եկամուտ էին ունեցել. Ն. Սմանովի և Խ. Ավետյանցի գործարաններն ունեցել էին 728-ական ռուբլի մաքուր եկամուտ, Մ. Ջիթողցյանինը՝ 966 ռուբլի, իսկ Ե. Ոսկանյանինը՝ 638 ռուբլի*[21]*: Այսինքն՝ իր արտադրության ծավալներով և ունեցած եկամուտով Ավետյանցի նորաբաց գործարանը ոչնչով չի զիջել տարիներ շարունակ գործող Սմանովի գործարանին:*

Երևանի նահանգում գործող գարեջրի գործարանների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են աղյուսակում:

---

[19] Обзор Эриванской грбернии за 1892 год. 1893 [№ 2. Ведомость о заводах в Эриванской губернии за 1892-й год]; Обзор Эриванской грбернии за 1893 год. 1894 [№ 2-й. Ведомость о числе фабрик и заводов в Эриванской губернии за 1893-й год].

[20] Б е л о н о ж к о, М о ш к и н. 2008, 78–85.

[21] *ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 1885, թ. 3, 8 և շրջ.:*

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Գարեջրագործությունը Երևանի նահանգում XIX դ. վերջին[22]

Տարե-թիվ	Երևան			Ալեքսանդրապոլ			Ընդամենը նահանգում		
	Գործարանների թիվը	Աշխատակիցների թիվը	Արտադրանքի ծավալը (ռուբլով)	Գործարանների թիվը	Աշխատակիցների թիվը	Արտադրանքի ծավալը (ռուբլով)	Գործարանների թիվը	Աշխատակիցների թիվը	Արտադրանքի ծավալը (ռուբլով)
1883	0	0	0	0	0	0	0	0	0
1884	0	0	0	0	0	0	0	0	0
1886	0	0	0	0	0	0	0	0	0
1887	1	2	1.600	1	6	8.400	2	10	10.000
1888	1	4	1.600	1	8	5.000	2	12	6.600
1889	1	4	1000	1	2	4.700	2	6	5.700
1891	1	4	4.050	2	6	9.000	3	10	13.050
1892	1	4	1.000	2	10	5.000	3	14	6.000
1893	2	14	13.770	2	4	1.400	4	18	15.170
1894	2	8	10.785	2	5	4.200	4	13	14.985
1895	2	7	10.364	3	9	2.000	5	16	12.364
1896	2	8	8.170	1	5	2.500	3	13	10.670
1897	2	8	13.500	3	18	11.300	5	26	24.800
1898	2	11	14.000	3	12	29.000	5	23	43.000
1899	2	11	14.500	3	13	30.000	5	24	44.500
1900	2	13	15.000	3	15	37.000	5	28	52.000

Գարեջրագործությունը XX դ. սկզբին

XX դարասկզբին Երևանի նահանգում կար գարեջրի 5 գործարան, որոնք տարեկան տալիս էին 52.000 ռուբլու արտադրանք: Գործարաններից 3-ը գտնվում էին Ալեքսանդրապոլում (տարեկան միասին տալիս էին 37.000 ռուբլու արտադրանք), իսկ 2-ը՝ Երևանում (տարեկան միասին տալիս էին 15.000 ռուբլու արտադրանք)[23]*: Այս տվյալների համեմատությունից տեսնում ենք՝ Ալեքսանդրապոլում գարեջուրն ավելի մեծ պահանջարկ ուներ, քան՝ Երևանում (չմոռանանք, որ արտադրված գարեջրի հիմնական ծավալն իրացվում էր տեղում): Բացի այդ՝ վաճառքի նպատակով գարեջուրն Ալեքսանդրապոլից Թիֆլիս տեղափոխելն առավել դյուրին էր: 1902 թ. Ալեքսանդ-*

[22] *Աղյուսակը կազմվել է* «Обзор Эриванской губернии», «Памятная книжка Эриванской губернии», «Кавказский календарь» *վիճակագրական տեղեկատուների տվյալներով:*

[23] Памятная книжка Эриванской губернии на 1902 год. 1902, отд. III, 106.

րապոլի՝ Համազասպ Ծաղիկյանին պատկանող գարեջրի գործարանն[24] ուներ 14 տեղացի աշխատակից, այն է՝ գործարանը գավառի բնակչության փոքր մասին ապահովում էր աշխատանքով: Աշխատակիցներին տրվող տարեկան միջին աշխատավարձը կազմում էր 300 ռուբլի: Մ. Ձիթողցյանին և որդիներին պատկանող գործարանն ուներ 19 աշխատակից՝ 250–300 ռ. տարեկան միջին աշխատավարձով, իսկ Արտեմ Բաղրամյանին պատկանող գարեջրի գործարանի աշխատակիցների թիվը 7 էր՝ 180 ռուբլի տարեկան աշխատավարձով[25]: Վերջինը և՛ արտադրության ծավալներով, և՛ աշխատակիցների քանակով զիջում էր քաղաքի մյուս գործարաններին. չդիմանալով դրանց հետ մրցակցությանը, փակվեց: Արդեն 1903 թ. վերաբերող տվյալներում Ա. Բաղրամյանի գարեջրի գործարանը չի հիշատակվում[26]: Երևանում գործող 2 գործարանից մեկը պատկանում էր Ն. Սմանովի դստերը՝ Մարիա Սմանովային: Գործարանն ուներ 2 աշխատակից՝ օրական 40-ական կոպեկ աշխատավարձով, իսկ մյուսը Խ. Ավետյանցի գործարանն էր, ուներ 5 աշխատակից՝ օրական 50-ական կոպեկ աշխատավարձով: 1902 թ. Սմանովների գործարանն ունեցել էր 5000 ռուբլու շրջանառություն, որից 500 ռուբլին, իբրև աշխատավարձ, փոխանցվել էր աշխատակիցներին, իսկ Ավետյանցի գործարանի շրջանառությունը եղել էր 6120 ռուբլի, որից 958 ռուբլին վճարվել էր որպես աշխատավարձ[27]:

Գարեջրի արտադրության ծավալներն ընդլայնելու, շշալցված գարեջուրը սառը պահելու և անխաթար տեղափոխելու համար, մանավանդ՝ երևանյան շոգ ամռանը, սառույցի պաշար էր անհրաժեշտ: 1907 թ. օգոստոսի 29-ին քաղաքային վարչությանն ուղղված գրությամբ Խ. Ավետյանցը խնդրում է վարձակալությամբ իրեն տրամադրել Նորագավիթի կամրջին մերձակա ժայռոտ տարածքը՝ Զանգու գետի երկայնքով՝ 75 արշին (53 մ) երկարությամբ և 15 արշին (10,7 մ) լայնությամբ: Նա վարձակալման ժամանակահատված էր առաջարկում 24 տարին՝ յուրաքանչյուր տարվա համար 20 ռուբլի վարձավճարով: Տարածքն օգտագործվելու էր սառույց պատրաստելու համար, որն անհրաժեշտ էր իր գարեջրի գործարանին: Այդ տարածքում կառուցվելու էր մեծ, բացօթյա ջրավազան: Սեպտեմբերի 3-ին Երևանի քաղաքային վարչության նախագահը հայցադիմումը միջնորդաբար փոխանցում է գնահատման հանձնաժողովին՝ վարձավճարի չափը որոշելու համար: Սեպտեմբերի 11-ին հանձնաժողովը տարածքի համար սահմանում է տարեկան 30 ռուբլի վարձավճար[28]: Քաղաքային իշխանությունը՝ հոկտեմբերի 10-ի վերջնական որոշման մեջ նպատակահարմար է համարում տարածքը տրամադրել 12 տարով և 30 ռուբլի վարձավճարով՝ պայմանով, որ այս տարածքում Ավետյանցի կողմից կառուցված բոլոր շինությունները վարձակալության ժամկետն ավարտվելուց

---

[24] Խորհրդային առաջին տարիներին պատրաստված մի պաշտոնական փաստաթղթում գործարանի հիմնադրման տարեթիվ է նշված 1896 թվականը (ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 312, թ. 31):

[25] ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, թ. 1–7, 62–63:

[26] ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, թ. 169, Обзор Эриванской губернии за 1903 год. [1904], [№ 2. Ведомость о числе фабрик и заводов в Эриванской губернии за 1903 год].

[27] ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, թ. 66 շրջ., 67, 166:

[28] ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1471, թ. 1 և շրջ.:

հետո դառնան Երևան քաղաքի սեփականությունը: Սույն որոշմանը ծանոթանալուց հետո Ավետյանցը նոյեմբերի 22-ին հատուկ գրությամբ խնդրում է վարձավճարի գանձումը սկսել 1908 թ. հունվարի 1-ից՝ հաշվի առնելով մոտալուտ ձմեռը և այն հանգամանքը, որ ցրտին հնարավոր չէ շինարարական աշխատանքներ կատարել: Քաղաքային իշխանությունը նպատակահարմար է համարում պայմանագիրը ստորագրել հենց նույն օրը՝ նոյեմբերի 22-ին[29]:

Երևանի քաղաքային իշխանության 1908 թ. օգոստոսի 18-ով թվագրվող անդորրագրից պարզ է դառնում, որ Խ. Ավետյանցը սահմանված ժամկետում հստակ կատարել է առաջին տարում (1907 թ. նոյեմբեր – 1908 թ. նոյեմբեր) վարձակալական պայմանագրով նախատեսված վճարումը: Իրավիճակը փոխվում է 1909 թ.՝ նրա մահից հետո: Համաձայն կտակի, ամբողջ ունեցվածքն անցնում է որդուն՝ Հարությունին: Այդ տարի (1909 թ.) Ավետյանցների գարեջրի գործարանն ուներ 7 աշխատակից՝ տարեկան 6250 ռուբլու արտադրանքով[30]: Քաղաքային իշխանության կողմից Հարություն Ավետյանցին ուղարկված ծանուցումները մնում են անհետևանք: 1909 թ. դեկտեմբերի 29-ով թվագրված մի անդորրագրից պարզ է դառնում, որ 1908 թ. նոյեմբերից մինչև 1909 թ. նոյեմբեր ժամանակահատվածի համար վճարումը կատարվել է ժամանակի խախտմամբ: Նույնը տեղի է ունենում նաև հաջորդ տարի: Հաշվի առնելով ժամկետների խախտումները՝ քաղաքային իշխանությունը չեղարկեց պայմանագիրը՝ այդ մասին 1911 թ. մայիսի 13-ին ծանուցելով Հ. Ավետյանցին[31]:

Տարիներ շարունակ հմտանալով գարեջրի արտադրության բնագավառում՝ Հ. Ավետյանցը ոչ միայն պահպանեց հորից փոխանցված ավանդույթները, այլև «Զանգա» գործարանում արտադրվող «Բոկ-Բիր» գարեջրի հռչակը դուրս բերեց Երևանի նահանգի և Անդրկովկասի սահմաններից: Ասվածի ապացույցը գործարանի արտադրանքի ստացած մեդալներն են՝ «Մեծ մրցանակի մեդալ» (Հռոմ, 1910), բրոնզե մեդալ (Հռոմ, 1910), բրոնզ-էմալե մեդալ (Նեապոլ, 1910)[32]: Մրցանակների մասին նշվում էր նաև գարեջրի շշի պիտակի վրա: Պիտակի վրա Հ. Ավետյանցը նշել է նաև որդու՝ Բորիսի անունը («Пивоваренный завод “Занга” А. Аветянца и сына»)[33]: Այս մրցանակները նպաստեցին գործարանի արտադրանքի հանրահռչակմանը. մեծացավ նաև գարեջրի պահանջարկը, ինչը նպաստեց արտադրական ծավալների ու աշխատակիցների քանակի ավելացմանը: Եթե 1910–1911 թթ. գործարանն ուներ 8–10 աշխատակից և տարեկան թողարկում էր շուրջ 6500 ռուբլու արտադրանք, ապա 1912–1913 թթ. աշխատակիցների թիվը 20 էր, տարեկան արտադրանքը՝ 35.000–36.000 ռուբլի[34]:

---

[29] ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1471, թ. 3, 5–6 շրջ.:

[30] ԵՔՊԹ, ՄՄ 2315, փ. 1382, Обзор Эриванской губернии за 1909 год. 1910 [№ 4. Ведомость о числе фабрик и заводов в Эриванской губернии за 1909 год].

[31] ՀԱԱ, ֆ. 107, ց. 1, գ. 1471, թ. 8, 11, 15:

[32] Ավագյան. 2002, 107, Սարգսյան. 2009, 216:

[33] https://lurer.com/?p=234411 (մուտք՝ 12. V. 2023).

[34] Памятная книжка Эриванской губернии на 1912 год. 1912, отд. IV [Обзор Эриванской губернии за 1910 год, № 3]; Обзор Эриванской губернии

Գարեջրի պատրաստման համար օգտագործվող բարձրորակ գարին Ավետյանցները բերում էին Կարսի մարզից, իսկ գայլուկը՝ Վարշավայից: Հ. Ավետյանցը գործարանի տարեկան արտադրանքը հասցրեց 20.000 դույլի: Գեղեցիկ շշերով ու հախճապակե խցաններով «Բոկ-Բիր»-ն առավելապես իրացվում էր նահանգում: Այն փոքր խմբաքանակով արտահանվում էր նաև Ռուսական կայսրության մյուս տարածքներ ու Հյուսիսային Պարսկաստան[35]:

Երևան քաղաքի գարեջրի գործարաններից առավել կենսունակը հենց Ավետյանցներինն էր: Սմանովի ժառանգները, չկարողանալով դիմանալ Խ. Ավետյանցի հետ մրցակցությանը, փակել էին գործարանը: Այդ պատկերն արդեն պարզ էր 1902 թ., երբ Սմանովի գործարանն ուներ ընդամենը 2 աշխատակից, այն պարագայում, երբ Ավետյանցի գործարանն արտադրության ծավալներով Երևան քաղաքում զիջում էր միայն Շուստովի կոնյակի և Սարաջևի ջրերի գործարաններին[36]: Երևանի նահանգին վերաբերող վիճակագրական աղբյուրներում Սմանովների գործարանը վերջին անգամ հիշատակվում է 1907 թ.[37]:

Ռուսական կայսրության ֆաբրիկաների և գործարանների պաշտոնական ցանկի համաձայն՝ 1909 թ. տարեսկզբին Երևանի նահանգում կար գարեջրի 3 գործարան: Առավել «համեստը» Հ. Ավետյանցին պատկանող գործարանն էր՝ տարեկան 10.600 ռ. արտադրողականությամբ, վաճառականներ Հ. Ծաղիկյանին պատկանող գործարանինը՝ 30.000 ռուբլի, իսկ Մ. Չիթողցյանին պատկանող գործարանինը՝ 40.000 ռուբլի: Նշենք, որ այդ գործարանները գտնվում էին գործարանատերերի սեփական տների տարածքում[38]:

Տարիներ շարունակ Երևանի նահանգում գարեջրի արտադրության ծավալների էական աճ չէր արձանագրվում: Ավելին, նույնիսկ արտադրության ծավալները կրճատվում էր: Այսպես, եթե 1900 թ. նահանգում արտադրվել էր 620.000 լիտր գարեջուր, ապա Առաջին աշխարհամարտի նախօրյակին (1913 թ.)՝ 541.200 լիտր: Փաստորեն, արտադրությունը պակասել էր շուրջ 13 %-ով[39]: Ի տարբերություն գինու և օղու՝ նահանգի բնակչության շրջանում գարեջուրը շատ ավելի պակաս պահանջարկ ուներ:

за 1911 год. 1912 [№ 4. Ведомость о числе фабрик и заводов в Эриванской губернии за 1911год], Памятная книжка Эриванской губернии на 1914 год. 1914, отдел III, 38–39; Обзор Эриванской губернии за 1913 год. 1914, 40–41.

[35] ԵՔՊԹ, ՄՄ 2315, փ. 1386:

[36] ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, թ. 166 շրջ.:

[37] Обзор Эриванской губернии за 1907 год. 1908 [№ 4. Ведомость о числе фабрик и заводов в Эриванской губернии за 1907 год].

[38] Список фабрик и заводов Российской империи. 1912, часть II, 270. Գարեջրի գործարաններ կային նաև Անդրկովկասի հայկական այլ տարածքներում՝ Թիֆլիսի նահանգի Ախալցխա քաղաքի «Ֆրանսիա» ու «Նոր Հարավային Բավարիա» գործարանները, Եկատերինենֆելդի գործարանը, Կարսի մարզի նույնանուն քաղաքի Ա. Մելիքովի գարեջրի ու մեղրախմիչքի և Ֆրանց Տվերդեկի գործարանները: Ելիզավետպոլի նահանգի հայկական բնակավայրերում գարեջրի գործարաններ չկային (տե՛ս Список фабрик и заводов Российской империи. 1912, часть II, 160, 165, 248):

[39] Ադոնց. 1968, 222:

1914 թ. օգոստոսին՝ Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո, Ռուսական կայսրությունում ալկոհոլային խմիչքների վրա լրացուցիչ հարկեր սահմանվեցին, ինչը խաթարեց սպիրտային խմիչքներ (այդ թվում՝ գարեջուր) արտադրողների գործունեությունը: Եթե 1913 թ. նահանգի գարեջրի 3 գործարաններն ունեին 58 աշխատակից՝ շուրջ 93.000 ռուբլու արտադրանքով, ապա 1914 թ., որի մի մասը համընկավ համաշխարհային պատերազմի հետ, գործարանների աշխատակիցների թիվը պակասել էր՝ դառնալով 39, իսկ արտադրանքի ծավալը՝ 69.500 ռուբլի[40]: Ինչպես տեսնում ենք, այս պայմաններում Ավետյանցները, Ծաղիկյաններն ու Ջիթողցյանները սկզբում պակասեցրին, ապա դադարեցրին գարեջրի արտադրությունը: «Կովկասյան օրացույց»-ում հրատարակված տվյալներից տեսնում ենք, որ 1915 թ. Երևանի նահանգում գործող գարեջրի գործարաններ չկային. դրանք պարապուրդի էին մատնվել[41]. Նահանգում գարեջրի արտադրությունն ընդհատվեց:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Գարեջրագործությունը Երևանի նահանգում XX դ. սկզբին[42]

	Երևան			Ալեքսանդրապոլ			Ընդամենը նահանգում		
Տարեթիվ	Գործարանների թիվը	Աշխատակիցների թիվը	Արտադրանքի ծավալը (ռուբլով)	Գործարանների թիվը	Աշխատակիցների թիվը	Արտադրանքի ծավալը (ռուբլով)	Գործարանների թիվը	Աշխատակիցների թիվը	Արտադրանքի ծավալը (ռուբլով)
1901	2	14	12.000	3	23	41.200	5	37	53.200
1902	2	11	11.520	3	33	46.000	5	44	57.520
1903	2	12	12.500	2	28	52.000	4	40	64.500
1904	1	4	3.500	2	28	52.000	3	32	55.500
1905	2[43]	5	3.500	2	28	52.000	4	33	55.500
1906	1	10	4.000	2	28	52.000	3	38	56.000
1907	2	10	5.000	2	28	52.000	4	38	57.000
1908	1	4	3.000	2	28	52.000	3	32	55.000
1909	1	7	6.250	2	25	32.950	3	32	39.200
1910	1	8	6.440	2	24	33.000	3	32	39.440
1911	1	10	6.500	2	32	60.600	3	42	67.100
1912	1	20	35.000	2	48	54.000	3	68	89.000

---

[40] Обзор Эриванской губернии за 1913 год. 1914, 40–41; Обзор Эриванской губернии за 1914 год. 1915, 42–43.

[41] Кавказский календарь на 1917. 1916, отдел статистический, 318–319.

[42] *Աղյուսակը կազմվել է* «Обзор Эриванской губернии», «Памятная книжка Эриванской губернии», «Кавказский календарь» *վիճակագրական տեղեկատուների տվյալներով:*

[43] *Գործարաններից մեկը (Սմանովին պատկանողը) չէր գործում:*

1913	1	20	36.000	2	38	56.930	3	58	92.930
1914	1	18	36.000	2	21	33.500	3	39	69.500
1915	0	0	0	0	0	0	0	0	0

1917 թ. փետրվարին և հոկտեմբերին Ռուսական կայսրությունում տեղի ունեցած հեղափոխություններից հետո ստեղծված անկայուն իրավիճակի, 1918 թ. դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքի, 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական անկայուն դրության հետևանքով էլ ավելի անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին Հայաստանյան մեծ ու փոքր արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության համար: 1920 թ. դեկտեմբերին՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո, բոլշևիկյան իշխանությունները պետականացրեցին Հանրապետության գարեջրի գործարանները: Այնուհետև՝ 1920-ականներին, Հայաստանում վերսկսվեց գարեջրի արտադրությունը: Երևանի և Ալեքսանդրապոլի գարեջրի գործարանները 1926 թ. արտադրանք էին տալիս իրենց կարողությունների համապատասխանաբար՝ 50 և 25 %-ի չափով[44]: Խորհրդային Հայաստանում գարեջրի արտադրության ծավալը նկատելիորեն ավելացավ արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Եզրակացություն

Ռուսական կայսրությունում զարգացող գարեջրագործությունը XIX դարի երկրորդ կեսին իր հորձանուտում ներառեց նաև Անդրկովկասը: Գործարաններ բացվեցին Երևանի նահանգի Երևան ու Ալեքսանդրոպոլ քաղաքներում՝ նպաստելով քաղաքային կյանքի աշխուժացմանը: XIX դարի վերջին և XX դարի սկզբին առավել նշանավոր են եղել Երևանում գործող Ավետյանցների ու Ալեքսանդրապոլում՝ Չիթողցյանների, Ծաղիկյանների գործարանները: Նահանգում գարեջրի արտադրությունն ընդհատվեց Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով, իսկ գարեջրի գործարանները հետագայում ժառանգություն մնացին խորհրդային իշխանությանը, որը դրանք պետականացրեց ու վերագործարկեց:

Համո Սուքիասյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող, ՀԱԱՀ հասարակական գիտությունների ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի XIX–XX դարերի պատմության խնդիրներ: Հեղինակ է 18 գրքի և շուրջ 100 հոդվածի: hamosukiasyan@gmail.com

Գայանե Ղազարյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի հայցորդ, կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության հարցեր: Հեղինակ է 10 հոդվածի: gayane.ghazaryan.1992@mail.ru

[44] *Ո ս կ ե ր չ յ ա ն. 1966, 34–35:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արոնց Մ. Հ. 1968, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 490 էջ:

Ավագյան Է. Ս. 2002, Էրիվանի հայրերն ու այրերը, Երևան, «Զանգակ-97», 175 էջ:

Երևան քաղաքի պատմության թանգարան, ՄՄ 2315, փ. 1382, 1386:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 94, ց. 1, գ. 1664, 1885, 2664, ֆ. 107, ց. 1, գ. 1471, ֆ. 133, ց. 1, գ. 2145, ֆ. 163, ց. 3, գ. 312:

Հակոբյան Թ. Խ. 1963, Երևանի պատմությունը (1879–1917 թթ.), Երևան, Երևանի համալս. հրատ., 607 էջ:

Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Հոբոսյան Ս., Սարգսյան Հ., Մելքոնյան Հ., Ավետիսյան Պ. 2005, Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, Ա. Հ., 305 էջ:

Հոբոսյան Ս., Գասպարյան Բ., Հարությունյան Հ., Սարատիկյան Ա., Ամիրխանյան Ա. 2021, Խաղողի և գինու հայոց մշակույթը, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 438 էջ:

Հովհաննիսյան Ն. Ա., Եսայան Ա. Հ., Բոբոխյան Ա. Ա., Ղալլաքյան Մ. Վ., Հոբոսյան Ս. Գ., Գասպարյան Բ. Զ. 2017, Հայկական խաղող և գինի, Երևան, «Անտարես», 431 էջ:

«Մշակ» (Թիֆլիս), 18.VIII.1890:

«Մուրճ» (Թիֆլիս), 1893, № 1, էջ 105–117:

Մովսես Խորենացի. 1968, Հայոց պատմություն, Երևան, «Հայաստան», 418 էջ:

Նահապետյան Ռ. 2019, Հայոց ավանդական ուտեստի էթնոմշակութային բնութագրության շուրջ. – ՊԲՀ, № 2, էջ 175–199:

Ոսկերչյան Պ. Տ. 1966, Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1920–1940, Երևան, «Հայաստան», 182 էջ:

Ջավադյան Հ. Գ. 2021, Գարեջրագործություն, Երևան, ԿԶՆԱԿ, 128 էջ:

Սարգսյան Ա. 2009, Հարություն Ավետյանց (1873–1937). – Երևանի նշանավոր ընտանիքները, Երևան, «Զանգակ-97», էջ 216–218:

Տիրացյան Գ., Կարապետյան Ի. 1982, Արմավիրի 1979–1980 թթ. պեղումները. – ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 83–97:

Քսենոփոն 1970, Անաբասիս, թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 281 էջ:

Белоножко Е. Л., Мошкин А. Н. 2008, Правительственные проекты реформирования торгово-промышленного налогового обложения в России в 80-е годы XIX века и предпринимательские организации. – «Научные ведомости Белгородского государственного университета», № 10, с. 78–85.

Кавказский календарь на 1917. 1916. Тифлис, Типография наместника Е. И. В. на Кавказе, 128, 368, 1075, 98 с.

Обзор Эриванской губернии за 1883–1914 годы. Эриван, 1884–1915.

Памятная книжка Эриванской губернии на 1902–1914 годы. Эриван, 1902–1914.

Пиотровский Б. Б. 1959, Ванское царство (Урарту). М., Изд. Вост. лит., 284 с.

Сборник материалов для описания местностей и племен Кавказа. 1881, вып. I. Тифлис, Типография Главного управления наместника Кавказского, XXIV+ 568 с.

Список фабрик и заводов Российской империи, под ред. В. Е. Варзара. 1912. СПб., Типография В. О. Кпршбаума, 314 + LXXXIX с.

Указатель фабрик и заводов окраин России: Царства Польши, Кавказа, Сибири и Средней Азии. Материалы для фабрично-заводской статистики. 1895, составитель П. А. Орлов. СПб., Типография В. Киршбаума, 261 с.

Акулич М. 2020, Пивоварение в Российской империи. М., – https: //www.litres.ru/margarita-akulich/pivovarenie-v-rossiyskoy-imperii/chitat-onlayn/ (մուտք՝ 11. III. 2023).

https://lurer.com/?p=234411 (մուտք՝ 12. V. 2023).

ПИВОВАРЕНИЕ В ЕРЕВАНСКОЙ ГУБЕРНИИ
(Конец XIX – начало XX века)

АМО СУКИАСЯН, ГАЯНЕ КАЗАРЯН

Резюме

Ключевые слова: пиво, завод, производство, алкогольные напитки, Ереванская губерния, Николай Сманов, Мкртич Дзитохцян, Егор Осканов (Восканян), Хачатур Аветянц, Арутюн Аветянц, Амазасп Цагикян.

В конце XIX – начале XX века в городах Закавказья одна за другой открывались пивоварни. На основе нововыявленных архивных документов и официальных статистических данных показано, что из действовавших в Ереванской губернии пивоваренных заводов наиболее жизнеспособными в Александрополе были пивоваренные заводы Дзитохцянов и Цагикянов, а в Ереване пивоваренные заводы Аветянца. Они действовали вплоть до Первой мировой войны, способствуя оживлению городской жизни в Армении. В декабре 1920 года, после советизации Армении, упомянутые заводы были национализированы и снова задействованы.

Амо Сукиасян – к. и. н., старший научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА, доцент кафедры общественных наук НАУА. Научные интересы: проблемы истории Армении XIX–XX веков. Автор 18 книг и около 100 статей. hamosukiasyan@gmail.com

Гаяне Казарян – соискатель, младший научный сотрудник отдела всеобщей истории Института истории НАН РА. Научные интересы: вопросы истории повседневности Советской Армении. Автор 10 статей. gayane.ghazaryan.1992@mail.ru

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

BREWING IN THE YEREVAN PROVINCE
(End of the 19th century – beginning of the 20th century)

HAMO SUKIASYAN, GAYANE GHAZARYAN

S u m m a r y

Keywords: beer, factory, production, alcoholic beverages, Yerevan province, Nikolay Smanov, Mkrtich Dzitoghtsyan, Yegor Oskanov (Voskanyan), Khachatur Avetyants, Harutyun Avetyants, Hamazasp Tsaghikyan.

At the end of the 19th and beginning of the 20th centuries, breweries were opened one after another in the cities of Transcaucasia. Based on the newly discovered archival documents and official statistical data, it is shown that the most viable breweries in the Yerevan province were the factories of the Dzitoghtsyans and Tsaghikyans in Alexandropol and Avetyants in Yerevan. They were in operation until World War I and contributed to the revival of Armenian urban life. After the sovietization of Armenia in December 1920, the above mentioned factories were nationalized and put back into operation.

Hamo Sukiasyan – Candidate of Historical Sciences, Senior Researcher at the Department of New History of the Institute of History of NAS RA, Associate Professor at the Department of Social Sciences of the National Agrarian University of Armenia. Scientific interests: problems of the history of Armenia in the 19th–20th centuries. Author of 18 books and about 100 articles.
hamosukiasyan@gmail.com

Gayane Ghazaryan – Junior Researcher at the Department of General History of the Institute of History of NAS RA. Scientific interests: problems of the history of everyday life in the Soviet Armenia. Author of 10 articles.
gayane.ghazaryan.1992@mail.ru

ՀՏԴ 929:882 Բրյուսով + 891.981.09

Doi:10.54503/0135-0536-2023.3-139

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ–ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Վ. Բրյուսով, գրականագետ, թարգմանիչ, Յու. Վեսելովսկի, Մ. Գորկի, Վ. Տերյան, Հովհ. Թումանյան, «Հայաստանի պոեզիան», բրյուսովյան դասախոսություններ, այցելություններ Անդրկովկաս:

Նախաբան

Հայ գրական-գիտական մտքի կողմից ռուս անվանի բանաստեղծ, քննադատ, թարգմանիչ Վալերի Բրյուսովի (1873–1924) անձի և գործունեության գնահատության ընթացքն ավելի քան մեկ դարվա պատմություն ունի: Առաջին գնահատողներից մեկը՝ ընդ որում ոչ միայն հայ, այլև ռուս գրական-գիտական հանրության կողմից, Վահան Տերյանն էր: Դեռևս 1913 թ. Վ. Բրյուսովից կատարած իր մի շարք բանաստեղծական թարգմանությունների հրապարակմանն ուղեկցող ներածական խոսքում նշելով, որ «Անշուշտ բոլորովին անհայտ և անծանոթ մի անուն չէ հայ գրասեր ընթերցողի համար Վալերի Բրյուսովի անունը»՝ նա նաև ընդգծում է՝ «ռուս գրականության մեջ խիկ այս հեղինակը՝ ըստ իս, դեռևս չի գնահատված ըստ արժանվույն, թեև նրա անունն արդեն պատվավոր տեղ է գրավում լավագույն ռուս գրողների շարքում»[1]: Ներկայացնելով Վ. Բրյուսովի գրական մուտքը 1890-ական թվականներին, անցած դժվարին ճանապարհը՝ Վ. Տերյանն ընդծում է, որ ներկայումս նա «հայտնի է ոչ միայն իբրև արվեստագետ-պոետ, այլև իբրև քննադատ և լավագույն պուշկինագետներից մեկը»: Եվ, քանի որ «մեր գրականության մեջ շատ սակավ են (որպեսզի չասեմ թե գրեթե չկան) թարգմանություններ այս պոետից», ինքը՝ «մտադրվելով մի շարք թարգմանություններ տալու ռուս նորագույն պոետներից», սկսել է հենց Բրյուսովից[2]: Նույն՝ 1913 թ. մարտի 30-ին, Վ. Տերյանը գրում է, թե իր կատարած տասը թարգմանություններն ու մի ակնարկը նրա «անձնավորության և պոեզիայի մասին» ուղարկում է «Վենետիկ, ուր Սբ. Ղազար կղզու վրա հիմա տպագրվում է առաջ Թիֆլիսում հրատա-

---

* *Ներկայացվել է 10. IX. 2023 թ., գրախոսվել է 18. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 27:*

[2] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 28–29:*

րակվող «Գեղարվեստ» («Искусство») *հանդեսը»: Հատկանշական է նաև ստորագրությունը՝ «Ձեր պոեզիան սիրող և Ձեզ խորապես հարգող՝ Վահան Տերյան»*[3]*: Մի շարք հանգամանքների («անգամ ցարական բռնակալության ժամանակաշրջանում» հարատևող ռուս և հայ գրական սերտ բարեկամության «մի օղակը» հանդիսանալը, Վ. Տերյանի կողմից մեծ հետաքրքրվածությունը «ռուսական սիմվոլիզմի ճանաչված ղեկավար», ինչպես նաև «խումբի մեծ վարպետ» Վ. Բրյուսովի նկատմամբ) փաստելուց հետո, գրականագետ, թարգմանիչ Սաքո Սուքիասյանը եզրակացնում է. «Այսպիսով, հայկական մամուլում Բրյուսովի մասին առաջին անգամ հանդես է եկել Տերյանը: Սա բնորոշ փաստ է: Բացի այդ ներածականից՝ «Գեղարվեստի» նույն № 5 գրքում զետեղված է Վ. Բրյուսովի, թվով վեց բանաստեղծությունները՝ Տերյանի թարգմանությամբ»*[4]*:*

Հայոց միջավայրում Վ. Բրյուսովի անձի և գործի նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ վերելք ապրեց մեկ-երկու տարի անց, հատկապես՝ Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց մեծ եղեռնից հետո Բրյուսովի կազմած ու խմբագրած «Поэзия Армении» *(«Հայաստանի պոեզիան») ժողովածուի նախապատրաստման և հրատարակման շրջանում՝ 1915–1916 թվականներին: Տարբեր միջոցներով՝ հոդված, բանաստեղծություն, ողջույնի խոսք, նամակ և այլն, հանդես եկան ժամանակի հայ գրականության երևելի դեմքերից շատերը՝ Հովհ. Հովհաննիսյանը, Ալ. Ծիրվանզադեն, Հովհ. Թումանյանը, Վ. Տերյանը, Ա. Չոպանյանը, Ն. Աղբալյանը … հետագա տասնամյակներին՝ հոբելյանական կամ այլ առիթներով, եղան հրապարակումներ, գրվեցին հոդվածներ և ծավալուն ուսումնասիրություններ, գիտաժողովներում (մասնավորապես, սկսած 1962 թվականից՝ մոտ մեկ տասնյակ, «Բրյուսովյան ընթերցումներ»-ում) կարդացվեցին գիտական զեկուցումներ: Դրանցում հանգամանորեն քննվեցին Բրյուսովի՝ որպես բանաստեղծի, քննադատի, թարգմանչի, տարբեր մշակույթների ու գրականությունների մերձեցման ջատագովի, անհատականության, այնպես էլ* «Поэзия Армении» *ժողովածուի նախապատրաստման և հրատարակման հետ կապված բազմաթիվ հիմնարար հարցեր ու խնդիրներ, կատարվեցին մի շարք ճշգրտումներ, որոնցով հանդես եկան ճանաչված պատմաբաններ, գրականագետներ Մ. Ներսիսյանը, Հովհ. Ղանալանյանը, Ս. Դարոնյանը, Ե. Ալեքսանյանը, Լ. Մկրտչյանը, Կ. Այվազյանը, Մ. Ամիրխանյանը, Ան. Զաքարյանը և ուրիշներ: Այդ գործընթացը շարունակվում է մինչև օրս:*

Հետաքրքիր է, որ անցյալ դարի 80-ական թվականների սկզբին Նյու-Յորքի Սենթ Ջոնս համալսարանի Ազգային գրականությունների խորհրդի կողմից հրատարակվող «Ազգային Գրականութեանց Հանդէս կոչուած Տարեգրքի» 1982 թ. հայ գրականությանը նվիրված հատորի պատասխանատու Վահե Օշականը նամակներ է հղել Խորհրդային Հայաստանի Արտասահմանի հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանին՝ օժանդակության խնդրանքով: Դրանցից մեկում՝ դատելով Վ. Օշականի մի նամակի

---

[3] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 107–108: Տե՛ս նաև «Գեղարվեստ» (Թիֆլիս), 1913, 116:*

[4] *Ս ո ւ ք ի ա ս յ ա ն. 1941, 13–15 (իրականում տպագրվել է 8 բանաստեղծություն):*

բովանդակությունից, անդրադառնալով Տարեգրքում ընդգրկվելիք նյութերի ծրագրին՝ Վ. Համազասպյանն առաջարկել է մի հոդված նախատեսել նաև հայ միջնադարյան տաղերգության վերաբերյալ՝ նշելով Վ. Բրյուսովի հայտնի հետազոտությունը: Պատասխանելով վերջինիս «Հարուցած հարցերուն» այդ կետին՝ Վ. Օշականը գրում է. «Ինչ կը վերաբերի Միջնադարեան մեր Տաղերգութեան, սկզբունքով դէմ չեմ պայմանաւ, որ կարճ ըլլայ – 2000 բառը չանցնի ու ինքնագիր ըլլայ: Դէմ եմ որևէ արտատպումի, աղումի, թարգմանութեան կամ վերահրատարակութեան: Վալերի Պրիւսովի գրութիւնը ծանօթ է ինծի, սակայն այս պարագային նորութիւն չի բերեր: Եթէ այսօր Հայաստանի մէջ կայ հեղինակութիւն մը այդ նիւթին մասին, որ ծանօթ ըլլայ նաեւ միջազգային գրական իրողութեանց՝ սիրով կ՚ընդառաջեմ Ձեր առաջարկին ու սեղմ յօդուածի մը տեղ կուտամ»[5]:

«Հայաստանի պոեզիան» ժողովածուի ստեղծման պատմությունը

ա) Նախապատրաստական շրջան

Պետք է ասել, որ ռուս իրականության մեջ հայ ժողովրդի պատմության ու ճակատագրի, դարավոր մշակույթի և գրականության նկատմամբ հետաքրքրության ակտիվացումը սկսվել էր դեռևս «Հայաստանի պոեզիան» ժողովածուից առաջ՝ XIX դարի 90-ական թվականներից: Այդ ասպարեզում Վ. Բրյուսովից առաջ ռուս դասականներից արդեն իսկ զգալի ջանքեր էին գործադրել Յուրի Վեսելովսկին և Մաքսիմ Գորկին: Յու. Վեսելովսկին 1893–1894 թթ. Մինաս Բերբերյանի հետ հրատարակել էր «Հայ բելետրիստներ» ռուսերեն ժողովածուի երկու հատորները, 1902-ին՝ Սմբատ Շահազիզի մասին ռուսերեն առաջին մենագրությունը, 1906-ին՝ «Ակնարկներ հայ գրականության և կյանքի» հատորը, պրոֆ. Գրիգոր Խալաթյանցի հետ՝ խմբագրել «Հայ մուսա» անթոլոգիան: 1889 թ. նա նաև այցելել է Վենետիկի Մխիթարյան միաբանություն, 1908-ին՝ Բաքվի Հայկական մշակութային միության հրավերով, մի քանի դասախոսություն կարդացել հայ նորագույն գրականության մասին: Յու. Վեսելովսկու գրչին են պատկանում նաև «Հայերի վիճակը Թուրքիայում մինչև մեծ տերությունների միջամտությունը» (1895), «Տաճկահայաստանի ողբերգությունը» (1915), «Ամայացած երկրամասի գավակները» (1916) աշխատությունները: Մաքսիմ Գորկու խմբագրությամբ ռուսերեն լույս էր տեսել «Հայ գրականության ժողովածուն» (1916)[6]:

Դարասկզբին սրվել էր նաև հայության վերաբերմունքը դեպի սեփական գրականությունը: Ն. Աղբալյանը 1913 թ. արձանագրում էր, որ «Վերջին երկու-երեք տարին մի չտեսնված հետաքրքրություն է նկատվում մեր հասարակության մեջ դեպի սեփական գրականությունը»[7]: Ընդ որում, ըստ նրա, խնդիրը վերաբերում էր ոչ թե տաղանդավոր գրողների հայտնությանը, այլ՝ առաջին հերթին, «ընթերցող հասարակության, որ հանդես է գալիս իբր գրական երկերով ապրող մի բազմություն ...»: Նրա համոզմամբ, դա ապացույց էր, «թե գրականությունը դառնում է մի զորեղ գործոն, որ բարձրանում է

[5] *«Բագին» (Պէյրութ), 2022, 93:*

[6] *Տե՛ս* Закарян. 2016, 8.

[7] *Աղբալյան. 2005, 47–48:*

ազգի ինքնագիտակցությունը և ստեղծվում են բարձր կարգի հանրային շահեր»: Այդ ամենը հիմք են տալիս Ն. Աղբալյանին հաստատել. «Սկսվում է մի վերագնահատության ընդարձակ շրջան, արթնանում է քննադատական միտքը»[8]:

Պետք է ասել, սակայն, որ նշված երևույթը սոսկ հայկական հասցեագրում չուներ: «Պատերազմի ժամանակ հետաքրքրության առարկա էր դարձել մանր ազգությունների հարցը», –1924-ին գրում է Պողոս Մակինցյանը: Որպես բնորոշ օրինակներ՝ նա նշում է հրատարակվող «Օտեչեստվո» ժողովածուն՝ նվիրված Ռուսաստանի սահմաններում բնակվող ազգային փոքրամասնություններին, «Պարուս» հրատարակչությունում Մաքսիմ Գորկու խմբագրությամբ լույս տեսած ֆիննական, լատիշական ու հայկական գրականություններին նվիրված ժողովածուները: Եվ, քանի որ հայ ժողովրդի՝ որպես համամարդկային արժեք ունեցող ինքնատիպ մշակույթի ու գրականության ստեղծողի նկատմամբ, ուշադրությունը բազմապատկվել էր հատկապես Հայոց մեծ եղեռնի իրականացումից հետո, «նման մի շարք հղացավ նաև Մոսկվայի Հայոց կոմիտեն, որ որոշեց հրատարակել հայկական գրականությանը նվիրված մի մեծ ժողովածու»[9]: Այդ առումով, ինչպես նշում է գրականագետ Անժելա Դոլուխանյանը, Վ. Բրյուսովի ջանքերով լույս տեսած «Поэзия Армении» ժողովածուն «յուրօրինակ ահազանգ էր համայն մարդկությանը, թե ցեղասպանության է ենթարկվել մի հինավուրց ու շատ քաղաքակիրթ ժողովուրդ, որի քնարերգության առանձին նմուշներ մարդկային հանճարի դրսևորումներ են»[10]:

Զափազանց կարևոր այդ խնդիրն իրականացնելու համար որոշվում է դիմել Վ. Բրյուսովին: Հետագայում Ստեփան Զորյանը, անդրադառնալով «Поэзия Армении» ժողովածուի ստեղծման՝ իր բառերով՝ «հետաքրքիր» պատմությանը, գրում է. «Երբ 1914 թ. սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, և Թուրքիան, որպես Գերմանիայի դաշնակից, դուրս եկավ Ռուսաստանի դեմ ու սկսեց իր վայրագություններն անզեն, անպաշտպան հայ ժողովրդի նկատմամբ, Մոսկվայի հայկական կոմիտեն՝ մի կողմից տաճիկների բարբարոսությունից տուժած հայերին օգնելու, մյուս կողմից՝ ռուս լայն հասարակությանը գեթ մի փոքր ծանոթացնելու համար, թե ի՛նչ կուլտուրական արժեքներ է ստեղծել հայ ժողովուրդը դարերի մեջ, նպատակահարմար է գտնում հրատարակելու հայ պոեզիայի մի ընտիր ժողովածու: Կոմիտեն, ավելի լավ է ասել՝ նրա եռանդուն հայրենասեր նախագահ իրավաբան Ստ. Մամիկոնյանը, այս ժողովածուի կազմակերպումը հանձնարարում է Մոսկվայում ապրող հայ գրողներ Ալ. Ծատուրյանին, Կարեն Միքայելյանին և Պ. Մակինցյանին: Իսկ սրանք իրենց հերթին, երկար մտածելով, թե ռուս գրողներից որին հանձնեն ժողովածուի խմբագրումը, ձեռնհաս են համարում միա՛յն Վալերի Բրյուսովին, որպես բարձր կուլտուրայի և լայն զարգացում ունեցող պոետի,

[8] Աղբալյան. 2005, 47–48:

[9] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 47–48:

[10] Վ. Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուն և հայ միջնադարյան քնարերգությունը. 2016, 3:

նաև՝ որպես առաջնակարգ թարգմանչի: Ու երբ երեքը միասին գնում են խնդրելու, որ նա հանձն առնի ժողովածուն կազմելու և խմբագրելու գործը, իրենց հետ տանում են ռուսերեն և ֆրանսերեն թարգմանություններ և հայ ժողովրդի անցյալին վերաբերող գրքեր»[11]: Սկզբում Վ. Բրյուսովը չի համաձայնում մտնել մի այդպիսի «ծանր պատասխանատվության տակ»՝ պատճառաբանելով, թե «շատ է զբաղված, խմբագրում է «Русская мысль» ամսագիրը, ունի կիսատ գրվածքներ, թարգմանություններ և այլն»: Այնուամենայնիվ, Բրյուսովին են հանձնում իրենց հետ տարած գրքերը, որոնց մեջ էին նաև Արշակ Չոպանյանի՝ հայ բանաստեղծների ֆրանսերեն թարգմանությունները: Երկու շաբաթ անց Վ. Բրյուսովը նրանց ընդունում է «արտակարգ ջերմությամբ», ասելով՝ «Ես շնորհակա՜լ եմ ձեզնից, պարոններ: Դուք իմ առաջ բացիք մի նոր աշխարհ՝ հարուստ գանձերով ... Ես համաձայն եմ ձեր անթոլոգիան կազմելու և խմբագրելու»[12]:

Տասնամյակներ անց՝ 1971 թ., «Սրտի հուշ» գրության մեջ այդ մասին նոր մանրամասներ է ներկայացրել բանաստեղծուհի Հռիփսիմե Պողոսյանը: Ըստ նրա, 1936 թ. Մ. Գորկու առաջարկով՝ հայ հին և միջնադարյան, նաև ժամանակակից պոեզիայի ժողովածու կազմելու համար, Երևան եկած Կարեն Միքայելյանն իրեն պատմել է, «թե ինչպես ինքը Վահան Տերյանի, Ալեքսանդր Ծատուրյանի և գրականագետ Պողոս Մակինցյանի հետ դիմել են Բրյուսովին, առաջարկելով կազմել և խմբագրել հայկական պոեզիայի անթոլոգիան: Նրանք Բրյուսովի մոտ են եկել առավոտյան: Գիշերային երկար աշխատանքից հետո Վալերի Յակովլևիչը դեռ քնած է եղել»: Սկզբում՝ մեծ զբաղվածության պատճառով առաջարկը մերժելուց հետո, Բրյուսովն, ի վերջո, համաձայնում է, բայց՝ «... մի վերապահությամբ, որ նախ ինքը պետք է ծանոթանա Հայաստանի մշակույթին, պատմությանը և գրականությանը»: Իսկ այդ ամենը հիմնավորապես ուսումնասիրելուց հետո կոմիտեի անդամներին հայտարարում է, որ «նման ժողովրդի պոեզիան արժանի է անհապաղ թարգմանվելու ռուսերեն, որպեսզի դառնա նաև մյուս ժողովուրդների սեփականությունը»: Ավելին՝ Կ. Միքայելյանի վկայությամբ, Բրյուսովը դառնում է հայ պոեզիայի ջերմ երկրպագուն ու «ինքնամոռաց կերպով, ինչպես միայն նա կարող էր, սկսում է աշխատել թարգմանությունների և ժողովածուն խմբագրելու վրա»: Ընդորում, Կոմիտեի անդամները «տողացի թարգմանություններ էին անում, կատարում բանաստեղծությունների մանրազնին ջանադիր տառադարձություն՝ յուրաքանչյուր տողի, յուրաքանչյուր հանգի նկատմամբ պեղանտության աստիճանի բծախնդիր Վ. Յա. Բրյուսովի համար»[13]: Հայ պոեզիայի անթոլոգիայի նախաբանում Բրյուսովը գրել է. «... Հայաստանը ուսումնասիրելու մեջ գտա վեհ, հոգևոր հրճվանքների անսպառ աղբյուր ... Որպես պատմաբան, որպես գիտության մարդ, ես Հայաստանի պատմության մեջ տեսա մի ամբողջ ինքնատիպ աշխարհ, որի հազարավոր հետաքրքիր, բարդ հարցերը գիտական հետաքրքրություն էին հարուցում, իսկ որպես բանաստեղծ, որպես արվես-

[11] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 69–70: Պ. Մակինցյանը վերը հիշատակված հրապարակման մեջ նշում է, որ Վ. Բրյուսովի մոտ ուղարկված պատվիրակության կազմում էր նաև Վահան Տերյանը (էջ 48):

[12] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 70–71:

[13] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 88–90:

տագետ՝ հայ պոեզիայի մեջ տեսա գեղեցկության նույնպիսի մի ինքնատիպ աշխարհ, նոր, մինչ այդ ինձ անհայտ տիեզերք, որտեղ փայլատակում ու լուսավառվում էին իսկական գեղարվեստական ստեղծագործության բարձրարժեք կերտվածքները»[14]: Հ. Պողոսյանը հիշում է նաև երեք տարի անց՝ 1939-ին՝ Մոսկվայում հայ գրականության 1-ին տասնօրյակին, «բանաստեղծի այրի Իոաննա Մատվեևնա Բրյուսովայի հետ հանդիպումը, որի ընթացքում նա պատմել է իրենց՝ «ինչպիսի սիրով, պատանեկան ինչպիսի հափշտակությամբ էր թարգմանում Վալերի Յակովլևիչը հայ բանաստեղծներին»: Թե ինչպես նրանք երկուսով երեք ամիս շարունակ համառորեն ուսումնասիրել են հայոց լեզու և գրականության պատմություն: Շաբաթը մի քանի անգամ նրանց մոտ էր գալիս Պողոս Մակինցյանը, և նրանք դասեր էին առնում, Իոաննա Մատվեևնայի բառերով ասած՝ «այդ հետաքրքիր, պահանջկոտ ու համառ ուսուցչից»[15]:

բ) Վ. Բրյուսովի աշխատաոճը

1918–1920 թթ. Վ. Բրյուսովի հետ հաճախակի գործնական հանդիպումներ ունեցած Պ. Մակինցյանը մանրամասներ է պատմել հայ պոեզիայի ժողովածուի և հայ բանաստեղծության թարգմանությունների իրականացման ժամանակ Վ. Բրյուսովի աշխատանքային ոճի և սկզբունքների մասին: «Աշխատանքի տեխնիկան այսպես էր ընթանում.– գրում է նա,– Բրյուսովը ստանում էր բառացի տող առ տող թարգմանությունները և բուն գրվածքը ռուսերեն տառերով: Բովանդակությանը ծանոթանալուց հետո, նա նկատի էր առնում հայերեն չափածո գրվածքի կառուցվածքը, որը և աշխատում էր պահպանել թարգմանության մեջ»: Զբավարարվելով դրանով՝ Բրյուսովը կազմում է նաև «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը»: Պ. Մակինցյանն ընդգծում է, թե «պետք է խոստովանենք, որ այսօր էլ «Տարեգրության» հրատարակումից վեց տարի հետո չկա հայերեն մի աշխատություն, որ գոնե չնչին չափով համեմատվեր այդ գրվածքի հետ»[16]:

Հ. Պողոսյանը հիշում է այդ կապակցությամբ 1919-ին Հովհ. Թումանյանի պատմած բնորոշ դրվագներից մեկը. «1916 թվականին, երբ Բրյուսովը Թիֆլիսում էր, մի քանի օր հյուր է եղել Հովհ. Թումանյանի մոտ, – գրում է նա:– Առաջին օրը, նախաճաշից հետո, երբ Թումանյանի բազմանդամ ընտանիքի բոլոր անդամները ցրվել են իրենց սենյակները, Թումանյանը գնացել է իր աշխատասենյակը, բայց հյուրին այնտեղ չի գտել: Սկսեց փնտրել Բրյուսովին բոլոր սենյակներում, բայց նա ոչ մի տեղ չկար: Այնինչ գլխարկն ու վերարկուն կախված էին նախասենյակում: Ու՞ր կարող էր չքանալ: Թումանյանը մեքենաբար բաց է անում մուտքի դուռը և զարմացած նրա աչքերին ներկայանում է հետևյալ պատկերը. վերևի աստիճանի վրա նստած է Վալերի Յակովլևիչը, ծնկներին ծոցատետրն է, իսկ ձեռքում՝ մատիտ: Նա կենտրոնացած ինչ-որ բան է գրում: Թումանյանը ձայն է տալիս նրան և խնդրում գալ իր աշխատասենյակը: Բրյուսովը հրաժարվում է ասելով, որ չի ուզում խանգարել Թումանյանին, չէ որ իրեն նույնպես անհրաժեշտ է աշխատել: Հիմա այն ժամն է, երբ ինքն անպայման պետք է աշխատի, գրի: Եվ Թումանյանն իմանում է, որ

[14] «Поэзия Армении» под редакцией Валерия Брюсова. 1966, 9–10.
[15] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 88–91:
[16] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 49–50:

Բրյուսովը երբեք բաց չի թողնում այդ ժամը, լինի դա ճանապարհին, թե այլուր: «Ա՛յ, նա երբեք չէր սպասում քմահաճ հյուրին՝ մուսային», – ավարտում է իր պատմությունը Հովհաննես Թումանյանը»[17]:

Վ. Բրյուսովի աշխատաոճի մասին դիպուկ և հետաքրքիր դիտարկումներ է անում նաև Արսեն Տերտերյանը՝ հայ մշակույթի հետ ռուս նշանավոր գրող-գրականագետի մասին գրած ծավալուն հոդվածում: «Ցույց տալով իր քրտնաջան աշխատանքը, որ նա տարել է հայ գրականությունը և պատմությունը ուսումնասիրելու ուղղությամբ,– վկայում է նա,– Վ. Բրյուսովը շեշտը դնում է ոչ միայն սոսկ ջանքի, այլ և այդ ջանքը սիրով տաքացնելու վրա: Նա մի ամբողջ գրադարան գիրք է կարդացել հայերի վերաբերյալ: /…/ Բայց գրքերի հետ գործ ունենալով, նա կապը չէր կտրում հասարակության հետ: Դա ևս նա ապացուցել է «Հայաստանի պոեզիայի» համար կատարած իր աշխատանքի մեթոդով. նա հարց էր տալիս ո՛չ միայն գրադարաններին, այլև կենդանի մարդկանց: Եվ իրար հետ գումարելով իր արդեն ունեցած էրուդիցիան, նոր կարդացածը և ճամփորդությունների ժամանակ տեսածն ու լսածը,– նա գալիս էր որոշ եզրակացության: Բայց այդ եզրակացությունը նա անմիջապես գրի չէր անցկացնում: Նա ելնում էր հրապարակ, իր մտքերն ու զգացմունքները հաղորդում էր ուրիշներին, կարդում էր զեկուցումներ, լսում էր թեր ու դեմ կարծիքներ, և այդ բոլորի հանրագումարը նրան նոր լիցք էր տալիս իր եզրակացությունը ստուգելու և մնայուն, անմեռ ձևակերպումների մեջ արտահայտելու: Լավագույն քննադատությունն էլ հենց դա է. իր ունեցածը և դրսից ստացածը մի բարդ սինթեզի մեջ անմահացնելը»[18]:

գ) Ուղևորությունները Անդրկովկաս. Հանդիպումներն ու դասախոսություններն Անդրկովկասում և Ռուսաստանում

1916-ի հունվարին, երբ անթոլոգիայի նախապատրաստությունը հիմնականում ավարտված էր, Բրյուսովը մեկնում է Անդրկովկաս՝ ժամանակի հայ իրականության անձամբ ծանոթանալու համար: Բաքվում, Թիֆլիսում, Երևանում ու Էջմիածնում դասախոսություններ է կարդում հայոց պատմության ու պոեզիայի մասին, հայ հասարակությանն ու մտավորականությանը ներկայացնում իր կատարած աշխատանքի արդյունքները, հայ պոեզիայից կատարած թարգմանությունները: Այդ ուղևորության ընթացքում Բրյուսովը մտերմական կապեր է հաստատում ժամանակի հայ ականավոր գրական ու հասարակական գործիչների՝ մասնավորապես՝ Հովհ. Թումանյանի հետ, որոնք ևս մամուլում հանդես են գալիս նրա ու նրա դասախոսությունների մասին իրենց անմիջական տպավորություններով:

XIX դարակեսից հետո ընկած ժամանակաշրջանում հայ-ռուսական գրական-մշակութային կապերի հետազոտող Անուշավան Զաքարյանը, «անգնահատելի» որակելով Հայաստանի հանդեպ «Վալերի Բրյուսովի ծառայությունները», միաժամանակ նշում է, որ «… նրա տիտանական աշխատանքը հայ գրականության, մասնավորապես պոեզիայի, պատմության ու մշակույթի հետազոտության և հանրայնացման գործում» մինչև այժմ «չեն դարձել հատուկ հետազոտության առարկա, /…/ դեռևս չեն բացահայտվել, չեն գնահատվել

[17] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 86–87:
[18] Տ ե ր տ ե ր յ ա ն. 1980, 383:

բազմաթիվ երևույթներ ու հարցեր»: Գրականագետը խոսում է մի շարք հակասությունների, բացթողումների, մինչև իսկ՝ սխալների մասին: Հարցեր, որոնք նա ջանացել է լրացնել 2016 թ. հրատարակած, վերը հիշատակված իր ռուսերեն մենագրության մեջ: Կարևոր ճշգրտումներից մեկը վերաբերում է «Поэзия Армении» ժողովածուի հրատարակումից առաջ Վ. Բրյուսովի կատարած նախապատրաստական աշխատանքների, Անդրկովկասում և Ռուսաստանում կարդացած դասախոսությունների ժամանակագրությանը[19]: Ըստ Ան. Զաքարյանի, իրականությունը հետևյալ պատկերն է ներկայացնում:

Մոսկվայում

«Մեծ ու լուրջ աշխատանքից հետո, երբ ժողովածուի նախապատրաստումը մոտենում էր ավարտին», – գրում է Ան. Զաքարյանը, նախ Մոսկվայում՝ հոկտեմբերի 15-ին, ռուս գրողների «Ազատ գեղագիտության ընկերությունը» «Ալպիական պուրակ» («Альпийская роща»), ռեստորանի դահլիճներից մեկում կազմակերպում է երեկո՝ նվիրված հայ պոեզիային: /…/ Բրյուսովը ծավալուն դասախոսություն է կարդում հին, միջնադարյան և նոր հայ պոեզիայի մասին: «Այժմ,– ասում է բանաստեղծը,– երբ ես բնագրով ծանոթացա Նարեկացուն /…/ և այլ հայ բանաստեղծներին,– միայն հիմա հասկացա, թե ինչ թանկարժեք գանձ է թաքնված եղել ռուս հասարակությունից: Ինձ թվում է, որ մեր առջև փակ է եղել հրաշալի դրախտի դուռը, որի գոյության մասին մենք բացարձակապես չենք իմացել»: Բանաստեղծություններ են կարդացել Վ. Բրյուսովը, Վ. Իվանովը, Յու. Վեսելովսկին, Յու. Բալտրուշայտիսը, Կ. Բալմոնտը: Ուշագրավ է, որ դրանից հետո Պողոս Մակինցյանը սազ ու քամանչա է ուղարկում Վ. Բրյուսովին Թիֆլիսից՝ ի նշան աշուղական մրցույթում հաղթության, քանզի, ինչպես գրում է նա, «… ես համոզվեցի, որ Դուք ինքներդ դարձաք աշուղ, որը կարողանում է Հայաստանի մասին պատմել ավելին ու ավելի շատ, քան ես»[20]:

Բաքվում

Մոսկովյան հանդիպումից հետո Վ. Բրյուսովը մեկնում է Անդրկովկաս: Սակայն, ինչպես մի շարք անհամապատասխանությունների մեջբերմամբ ընդգծում է Ան. Զաքարյանը, այստեղ առաջին հանդիպումը նրա հետ կազմակերպվում է ոչ թե Թիֆլիսում, այլ Բաքվում: Գրականագետի ուսումնասիրության արդյունքներով, Վ. Բրյուսովի Մոսկվայի ելույթին հաջորդել է «Հայ գրասերների ընկերության» Բաքվի խորհրդի որոշումը՝ այդ դասախոսությունը «Բաքվում, իսկ գուցե և Թիֆլիսում» կրկնելու մասին: Ըստ այդմ, ընկերության նախագահ, թարգմանիչ, գրական գործիչ Տիգրան Հովհաննիսյանը և քարտուղար, գրականագետ Ցոլակ Խանզադյանը նամակ են հղում Վ. Բրյուսովին: Վերջինս «սիրով» համաձայնում է՝ դեկտեմբերի 26-ին հեռագրելով, որ Մոսկվայից դուրս կգա 1916 թ. հունվարի 4-ին և Բաքվում կլինի հունվարի 7-ին: Այդ տվյալներն Ան. Զաքարյանը հավաստում է՝ վկայակոչելով նաև Ց. Խանզադյանի կնոջ՝ Վ. Խանզադյանի հուշերը՝ հունվարի 7-ի երեկոյան Բրյուսովին Բաքվում դիմավորելու մասին: Հաջորդ օրը՝ «հունվարի 8-ին, Մայիլյան եղբայրների թատրոնի լեփ-լեցուն դահլիճում Բրյուսովը կարդում է իր առա-

---

[19] Տե՛ս Закарян. 2016, 13.

[20] Закарян. 2016, 16–18.

ջին հրապարակային զեկուցումը Անդրկովկասում»՝ «Հայ պոեզիան» խորագրով, որից հետո ընթերցում է նաև հայ պոեզիայից իր թարգմանություններն ու «Հայաստանին» բանաստեղծությունը[21]*: Սակայն հանդիպումը դրանով չի ավարտվում. նույն օրը՝ ուշ երեկոյան, Հայ գրասերների ընկերությունը «Մետրոպոլ» հյուրանոցում կազմակերպում է «հանդիսավոր ընթրիք», որի ժամանակ ընթերցվում են նաև Վ. Տերյանի ու Պ. Մակինցյանի՝ Երևանից ուղարկված հեռագրերը*[22]*:*

Բաքվում Վ. Բրյուսովը մնում է մի քանի օր՝ մինչև հունվարի 11-ը: Այդ ընթացքում շրջում է քաղաքում, հունվարի 9-ին այցելում հայկական դպրոց, որտեղ կոչ է անում «սիրել մայրենի գրականությունը և դրա հետ մեկտեղ՝ ռուս գրականությունը: Այդ երկու գրականությունները,— ընդգծում է նա,— եղբայրացել են ... համամարդկային զգացմունքներով»: Հունվարի 11-ին լինում է նաև Բաքվի Գր. Լուսավորչի անվան հայկական մարդասիրական ընկերության գրադարան-ընթերցարանում: Այդ օրերին «Հայ գրողների կովկասյան ընկերության» նախագահ Հովհ. Թումանյանի կողմից Վ. Բրյուսովը մի քանի անգամ հրավիրվել է Թիֆլիս՝ Բաքվում «մեծ հաջողություն ունեցած դասախոսությունը կրկնելու նպատակով»[23]*:*

Թիֆլիսում

Վ. Բրյուսովը կնոջ՝ Իոհաննայի հետ Թիֆլիս է ժամանում հունվարի 12-ի երեկոյան: Կայարանում նրանց դիմավորում են հայ մտավորականները՝ Հովհ. Թումանյանի գլխավորությամբ: Ուղեկցելով «Гранд отель» *հյուրանոց՝ Թումանյանը հրավիրում է նաև իր տուն՝ ընթրիքի: Հավաքվում են հասարակական գործիչներ, մամուլի ներկայացուցիչներ, երիտասարդ գրողներ: Թումանյանը Վ. Բրյուսովին ցույց է տալիս Սայաթ-Նովայի ձեռագիրը, վերջինս ընթերցում է «Անուշ» պոեմից հատվածներ՝ Վ. Իվանովի թարգմանությամբ*[24]*: Հունվարի 13-ին տեղի է ունենում հանդիպում Արտիստական ընկերությունում, որից հետո տրվում է հանդիսավոր ընթրիք՝ հայ, վրացի և ռուս մտավորականների, Թիֆլիսի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որը նախագահում էր քաղաքապետ Ալ. Խատիսյանը:*

Երևանում

Բրյուսովները Թիֆլիսից մեկնում են Երևան, սակայն Ան. Զաքարյանը ճշտում է, որ ոչ թե հունվարի 14-ին, ինչպես գրել էր «Մշակը», այլ՝ հունվարի 15-ին՝ Պ. Մակինցյանի հորդորով: «Թիֆլիսում մեր գտնվելու վերջերին,— հիշում է Ի. Բրյուսովան,— այնտեղ ժամանեց Պ. Ն. Մակինցյանը, որպեսզի համոզի Վալերի Յակովլևիչին մեկնել Երևան և կարդալ գոնե մեկ դասախոսություն, իսկ այնտեղից այցելել Էջմիածին: Վալերի Յակովլևիչը համաձայնեց, ինքը ևս ցանկանում էր լինել Հայաստանում, որի մասին այնքան շատ էր լսել, ընթերցել և խորհել հայ բանաստեղծների վերաբերյալ աշխատանքների ըն-

[21] Закарян. 2016, 20, 23.
[22] Закарян. 2016, 25.
[23] Закарян. 2016, 28.
[24] Закарян. 2016, 30.

թացքում»[25]*: Դարձյալ Ան. Զաքարյանի ճշգրտմամբ, ոչ թե հունվարի 14-ին, ինչպես նշված է «Թումանյանի ընտանիքի նամակագրությունը» գրքում (Երևան, 2002, էջ 75), այլ՝ հունվարի 18-ին Վ. Բրյուսովը դասախոսություն է կարդում Երևանի քաղաքային ակումբի դահլիճում: Այդ հանդիպման մասին Տերյանի երևանյան մտերիմներից Մարգո Շահխաթունին իր հուշերում գրում է. «Պ. Մակինցյանը ծափահարությամբ բեմ դուրս բերեց Բրյուսովին և մի քանի խոսքով ներկայացրեց նրան Երևանի հասարակությանը»: Ի դեպ, հանդիպմանը ներկա է եղել նաև Վահան Տերյանը: «Տերյանը նստած էր բեմի խորքում մի քանի գրականագետների հետ միասին,– պատմում է Մ. Շահխաթունին:– /…/ Գուցե Տերյանին հանդիսականները իսկի չնկատեին էլ, եթե դասախոսության երկրորդ բաժնում, երբ Բրյուսովը սկսեց խոսել նրա մասին, ինքը ետ չդառնար և ծափահարելով չներկայացներ նրան հասարակությանը: Դահլիճի բուռն ծափահարությանը Տերյանը պատասխանեց խորը գլուխ տալով և նորից նստեց տեղը …»: Ընդմիջման ժամանակ մոտենալով Բրյուսովին, Տերյանն ասում է. «Դուք իմ հայրենիքը սիրեցիք դեռ հեռվից, ինչպես կուզեի, որ այն Ձեզ չհիասթափեցնի, երբ Դուք այժմ այստեղ եք»: Բրյուսովը վստահեցրել է, որ, ընդհակառակը՝ ինքը չափազանց զգացված է այն սիրալիր ընդունելությամբ, որ ցույց է տվել իրեն Երևանի հասարակությունը»*[26]*:*

Էջմիածնում

Մինչև Երևանում կայանալիք հանդիպումները Վ. Բրյուսովը՝ Պ. Մակինցյանի և հոգևոր-մշակութային գործիչ, հայագետ Գարեգին Հովսեփյանի ուղեկցությամբ, գնում է Էջմիածին: Ի. Բրյուսովան հիշում է, որ ճանապարհին Գ. Հովսեփյանը Վալերի Յակովլևիչին պատմել է Արարատի ու Արագածի լեգենդների մասին: Էջմիածնում Բրյուսովներն այցելում են Գևորգյան ճեմարան, որտեղ ջերմ ընդունելություն են գտնում: Վ. Բրյուսովը դասախոսություն է կարդում ուսուցիչների և եկեղեցու սպասավորների համար: Նրա պատվին ճաշ է տրվում: Ելույթներ են ունենում Վ. Տերյանը, Պ. Մակինցյանը, Գ. Հովսեփյանը, Բագրատ եպիսկոպոսը … Ճաշից հետո այցելում են Մայր Տաճար: Հյուրերին ընդունում է Հայոց Կաթողիկոս Գևորգ V-ը, ով Բրյուսովին է նվիրում իր լուսանկարը ընծայագրով՝ «Օրհնությունս անվանի ռուս բանաստեղծին, մեծարգո Վալերի Յակովլևիչ Բրյուսովին. 17 հունվար, 1916 թ.»[27]*:*

Դարձյալ Թիֆլիսում

Երևանից Բրյուսովը վերադառնում է Թիֆլիս և հունվարի 22-ին Արտիստական թատրոնում զեկուցում կարդում «Ակնարկ Հայաստանի պատմական ճակատագրի մասին՝ նրա պոեզիայի զարգացման հետ կապված» թեմայով: Այստեղ Ան. Զաքարյանի հերթական ճշտումն արձանագրում է, որ այդ զեկուցումը, անշուշտ, Բաքվում կարդացած դասախոսության կրկնությունը չէր Թիֆլիսում, ինչպես գրված է «Թումանյանի ընտանիքի նամակագրությունը» գրքում[28]*: Այս երկրորդ դասախոսությունը, սակայն, ըստ էության, մեծ հաջողություն չի ունենում, քանի որ հայոց դարավոր պատմության շատ ու շատ էջեր ավելի հիմնավոր քննություն էին պահանջում: Դասախոսությունից հե-*

---

[25] З а к а р я н. 2016, 37–38.

[26] *Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում. 1964, 377–378:*

[27] *Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում. 1964, 38:*

[28] *Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում. 1964, 45:*

տո Բրյուսովն ընթերցում է Գր. Աղթամարցու, Ն. Հովնաթանի, Ֆրիկի բանաստեղծությունների, Ավ. Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմի հատվածների թարգմանություններից, իր բանաստեղծություններից:

Հատկանշական է, որ այդ օրերին Բրյուսովը հրավերներ է ստանում նաև Գանձակի, Քութաիսի, Ալեքսանդրապոլի, Բաթումի, Արմավիրի, Նոր Նախիջևանի և այլ վայրերի հայության կողմից:

Դարձյալ Մոսկվայում

Ավարտելով մի ամբողջ ժողովրդի հոգևոր աշխարհի պաշտպանության ազնվագույն առաքելությունը՝ 1916 թ. հունվարի 24-ին Վ. Բրյուսովը կնոջ հետ Թիֆլիսից մեկնում է Մոսկվա: Օրեր անց՝ հունվարի 28-ին, մայրաքաղաքի Պոլիտեխնիկական թանգարանում նոր դասախոսություն է կարդում՝ «Հայ միջնադարյան քնարերգությունը» թեմայով, որից հատվածներ են տպագրվում «Армянский вестник»-ի 1916 թ. թիվ 2-ում և 5-ում:

Նոր թեմայով Բրյուսովի երկրորդ դասախոսությունը տեղի է ունենում ուղիղ երկու ամիս հետո՝ մարտի 25-ին, Մոսկվայի համալսարանում՝ «Ռուս գրասերների ընկերության» հավաքում: Դասախոսությունն ուղեկցվել է բանաստեղծի թարգմանությունների կատարմամբ: Վերջում կազմակերպվել են քննարկումներ, որոնց մասնակցել են հավաքի նախագահ, պրոֆ. Ա. Գրուզինսկին, Յու. Վեսելովսկին և ուրիշներ: Օրեր անց այդ և նման հավաքների վերաբերյալ իր տպավորությունների մասին Հովհ. Թումանյանին գրած նամակում (13 ապրիլի, 1916) Վ. Բրյուսովը խոստովանել է. «Մոտ ժամանակներս ես դասախոսություն կարդացի համալսարանում /…/ «Միջնադարյան հայ պոեզիայի մասին» (Գրիգոր Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա) և կարողացա համոզվել, թե որքան են հետաքրքրվում ընթերցողները, որոնք առաջ չէին էլ մտածում, թե հայկական պոեզիա գոյություն ունի: Եվ ես ստանում եմ բազմաթիվ նամակներ հայերից և ռուսներից, որոնք վկայում են նույնը: Եթե կարելի լիներ հասնել միայն այդ նպատակին, դա կլինի իմ աշխատանքի վարձատրությունը հարյուր և ավելի անգամով»[29]:

Պետրոգրադում

Ռուսաստանում Վ. Բրյուսովի դասախոսությունների շարքը շարունակվում է 1916 թ. մայիսի 14-ին Պետրոգրադի Տենիշևյան ուսումնարանի դահլիճում՝ հայ միջնադարյան պոեզիայի և աշուղների մասին զեկուցմամբ: Նա, հատկապես, հիացմունքով է խոսում Սայաթ-Նովայի ստեղծագործության մասին, ով, ըստ նրա, աշուղական արվեստը հասցրել է անհասանելի բարձունքների: Հանդիպման ավարտին Բրյուսովը դարձյալ ընթերցել է հայ պոեզիայից կատարած իր թարգմանությունները, արժանացել ներկաների երկարատև ծափահարություններին: Ի դեպ, հատկանշական է, որ հանդիպման ընթացքում հավաքված գումարն ուղղվել է հայ գաղթականների օգտին:[30]

Վ. Բրյուսովը, սակայն, այդքանով իր բացառիկ առաքելությունն ավարտված չէր համարում: Թեև 1916 թ. հուլիսին արդեն իսկ հրատարակվել էր «Поэзия Армении» ժողովածուն, սակայն հաջորդ տարվա հունվարից շարունակվում են նրա դասախոսություններն Անդրկովկասում:

---

[29] Բրյուսովը Հայաստանի և հայ մշակույթի մասին. 1967, 219:

[30] Закарян. 2016, 51.

Դարձյալ Բաքվում

Ռուս բանաստեղծը՝ Հայ գրասերների ընկերության հրավերով, 1917 թ. հունվարի 19-ին երկրորդ անգամ մեկնում է Բաքու: Հայ հասարակության և մտավորականության հետ հանդիպումը տեղի է ունենում հայ բարերար Տագիևի (Թաղիևի) թատրոնում: Մեծաքանակ բազմազգ հանդիսականների առաջ Բրյուսովը ելույթ է ունենում «Էմիլ Վերհարնը և հերոսական Բելգիան» թեմայի շուրջ: Բաքվի «Արև» թերթը, մեջբերելով դասախոսության այն տողերը, որոնցում Բրյուսովը Էմիլ Վերհարնին բնորոշում է որպես «Գլխաւորապէս փոքր ժողովուրդների երգիչ, /…/ ժողովուրդների, որոնք ընկնում են յանուն լաւագոյն իդէալների, ժողովուրդների, որոնք կրում են մարդկութեան հոյակապ աւանդները և որոնք իսկապէս պիտի ստեղծեն բարօր ապագան»: Այս շարքում իր տեղն ունի նաև հայ ժողովուրդը, քանզի, ինչպես նշում է նա, մի շարք այլ ժողովուրդների հետ նաև «Արարատի «արիւնոտող երկիրն» է «այժմ նրա երգի առարկան»[31]: Ան. Զաքարյանը նկատում է, թե, ըստ այդմ, «պատահական չէ, որ հենց այդ օրերին նա գրում է «Էմիլ Վերհարնը Հայաստանի մասին» հոդվածը՝ հատկապես Բաքվում լույս տեսնող հայկական «Գործ» ամսագրի համար: Հոդվածը տպագրվում է «Գործ»-ի 1917 թ. 3-րդ համարում՝ Տ. Հովհաննիսյանի թարգմանությամբ: Մասնավորապես, քննելով Վերհարնի «Պատերազմի ալ առագաստները» («Алые паруса войны») *հոդվածում՝ Վ. Բրյուսովն ընդգծում է, որ ընթերցողը, բանաստեղծի ստեղծագործություններին ծանոթանալով, «ցնցվում է Գերմանիայի ցուցումով և թուրքերի ձեռքով իրականացված հայկական ջարդերից»[32]:*

Նույն՝ Տագիևի թատրոնում օրեր անց՝ հունվարի 24-ին, Վ. Բրյուսովը կարդում է երկրորդ դասախոսությունը՝ «Ուսուցիչների ուսուցիչները (Մարդկության հնագույն մշակույթների մասին)» թեմայով, որի վերաբերյալ տեղեկատվություններ են տպագրվում «Արև» և «Каспий» (28. I. 1917) *լրագրերում: Խոսելով համաշխարհային պատմության մեջ Հայաստանի դերի մասին՝ նա վերլուծությունները եզրափակում է՝ գրելով. «Թերևս, Արարատի վրա կանգ առած Նոյյան տապանի մասին աստվածաշնչյան պատմության մեջ թաքնված է պատմական ճշմարտության հատիկը. դա հիշողությունն է այն բացառիկ դերի, որ խաղացել են «Արարատյան թագավորությունները» (նույնպես աստվածաշնչյան եզրույթ) նախորդ հազարամյակների (2-րդ և 3-րդ Ն. Ք) մշակութային կյանքում»[33]: Հանդիպումը շարունակվում է հաջորդ օրը՝ հունվարի 25-ին. հայ ուսուցիչները Վ. Բրյուսովին հրավիրում են «Մի բաժակ թեյի»: Հասարակական ժողովարանի դահլիճում կատարվում են երգեր, արտասանվում բանաստեղծություններ:*

Մի քանի օր հետո՝ հունվարի 29-ին, Հայ գրասերների ընկերությունը Հասարակական ժողովարանի դահլիճում կազմակերպում է երեկո՝ նվիրված Ա. Պուշկինի մահվան 80-ամյակին: Զեկուցումով հանդես է գալիս «լավագույն պուշկինագետ» Վ. Բրյուսովը: «Թեմայի ընտրությունը կասկած չի թողնում նրանում, որ զեկուցողը, կանխազգալով Ռուսաստանի ժողովուրդների

[31] *«Արև» (Բագու), 21. I. 1917:*

[32] Закарян. 2016, 113. *Տե՛ս նաև՝ «Գործ» (Բաքու), 1917, 48:*

[33] Закарян. 2016, 115.

ազատագրական շարժումների վերելքը, գիտակցաբար դիմել է մեծագույն ազատասեր Պուշկինին»,– գրում է Ան. Զաքարյանը: «Արև» թերթի (31. I. 1917) ծավալուն տեղեկատվությունից դատելով՝ գրականագետը հաստատում է, որ «Բրյուսովի ընութագրումները այսօր ևս չեն կորցրել իրենց նշանակությունը: Ավելին՝ պետք է ընդգծել, որ Պուշկինի ստեղծագործության համամարդկային արժեքի բրյուսովյան վերլուծությունը համահունչ է պուշկինագիտության արդի սկզբունքներին»[34]:

Փետրվար ամսին Վ. Բրյուսովը ծրագրել էր Բաքվում՝ «Հասարակության խնդրանոք» կրկնել «Ուսուցիչների ուսուցիչները» բանախոսությունը, նոր դասախոսություններով հանդես գալ նաև Թիֆլիսում, սակայն հունվարի 29-ին մամուլը հայտնում է, որ նա հիվանդության պատճառով չի կարող ժամանել Թիֆլիս: Այդ մասին հեռագրով, ապա նաև՝ նամակով Վ. Բրյուսովը հայտնում է Հովհ. Թումանյանին՝ խնդրելով կամ չեղարկել, կամ հետաձգել դասախոսությունները[35]:

Վ. Բրյուսովը նպատակադրվել էր լույս ընծայել նաև «Поэзия Армении» ժողովածուի երկրորդ հրատարակությունը և ջանասիրաբար աշխատում էր այդ ուղղությամբ, որը, սակայն, չի իրականացել: Ավելին, նա ծրագրում էր լույս ընծայել նաև հայ արձակին նվիրված մի ժողովածու՝ «Հայաստան» վերնագրով: «Այդ նպատակով 1917 թ. փետրվարի 15-ին նա հատուկ «գրություն» է ուղարկել Մոսկվայի հայկական կոմիտեին՝ ներկայացնելով հիմնավոր ծրագիր»[36], – գրում է Ան. Զաքարյանը: Ցավոք, Վ. Բրյուսովին չի հաջողվել իրականություն դարձնել այդ ծրագիրը ևս:

դ) Ժողովածուի ստեղծման պատմական պահը

Ամենից առաջ հայ գրողներն ու գրականագետները շեշտում են այն հանգամանքը, որ Վ. Բրյուսովը հանձն է առել հայոց բազմադարյա հոգու և մտքի գանձերը թարգմանաբար քաղաքակիրթ աշխարհին ներկայացնել մեր ազգի համար հիրավի ճակատագրական պահին՝ Հայոց մեծ եղեռնի իրագործումից ընդամենը մեկ տարի անց: «Սքանչանում ենք Բրյուսով բանաստեղծով և միանգամայն խոնարհվում ենք մարդ Բրյուսովի առաջ, որ մեր այս ծանր նեղսակրության պահուն այնքան համակրություն ցույց տվեց մեր տառապյալ ազգին», – «Ողջույնի խոսք Վ. Բրյուսովին» հրապարակման մեջ գրում է Հովհ. Հովհաննիսյանը: «Մեծ է Ձեր՝ մեզ արած ծառայությունը և մանավանդ գնահատելի այժմ, երբ մենք այնքան կարոտ ենք մաքուր աղբյուրից բխած ուղղամիտ դատաստանի,– շարունակում է նա:– Իսկ ո՞ր աղբյուրը կարող է ավելի մաքուր լինել, քան ազգային ստեղծագործությունը, որի մեջ արտահայտվում է ամեն մի ազգի ամբողջ բարոյական կերպարանքը, ամբողջ հոգևոր կյանքը»[37]: Հովհ. Հովհաննիսյանը նաև «Վալերի Բրյուսովին» վերնագրված իր չափածո խոսքում վիթխարի գնահատանքի արժանի է համարում ռուս նշանավոր բանաստեղծի սխրանքը, որով նա իր «հեռավոր հյուսիսից» զգացել է հայ ժողովրդի կենդանի շունչն ու հնադարյան թախիծը, ցույց տվել

[34] Закарян. 2016, 117.
[35] Закарян. 2016, 120–121.
[36] Տե՛ս Закарян. 2016, 126.
[37] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 30–31:

«աշխարհին // Մենք երգ ունենք երգելու». երգ, որը «ճիչն է մեր հոգու»[38]*: Հովհ. Թումանյանը, ով, Ա. Տերտերյանի բնորոշմամբ, «Բրյուսովի կատարած աշխատանքի առաջին մեծ քննադատը և քաջալերողն է եղել»*[39]*, «Վ. Բրյուսովի դասախոսության առթիվ» հոդվածում անկեղծորեն խոստովանել է. «Էս օրերին, երբ՝ մեր ազգային աղետի ծանրության տակ ճնշված զգում ենք մեզ ֆիզիկապես անզոր ու տկար, էս օրերին հեռու հյուսիսից մեզ մոտ է գալիս ռուս հռչակավոր բանաստեղծը՝ Վալերի Բրյուսովը և խոսում մեր բարոյական-հոգեկան ուժի ու մեծության մասին՝ «Հայոց բանաստեղծության մասին»*[40]*: «Վալերի Բրյուսովին» խորագրով բանաստեղծության մեջ նա արձանագրում է, թե ռուս բանաստեղծը եկել է «ձյունի աշխարհից»՝ «դեպ բարին, դեպ վսեմն ու սերը» կոչերով, որից հայոց «ցավոտ սրտում զարթնում են նորից // Երջանիկ կյանքի իղձեր ու հույզեր»: Բայց Թումանյանի նպատակն ու ձգտումն ավելի լայն էր, գրեթե անսահման. նա երազում է՝ նման կոչերն արձագանք տան «աշխարհից աշխարհ», որ ազգերն ի մի բերեն «ինչ ունեն ազնիվ ու պայծառ» ներկա դառն օրերի մեջ, որ սրտերը կուռ դաշն կապեն միմյանց հետ, «Շնչեն կենդանի մի շունչ ընդհանուր, // Կյանքը ջերմացնեն հոգեղեն հրով»: Ի վերջո, թումանյանական հոգում, տիեզերական ընդգրկմամբ, մրցակցության կոչ է հնչում աշխարհի ժողովուրդներին՝ «Թե ով ավելի ուժգին կըսիրի»՝ տենչալով մի մրցում «միշտ անվերջ՝ // Բարու, գեղեցկի ու վեհ գործերի»: Չէ՞ որ «ապարդյուն ու սին» խոսքեր չեն բանաստեղծի «խոհերն իմաստուն»՝ «Եվ քանզի մարդը կարող է մարդուն // Սիրել – երջանիկ ապրել միասին»*[41]*:*

Նույն՝ «Վալերի Բրյուսովին» վերնագրով իր չափածո խոսքում Վ. Տերյանը ևս շեշտում էր նրա կատարած սխրանքի՝ պատմական ու բարոյական վիթխարի արժեքը մեր ժողովրդի համար: Ռուս նշանավոր բանաստեղծի մեծ առաքելությունն այն է, գրում է նա, որ իր «անհույս երկիրն» է այցելել «չարչարանաց ժամին»՝ ավետելով «փրկություն ու լույս, // Երբ հալածում էր մեր նավը քամին»: Բանաստեղծությունը կառուցելով դիպուկ համեմատությունների հիմքով՝ Տերյանն ընդգծում է, որ Բրյուսովի «խիստ, ցո՛ւրտ, հյուսիսային մտագուսպ» լեզվով գրված տողերի խորքում թաքնված է «ահեղ կիզիչ կրակը», ինչպես իր հայրենի Արագի «հանդարտ» հուքի տակ փոթորկվում է «մրրիկն անհանգիստ»[42]*: Արձագանքը չուշացավ նաև Սփյուռքից. 1916 թ. ապրիլի 24-ին Ա. Չոպանյանը «Վ. Յա. Բրյուսովին» գրությամբ Փարիզից գալիս էր հավաստելու, թե «Դուք հայտնաբերեցիք և փառավորեցիք այնքան քիչ ծանոթ ու գնահատված Հայաստանի բանաստեղծական ոգին: /…/ Սա մի անհուն ծառայություն է, որ Դուք մատուցում եք մեր դատին և մի ազնիվ սփոփանք, որ մեզ շնորհում եք այն խոր վշտում, որի մեջ խորասուզել է ահավոր աղետը՝ հարվածելով մեր ժողովրդին»*[43]*:*

---

[38] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 15–16:*
[39] *Տ ե ր տ ե ր յ ա ն. 1980, 322:*
[40] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 32:*
[41] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 17–18:*
[42] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 19:*
[43] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 126–127:*

Վ. Բրյուսովի գրական-գիտական սխրանքի գնահատության նշված հանգամանքը՝ հոբելյանական կամ այլ առիթներով, շեշտվել է նաև հետագա տասնամյակներին: 1934 թ.՝ Բրյուսովի մահվան տասնամյակի օրերին, գրած «Վալերի Բրյուսովին» բանաստեղծության մեջ Ե. Չարենցը նույնպես առաջին հերթին գնահատում է այն, որ նա հայ ժողովրդի հետ է եղել ճակատագրական պահին, «երբ ահավոր աղետը // Մոլեգնությամբ իր բիրտ մտավ մեր տուն»: Այն ժամանակ, երբ «մեր հանճարը հին, կոփված անդուլ // Սերունդների ջանքով – դեռ անծանոթ գետ էր»: Նա նույնիսկ «անեզրական ծովի» հետ է համեմատում հայ հանճարը, որի մեջ սուզվելով «ինչպես նավազ»՝ գյուտերից գինովցած «խոր ու գիտուն» բանաստեղծն աշխարհի առջև բացել է «ոգու մեր գանձարանն անհուն» և մեզ համար դարձել «անմարելի անուն»[44]: Նույն թվականին Դ. Դեմիրճյանը «Բրյուսովյան օրերը Թիֆլիսում» հրապարակման մեջ արձանագրում է. «… մատուցենք մեր խորին հարգանքը մեծ գրականագետին, որը ռեակցիայի ծանր օրերին, այնպես վճռական և իմաստուն կերպով հիմք դրեց հայ բանաստեղծության լավագույն էջերի հավերժացման գործին»[45]: Երկրորդ աշխարհամարտի ճակատագրական շրջանում՝ 1944-ին, Ա. Տերտերյանն ընդգծում էր, որ «Մաքսիմ Գորկու հետ միասին Բրյուսովը հայ ժողովրդին ձեռք է մեկնել նրա պատմության կրիտիկական մոմենտներից մեկում՝ խրախուսանքի և քաջալերության խոսք ասելով: Ն. Մառին ձայնակցելով՝ ռուս մեծ բանաստեղծը գովել է հայ ժողովրդի «շինարարական ոգին», որ փյունիկի պես միշտ հառնում է մոխիրների միջից և ստեղծագործում»[46]: 1948-ին Վ. Բրյուսովի ծննդյան 75-ամյակի առթիվ գրած իր խոսքում Ավ. Իսահակյանը, բարձր գնահատելով ռուս բանաստեղծ-գրականագետի սխրանքը՝ «հայ կուլտուրայի և գրականության արժեքավորման» համար, հատկապես ընդգծում է. «Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը ապրում էր մի սոսկալի ողբերգություն, իր դժբախտ պատմության մեջ նույնիսկ աննախընթաց, երբ Թուրք գազանացած պետությունը կոտորում էր հայ ժողովրդի արևմտյան հատվածին՝ ծերերին, երիտասարդներին, կանանց և երեխաներին, ջնջելով մի ամբողջ ժողովուրդ, նրա կուլտուրան, անցյալը և նրա ապագան միաժամանակ, որպեսզի դրանով ընդմիշտ վերացներ հայկական հարցը, կոտորում էր Գերմանիայի խրախուսանքով, նաև Անգլիայի ու Ֆրանսիայի լուռ համաձայնությամբ, այդ ժամանակ հայ ժողովրդի մեծ բարեկամ Մ. Գորկու հետ հանդես եկավ Վ. Բրյուսովը՝ պաշտպանելու հայ ժողովրդի կուլտուրան, նրա արդար դատը: Նա եկավ ցույց տալու Ռուսաստանին և «քաղաքակիրթ» կոչված Եվրոպային, թե բարբարոս Թուրքերը ի՛նչ անուղղելի, ի՛նչ սարսափելի ոճիր են գործում, կոտորելով մի հին, դասական ժողովրդի, որ կուլտուրական դեր է կատարել աշխարհում և ընդունակ է կատարելու»[47]: Տարիներ անց, արդեն Վ. Բրյուսովի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ «Վալերի Բրյուսով» վերնագրված խոսքում Ստ. Զորյանը ձայնակցում էր Վարպետին՝ հավաստելով. «Նրա բանախոսությունները տեղի ունեցան 1916 թ., մեր ժողովրդի ծանր վշտի օրերին, երբ Արևմտյան Հայաստանում բարբարոս տաճիկները կոտո-

[44] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 20–21:
[45] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 66:
[46] Տ ե ր տ ե ր յ ա ն. 1980, 309:
[47] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 57– 58:

րում, տեղահանում էին մեր անպաշտպան ժողովրդին ... և Բրյուսովի խոսքն այդ օրերին ոչ միայն մխիթարում էր մեզ, այլև ներշնչում հավատ ու կորով, թե այսօրինակ հոգևոր արժեքներ ստեղծող ազգը չի՛ կորչի երբեք: /.../ Այո, Բրյուսովի կատարած գործը այդ օրերին բարոյական մեծ նեցուկ էր մեզ համար»[48]:

«Բրյուսովյան շաբաթների» գնահատությունը

Բաքվում

«Երեկոն կազմակերպված էր քաղաքի ամենամեծ դահլիճում՝ Մայիլովի նախկին թատրոնում, որ ծայրեծայր լիքն էր հանդիսականներով,– պատմում է գրականագետ, թարգմանիչ, թատերագետ Տիգրան Հախումյանը: – /.../ Եվ ահա ավագագույն բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ուղեկցությամբ բեմ է գալիս Վալերի Յակովլևիչ Բրյուսովը: /.../ Նա դասախոսությունն սկսեց հանդարտ, ցածր ձայնով: Նրա խոսքի մեջ չկային ոչ կտրուկ անցումներ, ոչ ընդգծված հռետորական հնարանքներ: /.../ լեփ-լեցուն դահլիճը քարացել էր հիացմունքից: Բրյուսովը բացում էր հայերի աչքերը իրենց իսկ բանաստեղծական հանճարի հանդեպ, որ ինքը դիտել էր նոր մարդու աչքերով: Մենք նորից ու նորովի ճանաչեցինք մեզ՝ ծնված կարծես այդ ինքն իր մեջ ամփոփված սև բաճկոնավոր մարդու տաղանդի ուժով, մարդու, որն այդ երեկո մեզ թվում էր իսկական հմայող ու կախարդ: Եվ այդ հսկայական դահլիճում ամենքի սրտում ծնունդ էր առնում հպարտության մի լուսավոր զգացում մեր վեհ ու գերող, կենսահաստատ բանաստեղծության հանդեպ»: /.../ Այդ անմոռանալի երեկոյից ես հեռացա լի վառ տպավորություններով կարծես լուսավորված, նորոգված»[49]:

Թիֆլիսում

Հովհ. Թումանյանը նշում է, որ «բրյուսովյան շաբաթը Թիֆլիսում» դարձել է իսկապես «տոնական շաբաթ», որի համար պարտական է զգում «եղբայրական համբույր ուղարկելու նրանց, Ռուսաստանի լավագույն զավակներին, որ կյանքում լավագույնն են փնտրում, ընտրում ու սիրում»[50]: Դ. Դեմիրճյանը վկայում է. «Մինչև Բրյուսովի զեկուցման երեկոն, Թումանյանի տունը հանդիսավոր տեսք էր ստացել: Բրյուսովն այնտեղ էր լինում համարյա ամբողջ օրեր, Թումանյանը ծանոթացնում էր այցելուներին հյուրի հետ, ներկայացնում հայ գրողներին»: «Երեկոն տեղի ունեցավ Արտիստական ընկերության թատրոնի համերգասրահում,– գրում է նա: – Սրահը ծայրեծայր լեփ-լեցուն էր: /.../ Ամբիոն բարձրացավ Բրյուսովը՝ Թումանյանի նախագահությամբ: /.../ Բրյուսովը կարդում էր իր զեկուցումը համոզված շեշտով, իբրև մի շատ վաղուց ընդունված, հաստատված ճշմարտություն»[51]:

Ալ. Շիրվանզադեն «Իմ տպավորությունը» հրապարակման մեջ հայ հասարակության երախտագիտությունն է հայտնում Պ. Մակինցյանին և Ա. Ջոպանյանին, որոնք նշանավոր ռուս բանաստեղծին հրավիրել են հայկական հնադարյան և միջնադարյան ստեղծագործության մինչ այժմ արհամարհված՝

---

[48] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 79–80:
[49] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 93–98:
[50] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 39:
[51] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 63–65:

«Հոյակապ տաճարը»[52]: Զափազանց տպավորված էր նաև Ստ. Զորյանը. «Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճը, ուր տեղավորվում է երկու հազարի չափ մարդ, լեցուն էր այնպես, որ ահագին թվով մարդիկ մնացել էին պատերի տակ՝ ոտքի վրա: /…/ դա սովորական հավաքույթ չէր, այլ արտակարգ մի հանդես: /…/ Այդ երեկո միայն տեսա կենդանի պոետին,– գրում է նա: – Երբ հայ գրողների ընկերության Նախագահ Թումանյանը նրան բերեց բեմ՝ մեր առջև կանգնեց մի բարձրահասակ, նիհար, նույնիսկ ոսկրոտ մարդ, որ ուներ կլոր դեմք, փոքրիկ մորուք և խոր նստած խոհուն աչքեր, որոնք թավ հոնքերի տակից նայում էին իրեն անծանոթ հասարակությանը: Թումանյանի հայերեն ողջույնը նա լսեց ոտքի կանգնած, ծափահարություններին պատասխանեց գլխի կիրթ շարժումով, ձեռքերը կրծքին խաչած: Իսկ երբ սկսեց բանախոսությունը՝ լսեցինք նրա թավ ձայնը: Այն ժամանակ միկրոֆոն չկար իհարկե, բայց նրա ձայնը հասնում էր ամեն անկյուն, որովհետև առոգանությունը պարզ էր, խոսքը հստակ ու ծանրակշիռ, ինչն արդյունք էր անշուշտ երկար մտածումների: Խոսեց նա այդպես երեք ժամից ավելի, /…/ մի փոքրիկ ընդմիջումով: /…/ Խորապես հետաքրքրական էին նրա պատմական, գրական անալիզները, զուգահեռներն ու գնահատումները: /…/ այդ տպավորություններն այսօր էլ վառ են ինձ համար»[53]: «Առանց չափազանցության կարող եմ ասել, որ Բրյուսովի բանախոսությունից հետո մի ամբողջ շաբաթ, և ավելի, տոն էր Թիֆլիսի հայերի համար,– շարունակում է Ստ. Զորյանը,– հայ բանաստեղծության տոն՝ բառի ամենալայն իմաստով: /…/ մեր պոեզիան երբեք չէր ունեցել մի այդպիսի հնչեղ ու փառահեղ տոն … և երբեք չէր ստեղծել հոգեկան այդպիսի բարձր տրամադրություն ժողովրդի մեջ: Եվ այս ամենը … շնորհիվ Վալերի Բրյուսովի»[54]: 1971-ին ներկայացնելով իր «Սրտի հուշը» Թիֆլիսյան տոնական այդ օրերից՝ Հ. Պողոսյանը գրում է. «Բեմի վրա ամբիոնին հենված սև սերթուկով, կանգնել էր Վալերի Յակովլևիչ Բրյուսովը՝ իմաստուն մարդն ու բանաստեղծը, տաղանդավոր թարգմանիչն ու հայ պոեզիան մասսայականացնողը, խորաթափանց պատմաբանը, «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրության» հեղինակը …»[55]:

Վ. Բրյուսովի դասախոսություններն ամենուրեք, իհարկե, ընդունվում էին մեծ ոգևորությամբ՝ արժանանալով բարձր գնահատականների: Այդուհանդերձ, մանավանդ անդրկովկասյան մամուլում, լինում են նաև որոշակի դիտարկումներ, մինչև անգամ՝ դիտողություններ ինչ-ինչ կարևոր նկատված հարցերի վերաբերյալ: Թիֆլիսի «Պայքար» թերթի թղթակիցը՝ օրինակ, «Զ» ստորագրությամբ, անդրադարձում իր անհամաձայնությունն է հայտնում հայ մշակույթի, այսպես կոչված՝ «պատմական դուալիզմի»՝ Արևելյան ու Արևմտյան մշակույթների ազդեցությունների միջև գոյատևելու, գնահատականի կապակցությամբ: Նա գտնում էր, որ այդ երևույթի հիմքը իրականում «ժողովրդի ողբերգությունն էր», որը, ոչ իր կամքով, բաժանված էր արևելյան ու արևմտյան հատվածների: Սակայն իր դարավոր պատմական ճանապարհին հայ մշակույթը զարգացել է միասնական հունով: Այդ ամենը պահանջում էր

[52] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 42:
[53] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 72–74:
[54] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 78:
[55] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 82–83:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

հայ ժողովրդի պատմական գոյության պատմագրական, սոցիոլոգիական առավել խորքային վերլուծություն, ինչը, հոդվածագրի կարծիքով, չի արտացոլվել դասախոսության մեջ[56]։

Թիֆլիսում Վ. Բրյուսովի երկրորդ դասախոսությանն արձագանքելով՝ Բաքվի «Արև» թերթի թղթակիցը (Ան. Զաքարյանի ենթադրությամբ՝ թերթի աշխատակից Ց. Խանզադյանը)[57] նկատում է, որ բանախոսության մեջ չի խոսվել «Ուրարդական բարձր կուլտուրայի մասին»։ Ընդգծվել է «Արևմուտքի և Արևելքի սկզբունքների համադրուելն…», բայց նրանց անողոք պայքարը, որ բորբոքուեց Դ. և Ե. դարերում և մեծ հետքեր թողեց հայութեան ապագա զարգացման վրայ», գրեթե չի հիշվել։ Չեն հիշատակվել նաև «Է.—Ժ. դարերի մտաւոր գործերը, ճարտարապետական կոթողները», Անին, որ «ինքնին կուլտուրական սկզբունքների մի գեղանի սինթեզ է»[58]։ Ան. Զաքարյանն իր վերոհիշյալ մենագրության մեջ տողատակում ծանոթագրում է, թե հայ մշակույթի ձևավորման և զարգացման վրա Արևելքի ու Արևմուտքի ազդեցությունների խնդիրը դուրս չի մնացել նաև գրականագիտության տեսադաշտից։ Նա գրում է, որ «… ինչպես նշել է գրականագետ Խ. Սարգսյանը, XIX դ. կեսերին այդ սկզբունքին հետևել է անվանի լուսավորիչ Ստ. Նազարյանցը (տե՛ս Խ. Սարգսյան. Մանուկ Աբեղյանը և հայ հին գրականության պատմությունը, Երևան, 1946, էջ 32)»։ Խ. Սարգսյանը, «հակիրճ, բայց խորությամբ առարկելով Վ. Բրյուսովին», միաժամանակ ընդգծել է՝ հատկապես «ոգու ասպարեզում կատարած մեծագործության իմաստով», հայ ժողովրդին «իր սեփական արժանիքները ճանաչեցնելու» կարևորությունը[59]։

Հովհ. Թումանյանը կարևոր թերիներ էր նշում նաև ժողովածուի հատկապես վաղ միջնադարյան պոեզիայի թարգմանությունների վերաբերյալ։ «Թէպէտ և «Поэзия Армении»-ի թարգմանութեանը մասնակցել են ռուսաց գրեթէ բոլոր առաջնակարգ բանաստեղծներն ու թարգմանիչները,— գրում է նա,— բայց գործը հեշտ գործերից չի և միանգամից, էն էլ էս ծաւալով, գլուխ չէր գալու անթերի»։ Սակայն, ըստ Թումանյանի, այդ հարցում «մեղքի» մեծ բաժին ունեին հենց հայ թարգմանիչները։ «Մեր հին բանաստեղծութեան մէջ շատ բառեր ու ձևեր կան, որ մինչև էսօր մնում են մութն ու անհասկանալի, և կամ սխալ են մեկնած։ Շատ աղաւաղած տեղեր կան, որ մինչև օրս մնում են անվերծանել,— շարունակում է նա։— Էդ պատճառով շատ տեղ հենց մենք ինքներս ենք թարգմանիչներին ձգել սխալների մէջ՝ էդ տեսակ տեղերն ու տողերը սխալ թարգմանած նրանց ձեռքը տալով»։ Բերելով ասվածին բնորոշ մի շարք օրինակներ՝ նա առաջարկում է Բրյուսովի ժողովածուի սպասվող երկրորդ տպագրության ժամանակ «հմուտ մարդկանց ձեռքով սրբագրել և գիրքն ազատել գոնէ էն տեսակ սխալներից, որոնք միանգամայն փոխում են բանաստեղծութեան իմաստը …»։ Հովհ. Թումանյանի համոզմամբ՝ դա անհրաժեշտ էր՝ «տեսնելով էն ահագին տպաւորութիւնը, որ արաւ Հայաստանի բանաստեղծութեան գիրքը»։ Նրա բնորոշմամբ՝ ըստ էության, «Մի զարկով ահագին

[56] «Պայքար» (Թիֆլիս), 17. I. 1916։
[57] Տե՛ս Закарян. 2016, 45.
[58] Տե՛ս «Արև» (Բաքու), 30. I. 1916։
[59] Закарян. 2016, 70.

գործ կատարվեց. մի գրքով միանգամից լայնածավալ շրջաններում առաջ եկավ ու հաստատեց նոր վերաբերմունք»[60]:

Տարիներ անց նշված խնդիրներին ավելի հանգամանորեն անդրադարձել է նաև գրականագետ Ա. Տերտերյանը: «Поэзия Армении» ժողովածուի Վ. Բրյուսովի «Առաջաբանի» մեջ նկատվող «մեթոդոլոգիական» թերիներից մեկը, ըստ նրա, «Արևելքի և Արևմուտքի պայքարն է, որ հեղինակը բխեցնում է «հայ ժողովրդի բնավորությունից» և տիրաբար իշխել է տալիս թե հայ պատմության, թե հայ գրականության և թե ողջ կուլտուրայի վրա: Նույնիսկ արևմտահայ ու արևելահայ գրականությունների առանձնացումը, բաժանումը նա կապում է իր այդ կիսաբիոլոգիական, կիսապատմական սկզբունքի հետ, մեկը՝ արևելքը, կապելով փայլի ու գունագեղության, իսկ մյուսը՝ արևմուտքը, զսպության և բարեձևության հետ»: Համարելով, որ նման «կոնցեպցիան», ի վերջո, «իբրև ամբողջություն ստատիկ բնույթ ունի, այլազան էպոխաները դիմագրկող և կոնկրետ պատմագրական իրողությունները միատեսակ ներկով չպարող մոտեցում է», Ա. Տերտերյանը նկատում է, թե «բարեբախտաբար /…/ Վ. Բրյուսովը հետևողական կերպով չի անցկացնում «ազդեցությունների» իր այդ սկզբունքը. նա հայ ժողովրդին համաշխարհային գրականության պատմության մեջ մտնելու տոմս է տալիս, նկատի առնելով նրա զուտ ինքնուրույն ստեղծագործությունը»: Արձանագրելով, որ Բրյուսովն «Արևելքի և Արևմուտքի «հավերժական սկզբունքը» կիրառում է նաև հայ նոր գրականության ընթացքի քննության համատեքստում՝ Ա. Տերտերյանը նշում է, թե քանի որ, ըստ Բրյուսովի, «Այդ սկզբունքները իրենց հիմքում հակամարտ են», ուրեմն և «հայ ժողովրդի պատմական միսիան ոչ այլ ինչ է, բայց եթե դրանց մեջ հաստատելու «ներդաշնակ հաշտություն»: Ավելին՝ վիճելի համարելով նաև Վ. Բրյուսովի «մի պնդումը, թե գոյություն ունեն ռուսահայերի և տաճկահայերի գրական դպրոցներ, գրականագետը հակադարձում է, որ «Գրական ռոմանտիզմը, ռեալիզմը և սիմվոլիզմը ունեցել են իրենց արտահայտիչները թե ռուսահայերի և թե տաճկահայերի մոտ: Պեշիկթաշլյանը շատ ավելի Պատկանյանին է մոտիկ, քան, օրինակ, Տերյանին, իսկ Տերյանը շատ ավելի Դուրյանին է մոտիկ, քան, օրինակ, Շահազիզին»[61]: Ա. Տերտերյանն իր որոշ վերապահումներն է արտահայտում նաև «զուտ արվեստի» և «տենդենցիայի» խնդիրների «ոչ պատմականորեն» լուծման, ոչ միայն հայ նոր գրականության որոշ դեմքերի (Մ. Նալբանդյան, Ե. Շահազիզ, Սիամանթո, Դ. Վարուժան), այլև միջնադարյան տաղերգուների (օր.՝ Ֆրիկի) գնահատության մեջ նկատելի բացերի ու թերիների վերաբերյալ: Այդ ամենը, սակայն, Ա. Տերտերյանի համոզմամբ, ամենևին չի նսեմացնում Վ. Բրյուսովի Առաջաբանի «պատմագրական արժեքը», որը, ըստ գրականագետի, «նույնիսկ իր բացերով հանդերձ էպոխաշեն աշխատանք է, որ ցույց է տալիս հեղինակի ինքնուրույն մոտեցումը մի շարք վիճելի հարցերի նկատմամբ: Թե այդ և թե մյուս հայագիտական գործերով նա մեծ ազդեցություն է թողել իր ժամանակակիցների վրա»[62]:

---

60 «Հորիզոն» (Թիֆլիս), 07. II. 1917:
61 Տ ե ր տ ե ր յ ա ն. 1980, 374–375:
62 Տ ե ր տ ե ր յ ա ն. 1980, 376–377:

Ընդհանուր վերաբերմունքը Վ. Բրյուսովի գործի և անձի նկատմամբ

Ընդհանուր առմամբ, իհարկե, հայ հասարակության ու մտավորականության տիրապետող արձագանքը Վ. Բրյուսովի անձի և գործի նկատմամբ բարձր ոգևորությունն էր, հիացմունքն ու գնահատանքը: Բոլորի կարծիքով «Поэзия Армении» *ժողովածուի հրատարակությունն արտակարգ երևույթ էր հայ ժողովրդի կյանքում: Հովհ. Թումանյանը՝ «Հայոց Գրողների Ընկերության անունից» իրենց «լիասիրտ շնորհակալությունն» է հայտնում Վ. Բրյուսովին՝ «էս բարձր ու գեղեցիկ գործի համար»: Ըստ նրա, Բրյուսովն է եղել «էն հազվագյուտ մարդկանցից մեկը», որ կարողացել է կարդալ հայ պոեզիայի «կախարդական գիրն ամբողջ աշխարհի առջև ...»*[63]*: Նշելով, որ «բանաստեղծության թարգմանությունը /.../ շատ է դժվար ու հազվագյուտ բան», իր տեսակետը հիմնավորելու համար բերելով Գյոթեի պատկերավոր մեկնաբանությունը՝ ապակու տակ դրված վարդի մասին՝ Թումանյանը եզրակացնում է, թե, ուրեմն, «Ինչքա՜ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքա՜ն սեր ...»*[64]*: Հովհ. Թումանյանն իր հիացմունքն է արտահայտում նաև ժողովածուի «խնամքով կազմած ու ճաշակով տպած», «իր պարզության մեջ /.../ ինչքան շքեղ» լինելու համար*[65]*: Ավ. Իսահակյանը* «Поэзия Армении»*-ի կազմումն ու հրատարակումը բնութագրում է որպես «Մի շատ ծանր, դժվարին գործ, որ պսակվեց փայլուն հաջողությամբ»*[66]*: Դ. Դեմիրճյանի համոզմամբ, «... բրյուսովյան ժողովածուն հայ միջնադարի վերհանումն եղավ գերազանցապես», որին հետևեց հայ «նոր բանաստեղծության՝ Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և Վ. Տերյանի մեծարումը», ինչպես նաև՝ «արժանի տուրք տրվելու էր և տրվեց էլ հայ գրականության մյուս բոլոր ներկայացուցիչներին, որոնցից ժողովածու մտան ամենից արժանի գործերը»*[67]*: Ստ. Զորյանի բնորոշմամբ՝ «Առանձնապես մեզ համար գնահատելի է Բրյուսովի ծառայությունը հայ բանաստեղծությանը, որի թարգմանությունը կատարեց նա մեծ սիրով ու ոգևորությամբ՝* «Поэзия Армении» *ժողովածուն»*[68]*: 1944-ի պատերազմական ծանր շրջանում անգամ Ա. Տերտերյանը մեծ հիացմունքով արձանագրում էր, որ «Ռուս հրատարակչական աշխարհում Վ. Բրյուսովը սենսացիա առաջ բերեց իր «Հայաստանի պոեզիայով»: «Պարուս» հրատարակչությունը, որին մոտ էր կանգնած Մաքսիմ Գորկին, Բրյուսովի գիրքը համարեց գլուխ գործոց»: Գրականագետը մեջբերում է «Պարուս»-ի խմբագրության տեսակետը, ըստ որի «Ձեր հոյակապ «Հայաստանի պոեզիան» նախանձի զգացմունք է շարժել և մեզ դրդել մեր ժողովրդին տալու նման գեղարվեստական բարձրություն»*[69]*: 1975-ին ձեռնարկելով «Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին» ժողովածուի կազմումը, խմբագրումն ու հրատարակումը, գրականագետ Գուրգեն Հովնանը՝ գրքի իր Առաջաբանում ընդգծում է Վ. Բրյուսովի «բացառիկ մեծ համբա-*

---

[63] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 35:
[64] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 38:
[65] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 39:
[66] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 59:
[67] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 63:
[68] Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 68:
[69] Տ ե ր տ ե ր յ ա ն. 1980, 360:

վը»՝ որպես բանաստեղծ, գրականագետ և թարգմանիչ: Ըստ Գ. Հովնանի, «առանձնապես մեծ ու նշանակալից է» նրա դերը նաև «ժողովուրդների բարեկամության, համերաշխության ու կուլտուրական փոխադարձ համագործակցության ասպարեզում: /…/ Նա մեծ ու խսկական հումանիստ էր, հումանիստ՝ լայն առումով»[70]:

Պակաս նշանակալից չեն նաև հայ գրողների ու գրականագետների հիացմունքի խոսքերը Վ. Բրյուսովի անձի, մարդկային ու ստեղծագործական կերպարի վերաբերյալ: Հովհ. Թումանյանը, ողջունելով Վ. Բրյուսովին՝ «որպես ռուսական գրականության խոշոր ներկայացուցչի», միաժամանակ ուրախությունն է հայտնում իրենց ջերմ մտերմության՝ «փոխադարձ կապի համար»: Հիշելով Թիֆլիսյան իրենց հանդիպումները՝ նրան անվանում է «մեր անմոռանալի բարեկամն ու ընկերը», «մեր ազնիվ հյուրը»[71]: Վ. Տերյանի կարծիքով, Բրյուսովի «անունն արդեն պատվավոր տեղ է գրավում լավագույն ռուս գրողների շարքում, քանի որ ներկայումս նա «հայտնի է ոչ միայն իբրև արվեստագետ-պոետ, այլև իբրև քննադատ և լավագույն պուշկինագետներից մեկը»[72]: Հովհ. Հովհաննիսյանը նրան համարում է «բոլորիս սիրելի ռուս գրականության /…/ պանծալի ներկայացուցիչներից»[73]: Շիրվանզադեի տպավորությամբ՝ Վ. Բրյուսովի Թիֆլիսյան դասախոսությունը ոչ այլ ինչ էր, քան «կախարդական տեսարանների մի երկար շարք», որ «չորս ժամ շարունակ» ներկայացրել է «նուրբ մտածող և ավելի նուրբ զգացող բանաստեղծն իր հմայիչ վրձնի զորությամբ»[74]: Ստ. Զորյանը խոստովանում է, որ «Մարդկային խոսքերով հաղորդել» Վ. Բրյուսովի «արտասանությունների մեծ տպավորությունը դժվար է: Պետք է անձամբ տեսնել և լսել, թե ինչպիսի՜ ներշնչումով էր ոգում Բրյուսովը իր թարգմանությունները: Թվում էր, թե չի արտասանում, այլ ապրում է բեմի վրա, /…/ ամբողջ դահլիճը մի մարդու պես շնչագուսպ հետևում էր նրա արտիստիկ ասմունքին, մանավանդ որ արտասանում էր անգիր»[75]: Իսկ 1934 թ. գրած իր բանաստեղծության մեջ Ե. Չարենցը «խոր ու գիտուն» բանաստեղծ է անվանում Վ. Բրյուսովին[76]:

Եզրակացություն

Ռուս նշանավոր բանաստեղծ, գրաքննադատ, թարգմանիչ, տարբեր մշակույթների և գրականությունների մերձեցման ջատագով Վալերի Բրյուսովի անձն ու գործունեությունը՝ հատկապես «Հայաստանի պոեզիան» ժողովածուի նախապատրաստման, կազմման և հրատարակման ընթացքում ու դրանից հետո՝ սկսած անցյալ դարի 10-ական թվականներից մինչև մեր օրերը, բարձր է գնահատվել հայ գրական-գիտական մտքի կողմից: Առանձնապես ընդգծվել է Հայոց մեծ եղեռնից հետո հայ ժողովրդի բազմադարյա մշակույթի ու գրականության արժեքներն աշխարհին ներկայացնելու նրա անկեղծ նվիրումը: Պա-

---

[70] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 5–6:*
[71] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 35–36:*
[72] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին 1975, 28:*
[73] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 30:*
[74] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 41:*
[75] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 75–76:*
[76] *Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, 21:*

տաՀական չէ, որ Վ. Բրյուսովը բարեկամական ջերմ Հարաբերություններ է ունեցել Հայ մշակույթի այնպիսի մեծերի Հետ, ինչպես ՀովՀ. Թումանյանը, ՀովՀ. ՀովՀաննիսյանը, Վ. Տերյանը, Ա. Չոպանյանը և ուրիշներ:

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական Հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, բազմաթիվ գրականագիտական և գրաքննադատական Հոդվածների: pdemirchyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբալյան Ն. 2005, Ընտրանի, կազմեց և ծանոթագրեց Գ. Անանյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 362 էջ:

«Արև» (Բաքու), 30. I. 1916, 21. I. 1917:

«Բագին» (Պէյրութ), 2022, թիվ 3, էջ 87–105:

«Գեղարվեստ», Թիֆլիս, 1913, գիրք 5-րդ, արտասահմանեան բացառիկ թիւ № 1, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 162 էջ:

«Գործ» (Բագու), 1917, թիվ 3, II մաս, էջ 45–49:

Վալերի Բրյուսովի բանախոսությունը.– «Պայքար» (Թիֆլիս), 17. I. 1916:

Թորոսեան Ս. «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծութեան զարգացումը». – «Արև» (Բագու), 30. I. 1916:

Թումանյան Հովհ. «Поэзия Армении», գրքի երկրորդ տպագրութեան առիթով. – «Հորիզոն» (Թիֆլիս), 07. II. 1917:

Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին. 1975, Կազմեց և խմբագրեց՝ Գուրգեն Հովնան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 133 էջ:

Սուքիասյան Ս. Վալերի Բրյուսով և Վահան Տերյան, 1941. – «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ – Հայկական ֆիլիալ, թիվ 3–4, էջ 13–14:

Բրյուսով Վ. 1967, Հայաստանի և հայ մշակույթի մասին, Երևան, ՀՍՍ ԳԱ հրատ., 296 էջ:

Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում. 1964, Կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Վ. Պարտիզունի, Երևան, 584 էջ:

Վ. Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուն և հայ միջնադարյան քնարերգությունը (հոդվածների ժողովածու), Երևան, «Լուսակն» հրատ., 2016, 120 էջ:

Վահէ Օշականի անտիպ նամակներից, «Բագին», Պէյրութ, 2022, թիւ 3, էջ 87–105:

Տերտերյան Ա. 1980, Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան, Երկեր, Երևան, ԵՊՀ հրատ., 492 էջ:

Закарян А. 2016, Армения в литературно-общественной деятельности В. Брюсова, Ереван, «Гитутюн», 168 с.

«Поэзия Армении» под редакцией Валерия Брюсова. 1966, Ереван, «Айастан», 511 с.

ВАЛЕРИЙ БРЮСОВ В ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРНО-НАУЧНОЙ МЫСЛИ

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Резюме

Ключевые слова: В. Брюсов, литературовед, переводчик, Ю. Веселовский, М. Горький, В. Терьян, Ов. Туманян, «Поэзия Армении», брюсовские лекции, поездки в Закавказье.

Процесс оценки личности и деятельности известного русского поэта, критика, переводчика Валерия Брюсова (1873–1924) армянской литературно-научной мыслью имеет более чем вековую историю. Одним из первых в 1913 году дал оценку творчеству В. Брюсова Ваан Терьян. В армянской среде интерес к личности и творчеству В. Брюсова резко возрос, особенно после Геноцида армян, осуществленного Османской империей, во время подготовки и издания составленного и отредактированного им сборника «Поэзия Армении», в 1915–1916 гг. В разных формах – статьи, стихотворения, приветственные речи, письма и т. д. – выступили многие видные деятели армянской литературы того времени: Ов. Оганесян, Ал. Ширванзаде, Ов. Туманян, В. Терьян, А. Чопанян, Н. Агбалян... В последующие десятилетия по юбилейным и другим поводам появлялись публикации, писались статьи и объемные исследования, читались научные доклады на конференциях (в частности, начиная с 1962 года, на многих «Брюсовских чтениях»). В них была всесторонне рассмотрена и оценена деятельность В. Брюсова как поэта, критика, переводчика, сторонника сближения разных культур и литератур, а также многие принципиальные вопросы, связанные с подготовкой и изданием сборника «Поэзия Армении». Был внесен ряд корректировок, предложенных историками, литературоведами Ов. Ганаланяном, М. Нерсисяном, С. Дароняном, Е. Алексаняном, Л. Мкртчяном, К. Айвазяном, М. Амирханяном и другими. Этот процесс продолжается и сегодня, благодаря усилиям современных литературоведов Ан. Закаряна, А. Долуханян и других.

Петрос Демирчян – д. филол. н., секретарь правления Союза писателей Армении, ведущий научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей. pdemirchyan@mail.ru

ASSESSMENT OF VALERY BRYUSOV IN THE ARMENIAN LITERARY AND SCIENTIFIC THOUGHT

PETROS DEMIRCHYAN

Summary

Keywords: V. Bryusov, literary critic, translator, Yu. Veselovsky, M. Gorky, V. Teryan, Hovh. Tumanyan, "Poetry of Armenia", Bryusov's lectures, visits to Transcaucasia.

The process of evaluation of the personality and activity of the famous Russian poet, critic, translator Valery Bryusov (1873-1924) by the Armenian literary and scientific mind has a history of more than a century. Vahan Teryan was one of the first to evaluate works of Valery Bryusov in 1913. In the Armenian environment, interest in the personality and works of Valery Bryusov rose sharply, especially after the Great Armenian Genocide carried out by the Ottoman Empire, during the preparation and publication of the collection "Poetry of Armenia" compiled and edited by Bryusov in 1915–1916. Many prominent figures of Armenian literature of the time: Hovh. Hovhannisyan, Al. Shirvanzadeh, H. Tumanyan, V. Teryan, A. Chopanyan, N. Aghbalyan, spoke out in the forms of articles, poems, welcome speeches, letters, etc. In the following decades, publications appeared on anniversaries and other occasions, articles and voluminous studies were written, scientific reports were given at conferences (in particular, since 1962 at many "Bryusov readings"). These materials made it possible to comprehensively review and evaluate activities of V. Bryusov as a poet, critic, translator, supporter of the rapprochement of different cultures and literatures, as well as many fundamental issues related to the preparation and publication of the collection "Poetry of Armenia". A number of adjustments were made, which were proposed by historians and literary scholars Hovh. Ghanalanyan, M. Nersisyan, S. Daronyan, Ye. Aleksanyan, L. Mkrtchyan, K. Ayvazyan, M. Amirkhanyan and others. This process continues even today, thanks to the efforts of modern literary scholars An. Zakaryan, A. Dolukhanyan and others.

Petros Demirchyan – Doctor of Philological Sciences. Executive Secretary at Writers' Union of Armenia, Leading Researcher at the Department of Modern Armenian Literature at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary and literary-critical articles. pdemirchyan@mail.ru

ՀՏԴ 929 :891.981 Հայր Ղևոնդ Ալիշան +929:39(479.25) Գարեգին Սրվանձտյանց

Doi:10.54503/0135-0536-2023.3-163

ԿՈՒԼՏՈՒՐ-ՊԱՏՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԳՈՐԾԵՐԻ ՎՐԱ*

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Հիպոլիտ Ադոլֆ Տեն, կուլտուր-պատմական դպրոց, Հայր Ղևոնդ Ալիշան, Մխիթարյաններ, Գարեգին եպս. Սրվանձտյանց, գեղարվեստի փիլիսոփայություն, պատմականություն, միջավայրի, պահի և ցեղային պատկանելության եռանդամ բանաձև, եվրոպակենտրոն աշխարհայացք, համաժամանակություն:

Նախաբան

Կուլտուր-պատմական դպրոցը հումանիտար գիտությունների՝ մշակութաբանության, արվեստի պատմության, գրականագիտության մեջ կայուն ու հիմնարար փիլիսոփայական-գեղագիտական մեթոդ-համակարգ է, որը կապվում է XIX դարի ֆրանսիացի փիլիսոփա, մշակույթի տեսաբան Հիպոլիտ Ադոլֆ Տենի (1828–1893) անվան հետ:

Այն բազմաթիվ հետևորդներ ունեցավ տարբեր երկրներում (Ջ. Բրանդես, Պ. Լակոմբ, Ժ. Ռենար, Ն. Պիպին և ուրիշներ): Ակնհայտ է, որ հայկական իրականությունը, հայ մտածողները ևս չէին կարող անմասն մնալ համաեվրոպական փիլիսոփայական և մշակութաբանական այս շարժումից: XIX դարի 60–80-ական թվականների հայագիտության խոշորագույն երկու ներկայացուցիչների՝ Հայր Ղևոնդ Ալիշանի և Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի՝ գրական-գեղարվեստական որոշ գործերի վրա կուլտուր-պատմական դպրոցի ուղղակի ազդեցությունն անդրադառնում է նրանց ստեղծագործական աշխարհայացքի վրա այս դպրոցի թողած ազդեցությանը, ներկայացնում դրույթների, հասկացությունների, գաղափարների փոխներթափանցման աշխարհայացքային հիմքերն ու ընդհանրությունները, պատճառները և հնարավոր եղելությունը հայոց իրականության մեջ[1]: Այս դպրոցի հայեցա-

---

** Ներկայացվել է 28. VIII. 2023 թ., գրախոսվել է 04. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] Կուլտուր-պատմական դպրոցի և ռոմանտիկական հերմենևտիկայի՝ առաջին հայացքից ակնհայտ հակասությունը, բանալեճը մեր ընտրած հեղինակների առումով լուծել ենք Մանուկ Աբեղյանի «Գրական դպրոցներ» ուսումնասիրության մեջ ուշ ռոմանտիզմի վերաբերյալ հետևյալ դրույթներով. «Այսպիսով (ավելի ուշ շրջանում) միանգամից ընդարձակվում է արվեստի սահմանը և ամեն բանի մեջ գեղեցկություն տեսնելով, ռոմանտիկներն ամեն բան էլ գեղարվեստով վերստեղծում էին, և հակառակ կլասիկական ըմբռնման, գեղեցկությունը առավելապես հենց այն պա-

կարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ոչ միայն ստեղծում է կայուն միավորներով ձևավորված մշակութային տարածություն, այլև հնարավոր է դարձնում ներմշակութային և միջմշակութային հաղորդակցությունը:

Անշուշտ, միանշանակ չէ Հայր Ղևոնդ Ալիշանի և Գարեգին Սրվանձտյանցի՝ որևէ գրական դպրոցի անխառն ազդեցությունը կրելը, բայց այս պարագայում կողմնորոշումը դեպի կուլտուր-պատմական դպրոցը սոսկ գեղագիտական կամ աշխարհայացքային նախասիրությամբ չէր թելադրվում, այլ պայմանավորված էր հայրենական մշակույթի զարգացման առանձնահատկություններով, հայ կյանքի կարիքներով:

Կուլտուր-պատմական դպրոցը

Կուլտուր-պատմական դպրոցի ձևավորումը կապված է XIX դարակեսին Եվրոպայում ստեղծված հասարակական-քաղաքական ու պատմական հանգամանքների հետ՝ իբրև հետևանք պատմական, սոցիոլոգիական և փիլիսոփայական գիտությունների զարգացման ու նոր ձևավորվող պոզիտիվիստական (դրապաշտական) աշխարհայեցության: Սկսած 1830–1840-ական թվականներից՝ գրականության մասին գիտության մեջ ձևավորվում են երևույթների գնահատման պատմական սկզբունքները. գրողներն իբրև իրենց ստեղծագործությունների հիմք են ընդունում աշխարհի և իրողությունների քննության հասարակական-պատմական ելակետը: «Քննադատական և պատմական էսսեներ» (1858, 1865), «Անգլիական գրականության պատմություն» (1864) ժողովածուներով սկսելով իր գիտական գործունեությունը՝ Տենը 1865–1869 թվականներին առանձին մենագրություններով հրատարակում, ապա 1880-ին ամբողջական գրքով ընթերցողին է ներկայացնում իր «Գեղարվեստի փիլիսոփայությունը» ակնառու աշխատությունը, որն իմի է բերում և ձևակերպում արվեստի տարբեր ճյուղերի վերաբերյալ նրա քննադատական ուսմունքն ու գրական-գեղարվեստական ընթացքի օրինաչափությունների պատմությունը: Սկիզբը է դրվում կուլտուր-պատմական դպրոցի, որի գիտական տեսությունը ներկայացնում էր գաղափարների մի շարք՝ պատճառականության սկզբունքով ուղղակիորեն կապված պատմական ժամանակի, աշխարհագրական միջավայրի և ցեղային պատկանելության հետ, ըստ որոնց, Տենը գեղարվեստն ու մշակույթի պատ-

---

տահական, մասնավոր, զուտ տեղական, ցեղական բնավորություն կրող բաների մեջ էին գտնում, նույնիսկ հրեշավորի, ֆանտաստիկականի ու տգեղի մեջ: Ժամանակի ոգին այդ պահանջն ուներ, մարդիկ ստացել էին իրենց առանձնական անհատականությունը, գեղարվեստի նյութն էլ ընդհանուր մարդկանցից, ժամանակ, տեղի ու ազգի վերացականությունից (տե՛ս «Նոր-Դար», 1896, № 107) դեպի մասնավոր ժամանակը, մասնավոր տեղը ու ազգը պիտի իջներ *(ընդգծումը մերն է – Ս. Մ.): Բայց չէ որ հենց այդ մասնավորի մեջ է ներկայանում և իրականությունը: Այսպիսով ծնվում է գրականության մեջ* տեղական գույնի *պահանջը, որ և միևնույն է թե՝ պահանջվում է արվեստով իրականությունը հենց այնպես վերստեղծել, ինչպես կա: Ռոմանտիկական դպրոցի համար խորթ է հնչում այս պահանջը, որ ավելի հաջորդ, իրականյան դպրոցինն է, բայց դա և ռոմանտիկական դպրոցի պահանջն է: Տեղական գույն ասելով մի ընդհանուր բառով հասկացվում է այն, որ կարելի է* ազգի ժամանակ ու տեղի գույն *ասել» (Ա բ ե ղ յ ա ն. 1975, 295):*

մությունը քննում է հասարակական կյանքի ու քաղաքակրթությունների պատմության համատեքստում: «Պոզիտիվիստ Տենի տեսանկյունից,– գրում է Տուրիչևան,– այս գործոններն ամբողջապես և լիովին որոշում են մշակույթի զարգացումը: Եվ գրականությունը պետք է օգնի հայտնաբերելու այս «մեծ սկզբնական շարժիչ ուժերը», որոնք պայմանավորում են ազգի կյանքն իր բոլոր դրսևորումներով»[2]: Համոզված լինելով, որ «գրականությունն ավելին է, քան նախորդ սերունդների ապրումները մեզ ներկայացնող մյուս բոլոր փաստաթղթերը»[3], վկայակոչելով բազմաթիվ փաստեր ու իրողություններ՝ նա միանգամայն հիմնավոր գիտական հիմունքի վրա է դնում գրականության, մշակույթի մեջ ազգային ոգու, պատմական ժամանակի արտածման տեսությունը՝ հստակ սահմանելով, թե յուրաքանչյուր ժամանակ ունի աշխարհի՝ սոցիալականորեն և պատմականորեն ծածկագրված իր պատկերն ու պատկերացումը: «Այդ մեթոդի մեկնակետն այն է,– գրում է Տենը,– որ մենք ըմբռնենք, թե գեղարվեստական գործը մի մեկուսացած բան չէ, և հետևաբար, որոնենք այն ամբողջությունը, որից նա կախում ունի և որը նրա բացատրումն է»[4]: Համառ հետևողականությամբ գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության ելակետը համարելով պատմականության սկզբունքը՝ ֆրանսիացի փիլիսոփա-տեսաբանը կլիմայի և ցեղային առանձնահատկությունների հաշվառումով հանգում է արվեստի գործերի՝ ըստ շրջափուլերի միատեսակ, օրինաչափ զարգացման գաղափարին: «Այսպիսով,– գրում է նա,– մենք գալիս ենք այն եզրակացության, որ գեղարվեստական գործը, նկարչին, նկարիչների խմբակը հասկանալու համար, անհրաժեշտ է ճշտորեն պատկերացնել նրանց պատկանած ժամանակի աշխարհայացքի և բարքերի ընդհանուր վիճակը: Այստեղ է գտնվում ամենավերջին բացատրությունը, այստեղ է հանգչում այն նախնական պատճառը՝ որ և պայմանավորում է մնացածը»[5]:

Ակնհայտ է, որ արվեստի ստեղծագործություններն իրենց խորքային առանձնահատկությունների մեջ ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է տեղափոխվել այն պատմական և աշխարհագրական միջավայրը, որտեղ նրանք ստեղծվել են՝ յուրովի արտացոլելով ցեղային գենետիկան ու էթնիկական մտախառնվածքը: Այս տեսությունը, որն առաջին հայացքից կարող է թվալ խիստ մշակութաբանական, իր գիտական հարացույցում և հայեցակարգի ամբողջության մեջ ազգային հավաքականությանն առնչվող բազմաթիվ հարցադրումներ ուներ և շատ արագ արձագանք գտավ հայկական իրականության ամենատարբեր շրջանակներում: «Հայ գրականագիտության մեջ,– գրում է Ժենյա Քալանթարյանը,– տասնիններորդ դարի վերջին երեք տասնամյակում լայն արձագանք գտավ կուլտուր-պատմական դպրոցը: Տարբեր չափով ու տարբեր բնույթով արտահայտվեց այդ արձագանքը՝ սկսած դպրոցի սկզբունքների մեխանիկական կիրառությունից (Հազվադեպ հանդիպող) մինչև որոշակի արտահայտված քննադատական վերաբերմուն-

[2] Տուրիչևա. 2017, 54:
[3] Тэн. 1987, 94.
[4] Տեն. 1936, 7:
[5] Տեն. 1936, 7:

քը»[6]: Պատմական զարգացման պատճառաբանությամբ հայ գեղարվեստական մշակույթի՝ գրեթե մեկ դար ուշացած ուղղությունների ու մեթոդների կանոնիկ հերթագայությունը՝ կլասիցիզմ, լուսավորական ռեալիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ..., ապա գրական դպրոցներինը՝ միֆոլոգիական, կուլտուր-պատմական, հոգեբանական և այլն, հաստատում է, որ այն, միջմշակութային առնչությունների ու համագոյակցող պատմափիլիսոփայական իրողությունների փոխներթափանցմամբ պայմանավորված, ձևավորվել է եվրոպական իմացականության համատեքստում և յուրովի տեղայնացվել հայկական միջավայրի ու իրականության մեջ՝ ձեռք բերելով միանգամայն առանձնահատուկ ազգային նկարագիր: Բայց, ինչպես ցույց է տալիս մեր մշակույթի՝ պատմական զարգացման փորձը, գրական ուղղությունների, հոսանքների ու դպրոցների զարգացման համաշխարհային պրոցեսի տեղաշարժերը, առավելապես դրսևորվեցին ոչ թե գրական քննադատության, գեղարվեստական ընթացքի պատմափիլիսոփայական տեսություններում, այլև՝ հայ գիտագեղարվեստական գրականության մեջ՝ գեղագիտական ու գաղափարական ամենատարբեր դրսևորումներով և խորությամբ: Թերևս բացառություն է կազմում Մխիթարյանների հանգամանքը, որոնք, լինելով համաեվրոպական մշակութային տարածության ու ժամանակի մեջ և տիրապետելով բազմաթիվ լեզուների, համաժամանակյա գիտական ու մշակութային շարժում էին սկսել՝ հայագիտական իրենց գործունեության ելակետ ունենալով հայոց եվրոպակենտրոն աշխարհայացքն ու քրիստոնեական ոգու ֆենոմենոլոգիան:

Պատմական-մշակութային միջավայրի տեսություն

XIX դարակեսը հայկական իրականության ամենաբարդ փուլերից է: Պատմաքաղաքական և հասարակական ծանրագույն իրադարձություններով պայմանավորված՝ ազգային մտավորականությունը ստիպված էր կապակցել պատմամշակութային ու կենսափիլիսոփայական հասկացությունները, ամեն տեղ և ամենուր որոնել հայրենիքի գաղափարը՝ ձգտելով հայոց ապագայի հեռանկարը դուրս բերել բնաշխարհի, պատմության ու ցեղի ներքին կարողությունների բացահայտման հնարավորությունից: XIX դ. գրականության աշխարհայացքը գոյաբանական իմաստակիր հենարանները որոնում էր ազգի ֆիզիկական, հոգևոր ու բարոյական հարստության մեջ, անհատականացնում հավաքական հիշողությունը՝ սկիզբ դնելով ռոմանտիզմի գրական էսթետիկային ու փիլիսոփայական ավանդներին: Ամենասկզբում, դիմադարձ լինելով սոցիալ-քաղաքական, ազգային կյանքի չարաղետ իրավիճակին, ռոմանտիկները մի ուրույն հայացքով էին քննաբանում հայոց պատմությունը՝ անցյալի հիշատակների ու սրբագնացած մասունքների մեջ որոնելով հայրենափրկության իրենց իդեալը: Այս իմաստով բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում գրական այն կտորները, որոնք քննության առարկան են և ուղղակիորեն առնչվում են կուլտուր-պատմական դպրոցի ազդեցությանը:

Ավելեց արդեն, որ մշակութաբանական ու պատմափիլիսոփայական այս դպրոցը, իբրև համակարգված ուսմունք, ուղիղ իմաստով առնչվում է XIX դարի երևելի մտածող Հ. Տենի «Գեղարվեստի փիլիսոփայությունը» աշխա-

---

[6] *Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն. 1986, 331:*

տության, բայց այս հանգամանքը չի բացառում, որ ուսմունքի գաղափարական հիմունքներն ու աշխարհայացքային նախադրյալները վաղուց տարերայնորեն ճանաչելի էին մեր իմացականությանը: Կուլտուր-պատմական դպրոցը բնության և միջավայրի՝ ժողովրդի ու արվեստի վրա ազդեցությամբ որպես աշխարհայացք առաջինն ի հայտ եկավ Մխիթարյանների մոտ: Անշուշտ, Մխիթարյան հայրերի ստեղծագործական ջիղը, հայագիտական գործունեության նպատակը նախևառաջ հայոց պատմության հեռուներում որոնում էր աստվածատունկ դրախտի, Աստծո նախակերտ արարչության հետքերը՝ միֆի ու պատմության չտարբերանված սահմանին, ըստ էության, տուրք տալով նաև միֆոլոգիական դպրոցին: Սա մի իրողություն է, որն ուրույն բովանդակություն տվեց Մխիթարյանների կլասիցիստական դրամատուրգիային, ապա՝ 1850–1860-ական թվականների պոեզիային:

Սակայն հանդիպելով իրականության՝ օրեցօր ավելի չարաղետ դարձող պատկերին՝ Մխիթարյանների միֆոլոգիզմը ժամանակի հետ մի ուրույն պատմափիլիսոփայական երանգ ու նոր բովանդակություն է ստանում: Հետզհետե լռում են անցյալի փառապանծ նվագները, լուսավորական ասկետիզմը համադրվում է ազգային ռոմանտիզմի փիլիսոփայությանը, ազգապահպանության էական գործոն է դառնում հայրենաճանաչությունը:

Բացորոշվում է հայոց իմացականության ներքին ձգտումը, առարկայանում իրականության տարբեր երևույթների և իրադարձությունների խորքային իմաստն ու բովանդակությունը. ճանաչել հայրենիքը, հայոց էթնիկականության, քրիստոնեական գենոտիպի սկզբնականությունն ու ազգային արժեքների ժառանգորդականությունը՝ անկախ ամենատարբեր ընկալումներից և մեկնաբանություններից: Այս ելակետից էր սկիզբ առնում ռոմանտիկական գրականության ներքին բովանդակությունն ու շարժման ուղղությունը, այստեղ էր նրա գլխավոր հատկանիշը (գաղափարը). «Այդ հատկանիշը այն է, ինչ որ փիլիսոփաներն անվանում են իրերի էություն. ուստի նրանք ասում են, թե արվեստի նպատակն է հայտնաբերել իրերի էությունը: Մենք մի կողմ կթողնենք այս էություն բառը, որ փիլիսոփայական տերմին է, և կասենք պարզապես, որ արվեստի նպատակն է հայտնաբերել առարկայի գլխավոր հատկանիշը, մի որևէ ակնառու ու կարևոր որակ, մի հիմնական տեսակետ, մի գլխավոր գոյավիճակ»[7]:

Պետականություն չունեցող ժողովրդի «սակավաթիվ երևելի ու լավագույն մարդիկ» ձգտում են վերածնել մեռնող հայ կյանքը (Աբեղյան), բացարձակացնել հայրենյաց նյութական ու հոգևոր հիշատակները՝ որպես հայրենիքին կապվելու միակ միջոց: Եվ, ահա, Ղևոնդ Ալիշանի՝ քննության համար ընտրված գործերում ակնհայտ գործում է (ցեղ, կլիմա, ժամանակ) պատճառականության և անհրաժեշտ նախադրյալների այն համակցությունը, որ հնարավոր է դարձնում տեղայնացնել, ճանաչելի դարձնել իրական հայրենիքը: «Իրոք, – գրում է Տենը, – կա մի բարոյական բարեխառնություն, որը բարքերի և մտքերի ընդհանուր վիճակն է, և որը նույն կերպ է գործում, ինչպես ֆիզիկականը: Ծիշտն ասած՝ նա արվեստագետներ չի արտադրում»[8]: Ապա տեսաբանը մասնավոր դեպքերից անցնում է ընդհանրական եզրահանգմանը, որն օրինաչափ է բոլոր ժամանակների ու ժողովուրդների համար. «… գեղար-

[7] *Տ ե ն. 1936, 31:*
[8] *Տ ե ն. 1936, 12:*

վեստական երկը, – գրում է նա, – որոշվում է մի ամբողջությամբ, որը շրջապատող մտքերի ու բարքերի ընդհանուր վիճակն է: … Արդ, զգացմունքների, պահանջների և ունակությունների այդ խումբը, երբ որ արտահայտվում է ամբողջությամբ և ցայտուն կերպով միևնույն հոգու մեջ, կազմում է տիրապետող անձնավորությունը, այսինքն այն տիպարը, որին իր ժամանակակիցները շրջապատում են իրենց հիացմամբ և իրենց համակրությամբ»[9]: Հենց այս մթնոլորտում էին գործում այն գրագետները, որոնք կարողացան գաղափարը միացնել իրականության հետ՝ իմացաբանական ու ուսուցողական կերպարանք տալով հայրենիքի մասին գիտությանը:

Կուլտուր-պատմական դպրոցի ազդեցությունը Հայր Ղևոնդ Ալիշանի գործերի վրա: Կլիմա-ռասսա-պատմական պահ եռանդամ բանաձևը

Ղ. Ալիշանի «Յուշիկք հայրենեաց Հայոց» երկհատոր աշխատությունը, կազմված 33 գլուխներից, լույս է տեսել 1869–1870 թվականներին Վենետիկում՝ իբրև պատմագեղարվեստական ստեղծագործություն, ուր ամփոփված են հայոց պատմության կարևոր դրվագներին և նշանավոր, այդ թվում՝ գրական գործիչներին նվիրված դիմանկար-պատմություններ: «Հուշիկներ»-ը հոգևոր ճանապարհորդություն է հայոց պատմության էջերով, գրուցագիրք-ուսուցարան, ուր Հայկակին տրված փաղաքշական-փոքրացուցիչ անունն իսկ աստիճանակարգության, ժառանգորդության ու հավաքական հիշողության փոխանցականության իմաստ ունի և հուշում է սերնդից սերունդ փոխանցվող ազգապատումի մի քանի դարերի պատմություն:

Իրեն ուղեկից ընտրելով Հայկ նահապետի ժառանգին՝ Հայկակին, Ալիշանը, անընդհատ զրուցելով նրա հետ, անցնում է իր ժողովրդի հազարամյա ճանապարհը՝ ըստ էության զրույցի դրվագների մեջ ստեղծելով հայոց մեծության իր առասպելը, հայրենաճանաչության իր վավերամատյանը: «… երբեմն ուզեր էի, – այս առիթով գրում է Ալիշանն առաջաբանում,– հայրենեաց սրբազան զգացման մեծ վառարանէն մէկ երկու կայծեր թափել ՚ի սիրտ քո, Հայկակ, և քեզի նման հայազգի համբակաց: Եւ ասոր համար՝ որպէսզի չկարծուիմ թէ մեր հին և մեծ հայրենեաց զանազան անցքերը ուզած ըլլամ բովանդակել գրքուկով մը, չհամարձակեցայ զանոնք յիշատակք անգամ անուանել, այլ միայն Յուշիկք …»[10]: Այս նպատակն էլ գեղեցիկ կերպով ի մի է ձուլում գրքի բոլոր գլուխները, թեև դրանք, հայոց պատմության ամենատարբեր շրջաններից վերցված թեմաների գեղարվեստական վերարտադրությունները լինելով, թվում է, թե իրար հետ ընդհանուր ոչինչ պիտի չունենային: Սակայն «Հուշիկներ»-ի երկու հատորների ամբողջության մեջ արտահայտվել է աշխարհհայացքային երկու շերտ.

ա) ավանդական պատմահայեցությունը,

բ) պատմության ու աշխարհագրության գեղագիտական նոր ընկալումը՝ Հայրենիք – միջավայր փոխհարաբերությամբ:

Այստեղ՝ երկրորդ շերտում, ակնհայտորեն երևում է Տենի ուղղակի ազդեցությունն ու արձագանքը գեղարվեստի փիլիսոփայությունից արտածված մշակութաբանական հայացքների փիլիսոփայական նրա դրույթներին: Սակայն Ֆրանսիացի փիլիսոփայի գաղափարների, դրույթների գրեթե նույնա-

---

[9] Տ ե ն. 1936, 13:

[10] Ա լ ի շ ա ն. 1869, 20:

կան «փոխանցումն» Ալիշանի ստեղծագործություն, ի մասնավորի՝ «Յուշիկք հայրենեաց Հայոց»-ի «Առաջաբան», «Վերջաբան», «Բնախօսութիւն Հայաստան աշխարհի» և ուրիշ հատվածներ, իրականության զուգահեռի վրա հայտնաբերում է հետաքրքիր իրողություններ, որոնք քննելի են միայն եվրոպական ռոմանտիզմի ծագումնաբանության, ընթացքի և, առհասարակ, Մխիթարյանների՝ եվրոպական մշակույթին (լայն իմաստով) զուգահեռ, համաժամանակյա մշակութաստեղծ գործունեության տեսակետից:

Բանն այն է, որ Հայր Ալիշանը «Հուշիկներ»-ը տպագրել է «Գեղարվեստի փիլիսոփայություն» աշխատությանը գրեթե զուգահեռ, եթե նկատի ունենանք Հիպոլիտ Տենի այս աշխատության՝ մինչև 1880-ի հրատարակությունը առանձին դասախոսություններով ընթերցողին հասած տարբերակը: Բայց բանասիրական քննությունը ցույց է տալիս, որ Ալիշանն իր պատմագեղարվեստական պատումը հղացել է դեռևս 1850-ական թվականների սկզբներից և մաս առ մաս տպագրել «Բազմավեպ» հանդեսի էջերում: Հետո, գրեթե առանց փոփոխության, վերաշարադրել է եղածը և հավաքել մի ամբողջական գրքի մեջ: Այս առիթով հետաքրքիր տեղեկություններ է փոխանցում Սուրեն Շտիկյանի հոդվածը[11]: Խոսելով Ալիշանի՝ «Բազմավեպ»-ում տպագրած այն անստորագիր գործերի մասին, որոնց հեղինակային պատկանելությունը ճշգրտվել է տարիներ անց՝ մանրամասն բանասիրական քննությամբ և փաստարկումներով, արձակ ժանրի գործերի երախայրիք է համարում 1845 թ. մայիսի սկզբին գրաբարով հրատարակված «Հովիւք Շիրակայ» գործի առաջին մասը՝ «Կենցաղ հովուաց եւ քաղաքայնոց» վերնագրով, որին հաջորդում է հունիսի համարում տպագրված երկրորդ հատվածը՝ «Լսեն երկինք ձայնի առաքինի մանկանց» խորագրով: «Այս ճշգրտումը մեզ համար կարևոր է, – գրում է Շտիկյանը, – որովհետև Ալիշանի գեղարվեստական արձակի մասին խոսելիս մշտապես ասվել-կրկնվել է, որ նրա երախայրիքը հանրահայտ «Հուշիկք հայրենեաց Հայոց» երկհատոր ստեղծագործությունն է, որը 1862 թ. հունվարից «Բազմավեպի» էջերում «Հայագիր» ընդհանուր խորագրի ներքո հատվածաբար հրատարակվելուց հետո առանձին գրքով լույս տեսավ Վենետիկում 1869 և 1870 թթ.: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, արձակ ստեղծագործություններով Ալիշանն սկսել է հանդես գալ անհամեմատ ավելի շուտ»[12]: Ինչո՞վ բացատրել այս երևույթը՝ հանճարի բացառիկ կանխատեսությա՞մբ, համաեվրոպական մտավոր կյանքը շարժման մեջ դնող ռոմանտիզմի գաղափարական ու գիտակցական հոսքերի տեղային արձագանքներո՞վ, թե՞ …:

Այս երկուսը Հայր Ալիշանի հայագիտական գործունեության նախերգանքն էին միայն. գործունեություն, որ առաջին իսկ դրվագներից իմացաբա-

---

[11] Շ տ ի կ յ ա ն. 1978, 81–92:

[12] Շ տ ի կ յ ա ն. 1978, 82: Հոդվածում գրականագետը գրում է. «1850 թ. դեկտեմբերի առաջին կեսին «Բազմավէպը» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է Ալիշանի «Ազգային վիպասանութիւն (ազգային մատենագրութիւն)» հոդվածը, որն ավարտվում է պարբերականի 1851 թ. № 1-ում: Վերջինս լեզվաոճական բնույթի որոշ մշակումներից հետո, նույն վերնագրով զետեղվել է «Յուշիկք հայրենյաց հայոցի» երկրորդ հատորում (Վենետիկ, 1870, էջ 103–127): Այս փաստը մեզ հնարավորություն է ընձեռում պարզել, որ «Հուշիկք հայրենյաց հայոց» պատմագեղարվեստական արձակի երկրորդ գրքի ատաղձները սկսել են հավաքվել դեռ 1850 թ., այսինքն նրա հրատարակությունից շուրջ քսան տարի առաջ»:

նական մի ուրույն ելակետ և հստակ նպատակ հետապնդող գործառություն ուներ, որովհետև «կար մի վսեմ գաղափար, որ պիտի գրավեր (գրավել էր) Ալիշանի ողջ էությունը, իմաստավորեր նրա իղձերն ու երազները, կլաներ նրա ստեղծագործական տարերքը, նրա ռոմանտիզմը դուրս բերեր լուսավոր հորիզոններ՝ ազգն ու հայրենիքը»[13]: Իրականում հայոց ոգու ինքնատիպության հայտնագործման երևույթը պատմականորեն ազգերի ինքնագիտակցման և ինքնորոշման ժամանակների արդյունք էր, որն ուղիղ համընկավ Մխիթարյանների, ի մասնավորի՝ Հայր Ալիշանի կենսագրական ժամանակին: Իմացության ոգին ներշնչում էր ճանաչել հայրենիքի իրական ու պատմափիլիսոփայական բովանդակությունը, հայկականությունը տեղայնացնել բնաաշխարհագրական ու պատմական այն միջավայրում, որին պարտական էր իր ծագմամբ: Համանման մշակույթը, պատմական ժամանակի տրամաբանությամբ, ոչ միայն պաշտպանական, այլ նաև ճանաչողական-ուսուցողական գործառույթով (ֆունկցիա) էր դրսևորվում: «Ռոմանտիզմի գաղափարաբանությունը, – գրում է Ս. Սարինյանը, – հոգևոր փորձի մի ամբողջ համակարգություն է: Գլխավոր առանձնահատկությունը, որ ուղղություն էր տալիս հոգևոր այդ փորձի յուրացմանը, ուսուցողականությունն է: Գրող թե հրապարակախոս, բարոյագետ թե հասարակական գործիչ իրենց խոսքը հղում էին ընթերցողին, հանդես գալիս որպես առաքյալ ու քարոզիչ»[14]: Երբևէ հայոց հայրենիքը չտեսած Ալիշանը, ստանձնելով ուսուցչի ու ասացողի դերը, պատմում է «Հայոց հայրենիքի պատմության դրվագները», հաղորդակից դարձնում հայ բնաշխարհի շնչին, ոգու արքետիպերին, ապա քրիստոնեական բարոյականությանը, ազգային ու մշակութաբանական ընդհանուր գիտելիքներ պարունակող մի շարք հասկացությունների:

Այս բարձրագույն զուգադրման մեջ նա գտնում է ներքին-միացնող կապերը. որտեղ պակասում է գիտությունը, դիմում է երևակայությանը, որտեղ բանաստեղծական ներշնչանքը չի բավում, վկայակոչում է հինավուրց ձեռագրերն ու կրոնաեկեղեցական ծիսական մատյանները. «Ազգային յիշատակարանք. ասոնք են բնիկ նշանք հայրենեաց. ասոնք են իւրաքանչիւր ազգի հայրենեաց ամենէն ազդու եւ զօրաւոր արձանագրութիւնք, միանգամայն եւ ամենէն սիրելի եւ սրտառուչ բաներ երկրիս վրայ»[15], – գրում է Ալիշանը: Ըստ կառուցվածքի գիրքը դրված է տոնացուցային ձևի մեջ՝ հերթագայված ոչ թե ըստ պատմական դեմքերի և իրադարձությունների ժամանակային ընթացքի, այլ տարվա մեջ նրանց հիշատակման օրերի. «Արդ որովհետև կ'ուզես, Հայկակ, որ երբեմն (...) մեր Հայ հայրենեաց դիպուածոց եւ հանգամանաց մէկ քանին յիշենք. երբեմն ըստ աւուր պատշաճի, այսինքն օրուան տարէդարձ յիշատակը պատմելով, եւ երբեմն ըստ կամաց եւ հաճոյից ընտրելով նիւթ մը. հարկաւոր կու սեպեմ այս առաջին անգամ մեր հայրենեաց բնախօսութիւն մ'ընել...»[16]: Առավելապես ներքին կառուցվածքով, քան Ալիշանի խառնվածքով է պայմանավորված գրքի՝ պատմագեղարվեստական կամ գիտագրական ստեղծագործություն լինելու հանգամանքը. Գեղարվեստական շունչն ավելի ցայտուն հանդես է գալիս պատմական դրվագներում,

[13] Ս ա ր ի ն յ ա ն. 1966, 241:
[14] Ս ա ր ի ն յ ա ն. 2005, 24:
[15] Ա լ ի շ ա ն. 1869, 16:
[16] Ա լ ի շ ա ն. 1869, 21:

ուր առանց որևէ մեթոդի Ալիշանը գեղեցիկ շարադրում է պատմությունը, զրուցում նրա մասին: Մի այլ խորքային գեղեցկություն է բացվում մատենագրական գործերի, նրանց հեղինակների կյանքի ու գործի քննության դեպքում, երբ սթափեցնող, խուզարկու մտքով հայագետն առանց որևէ երկվության լուծում է խնդրահարույց հարցադրումներ, պատմաբանասիրական բնույթի տեղեկություններ հաղորդում հնարավոր գրեթե բոլոր աղբյուրներից՝ գիտական վերլուծությունը ընդմիջարկելով փաստական տվյալներով, մատենագրական նյութի ընդգրկուն թվարկումով: Այդպես է, օրինակ, ներկայացնում Հովհաննես Սարկավագ Իմաստասերի կամ Հովհաննես Երզնկացու կենսապատումը: Միջանկյալ նկատենք, որ Հայաստանի բնաշխարհի վերաբերյալ պատմական վկայություններին և Երզնկայի ծնունդ Հովհաննես Երզնկացուն նվիրված հոդվածաշարը (չորս հոդված) «Բանասիրական տեղեկություն» բաժնում Ալիշանն անստորագիր տպագրել է 1850–1851 թվականներին՝ «Բազմավեպ» հանդեսում, ապա որոշ փոփոխություններ կատարելով, առավելապես հարստացնելով գիտաբանասիրական մասը՝ փոխադրել «Հուշիկներ» գրքի երկրորդ հատոր: Հայր Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունը համաեվրոպական իմացականության զուգահեռ քննելիս բնավ զարմանք չի հարուցում այն հանգամանքը, որ նա հայկական մշակութային ու մտավոր գործունեության ժամանակը հատում է եվրոպական Վերածննդի և լուսավորչական զարթոնքի ժամանակների հետ՝ հրապարակ բերելով ազգային մտածողության տեղայնությունը վաղուց հաղթահարած ու համընդհանրական բանականության իմաստով բացառիկ հոգևոր ստեղծումների օրինակներ:

Ի՞նչ անուն տալ Ներսես Շորհալու և նույն Հովհաննես Իմաստասերի՝ նրա տված բնութագրումներին, որոնք միանգամայն ճշգրիտ ընդհանրացումներով բնորոշում են ոչ միայն գրականության ներքին տեղաշարժերը, այլև՝ շրջանառում հասկացություններ, որոնք զուգահեռի վրա առնչվում են եվրոպական իմացականության ու Վերածննդի օրինաչափություններին: Այն՝ Սարկավագ Սոփեստեսի անձն ու գործունեությունը վաղուց էին հետաքրքրել Ալիշանին, որ նրա հանճարի մեծությունը նա ուղղակիորեն կապում էր իմաստասեր վարդապետին ծնած ու սնած Արցախական աշխարհի հետ (ծնվել է Փառիսոս գյուղում), ապա խոսում Հաղպատի ու Սանահինի կրոնական եղբայրությունների մասին, հետո վկայաբերում չքնաղագեղ Անին, ուր ուսուցչություն է արել երկար տարիներ, հասկանալի է ինքնին: Բայց որպիսին պիտի լիներ երիտասարդ վանականի խորագիտությունն ու վերլուծական մտքի սրությունը, որ ներկայացնելով XI դարի այս լուսավոր մտածողի ողջ գործունեությունը՝ առանց դույզն-ինչ երկմտանքի գրեր. «… անտարակուսաբար կրնանք ըսել որ Սարկաւագ վարդապետ շատ մեծ արդիւնք ունեցաւ այսպիսի ջանքով եւ գործերով, որոց բովանդակութիւնն է՝ ըլլալն իր ժամանակին եւ երկրին մէջ նորոգող ուսմանց եւ ընտիր ախորժակ մըտցընող. ինչ որ ԺԵ դարուն մէջ սկսան եւրոպացիք՝ ինքը մետասաներորդին սկսեր էր արդէն»[17]: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Ալիշանի՝ Հովհաննես Իմաստասերին տրված վերագրումները խիստ օրինաչափ են՝ արտածված նրա՝ «կրթութեամբ եւ երկար ուսմամբ կրկին մեծցած եւ զօրացած բնատուր մեծ հանճարի» ու ստեղծագործական «վսեմ ու աստվածային»[18] ժառանգության գնահատումից: Բայց այդ բնորոշումները

---

[17] Ալիշան. 1870, 278:
[18] Ալիշան. 1870, 278:

շատ ավելին են, քան մեկ մարդուն, ստեղծագործ անհատականությանը տրված գնահատական. սրբալույս հայրն իր վերլուծական հայացքի տակ է առնում հայոց մտավոր փորձի փիլիսոփայությունը՝ ուղիղ իմաստով կռահելով երևույթի մշակութաբանական ելակետն ու միանգամայն հանճարեղ ներհայեցողությամբ նրա ծագումնաբանությունը (գենետիկան) կապելով աշխարհաճանաչողության քրիստոնեական հիմունքին: Ալիշանը դպրության ու աղոթքի ուխտատուն-վանքերին է առավելապես վերագրում մեր էթնիկական ինքնության, ստեղծագործ ոգու ու ազգային հեռանկարի հնարավորությունը՝ էքզիստենցիալ գոյաբանության պայմաններում կարևորելով ավելի նրանց, քան առանձին անհատների դերակատարությունը: «Բայց, — Հաղպատ-Սանահինի մասին գրում է նա, — դրեթէ անկարելի է յիշել այս երկու հռչակաւոր վանքերը, որ մայրավանք եւ մայրաքաղաք այլ կոչուեցան, եւ լռել իրենց ծագումը եւ պայծառութիւնը. այն զուգակները՝ որ ԺԱ—ԺԳ դարուց մէջ վերին Հայոց ամենէն ծաղկած իմաստութեան կենդրոն կու սեպուէին, միանգամայն և քնարան եղան և են Թագաւորաց և մեծամեծ իշխանաց, զատ ՚ի գիտնոց և եկեղեցական առաջնորդաց ...»[19]: Ալիշանն, ըստ էության, իրականությունը «ձևակերպում է» հայեցակարգային ու կառուցողական սկզբունքներով՝ չտարանջատելով «ոգու մասին գիտությունը» «բնության մասին գիտությունից». ավելին, բնությունից է արտածում «ոգու ու պատմականության» իր տեսությունը: Սրա՝ առհասարակ, կուլտուր-պատմական դպրոցի հետ առնչությունների լավագույն օրինակը հայոց նահապետի տեղագրական-գեղարվեստական հատորներն են՝ «Տեղագիր Հայոց Մեծաց», «Այրարատ», «Սիսուան», «Սիսական», ուր գավառ առ գավառ, գյուղ առ գյուղ ներկայացվում է մեր ազգաբանությունը, ուր աշխարհագրական ներքին բաժանումների մեջ ցոլանում են մեր ազգային բնույթի տարբերակիչ հատկանիշները, ուր կա, ապրում է հայ մարդը, և ուրիշ ոչ մի տեղ այնքան ու այնպես չի արտահայտվում կենսական և էսթենական երևույթների արտացոլանքը, միջավայրի ազդեցությունն ու պատմականությունը, քան նրա պատմության մեջ: Սյունեցիների մասին, օրինակ, գրում է, թե նրանց համարձակ բնավորությունն իրենց երկրի բնության ու դիրքին է նման, ու նրանք քաջազն են՝ ինչպես իրենց ամուր և կոպտագույն լեռները: Մի փոքր այլ է արցախցիների բնորոշումը՝ հարևան թշնամական միջավայրը նրանց հոգին լցրել է քաջությամբ ու ապրելու կամքով, իսկ այրարատցիները խաղաղ ու հանդարտ են իրենց դաշտավայրերի նման:

Ալիշանը, ով բնաշխարհը նույնացնում է հայրենիքին, զարմանալի խորքային զգացողություն ունի բնության և մարդու կապի. նա հայտնաբերում է «տեղային ոգու» հավաքական թրթիռը, նշանը, որ այս պարագայում հանդես է գալիս իբրև ներկայացվող իրականության (տեղանքի) խորհրդանիշ և տարբերայնորեն հանգում բնության (միջավայր), ցեղի և սահմանային վիճակի՝ պատմական պահի հարաբերության փիլիսոփայական ելակետին: Այդ ոգին նա զգում է բանաստեղծությամբ, բայց հետզհետե ներշնչանքը տեղի է տալիս, մարում են առաջին հատորներին բնորոշ բանաստեղծական աշխարհաճանաչողության հետքերը, և «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատության մեջ հայոց տեղագրությունը միայն գիտականորեն ստույգ (ըստ կուլտուր-պատմական մեթոդի) բառ-հոդվածներով է արդեն ներկայացնում գիտնական-պատմաբանը:

---

[19] *Ա լ ի շ ա ն. 1870, 282:*

Իսկ «Հուշիկներ»-ում հստակ մտքով ու հզոր իմացականությամբ Հայր Ալիշանը ներկայացնում է հայոց աշխարհի «ճարտարապետությունը»՝ փնտրելով բյուրավոր իրողություններ, դեպքեր ու դիպվածներ, որոնց մեջ ապրում է հայոց պատմության, ազգային հոգեբանության, բարոյական ըմբռնումների առանձնահատկությունը. «Մեր Հայաստան աշխարհին ընդհանուր կերպարանքը շատ նշանաւոր երևոյթներ կ՚ընծայեն մեզի, Հայկակ. և մէկ խօսքով ըսելով, Հայաստան ընդդիմակներու երկիր մ՚է գերազանց աստիճանի, որք քիչ ազդեցութիւն չեն ըներ իր բնակչաց բարուցը վրա»[20], – գրում է նահապետ Ալիշանը: «Բնախօսության» նախաբանից սկիզբ առնող իմացության ոգին պարունակ առ պարունակ բացահայտում է համապարփակ հայրենիքը, հյուսում մի չքնաղ բնապատում՝ ամեն տեղ տեսնելով հայ մարդու ձեռքը, հայ մարդու հետքը. «Շնորհակալ ըլլանք ուրեմն բնութեան, որ այսքան պարգևներով հարստացուցեր է մեր երկիրը. Եւ առաւել փառք տանք տիրոջն բնութեան, որ այդ պարգևները վայելել եւ յարգել տուաւ երկրին հանճարամիտ բնակչին, որ ՚ի սկզբանց ժամանակի գիտցաւ ճարտարութեամբ օգուտ հանել անոնցմէ, եւ օտարաց այլ սփռել, հեռաւոր աշխարհքներու բերքերը իրարու պատկերով»[21]: Ջուգահեռի վրա հազիվ թե պատահականության կարելի է վերագրել գոյությունը գրեթե նույնական տեսակետի, որ Հ. Տենը ձևաբանել էր դեռևս «Անգլիական գրականության պատմության» ներածության մեջ. «Գրական ստեղծագործությունը ոչ թե պարզապես երևակայության խաղ է, կրքոտ հոգու կամայական քմահաճույք, այլ շրջապատող բար-քերի նկարագրություն և մտածողության հայտնի ձևերի վկայագիր»[22]: Այն «միայն ծեփապատճեն է, որ նման է բրածո խեցու, դրոշմ է, որ նման է քարի վրա երբևէ ապրած և մահացած կենդանու թողած հետքի»[23]: Միանգամայն ակնհայտ է, որ ընդհանրական ելակետի զգացողությունը երկու դեպքում էլ հարցադրումը կապում է պատմականության հիմունքին, հայտնաբերում գրական ստեղծագործության աղերսները ժամանակի հասարակական կյանքի, սոցիալական, բարոյական խնդիրների հետ: «Խեցու մեջ կենդանի է ապրել, – շարունակում է Տենը, – փաստաթղթի մեջ արտացոլվել է մարդը: Ինչո՞ւ եք ուսումնասիրում խեցին, եթե ոչ կենդանուն պատկերացնելու համար: Ճիշտ այդպես էլ փաստաթուղթը դուք ուսումնասիրում եք, որպեսզի ճանաչեք մարդուն: Ե՛վ խեցին, և՛ փաստաթուղթը մահացած բեկորներ են, որոնց արժեքը միայն այն է, որ դրանք մատնացույց են անում ամբողջական և կյանքով լի էակի»[24]: Զուգահեռն այստեղ ավելի քան կարևոր է իրերի տրամաբանությունը ճիշտ գնահատելու համար. ի՞նչը հայ գրագետներին հանգեցրեց պատմասոցիոլոգիական հարացույցի գրեթե նույն կետին՝ արծարծելու հայրենիքի, բնիկության, էթնոգենետիկ տարածքի գիտակցության խնդիրը, որ XIX դարը հայոց համար էլ դրել էր քննության. «Այո՛, այո՛. հայրենեաց ամենէն հզօր հրապոյրքն են այսպիսի գործոց յիշատակք, եթէ անոնց նիւթական յուշարարքն կամ արձանքն մնացած ըլլան եւ եթէ չըլլան...՝ այսինքն, եթէ այն գործոց հետ՝ տեղն ու դիրքն

[20] Ալիշան. 1869, 22:
[21] Ալիշան. 1869, 65:
[22] Тэн. 1987, 72.
[23] Тэн. 1987, 72.
[24] Тэн. 1987, 73.

այլ ՚ի բնէ վայելուչ ըլլան՝ հայրենիք կրկին քաղցր ու ցանկալի կ'ըլլայ»[25]: *Տենի փիլիսոփայությունը, անշուշտ, բացարձակ իմպերատիվ է և միակողմանիորեն տեղայնացված՝ մի որոշակի իմաստով ստեղծագործողի անհատականության ու էսթետիզմի նախադրյալները բացառող: Սա ընկալելի է իբրև փիլիսոփայական դոկտրին, հայեցակարգ, որ գաղափարը բխեցնում է առարկայական հիմունքից, բայց նույն եռանդամ բանաձևը հետաքրքիր փոխակերպությունների է ենթարկվում, երբ երանգավորվում է բանաստեղծ— անհատի ստեղծագործական մեկնությամբ: Ալիշանի պատմափիլիսոփայական իդեալիզմը հայոց կենսապատումը գրականության է փոխաձևում իբրև էքզիստենցիալ, սահմանային գոյաբանության ստորոգելի (պատմություն)՝ միշտ և մշտապես իբրև հայեցակարգային հիմունք ունենալով մի գաղափար, որի բացարձակ արժեքը՝ ազգային հեռանկարի իմաստով, ներըմբռնելի է ամեն մի բանական արարածի՝ հայրենասիրությունը: Բայց իր բովանդակությամբ այն հեռու է ներփակ ազգային քարոզչություն լինելուց. հայկականության, ազգային արժեքների վերագնահատում է՝ համընդհանրական պատմության ու քաղաքակրթության համատեքստում: «Իսկ եթէ այս բնական եւ ազգային տեսաբանաց հետ նկատենք մեր հայրենեաց վրայ համաշխարհական երևոյթներ այլ, (...) կարծեմ թէ քիչ երկիր կրնայ մեր հայրենեաց հետ բաղդատուիլ, և կամ ոչ մէկն այլ հավասարիլ այն երկրին, ուր հասարակաց կամ հաւանագոյն ծանօթութիւնն կ'ընդունի զդրախտն, այսինքն մարդկութեան ծագումը ...»*[26], *— գրում է սրբալույս հայրը, ապա «Յուշիկք»-ը եզրափակող վերջաբանն ավարտում՝ հավատով, թե հայությունն ապրելու է, քանի դեռ կա մարդկությունը և հնչեցնելու է իր հիշատակները: Ցանկանում է, որ այդ հիշատակներից մեկը լինեն իր հուշիկները. «Եւ ո՛հ թէ այն խորին և լռին արձագանաց՝ նուաղ վանգիւն մ'ըլլար այս իմ քեզի նուիրածս, Հայկակ, Յուշիկք հայրենեաց Հայոց»*[27]*:*

Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց. պատմության և իրականության տարեգրումը

Ճիշտ նույն համաբանությամբ հայկական աշխարհի հուշ ու հիշատակների պատմությունն է անում բանահավաք-ազգագրագետ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը: Կուլտուր-պատմական դպրոցի[28] *ազդեցությունն առավել ընդգծված երևում է նրա «Գրոց և բրոց» (1874) հատորում, որը հեղինակը սկսում է իր ողջ հետագա գործունեության համար ծրագրային հանձնառությամբ: «Բարեկամ, — գրում է նախաբանում, — մարդկային ընկերավարութեանց սովորութիւնն է, երբ հեռաւոր տեղէ մը գան, իրենց գտնուած երկրի բարիքներէն կամ հազուագիւտ իրերէն ընծայ մի կը բերեն բարեկամին: Հետեւելով այսմ, երբ Պօլիս եկայ այս անգամ ուզեցի ընծայ բերել Ձեզ իմ երկրէն: Ինչ: Ինչ կը գտնուէր հոն, ուր ես էի. հող եւ ջուր միայն, եւ հողով*

---

[25] *Ա լ ի շ ա ն. 1869, 17:*

[26] *Ա լ ի շ ա ն. 1869, 18:*

[27] *Ա լ ի շ ա ն. 1869, 21:*

[28] *Բազմաթիվ գրականագետներ աներկբա պնդում են, թե նրա ստեղծագործությունը հարում է միֆոլոգիական դպրոցին (տե՛ս Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն. 1986, 296–331, Ղ ա լ ա ն ա ր յ ա ն. 1964, 555–588):*

ու ջրով և եթ կեանք վարող Հայ ժողովուրդ»[29]: Այս սկսվածքը ուղիղ հարցադրումով ենթադրում է հայրենիքի ճանաչողության ծրագիր, որը Սրվանձտյանցի պարագայում դուրս է գիտափիլիսոփայական տեսություն-ների ազդեցությունից և ուղղակիորեն ու ի մոտո առնչվում է արևմտահայ իրականությանը: Նա պարզապես առարկայորեն գույքագրում է հայկական գյուղերի ինչքն ու ունեցվածքը, մարդկային և պատմամշակութային հարս-տությունը, պատմականության ընթացքով դրանք ներկայացնում իբրև ամ-բողջական վավերագրեր՝ ճանաչելու երկիր Հայաստանի անցյալն ու ներկան, հայոց բնիկության բազմաբյուր վկայությունները, որոնք ստեղծված պատմա-քաղաքական հանգամանքներում թուրքերի ու քրդերի բարբարոս ձեռքով տրոհվում ու ոչնչացվում էին օրավուր: Սրվանձտյանցի մոտ հողը պահում է հիշատակները, առասպելներն ու ավանդույթները վիպվում են կենդանի ընթացքի մեջ՝ կրելով հայոց աշխարհայացքի և հոգեբանության նշանները: Եկեղեցիներն ու շիրմաքարերն անվանում են մեր մարդկային բնույթը, միա-վորում հայոց մտքի և ձեռքի ճարտարապետական արարչությունն ու, պար-զապես, «հրաժարվում են» կրոնափոխ լինել: Սրվանձտյանցի համար սրբա-վայր է ողջ Հայոց աշխարհը, կենդանի հայրենիքի կենդանի կյանքն ու հավա-տալիքները: Հայերի դրախտային երկիրը, որ ըստ տեղանքի արագընթաց փոփոխվող իր աշխարհագրության ձև է տվել այս ժողովրդի բնույթին ու հո-գեբանությանը, նրա պատմությունը, որ օրինակ է դժնդակ անկումների և բա-ցառիկ մեծագործության, ըստ կուլտուր-պատմական դպրոցի հայեցության, առավել ընդգծված երևում է «Գրոց ու Բրոց»-ի առաջին գլուխներում, օրի-նակ, ասենք, Մշո բնաշխարհի և Մշո հայության բնորոշումներում: «Մշոյ հա-յերը պէտք էր քաջ լինէին նայելով իրենց հայրենեաց դիրքին: Այն ամեհի բարձրաբերձ լեռները՝ մեծութիւն մը կ՚ազդէին անոնց սրտին. անտառներով, մացառներով զարդարուած սարերու գագաթներ և ծոցերը, նոյնպէս եւ շամ-բերը, որոց մէջ լեցուն գազաններ են, գիրենք կ՚ստիպեն զէնքի վարժուիլ՝ թէ՛ որսալու համար եւ թէ՛ պաշտպանուելու համար»[30],– այսպես է սկսում իր ուղևորությունը հայ բնաշխարհում Սրվանձտյանցը՝ չնչավորելով այն ու ամենուր որոնելով ոգու մաքուր և անպարտելի միջուկը:

Զարմանալի՞ չէ արդյոք, որ ուղղակի կամ անուղղակի հղումով այս դի-տարկումը հանգում է հոգևոր ստեղծումների՝ Հ. Տենի առաջադրած՝ ոչ միայն պատմականության, այլև միջավայրի ու պատճառականության դրույթին. «Եվ, ինչպես որ ֆիզիկական բարեխառնությունն ուսումնասիրում ենք հաս-կանալու համար այս կամ այն տեսակ բույսի՝ «…» երևան գալը, այնպես էլ պետք է ուսումնասիրել բարոյական բարեխառնությունը՝ հասկանալու համար այս կամ այն տեսակ արվեստի՝ «…» առաջացումը: Մարդկային մտքի, ինչ-պես նաև կենդանի բնության արտադրությունները բացատրվում են միայն իրենց միջավայրով»[31]: Մի՞թե միջավայրի ազդեցությանը չպիտի վերագրել այն հանգամանքը, որ «Մշոյ աշխարհ լի է եղեր բանաստեղծներով, երգասաց-ներով, բազմաթիւ աշուղներու տեղ է եղեր այս երկիրը. եւ այս բնական հետե-

[29] Սրուանձտեանց. 1874, 6:
[30] Սրուանձտեանց. 1874, 10:
[31] Տեն. 1936, 14:

ւումիւն է այն քաջաց և քաջագործութեանց, որոց դիւցազնագործութիւնները կը դիւցաբանէին եւ անոնց թանկագին մահը պէս-պէս երգերով կ'եղերեգէին»[32]: Սրվանձտյանցի գիտագեղարվեստական բնագիրը ընթերցողին աքանչացնում է այսպիսի բազմաթիվ էջերով: Ահա, օրինակ, «Թորոս Աղբար»-ից մի փոքրիկ դրվագ՝ նվիրված Շնորհալուն, ուր հեղինակն առկախ է թողնում հարցադրումը, թե բնաշխա՞րհն է այդպես շնորհաշատ ծնել իր որդուն[33], թե՞ որդին է հավիտենության ճանապարհ տվել իր ծննդավայրին. «Ո՛վ իմ պաշտելի Շնորհալւոյս տուած ու առած, օրհնուած ու օրհնած, աղօթած ու երգած տեղի, տեսարան ու հանդիսարան ...: Այժմ կ'զգամ թէ մարդ ո՜ր աստիճան յափշտակութեան մէջ կը գտնուի, երբ իւր ամէնէն աւելի սիրածին հանդիպի: Քարերու գլուխը քարացած մնացեր եմ, եւ ապա գետինը թաւալեցայ երեսացս վրայ: Կը փարիմ, կը գրկեմ, կը պագեմ, կ'սթափիմ, եւ, այլ աչերս չվերցուցի երկինք: Երկինքէն բարձր փառք մը գտած էի: Աչքս 'ի ծովն, միշտ 'ի ծովն, չեշտ 'ի ծովն»[34]:

Սրվանձտյանցը, ի տարբերություն Ալիշանի, որ ձեռագրերի էջերով էր փորձում ստեղծել իրական հայրենիքի և տարբեր տեղավայրերի պատրանքը, իրական հողի վրա գրառում, վերապատմում է մի հայրենապատում, ուր բնությունն օժտված է պատմության հիշողությունը պահող բացառիկ բանականությամբ, հավաքական ինտելեկտով, ուր դարերի հոլովույթում ինքնօրինակ ձև է ստանում ազգային մեր անհատականությունն ու ժամանակի քննությանը դնում հայոց գոյության իրավունքը: Իսկ ստեղծված հանգամանքների գիտակցումը շուտով փոխում է նրա հայացքի ուղղությունը՝ այն դարձնելով դեպի օրեցօր վատթարացող, տրոհվող հայ կյանքը: «Մանանա», «Թորոս աղբար...» և մյուս գործերում հետզհետե պակասում, սպառվում է լույսը, սրբալույս նվիրակը պարզապես գրի է առնում փլուզվող հայկական իրականության պատկերը՝ փորձելով հասկանալ հայրենական ողբերգության պատճառները: Սրվանձտյանցի մոտ աստիճանաբար մարում է կուլտուրպատմական դպրոցի չեշտված ազդեցությունը մի շարք պատճառներով.

ա) թերևս ամենասկզբից ակնառու էր դպրոցի թողած ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը, հմայքը հայ գրագետների, նաև՝ Սրվանձտյանցի աշխարհայացքի վրա: Երևելի Տենի (Աբեղյան) գաղափարներն ողողել էին ոչ միայն ողջ Եվրոպան, այլև՝ եվրոպակենտրոն մշակույթ ունեցող բազմաթիվ երկրներ,

բ) ժամանակի հետ ռեալիզմի աստիճանական արմատավորումն ու ռոմանտիզմի նահանջը բերում են այս դպրոցի որոշակի սահմանափակությունների գիտակցմանն ու տեղատվությունը,

գ) արևմտահայության ազգային ու սոցիալական վիճակի աստիճանական վատթարացումն Արևմտյան Հայաստանում ու հայ հայրենիքի խորքային, ի մոտո ճանաչողությունը:

---

32 *Ս ր ո ւ ա ն ձ տ ե ա ն ց. 1874, 11:*

33 *Ս ր ո ւ ա ն ձ տ ե ա ն ց. 1879, 5: «Մեծին Հայաստանի Չորրորդ Հայք նահանգի գաւառներէն մինն է Ծոփաց աշխարհ, Ծոփք մեծ, գրուած է նաեւ Ծովք, առաւել անուանի եղած՝ Ծոփք կամ Ծովք Շնրհալւոյն հօր, տոհմին եւ եղբարց բնակավայր լինելով»:*

34 *Ս ր ո ւ ա ն ձ տ ե ա ն ց. 1879, 6:*

Սա չի նշանակում, սակայն, թե մի որոշակի սահմանագծի վրա պիտի ամփոփել կուլտուր-պատմական դպրոցի ազդեցության ավարտը, նամանավանդ որ դրա հետքերը նկատում ենք քիչ ավելի ուշ շրջանի գեղարվեստական գրականության մեջ: Ժամանակի, տեղի, ռասայի եռանդամ միասնության հետաքրքիր փոխակերպումների ենք հանդիպում Րաֆֆու «Կայծեր»-ում, «Սամվել» պատմավեպի «Փակագծի մեջ» բաժնում, որ ստույգ ձևակերպված պատմաքննական տեսություն է՝ դրված գեղարվեստական ձևի մեջ: Գեղարվեստական գրականության մեջ, սակայն, փիլիսոփայական այս հայեցակարգն այլ փոխաձևություն է ստանում:

Եզրակացություն

Ձևավորվելով XIX դարի վերջին տասնամյակներին Ֆրանսիայում՝ կուլտուր-պատմական դպրոցը շուտով հայտնի դարձավ ողջ եվրոպական մայրցամաքում և բազմաթիվ հետևորդներ ունեցավ տարբեր երկրներում (Գ. Բրանդես, Պ. Լակոմբ, Ժ. Ռենար, Ն. Պիպին և ուրիշներ): Հայ իմացականությունը չէր կարող անմասն մնալ համաեվրոպական փիլիսոփայական ու մշակութաբանական այս շարժումից: Սոցիոլոգիական հարացույցի հարցաշարով ձևավորված այս ուսմունքից հայոց միտքն արտածում է պատմականության և իրադարձությունների պատճառահետևանքային օրինաչափությունների դրույթները, իրար կապում պատմամշակութային ու կենսափիլիսոփայական հասկացությունները՝ անդրադառնալու մեր ծագումնաբանության, բնիկության և էթնիկական գենոտիպի խնդիրներին: Ավելի հիմնավոր և արտակարգ հմտությամբ, քան Հայր Ղևոնդ Ալիշանն ու Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը, ոչ ոք չէր կարող միացնել պատմագիտական տեսությունն ու գեղարվեստը և լուծում տալ հայոց համար օրախնդիր այս հարցերին:

Սիրանուշ Մարգարյան – բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ նոր և նորագույն շրջանի հայ գրականության պատմություն: Հեղինակ է 2 գրքի և 30-ից ավելի հոդվածի:
siranush.margaryan.71@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. 7, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 781 էջ:

Ալիշան Հ. Ղ. 1869, Յուշիկք հայրենեաց հայոց, հ Ա, Վենետիկ, Ս. Ղազար Վենետկոյ, 575 էջ:

Ալիշան Հ. Ղ. 1870, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար Վենետկոյ, 603 էջ:

Ղանալանյան Ա. 1964, Գարեգին Սրվանձտյանց, Հայ նոր գրականության պատմություն, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., հ. 3, 555–588:

«Նոր-Դար» (Թիֆլիս), 19. VI. 1896:

Սարինյան Ս. 1966, Հայկական ռոմանտիզմ, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 557 էջ:

Սարինյան Ս. 2005, Հայոց ազգային գաղափարաբանություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 327 էջ:

Սրուանձտեանց Գ. 1874, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 192 էջ:

Սրուանձտեանց Գ. 1879, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, հ. Ա, Կ. Պոլիս, պագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 365 էջ:

Շտիկյան Ս. 1978, Ալիշանի անտորագիր գործերը «Բազմավէպի» էջերում. – ՊԲՀ, № 2, էջ 81–92:

Տեն Հ. 1936, Գեղարվեստի փիլիսոփայությունը, Երևան–Մոսկվա, ՀՍԽՀ Պետհրատ., 534 էջ:

Տուրիշևա Օ. 2017, Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և պատմությունը, թարգմ.՝ ռուսերենից՝ Աշխեն Զրբաշյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 265 էջ:

Քալանթարյան Ժ. 1986, Հայ գրականագիտության պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 422 էջ:

Тэн И. 1987, История английской литературы. Введение. – Зарубежная эстетика и теория литературы XIX–XX вв., Трактаты, статьи, эссе. М., Изд. МГУ, 58 с.

КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКАЯ ШКОЛА И ЕЕ ВЛИЯНИЕ НА ПРОИЗВЕДЕНИЯ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА И ГАРЕГИНА СРВАНДЗТЯНЦА

СИРАНУШ МАРГАРЯН

Резюме

Ключевые слова: Ипполит Адольф Тэн, культурно-историческая школа, Отец Гевонд Алишан, Мхитаристы, еп. Гарегин Срвандзтянц, философия эстетизма, историзм, триномиальная формула среды обитания, исторического момента и расы, европоцентристское мировоззрение, синхронистичность.

Культурно-историческая школа как культурно-философская теория это совокупность представлений, непосредственно связанных с историческим временем, географической средой и расовой принадлежностью. Будучи сформированной во Франции в последние десятилетия XIX в., она вскоре стала известна на всем европейском континенте и имела множество последователей в разных странах (Ж. Брандес, П. Лакомб, Ж. Ренар, Н. Пипин и др.). Принимая во внимание сложившиеся в этот период межкультурные связи, становится очевидным, что армянские мыслители не могли остаться в стороне от этого общеевропейского философско-культурного движения. Особенно ясно заметно это влияние в научных и художественных работах двух великих арменоведов – Отца Гевонда Алишана и Гарегина Срвандзтянца. Из сформированного на основе социологической парадигмы учения армянские литераторы извлекли положения историчности и причинно-следственные связи событий, соединив историко-культурные и философо-мировоззренческие концепции для решения проблем национальной генеалогии, коренного происхождения и этнического генотипа.

Их приверженность культурно-исторической школе (хотя она и не однозначна) была продиктована не только эстетическими или мировоззрен-

ческими предпочтениями, но и определялась особенностями развития отечественной культуры и потребностями армянской действительности.

Сирануш Маргарян – к. филол. н., доцент, заведующая отделом классической армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: история армянской литературы нового и новейшего периодов. Автор 2 книг и более 30 статей.
siranush.margaryan.71@mail.ru

CULTURAL AND HISTORICAL SCHOOL AND ITS INFLUENCE ON THE WORKS OF FATHER GHEVOND ALISHAN AND GAREGIN SRVANDZTYANTS

SIRANUSH MARGARYAN

Summary

Keywords: Hippolyte Adolphe Taine, cultural and historical school, Father Ghevond Alishan, The Mkhitaryans, Garegin Srvandztyants, philosophy of aestheticism, historicism; the trinomial formula of environment, historical moment and race; Eurocentric worldview, synchronicity.

The cultural-historical school as a cultural-philosophical theory is a set of ideas directly related to historical time, geographical environment and race. Having been formed in France in the last decades of the XIX century, it soon became known throughout the European continent and had many followers in different countries (G. Brandes, P. Lacombe, J. Renard, N. Pipin, etc.). Taking into account the intercultural ties that developed during this period, it becomes obvious that Armenian thinkers could not stay away from this pan-European philosophical and cultural movement. This influence is especially clearly noticeable in the scientific and artistic works of two great Armenologists - Father Ghevond Alishan and Garegin Srvandztyants. From the doctrine formed on the basis of the sociological paradigm, Armenian writers extracted the statements of the historicity and cause-and-effect relations of the events, combining historical-cultural and philosophical-ideological concepts to solve the problems of the national genealogy, indigenous origin and ethnic genotype.

Their commitment to the cultural and historical school (although it is ambiguous) was dictated not only by aesthetic or ideological preferences, but was also determined by the peculiarities of the development of the national culture and the needs of the Armenian reality.

Siranush Margaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Head of the Department of Classical Armenian Literature of the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS RA. Scientific interests: history of classical Armenian literature, history of Armenian literature of the modern period. Author of 2 books and more than 30 articles. siranush.margaryan.71@mail.ru

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ՀՏԴ 929:1 Գրիգոր Մագիստրոս + 809.198.1-5
Doi:10.54503/0135-0536-2023.3-180

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԻ ԴԵՐԸ ՍՅՈՒՆՅԱՑ ԴՊՐՈՑՈՒՄ*

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանալի բառեր՝ Գրիգոր Մագիստրոս, «Մեկնութիւն Քերականի», ձեռագիր, հիշատակարան, Գրիգոր Տաթևացի, Հովհաննես վարդապետ, Տաթև, Սարկավագանց վանք, գրատուն, գրչության կենտրոն:

Նախաբան

Սուրբգրային աղերսներով, հնագրությանն առնչվող բազմաբովանդակ նյութերով, առասպելավարժությամբ, ժամանակի պատմաքաղաքական, ինչպես նաև աստվածաբանական հարցեր ներառող թեմաներով ընթերցողի հետ հաղորդակցվող Գրիգոր Մագիստրոսի (990–1058) նպատակը հայ գիտական աշխարհն իր բոլոր ոլորտներով բարձր զարգացման մակարդակի տեսնելն էր, ինչի համար նա ջանք չի խնայում: Եվ բոլորովին պատահական չէր, որ գրական երկերի, առհասարակ բնագրերի խորքային ճանաչողությունը խիստ կարևորող հեղինակն՝ իր առջև ունենալով հույն քերական Դիոնիսիոս Թրակացու արվեստն ու հայ քերականության տեսության անցած ճանապարհը, կազմում է քերականության դասագիրք՝ փոխանցելով քերականական գիտության ավանդույթը՝ միաժամանակ մշակելով քերականության մեկնության սեփական դրույթներ:

Մագիստրոսի քերականությանն առնչվող վարդապետները

Մագիստրոսյան Մեկնությունն ամփոփող Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի միակ ձեռագիր օրինակը (XV դար)[1] *ունի հետևյալ խորագիրը՝ «Գրիգորի մաժիշտրոսի եւ կիտաւնոի, որդւոյ Վասակայ մարտիրոսի: Մեկնութիւն քերականի, զոր եղեալ է զայլոց եւ զիւրոց յաւելուածոց միտս»: Ձեռագրական ուշագրավ նմուշ է գրչագրի հետագայի հիշատակարանը, որն ընձեռում է արժեքավոր տեղեկություն այն մասին, որ մեծ վարդապետ Գրիգորը Մագիստրոսի Մեկնությունը տվել է Հովհաննես Կարմիր վարդապետին Սարկավագանց վանքի համար*[2]*: Տվյալ ժամանակաշրջանի պատմության ուսում-*

---

* *Ներկայացվել է 25. VIII. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, բ. գ. դ., պրոֆ. Ավետիս Դոլուխանյանը (28. VIII. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. № 3917, 22բ–127բ:*

[2] *«Շմաւոն վարդապետս յիշեցէք, որ զքերական գիրքս ի Սարկաւագանց վանիցն բերաք ի վանս Եւստաթէի սուրբ առաքելոյս: Գիրքս այլ ի Տաթև վանիցս է եղել, մեծ վարդապետն Գրիգոր՝ Յովհաննէս վարդապետին էր տուեալ՝ մականուն Կարմիր, մեք*

նասիրողները հիշատակում են, որ Կարմիր կոչվող Հովհաննես վարդապետը Տաթևի գիտական և մանկավարժական կյանքի կարևորագույն դեմքերից մեկի՝ Գրիգոր Տաթևացու աշակերտն էր, եղել է այն քահանաների ու աշակերտների թվում, որոնք, 1409 թ. միաբանվելով մեծ Գ. Տաթևացու շուրջ, Քաջբերունյաց Մեծոփավանքում զբաղվել են իրենց հոգևոր առաքելությամբ և ուսուցչությամբ[3]: Թ. Մեծոփեցին, Լենկ-Թեմուրի և նրա հաջորդների պատմությունը կերտելիս պատմական իրողությունների թելադրանքով Գ. Տաթևացու գործունեությունը ներկայացնելիս հիշատակելով Հովհաննես Կարմրին, ընդգծում է նրա Կապանից լինելու հանգամանքը[4]: Իր կոթողային «Սիսական» աշխատության մեջ թե՛ Կապանի, թե՛ Տաթևի հոգևոր-մշակութային բնութագիրը ներկայացնելիս Հայր Ղևոնդ Ալիշանը չի հիշատակում այս վարդապետի մասին: Վերջինիս վերաբերյալ պահպանված լրացնող ձեռագրագիտական աղբյուրները փոքրաթիվ են, սակայն դրանք աչքի են ընկնում չափազանց արժեքավոր տվյալներով: Այսպես՝ ՄՄ № 1295 ձեռագրի նկարագրությունից պարզ է դառնում, որ 1410 թ. Աբել անունով աբեղան Սարկավագանց վանքում ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի» բնագիրը[5], որի պատվիրատուն Հովհաննես վրդ. Կարմիրն էր: Աբել գրիչը ձեռագրի հիշատակարանում ներկայացնում է, թե ինչպես Հովհաննես Կարմիր վարժապետի «հրամանով» և օգնությամբ մեկ շաբաթում վերաշարադրեց տիեզերալույս վարդապետի՝ Գրիգոր Տաթևացու հիշյալ բնագիրը: Արտագրող գրչին օգնել են Եզեկիել կուսակրոն աբեղան՝ շնորհելով օրինակը, և Մարկոս քահանան՝ իր բազում խրատներով, քանի որ, ինչպես Աբել աբեղան է նշում, ինքն «անհմուտ» էր[6]:

Չկան պահպանված ձեռագիր աղբյուրներ, որոնք կավանդեն Հովհաննես վարդապետի պատվերով Մագիստրոսի Մեկնության՝ Սարկավագանց վանքում ընդօրինակվելու մասին, սակայն ենթադրելի է՝ Տաթևի վանքին պատկանող Մագիստրոսի Մեկնության գիրքը սույն վանք տարվել է կա՛մ վերջինիս օրինակը ստեղծելու, կա՛մ Հովհաննես վարդապետի կողմից վանքում ուսուցանելու նպատակով: XV դարում, երբ արդեն ստեղծվել էին Հովհ. Երզնկացու, Հովհ. Ծործորեցու, Վարդան Արևելցու մեկնությունները, Տաթևացի մեծ վարդապետն իր աշակերտին Սարկավագանց վանքի համար տալիս է Մագիստրոսի քերականության բնագիրը: Սա ցույց է տալիս, որ նա խորապես գնահատել է Մագիստրոսի քերականական երկի անփոխարինելի արժեքը թե՛ գիտական և թե՛ մանկավարժական տեսանկյունից: Իր ընձեռած այսպիսի անգնահատելի տեղեկություններով ձեռագիր այս հիշատակարանն աղբյուրագիտական արժեք է ձեռք բերում:

Այսպիսով՝ ձեռագրերում վարդապետ, վարժապետ, ստացող նաև Կարմիր մականունով ներկայացվող Գրիգոր Տաթևացու կապանցի այս աշակերտին առնչվող պահպանված ձեռագիր աղբյուրներից, որոնք երկուսն են, պարզ է

այլ վերստին բերաք ի վանքս: Յիշեցէք սրտի մտաւք զմեղաւք զառածեալս զՇմաւոն վարդապետս, և աստուած զձեզ յիշէ ի կեանս, ամէն: Ի թվ. ՋԸ (1459) էր բերաք զգիրքս» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1958, 122):

[3] *Մ ե ծ ո փ ե ց ի. 1860, 50–51, Դիւան հայոց պատմութեան. 1912, 45:*

[4] *Մ ե ծ ո փ ե ց ի. 1860, 51:*

[5] *Տե՛ս նաև Ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյն Աթոռոյն Էջմիածնի. 1865, 156:*

[6] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1955, 112:*

դառնում, որ վերջինիս անունը կապված է Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Մագիստրոսի և Սարկավագանց վանքի հետ:

Սարկավագանց վանքի տեղորոշման խնդիրը

Ուշադրության է արժանի Սարկավագանց վանքի տեղագրության հետ կապված անորոշության խնդիրը երկու պատճառով. ա) նախ այս վանքի տեղագրության մասին ձեռագիր աղբյուրներում չկան տեղեկություններ, տպագիր մատենագրությունը նույնպես լռում է անհրաժեշտ տեղեկությունների առումով, բ) եղած տեղեկություններն էլ իրարամերժ են և այդպիսով վանքի տեղորոշման խնդիր են առաջ բերում. տեղանունների բառարանի Սարկավագանց վանքին վերաբերող բառահոդվածում գրված է, որ վանքը Հայաստանում է գտնվում, սակայն տեղադրությունն անորոշ է, բառարանագիրը նշում է նաև՝ ըստ Ղ. Փիրղալեմյանի՝ հնարավոր է նույնացնել Հաղպատի վանքին[7]: XV դ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների կազմող Լ. Ս. Խաչիկյանը տեղանունների ցանկում վանքի անվան դիմաց գրում է «Սիւնիքում»[8]: Ըստ վիմագրական աղբյուրի՝ Սարկավագի եկեղեցի անունով հայտնի է Անիի սուրբ Սարգիս եկեղեցին, որը վերստին նորոգել է Սարկավագ անունով ոմն քահանա[9]: Ո՛չ Ստ. Օրբելյանը, ո՛չ Ղ. Ալիշանը Սյունիքի պատմությունը ներկայացնելիս չեն հիշատակում այս անունով վանքի մասին: Հոգևոր այս կենտրոնի տեղորոշման խնդիրը կարևոր է, քանի որ Գրիգոր Մագիստրոսի Մեկնությունը եղել է վերջինիս գիտակրթական հետաքրքրության կենտրոնում: Ընդգծենք նաև, որ Սարկավագանց վանքը ՄՄ № 1295 ձեռագրի հիշատակարանի գրչի վկայությամբ «կոչեցելոյ ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս»[10], հիշատակվում է միայն Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես վարդապետի առնչությամբ:

Հայտնի է՝ Գրիգոր Տաթևացին 1386 թ.՝ ուսուցչի՝ Հովհաննես Որոտնեցու մահից հետո, առաջնորդում է Տաթևը[11]: Նրա վարդապետական ծրագիրն ուղղված էր գրչության արվեստի զարգացմանը: Այս նպատակով նա հանձնարարում է իր աշակերտներին Քաջբերունիքի, Սյունյաց, Վասպուրականի մի շարք դպրոցներում զբաղվել ձեռագրերի պահպանության գործով: Տաթևացու ու նրա աշակերտների մի մասի գործունեությունն էլ կապվում է ձեռագրական կորուստների տեսակետից առավել զգայուն կենտրոնի՝ Մեծոփավանքի դպրոցի հետ, քանի որ լենկթեմուրյան արշավանքները հատկապես անդառնալի հետևանքներ էին ունեցել այս դպրոցի մատենադարանի համար[12]: Ահա թե ինչու 1409-ին Տաթևացին մի խումբ աշակերտների՝ այդ թվում Հովհաննես Կարմրի հետ Սյունյաց աշխարհից Մեծոփավանք է գնում[13]: Հավանաբար, այս ժամանակ էլ մեծ վարդապետ Տաթևացին Մագիստրոսի քերականական գրքի՝ Տաթևի վանքի օրինակը տվել Հովհաննեսին՝ Սարկավագանց վանքի համար՝

---

[7] Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան. 1998, 540:
[8] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1958, 594:
[9] Տե՛ս Օրբելի. 1966, 56–57:
[10] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1955, 112:
[11] Ալիշան. 1893, 238, Դիւան հայոց պատմութեան. 1912, 44:
[12] Մաթևոսյան. 1969, 151:
[13] Մեծոփեցի. 1860, 51–52, Ալիշան. 1893, 238:

ղրա բազմացման կամ ղրանով դասավանդելու նպատակով: Այնուամենայնիվ, ելնելով առկա ձեռագիր հիշատակարանի տեղեկություններից՝ կարծում ենք, որ 1409-ից, երբ Տաթևացին գնում է Մեծոփավանքից, Հովհաննես վարդապետի և նրա ուսուցչական կամ ձեռագրական գործունեություն ծավալելու ուղիները զատվում են: Նա ուսուցչի հետ չի վերադառնում Տաթև. այս շրջանում նրանք՝ մինչև Գ. Տաթևացու մահը, Տաթևի դպրոցում երկուստեք չէին կարող գործել. եթե այդպես լիներ, Մագիստրոսի գիրքը Տաթևից տանելու անհրաժեշտություն չէր լինի: Կարծում ենք՝ 1409–1410 թթ. ընկած ժամանակահատվածում է գիրքը Սարկավագանց վանք տարվել:

Առկա երկու պահպանված ձեռագիր աղբյուրների ընձեռած փաստերը ցույց են տալիս, որ Սարկավագանց վանքը եղել է գրչության կենտրոն կամ ունեցել է գրատուն, որտեղ արտագրվել են ձեռագիր բնագրեր, ինչպես, օրինակ, Տաթևացու երկը: Իսկ եթե Մագիստրոսի քերականությունն այս վանք ընդօրինակվելու նպատակով չի տարվել, ուրեմն վանքն ունեցել է նաև ուսումնական կյանք, վարդապետարան, որտեղ Գ. Տաթևացու պահանջով Հովհաննես վարդապետը դասախոսել է Մագիստրոսի քերականական դասագրքով: Ընդ որում՝ այնքան մեծ է եղել այդ դասագրքի արժեքը, որ Շմավոն վարդապետը, ով արժեքավոր ներդրում է ունեցել ձեռագիր միավորների պահպանության գործում[14], «ըստ պատկանելոյն» այն վերադարձրել է Տաթևի վանք[15]:

Այսպիսով՝ մնում է եզրակացնել, որ ա) կա՛մ ձեռագիր այս հիշատակարանով երևան է գալիս միանգամայն անհայտ վանքի անուն, բ) կա՛մ գոյություն ունեցող վանքի անվանման այլ տարբերակ է եղել, որը, հավանաբար, քիչ է գործածվել և կիրառությունից դուրս եկել: Տաթևացու և նրա աշակերտների գործունեությունն ամփոփող բանասիրական հրապարակումների, մատենագրական նյութերի քննությունը, ինչպես նաև հիշյալ վանքի մասին ձեռագրագիտական տեղեկությունները, վիմագրական արձանագրությունները հուշում են, որ վանքի տեղագրությունը պիտի փնտրել բացառապես այն վայրերում, որտեղ Գ. Տաթևացու աշակերտներն ակտիվ վարդապետական գործունեություն են ծավալել (Քաջբերունյաց, Սյունյաց աշխարհի, Վասպուրականի հոգևոր-մշակութային կենտրոններ)՝ մեծ ներդրում ունենալով հատկապես լենկթեմուրյան հարձակումների հետևանքով կորսված, հրի մատնված ձեռագրերի վերականգնման գործում:

Ձեռագրագիտական տեղեկությունների զուգահեռ քննությունն ուրվագծում է վերոնշյալ ձեռագիրը, որը ընդհանուր է եղել մեկնության քննական բնագիրը կազմողների՝ Ադոնցի և Խաչերյանի համար[16], զարգացման ընդհանուր ուղին՝ Տաթևի վանք–Սարկավագանց վանք–Տաթևի վանք–Էջմիածնի մատենադարան– Մ. Մաշտոցի անվան Մատենադարան:

---

[14] Շմավոն րաբունապետի ջանքերով Տաթևի վանք է բերվել Իգնատիոս եպիսկոպոսի Ղուկասի Ավետարանի մեկնությունը, նաև պատվիրատուն է եղել Գ. Տաթևացու «Գիրք Հարցմանցի» (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի. 2013, 320–321, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1958, 123):

[15] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1958, 122:

[16] Ա դ ո ն ց. 2008, 221–249, Խ ա չ ե ր յ ա ն. 1987, 357–464:

Մագիստրոսի քերականական երկի՝ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի պահպանված ընդօրինակությունները

Մագիստրոսյան քերականության՝ Մխիթարյանների մատենադարանի № 1233 ժողովածուում ներառված ձեռագրի տարընթերցման խորագիրն է՝ «Գրիգորի մայկիստրոսի եւ Կիտաւնոի, որդոյ Վասակա(յ) մարտիրոսի, մեկնութիւն քերականի, զոր եղեալ է զայլոց եւ յիւրոց յաւելեալ յիւրոց իմաստից. Քերականութիւն է հմտութիւն իմաստից»[17]: Ձեռագիր մատյանը ներկայացվում է՝ որպես XV դարի գրչագիր՝ «դատելով արտաքին պարագաներէն, յատկապէս գիրէն»[18], ստացողի, օրինակողի, գրության վայրի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Հետագայի հիշատակարանից հայտնի է՝ 1671 թ. ձեռագիրը նորոգել է Վարդան Բաղիշեցին վանեցի Սահակի ձեռքով Սբ. Ղազարի վանքում[19]:

Մխիթարյան միաբանության մատենադարանի № 1334 մատյանը, որը բովանդակում է միայն Մագիստրոսի քերականությունը, ունի հետևյալ խորագիրը՝ «Գրիգորի Մաքիստրոսի եւ կինտօնտի, որդւոյ Վասակայ մարտիրոսի, Մեկնութիւն քերականի, զոր եղեալ է զայլոցն եւ յաւելեալ յիւրոցն իմաստիցն. աւգնեա՛ Յիսուս. Քերականութիւն է հմտութիւն ...»[20]: Ձեռագրի ստեղծման պատմությունը չի պահպանվել: Հայտնի է միայն որպես XVII դարի օրինակ:

Մագիստրոսի քերականությունը տեղ է գտել նաև Ֆրեդերիկ Մակլերի կազմած Փարիզի ազգային գրադարանի ձեռագրական հավաքածուի № 302 մատյանում՝ “Explication de la grammaire, par Grégiore Magistros, fils de Vasak le martyr”[21]*:*

Հիշյալ ձեռագրերի ստեղծման հանգամանքների մասին տեղեկությունների բացակայությունը թույլ չի տալիս պարզել գրչագրերի ծննդավայրերը: Քանի որ մեր ձեռքի տակ չկան նշված ձեռագիր օրինակները, միայն խորագրերից դատելով դժվար է ենթադրել՝ դրանցում եղած տարբերությունները տարընթերցումային բնույթ ունեն, թե զարգացման տարբեր ուղիներից են սերում:

Ինչպես տեսանք՝ Մագիստրոսի քերականական մեկնությունը դիտարկված գրչագրերում տարբեր խորագրերով է ներկայանում՝ անուղղակիորեն կապվելով տարբեր սկզբնօրինակների հետ, սակայն այսպիսի ենթադրությունը հիմնավորման է արժանի: Միայն հիշյալ ձեռագրերի վերաբերյալ հիշատակագրությունների, նոր աղբյուրների և կամ նոր ձեռագրերի ի հայտ գալը խնդրո առարկա հարցի քննության նոր ուղիներ կբացի:

---

[17] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. 1996, 218:*

[18] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. 1996, 217:*

[19] *Հիշատակարանը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. 1996, 222:*

[20] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. 1996, 591:*

[21] Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothègue Nationale par Frédéric Macler. 1908, 155.

Եզրակացություն

Արդյունքում պարզ է դառնում, թե՝ ա) զարգացման ինչ ուղի է անցել Մագիստրոսի քերականությունն ամփոփող ՄՄ-ի № 3917 ձեռագիր ընդօրինակությունը, բ) ըստ պահպանված ձեռագիր աղբյուրների՝ որ վանքերում և որ վարդապետների ջանքերով է կիրառվել Գ. Մագիստրոսի քերականական երկը, բ) ինչ դեր է այն ունեցել Սյունյաց ուսումնագիտական կյանքում:

Հասմիկ Հովսեփյան – Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունը՝ հին և միջնադարյան հայ գրականություն: Հեղինակ է 10 հոդվածի: hashovsepyan.91@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղոնց Ն. 2008, Երկեր հինգ հատորով, հ. Գ, Հայերէնագիտական ուսումնասիրութիւններ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 488 էջ:

Ալիշան Ղ. 1893, Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Ի Մխիթարայ վանս, ի Ս. Ղազար, 563 էջ:

Դիւան հայոց պատմութեան. 1912, գիրք Ժ, Մանր մատենագիրք ԺԵ–ԺԹ դար, Թիֆլիս, Ելէքտր. տպ. Ն. Աղանեան, 602 էջ:

Թովմա Մեծոփեցի. 1860, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդեաց իւրոց, Փարիզ, Ի գործատան Կ. Վ. Շահնազարեան, 134 էջ:

Խաչերեան Լ. Գ. 1987, Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս, Կեանքն ու գործունէութիւնը, Լոս Անձելըս, տպ. Ալքո, 494 էջ:

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1955, մասն Ա (1401–1450 թթ.), կազմ.՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 816 էջ:

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1958, մասն Բ (1451–1480 թթ.), կազմ.՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 600 էջ:

Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ. 1998, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:

Ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյն Աթոռոյն Էջմիածնի. 1865, Թիֆլիս, Ի տպարանի Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի հայոց, 230 էջ:

Մաթևոսյան Ա. Ս. 1969. Գրիգոր Տաթևացին և Մեծոփավանքի դպրոցի հիմնադրումը. –ՊԲՀ, № 2, էջ 146–154:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, 2013, հ. Ը, Խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, «Նայիրի» հրատ., 1559 էջ:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. 1996, հ. Է, կազմ. Ճեմճեմեան Ս., Ս. Ղազար, 1160 էջ:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3917, 22 բ–127 բ:

Մատենագիրք Հայոց. 2012, ԺԱ դար, ԺԶ հատոր, Երևան, ԵՊՀ հրատ., 1122 էջ:

Օրբելի Հ. Ա. 1966, Դիվան հայ վիմագրության, պր. I, Անի քաղաք, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 137 էջ:

Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothègue Nationale par Frédéric Macler. 1908. Paris. Imprimerie Nationale, Ernest Leroux, Éditeur, Rue Bonaparte, 28, 203 p.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

РОЛЬ УЧЕБНИКА ГРАММАТИКИ ГРИГОРА МАГИСТРОСА В СЮНИКСКОЙ ШКОЛЕ

АСМИК ОВСЕПЯН

Резюме

Ключевые слова: Григор Магистрос, «Толкование Грамматики», рукопись, памятная запись, Григор Татеваци, архимандрит Praovanes, Татев, монастырь Саркаваганц, библиотека, центр письменности.

Сравнительный анализ рукописных источников позволяет наметить общий путь развития рукописи номер 3917 Матенадарана им. М. Маштоца, содержащей «Толкование Грамматики» Григора Магистроса (990–1058), представить научную и образовательную среду, в которой распространялось это грамматическое сочинение. В результате исследования становится ясно, что «Толкование» Магистроса использовалось в монастырях Татев и Саркаваганц. В XV веке, когда были созданы толкования Ованеса Ерзнкаци, Ованеса Црцореци, Вардана Аревелци, Григор Татеваци передает своему ученику капанскому архимандриту Ованесу Кармиру оригинал грамматики Магистроса для использования его в монастыре Саркаваганц. В дальнейшем этот экземпляр, принадлежавший Татевскому монастырю, был возвращен туда рабунапетом (главный учитель монастырской школы) Шмавоном.

Интерес вышеназванных архимандритов Сюника к «Толкованию Грамматики» Григора Магистроса показывает важную познавательно-воспитательную роль этого сочинения, подчеркивает его ценность как с научной, так и с педагогической точки зрения.

Асмик Овсепян – аспирант кафедры древней и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: армянская древняя и средневековая литература. Автор 10 статей. hashovsepyan.91@mail.ru

THE ROLE OF THE GRAMMAR TEXTBOOK BY GRIGOR MAGISTROS IN THE SYUNIK SCHOOL

HASMIK HOVSEPYAN

Summary

Keywords: Grigor Magistros, "Interpretation of Grammar", manuscript, colophon, Grigor Tatevatsi, Archimandrite Hovhannes, Tatev Monastery, Deacon Monastery, library, writing center.

The comparative analysis of the manuscript sources allows us to outline the general path of development of manuscript number 3917 kept in the Matenadaran after M. Mashtots; it contains the "Interpretation of Grammar" by Grigor Magistros (990–1058) and presents the scientific and educational environment in which this grammatical work was spread. As a result of the research, it becomes clear, that the "Interpretation" by Magistros was used in Tatev and Sarkavagants Monasteries. In the 15th century, when the interpretations of Hovhannes Yerznkatsi, Hovhannes Tsortsoretsi, and Vardan Areveltsi were created, Grigor Tatevatsi handed over the original of the "Grammar" by Magistros to his student Archimandrite Hovhannes Karmir from Kapan to circulate in the Sarkavagants Monastery. Later, the copy belonging to the Tatev Monastery, was returned by the head teacher of the monastery school, Shmavon.

The interest of the above mentioned archimandrites of Syunik in the "Interpretation of Grammar" by Grigor Magistros shows the important cognitive and educational role of this work emphasizing its value from both a scientific and pedagogical point of view.

Hasmik Hovsepyan – Postgraduate student at the Department of Ancient and Medieval Armenian Literature and Its Teaching Methodology at ASPU after. Kh. Abovyan. Scientific interests: Armenian ancient and medieval literature. Author of 10 articles. hashovsepyan.91@mail.ru

ՀՏԴ 22 + 1

Doi:10.54503/0135-0536-2023.3-188

ԾՆՆԴՈՑ ԳՐՔԻ ԳՐԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԱՐԴ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԸ*

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Աստվածաշունչ մատյան, Ծննդոց գիրք, գրաբար թարգմանություն, բառապաշար, մարդ, հասարակություն նշանակող իմաստային դաշտ, բնիկ բառեր, փոխառություններ:

Նախաբան

Աստվածաշունչ մատյանը հին հայերեն՝ գրաբար է թարգմանվել Մեսրոպ Մաշտոցի, կաթողիկոս Սահակ Պարթևի և նրանց ավագ ու կրտսեր աշակերտների կողմից հայոց գրի ստեղծումից անմիջապես հետո՝ աջակցությամբ Հայոց արքա Վռամշապուհի: Համաձայն հայոց գրերի ստեղծման հայր Մաշտոցի վարքագրության հեղինակ Կորյունի՝ հայերենի այբուբենը ձևավորելուց հետո Կոմագենեի Սամոսատ քաղաքում Մաշտոցն իր սաների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի՝ երկար սպասված գրաբար թարգմանությանը՝ իբրև սկիզբ ընտրելով Սողոմոնի առակները. «Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յառակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով եթէ «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»[1]: Պետք է նշել, որ մինչ այդ, արդեն տարբեր աղբյուրների վկայությամբ, Գրիգոր Լուսավորչի ջանքերով Մեծ Հայքում ստեղծվել էր բանավոր թարգմանիչների մի ողջ դպրոց: Տրդատ թագավորի հրամանով հիմնված հելլենական և ասորական դպրոցներում պատրաստում էին նաև թարգմանիչներ, որոնք մասնագիտանում էին Աստվածաշնչի ու հոգևոր գրականության թարգմանության գործում, կարդում էին ասորերեն և հունարեն բնագրերը, դրանք վերարտադրում հայերեն: Ինչպես վկայում է Հակոբ Մանանդյանը, IV դարի ընթացքում Հայաստանում արդեն կային Աստվածաշնչի մասնակի թարգմանություններ բանավոր հաղորդմամբ, որի շնորհիվ էլ, հայագետի համոզմամբ, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը ճշտորեն և լիովին վերարտադրում է ասորական կամ հունական բնագրերի բոլոր նրբերանգներն ու առանձնահատկությունները[2]:

Մաշտոցի թարգմանական աշխատանքներին միանում է կաթողիկոս Սահակ Պարթևը, և, ինչպես վկայում են V դարի հայ մատենագիրները, մասնավորապես՝ հավաստի սկզբնաղբյուր համարվող Ղազար Փարպեցին, նրանք

* Ներկայացվել է 19. VI. 2023 թ., գրախոսվել է 26. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:

[1] Կորյուն. 2005, 52:

[2] Մանանդյան. 1978, 456:

միասին ավարտին են հասցնում Աստվածաշունչ մատյանի հայերենացման սրբազան գործը: Մաղաքիա Օրմանյանը գրում է. «Առաջ բերուած կտորներուն բաղդատութենէն յայտնի կ'ետենուի, որ երկու թարգմանութիւններ եղած են ժամանակին, մին Մեսրոպէ, իբր սկզբնական փորձ, եւ միւսը՝ Սահակէ իբր վերջնական գործ»[3]: Թարգմանության լեզուն ընդունված է համարել դասական գրաբարը, ավելի ստույգ՝ V դարի առաջին տասնամյակների լեզուն[4]:

Ընդհանրացնելով թարգմանության ժամանակի և սկզբնաղբյուրի վերաբերյալ կարծիքները՝ Լ. Տեր-Պետրոսյանն ամփոփում է. «Բոլոր հետազոտողները համամիտ են այն հարցում, որ Աստվածաշունչը հայերեն է թարգմանվել Ե դարի սկզբին և որոշ ժամանակ անց խմբագրվել ըստ ձեռք բերված ստույգ հունարեն օրինակների»[5]: Ասորերենից կատարված առաջին թարգմանությունը կոչվում էր «փութանակի», իսկ խմբագրված, լրացված, հունարեն բնագրի միջոցով ճշտված տարբերակը՝ «ընկալեալ»: Հետազոտողներն ընդգծում են, որ երկրորդ անդրադարձն Աստվածաշնչի թարգմանությանը պայմանավորված էր ոչ այնքան կատարված թարգմանության անհամարժեք որակով, որքան բնագրի ոչ ամբողջական, թերի ընդգրկման հանգամանքով: Ահա թե ինչու Աստվածաշնչի թարգմանության սկզբնական շրջանի արդյունքը V դարի պատմիչները բնորոշում էին իբրև «գփութանակի գթարգմանութիւնս» կամ «թարգմանեալն փութանակի»: Ֆրանսիացի արևելագետ Մաթյուրեն Վեյսիեր Լա Կրոզը (1661–1739, Mathurin Veyssière de La Croze*) Աստվածաշնչի առաջին գրավոր հայերեն տարբերակը՝ Սահակ-Մեսրոպյան թարգմանությունը, անվանել է «թագուհի թարգմանութեանց»[6]:*

Հանրության հետ առնչվող անվանումները՝ իրենց ենթահամակարգերով

Աստվածաշնչի Սահակ-Մեսրոպյան բնագրի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ V դարասկզբին գրաբարյան բառապաշարն ուներ հարուստ իմաստաբանական և բառակազմական համակարգեր, որոնց միջոցով հնարավոր էր արտահայտել նյութական ու վերացական ամենաբազմազան հասկացությունները ինչպես ուղղակի, այնպես էլ փոխաբերական միջոցներով, հոմանշային շարքերով: Համընդհանուր լեզվական կաղապարի (ՀԼԿ) և եզրերի հիման վրա հայերենի արմատական գոյականների բնութագրումն առաջին անգամ իրականացրած լեզվաբան Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» հիմնարար աշխատության մեջ առանձին վերլուծում, ապա դասակարգում է հասարակության հետ կապված անվանումները՝ որպես կառուցվածքային ամբողջություն՝ իրենց ենթահամակարգերով՝ ընտանիք, ազգ, տոհմ, ցեղ, պետություն[7]*: Այս իմաստային դաշտի հիմնային բառերն ունեն վաղնջական ծագում, համագործածական են և բոլոր լեզուների հիմնական բառաֆոնդի կարևորագույն մասն են կազմում:*

[3] *Օրմանեան. 1959, 86–87:*
[4] *Գիրք Ծննդոց. 1985, 34–35:*
[5] *Տեր-Պետրոսյան. 1975, 44:*
[6] *Դանիելյան. 2001, 3–15:*
[7] *Տե՛ս Ջահուկյան. 1989, 141–153:*

Աստվածաշնչի Ծննդոց գիրքն աշխարհի արարչության գործընթացի հանգամանալի նկարագրությունն է. հետևապես, այստեղ մարդու, ինչպես նաև նրա հարաբերությունների ու կենսագործունեության վերաբերյալ բոլոր միջուկային հասկացությունները, իրենց բառային տարբեր նշանակումներով, վկայված են: Հենց այս նկատառումով էլ այն ընտրել ենք իբրև սկզբնաղբյուր մեր հետազոտության համար: Բառային նյութը քաղել ենք Գարեգին Ա կաթողիկոսի առաջնորդությամբ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից լույս ընծայված «Աստուածաշունչ մատեան» հրատարակությունից՝ որպես առավել ամբողջական և ճշգրիտ[8]:

Հին հայերենի բառապաշարում մարդու՝ իբրև բանական էակի՝ homo sapiens-ի լեզվական նշանակումները բազմանդամ հոմանշային շարք են կազմում: Հնագույն ժամանակներից սկսյալ՝ մարդը շրջակա աշխարհում կենտրոնական դիրք է գրավել՝ որպես աստվածային արարչության պսակ: Ուստի ունեցել է տարատեսակ անվանումներ, որոնց զգալի մասը պայմանավորված է կրոնական գործոններով: Այս տեսանկյունից Աստվածաշնչի Ծննդոց գիրքը մարդու լեզվական նշանակումների կարևոր սկզբնաղբյուր է, քանի որ այստեղ է նկարագրված մեզ շրջապատող աշխարհի արարումը՝ երկնքի ու երկրի, բուսական և կենդանական աշխարհների: Ծննդոց գրքում մարդը կենդանական աշխարհի հետ ուղղակի կապ չունի. նա եզրափակումն է Աստծո ստեղծարարության՝ արու և էգ է, Աստուծո պատկերի կրողը, թևս Աստծո սեռի մասին, որպես կանոն, հիշատակում չկա, իսկ պատկերաբանության մեջ նա այրակերպ է՝ ի տարբերություն հեթանոսական շրջանի դիցաբանական ընկալման, որտեղ աստվածները երկսեռ էին: Միաստվածության շրջանում հայրիշխանությունը կայացած իրողություն էր, ուստի, օրինակ, քրիստոնեության մեջ հայր և որդի աստվածների հետ անսեռ Սուրբ հոգին էր երրորդություն կազմում, մայր աստված չկար, Աստվածամոր ընկալումը, անկախ Հիսուս որդու միաբնակ կամ երկբնակ էության սահմանումներից, զուտ մարդկային էր. Աստվածամայր Մարիամը ընտրյալ կին էր, բայց՝ մարդ:

Ծննդոց գրքում ի սկզբանե շեշտվում է, որ մարդը՝ օրհնյալ իշխանն ու թագավորը, տերն է ծովի ձկների, երկնքի թռչունների, երկրի վրա բնակվող բոլոր կենդանիների ու սողունների: Միևնույն ժամանակ՝ իբրև կենտրոնական գաղափար, Սուրբ գրքում բազմաթիվ կրկնություններով ընդգծված է մարդու անքակտելի կապն Աստծո հետ. «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու և էգ արար զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած եւ ասէ. Աճեցէ՛ք եւ բազմացարո՛ւք եւ լցէ՛ք զերկիր, եւ տիրեցէ՛ք դմա, եւ իշխեցէ՛ք ձկանց ծովու եւ թռչնոց երկնից եւ ամենայն անասնոց եւ ամենայն երկրի եւ ամենայն սողնոց, որ սողին ի վերայ երկրի» (Ա, 27–28): Այսինքն՝ ակներև է մարդու գերակայությունը և նմանությունն Աստծուն, նույն կերպար ունենալը: Ծննդոց գրքում մարդու՝ աստվածաստեղծ և աստվածակերպ լինելու հատկանիշը բազմիցս ընդգծվում է. հենց այդ պատճառով

[8] Աստուածաշունչ մատեան հին եւ նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց. 1997: Այսուհետ Աստուածաշունչ մատեանից հղումները կնշվեն մեջբերումներին կից:

էլ մարդու կողմից մեկ այլ մարդու արյուն թափելը համարվում է մահացու մեղք, որը պատժվելու է սպանողի սպանությամբ՝ ոչ միայն «ակն ընդական, ատամն ընդ ատաման», այլև «արիւն ընդ արեան», այսպես՝ Նոյի և նրա որդիների վերաբերյալ Թ գլխում իբրև նախազգուշացում-պատվիրան Աստուծո անունից գրված է. «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա, զի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն» (Թ, 6–7):

«Մարդ» հասկացության բառային նշանակումները

Անդրադառնանք ուսումնասիրելիք իմաստային դաշտում կենտրոնական դիրք զբաղեցնող մարդ բառին, որը վաղնջական ծագում ունի, միջուկային միավոր է: Այն ծագումով բնիկ հայկական բառ է, հ.-ե *mer «մեռնել» արմատի *mr-to ենթակայական դերբայի ձևն է, և նրա բուն իմաստը (էտիմոնը) մեռնողն է: Ըստ այսմ՝ մարդ ուղղակի նշանակում է «մահկանացու»: Ինչպես նշում է Հր. Աճառյանը, հնդեվրոպական լեզվամտածողությամբ մարդը երկու ընկալում ուներ. 1. Մահկանացու՝ անմահ աստվածներից տարբերվող, 2. Երկրածին, երկրային, որ ծագում է հ.-ե *g'hmon- սկզբնաձևից: Հիշենք լատիներեն Homo «մարդ» և humus «հող» բառերը, նաև գոթերենում guma «մարդ», այս պարագայում մարդը երկնայիններից տարբերվող հատկանիշով է բնորոշվում: Հայերենում երկրորդ ընկալման նախաձևը չի պահպանվել[9]: Այս բառի քննության ընթացքում Լավրենտի Հովհաննիսյանը ցույց է տալիս հայերի նախնական մտածողության կապը հնդիրանական ժողովուրդների հետ, որոնց ընկալմամբ ևս մարդու առաջնային հատկանիշը հենց մահկանացու լինելն է, օրինակ՝ հին հնդկերենում՝ marta «մարդ», martya «մահկանացու», պարսկերենում՝ mard «մարդ», morden «մեռնել»[10]: Հավելենք՝ մահկանացու բառը, որը սկզբնապես որակ, հատկանիշ ցույց տվող ածական է, հայերենում ձեռք է բերել հստակ գոյականական իմաստ՝ մարդ: Նույնը կարող ենք ասել հողածին կամ հողեղեն բառերի վերաբերյալ, որոնք ևս ածական են, սակայն գոյականական ընկալմամբ նշանակում են մարդ, «հողեղեն/հողածին էակ» ասելով՝ հասկանում ենք առաջին հերթին մարդուն: Գրաբարի բառարաններում «հողածին», «հողեղէն» բառերի բացատրությունները հաստատում են այս հնագույն հնդեվրոպական աշխարհընկալումը: Այսպես «Նոր բառագիրք հայկազեան լեզուի» (ՆՀԲ) աշխատության մեջ «հողածին» բառահոդվածում նշված է. «Ի հողոյ ծնեալ, ծնունդ երկրի, երկրածին, մարդ, ադամ»[11], որից հետո միայն բերվում են մնացյալ իմաստները՝ «ամենայն կենդանի, մանաւանդ ցամաքային»: Իսկ «հողեղէն» անվան բացատրության մեջ նշված է. «… առաջին մարդն յերկրէ հողեղէն, որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնքս»[12]: Այս իմաստային անցումների հետ կապված՝ կարևոր է նշել, որ Ադամ եբրայական անձնանունը վերածվել է հասարակ անվան՝ մարդ իմաստով, ահա, թե ինչու ՆՀԲ-ում այն գրվում է նաև փոքրատառ՝ իբրև մարդու հոմանիշ: Նույն երևույթը փաստացի առկա է Եվա հատկանվան պարագայում, եթե Ադամն այր, տղամարդ բառի հոմա-

---

[9] Տե՛ս Աճառյան. 1977, 278–280:
[10] Հովհաննիսյան. 2008, 8:
[11] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1979, 3:
[12] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1981, 117:

նիշն է դարձել, ապա Եվան՝ կին բառինը: Թեև պետք է արձանագրել, որ ՆՀԲ-ում առանձին բառհոդված կա միայն Ադամի վերաբերյալ, Եվա-ն դիտարկված է որպես հատուկ անուն և տրված չէ առանձին բառհոդվածով. Եվա ձևից ունենք եւայական ածականը, որի համար տրված է հետևյալ բացատրությունը. «... սեպհական եվայի նախամօր»[13]: Ինչ վերաբերում է Ադամ անվան իմաստային բովանդակությանը, ապա գրաբարյան տարբեր բնագրերում այն փոքրատառով՝ իբրև հասարակ գոյական, «մարդ, այր» իմաստով հաճախ է գործածվում:

Քննելով տղամարդու ու կնոջ՝ Ադամի ու Եվայի ստեղծման աստվածաշնչյան պատումը՝ Ծննդոց գրքում տեսնում ենք հակասություն-խմբագրում նրանց ընդհանրական բնույթի և արարման վերաբերյալ, որն ակնհայտ պայմանավորված է աշխարհի այրակենտրոն ըմբռնմամբ. կնոջ ու տղամարդու նախնական հավասարությունը խախտվում է, և կինը դառնում է առաջնաստեղծ տղամարդու ածանցյալը, նրանից՝ նրան օգնելու համար ստեղծված արարած: Այսպես՝ Ծննդոց գրքի Ա գլխում նշվում է, որ արարչության վեցերորդ օրն Աստված ստեղծում է մարդուն՝ «արու և էգ արար զնոսա» (Ա, 27, Ե, 2): Բ գլխի շարադրանքում Ադամը միայնակ է, ուստի Աստված որոշում է նրան օգնականներ ստեղծել՝ ի դեմս կենդանիների, որոնց Ադամն անուններ է տալիս, բայց չի գտնում նրանց մեջ իր նմանին, և նինջ ու թմբիր է բերում Աստված նրա մարմնին, հանում կողը, լցնում մարմնով, բերում Ադամի մոտ, որն էլ անմիջապես ճանաչում է իր ոսկրն ու մարմինը և ասում. «Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ եւ եղիցին երկուքն ի մարմին մի» (Բ, 23–25): Այս պարբերության մեջ գործածված են մարդուն վերաբերող իմաստային դաշտի կարևոր հիմնաբառերը՝ կին, այր, հայր, մայր, որոնց քննությանն էլ անդրադառնանք:

Կին բառը ՆՀԲ-ում համարվում է այր բառի առնչակիցը. մարդկանց մեջ էգը, մանավանդ չափահասը՝ ամուսնացյալը, իբրև աստվածաշնչյան բացատրություն նշվում է, որ Ադամը նրան անվանել է կյանք[14]: Կին-ը դարձյալ բնիկ հայկական ծագում ունի իր երկու հիմքով՝ կին-կան, երկրորդ ձևից ունենք հոգնակի թվի կազմությունները՝ կանայք, կանանց և այլն: Նախաձևն է հ.-ե. $^*g^w$en կամ $^*g^w$ēn-ը՝ հենց կին իմաստով, Հր. Աճառյան, իբրև առնչակից ձև, հիշատակում է նաև սանսկրիտի gna արմատը՝ աստվածուհի իմաստով գործածվող[15]:

Գ. Ջահուկյանը, իբրև հնդեվրոպական նախաձև, վերականգնում է $^*g^u$enā-ն՝ նույն իմաստով[16]: Կին բառի հոմանիշներն են մայր-ը, դուստր-ը (վերջինս նաև բառակապակցությամբ՝ դուստր մարդկան), եվա-ն: Ծննդոց գրքում կնոջ առաջնային հատկանիշ համարվում է գեղեցկությունը. «Եւ եղեւ իբրեւ սկսան մարդիկն բազմանալ ի վերայ երկրի եւ դստերք ծնան

[13] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1979, 705:
[14] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1979, 1096:
[15] Աճառյան. 1973, 588–590:
[16] Ջահուկյան. 2010, 405:

նոցա, տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերս մարդկան, զի գեղեցիկ էին» (Զ, 2)։ Կին արմատի կիրառությամբ միջին դարերում ստեղծվում են կնիկարմատ կամ կինարմատ նույնաբովանդակ բառերը, որոնց հանդիպում ենք «Միջին հայերենի բառարանում»[17]։ Ստ. Մալխասյանցը հայերենի՝ գրեթե բոլոր պատմական շերտերն ընդգրկող իր «Հայերեն բացատրական բառարանում» առանձին բառահոդվածով տալիս է կինարմատ բարդությունը՝ դիմացը թեական նշելով՝ «գուցէ կնամարդ-ից ր-ի տեղափոխությամբ, ինչպես՝ կամուրջ կարմունջ»[18]։ Կարծում ենք, որ իրականում այս կազմությունը կին և հենց արմատ բառերից է ստեղծվել՝ կանացի, իգական արմատից սերող նշանակությամբ։ Սպասելի համաբանությամբ այրարմատ կամ տղայարմատ կազմություններ չեն ստեղծվել. թերևս այս պատճառով էլ Ստ. Մալխասյանցը փորձում է ենթադրել դրափոխություն։ Իրականում համաբանությամբ բառակազմական ձևեր ստեղծելու սկզբունքը ոչ միշտ է գործում։ Այս պարագայում կարևոր հանգամանք է նաև այրակենտրոն լեզվամտածողությունը, որը գալիս է Ծննդոց գրքի երկրորդ շերտից, Ադամը՝ տղամարդը, հենց ինքն է արմատը, որից ճյուղավորվում է կինը։ Ընդհանրապես, Ծննդոց գրքում կարևոր իմաստային փոխհարաբերություններ են ընդգծված Աստուած→մարդ→այր→կին հասկացությունների և նրանց հոմանշային նշանակումների միջև՝ Աստուած→Ադամ→Եվա աստիճանակարգությամբ։

Մարդու և Աստծո նմանություն-հավասարության գաղափարը յուրօրինակ զարգացում է ստանում Ծննդոց գրքի Գ գլխում, ուր ի հեճուկս Աստծո զգուշացման՝ օձը համոզում է կնոջն ուտել բարու և չարի գիտության ծառի պտուղը, որպեսզի բացվեն նրանց աչքերը, և ինչպես օձն է արձանագրում. «… եւ լինիցիք իբրեւ զաստուածս՝ ճանաչել զբարի և զչար» (Գ, 5)։ Սակայն բարու և չարի գիտության պտուղը ճաշակելուց հետո այր և կին արտաքսվում են դրախտից՝ չարաչար անիծվելով, քանզի Աստծո աչքերում մարդու հավասարվելը իրեն, «մի ի մէնջ դառնալ»-ն արդեն գնահատվում է իբրև աններելի մեղք։ Եվ որպեսզի կենաց ծառից էլ հանկարծ Ադամն ու Եվան չճաշակեն՝ անմահ դառնալով, վտարվում են ու պարտադրված բնակություն հաստատում դրախտից դուրս։ Այդ օրվանից սահմանվում է կնոջ ենթակայությունն ամուսնուն, անհավասարությունը, որդեծնության ցավերը, բազմապատկվող տրտմությունն ու հեծությունը, իսկ տղամարդուն վիճակվում է փուշ և տատասկ երկրային կյանքում, դառը քրտինքով տրվող հանապազօրյա հաց ու հողից հող դառնալ. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար, զի հող էիր և ի հող դարձցիս» (Գ, 19)։

Ինչ վերաբերում է քննված իմաստային դաշտի հաջորդ միջուկային բառին՝ այր, ապա այն հայերենի բոլոր բառարաններում տրված է իր երկու հիմնային իմաստով՝ 1. արու մարդ, չափահաս, արբունքի հասած, մահկանացու և 2. ամուսին, բնիկ հնդեվրոպական բառ է, բայց ինչպես Հր. Աճառյանը և Գ. Ջահուկյանն են նշում, նախաձևը դժվար վերականգնելի է։ Գ. Ջահուկյանն իր «Ստուգաբանական բառարանում» նշում է, որ այն տարահիմք՝ անգամ տարարմատ կազմություն է, ենթադրաբար՝ այր > *anrio-՝*ario – «տեր» իմաս-

[17] Ղազարյան, Ավետիսյան. 2009, 378։
[18] Մալխասեանց. 1944, 435։

տով հիմքի ազդեցությանը ենթարկված[19]։ Այր բառը հոմանշային յուրօրինակ շարք է կազմում մարդ, մահկանացու, հայր, որդի (բառակապակցությամբ՝ որդի Աստուծոյ, այստեղ կարևոր նրբերանգ կա. եթե կին բառը համագոր է դուստր մարդկան արտահայտությանը, ապա այր բառը՝ որդի Աստուծոյ), ուստր և հսկա բառերի հետ՝ փաստացի արտահայտելով արական սեռի բոլոր բնորոշ հատկանիշներն ու գործառությունները։ Ծննդոց գրքում ուրույն շեշտադրում ունի հենց «հսկա» իմաստը։ Զ գլխում կարդում ենք. «Եւ սկայք էին ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ, եւ յետ այնորիկ իբրեւ մտանէին որդիքն Աստուծոյ առ դստերսն մարդկան, եւ ծնան իւրեանց որդիս, նոքա էին սկայքն, որ յաւիտենից արք անուանիք» (Զ, 4–5)։ Նշենք նաև, որ ի տարբերություն հայ պատմագրության՝ Ծննդոց գրքում այր բառն ավելի հազվադեպ է գործածվում, քան նրա հիմնական հոմանիշ մարդ-ը։ Նույնիմաստ տղամարդ կազմությունը շատ ավելի նոր է. այն ՆՀԲ-ում կամ Ռ. Ղազարյանի «Գրաբարի առձեռն բառարանում» տրված չէ. վաղաշխարհաբարյան կազմություն է, որն առկա է Ստ. Մալխասյանցի բառարանում՝ «ընդհանրապես արական սեռի մարդ՝ առանց հասակի խտրության» առաջնային նշանակությամբ, զուգահեռաբար բերված է նրա հականիշը՝ կնիկմարդ կազմությունը, որը ևս վաղաշխարհաբարյան ձև է՝ այսօր միայն արևմտյան որոշ բարբառներում կիրառելի[20]։ Միջին հայերենի բառարանում ունենք էրիկմարդ բառը[21], որը գրաբարյան այր սկզբնաձևի հնչյունափոխական տարբերակից է կազմվել՝ այր>էր+իկ→այրիկ>էրիկ, նույն համաբանությամբ կազմվել է կնիկմարդ-ը՝ կին+իկ>կնիկ։ Հետագա շրջանում «Արդի հայերենի բացատրական բառարանում տեղ է գտել նաև սպասելի՝ այրամարդ բարդությունը՝ բանաստեղծական նշումով[22]։

Հայր հնագույն բառի քննությունը ցույց է տալիս, որ այն դարձյալ բնիկ հնդեվրոպական ծագում ունի՝ հ.-ե *pəte´r, *pətro´s ձևից[23]. Գ. Ջահուկյանը համակարծիք է Հր. Աճառյանի այս վերականգնմանը[24]։ Հայր բառի իմաստային բեռնվածությունը բավական մեծ է, և այստեղ էական է սուրբգրային ընկալումը։ ՆՀԲ-ում բառը բացատրվում է որպես «այր կամ արու ծնօղ զաւակի, իրական կամ նմանական, առնչակից որդւոյ»[25], ապա անմիջապես նշվում է, որ հայրը նախ՝ աստվածն է իբրև ծնող, սուրբ երրորդության մեջ առաջին անձը։ Հայր բառը, ինչպես և ընտանիքի մյուս հիմնական անդամների անվանումները՝ մայր, եղբայր, քոյր, ունեն և՛ նեղ, և՛ լայն իմաստներ։ Ըստ այդմ՝ հայր-ը լայն իմաստով՝ նախահայրն է, աշխարհի նախաստեղծ հայրը, դրանից բխող առաջնորդի բոլոր գործառույթների կրողը, ՆՀԲ-ի սահմանմամբ՝ տնօրէն, գլուխ, տէր։ Զուգահեռ ընկալմամբ հայր-ը նաև հոգևոր ծառայություն իրականացնող մարդն է՝ «վարդապետ եկեղեցւոյ կամ հայրապետ»։ Ծննդոց գրքում հոր հեղինակությունն անբեկանելի է, ցանկացած մե-

[19] Ջահուկյան. 2010, 49–50։
[20] Մալխասեանց. 1945, 420։
[21] Ղազարյան, Ավետիսյան. 2009, 216։
[22] Աղայան. 1976, 43։
[23] Աճառյան. 1977, 31։
[24] Ջահուկյան. 2010, 444։
[25] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1981, 32։

դանչում նրա նկատմամբ՝ դատապարտելի, որովհետև հին սեմական, հնդեվրոպական և շատ այլ ժողովուրդների կառավարման համակարգի հիմքում հայրիշխանությունն էր: Այս տեսանկյունից ամենաբնութագրական հատվածը Նոյի և որդիների հետ տեղի ունեցած հայտնի միջադեպն է: Հողագործ, այգեգործ այր Նոյն արբում է իր պատրաստած գինով, մերկանում իր տանը: Քամը, տեսնելով մերկ հորը, անմիջապես դուրս է գալիս և պատմում եղբայրներին՝ հոր մերկության մասին: Սեմն ու Հաբեթն այլայլված վերցնում են հանդերձը և հետ-հետ գնալով՝ ծածկում հոր մարմինը, այնպես, որ իրենց աչքերը չտեսնեն իրենց հորը մերկ, այսինքն՝ անպատիվ վիճակում: Գինովությունից սթափված Նոյը, իմանալով կատարվածը, անիծում է թեթևամիտ Քամին և օրհնում հայրապաշտ Սեմին ու Հաբեթին: Քամը հավերժ դատապարտվում է լինելու իր եղբայրների ծառան: Այս անեծքի և օրհնանքի հիմքում աստվածային կամքն է. «Եւ սթափեցաւ Նոյ ի գինւոյ անտի իւրմէ, եւ գիտաց զինչ արար ընդ նա որդին իւր կրտսեր եւ ասէ. Անիծեալ Քանան, մանուկ, եւ եղիցի ծառայ եղբարց իւրոց (ընդգծումը մերն է –Ն. Դ.)» (Թ, 24–26):

Հայր բառի նշված բոլոր իմաստային ճյուղավորումները պահպանվել են ինչպես միջին, այնպես էլ արդի արևելահայերենում ու արևմտահայերենում, բարբառներում: Նշենք նաև, որ այս բառը եղել և այժմ էլ կիրառվում է որպես հարգական դիմելաձև, ներկայումս ավելի շատ -իկ ածանցով՝ հայրիկ: Այսպես դիմում են տարիքով ավագ, անգամ՝ անծանոթ տղամարդկանց: Առանց -իկ ածանցի հայր բառը կուսակրոն հոգևորականներին ուղղված դիմելաձև է:

Մայր-ը բնիկ հնդեվրոպական բառ է՝ հ.-ե *mātér նախաձևից նույն նշանակությամբ: Հնդեվրոպական տարբեր լեզուներում այն ուներ նաև կին ու քույր իմաստները: Հր. Աճառյանը բերում է ալբաներենի օրինակը, որտեղ motrɛ արմատը նշանակում էր նաև «երեց քույր», որն իր կրտսեր հարազատների համար մոր դերն էր կատարում[26]: Հայր բառի օրինակով մայր արմատը – իկ փաղաքշական ածանցի հետ կազմում է հարգական դիմելաձև՝ մայրիկ, որը հասցեագրվում է թե՛ անծանոթ, թե՛ ծանոթ ավագ տարիքի կանանց: Մայր արմատը ևս ունի կրոնական բովանդակություն. այս պատվանվանմանն արժանանում են միանձնուհի կույսերի առաջնորդները: Վերջին շրջանում արևելահայերենում այն մայրապետ բարդության ձևով մուտք է գործել բժշկական բառապաշար, դարձել եզր՝ կրտսեր բժշկական անձնակազմի ներկայացուցիչների անվանում՝ սանիտար փոխառությանը համարժեք: Նույն կերպ իմաստային զարգացմամբ բժշկական բառապաշարում ամրակայվել է քույր բառը, որը ևս բնիկ արմատ է՝ հ.-ե *sueʹsōr նախաձևից, որը կազմված է *sue «իւր» դերանունից, այսինքն՝ նշանակում է յուրային, սեփական կանացի ճյուղավորմամբ[27]:

Դուստր-ը հնդեվրոպական այն արմատների շարքն է համալրում, որոնք նշանակում էին արյունակից մոտ ազգականներ -ter ածանցով, հ.-ե *dhukteʹr նախաձևից[28]: Գ. Ջահուկյանն վերականգնում է ավելի նախնական *dhughЪteʹr

[26] Ա ճ ա ռ յ ա ն. 1977, 246:
[27] Ա ճ ա ռ յ ա ն. 1979, 586:
[28] Ա ճ ա ռ յ ա ն. 1971, 686:

արմատը[29]: Նշենք, որ հոմանիշ աղիջ արմատը, որից -իկ փաղաքշական-նվազական ածանցով ունենք աղջիկ բառը Ծննդոց գրքում, ինչպես նաև հայ դասական մատենագրության մեջ սակավ կիրառություն ունի, ընդ որում՝ ոչ այնքան դուստր, որքան երիտասարդ կին, ինչպես նաև ծառա իմաստներով: Աղջիկ բառն աղախին բառի հետ, որպես նույնանշանակ, հանդիպում է Ծննդոցի ԺԶ գլխում, որտեղ պատմվում է Աբրահամի կին Սառայի մասին, ով չէր կարողանում որդի ունենալ, ուստի եգիպտացի իր աղախին աղջկան՝ Ագարին, տալիս է ամուսնուն որդեծնության համար, բայց հետո խանդից չարչարում է հղիացած Ագարին, որը փախչում է, սակայն Տիրոջ հրեշտակի հորդորով վերադառնում է տիկնոջ մոտ՝ լույս աշխարհ բերելով Իսմայելին: Աղջիկ բառի սկզբնաձևը՝ աղիջ-ը, այն, ինչպես նշում է Հր. Աճառյանը «Արմատական բառարանում», մեկ անգամ վկայված է Տիմոթեոս Կուզի Թարգմանության մեջ՝ Սուրբ կույս Մարիամի բնորոշման համար: Աղիջ արմատի բովանդակությունը ընդգրկուն է՝ կույս, օրիորդ, մանկամարդ կին, նաժիշտ, նաև՝ դիցուհի: Ստուգաբանությունը հնդեվրոպական է, բայց զուգադրվում է տարբեր արմատների հետ. Հր. Աճառյանը ենթադրաբար այն կապում է *parq^{w}he նախաձևին, իմաստային բացատրությունները ևս տարբեր են՝ հիմնականում «կույս», «պաշտպանել», «սնուցել» նշանակությամբ: Գ. Ջահուկյանը սկզբնաձև համարում է *pəliiā կամ *pōu «փոքր» ձևերը՝ «մորուկ, քուռակ, աղջիկ» իմաստային անցումներով: ՆՀԲ-ում վկայված է միայն ճ-ով տարբերակը՝ աղիճ՝ որպես հին բառ: Այն ունի միայն նեղ բացասական իմաստ՝ կույսին հականիշ՝ պոռնիկ կին նշանակությամբ: Նշենք, որ այս բառահոդվածում բերվում է նաև աղջկորդի կազմությունը, որից պարզ է դառնում որդի բառի նախնական լայն իմաստը՝ ընդհանրապես՝ երեխա, զավակ՝ անկախ սեռից[30]: Միջին հայերենից սկսած՝ աղջիկ կազմությունը դառնում է համագործածական՝ սահմանափակելով դուստր բառի կիրառության ոլորտները: Այժմ այն բանաստեղծական, բարձր ոճի բառ է, իսկ զուգահեռ ուստր (արու զավակ, տղա, որդի) հնագույն կազմությունը գրեթե դուրս է մղվել գործածությունից. արդի բառարաններում տրված է հին, բանաստեղծական նշումով:

Ուստր բառը ծագում է հ.-ե *sukte′r նախաձևից՝ «որդի» իմաստով[31]: Հր. Աճառյանը հնդեվրոպական այս արմատի ծագումը բխեցնում է կամ *seug- / *suq- «կաթ ծծել» իմաստով բառից, կամ առավել բարձր հավանականությամբ՝ *seu- / *su- «ծնվել» նշանակող ձևից: Գ. Ջահուկյանը միանշանակ կապում է հ.-ե *suk-te′r «ծնել» արմատի հետ[32]: Ծննդոց գրքում համագործածական են և՛ ուստր, և՛ որդի արմատները. «Եւ եկեաց Սէմ յետ ծանանելոյ նորա զԱրփուքսադ՝ ամս հինգ հարեւր եւ ծնաւ ուստերս եւ դստերս եւ մեռաւ» (ԺԱ, 11–12), «Եւ առ Թարա զԱբրամ զորդի իւր եւ զՆաքովր զորդի իւր եւ զՂովտ՝ զորդի Առանայ որդւոյ իւրոյ եւ զՍարա զնու իւր ... եւ եհան զնոսա յաշխարհէն Քաղդեացւոց» (ԺԱ, 31–32), «Եւ ժողովեցան ամենայն ուստերք նորա եւ ամենայն դստերք նորա, եւ եկին մխիթարել զնա, եւ ոչ

[29] Ջահուկյան. 2010, 204:
[30] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1979, 40:
[31] Աճառյան. 1977, 611–612:
[32] Ջահուկյան. 2010, 606:

կամէր մխիթարել, ասէ՝ Զի իջից ես սովին սգով առ որդի իմ ի դժոխս» (ԼԷ, 35):

Որդի բնիկ հնդեվրոպական բառի ծագումը Հր. Աճառյանը բխեցնում է հ.-ե *portiyo նախաձևից, որի հիմքում *per/*por արմատն է «ձագ ծնել կամ բերել, երկնել» իմաստով[33]: Գ. Ջահուկյանը իր ստուգաբանական բառարանում առանձնացնում է *portuo- *per- հնդեվրոպական վերականգնված արմատները նույն իմաստային զարգացմամբ[34]:

Որդի, ուստր, դուստր բառերի ընդհանրական հասկացությունն իբրև երեխայի, ժառանգորդի, արտահայտվում է նաև զաւակ բառի միջոցով, որը ևս բազմաթիվ կիրառություններ ունի Ծննդոց գրքում. «Բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո եւ անթիւ լիցի ի բազմութենէ» (ԺԶ, 10–11): Այս արմատն արդեն փոխառյալ է, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, ծագում է, թերևս, իրանական աղբյուրից, այն համեմատում է սողդերեն «zwn» ձևի հետ՝ կենդանի արարած, երեխա իմաստով[35]: Հր. Աճառյանը զաւակ բառի իմաստի մեջ ներառում է «որդի, ծնունդ, ցեղ, սերունդ» հասկացությունները, նախաձև չի նշում, բայց բերում է հնդիրանական լեզուներից մի շարք ցուգաբանություններ, որոնք բոլորն ունեն «որդի, ձագ, կյանք» իմաստները[36]: Զաւակ արմատն այսպիսով արտահայտում է որդեծնության շղթայի ամբողջ իմաստը՝ նոր կյանքի ստեղծումը: Ունենք նաև հոմանիշ տղայ բառը, որը ևս փոխառյալ է. այն ասորական արմատ է՝ talyā՝ «երեխա, տղա, արու զավակ» իմաստային նեղացման շղթայով[37]:

Ծննդոց գրքում նոր կյանքի խորհրդանիշ զաւակ, որդի բառերի հոմանիշն է նաև ծնունդ-ը. «Եւ այս են ծնունդք որդւոցն Նոյի. Սէմ, Քամ, Յաբեթ, եւ ծնան նոցա որդիք յետ ջրհեղեղին» (Թ, 18–19): Ծնունդ-ն ածանցավոր կազմություն է՝ արմատը՝ ծին+ունդ, ծին հ.-ե *g'en արմատից՝ «ծնունդք, ծագում, սերունդ, յաջորդք, որդիք» նշանակություններով[38]: Գ. Ջահուկյանը -ունդ ածանցը կապում է հ.-ե *-ti- ածականի հետ, որը ենթադրաբար ունեցել է «ելնող» նշանակությունը[39]: Այս հոմանշային շարքում է նաև մանուկ բառը. «Եւ հայեցեալ ի վեր ետես զկանայսն եւ զմանկունս, եւ ասէ՝ դոքա զինչ են քո, եւ նա ասէ. Մանկունք իմ են, որովք ողորմեցաւ աստուած ծառայի քում» (ԼԳ, 5–6): Ման/ուկ-ը ևս համարվում է հնդեվրոպական կազմություն, Գ. Ջահուկյանն այն կապում է հ.-ե *mn̥kio՝ *men «փոքր, փոքրացնել» արմատի հետ, որի մեջ վերականգնվում են նաև «թույլ, սուղ» իմաստները: Գ. Ջահուկյանը վիճարկում է Հր. Աճառյանի վարկածը, ըստ մանն արմատը կապվում է լատիներենում առկա mās «տղամարդ, տղա» բառի հետ, որովհետև նման այլ հնդեվրոպական զուգահեռներ չկան[40]: Իսկ նվազական-փաղաքշական - ուկ

[33] Աճառյան. 1977, 576:
[34] Հմմտ. Ջահուկյան. 2010, 752:
[35] Ջահուկյան. 2010, 235:
[36] Աճառյան. 1973, 85:
[37] Ջահուկյան. 2010, 731:
[38] Աճառյան. 1973, 457:
[39] Ջահուկյան. 2010, 812:
[40] Ջահուկյան. 2010, 509:

ածանցը, ինչպես նաև -իկ-ը ծագում են հ.-ե *-kon բաղադրյալ ածանցից՝ նախորդող *-ū- հիմքակազմ տարրով[41]:

Ծննդոց գրքում յուրահատուկ տեղ ունի առաջին զավակը՝ որդին, անդրանիկը, անդրանկության իրավունքն աստվածաշնչյան վկայության ունի, ընդ որում, այն ոչ միայն գույքային, կարգավիճակային առավելություն էր վերապահում տան ավագին, այլև՝ բարոյական մեծ պատասխանատվություն: Ահա թե ինչու անդրանիկ «առաջնեկ, ավագ» նշանակությամբ ածականն ունի նաև գոյականական տարածված կիրառություն. երկարժեք է, հետագայում դարձել է արական հատուկ անուն: Մեջբերենք Ծննդոց գիրքը եզրափակող գլխից Հակոբի խոսքն իր որդիներին. «Ռուբէն, անդրանիկ իմ, դու զօրութիւն իմ եւ սկիզբն որդւոց իմոց, խստութեամբ գնացեր եւ խստութեամբ, յանդգնութեամբ թշնամանեցեր» (խԹ, 3): Անդրանիկ-ը բնիկ բառ է. հ.-ե *ant(i)ro, *ant(i) նախաձևից՝ «առջև, դիմաց» իմաստով, որին ավելացել է դարձյալ բնիկ -անիկ վերջածանցը[42]:

Աստվածաշնչի անդրանիկ գիրքը խորհրդանշական խորագիր ունի՝ Ծնունդք, և այստեղ ամփոփված են աստվածային արարչության ծնունդները՝ երկինքն ու երկիրը և դրանց միջև ձևավորված բուսական, կենդանական ու, առաջնահերթ, մարդկային աշխարհները՝ իրենց հիմնական անվանումներով: Մարդն աշխարհում գործունեության և իշխանության առաջնային իրավունք ունեցող արարած է, որը ստեղծում է իր գոյության, վերարտադրության ու ինքնապահպանման համար անհրաժեշտ համակարգերը՝ ընտանիք, ազգ, տոհմ:

Իբրև եզրափակիչ միավորներ՝ անդրադառնանք հենց այս ընդհանրական հասկացությունների անվանումներին: Ընտանիք բառը եռաբաղադրիչ է՝ ընդ+տուն/տան+ի+ք. բոլորն էլ բնիկ ծագման են, ընդ նախդրի սկզբնաձևն է հ.-ե *anti «փոխարեն, միասին» արմատը, որին Գ. Ջահուկյանը ենթադրաբար հավելում է *ndhos նախդիրը՝ «տակ» իմաստով[43]: Ի-ն բնիկ ածանց է, ք-ն հոգնակերտ, ընդհանուր նշանակությունը թափանցիկ է՝ ընդհանուր տանը կամ տանիքի տակ ապրողներ՝ ազգականներ, այս բառը Ծննդոց գրքում քիչ է գործածվում: Նշյալ իմաստով հիմնականում կիրառվում է արմատական բառը՝ տուն, որը հ.-ե *dem՝ *dem(o) նախաձևից է՝ «կառուցել, իրար հարմարեցնել» նշանակությամբ[44]: Բերենք բնորոշ օրինակ. «Եւ եղիցին արդիւնք դորա, եւ տաջիք զհինգերորդ մասն Փարաւոնի, եւ չորք մասունքն ձեր եղիցին ի սերմն երկրիդ եւ ի կերակուր ձեզ եւ ամենայն ընտանեաց ձերոց, եւ ի կերակուր տղայոց ձերոց» (խԷ, 24):

Ազգ տարածված գոյականը ուսումնասիրված գրքում տոհմ, գերդաստան, զարմ բառերի հոմանիշն է: Իմաստային դաշտն ավելի լայն է. գրաբարում այն նշանակում էր, ընդհանրապես, սեռ, տեսակ, կարգ, դաս, ապա նաև՝ տուն, ժողովուրդ, ամբոխ, ազգատոհմ[45]: Արմատն ենթադրաբար իրանյան ծագում

[41] Ջահուկյան. 2010, 811:
[42] Ջահուկյան. 2010, 55:
[43] Ջահուկյան. 2010, 248:
[44] Ջահուկյան. 2010, 735:
[45] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1979, 6:

ունի. կապվում է միջին պարսկերեն azg «ճյուղ» բառի հետ[46]: Բաբելոնյան աշտարակաշինության հատվածում Աստված հասկանում է, որ երբ մարդկանց որդիները բոլորը մի ազգ են և ունեն մեկ լեզու, ապա նրանք կատարյալ են, ունակ իրագործելու այն ամենը, ինչ կցանկանան, այսինքն՝ հավասար են աստվածներին: Ուստի որոշում է կայացնում խառնակելու նրանց լեզուները, որպեսզի ընկերն ընկերոջ լեզուն այլևս չհասկանա. «Ահա ազգ մի եւ լեզու ամենեցուն, եւ զայդ սկսան գործել եւ արդ ոչ ինչ պակասէ ի նոցանէ, զամենայն զոր ինչ յօժարեսցին գործել. Եկայք իջցուք եւ խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ» (ԺԱ, 6–8):

Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, ազգ, տոհմ գոյականները ցույց են տալիս իրենց անդամների լեզվական և ծագման ընդհանրությունները. ազգ-ը կարող է համընկնել պետության՝ որպես հասարակական միավորի հետ կամ չհամընկնել, իսկ տոհմ-ն արդեն պատմական հասկացություն է, որը միավորում է սերնդապահպանության և գոյապահպանության գործառույթները[47]:

Տոհմ բառը ՆՀԲ-ում ազգի մի փոքր նեղ հոմանիշն է՝ «ցեղ, ազգատոհմ, տուն, ժողովուրդ, ազգի ճյուղ» բացատրությամբ[48], ծագումով պահլավական արմատ է՝ նույն բովանդակությամբ՝ «սերմ, ցեղ, ծագում, ծնունդ»[49]: Բերենք ջրհեղեղից հետո Նոյի ծնունդների մասին պատմող ավարտական հատվածը, որտեղ վկայված են իմաստային դաշտի այս ընդհանրական միավորները. «Սոքա են որդիք Սեմայ յազգս իւրեանց, յաշխարհս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց: Այս են ազգք որդւոց Նոյի ըստ ծնունդս իւրեանց. եւ ի սոցանէ սփռեցան կղզիք ազգաց՝ ի վերայ երկիր յետ ջրհեղեղի» (Ժ, 31–32):

Եզրակացություն

Մարդու և հասարակության հետ կապված բառերի քննությունը Ծննդոց գրքում ցույց է տալիս, որ իմաստային այս խումբն ունի միջուկային հասկացությունների համար բազմաթիվ բառային նշանակումներ՝ թե՛ պարզ արմատական, թե՛ ածանցավոր կամ բաղադրյալ կազմություններ, որոնք միավորված են իրար լրացնող ենթախմբերում: Այս իմաստային դաշտի ենթախմբերում ընդգրկված բառանվանումներից շատերն ունեն հոմանիշներ, այսինքն՝ հոմանշային բազմանդամ շարքեր են կազմում: Բառերի հիմնական մասը բնիկ ծագում ունեն, փոխառությունները սակավաթիվ են: Ունենք իրանյան ծագման բառեր՝ ազգ, տոհմ, զաւակ և ասորական՝ տղայ: Ըստ էության, փոխառյալ միավորները բնիկ հնդեվրոպական բառերի հոմանշային շարքերի անդամներն են, միջուկային բառերի լրացումները: Քննված բառերը համագործածական են հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններում՝ հին, միջին և նոր գրական հայերեններում, ինչպես նաև՝ բարբառներում: Դրանց իմաստային բովանդակությունը գրեթե փոփոխությունների չի ենթարկվել. պարզապես որոշ բառեր հիմնական բառաֆոնդից տեղափոխվել են հնաբանությունների, բանաստեղծական բառերի շերտեր:

[46] Ջահուկյան. 2010, 23:
[47] Ջահուկյան. 1989, 141–142:
[48] Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան. 1981, 886:
[49] Աճառյան. 1979, 417:

Հունարեն և ասորերեն սկզբնաղբյուրներից Աստվածաշունչ մատյանը գրաբար դարձրած մեր թարգմանիչները մեծ տաղանդով ի ցույց են դրել ոսկե դարի դասական լեզվի բառապաշարի, բառակազմության ու իմաստաբանության ներուժը՝ նույն հասկացությունը տարբեր բառերով, ոճական, իմաստային նուրբ և նրբագույն երանգներով վերարտադրելու ունակությունը՝ Սուրբ գրքի բնագրին համարժեք:

Նարինե Դիլբարյան – բ. գ. թ., ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմություն, դասական հայերեն, միջին հայերեն, դարձվածաբանություն, իմաստաբանություն, տեղանվանագիտություն, անձնանվանագիտություն: Հեղինակ է 3 գրքի և ավելի քան 60 հոդվածի: narine.dilbaryan@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր. Հայերեն արմատական բառարան, 1971, հ. Ա (Ա–Դ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 698 էջ, 1973, հ. Բ (Ե–Կ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 687 էջ, 1977, հ. Գ (Հ–Չ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 635 էջ, 1979, հ. Դ (Պ–Ֆ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 674 էջ:

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 929, 1612 էջ:

Աստուածաշունչ մատեան հին եւ նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց. 1997, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Ծնունդք, 3–53 էջ:

Գիրք Ծննդոց.1985, Քննական բնագիր, աշխատասիրությամբ՝ Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, ԳԱԱ հրատ., 452 էջ:

Դանիելյան Նորայր. 2001, Աստվածաշնչի հայերեն թարգմանության փուլերի մասին. – ՊԲՀ, № 1, էջ 3–15:

Կորյուն. 2005, Վարք Մաշտոցի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 270 էջ:

Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան. Նոր բառգիրք հայկազեան լեզուի. 1979, հ. I (Ա–Կ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1140 էջ, 1981, հ. II (Հ–Ֆ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1067 էջ:

Հովհաննիսյան Լ. Շ. 2008, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), Երևան, «Գիտություն» հրատ., 130 էջ:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ. 2009, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 835 էջ:

Մալխասեանց Ստ. Հայերէն բացատրական բառարան, 1944, հ. II (Զ–Կ), Երևան, Հայկ. ՍՍՌ պետ. հրատ., 513 էջ, 1945, հ. IV (Չ–Ֆ), Երևան, Հայկ ՍՍՌ պետ. հրատ., 647 էջ:

Մանանդյան Հ. 1978, Երկեր, Բ, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., էջ 443–484:

Տեր-Պետրոսյան Լ. 1975, Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը. – «Էջմիածին», Ա, էջ 40–53:

Ջահուկյան Գ. Բ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., 316 էջ:

Ջահուկյան Գ. Բ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ» հրատ., 819 էջ:

Օրմանեան Մ. 1959, Ազգապատում, հ. Ա, Պէյրութ, տպ. Սեւան, 830 էջ:

КЛЮЧЕВЫЕ СЛОВА СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ КОНЦЕПТА «ЧЕЛОВЕК» В ДРЕВНЕАРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ КНИГИ БЫТИЯ

НАРИНЕ ДИЛБАРЯН

Резюме

Ключевые слова: Библия, Книга Бытия, древнеармянский перевод, лексика, семантическое поле человек, общество, коренные слова, заимствования.

Изучение слов, относящихся к человеку и обществу в Книге Бытия, показывает, что эта семантическая группа имеет много словесных единиц для обозначения основных понятий, будь то простые корни или составные конструкции, которые объединены в дополняющие друг друга подгруппы. Слова, входящие в подгруппы этого семантического поля, имеют богатый спектр по количеству членов-синонимов. Большинство этих слов индоевропейского происхождения: *մարդ, այր, ծնունդ, մանուկ, հայր, մայր, եղբայր, քոյր, ուստր, դուստր, անդրանիկ, ծնունդ, ընտանիք, տուն;* есть несколько заимствований: иранские *(ազգ, տոհմ, զաւակ)* и сирийское *(տղայ)*. Заимствования обогащают разнообразные синонимические ряды. Исследуемые слова употребляются во всех периодах истории армянского языка: в древнеармянском, среднеармянском и в новом литературном языке, а также в диалектах. Их смысловое содержание в основном не изменилось на протяжении веков, лишь некоторые слова перешли из базовой лексики в пласты устаревших и поэтических слов. Наши переводчики, переводящие на древнеармянский язык Священное Писание с греческого и сирийского оригиналов, с большим талантом продемонстрировали потенциал лексики классического грабара Золотого века, способность выразить одно и то же понятие несколькими словами с едва уловимыми стилистическими, семантическими нюансами, равнозначно оригиналу Священного Писания.

Нарине Дилбарян – к. филол. н., доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ. Научные интересы: история армянского языка, классический армянский язык, среднеармянский язык, фразео-

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

логия, семантика, топонимия, антропономика. Автор 3 книг и более 60 статей. narine.dilbaryan@ysu.am

THE BASIC WORDS OF THE SEMANTIC FIELD DENOTING THE CONCEPT “MAN” IN THE ANCIENT ARMENIAN TRANSLATION OF THE BOOK OF GENESIS

NARINE DILBARYAN

Summary

Keywords: Bible, Genesis, ancient Armenian translation, vocabulary, semantic field of human meaning, society, root words, borrowings.

A study of words relating to a man and society in the Book of Genesis shows that this semantic group has many verbal units for denoting basic concepts, whether they are simple roots or compound constructions that are combined into subgroups that complement each other. The words included in the subgroups of this semantic field have a rich spectrum in terms of the number of synonyms. Most of these words are of Indo-European origin: *մարդ, այր, ծնունդ, մանուկ, հայր, մայր, եղբայր, քոյր, ուստր, դուստր, անդրանիկ, ծնունդ, ընտանիք տուն*; there are several borrowings from Iranian *(ազգ, տոհմ, զաւակ)* and Syrian *(տղայ)*. Borrowings enrich a variety of synonymic series. The studied words are used in all periods of the history of the Armenian language: in Old Armenian, Middle Armenian and in the new literary language, as well as in dialects. Their semantic content basically has not changed over the centuries, only some words have moved from the basic vocabulary to the layers of obsolete and poetic words. Our translators, when translating the Holy Scripture into the Ancient Armenian language from the Greek and Syriac originals, masterfully demonstrated the potential of the vocabulary of the classical Grabar of the Golden Age, its ability to express the same concept in several words with subtle stylistic, semantic nuances equivalent to the original Holy Scripture.

Narine Dilbaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor at the Chair of the Armenian Language History and General Linguistics of YSU. Scientific interests: history of the Armenian language, Classical Armenian, Middle Armenian, phraseology, semantics, toponymy, anthroponymics. Author of 3 books and more than 60 articles. narine.dilbaryan@ysu.am

ՀՏԴ 809.198.1 +726(479.25)

Doi:10.54503/0135-0536-2023.3-203

ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԵՎ ԵՌԱԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (XII–XVI դդ.)*

ԳԱՅԱՆԵ ՋՈՓՈՒՐՅԱՆ

Բանալի բառեր՝ վիմագրություն, գրաբար, միջին հայերեն, բարբառ, երկբարբառի պարզեցում, եռաբարբառի երկբարբառացում, պարզեցում, հնչյունական կապակցություն:

Նախաբան

XII–XVI դդ. հայերեն վիմական արձանագրությունները (այսուհետ՝ Արձանագրություններ) բազմաբնույթ տեղեկություններ են պարունակում ոչ միայն հայ ժողովրդի պատմության, այլև նրա լեզվամտածողության վերաբերյալ: Պայմանավորված վիմագրության վայրով և բնույթով («Ա. հիշատակագրային, Բ. շինարարական, Գ. նվիրատվական, Դ. իրավականոնական, Ե. կրոնաբարոյախոսական, Զ. խառն»)[1]՝ Արձանագրություններում, որոնք, փորագրված են «դասական գրաբարով, միջին հայերենով, բարբառախառն գրաբարով և տեղական բարբառներով կամ խոսվածքներով»[2], առկա են նաև լեզվական այնպիսի իրողություններ, որոնք արժեքավոր են հայոց լեզվի պատմության առումով:

Հաշվի առնելով գրական հայերենի զարգացման միջին շրջանի ժամանակահատվածը՝ լեզվական նյութը քաղել ենք XII–XVI դդ. Արձանագրություններից, որոնք տեղ են գտել «Դիվան հայ վիմագրության» մատենաշարում[3]: Դրանցում առկա են գաղութահայ շրջանների հայերեն վիմագրությունների հնչյունական որոշ իրողություններ նույնպես: Մասնավորապես անդրադարձել ենք գրաբարի՝ Արձանագրություններում հիշատակված երկբարբառների և եռաբարբառների կրած հնչյունական փոփոխություններին:

** Ներկայացվել է 09. VI. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, բ. գ. դ., պրոֆ. Գ. Խաչատրյանը (03. VII. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] Գրիգորյան. 2000, 67:

[2] Գրիգորյան. 2000, 53:

[3] Դիվան հայ վիմագրության (այսուհետ՝ ԴՀՎ), պր. I, 1965, 140, պր. II, 1960, 242, պր. III, 1967, 430, պր. IV, 1973, 528, պր. V, 1982, 348, պր. VI, 1977, 322, պր. VII, 1996, 410, պր. VIII, 1999, 316, պր. IX, 2012, 612, պր. X, 2017, 212: Այսուհետ ԴՀՎ-ից հղումները կտրվեն մեջբերումներին կից՝ նշելով պրակը, արձանագրության ժամանակը և էջը:

Արձանագրությունների հնչյունաբանության քննության համառոտ պատմություն

Արձանագրությունների հնչյունաբանության ծավալուն ուսումնասիրություն կատարել է Ս. Ավագյանը[4]*, սակայն նա քննության է առել միայն X–XIV դդ. վիմագրությունների լեզվական նյութը, որը տեղ է գտել ԴՀՎ մատենաշարի առաջին երեք պրակներում և հավաքչական գործունեություն իրականացրած որոշ բանասերների վերծանած անտիպ արձանագրություններում: Արձանագրությունների հնչյունական փոփոխությունների որոշ վկայություններ քննության են առել նաև լեզվաբաններ Ս. Ղազարյանը*[5] *և Հ. Մուրադյանը*[6]*, սակայն նրանք մասամբ են վերհանել վիմագրություններում գոյություն ունեցող հնչյունական իրողությունների առանձնահատկությունները:*

Առկա են նաև առանձին փոքրածավալ քննություններ[7]*, որոնցում միջինհայերենյան հնչյունական իրողությունների ուսումնասիրությունը թեև սահմանափակվում է կոնկրետ տարածաշրջանով կամ ընդգրկման ժամանակահատվածով, սակայն նպաստում է քննվող հարցի համալիր ուսումնասիրմանը:*

Գրաբարի՝ XII–XVI դդ. արձանագրություններում հիշատակված երկբարբառների և եռաբարբառների հնչյունական փոփոխությունների ուսումնասիրությամբ փորձ է արվել տալ դրանց ամբողջական պատկերը միջինհայերենյան հնչյունափոխական համակարգում, մասնավորապես՝ վեր հանել հնչյունափոխական այնպիսի դրսևորումներ, որոնք նախկինում կա՛մ դիտարկված չեն եղել, կա՛մ էլ դիտարկված լինելով հանդերձ՝ այսօր կարոտ են նոր մեկնաբանությունների:

Բանն այն է, որ ուսումնասիրվող լեզվական փաստերի՝

1. մի մասի (X–XVI դդ. արձանագրություններ) քննությունը դուրս է եղել Ս. Ավագյանի հետազոտության նպատակներից, քանի որ նա, ինչպես նշեցինք, ուսումնասիրում էր X–XIV դդ. արձանագրությունների լեզվական նյութը,

2. մի մասին՝ պայմանավորված հիշյալ մատենաշարի մյուս պրակների ավելի ուշ լույսընծայման հանգամանքով, նա առհասարակ ծանոթ չի եղել, ուստի և չէր կարող դրանց անդրադառնալ,

3. մի մասն էլ կա՛մ ինչ-ինչ պատճառներով դուրս է մնացել հետազոտողի տեսադաշտից, կա՛մ պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել:

Նշենք, որ Ս. Ավագյանն իր աշխատության մեջ քննության է առել միայն Արձանագրություններում հիշատակված այ (այ>Ø, այ>ա, այ>ե, այ>է), աւ (աւ> Ø, աւ>օ, աւ>ու), եա [եա>ե(է), եա>ա], իւ (իւ>ի, իւ>ու, իւ>ոյ), ոյ (ոյ>ու, ոյ>ո,

---

[4] Ավագյան. 1973, 151–275:

[5] Ղազարյան. 1960, 227–251:

[6] Մուրադյան. 1972, 89–109, Մուրադյան. 1982, 130–204:

[7] Ղափադարյան. 1948, 124, Ղափադարյան. 1957, 209, Խաչատրյան. 2020, 149–163, Չոփուրյան. 2020, 45–56:

ոյ>ի) երկբարբառների և եայ [եայ>է (ե)], եաւ (եաւ>եվ, էվ) եռաբարբառների հնչյունափոխությանը: Վերջիններիս անդրադարձել ենք նաև մենք՝ տեսական նյութը հիմնավորելով նոր լեզվական փաստերով, որոնք հետևանք են ժողովրդախոսակցական տարրերի ներթափանցման կամ այլ լեզուների փոխազդեցության: Քննել ենք նաև ցայսօր չուսումնասիրված իա երկբարբառի և եաւ եռաբարբառի հնչյունափոխական նոր արտահայտություններ:

XII-XVI դդ. Արձանագրություններում առկա են երկբարբառների սղման, պարզեցման, այլ երկհնչյունի վերածման և եռաբարբառների՝ երկբարբառացման, այլ հնչյունի վերածման դեպքեր, որոնց կանդրադառնանք ստորև:

Երկբարբառների հնչյունափոխությունը XII–XVI դդ. Արձանագրություններում

XII–XVI դդ. Արձանագրություններում հնչյունափոխության են ենթարկվել գրաբարյան այ, աւ, եա, իա, իւ, ոյ երկբարբառները:

Այ երկբարբառի հնչյունափոխություն

Արձանագրություններում այ երկբարբառը սղվում կամ վերածվում է պարզ ձայնավորի:

Այ երկբարբառի սղում

Այ երկբարբառը բառավերջում չի նշութավորվում. այն սեռական-տրական հոլովաձևում, չեշտակրույս լինելով, սղվում է՝ «Այս է հանգիստ Ներսէս փիլիսոփի» (պր. IX, XV դ., 101):

Այ>ա հնչյունափոխություն

Այն «հատուկ է ոչ թե բովանդակ միջին հայերենին կամ նրա հիմքում ընկած բոլոր բարբառներին, … այլ միայն Կիլիկիայի միջին հայերենին, որ ժառանգել էր իր հիմքում ընկած Կիլիկիայի և սրան հարող Կ ճյուղի արևմտահայ այլ բարբառներից»[8]: Ասվածից հետևում է, որ Արևելյան Հայաստանի Արձանագրություններում սակավ օրինակներում արձանագրված այ>ա պարզեցումը չի դիտարկվում օրինաչափություն. դրանք բնորոշ չեն արևելահայ բարբառներին և «կարող էին ներթափանցել Կ ճյուղի արևմտահայ բարբառներից կամ միջին գրական հայերենից»[9]:

Բառասկզբում այ>ա փոփոխության են ենթարկվել Այգատակ տեղանունն ու այս դերանունը: Դրանցից առաջինն[10] Ագաղակ[11] ձևով փորագրվել է Մարց գյուղի մոտակայքում՝ Իգատակի հանգստարանում հայտնաբերված 1236 թ. խաչքարի արձանագրության մեջ. «Ես՝ Գրիգոր, որդի Մարծպանա, թողի զԱգաղակս ձորոյս զաբգանն իմ հաւրն հոգոյն՝ ազգէ յազգ» (պր. IX, 414–415): Երկրորդը վկայված է Վայոց ձորի տարածաշրջանում՝ աս ձևով[12], ինչպես՝ «Աս է հանգիստ Սոճահին» (պր. III, 112):

---

[8] Ջահուկյան. 1956, 83:

[9] Ավագյան. 1973, 171:

[10] Տեղանվան առաջին բաղադրիչը Լ. Պետրոսյանը նույնացնում է էգ բառին՝ այն դիտարկելով որպես Մայր դիցուհու մակդիր (Պետրոսյան. 2001, 98), սակայն Հ. Մարտիրոսյանը ներկայացնում է այգի բառից ածանցվող հիմնավոր ստուգաբանությամբ (Մարտիրոսյան. 2021, 85–87):

[11] Հիշատակված է նաև Բարձրաքաշ վանքի նվիրագրում (պր. IX, 373):

[12] Ավագյանը նշում է աս բառաձևի հնչյունափոխության այլ վկայություններ ևս (Ավագյան. 1973, 162):

Բառամիջում այ>ա պարզեցում նկատվում է հատկապես ր ձայնորդից առաջ, ինչպես՝ «Քարս բերաւ որ է եղբարասաց պարոն» (պր. V, 1557, 91): «Ես Հարիկ Քաֆայեցի, տր Բաբայի որդի ...» (պր. VII, 1577, 154): Վերջինս մեզ հանդիպած Հարիկ (Հայրիկ) անձնանվան միակ կիրառությունն է:

Այ>է/ե հնչյունափոխություն

Գ. Ջահուկյանը նշում է, որ այ>է/ե հնչյունափոխությունը բնորոշ է հատկապես Արարատյան կամ արևելահայ բարբառներին (գայլ>գէլ, կյէլ, այծ>էծ)[13]*: Ասվածի օգտին են խոսում նաև վիմագրություններում արձանագրված տվյալները:*

Այ *երկբարբառը բառասկզբում հնչյունափոխվել է նաև է պարզ ձայնավորի այգի բառում, որը հաճախադեպ է հատկապես Լոռու տարածաշրջանի Արձանագրութուններում, ինչպես՝ «Ես տէր Յովհաննես Զաքանչատափի գիւր էգին այլ ի ՍԲ Սիոնս տվաք» (պր. IX, XIII դ., 238), «Մեծ յուսով ես՝ Վարդան քահանա, գնեցի զԱտոմի էգին» (պր. IX, 1275, 93):*

Բառամիջում այ *երկբարբառի* է *հնչում նկատվում է եղբայր բառում, որը տառադարձվում է* է *կամ* ե *գրով, ինչպես՝ «ՏՆ Խաչինոյ, եղբէրն*[14] *արքէին Հասանայ ...» (պր. V, 1216, 83), «Ես Անտոն Դսեղեցի և իմ եղբերս Սարգիս...» (պր. VI, 34): Վերջինս «բոլոր տեղագրողները վերծանել են եղբարս, որով անտեսվել է եղբայր բառի մեջ* այ *երբեմնի երկբարբառի պարզումը* է *(*ե*) ձայնավորի, որ հաճախ է վիմագրերում և անշուշտ գալիս է տեղական խոսվածքներից»*[15]*:*

Աւ երկբարբառի հնչյունափոխություն

Արձանագրություններում աւ *երկբարբառը հանդիպում է և՛ հնչյունափոխված, և՛ չհնչյունափոխված տարբերակներով. առաջին դեպքում տեղի է ունենում՝* աւ*-ի պարզեցում* օ *կամ* ու *շրթնային ձայնավորների*[16]*, իսկ երկրորդում* աւ*-ը մնում է անփոփոխ:*

Աւ>օ հնչյունափոխություն

«Երկբարբառների մեջ ամենաընդհանրական փոփոխությունը, որ կատարվել է ամբողջ հայերենում և գնացել է մի միասնական օրինաչափությամբ, դա աւ *երկբարբառի* օ *պարզ ձայնավորի փոխվելն է: Այդ հնչյունափոխության*

---

[13] *Ջ ա հ ու կ յ ա ն. 1956, 83:*

[14] *Ավագյանը նշում է* եղբեր *բառաձևի հնչյունափոխության այլ վկայություններ ևս (Ա վ ա գ յ ա ն. 1973, 176):*

[15] *ԴՀՎ. պր. IV, 34:*

[16] Աւ*-ը հնչյունափոխության է ենթարկվել նաև* -աւոր *վերջածանց ունեցող կազմություններում, սակայն դրանցում չունի երկբարբառային արժեք: Ս. Ավագյանը բերում է մի քանի օրինակ, որոնք բոլորը* Թադաւոր *բառի՝* Թադոր *հնչյունափոխված ձևի արտահայտություններ են, ինչպես՝ «*Թադոր *Ջալալայ Դովլին հրամանավ ...» (Մեծարանց ԺԳ ՍԲ) (Ավագյան. 1973, 190):* Թադաւոր *բառը այլ կազմություններում գործածվել է միայն* ա *ձայնավորի անկմամբ՝* Թադւոր*, որից կարող ենք ենթադրել նաև, որ* Թադոր *բառում նախ* ա*-ն է ընկել, այնուհետև՝* ւ*-ը, այսինքն՝* աւոր*-*ւոր*-*որ *ընթացքով:* Թադոր *բառից բացի՝* աւ*-ը ընկել է նաև* Թադաւոր *բառի՝* -իկ *նվազափաղաքշական ածանցով կազմված* Թադորիկ *նորահայտ արական և* Շնորհաւոր *իգական անունների մեջ՝ «ՍԲ խաչս ողորմի* Թադորկան*» (պր. IX, XIII դ., 442) «... իմ* Շնորհոր *տիկին ...» (պր. IX, 1286, 311):*

գիտակցությունը այնքան միանական, ամբողջական ու հարազատ է, որ նույնիսկ գրաբարի համար մոռացվել է աւ-ի երկբարբառային արժեքը»[17]*:*

Միջինհայերենյան Արձանագրություններում ոչ միայն վերոնշյալ օրինաչափությունն է գործել՝ աւ>օ պարզեցմամբ, այլև Ուկրաինայի, Արցախի և Լոռու (ավելի ուշ՝ նաև Ռուսաստանի) տարածաշրջանների՝ XV–XVI դդ. որոշ արձանագրություններում.

ա) մի դեպքում գործիականի աւ հոլովիչ-հոլովակերտ հնչյունակապակցությունն է գրվել օ՝ «Յիշէ ՍԲ խաչօս Պետրոս իրիծու կողակիցն Խաթունպակի, Մարամին, Գինեւարդին» (պր. VII, 31), որում Գ. Գրիգորյանը դիտում է «աւ երկբարբարբառի անհարկի կիրառություն կամ օ ձայնավորի հավելագրություն» (պր. VII, 31),

բ) մյուս դեպքում՝ որոշ բայերի անցյալ կատարյալի կրավորաձև խոնարհման եզակի 3-րդ դեմքի աւ վերջավորությունը, ընկալվելով իբրև երկբարբառ, կա՛մ բառամիջում է գրվել օ տառով, կա՛մ բառավերջում, ինչպես՝ «Այս է տապան Զապատ որդի Յովան ..չըէ եղբարսն զայն ստացօն թվ :ՌԶ: (1557)» (պր. V, 91), «ՍԲ Նշանքս աստուածընկալ և ՍԲ տաճարս շինեցօ յանուն Միքաելի Գաբրիելի …» (պր. VII, 1425, 34),

գ) երրորդ դեպքում՝ բառամիջում փորագրվել է օ, որում ենթադրվում է, որ ւ-ը կարող էր երկհնչյուն կազմել իրեն հաջորդող ձայնավորի հետ, ինչպես՝ «Այս գօաթս խիստ փորիկ մէջն լցած աղեկ գինի կա …» (պր. VIII, 115), «Սբ նշանս տէրունական պարոն Վասակին քօարան …» (պր. IX, 1579, 49), «… սպասօորք աստուած բանին … և զօակացն Խաչատրին» (պր. VII, 1408, 25):

Այսուհանդերձ, XII–XVI դդ. Արձանագրություններում վերոնշյալ օրինակներին զուգահեռ բազմաթիվ են աւ երկբարբառի դասական գրության ձևերը, որոնք հայկական գաղութներում ավելի հաճախադեպ են՝ մասնավորապես XV–XVII դդ.: Ասվածը վկայում է այն մասին, որ նշված ժամանակահատվածում գրաբարի նկատմամբ սկսել է դրսևորվել պահպանողական վերաբերմունք՝ «նայած գրչի դավանաբանական պատկանելության»[18]*: Օրինակ՝ «Բարէխաւս է սբ նշանքս …» (պր. VII, ՊՀԲ–1423, 62), «Սբ նշանքս բարեխաւս են (պր. VII, 1623, 64), «Բարեխաւս է սբ նշանս Խոճայ Թաւխտամիշին հոգոյն» (պր. VIII, 1670, 55):*

Եա երկբարբառի հնչյունափոխություն

Գրաբարի եա *երկբարբառը XII–XVI դդ. Արձանագրություններում հնչյունափոխվում է* ե *կամ* ա *ձայնավորի:*

Եա>ե հնչյունափոխություն

Արձանագրություններում նշված հնչյունափոխության դրսևորումները բավական հաճախադեպ են: Դրանց արտահայտությունները նկատվել են՝

ա) գրաբարի անցյալ դերբայի ձևերում՝ *«… կատարիչն աւրհնել լիցի» (պր. VI, 1207, 42), «… ես՝ մեղուցել ծառա Քի Նեքնեքս …» (պր. VI, XIII դ., 74),*

[17] *Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1982, 171:*

[18] *Մուրադյանը նշում է, որ «Հայ լուսավորչական եկեղեցու հոգևորականությունը սրբապղծություն է համարել սուրբ մեսրոպյան այբուբենում օ տառի, այն էլ լատինական տառի ընդունումը» (Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1982, 175–176):*

որոնցից առաջինը հանդես է եկել որպես կրկնաբաղադրյալ ժամանակաձևի բաղադրիչ, իսկ երկրորդը գործածվել էածականաբար:

Ս. Ավագյանը բերում է նշյալ հնչյունափոխության բազմաթիվ այլ վկայություններ և աղբյուրներ ևս, որոնցից, ինչպես ինքն է նշում, «ակներև է դառնում, որ … վիմական արձանագրություններում հին հայերենի հնչյունափոխված ձևերը ավելի հաճախ են հանդիպում, քան կանոնավոր եալ *հանգողները, որ ապացույց է, թե տվյալ շրջանում նրանցում* եա>ե *պատմական հնչյունափոխությունը ավարտվել և տիրապետող օրինաչափություն էր դարձել»[19]: Սակայն նկատել ենք, որ հետագա դարերի արձանագրություններում ևս շարունակում են կիրառվել* եալ*-ով ձևերը: Բերենք մի քանի վկայություն՝ XV-XVI դարերից՝ «… ով խափանէ գվերագրեալ՝ նզովսն առցեն» (պր. IX, 1215, 102), «… գրկեալ եղիցի եւ իմ մեղացս պարտական է առաջի ԱՅ» (պր. IX, 1249, 162),*

բ) -ութիւն *ածանցավոր բառերում՝ «… ի թագաւորութենն Գիաւրգէ (պր. VI, 1213, 138), «… չբաժանեցայ ի ծառութենէս»[20]: Հատկանշական է, որ Արձանագրություններում* -ութիւն *ածանց ունեցող բառերի սեռական-տրական հոլովաձևերն արտահայտվել են միայն* ե *ձայնավորով՝ առանց* ն *հնչյունի գրության կամ հակառակ դեպքում՝ առանց պատիվ նշանի: Նման բառաձևերը բավական հաճախադեպ են և գրեթե բոլոր դեպքերում վերականգնվել են վերծանողների կողմից: Բերենք մի քանի վկայություն՝ «… վա(սն) յերկաբակենդանութե(ան)[21] Աւագին» (պր. VI, 1213, 138), «… ես Ամիր Քուրդս առի գիր ազատութե(ան) ի թագաւորէ …» (պր. VI, XII–XIII դդ., 139),*

գ) ե *վերջնահնչյուն ունեցող բառերում՝ «Հասարակաց տունս խլած էր ու էգեց հողի չարիատ էր դրած» (Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, XIII դ., 101) «… եղբարց հարազատաց, որդեց մեծին Սարգսի» (պր. IX, 1205, 114), «… այս (մեր գիր է Թամրդեղիս) որդեցս» (պր. IX, XIII դ., 306): Նկատենք, որ* որդի *բառը գրաբարում ենթարկվել է թէ՛* ո *հոլովման և թէ՛* ո-ու[22]*, որով էլ բացատրվում է Արձանագրություններում՝ ոչ միայն* որդեց*, այլև* որդաց *ձևի առկայությունը:* Որդի *բառը Լոռու տարածաշրջանի Արձանագրություններում նշված հնչյունափոխությամբ վկայվել է դեռևս XI դարից և գործածվել մինչև XIX դարը: Բերենք գրաբարի և աշխարհաբարի շրջանների համապատասխան վկայություններ՝ «… սուրբ Սարգիս ի բարեխաւսութի(ւն) Քր(ի)գորոյ, իւր որդեցն արեւշատութե(ա)ն …» (պր. IX, 1021, 336), «… յազգէ ազգ, որդեցէ որդիք … եւ ծնողաց իմոց, եւ զաւակաց եւ եղբորորդեց» (պր. IX, ԺԹ[23], 490),*

դ) -ուստ *ածանցավոր բառերում՝ «… հոգոյն գալըստեն աւրն …» (պր. IX, 1275, 94):*

---

[19] *Ա վ ա գ յ ա ն. 1973, 211–212:*

[20] *Ղափադարյանը նշյալ ձևը համարում է «բարբառում մաշված բացառական և ոչ թէ փորագրողի սխալ» (Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. 1948, 101):*

[21] *Արձանագրություններում առկա բոլոր վերականգնումները ներկայացնում ենք փակագծերում՝ ( ):*

[22] *Տե՛ս Ա ւ գ ե ր ե ա ն, Ա ւ ե տ ի ք ե ա ն, Ս ի ւ ր մ է լ ե ա ն. 1836, 529:*

[23] *Կարապետյանը հավանական է համարում վիմագրի XIII–XIV դարերի թվագրումը (Կ ա ր ա պ ե տ յ ա ն. 2004, 442):*

Ի տարբերություն Հայկական լեռնաշխարհի՝ XII–XVI դդ. Արձանագրությունների, որոնցում եա*-ի՝ պարզ ձայնավորի վերածվելու գործընթացը կարելի էր ավարտված համարել՝ գաղութահայ տարածաշրջանների վիմագրություններում գործածական էին բայական կազմությունների* եա *երկբարբառի անհնչյունափոխ ձևերը ոչ միայն մեր ուսումնասիրած ժամանակահատվածում, այլև ավելի ուշ շրջանի վիմագրերում: Հմմտ. «Տաճարս շինեաց» (պր. VII, 1429, 63)* և *«... վերստին նորոգեաց մահտեսի Յակոբն» (պր. VII, 1643, 96):*

Եա>ա հնչյունափոխություն

Այս հնչյունափոխությունն «արտացոլող օրինակները շատ չեն, որ ապացուցում է, թե իրողությունը ներթափանցելով որևէ խոսվածքից, լայն տարածում չի ստացել և ընդհանրացել, սակայն եղած փաստերը չի կարելի պատահական վրիպում համարել»[24]*: Դրանք նկատվել են՝*

ա) ի *վերջնահնչյուն ունեցող* որդի *բառում՝ «... որդաց կաշառաւք ... » (պր. I, Զ–1251, էջ 15), «... մեռա ի պատերազմի որդացովս իմ Արղութովս և տր Սարգիսովս» (պր. IX, 1506, 48),*

բ) ե *խոնարհման* յիշել *բայի հրամայական ժամանակաձևում՝ «Յիշա ՍԲ Ա(ստուա)ծածինս և անարատ ...» (պր. VII, 1487, 40)*[25]*:*

Իա երկբարբառի հնչյունափոխություն

Իա *հնչյունակապակցությունը գրաբարում որպես երկբարբառ չի հիշատակվում: Հ. Մուրադյանը իրավացիորեն նշում է, որ այն «հետագայում է ձեռք բերել երկբարբառի արժեք»*[26]*:*

XII–XVI դդ. հայերեն վիմագրություններում իա *հնչյունակապակցության կրած փոփոխությունները փաստում են, որ այն վերածվել է պարզ ձայնավորի*[27]*, որը բնորոշ էր գրաբարի բոլոր երկբարբառներին: Ուստի կարծում ենք, որ այն վիմագրություններում ևս երկբարբառային արժեք է ունեցել:*

Իա>ե հնչյունափոխություն

Ուկրաինայի և Լոռու տարածաշրջանների Արձանագրություններում Մարիամ *անձնանունը վկայվել է* Մարեմ *ձևով՝ «... և ծնողաց Սատաթի(ն) Մարեմ Խ(ա)թու(նին)» (պր. VII, 1408, 25), «ՔՍ ԱԾ ողորմի Սարգսի եւ Մարեմայ» (պր. IX, 1271, 275), «Կամաւն Մարեմա արնեն (Սիրայդեղի հետ նվիրատու Հոռոմայրի վանքի, (պր. IX, 582)» (պր. IX, 1292, 313), որում ենթադրվում է «իա-ի միջանկյալ* եա *արտասանություն՝* եա>ե *փոփոխությամբ»*[28]*: Դրանցից ուղղական հոլովաձևի դեպքում առկա է պատմական հնչյունափոխություն, սեռականի դեպքում՝ դիրքային:*

Իա>ա հնչյունափոխություն

Մարիամ *իգանունը հանդիպում է նաև* իա>ա *հնչունափոխությամբ՝* Մարամ *ձևով, որը հետևանք է ոչ թե արձանագրողների սխալագրության, այլ*

---

[24] *Ա վ ա գ յ ա ն. 1973, 206:*

[25] *Ավագյանը բերում է մի շարք այլ օրիակներ ևս (Ա վ ա գ յ ա ն. 1973, 222–223):*

[26] *Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1982, 107:*

[27] Իա>էո *փոփոխություն (սա միաժամանակ հերթագայություն է) արձանագրվել է* Վարձիա *բառի սեռական հոլովաձևում (Վարձէո)՝ «... և նզովեսցին ի* Վարձէո *ԱԾածնէն» (պր. VI, 1184, 37):*

[28] *Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1982, 197:*

ժողովրդախոսակցական լեզվի արտահայտություն է՝ «Յիշէ ՍԲ խաչօս Պետրոս իրիծու կողակիցն Խաթունպակի, Մարամին, Գինեւարդին» (պր. VII, 31)։

Նկատենք, որ իա երկբարբառի հիշյալ փոփոխությունները Արձանագրություններում վկայվել է միևնույն անվան տարբեր ձևերում, ընդ որում՝ Մարամ-ը եզակի կիրառություն է, իսկ Մարեմ-ը՝ ոչ այնքան հաճախադեպ։ Վերջինս Լոռու տարածաշրջանի քննվող ժամանակահատվածի Արձանագրություններում վկայվել է մի քանի անգամ, իսկ Ուկրաինայի տարածաշրջանում՝ մեկ անգամ[29]։ Այդ իգանունը գտնում ենք նաև ավելի ուշ շրջանի Արձանագրություններում, ինչը խոսում է նրա հնչյունափոխված ձևի՝ մի քանի հարյուրամյակ շրջանառության մեջ լինելու մասին։

Իւ երկբարբառի հնչյունափոխություն

Արձանագրություններում իւ երկբարբառը կա՛մ պարզեցվել է, կա՛մ վերածվել այլ երկբարբառի։

Իւ>ի հնչյունափոխություն

Իւ-ը բաղաձայնին նախորդող դիրքում հնչյունափոխվում է ի պարզ ձայնավորի և՛ միավանկ և՛ բազմավանկ բառերում՝ «Ես Սոփի Սինեաց տիկին ...» (պր. III, 1191, 13), «... բարէխաւս «ՍԲ Նշանքս Գրիգորին և իր զաւակին» (պր. VII, 1527, 30)։

Իւ>ու հնչյունափոխություն

Ս. Ավագյանը նշում է, որ իւ>ու հնչյունափոխության առաջին վկայությունը հանդիպում է Լոռու տարածաշրջանի Կուրթան գյուղի խաչքարերից մեկի վրա՝ Կուրիկէի բառաձևում՝ 986 թվագրությամբ[30]։ Իւ>ու հնչյունափոխություն նկատվում է նաև Իջևանի տարածաշրջանի XIII դ. արձանագրություններից մեկում՝ «Յիշեցէք ի ՍԲ յաղաւթս ձեր և հոգեւոր եղբայրն ուր» (պր. VI, 1219, 60–61)։ Կուրիկէի և ուր բառաձևերում նկատելի է, որ հնչյունափոխությունը տեղի է ունեցել ր ձայնորդից առաջ։

Իւ>ոյ հնչյունափոխություն

Ս. Ղազարյանը այս հնչյունափոխության առաջացումը բացատրում է «ժողովրդական-խոսակցական լեզվի արտասանության ազդեցությամբ, որ տեղի է ունենում մի շարք գործածվող բառերում, հատկապես ր ձայնորդից առաջ, սակայն անորոշ է մնում ոյ հնչունակապակցության հնչումը այդ կարգի բառերում»[31]։ Արձանագրություններում վկայվել է Խաչգիւտ հատուկ և հիւրատուն հասարակ անուններում՝ «...հոյրատանն տվաք ...» (պր. VI, XIII դ., 69), «Եւ հաստատեցին ինձ զԽաչգոյտին տաւնն զամէն եկեղեցիքս մինչ ի կատարած աշխարհի ...» (պր. IX, 1217, 29)։ Կարծում ենք, որ նմանատիպ կառույցներում պատմական հնչյունափոխության ենթարկվելուց հետո տեղի է ունեցել նաև իւ>ոյ դրափոխություն, որը կատարվում է նաև մեր օրերում։

Ոյ երկբարբառի հնչյունափոխություն

Ոյ>ու հնչյունափոխություն։ «Միջին հայերենում ո և ու հոլովումների ոլորտները զգալի չափով համընկնում են։ Դա բացատրվում է նրանով, որ միջին հայերենի ու հոլովման ենթարկվող բառերի մեծ մասը կապվում է գրաբարյան ո հոլովման հետ»[32], որով էլ պայմանավորված է քննվող ժամանակա-

[29] ԴՀՎ. 2012, պր. IX, 214, 275, 310, 313, պր. VII, 1996, 25։
[30] Ա վ ա գ յ ա ն. 1973, 193։
[31] Ղ ա զ ա ր յ ա ն. 1960, 241։
[32] Մուրադյան. 1982, 145։

հատվածում ոյ>ու անցման տիրապետող հնչյունափոխություն դառնալը: Ս. Ավագյանը բերում է մի շարք օրինակներ (գլուս, ուրդու, իրիցանուս, ուզելու, Խորենացու[33]), որոնք փաստում են վերն ասվածը: Դրանց հավելում ենք ևս մեկը, որը, ի տարբերություն Ս. Ավագյանի բերած օրինակների, վկայում է, որ այդ նույն հնչյունափոխությունը կատարվել է նաև դերանվանական համակարգում: Այսպես՝ Արցախի տարածաշրջանի՝ մեր դիտարկած արձանագրություններից մեկում ոյ>ու հնչյունափոխության է ենթարկվել իմ ստացական դերանունը, այն դեպքում, երբ հոգի բառի նույն հոլովաձևում չի հնչյունափոխվել՝ «… հոգոյ իմու եւ զաւակաց իմոց» (պր. V, 1191, 87): Կարծում ենք՝ կատարվել է ոյ հնչյունակապակցության պարզեցում, որը ոյ երկբարբառի հետ անմիջական կապ չունի, ապա՝ առավել շրթնայնացում հետևյալ ընթացքով՝ իմ-իմոյ-իմո-իմու և հմմտ. մերոց-մերուց «… ծնուղաց մերուց …» (պր. V, 74):

Եռաբարբառների հնչյունափոխությունը XII–XVI դարերի Արձանագրություններում

Գրաբարի եռաբարբառները ոչ միայն միջին հայերենում, այլև քննվող ժամանակահատվածի Արձանագրություններում լայն տարածում չունեն և հիմնականում հնչյունափոխվել են պարզ ձայնավորի, որոշ դեպքերում՝ երկհնչյունի: Սակայն վիմագրություններում դրանք սակավ են հիշատակվել, ուստի և հնարավորություն չեն ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու գրաբարի եռաբարբառների կրած փոփոխությունների հետագա ընթացքի վերաբերյալ: Վիմական արձանագրություններից քաղված նյութից, ինչպես Ս. Ավագյանն է նշում, «կարելի է որոշ չափով դատել միայն եայ եռաբարբառի արտասանության մեջ առաջացած տեղաշարժերի մասին, ըստ այդմ, եայ-ը մեծ մասամբ հնչյունափոխվում է ե պարզ ձայնավորի, իսկ նույն դիրքում բաղաձայնից առաջ՝ է-ի»[34]: Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ Արձանագրություններում եայ եռաբարբառը և՛ բառավերջում է է-ի հնչյունափոխվել, և՛ բառամիջի փակ վանկում: Ուստի, կարծում ենք, որ եայ եռաբարբառի՝ է-ի կամ ե-ի հնչյունափոխվելը կարող է պայմանավորված լինել արձանագրողների է և ե տառերի գրության ոչ հստակ տարբերակմամբ կամ տվյալ ժամանակահատվածում է և ե ձայնավորների նույնացմամբ:

Եայ եռաբարբառի հնչյունափոխություն

Եայ>է/ե հնչյունափոխություն: Ս. Ավագյանը իրավացիորեն գտնում է, որ այս հնչյունափոխությունը Արձանագրություններում հանդիպում է «ի հանգող բառերի»[35] և ժամանակ ցույց տվող մի շարք բառերի սեռական-տրական հոլովաձևի կազմության դեպքում՝ «… կանգնեցի զխաչս ի բարեխաւսութի(ւն) որդոց իմոց Յունանա եւ Մխիթարա, զի կիսաւրե վաղջանեցան» (պր. IX, 483), «Յայտնութե(ան) :Ը: (8) աւրէքին :Դ: (4) աւրն զամեն եկեղեցիքս պատարագն մեզ առնեն անխափան» (պր. IX, 1329, 312), «… եւ հաստատեցին մեզ Ժ (10) յինանցն Յովաննու տաւնին, Բ (2) Շնահաւորին, Բ (2) Րուսուղանա, Բ (2) Թագուհէ, Բ (2) Վարդուտին, Ա (1) Սարգսի, Ա (1) Դաւթի» (պր. IX, 1253, 153):

---

[33] Ա վ ա գ յ ա ն. 1973, 180–181:

[34] Ա վ ա գ յ ա ն. 1973, 229–230:

[35] Ի հանգող ասում ենք Ավագյանի հետևությամբ:

Նկատենք, որ բերված օրինակներում հնչյունափոխության է ենթարկվել եայ *ածանցը, մինչդեռ* Թագուհի *բառում առկա է* ի (ի>է) + ա *հոլովիչ* + յ *հոլովակերտ կազմությունը:*

Եաւ-էաւ եռաբարբառի հնչյունափոխություն

Ինչպես նշում են Ս. Ավագյանն ու Հ. Մուրադյանը[36]*,* եաւ *եռաբարբառը բառասկզբի դիրքում սովորաբար չի հանդիպում, սակայն քննվող ժամանակահատվածի վիմագրություններում* եաւ*-ը հանդիպել է բառասկզբում՝ գրության պահպանմամբ և հնչյունափոխված:*

ա) Եաւ>եօ հնչյունափոխություն: Եաւ *եռաբարբառը Կաֆայի տարածաշրջանի Արձանագրությունների՝ Թուրքերեն* yol *(ճանապարհ) /* Եօլ[37] *արմատից բաղադրված անձնանունների բառասկզբի դիրքում մի դեպքում վկայվել է դասական ուղղագրությամբ՝ «Յիշատակ է սբ խաչս Մխիթարին եւ Եաւլիկին» (պր. VII, 1540, 32), «Սբ նշանքս բարեխաւս են Աւրտապէկ Նահատակին, եւ որդոցն Սուինչ պէկին, Եաւլպէկին…» (պր. VII, 145, 44), մյուս դեպքում՝* եօ *տառադարձմամբ՝ «… եղբաւրն Եօլպէկին» (պր. VII, 1556, 27): Նշված արմատը գործածվել է նաև բառամիջում՝ «Բարէխաւս է սբ նշանքս Թորոսին եւ կողակցին Իեօլ Մելիքին» (պր. VII, 1423, 62), որի* ի *ձայնավորը, կարծում ենք, բառասկզբի* ե*-ի «իե» երկհնչյունային արժեքն է: Այն ավելի հստակ երևում է* Եզեկիէլ *անձնանվան մեջ, որը դեռևս VI դարում «հայերենը տառադարձել է* Ιεζεκιήλ *ձևից: Այդտեղ, ինչպես կարելի է նկատել, հայերենի* ե*-ն դրված է հունարեն* ιε *երկհնչյունի դիմաց, որը նշանակում է, թե մեր* ե*-ն ուներ երկհնչյունային արժեք»*[38]*:*

Եաւ *եռաբարբառի այս փոփոխությունները հետևանք են պատմական հնչյունափոխության և ապացույց այն բանի, որ* եաւ*-ը ոչ միայն գրաբարյան գործիական հոլովի կազմություններում է պատմականորեն հնչյունափոխվում, այլև նշյալ արմատի բառասկզբի և բառամիջի դիրքերում,*

բ) Եաւ-էաւ>ա հնչյունափոխություն: Եաւ-էաւ *եռաբարբառը բառամիջում հանդիպում է* Գաւրգէ *անձնանվան մեջ, որը հիշատակված է Լոռու տարածաշրջանի Սանահինի Արձանագրություններից մեկում, սակայն թյուրիմացաբար վերծանվել է* Գաիրգէ*: Բնագրի ուշադիր գննությունը ցույց է տալիս, որ չվերծանված տարբերակի այդ փակագրում (1-ին շարքի երրորդ բառ) փորագրվել է ոչ թե* ի *այլ* ւ*: Ահա արձանագրության չվերծանված տարբերակը.*

24. ԳԱՎԻԹ. հյուսիսային մուտքի գլխին, դրսից, 6 տող.



(պր. IX, 1191, 37)

Բացի այդ՝ նույն տարածաշրջանի որոշ Արձանագրություններում կան վերջինիս Գաւրգի *ձևով կիրառություններ նույնպես՝ «Ես Գաւրգի …» (պր. IX, 1217, 55) և այլն: Մեկ այլ Արձանագրության մեջ անձնանունը փորագրվել է*

---

[36] *Ա վ ա գ յ ա ն. 1973, 231, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1982, 108:*
[37] *Ա ճ ա ռ յ ա ն. 1942, 158:*
[38] *Մ ո ւ ր ա դ յ ա ն. 1982, 104:*

Գէաւրգիեա *անհնչյունափոխ ձևով՝ «… ի Թագաւորութեան Գէաւրգիեա, և յառաջնորդութեան ՍԲ վարդապետին Խաչատրո» (պր. VI, 1189, 34):*

գ) եաւ-էաւ>ե հնչյունափոխություն: եաւ-էաւ *եռաբարբառը՝* եա *երկբարբառի նման Արձանագրություններում հնչյունափոխվում է* ա *կամ* ե *ձայնավորի, որոնցից՝* ե-ի *հնչյունափոխության դեպքում կարելի է ենթադրել, որ* եաւ *եռաբարբառի* եա-ն *է փոխվել* ե-ի, *իսկ* ւ-ը *ընկել է՝ «Յուսովն ԱՅ միաբանեցաւ Գերգ սբ նշանիս» (պր. IX, 150), «Միաբանքս հաստատեցաք ի տարոջն զսբ Գերգին …» (պր. IX, 1211, 62):*

դ) եաւ-էաւ>ո հնչյունափոխություն: եաւ-էաւ *եռաբարբառը Արձանագրություններում պարզեցվել է* ո *ձայնավորի* եաւ-էաւ>եո-էո>ո *ընթացքով՝ «… յիշատակի աւրն յիմ սեղանն ի մեր յանուն լինի ՍԲ Գորգն աւրն յիմ …» (պր. IX, 1229, 61), «ԱԾ աւգնէ պարոն Գորգէ…» (պր. IX, XIII դ., 333):*

Եզրակացություն

Դիտարկելով XII–XVI դդ. Արձանագրությունների երկբարբառների և եռաբարբառների կրած փոփոխությունները՝ նկատելի են հնչյունափոխության մի շարք դեպքեր, որոնց մի մասը լայն տարածում է գտել և բնորոշ է գրեթե բոլոր բարբառներին ու խոսվածքներին, իսկ մյուս մասը սահմանափակվում է ոչ միայն ժամանակագրորեն, այլև հնչյունափոխության դրսևորումներով ու գործածությամբ: Այդ փոփոխությունները լեզվական որոշ իրողությունների առաջին անգամ գործածական լինելու կամ հնի՝ նորովի դիտարկումներ կատարելու առումներով, նորություն են միջին հայերենի համար:

Հատկանշական է, որ XII–XVI դդ. որոշ Արձանագրություններում օ *տառով տառադարձվել է ոչ միայն* աւ *երկբարբառը, այլև բառամիջի և բառավերջի* աւ *հնչյունակապակցությունն է գիտակցվել երկբարբառ և թյուրիմացաբար ենթարկվել երկբարբառին բնորոշ փոփոխության:*

Իա *հնչյունակապակցության փոփոխությունները փաստում են, որ այն պետք է ընդգրկել երկբարբառների շարքում, քանի որ արձանագրություններում վերածվել է պարզ ձայնավորի, որը բնորոշ էր գրաբարի բոլոր երկբարբառներին:*

Քննվող ժամանակահատվածի Արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ գրաբարի եռաբարբառների գործածության հաճախականությունը նվազում է, սակայն կան վկայություններ, որոնք ոչ միայն վիմագրությունների, այլև միջինհայերենյան գրականության մեջ եզակի արտահայտություններ են: Հատկապես նշանակալից է եաւ *եռաբարբառի պատմական հնչյունափոխությունը (*եաւ>եօ*)՝ բառասկզբում և երկբարբառի վերածումը բառամիջում, որոնցով փաստվում է, որ* եաւ-ը *ոչ միայն բառավերջում է գիտակցվել որպես եռաբարբառ, այլև նշյալ դիրքերում: Արձանագրություններում այն վերածվել է նաև պարզ ձայնավորների:*

Գայանե Չոփուրյան – «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասպիրանտ, ընդհանուր բաժնի մասնագետ: Գիտական հետաքրքրությունները՝ վիմագրություն, հայոց լեզվի պատմություն, գրաբար, միջին հայերեն: Հեղինակ է 6 հոդվածի: gayanechopuryan17@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հ. 1942, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 659 էջ:

Աճառյան Հ. 1944, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 682 էջ:

Աճառյան Հ. 1946, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 741 էջ:

Անթոսյան Ս., Մուրադյան Հ. 1972, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 496 էջ:

Ավագյան Ս. 1973, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 400 էջ:

Աւգերեան Հ., Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ. 1836, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1038 էջ:

Գրիգորյան Գ. 2000, Հայկական վիմագրություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 208 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1965, պր. I, Անի քաղաք (կազմ.՝ Հ. Ա. Օրբելի, խմբ.՝ Բ. Առաքելյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 140 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1960, պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ (գլխ. խմբ.՝ Հ. Օրբելի, խմբ.՝ Բ. Առաքելյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 242 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1967, պր. III, Վայոց Ձոր, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ (կազմ.՝ Բարխուդարյան Ս.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 430 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1973, պր. IV, Գեղարքունիք (կազմ.՝ Բարխուդարյան Ս.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 528 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1982, պր. V, Արցախ (կազմ.՝ Բարխուդարյան Ս.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ:՝

Դիվան հայ վիմագրության. 1977, պր. VI, Իջևանի շրջան (կազմ.՝ Ավագյան Ս., Ջանփոլադյան Հ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 322 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1996, պր. VII, Ուկրաինա, Մոլդովա (կազմ.՝ Գրիգորյան Գ.), Երևան, «Գիտություն» հրատ., 410 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1999, պր. VIII, Ռուսաստանի Դաշնություն (կազմ.՝ Գրիգորյան Գ.), Երևան, «Գիտություն» հրատ., 316 էջ:

Դիվան հայ վիմագրության. 2012, պր. IX, Լոռու մարզ (կազմ.՝ Բարխուդարյան Ս., Ղաֆադարյան Կ., Սաղումյան Ս.), Երևան, «Գիտություն» հրատ., 612 էջ:

Դիվան հայ վիմագրության. 2017, պր. X, Շիրակի մարզ (պրակը հրատարակության պատրաստեցին՝ Սարգսյան Գ., Հարությունյան Ա., Ասատրյան Կ.), Երևան, «Գիտություն» հրատ., 212 էջ:

Խաչատրյան Գ. 2020, Անձնանունները Կամենիցի հայկական դատարանի արձանագրություններում (XVI).– ՊԲՀ, № 1, էջ 149–163:

Հովսեփյան Լ. 1997, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 103 էջ:

Ղազարյան Ս. 1960, Միջին հայերեն, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 301 էջ:

Ղաֆադարյան Կ. 1948, Հովհաննավանքը և նրա արձանագրութունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 121 էջ:

Ղաֆադարյան Կ. 1957, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 209:

Մարտիրոսյան Հ. 2021, Բառաքննական դիտարկումներ վիմագրական և բարբառային տվյալների լույսի տակ.– Армянский гуманитарный вестник 7, Երևան, «Աստղիկ» հրատ., էջ 80–94:

Մուրադյան Հ., Անթոսյան Ս. 1972, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 496 էջ:

Մուրադյան Հ. 1982, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Երևան, ԳԱԱ հրատ., 347 էջ:

Պետրոսյան Լ. 2001, Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարյան Անիում. – «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, «Գիտություն» հրատ., էջ 97–101:

Չոփուրյան Գ. 2020, Անցյալ կատարյալի արտահայտությունը միջինհայերենյան արձանագրություններում.– Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պր. Ա, Վանաձոր, ՎՊՀ հրատ., էջ 45–56:

Ջահուկյան Գ. 1956, Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը.– «Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի», Երևան, ԵՊՀ հրատ., 53 էջ:

ОТОБРАЖЕНИЕ ФОНЕТИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ ДИФТОНГОВ И ТРИФТОНГОВ В АРМЯНСКИХ ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ (XII–XVI вв.)

ГАЯНЕ ЧОПУРЯН

Резюме

Ключевые слова: эпиграфика, древнеармянский язык, среднеармянский язык, диалект, упрощение дифтонга, дифтонгизация трифтонга, упрощение, фонетическая связь.

Исследование трансформаций, которым подверглись дифтонги и трифтонги в эпиграфических надписях XII–XVI вв., позволяет сделать вывод, что некоторые случаи фонетических изменений широко распространены и характерны почти для всех диалектов и говоров, а другая часть ограничена не только хронологически, но и с точки зрения проявления и функционирования фонетических изменений. Эти изменения, с точки зрения первичного использования некоторых языковых реалий или новых интерпретаций существующих явлений, являются новациями для среднеармянского языка.

Примечательно, что в некоторых эпиграфических надписях XII–XVI вв. буквой *о* транслитерировался не только дифтонг *[au]*, но и звуковое сочетание *[au(w)]* в середине или на конце слова, которое воспринималось как дифтонг и ошибочно подвергалось изменению, характерному для дифтонгов.

Изменения звукового сочетания *[ia]* свидетельствуют о том, что его следует отнести к ряду дифтонгов, поскольку в надписях оно превращалось в простые монофтонги, что было характерно для всех дифтонгов древнеармянского языка.

При изучении надписей рассматриваемого периода выясняется, что частота употребления трифтонгов древнеармянского языка снижается, но есть тексты, являющиеся уникальными не только в эпиграфике, но и для среднеармянской литературы в целом. Особенно показательно в этом плане историческое фонетическое изменение трифтонга *[eau] ([eau>eo])*: в начале и в середине слова он превращался в дифтонг, что свидетельствует о том, что [*eau*] воспринимался как трифтонг не только на конце слова, но и во всех остальных позициях. В надписях он также трансформировался в простые монофтонги.

Гаяне Чопурян – аспирант кафедры армянского языка и литературы, специалист общего отдела фонда «Ванадзорский государственный университет имени О. Туманяна». Научные интересы: эпиграфика, история армянского языка, древнеармянский и среднеармянский язык. Автор 6 статей.gayanechopuryan17@mail.ru

PHONETIC CHANGES OF DIPHTHONGS AND TRIPHTHONGS IN THE ARMENIAN EPIGRAPHIC INSCRIPTIONS (12–16TH CENTURIES)

GAYANE CHOPURYAN

Summary

Keywords: epigraphy, Old Armenian, Middle Armenian, dialect, simplification of a diphthong, triphthongs diphthongization, simplification, phonetic combination.

The study of the transformations that diphthongs and triphthongs underwent in epigraphic inscriptions of the 12–16th centuries allows us to conclude that some cases of phonetic changes are widespread and characteristic of almost all the dialects and accents whereas the other part is limited not only chronologically, but also in terms of manifestation and functioning of phonetic changes. These changes from the point of view of the primary usage of some linguistic realities or new interpretation of existing phenomena are novation for the Middle Armenian language.

It is remarkable that in some epigraphic inscriptions of the 12–16th centuries not only the diphthong *[au]* was transliterated with the letter «o», but also the sound combination *[au(w)]* in the middle or at the end of a word

which was perceived as a diphthong and was wrongly subjected to changes characteristic of diphthongs.

The changes in the sound combination [ia] prove that it should be classified as a diphthong, since in the inscriptions it turned into simple monophthongs which was characteristic of all the diphthongs of the Old Armenian.

When studying the inscriptions of the period under review, it turns out that the frequency of the usage of triphthongs of the Old Armenian is decreasing, but there are texts that are unique not only in epigraphy but also in the Middle Armenian literature in general. The historical phonetic change of the triphthong [*eau*] ([*eau>eo*]) is especially notable; at the beginning and in the middle of the word it turned into a diphthong which proves that [*eau*] was accepted as a triphthong not only at the end of the word but also in all other positions. It was also transformed into simple monophthongs in the inscriptions.

Gayane Chopuryan – PhD Student at the Department of Armenian Language and Literature, Specialist at the General Department of «Vanadzor State University after H. Tumanyan» Foundation. Interests: lithography, history of Armenian language, Grabar (Old Armenian), Middle Armenian. Author of 6 articles. gayanechopuryan17@mail.ru

ՀՏԴ 891.981 + 39 +78

Doi:10.54503/0135-0536-2023.3-218

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿԵՐՊԱՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

ՏԱԹԵՎԻԿ ՇԱԽԿՈՒԼՅԱՆ

Բանալի բառեր՝ «Սասնա ծռեր», էպոսի երգեր, Դավթի երգեր, օպերային դրամատուրգիա, մեղեդիական գծագիր:

Նախաբան

«Սասնա ծռերը» երաժշտական բաղադրիչով պահպանված քիչ թվով էպոսներից է՝ համաշխարհային ընդգրկումով: Երգվող էպոսներից միջազգային գիտական ասպարեզում հիմնականում շրջանառվում են տեղեկությունները ֆիննականի, սերբական-խորվաթականի, ալբանականի վերաբերյալ[1], սակայն, հայկական էպոսի երգերը միջազգային շրջանակներում գրեթե չեն քննարկվում[2], այնինչ կարող ենք համարձակորեն փաստել, որ թե՛ գեղարվեստական, թե՛ կառուցվածքային ցուցիչներով մեր էպոսի երաժշտությունը դրսևորվում է որպես ամենաինքնատիպը:

«Սասնա ծռեր» էպոսի երգերը

«Սասնա ծռեր» էպոսի երգերի առաջին պահպանված գրառումներն առնչվում են 1900-ականների սկզբին և պատկանում են Կոմիտաս Վարդապետին[3]: Նրա առաջին գրառումները, Ռ. Աթայանի եզրակացությամբ, վերաբերում են 1892-ին, սակայն դրանք չեն պահպանվել[4]: Կոմիտասը երգերը գրառել է բանասացներ Նախո Աբրահամյանից, Զատիկ Խապոյանցից և Տիգրան Չիթունուց[5]: Կոմիտասից հետո էպոսի երգեր են գրառել նրա աշակերտներ Սպիրիդոն Մելիքյանը[6] և Միհրան Թումաճանը[7], այնուհետև՝ Արամ Քոչարյանը[8],

---

* *Ներկայացվել է 05. VII. 2023 թ., գրախոսվել է 13. VII. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] *Տե՛ս* Herzog. 1951, 62–64; Foley. 1988, 1–56; Foley. 1990, 121–359; Harvilahti. 1996, 37–49; Lord. 2000, 141–222; Nettl. 2003, 324.

[2] *Բավական է հիշատակել երաժշտագիտության ասպարեզում ամենից հեղինակավոր անգլիալեզու և գերմանալեզու հանրագիտարանները.* Pegg & Porter. 2001, 265; Suppan. 2003, 127; Nettl. 2003, 324.

[3] *Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի արխիվ, ծրար 313, 323, 328: Տպագրված նոտային նյութերը տե՛ս Սահակեան, Փահլեւանեան. 1996, 93–105, Կոմիտաս. 2000, 86–91:*

[4] *Տե՛ս Կոմիտաս. 2000, 19:*

[5] *Կոմիտաս. 2000, 86–91:*

[6] *Մելիքյան. 1935, № 1 և № 3, Մելիքյան. 1949, № 209:*

[7] *Թումաճան. 2005, № 112:*

[8] *Քոչարյան. 2012, № 7–26:*

Վարդան Սամվելյանը[9], ավելի ուշ՝ Արուսյակ Սահակյանը, Ալինա Փահլևանյանը, Հերմինե Մխիթարյանը[10]: Արդյունքում՝ հայտնի է 41 գրառված երգ: Ընդունված է էպոսի երգերն անվանել «երգվող հատվածներ»[11], սակայն նկատի ունենալով, որ դրանք բոլորն էլ ավարտուն միավորներ են՝ չենք խուսափել «երգ» բնորոշումից:

Էպոսի 41 երգերից 8-ը «Զողորմի»-ներ են, 15-ը երգվում են Դավթի անունից, 9-ը՝ Հովանի, 1-ը՝ Իսմիլ Խաթունի, 4-ը՝ Մսրա Մելիքի, 1-ը՝ սարկավագի անունից, մեկական երգեր էլ երգում են Գոհարը, գուսանները, պատմիչը: Բնական է կարծել, որ էպոսից, հավանաբար, ավելի շատ հատվածեր են երգվել, որոնք չեն գրառվել: Ավելին՝ տեղին է հիշել, որ որոշ հետազոտողներ հիմնավորումներ են առաջարկում այն մասին, որ էպոսը կարող էր երգված լինել ամբողջությամբ[12]: Ցանկացած պարագայում գոյություն ունեցող նյութն ինքնին հնարավորություն է տալիս վերարտադրելու էպոսի սցենարի որոշակի դրվագ:

Դավթի երգերի երեք խումբ

Իհարկե, զարմանալի չէ, որ Դավիթը երգվող հատվածներով ավելի շատ է արտահայտվել, քան մյուս հերոսները: Նրան առնչվող 15 երգերը խմբավորվում են երեք վիճակների մեջ: Պայմանականորեն դրանք կբնորոշենք որպես Ա, Բ, Գ խմբեր:

Ա) Մի խմբում Դավիթը դրսևորվում է որպես ինքնավստահ անձ, որը գիտի իր անելիքները: Նա դիմում է հորեղբորը՝ խնդրանքով, որ ստանձնի հոր դերը : Դավիթը Հովանից խնդրում է իրեն հանձնել նախնիներին պատկանող իրերը, ինչպես նաև ցույց տալ վերջիններիս հետ առնչվող վայրերը: Երգերից մեկում Դավիթը խնդրում է իրեն տանել և ցույց տալ Ծովասարն ու հոր որսատեղին: Մեկ այլ երգում նա խնդրում է օգնել վերակառուցել հոր հիմնած վանքը, որն ավերել էին թշնամիները: Վանքը պետք էր կառուցել «մինչև ուրբաթ»՝ շաբաթ օրը Պատարագ մատուցելու համար: Այնուհետև Դավիթը խնդրում է իրեն հանձնել Քուռկիկ Ջալալին, Թամքը, Թուր Կեծակին, այսինքն՝ այն իրերը, որոնք խորհրդանշում են նախնիների ժառանգությունը:

Բ) Երկրորդ հուզական վիճակին պատկանող երգերում Դավիթը հանդես է գալիս որպես մարդկային նուրբ էակ՝ հոգեբանական խորությամբ: Նրա երգերի այս խմբում դրսևորվում են մարդկային հատկանիշները՝ սեր, խնամք, անհանգստություն և, անգամ՝ վախ:

Դավիթը մի երգով դիմում է տանտիկիններին և խնդրում նրանց հաց թխելու ժամանակ հիշել իր անունը: Այստեղ հավատալիքի դրսևորումն է հատկանշական. հացը հաջողություն է բերելու նրան: Դավթի կերպարում քնարական այսպիսի փոխակերպումը ցույց է տալիս, թե ինչքան նուրբ էակ կարող է նա լինել կյանքում: Պարտության է մատնում թշնամուն, սակայն հավատում է՝ իր գործողությունների արդյունքը կախված է ժողովրդի օրհնանքից: Եթե կա-

[9] Տե՛ս Քոչարյան. 2012, № 23:
[10] Վերջինները տե՛ս Սահակեան, Փահլեւանեան. 1996, 93–105:
[11] Пахлеванян. 2018, 131.
[12] Աբեղյան. 1966, 484: Ենթադրությունը քննարկում է նաև Տ. Դալալյանը. (տե՛ս Դալալյան. 2017, 39):

նայք հաց թխելիս իր անունը հիշեն, ապա նա հաջողություն կունենա իր գործողություններում:

Դավիթը դիմում է ձեռքերին ու աչքերին՝ խնդրելով օգնել իրեն: Ապա դիմում է սարերին ու ձորերին և քամի խնդրում, որն ունակ է սյուներ տապալել:

Ի վերջո, հոգեբանական կերպարի բացահայտման ինքնատիպ մի մարմնավորում է Դավթի աղոթքը: Նա դիմում է Աստծուն՝ խնդրելով թշնամուն վերածել բամբակի, իսկ իրեն՝ կրակի: Այսպիսով, լինելով ուժեղ ու անհաղթ հերոս՝ Դավիթը մի պահ վախ է ցուցաբերում:

Հետաքրքիր է, որ Դավթի հոգեվիճակը բացահայտող այս խմբի բոլոր երգերը գրառել է Կոմիտասը: Այլ երաժշտագետ-ազգագրագետների գրառումները թե՛ բովանդակային, թե՛ գեղարվեստական առումով խիստ արժեքավոր լինելով հանդերձ՝ հերոսի հոգեվիճակ չեն բացահայտում: Դժվար է որոշել, թե ինչո՞ւ մյուս գրառողները նման երգերի չեն հանդիպել: Գուցե դա պայմանավորված է կրողներով. որոշ բանասացներ կերպարն ընկալել են խորը հուզական հատկանիշներով, իսկ որոշները՝ միայն գործողություններով:

Գ) Երգերի այս խմբում Դավիթն ի հայտ է գալիս որպես ուժեղ մարդ՝ վստահ իր գործողություններում: Հովանը չի ցանկանում նրան հանձնել նախնիներին պատկանող իրերը, որովհետև վախենում է: Ավելին, դրանց կորուստը վատ խորհրդանիշ է ենթադրում ողջ ազգի համար: Այն պահից, երբ Դավիթը հասկանում է, որ հորեղբայրը խուսափում է իրեն հանձնել ձին և իրերը, նա սկսում է պահանջել՝ խնդրելու փոխարեն: Անգամ սկսում է վախեցնել ուժով. «… չըտաս խաթրով, կենիմ զոռով»: Նույնպիսի ուժ և հաստատակամություն է Դավիթը դրսևորում մարտի պատրաստվելիս: Արտահայտում է իր համոզմունքը. «… հավլունի թուրը ձեռքիս պիտի շողա». պապերի անունով նա ձայն պիտի տա այնպես, որ ժայռերը թնդան:

Նշելի ենք համարում երգերի այն խումբը, որոնք բացահայտում են հերոսի հոգեբանական կերպարը (Բ խումբ): Սա նշանակում է՝ հայկական երաժշտական ֆոլկլորում դրսևորվում է այնպիսի երևույթ, որը զուգահեռելի է դասական կոմպոզիտորների աշխատանքին, մինչդեռ ֆոլկլորը պրոֆեսիոնալ արվեստ չէ՝ դասական բնորոշումների դիրքերից: Պարզաբանենք. դասական, ռոմանտիկական և, հատկապես, ժամանակակից օպերային արվեստում խիստ կարևորվում է գործող անձանց կամ գլխավոր հերոսի կերպարային առանձնահատկությունների բացահայտումը հոգեբանական դիտանկյունից: Թեև այս մոտեցումը վերաբերում է բոլոր ժամանակների օպերային ներկայացումներին, սակայն դրա կարևորությունն աճել է հատկապես Ռիխարդ Վագների և նրան հաջորդող դարաշրջաններում[13]:

Դավթի երգերի գծագրային նկարագիր

«Սասնա ծռեր» էպոսի գրեթե բոլոր երգերում և, մասնավորապես՝ Դավթին առնչվող հատվածներում դրսևորվում է մեղեդային ուրույն գծագիր, ըստ որի՝ մեղեդին ծավալվում է երգչական բարձր ռեգիստրում, այնուհետև թռիչք է տեղի ունենում դեպի երգչական ցածր ռեգիստր, որտեղ շարադրվում է

---

[13] *Հմմտ., օրինակ,* Halliwell. 2005, 26.

մեղեդին հանգուցալուծող երաժշտական դարձվածքը: Մեծամասամբ ներքևի ռեգիստրում հնչող դարձվածքը կազմում է ամբողջ մեղեդու մեկ երրորդ մասը: Եթե վերևի ռեգիստրում մեղեդու ծավալումը տեղի է ունենում մեղեդային, նևմատիկ կամ մելիզմատիկ ոճով՝ զարդարանքներով, ապա ցածր ռեգիստրում հնչող հատվածը, քիչ բացառություններով, ռեչիտատիվ է: Ընդհանուր առմամբ, ձևավորվում է երաժշտության ծավալման եռաշերտ «միջակայք», որոնցից ներքևինն առնչվում է ներքևի ռեգիստրի երաժշտական դարձվածքին, իսկ միջինն ու վերևինը՝ վերևի:

Ասվածը կարևոր է, որովհետև մեղեդային այսպիսի բնութագիր չի հանդիպում ո՛չ հայկական, ո՛չ էլ այլ ազգերի ֆոլկլորում կամ այլ ժանրերի երաժշտության մեջ: Ընդունված դասակարգումների համաձայն՝ մեղեդիները կարող են լինել վերընթաց, վարընթաց, ուղիղ շարժումով, ալիքաձև և այլն: Վարընթաց մեղեդիները համարվում են դժվար վերարտադրելի: Դրանք հանդիպում են որոշ ֆոլկլորային մշակույթներում ու նաև դասական երաժշտարվեստում՝ որոշ կոմպոզիտորների գործերում: Հայկական մշակույթում՝ ինչպես ֆոլկլորում, այնպես էլ հոգևոր երաժշտության մեջ, մասնավորապես՝ տաղային արվեստում, վարընթաց գլորումներ պարունակող մեղեդիները բազմաթիվ են («Մոկաց Միրզա», «Ալ այլուղս», «Տիրամայրն» և այլն): Սակայն դրանք բոլորը ներկայացնում են աստիճանական վարընթաց գլորում, իսկ թռիչքաձև վարընթաց տեղաշարժ էպոսի երգերից բացի որևէ այլ տեղ չենք հանդիպում[14]*:*

Ժամանակակից երաժշտագիտության մեջ վերջին ժամանակներում լայն տարածում է գտել երաժշտության համակարգչային վերլուծության մեթոդը: Մասնավորապես, արևմտյան ժողովրդական երաժշտության մեղեդիները վերլուծելու և համեմատելու նպատակով ամերիկացի երաժշտագետ Դեյվիդ Հյուրոնը շրջանառու է դարձրել մեղեդիական գծագրերի գրաֆիկական պատկերման սկզբունքը[15]*: «Սասնա ծռեր» էպոսի և, հատկապես, Դավթի երգերի գրաֆիկական արտացոլումը տեսանելիորեն ցույց է տալիս դրանց կառուցվածքային առանձնահատկությունները: Ստորև ներկայացնում ենք մի քանի երգի գրաֆիկական պատկեր:*

Գծապատկեր 1. «Զողորմին»: Գրառումը՝ Կոմիտասի (Կոմիտաս. 2000, № 103):



[14] *Իրողությանն անդրադառնում է նաև Ա. Փահլևանյանը (տե՛ս* Пахлеванян. 2018, 131–132*):*

[15] Huron. 1996, 3–23.

Գծապատկերում տեսանելի են երեք դարձվածքներ, որոնցից առաջին երկուսը ծավալվում են վերևի ռեգիստրում և ընդգրկում են եռաչերտ տարածքի միջին ու վերին շերտերը, իսկ վերջինը հնչում է ներքևի ռեգիստրում՝ թռիչքային անկումից հետո:

Գծապատկեր 2. «Դեպի Ծովասար»: Գրառումը՝ Ա. Քոչարյանի (Քոչարյան. 2012, № 12):



Երկրորդ գծապատկերում ներկայացված երգը երկու անհավասար տներից է բաղկացած: Առաջինի վերևի ռեգիստրում ծավալվող միջին ու վերևի շերտերն ընդգրկող հատվածը բաղկացած է երեք դարձվածքից՝ դասավորված ծավալային աճման սկզբունքով: Երկու տներն էլ եզրափակվում են մեղեդիական անկումով տեղակայված ասերգով:

Գծապատկեր 3. «Մարութավանքը»: Գրառումը՝ Ա. Քոչարյանի (Քոչարյան. 2012, № 16):



Գծապատկերում պատկերված է հինգ տնից բաղկացած երգ, որոնց ավարտին ակնհայտ է նույն սկզբունքը՝ մեղեդու հանգուցալուծումը մեղեդու հիմնական հատվածի համեմատությամբ կտրուկ ցածր ռեգիստրում՝ մեկ-երկու հնչյունից բաղկացած ասերգի սահմաններում:

Փորձենք մեղեդիների այսպիսի գծագրի գոյացման պատճառաբանությունը որոնել խոսքերի տրամաբանության մեջ՝ հաշվի առնելով գերմանացի երաժշտագետ Կուրտ Զաքսի տեսությունը, ըստ որի՝ հնագույն երաժշտությունը լոգոգենիկ կամ բառածին է[16]: Այս ճանապարհով հնարավոր է գտնել ընդհանուր օրենք: Մեր դիտարկումների համաձայն՝ 41 երգերը պայմանականորեն ենթարկվում են երեք տեսակի՝ ըստ կառուցվածքային բովանդակության: Մի խմբում (12 երգ, 5 երգ այս սկզբունքին են ենթարկվում առանձին տներով) վերևի ռեգիստրի ծավալումը ներկայացնում է գործողություն

[16] S a c h s. 1943, 41.

կամ խնդրանք, իսկ հաջորդող անկումային բանաձևը ներկայացնում է ուղիղ կամ հանգման խնդիր և պատասխանում «ի՞նչ», «ո՞վ» կամ «ո՞ւմ» հարցերին:

Աղյուսակ 1. Գործողություն կամ խնդրանք վերևի ռեգիստրի բանաձևում, ուղիղ կամ հանգման խնդիր՝ ներքևի ռեգիստրի բանաձևում

Ա (բարձր ռեգիստր)	Բ (ցածր ռեգիստր)
Դառնամ զողորմին տըտամ	Սանասարին
Սասո խրոխպեր, խերախոտ խրոխպեր, քենե կխընդրիմ	ինձ տանես Ծովասար չհանց տաս
Խրոխպեր, քենե կխընդրիմ	խազարը խարիրը պատ չարող
Ինձ պետք են, պետք են խազար հինգ խազար մանուկ	Նորալուկ մանուկ
Ափսոս, հազա՛ր ափսոս	Քուռկիկ Ջալալին

Երկրորդ խմբում վերևի ռեգիստրի զարգացումը ներկայացնում է դիմում-կոչական կամ ափսոսանք, որին հաջորդում է կարևոր իմաստային միտք, ինչը դրսևորվում է ներքևի ռեգիստրի մեղեդու բովանդակության մեջ: Պայմանականորեն բաժանելով Ա և Բ հատվածների, «գլխավոր ասելիքը» վերաբերում է Բ հատվածին (14 երգ, ևս 3 երգ նշված կառուցվածքը դրսևորում են միայն որոշ տներում):

Աղյուսակ 2. Դիմում կամ ափսոսանք վերևի ռեգիստրի բանաձևում, «գլխավոր ասելիք» ներքևի ռեգիստրի բանաձևում

Ա (բարձր ռեգիստր)	Բ (ցածր ռեգիստր)
Հեյ, խրոխպեր, մեռնիմ քի խրոխպեր, ես խեր չունիմ,	տու ձի արա խերութեն
Հեյ, խրոխպեր, խերախոտ խրոխպեր,	քենե կուզիմ Քուռկիկ Ջալալին
Տըտանոըկինք, ինչ խաց թըխեք,	Դավիթ մեջ հիշացեք
Ափսոս, հազար ափսոս,	գընաց էն տըղեն

Երրորդ խմբում էլ Ա կառույցի խոսքերի վերջին նախադասությունը կրկնվում է Բ կառույցում: Այսինքն՝ Ա կառույցը ներկայացնում է որոշակի նախադասություն, իսկ Բ կառույցը կրկնում է նրա վերջավորությունը (7 երգ, ևս 5 ասվածը դրսևորում են միայն որոշ տներում): Այս խմբի երգերը կարելի է նկա-

բագրել որպես հարց ու պատասխանի ձև, որովհետև ինչպես երաժշտական, այնպես էլ բանաստեղծական տեքստերը համապատասխանում են դրան:

Աղյուսակ 3. Ցածր ռեգիստրի բանաձևում կրկնվում են բարձր ռեգիստրի բանաձևի խոսքերը

Ա (բարձր ռեգիստր)	Բ (ցածր ռեգիստր)
Տառնամ զողորմին, տըտամ զողորմին Ջենով Հովանին	*Ջենով Հովանին*
Հեյ, հեյ, կըկանչեմ թող գան, կըկանչեմ թող գան, Ով իր Աստված կըսիրե, թող գան, Հեյ, հեյ, կըկանչեմ թող գան, Մարութա սուրբ Աստվածածին տի չինենք, թող գան,	*Մարութա սուրբ Աստվածածին տի չինենք, թող գան*
Տա, որ քընուկ եք, արթուն կացեք,	*հոգիս, արթուն կացեք*

Այնուամենայնիվ, երաժշտական կառուցվածքի տրամաբանության մեկնաբանությունն ըստ բանաստեղծական տեքստի՝ մասամբ է միայն համոզիչ: Այս առնչությամբ հետաքրքիր է դիտարկել Ա. Փահլևանյանի մեկնաբանությունը, ըստ որի՝ էպոսի մեղեդիների դրսևորած երեք շերտերը վերարտադրում են երկրային / մարդկային (միջին), վերերկրային / աստվածային (վերևի) և անդրերկրային ոլորտները[17]: Նման տարբերակ է առաջարկում նաև Կ. Խուդաբաշյանը[18]:

Բնական է, որ երեք շերտերը միասին բավականին մեծ ձայնածավալ են ի հայտ բերում: Այս առնչությամբ հետաքրքիր է հայկական էպոսի երգերը համեմատել այլ էպոսների հետ: Երաժշտագետ Մարտին Ուեսթը, քննարկելով հունական էպոսի երգերը, նկատում է, որ դրանք, հավանաբար, ծավալվել են մի քանի հնչյունի շրջանակներում[19]: Ըստ հեղինակի՝ այսպիսին են եղել նաև այլ ազգերի երգվող էպոսները[20]: Կարևոր է նկատել, որ եթե անգամ Ուեսթի կարծիքը ճիշտ է այլ էպոսների երգերի առնչությամբ, հայկական էպոսի համար այն որևէ կերպ բնութագրական չէ:

Հակառակորդ կերպարներ

Անդրադառնալով Դավթին հակադիր ուժերին վերաբերող երգերին՝ ի հայտ ենք բերում միանգամայն զարմանալի իրողություն: Նկարագրված անկումային ավարտով մեղեդային գծագրերը բացակայում են ընդամենը 2 երգում: 41 պահպանված երգի պայմաններում միայն 2-ն են վերարտադրում այլ գծապատկեր: 2 բացառություններն էլ թշնամու ճամբարին են առնչվում: Այսպես, Իսմիլ խաթունի երգը պատմում է իր երազի մասին, ըստ որի՝ Մսրի աստղը

---

[17] *Սահակեան, Փահլեւանեան. 1996, 98:*
[18] *Խուդաբաշյան. 2004, 144:*
[19] West. 1992, 328.
[20] West. 1992, 208–209.

խավարել էր, իսկ Սասնա աստղը փայլում էր, ուստի նա փորձում է Մելիքին հորդորել չգնալ պատերազմի: Իսմիլի երգում վարընթաց թռիչքային մեղեդային գծագրի տրամաբանությունը բացակայում է: Զարգացած մեղեդիական գծագրի պայմաններում բացակայում է կտրուկ թռիչքը դեպի ցածր ռեգիստր:

Գծապատկեր 5. Իսմիլ Խաթունի երագը: Գրառումը՝ Ա. Քոչարյանի (Քոչարյան. 2012, № 20):



Մյուս բացառությունն էլ վերաբերում է Մսրա Մելիքին:

Գծապատկեր 6. Մսրա Մելիքի թուղթը: Գրառումը՝ Ա. Քոչարյանի (Քոչարյան. 2012, №18):



Հատկապես ուշագրավ է այն, որ Մելիքի մի երգը բանասացը երգել է պենտատոնիկ հնչյունաշարով: Պենտատոնիկան, առհասարակ, բնորոշ է արևելյան ազգերին՝ չինացիներին, մոնղոլներին և այլն: Եթե Մսրը նույնանում է Եգիպտոսի հետ, ապա հարց է առաջանում, թե ինչո՞ւ է ժողովուրդը երգել Հեռավոր Արևելքի երաժշտության հնչողությամբ: Պատասխանը հասկանալի է. Մելիքի կերպարը երգել են այլ՝ հայկականից տարբերվող, օտար ոճով: Իհարկե, Մելիքի մյուս երգերում պենտատոնիկա չի դրսևորվում, սակայն կրողների տարբերությունով է պայմանավորված նաև երաժշտական ոճաբանությունը:

Եզրակացություն

Այսպիսով, ինչո՞վ են Դավթի երգերն առանձնահատուկ, և ինչպե՞ս են դրանք հարաբերվում էպոսի այլ երգերի հետ:

Բարձր ռեգիստրում ծավալվող և թռիչքային անկումից հետո ցածր ռեգիստրում ամփոփվող մեղեդիներ չենք հանդիպել որևէ այլ մշակույթում: Անգամ հայ մշակույթի շրջանակներում մեղեդային այսպիսի գծագիր չի հանդիպում: Աստիճանական անկումը բնորոշ է հայկական երաժշտությանը և հան-

ղիպում է տարբեր ժանրերի պատկանող երգերում: Աստիճանական անկումը մեղեդիներում ավելի հազվադեպ հանդիպում է նաև այլ մշակույթներում: Հունգարացի կոմպոզիտոր և երաժշտագետ Բելա Բարտոկը դրանք նկատել է հունգարական որոշ երգերում[21] *և Թուրքիայի տարածքում գրառված երգերում*[22]*: Այնուամենայնիվ, Թռիչքային անկումը մնում է «Սասնա ծռեր» էպոսի «մենաշնորհը»: Դրանք ի հայտ են գալիս ոչ միայն Դավթի երգերում, այլև «Զողորմի»-ներում, Հովանի և այլ երգերում: Երկու բացառությունները, որոնք վերաբերում են հակառակորդ ճամբարի ներկայացուցիչներին՝ Իսմիլին և Մելիքին, ընդհանուր պատկերը քիչ են փոխում:*

Խիստ մատնանշելի է, որ ասացողներն երգել են երգչական բարդագույն տեխնիկայով. չէ՞որ այսպիսի մեղեդիների վոկալ վերարտադրումն ամենևին հեշտ չէ: Ինչպե՞ս է պատահել, որ երգել են այդքան բարդ մեղեդիներ: Եթե դրանք հանդիպեին սահմանափակ թվով բանասացների տարբերակներում, կարող էինք եզրակացնել՝ վոկալ վարպետություն ցուցադրելու նպատակ են ունեցել, սակայն այսպիսի միտքը հերքվում է, երբ նկատի ենք ունենում, որ բոլոր կրողներն են երգել նույն բարդ մեղեդիական բանաձևով, այսինքն՝ մեղեդիները կայուն ամրագրված նկարագիր են ունեցել, և պարտադիր է եղել դրանց պահպանումը:

Երաժշտական կառուցվածքով Դավթի երգերը ենթարկվում են էպոսի ընդհանուր բանաձևային մտածողությանը, սակայն դրանք առանձնանում են բովանդակային կարևոր հատկանիշով՝ հերոսի հոգեբանական կերպարի բացահայտման տրամաբանությամբ: Մատնանշելին միայն այն հանգամանքը չէ, որ այստեղ աղերսներ են դրսևորվում օպերային դրամատուրգիայի հետ, այլև հատկապես այն՝ դա տեղի է ունենում ժողովրդական երաժշտական ժանրի պարագայում, երբ գործ չունենք մասնագիտացված կոմպոզիտորական աշխատանքի հետ:

Տաթևիկ Շախկուլյան – արվ. թ., Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության տեսության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ կոմիտասագիտություն, հայ երաժշտական ֆոլկլոր, երաժշտության տեսություն: Հեղինակ է 2 մենագրության, 2 դասագրքի և շուրջ 40 հոդվածի: shakhkulyan@yahoo.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ. 372 էջ:

Դալալյան Տ. 2017, Վիպասանական արուեստը. երաժիշտ-կատարողները եւ նուագարանները վաղմիջնադարեան Հայաստանում. – Հնչյուն և լռություն. երաժիշ-

[21] Bartok. 1993, 144–147.

[22] *Ի դեպ, Թուրքիայի տարածքում գրառված այդ երգերի ազգային պատկանելության հարցը քննարկելի է. մանրամասն տե՛ս Շախկուլյան. 2016, 581–587:*

տը և նվագարանը դարերի հոլովույթում, Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, էջ 38–53:

Թումաճան Մ. 2005, Հայրենի երգ ու բան, հ. 4, կազմող և խմբագիր՝ Ձ. Թագակչյան, Հ. Պիկիչյան, Երևան, «Զանգակ» հրատ., 129 էջ:

Խուդաբաշյան Կ. 2004, «Սասնա ծռեր» վեպի երաժշտական դրվագները, որպես ծայնակարգի կառուցման ընթացքի հայտնաբերման սկզբնաղբյուր. – Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայկական հանձնախումբ, էջ 144–145:

Կոմիտաս. 2000, Երկերի ժողովածու, հ. 10, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ռ. Աթայանը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 218 էջ:

Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան. Կոմիտասի արխիվ, ծրար 313, 323, 328:

Մելիքյան Ս. 1935, Ուրվագիծ հայ յերաժշտության պատմության, սկսած ամենահին շրջաններից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, Երևան, Մելքոնյան ֆոնդ, 91 էջ:

Մելիքյան Ս. 1949, Հայ ժողովրդական երգեր և պարեր, Երևան, Հայպետհրատ, 326 էջ:

Շախկուլյան Տ. 2016, «Թուրքական» երաժշտության մի առեղծված. – Հայոց Ցեղասպանություն–100. Ճանաչումից՝ հատուցում, Երևան, «Գիտություն», էջ 581–587:

Սահակեան Ար., Փաhլեւանեան Ա. 1996, «Սասնայ ծռեր» դյուցազնավէպ, Փասադենա, «Դրազարկ», 122 էջ:

Քոչարյան Ա. 2012, Հայ վիպական երգեր. – Հայ ավանդական երաժշտություն, պր. VII, Երևան, «Ամրոց գրուպ», էջ 54–86:

Пахлеванян А. 2018, Эпика и эпическое пение в традиционной культуре армянского народа. – Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, հ. Գ, Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., էջ 120–142:

Bartok B. Folk song collecting in Turkey. – Essays. Lincoln and London: University of Nebraska Press, 1993, p. 147.

Foley J. M.. 1988, The Theory of Oral Epic Composition, Indiana University Press, 170 p.

Foley J. M. 1990, Traditional Oral Epic: The Odyssey, Beowulf, and the Serbo-Croatian return song, University of California Press, 420 p.

Halliwell M. 2005, Opera and the Novel: the Case of Henry James, Amsterdam-New York, Rodopi, 493 p.

Harvilahti L. 1996, Epos and National Identity: Transformations and Incarnations. – “Oral Tradition”, Harvard University, vol. 11/1, pp. 37–49.

Herzog G. 1951, The Music of Yugoslav Heroic Epic Folk Poetry. – “Journal of the International Folk Music Council”, vol. 3, pp. 62–64.

Huron D. 1996, The melodic arch in Western folksongs. – “Computing in Musicology”, vol. 10, pp. 3–23.

Lord Albert B. 2000, The Singer of Tales, second edition. Harvard University Press, 265 p.

Nettl B. 2003, Folk Music. – The Harvard Dictionary of Music, fourth edition, edited by Don Michael Randel, Harvard University Press.

Pegg C. & Porter J. 2001, Epics. – The New Grove Dictionary of Music and Musicians, second edition, edited by Stanley Sadie, vol. 8, pp. 265–269.

Sachs C. 1943, The Rise of Music in the Ancient World, East and West, Norton, 336 p.

Suppan W. 2003, Epos. – Die Musik in Geschichte und Gegenwart, Sachteil Bd. 3, zweite Ausgabe, herausgegeben von L. Finscher, Kassel: Bärenreiter / Metzler, S. 127–138.

West Martin L. 1992, Ancient Greek Music, Oxford University Press, 440 p.

МУЗЫКАЛЬНОЕ ВОПЛОЩЕНИЕ ОБРАЗА ДАВИДА САСУНСКОГО

ТАТЕВИК ШАХКУЛЯН

Резюме

Ключевые слова: «Сасна Црер», песни эпоса, песни Давида, оперная драматургия, мелодический контур.

Из 41 сохранившейся народной песни армянского эпоса «Сасна Црер» (арм. «Сасунские удальцы») 15 принадлежат самому любимому герою – Давиду. Песни Давида по содержанию группируются на три типа: (1) песни, в которых герой собирает сведения о предках и планирует свои действия, (2) песни, раскрывающие его психологическое состояние, (3) песни, представляющие его как сильную личность, уверенную в своих планах и действиях.

Все песни Давида представляют нестандартный контур мелодии, в котором она начинается и развивается на высоком регистре, а затем к концу внезапно скачком переходит на более низкий регистр, где происходит ее развязка. Графические модели песен, выполненные соответственно теории Дейвида Хюрона, наглядно представляют тип нестандартных песен Давида. При этом вражеские характеры эпоса не проявляют такие мелодические формулы. Поэтические тексты песен также позволяют рассмотреть оригинальность мелодий.

Татевик Шахкулян – к. иск., заведующая научным отделом Музея-института Комитаса, старший научный сотрудник отдела музыки Института искусств НАН РА, преподаватель кафедры теории музыки Государственной консерватории имени Комитаса. Научные интересы: комитасоведение, армянский музыкальной фольклор, теория музыки. Автор 2 монографий, 2 учебников и около 40 статей. shakhkulyan@yahoo.com

MUSICAL EMBODIMENT OF THE CHARACTER OF DAVID OF SASSOUN

TATEVIK SHAKHKULYAN

S u m m a r y

Keywords: "Sasna Tsrer", epic songs, David's songs, operatic dramaturgy, melodic contour.

Out of forty-one available folk songs of the Armenian epic *Sasna Tsrer* (Arm. Daredevils of Sassoun), 15 samples belong to the most beloved hero, David. David's songs are grouped into three types according to their content: (a) songs in which the hero collects information about his ancestors and plans his actions, (b) songs that uncover his psychological state, and (c) songs that present him as a strong personality confident in his plans and actions.

All the songs of David present non-standard contour of the melody in which it starts and evolves in a high pitch, and then by the end suddenly drops to a lower pitch where its denouement occurs. The graphic models of the songs performed according to David Huron's theory, evidently present the non-standard model of David's songs. At the same time, the enemy characters of the epic do not show such melodic formulas. The lyrics of the songs also allows to consider the originality of the melodies.

Tatevik Shakhkulyan – PhD in Art, Head of the Scientific Department of the Komitas Museum-Institute, Senior Researcher at the Music Department of the Institute of Art of NAS RA, Lecturer at the Chair of Music Theory of the Komitas State Conservatory. Scientific interests: Komitas studies, Armenian musical folklore, theory of music. Author of 2 monographs, 2 study books, and about 40 articles. shakhkulyan@yahoo.com

ՀՏԴ 726.5(479.25)

Doi:10.54503/0135-0536-2023.3-230

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ՊԱՐՍՊԱԿԻՑ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ*

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Տաթևի վանք, Ստեփանոս Օրբելյան, պարսպակից հին ու նոր մուտքեր, աղբյուրի շենք, հնագիտական պեղումներ, վիմագիր, ձեռագիր հիշատակություն:

Նախաբան

Միջնադարյան Հայաստանի վանական համալիրներն ու եկեղեցիներն իրենց բազմադարյա գոյության ընթացքում քանիցս նորոգվել, վերակառուցվել, երբեմն էլ համալրվել են նոր շենք-շինություններով: Այդօրինակ հուշարձանների շարքում բացառություն չէ նաև Սյունյաց հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքը, որի՝ հիմնականում երկրաշարժերի հետևանքով պայմանավորված շինարարական փուլերին վերջերս անդրադառնալու առիթ ենք ունեցել[1]: Գաղտնիք չէ, որ միջնադարյան վանքերն աչքի էին ընկնում ոչ միայն վանականների կենցաղավարման միասնական կանոնադրությամբ, այլև համակառույցի յուրօրինակ լուծումներով. մեկից ավելի եկեղեցիներ, գավիթ-սրահներ, զանգակատուն, վանական, տնտեսական տարաբնույթ կառույցներ[2], և, որ էականն է, հուշարձանախումբը պարսպապատվում էր՝ դրանով իսկ ընդգծելով արտաքին աշխարհից վանականների առանձնացված-մեկուսացված, ինչպես նաև՝ պաշտպանված լինելը:

Հայաստանում վանքերի հիմնադրման վերազարթոնքից (IX–XIII դդ.) անմասն չի մնացել նաև Տաթևի վանքը, որի պատմության առաջնային սկզբնաղբյուրը պատմագիր, Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկն է[3]: Այն, որ Տաթևի վանքը պարսպապատվել է դեռևս իր կազմավորման վաղ շրջանում՝ X դարասկզբին, վկայում է պատմիչը: Սյունյաց մետրոպոլիտության աթոռակալ Հովհաննես եպիսկոպոսի հիշարժան գործերը թվարկելիս՝ նա նշում է, որ վանքի գլխավոր՝ Սբ. Առաքելոց եկեղեցու շինարարությունից հետո (906 թ.) «պարսպէ (Հովհաննես եպիսկոպո-

* *Ներկայացվել է 20. VI. 2023 թ., գրախոսվել է 06. VIII. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2022, 250–267:*

[2] *Հ ա ս ր ա թ յ ա ն. 2002, 960–961:*

[3] *Օ ր բ է լ ե ա ն. 1910: Պատմագրության ԼԹ–ԽԳ և հաջորդող մի շարք այլ գլուխներում պատմագիրը հանգամանորեն ներկայացնում է Տաթևի վանք-եպիսկոպոսարանի պատմությունը, վանական համալիրի կազմավորման մանրամասները, Սյունյաց բազմաշխատ առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի ու նրա հաջորդների շինարարական գործունեությունը:*

ար — Ա. Հ.) և զեկեղեցին սրբաքարով, և ապա զվանսն՝ կոփածոյ քարամբք, և զի էր նիստ տեղւոյն անյարմար՝ հարթէ զթանձրութիւն գետնոյն, և զխորութեան վայրսն բարձրացուցանէ կրաշաղախ որմովք»[4]: Օրբելյանի հիշատակությունից կարելի է ենթադրել, որ վանքը սկզբնապես կրկնակի պարիսպներ է ունեցել, ներքինը՝ սրբատաշ, արտաքինը՝ կոփածո (մշակված) քարից կամ, որ մեզ առավել հավանական է թվում, ի սկզբանե պարսպապատվել է միայն բուն եկեղեցին, իսկ տարիներ անց, երբ վանքն ընդարձակվել ու համալրվել է նոր շինություններով, պարսպապատվել է ողջ համալիրը (թերևս, եկեղեցու պարիսպները քանդելուց հետո): Մեր այս ենթադրությունը կարծես հիմնավորվում է պատմագրի մեկ այլ հիշատակությամբ, ըստ որի՝ նույն Հովհաննես եպիսկոպոսը «շինէ և գաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երկրաւ՝ բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն, և հարթեալ հաւասարեալ զվայրն՝ շինէ և սրբաշէն տրապէզս (սեղանատուն — Ա. Հ.) և գործատներս (արհեստանոցներ — Ա. Հ.), համբարանոցս (ամբար, շտեմարան — Ա. Հ.) և սրբատունս[5] և գրատունս և ի դրան եկեղեցւոյն տուն աղօթից և տեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց»[6]: Այսինքն, կարճ ժամանակահատվածում վանքը համալրվել է միաբանության համար անհրաժեշտ վանական ու տնտեսական կառույցներով՝ սեղանատուն, ամբարանոց, գրատուն, գավիթ-տապանատուն, խցեր, պաշտպանության համար գաղտնարաններ և այլն:

Անշուշտ, պարսպապատի նշանակություն է ունեցել նաև բնական լանդշաֆտը, ինչը նկատելի է նաև Տաթևի վանքում, երբ համալիրի հարավային, մասամբ նաև՝ արևմտյան ու արևելյան սահմանների հիմնական «պաշտպանը» Որոտանի կիրճն է: Այսինքն, վանքը պարսպապատվել է հիմնականում հյուսիսից՝ անկյուններում հետագայում ունենալով բրգաձև աշտարակ-դիտարաններ, որտեղից պատը շարունակվել է ուղղահայաց՝ պարսպելով վանքն արևմտյան ու արևելյան կողմերից[7]: Կիրճին դիմահայաց հարավային մասը ևս ավելի ուշ ամրացվել, բնական ժայռին ասես միաձուլված պարսպապատեր են բարձրացվել (Նկ. 1), որոնց ներքին ծավալը զբաղեցնում են տարաբնույթ գործառութային նշանակության կառույցներն ու գաղտնարանները:

---

[4] *Օ ր բ է լ ե ա ն. 1910, 225:*

[5] *Սբ. Էջմիածնի միաբան Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանի բնորոշմամբ՝ պատմագրի հիշատակած սրբատունը վանքի թանկարժեք իրերը, առավելապես՝ սրբոց մասունքները պահելու վայրն էր, որը կարելի է զուգադրել նշխարատուն-գրատների հետ: Այս շենքի գտնվելու հավանական տեղը, ըստ Մեսրոպ Մագիստրոսի, վանքի առաջնորդարանի մոտ էր՝ ապահով վայրում, որի առիթով վկայաբերում է նաև Անիում Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսին մետրոպոլիտության իրավունք տալու կարգը, երբ նրան են վերադարձվում նախկինում խլված խաչը և ոսկեղեն քղանցքներով խաչվառը, գավազանն ու գահավորակը, որոնք պահվում էին «ի սենեկին սրբարանի հայրապետանոցին» (Օ ր բ է լ ե ա ն. 1910, 304, Տ է ր-Մ ո վ ս ի ս ե ա ն. 1938, 19):*

[6] *Օ ր բ է լ ե ա ն. 1910, 225:*

[7] *XVIII դ. երկրորդ կեսին Սբ. Էջմիածնի միաբան Աբրահամ վրդ. Աստապատցին, ծառայության կոչվելով Տաթևի վանք, տեղում վանական դպրոց է բացում՝ վանքի հյուսիսարևելյան կողմում կառուցելով մինչև ձորեզր ձգվող պարսպապատն ու կից տասնվեց դասասենյակները (Ս մ բ ա տ ե ա ն. 1930, 319, Հ ա ս ր ա թ յ ա ն. 2002, 996):*

Վանքի պարսպակից հին մուտքերը

Ստ. Օրբելյանը Սյունյաց առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի օրոք իրականացված շինարարական աշխատանքների շարքում պարսպակից մուտքերի ու դրանց կառուցման ժամանակի վերաբերյալ որևէ հստակ տեղեկություն չի հաղորդում: Միայն XI դ. առաջին կեսին գահակալած, այսպես կոչված, «երկրորդ» Հովհաննես եպիսկոպոսի (1006–1058 թթ.) կատարած գործերի շարքում հիշատակում է նաև վանքի արևմտյան մեծ դռան վրա կամարակապ դարպասի, իսկ դրա վրա՝ Սբ. Կարապետի անվանակիր զույգ խորանների կառուցման մասին. «Կանգնէ և սա (Հովհաննես եպիսկոպոսը – Ա. Հ.) կամարս ի վերայ աւագ դրան վանացն, որ հայէր ընդ արևմուտս, և շինէ ի վերայ նորա երկու խորան յանուն սրբոյ Կարապետին ի քերեալ քուաքատակեայ (սրբատաշ քիվավոր – Ա. Հ.) քարանց»[8]: Հետագայում Տաթևի վանքի վանահայր Արտակ

Նկ. 1. Տաթևի վանքի հարավարևելյան պարսպապատը
(լուս.՝ հեղինակի, 2015 թ.):

եպս. Սմբատյանը (1922–1926 թթ.), թերևս պատմագրի հաղորդած տեղեկությունների հիմամբ, նշում է, որ Հովհաննեսի հաջորդ Գրիգոր եպիսկոպոսը (1058–1116 թթ.) «վանքի գլխավոր մուտքի աւագ դուռը (մեծ դարվազէն) արևմտեան կողմից փոխում է արևելեան կողմը»[9]: Բանն այն է, որ վերջինիս իրագործած շինարարական աշխատանքների շարքում պատմագիրը հաղորդում է նաև պարսպակից արևելյան մուտքի վրա կամարակապ դարպաս, կից սրբաշեն տուն, իսկ այս երկուսի միասնական հարթ տանիքին՝ գմբեթավոր Սբ.

---

[8] Օ ր բ է լ ե ա ն. 1910, 314: Մեսրոպ Մագիստրոսը երկմտում է կամարի և զույգ խորանների ստույգ տեղադրության հարցում՝ վանքի պարսպապատի, թե՞ գլխավոր տաճարի արևմտյան դռան վրա: Ի վերջո հավանական է համարում եկեղեցուց անջատ լինելը (Տ է ր-Մ ո վ ս ի ս ե ա ն. 1938, 34):

[9] Ս մ բ ա տ ե ա ն. 1930, 297: Աշխատության մեջ Արտակ սրբազանը հակասական տեսակետներ է առաջադրում՝ ծանոթագրելով, որ Սբ. Կարապետի խորանը քանդել են XIX դ. կեսերին, «երբ մեծ դարվազէն տեղափոխել են արեւելեան կողմը» (Ս մ բ ա տ ե ա ն. 1930, 293):

Աստվածածին վերղարպասյա[10] եկեղեցու կառուցման մասին. «... կանգնեաց (Գրիգոր եպիսկոպոսը – Ա. Հ.) կամարս ի վերայ դրան վանացն, որ հայէր ընդ յարևելս, և մերձ նմին տուն սրբաշէն. և ի վերայ սոցա եկեղեցի մի գմբէթաւոր գեղեցկայարմար յանուն սրբուհւոյ Աստուածածնին: Եւ էր նա իբր դիտանոց բարձր, որ հայէր ի վերայ վանացն»[11] (նկ. 2): Հիշատակված կառույցներից թեական է մնում սրբաշեն, այսինքն՝ սրբատաշ քարով շինված տան գործառույթային նշանակությունը: Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ այն ուղղանկյուն հատակագծով միանավ թաղակապ, արևելյան կողմում կիսաշրջանաձև խորանով ու բարձր բեմով կառույց է: Արդյո՞ք տեղին է պարսպին ու դարպասին կից այս կառույցը ևս սրբատուն, այսինքն՝ թանկարժեք իրերի և մասունքների պահարան համարելը, քիչ հավանական ենք կարծում, բայց այն, որ պատմագիրը հստակ տարանջատում է եկեղեցուց, անժխտելի է[12]: Թեև ներսում տապանաքարերի բացակայությանը, մեզ առավել տրամաբանական է թվում շինությունն իբրև տապանատուն-եկեղեցի դիտարկելը, որի արևելյան խորանը ևս բնորոշ է միջնադարից հայտնի տապանատներին, ուր պատարագներ են մատուցվել ննջեցյալների հոգիների փրկության համար[13]: Հայաստանում համանման կառույցներ հայտնի են Գառնիում՝ 897/8 թ. վախճանված Մաշտոց Ա Եղիվարդեցի հայրապետի մատուռ-տապանատունը[14], Բագարանի երբեմնի Սբ. Թեոդորոս եկեղեցուն կից՝ IX–X դդ. կառուցված Բագրատունի-

[10] Հետազոտողներից ոմանք զարգացած միջնադարի կրկնահարկ եկեղեցիների շարքում հիշատակում են նաև Տաթևի վանքի Սբ. Աստվածածինը (Լալայան. 2021, 28, Մնացականյան. 1960, 190–191, Մնացականյան. 1982, 180 և այլք), իսկ Անատոլի Յակոբսոնը, թեև եկեղեցին ճիշտ է բնորոշում՝ «վերղարպասյա», սակայն սխալվում է թվագրման հարցում՝ XIII դար (Якобсон. 1947, 315–316): Ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանը տեղին է նկատում, որ Տաթևի հիշյալ եկեղեցին ստորին հարկաբաժնի հետ միասնություն չունի, ուստի այն, իրավամբ, դասում է, այսպես կոչված, «վերղարպասյա» եկեղեցիների շարքին (Հասրաթյան. 2017–2018, 70, հմմտ. Халпахчьян. 1980, 167, Հարությունյան. 1992, 213; Седов. 2009, 566):

[11] Օրբէլեան. 1910, 321–322:

[12] Այս կառույցը ևս նորոգվել է վանքի վերջին բարեկարգման աշխատանքների ընթացքում: Խորանի հետնապատի կենտրոնում ագուցված է փոքրաչափ արձանագիր խաչքար, որի ստորին մասում ելուստի առկայությունը վկայում է կոթողի՝ նախկինում առանձին կանգնեցված լինելը: Թեև թվակիր չէ, սակայն տառաձևերի հնագրությունն ու քանդակային-հորինվածքային լուծումները բնորոշ են Տաթևի վանքի վաղխաչքարային դպրոցին՝ IX–X դդ.: Ըստ վիմագրի՝ «զԱբրահամ կրաւնաւոր՝ կանգնող սորոյ Նշանիս, յիշեցէք ի Ք(րիստո)ս Յ(իսու)ս» (Հարությունյան. Տաթևի վիմագրերի դաշտային օրագրից, 2018 թ., անտիպ):

[13] Ավելի վաղ այս հուշարձանը պայմանականորեն իբրև դամբարան են բնորոշել նաև հայ ճարտարապետության երախտավորները (Մնացականյան. 1960, 188–194, Հարությունյան. 1992, 213 և այլք):

[14] Սահինյան. 1983, 49, Պետրոսյան. 1988, 27: Փաստելի է, որ Մաշտոց կաթողիկոսի մատուռ-տապանատան մնացորդներն ու տապանաքարը նախնականը չեն: Միայն ուղղանկյունաձև տապանաքարի արձանագրության տառաձևերի հնագրությունն էլ բավական է այն առնվազն XIII դարով թվագրելու համար (Պետրոսյան. 1988, 27):

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ների տոհմական մատուռ-տապանատունը[15], Ցաղաց քարում՝ 1041 թ. կառուցված կրկնահարկ դամբարան-եկեղեցին[16], Վահանավանքում՝ 1086 թ. Սյունյաց Շահանդուխտ թագուհու և իր քույր Կատայի կառուցած Սբ. Աստվածածին կրկնահարկ դամբարան-եկեղեցին[17], Հաղբատում՝ Ուքանանց իշխանական տան ներկայացուցիչների մատուռ-տապանատները՝ 1211, 1220 թթ.[18], Նորավանքում՝ Սմբատ Օրբելյանի Սբ. Գրիգոր եկեղեցի-տապանատունը՝ 1275 թ.[19], ավելի ուշ՝ Հալիձորի Հարանց անապատի հիմնադիր-առաջնորդների Սբ. Պողոս-Պետրոս մատուռ-տապանատունը (XVII դար)[20] և այլն:

Նկ. 2. Վանքի արևելյան հին մուտքը և վերդարպասյա եկեղեցին (լուս.՝ հեղինակի, 2020 թ.):

Նկ. 3. Հին մուտքի և եկեղեցու կառուցման արձանագրությունը, 1087 թ. (գրչ.՝ հեղինակի, 2023 թ.):

Պատմագրի հաղորդած տեղեկությունները վավերացվում են նաև շինարարական վիմագրով՝ պահպանված հիշյալ վերդարպասյա եկեղեցու արևմտյան պատին՝ մուտքի աջակողմում, արտաքուստ. «Ի շրջագա(յ)ութեան տոմարի Հայկական Ժ.-ից յոբեղինաց (10 x 50 = 500) եւ Լ. եւ Զ. (36) թվոց (536 + 551=1087 թ.), ես՝ Գրիգոր ամենանվաստ ծառա Ք(րիստոս)ի եւ ողորմութեամբ Նորին եպիսկոպոս Սիւնեաց, կանգնեցի կամարքս եւ ի վերա(յ) զեկեղեցիս ...» (Նկ. 3): Կարելի է փաստել, որ վիմագրում ևս եկեղեցու անվան տակ վկայված է միայն վերդարպասյա գմբեթավոր Սբ. Աստվածածինը, որի առաջին հարկա-

[15] Նալբանդյան, Հարությունյան, Հակոբյան. 2021, 30–31:
[16] Մնացականյան. 1960, 182–186:
[17] Մնացականյան. 1960, 186–188, Գրիգորյան. 2007, 28–30:
[18] Ղափադարյան. 1963, 70–73:
[19] Մաթևոսյան. 2017, 18–23:
[20] Տէր-Մովսիսեան. 1938, 59–60:

բաժինը ներկայացվում է իբրև երկկամար (կամարքս) կառույց, որոնցից մեկը մուտքի կամարակապ սրահն է, մյուսը՝ ենթադրյալ տապանատուն-եկեղեցին. բոլորի շինարարությունն էլ ավարտվել է 1087-ին:

Ստացվում է, որ, ըստ Օրբելյանի, արդեն XI դարում վանքը պարսպակից երկու մուտք է ունեցել. մեկը՝ արևմուտքից, որի վրա հիշյալ դարի առաջին կեսին երկրորդ Հովհաննես եպիսկոպոսը կամարակապ դարպաս ու Սբ. Կարապետին նվիրված զույգ խորաններ է կանգնեցրել, իսկ մյուսը՝ պարսպի արևելյան հատվածում, երբ նույն դարի երկրորդ կեսին, ի մասնավորի՝ 1087 թ., Գրիգոր եպիսկոպոսը դարձյալ գոյություն ունեցող մուտքի վրա կամարակապ դարպաս, հյուսիսից պարսպակից թաղակապ տապանատուն-եկեղեցի, իսկ այս երկուսի վերնահարկում գմբեթավոր Սբ. Աստվածածին եկեղեցին է կառուցել: Պետք է արձանագրենք, որ նշված մուտքերից արևմտյանը՝ իր զույգ խորաններով, չի պահպանվել և, ըստ ամենայնի, անվտանգության նպատակով փակվել է դեռևս Գրիգոր եպիսկոպոսի օրոք, երբ վանքի հիմնական մուտք է դարձել արևելյան դարպասը:

XIX դարավերջին ազգագրագետ Երվանդ Լալայանը Տաթևի վանքը նկարագրելիս նշում է, որ այն «շրջապատված է հաստ պարսպով, որ ունի չորս աշտարակ և մի մեծ դարպաս … սրանց հանդեպ, դարպասի մոտ, պարսպին կից բարձրանում է Սբ. Աստվածածին երկհարկանի մատուռը»[21]: Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանը ևս Սբ. Աստվածածին փոքր եկեղեցին կառուցված է համարում կամարակապ հարկաբաժնի վրա, որի «տակով է վանքի անցուդարձը կատարվում, երբ պարսպի գլխավոր դռնից ներս են մտնում»[22]: Ի տարբերություն իր նախորդների՝ Արտակ եպս. Սմբատյանը պարսպապատը նկարագրում է բարձր պատերով և երեք մեծ բուրգերով, որոնց վրա քարե դիտարան-անցքեր էին բացել՝ անհրաժեշտության դեպքում թշնամիներից պաշտպանվելու և հակահարված տալու համար[23]: Գրիգոր եպիսկոպոսի օրոք իրականացված շինարարական աշխատանքներից նա հատկանշում է կամարակապ նոր դարպասին կից երկու եկեղեցիների կառուցումն իբրև մեկը մյուսի շարունակություն, որը, ինչպես տեսանք, ըստ ճարտարապետական հորինվածքի՝ բնավ այդպես չէր: Մ. Հասրաթյանի կարծիքով՝ վերդարպասյա եկեղեցիները բնորոշ են հատկապես հունադավան վանքերին, իսկ մեզանում լավ զուգահեռ է Կարբիի Սբ. Աստվածածին եկեղեցու արևելյան դարպաս-եկեղեցի-զանգակատան հորինվածքը, որի աղոթասրահը դարձյալ վեր է խոյանում կամարակապ դարպասի վրա: Պարզապես այս դեպքում վերին ու ստորին հարկերն ընդհանուր միասնության մեջ են[24]:

Վերոբերյալ աղբյուրներից պարզ է դառնում, որ X դարասկզբին Հովհաննես եպիսկոպոսի կառուցած պարսպապատը, ըստ էության, հիմնանորոգվել է նախ «երկրորդ» Հովհաննես, ապա Գրիգոր եպիսկոպոսների օրոք՝ XI դ. առաջին և երկրորդ կեսերին, երբ պարսպապատի արևմտյան ու արևելյան մուտքերի վրա կամարակապ դարպասներ են կանգնեցվել՝ կից խորան-եկեղեցիներով:

---

[21] Լ ա լ ա յ ա ն. 2021, 28:

[22] Տ է ր-Մ ո վ ս ի ս ե ա ն. 1938, 37:

[23] Ս մ բ ա տ յ ա ն ց. 1930, 298:

[24] Հ ա ս ր ա թ յ ա ն. 2017–2018, 68: Վերդարպասյա եկեղեցիների մասին առավել մանրամասն տե՛ս С е д о в. 2009, 544–584.

Հետագա դարերում, մասնավորապես՝ XIII, XVII–XIX դդ. և 1931 թ. Սյունիքի ավերիչ երկրաշարժից հետո՝ 1970–1980-ական թվականներին, վանքի շինարարական փուլերով պայմանավորված, պարսպապատերը նորոգվել-վերակառուցվել են, բացառությամբ՝ արևելյան հատվածի, որի հիմնաշարը, մասամբ նաև՝ ներկառուցված փոքր աղբյուրը, վերաբացվեցին 2014–2015 թթ. հնագիտական պեղումներից հետո[25] *(նկ. 4): Ի դեպ, մեծ հավանականությամբ, պարսպապատի երրորդ աշտարակը գտնվել է արևելյան հատվածի գրեթե կենտրոնում: Պեղումներից հետո վերաբացվեց նաև հյուսիսային պարսպապատից՝ 1875 թ. բացված մուտքը, որը, չգիտես ինչու, հայտնի է դարձել իբրև վանքի հիմնական՝ հին մուտք*[26]*:*

Նկ. 4. Վանքի արևելյան պարսպապատը և ներկառուցված փոքր աղբյուրը պեղումներից հետո (լուս.՝ հեղինակի, 2015 թ.):

Վանքի պարսպակից հյուսիսային մուտքն ու աղբյուրը

Պարսպապատի հյուսիսային՝ ներկայիս գործող մուտքը, ինչպես նշեցինք, բացվել է շատ ավելի ուշ՝ XIX դ. երկրորդ կեսին, մասնավորապես՝ 1875 թ., վանքի առաջնորդ Ստեփանոս վարդապետ (հետագայում՝ եպիսկոպոս) Մխիթարյանցի (1873–1876 թթ.) նախաձեռնությամբ: Դեպքերին գրեթե ժամանակակից Արտակ եպիսկոպոսն այս մուտքի գոյությունը հետևյալ կերպ է պատճառաբանում. «Ստեփաննոս եպիսկոպոսը 1875 թվին մի նոր դարվազայ (դարպաս – Ա. Հ.) է բաց անում հիւսիսային պարսպի մէջ տաւարի եղ ու

---

[25] Melkonyan, Harutyunyan, Davtyan. 2017, 308. *Պեղումներն իրականացվել են «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակներում: Նախ պեղվել է հյուսիսային պարսպապատի արտաքին՝ աշտարակներին կից և մուտքի հատվածները, այնուհետ՝ մուտքի վերածված աղբյուրի շենքը, վանքի արևելյան պարսպապատը, հին գավիթն ու հարավային գավիթ-սրահը (արշավախմբի ղեկավար՝ պ. գ. թ. Հ. Մելքոնյան, անդամներ՝ պ. գ. թ. Ա. Հարությունյան, Դ. Դավթյան):*

[26] *Այս առիթով «Սյունյաց երկիր» թերթի պաշտոնական կայքում վերջերս հրապարակվեց մի նյութ, որի հեղինակները թեև իրավացիորեն ժխտում են պարսպակից հյուսիսային մուտքի նախնական՝ հին լինելը, սակայն «զարմացած են» որոշ իրողությունների վրա, իսկ, որ ցավալին է, հնագիտական պեղումներով փաստագրված արդյունքները կոչում են «փորփրելով ինչ-որ բաներ հայտնաբերել» (Ռ. Հարությունյան, Դ. Հարությունյան. 2023):*

մուտքի համար, որպէսզի վանքի գլխաւոր մուտքը անասուններէ աղբից ազատ լինի: Բայց որովհետեւ այդ դռնով մի շարք գողութիւններ են կատարւում, ուստի եւ յետագայում քարով բոլորովին շարում են եւ այդ մուտքը միանգամայն փակում»[27]: Ասենք, որ 1931 թ. ավերիչ երկրաշարժից հետո մուտքը բացել, իսկ 1970–1980-ականների վերականգնման աշխատանքներից հետո դարձյալ փակել են և վերաբացել միայն 2014–2015 թթ. հնագիտական պեղումներից հետո (նկ. 5):

Նկ. 5. Տաթևի վանքը և հյուսիսային մուտքը 1931 թ. երկրաշարժից հետո (լուս.՝ Գ. Գրիգորյանի արխիվից, 1960-ական թվականներ):

Հետաքրքիրն այն է, որ Ստեփանոս վարդապետը նորաբաց մուտքի համար օգտագործել է վանքի աղբյուրի կամարակապ շենքը, որի նմանօրինակը գտնվում է Տաթև գյուղի սկզբնամասում: Այս վերջինի հետնապատին՝ արտաքուստ պահպանված ընդարձակ արձանագրության համաձայն՝ այն կառուցվել է 1745 թ. Սյունյաց առաջնորդ, ծագումով տաթևացի Հովհաննես վարդապետ Ղալամյանցի (1867–1870, 1879–1884. 1885–1886 թթ.) նախաձեռնությամբ. «Շինեցաւ մարաքըս եւ թաւլաս (ախոռը – Ա. Հ.), աղբուրս ... շինեցաւ դաթեւացի Ղալամանց տէր Գրիգորի թոռ, տէր Պաղդասարի որդի Սունեաց եպիսկոպոս Օվանէս վարդապետին ... թվին ՌՃՂԴ (1745)»[28] (նկ. 6):

Մենք գրեթե կասկած չունենք, որ այդ նույն ժամանակաշրջանում է կառուցվել նաև վանքամիջյան աղբյուրը՝ ճարտարապետական նույն ոճով ու համաչափություններով[29]: Ջուրը բերվել է Կաքավասարից[30] փողրակներով, որոնց մնացորդներն ի հայտ եկան պեղումների ընթացքում՝ հյուսիսային

---

[27] *Սմբատեան. 1930, 325:*

[28] *Բարխուդարյան. 1960, 34:*

[29] *Աղբյուրի կառուցումը երբեմն վերագրվել է նաև ոմն Գրիգոր եպիսկոպոսի (Զոհրաբյան, Միրզոյան. 2008, 24), որն ակնհայտ շփոթմունք է վիմագրում հիշատակված տեր Գրիգորի հետ, որն իրականում Հովհաննես վարդապետի պապն էր:*

[30] *Կաքավասարը սահմանագիծ է եղել Սյունյաց Ծղուկ և Շահապոնք գավառների միջև: Լեռան արևմտյան լանջերից են բխում հայտնի Կաքավաղբյուրի ջրերը (Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան. 1991, 77):*

պարսպապատի արտաքին կողմում, ինչպես նաև՝ վանքի ներքին բակում: Ավելին, վանքի կամարակապ աղբյուրի շենքի մեջ բացվեց ևս մի կարաս՝ կից ջրատար կավե փողրակներով: Պարզվեց, որ կարասը երբեմնի ջրաբաշխիչ համակարգի մասն է եղել, որի մեջ ջուրը կուտակվել-զտվել ու կցված փողրակներով բաժանվել է երկու ուղղությամբ՝ մուտքին կից այժմյան աղբյուրի



Նկ. 6. Գյուղամիջյան աղբյուրի շենքը և վիմագրի գրչանկարը, 1745 թ. (լուս. և գրչ.՝ հեղինակի, 2021 թ.):

և երբեմնի գավթի առջևով դեպի հարավ՝ սեղանատուն հոսելով (փողրակներն ի հայտ եկան պեղումների ընթացքում)[31]*: Մուտքի վերականգնման աշխատանքներից հետո որոշվել է ջրաբաշխիչ համակարգը ևս մասնակի վերականգնել և ցուցադրել ապակե ծածկի տակ՝ ի տես այցելուների (ճարտ.՝ Ա. Գրիգորյան, նկ. 7, 8):*



Նկ. 7, 8. Մուտքի վերածված աղբյուրի շենքի ներսում հայտնաբերված ջրբաժան կարասը (լուս.՝ Տ. Իսահակյանի և հեղինակի, 2017 թ.):

Ստ. Օրբելյանի Պատմության՝ փարիզյան երկհատոր (1858 թ.) և թիֆլիսյան (1910 թ.) հրատարակությունների վերջում կցվել է Սյունյաց առաջնորդների

[31] Melkonyan, Harutyunyan, Davtyan. 2017, 307–308.

«Շարակարգութիւն ...» խորագրով հավելվածը, ուր իրենց արժանի գործերով համառոտ հիշատակված են Հովհան Որոտնեցուց մինչև Մարտիրոս արք. Սյունեցին (1377–1830 թթ.) գահակալած առաջնորդներից քանը[32] (Նկ. 9–11): Վերջինիս՝ Մարտիրոս արքեպիսկոպոսի հիշարժան գործերից վկայված է նաև Կաքավասարից բերված աղբյուրը երեսունհինգ տարի խափանված



Նկ. 9–11. Ձեռագիր հիշատակություններ վանքամիջյան աղբյուրի նորոգման վկայությամբ, XIX դար (ՄՄ 6271, 351բ, 352բ, 353բ):

մնալուց հետո նորոգելու և վանքը կրկին ջրով ապահովելու մասին. «Կաքաւայ սարի աղբիւրին ջրի ճանապարհն, որ 35 ամաց հետէ քայքայեալ և ոչնչացեալ կայր, սրբազան տէրն մեր յոլով խարճագնացութեամբ (մեծ ծախսերով – Ա. Հ.) աղբիւրն եւ նորոգապէս բերել ի սուրբ վանս»[33]: Տարիներ անց վանքի աղբյուրը նորոգել է Ներսես Ե Աշտարակեցու ազգական Վարդան աղա Շիրմազանյանցը, ով նախքան Տաթևում պաշտոնավարելը (1851–1857 թթ.), Սբ. Էջմիածնի Սինոդի Թարգմանն էր: Հիշատակագիրը նրան բնութագրում է իբրև եռանդուն ու գործունյա անձ, որի ջանքերով «վանքի աղբիւրը Կաքավասարից սկսած մինչև վանքը գրեթէ նորոգվում [է]...»[34]: Ձեռարական հաջորդ հիշատակությունն արդեն Ստեփանոս վարդապետ Մխիթարյանցի անվան հետ է կապված, ով, ըստ էության, 1875 թ. աղբյուրի կամարակապ շենքի հետին պատը բացել, մուտք է դարձրել, իսկ աղբյուրը տեղափոխել է այժմյան տեղը՝ նախկին կամարակապ շենքին կից. «Մխիթարեանը շինում է հիւսիսային կողմի նոր դարբասը, նորոգում է նոյն թուականումս վանքի աղբիւրը»[35] (Նկ. 12, 13):

[32] Այդ հավելվածն իրականում Տաթևի «Քոթուկ»-ի մասն է. Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի (ՄՄ) 6271 ձեռագրում այն հետագայում լրացվել է, մասնավորապես՝ հիշատակված են Հովհան Որոտնեցուց մինչև Ներսես վրդ. Մելիք-Թանգյանց (1377–1901 թթ.), (ՄՄ 6271, 344ա–52ա): Ստ. Օրբելյանի Պատմությանը կից քոթուկային բնույթի հավելվածն արտագրվել է նաև հետագայի մի շարք ընդօրինակություններում (հմմտ. ՄՄ 1488, 213ա–230բ, ՄՄ 2868, 130ա–138ա, ՄՄ 2869, 225ա–236ա, ՄՄ 2924, 153ա–160բ):

[33] ՄՄ 6271, 351բ, Օ ր բ է լ ե ա ն. 1910, 542: Անխոս, ստվար միաբանություն ունեցող Տաթևի վանքը, որը գրեթե միշտ գործել է, ավելի վաղ ապահովված է եղել ջրով: Հայտնի է՝ Որոտանի կիրճում՝ գետի մյուս ափին, քարե կամարակապ աղբյուր է եղել, որին տեղացիները հենց Կամար են ասել: Գյուղացիները խմելու ջուրն այստեղից են տարել (Պ ո ղ ո ս յ ա ն. 2011, 215):

[34] ՄՄ 6271, 352բ:

[35] ՄՄ 6271, 353աբ:

Ստեփանոս վարդապետի օրոք կատարված շինարարական աշխատանքների առիթով նաև վիմագիր է կազմվել, որի բնօրինակը թեև մեզ չի հասել, սակայն այն ժամանակին ընդօրինակել և վերծանել է Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանը. «Յամի Տ(եա)ռն 1875, աշխատութ(եամ)բ Ստեփաննոս վարդապետի Մխիթարեանց Ալէքսանդրապօլցոյ, շինեցաւ աղբիւրս»[36]: Աղբյուրի վերակառուցումից հետո վիմագիրը վերստին փորագրվել է իր ենթադրյալ տեղում (ճարտ.՝ Ա. Գրիգորյան, նկ. 14):

Նկ. 12. Կամարակապ մուտքի վերածված վանքի աղբյուրի շենքը, կից նոր աղբյուրը (լուս.՝ հեղինակի, 2021 թ.):

Նկ. 13. Ներկայում գործող պարսպակից հյուսիսային մուտքը (լուս.՝ հեղինակի, 2021 թ.):

Նկ. 14. Ստեփանոս վրդ. Մխիթարյանցի կառուցած աղբյուրի վիմագիրը (կրկնօրինակ, լուս.՝ հեղինակի, 2018 թ.):

Անշուշտ, միջնադարյան գրավոր աղբյուրներում վկայված շինացաւ բառը միշտ չէ, որ ուղիղ իմաստով է կիրառվում, այլ կարող է հիշատակված լինել նորոգել, վերաշինել նշանակությամբ, ինչը խնդրո առարկա վիմագրում կարելի է անգամ բացառել: Ակնհայտ է, որ կատարված աշխատանքը, այն է՝ մուտքի հին աղբյուրը վերափոխել և կից կառուցել նորը, շինարարություն է, այլ ոչ հնի նորոգում կամ վերաշինում: Ուստի բառիս հիշատակումը վիմագրում ավելի քան տեղին է: Չնայած այս ամենին՝ վերոհիշյալ Քոթուկի հիշատակագրություններից մեկում, ինչպես տեսանք, գրիչն օգտագործել է դար-

[36] *Տէր-Մովսիսեան. 1938, 52,* Melkonyan, Harutyunyan, Davtyan. 2017, 307.

պասի դեպքում չինել, աղբյուրի դեպքում՝ նորոգել բառերը, որոնք թյուրիմացության տեղիք են տալիս, քանի որ մեզ արդեն պարզ է 1875 թ. Ստեփանոս վարդապետի նախաձեռնությամբ իրականացված աշխատանքների բուն էությունը, այն է՝ արդեն գոյություն ունեցող աղբյուրի շենքը վերափոխել մուտքի, իսկ աղբյուրը կառուցել հնին կից՝ ի հիմանց: Պակաս կարևոր չէ նաև հիշատակագրության մեջ դարբասին նախորդող նոր բառի վկայությունը, որն ինքնին ենթադրում է հին մուտքի գոյությունը: Ստացվում է՝ մոտավորապես XVIII դ. կեսերին կառուցված վանքի աղբյուրի կամարակապ շենքն ավելի քան մեկ դար անց՝ 1875 թ., վերափոխվել է պարսպապատի հյուսիսային մուտքի, որին կից կառուցվել է նոր աղբյուրը: Երկուսն էլ վերականգնվեցին վանքի վերջին տարիների շինարարական աշխատանքներից հետո՝ ընդգծելով վանքի ոչ թե նախնական, այլ XIX դ. նկարագիրը:

Եզրակացություն

Պատմագիր, Սյունյաց մետրոպոլիտ Ստ. Օրբելյանի հաղորդմամբ՝ Տաթևի վանքը պարսպապատվել է դեռևս X դարասկզբին, Սյունյաց առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի նախաձեռնությամբ: Ըստ մատենագրական ու վիմագրական աղբյուրների՝ XI դարի առաջին և երկրորդ կեսերին՝ Հովհաննես և Գրիգոր եպիսկոպոսների նախաձեռնությամբ պարսպակից արևմտյան ու արևելյան մուտքերի վրա կամարակապ դարպասներ են կառուցվել՝ կից խորաններով և եկեղեցիներով: Սրանցից արևմտյան մուտքն իր Սբ. Կարապետի անվանակիր խորաններով մեզ չի հասել. փոխարենը վերջերս վերականգնվեց 1087-ին կառուցված հյուսիսային պարսպապատին կից արևելյան մուտքը՝ կից թաղակապ ենթադըրյալ եկեղեցի-տապանատնով և վերդարպասյա գմբեթավոր Սբ. Աստվածածին եկեղեցով:

2014–2015 թթ. հնագիտական պեղումներից հետո վերաբացվեց վանահայր Ստեփանոս վրդ. Մխիթարյանցի նախաձեռնությամբ 1875 թ. բացված հյուսիսային մուտքը, որի համար կամարակապ միջանցիկ սրահ էր ծառայել վանքի աղբյուրի երբեմնի շենքը: Սա գյուղամիջյան աղբյուրի նմանօրինակն է և, ըստ ամենայնի, կառուցվել է միևնույն ժամանակաշրջանում՝ 1745 թ., Սյունյաց առաջնորդ Հովհաննես վրդ. Ղալամյանցի նախաձեռնությամբ: Երբեմնի աղբյուրի շենքը մուտք դարձնելով՝ Ստեփանոս վարդապետը ջուրը տեղափոխել է նորաբաց մուտքին կից՝ նոր աղբյուրի համար կառուցելով չափերով անհամեմատ փոքր աղբյուր-հուշարձան: Այս առիթով կազմված 1875 թ. վիմագիրը ժամանակին վերծանել ու հրատարակել է Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանը:

Արսեն Հարությունյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչի ժ/պ, առաջատար գիտաշխատող, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ միջնադարյան գրավոր-մշակութային ժառանգություն: Հեղինակ է 10 մենագրության և ավելի քան 90 հոդվածի: ars.vimagraget@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրիգորյան Գ. 2007, Վահանավանք (պատմահնագիտական ուսումնասիրություն), Երևան, «Զանգակ-97», 192 էջ:

Դիվան հայ վիմագրության. 1960, Բարխուդարյան Ս. (կազմող), պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 239 էջ:

Զոհրաբյան Է., Միրզոյան Հ. 2008, Գորիսի հանրագիտարան, Երևան, ՎՄՊ-ՊՐԻՆՏ, 452 էջ:

Լալայան Ե. 2021, Երկեր, հ. 4, կազմել և հրատարակության է պատրաստել՝ Ս. Հոբոսյանը, Երևան, ՀԱԻ հրատ., 692 էջ:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, h. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:

Հասրաթյան Մ. 2002, Վանք. – «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1076 էջ:

Հասրաթյան Մ. 2017–2018, Զարգացած միջնադարի հայկական երկհարկ, գմբեթավոր եկեղեցիները. – «Հուշարձան» տարեգիրք, h. ԺԲ–ԺԳ, Երևան, «Հուշարձան» հրատ., էջ 53–74:

Հարությունյան Ա. 2022, Տաթևի վանքի շինարարական փուլերը (ըստ երկրաշարժերի տարեգրության). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 250–267:

Հարությունյան Ռ., Հարությունյան Դ. 2023, Մի քանի փաստ կապված Տաթևի վանքի հյուսիսային դարպասի և աղբյուրի հետ. – «Սյունյաց երկիր» (Կապան), 01. VI. 2023:

Հարությունյան Վ. 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս» պետ. հրատ., 632 էջ:

Ղաֆադարյան Կ. 1963, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 293 էջ:

Մաթևոսյան Կ. 2017, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, «Մուղնի» հրատ., 244 էջ:

Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան. ձեռ. 6271. XIV դար, Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն տանն Սիսական, 383+1 թ.:

Մնացականյան Ս. 1960, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 266 էջ:

Մնացականյան Ս. 1982, Հայկական վաղմիջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 203 էջ, 63 թ. նկ.:

Նալբանդյան Գ., Հարությունյան Ա., Հակոբյան Ա. 2021, Բազարանի Շուշանավանքը, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 256 էջ:

Պետրոսյան Հ. 1988, Գառնին IX–XIV դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 165 էջ, 29 աղ.:

Պողոսյան Ս. 2011, Տաթևի համառոտ պատմություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 288 էջ + 12 էջ ներդիր:

Սահինյան Ա. 1983, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 262 էջ, 68 թերթ նկ.:

Սմբատեան Ա. եպս. 1930, Համառօտ պատմութիւն Տաթեւի վանքի. – «Տաթեւ» տարեգիրք գրականութեան եւ արուեստի, Զ. տարի, Հալէպ-Սուրիա, տպ. «Արաքս», էջ 276–350:

Տէր-Մովսիսեան Մ. արք. 1938, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինությունները, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 151 էջ:

Օրբէլեան Ստ. 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպ. Ն. Աղանեանցի, 618 էջ:

Седов Вл. 2009, Новый Иерусалим в надвратных храмах Византии и Древней Руси. – Новые Иерусалимы. Иеротопия и иконография сакральных пространств. М., «Индрик», с. 544–584.

Халпахчьян О. 1980, Архитектурные ансамбли Армении (8 в. до н. э. – 19 в. н. э.). М., «Искусство», 480 с.

Якобсон А. 1947, Из истории армянской средневековой архитектуры. III. Татевский монастырь. – «Советская археология», т. IX. М.–Л., Изд. Академии наук СССР, с. 303–328.

Melkonyan H., Harutyunyan A., Davtyan D. 2017, Excavations at Tatev Monastery in 2014–2015. – “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, Vol. XI, Issues 1–2. Yerevan-Oxford, Association for Near Eastern and Caucasian studies, pp. 305–320.

ВРЕМЯ СООРУЖЕНИЯ ВХОДОВ У ОГРАДЫ И РОДНИКА ТАТЕВСКОГО МОНАСТЫРЯ

АРСЕН АРУТЮНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Татевский монастырь, Степанос Орбелян, старые и новые входы у ограды, сооружение родника, археологические раскопки, эпиграфическая надпись, рукописное упоминание.

По сообщению историографа Степаноса Орбеляна, вокруг Татевского монастыря была воздвигнута крепостная ограда в начале X века, по инициативе духовного предводителя Сюника епископа Ованеса. В первой и второй половине XI века, по инициативе епископов Ованеса (1006–1058) и Григория (1058–1116), над прилегающими к ограде западным и восточным входами были построены арочные ворота – с апсидами и церквями. Западный вход со своими апсидами Св. Карапета до нас не дошел, но в 1980-е годы был реставрирован восточный вход у северной ограды – вместе с однонефной и надворотной церквями Св. Богородицы (построены в 1087 г.).

После археологических раскопок 2014–2015 гг. был восстановлен открытый в 1875 г. по инициативе игумена монастыря архимандрита Степаноса Мхитарянца (1873–1876) северный вход, для которого арочным сквозным залом служило бывшее сооружение монастырского родника.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

Оно является подобием расположенного в центре села родника и, по всей вероятности, было построено в тот же период – в 1745 г., по инициативе духовного предводителя Сюника архимандрита Ованеса Каламянца (1867–1870, 1879–1884, 1885–1886). Сделав входом бывшее сооружение родника, архимандрит Степанос перенес воду к новооткрытому входу – построив для нового родника несравнимо меньший по размерам родник-памятник. Составленную по этому поводу в 1875 г. эпиграфическую надпись расшифровал и опубликовал архиепископ Месроп Магистрос Тер-Мовсисян.

Проблема существования и датировки входов косвенно проливает свет на дальнейшую судьбу прилегающего к ограде монастырского родника, который сегодня видоизменился в арочный зал входа, временно закрыв настоящий и основной вход монастыря – восточные ворота.

Арсен Арутюнян – к. и. н., ведущий научный сотрудник и исполняющий обязанности заведующего отделом эпиграфики Института археологии и этнографии НАН РА, старший научный сотрудник отдела кодикологии Матенадарана им. М. Маштоца. Научные интересы: армянское средневековое письменно-культурное наследие. Автор 10 монографий и более 90 статей. ars.vimagraget@gmail.com

THE PERIOD OF CONSTRUCTION OF THE ENTRANCES AT THE FORTIFICATION AND SPRING OF TATEV MONASTERY

ARSEN HARUTYUNYAN

S u m m a r y

Keywords: Tatev Monastery, Stepanos Orbelyan, old and new entrances of the fortification, construction of the spring, archaeological excavations, epigraphic inscription, manuscript mention.

According to historiographer Stepanos Orbelyan, a fortification was erected around Tatev Monastery at the beginning of the 10th century on the initiative of the spiritual leader of Syunik, Bishop Hovhannes (1006–1058). In the first and second halves of the 11th century, on the initiative of Bishops Hovhannes and Gregory (1058–1116), arched gates with apses and churches were built over the western and eastern entrances adjacent to the fortification. The western entrance with its apses of St. Karapet did not reach us, but in the 1980s, the eastern entrance near the northern fortification was restored together with the one-nave and over the gate churches of Holy Mother of God (built in 1087).

After the archaeological excavations in 2014–2015, the northern entrance, opened in 1875 on the initiative of the abbot of the monastery Archimandrite Stepanos Mkhitaryants, was restored, for which the former spring building of the monastery served as an arched hall. It is similar to the spring located in the center

of the village and, most likely, it was built in the same period - in 1745, on the initiative of the spiritual leader of Syunik, Archimandrite Hovhannes Kalamyants (1867–1870, 1879–1884, 1885–1886). By making the former structure of the spring an entrance, Archimandrite Stepanos moved the water through the newly opened entrance, building an incomparably smaller spring-monument for the new spring. The epigraphic inscription compiled on this occasion in 1875 was deciphered and published by Archbishop Mesrop Magistros Ter-Movsisyan.

The problem of the existence and dating of the entrances indirectly sheds light on the future fate of the monastery spring adjacent to the fortification, which today has changed into an arched entrance hall, temporarily closing the real and main entrance of the monastery – the eastern gates.

Arsen Harutyunyan – PhD in History, Leading Researcher and Acting Head of the Department of Epigraphy of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Senior Researcher of the Matenadaran after Mesrop Mashtots. Scientific interests: Armenian medieval written and cultural heritage. Author of 10 monographs and more than 90 articles. ars.vimagraget@gmail.com

ՀՏԴ 726.5.04(479.25)

Doi:10.54503/0135-0536-2023.3-246

ԽԱՐԲԵՐԴԻ «ՎԻՇԱՊԱՅԻՆ ՔԱՐԸ» ԵՎ ԴՐԱ ՄՇԱԿՈՒԹԱԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ*

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ, ՍԱԱԿ ՏԱՐՈՆՑԻ, ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհ, Ծոփք, Խարբերդ, վիշապ, քարացման առասպելույթ:

Նախաբան

Մշակութաբանական ուսումնասիրությունները վաղուց ի վեր ցույց են տվել, որ որոշակի տարածաշրջանի բնորոշ ավանդական պատկերացումները՝ կապված դրա աշխարհագրական տեղանքի (ռելիեֆ), բնական պաշարների, բուսական և կենդանական աշխարհների հետ, բավական կայուն են ու հարատևում են անգամ տվյալ տարածաշրջանի կրոնական, լեզվական և էթնիկ պատկերների փոփոխության պարագայում: Սա խոսում է հօգուտ այն մոտեցման, որ անդրազգային՝ տեղական պատմույթները (նարատիվներ) հաճախ ունենում են խոր արմատներ և չեն ենթարկվում նոր լեզվական կամ աշխարհայացքային արմատական ազդեցությունների, այլ պարզապես «կոսմետիկ» ձևափոխություններ են կրում՝ «հարմարվելով» նոր պայմաններին: Տվյալ դեպքում ուսումնասիրել ենք բնական մի ժայռաբեկոր, որի շուրջ հյուսված առասպելական պատկերացումները լավագույնս երևան են հանում պատմամշակութային տարբեր շերտերի այս ժառանգականությունն ու հարատևությունը: Նշված ժայռաբեկորը կամ ապարային գոյացությունը գտնվում է Արածանի (Արևելյան Եփրատ) գետի ստորին հոսանքի ձախ կողմում՝ ժամանակակից Թուրքիայի Էլազըղ (պատմական Մեզիրե) քաղաքի Հարփութ արվարձանում, որը պատմական Խարբերդ քաղաքն է՝ երբեմնի Մեծ Հայքի Ծոփք նահանգում: Նորահայտ այս հուշարձանն ու դրան առնչվող զրույցներն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ՝ հայկական մշակութային ժառանգության համատեքստում:

Տեղադրությունն ու ավանդազրույցները

Հարփութից Էլազըղ տանող ճանապարհին՝ Խարբերդի պատմական թաղամասից 2 կմ դեպի արևելք, Գյոլու կոչվող խաղողի այգիների ճանապարհի եզրին, աղբյուրներով հարուստ տեղանքում հայտնի է բնական հսկա մի ժայ-

** Ներկայացվել է 15. VIII. 2023 թ., գրախոսվել է 07. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.: Հոդվածը գրվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21AG-6A080 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում: Շնորհակալություն ենք հայտնում արևելագետ, պ. գ. դ. Երվանդ Գրեկյանին և ազգագրագետ Ռաֆիկ Գաբրիելյանին՝ օգտակար գրականություն տրամադրելու համար:*

ռաբեկոր՝ գլխամասն ու միջնամասն օղում վեր ցցված, ասես նայում է Խարբերդին (Նկ. 1–4): Կիսով չափ հողում թաղված ժայռը հիշեցնում է ձուկ կամ օձ, որոնց կողմնային երկու փոքր ելուստները կարծես նրանց ձագերը լինեն: Տեղացի տարեցներն այս ժայռն անվանում են թուրքերեն “ejderha taşı”՝ *«վիշապային քար»:*



Նկ. 1–4. Խարբերդի «վիշապային քարը». ցուցանակները և պահպանական գոտին:

2018 թ. Էլազըղի քաղաքապետարանը, հանրահռչակման նպատակով, հողից մաքրել և պահպանական գոտի է դարձրել հրային ապար / լավային հոսք ներկայացնող ժայռը՝ իր 520 մ^2 մակերես գրավող միջավայրով: Տեղադրվել են ցուցանակներ (Նկ. 1–2), որոնցում քաղաքապետարանը նշում է՝ համալիրն արտացոլում է Խարբերդի բանավոր մշակութային հարուստ ժառանգությունը: Մի շարք հայտնի լրատվամիջոցներ (“Hürriyet”, “Milliyet”, “Anadolu Ajansı”, “Habertürk”, “Kulturportal.gov.tr” *և այլն) անդրադարձ են*

կատարել այս բնական համալիրին՝ չեշտելով զբոսաշրջության զարգացման համար դրա կարևորությունը[1]*: «Վիշապային քարն» արտացոլվել է նաև գիտական*[2] *և գեղարվեստական գրականության մեջ. դրա մոտիվներով մանկական գեղարվեստական գիրք է գրվել*[3]*:*

Նոր ժամանակներում տեղացիները նշված բնական հուշարձանի մասին պատմել են երկու ավանդազրույց, որոնց բովանդակությունը հայտնի է թուրքական պաշտոնական և տեղական մամուլից (“Milliyet”, “Habertürk”, “Harput. web.tr”)*, սակայն դրանց սկզբնաղբյուրը (գրանցման վայր ու ժամանակ, բանասաց և բանահավաք), ցավոք, չեն հիշատակվում: Առաջին ավանդազրույցի համաձայն՝ շատ ժամանակներ առաջ այն եղել է դիվային վիշապ: Իր ձագերի հետ նա հաճախ այցելել է Խարբերդ՝ խժռելով /կուլ տալով մարդկանց: Սարսափած բնակիչները դիմում են իմաստուն ու մաքրասիրտ Ֆեթհի Ահմեթ Բաբային և աղաչում, որպեսզի նա, Աստծուն ուղղված աղոթքների միջոցով, իրենց փրկի վիշապից: Ֆեթհի Ահմեթ Բաբան օրեր շարունակ, ձեռքերը դեմքին հպելով, աղոթում է՝ ասելով. «Ո՜վ Տեր, քարկոծի՛ր այս վիշապին, որպեսզի մարդիկ կարողանան ապրել»: Աստված ընդունում է սուրբ մարդու աղոթքը և վիշապին ու իր ձագերին քարացնում է Խարբերդի մոտ: Ժողովուրդը հավատում է, որ քիչ հեռու գտնվող և մատուռի վերածված սրբի գերեզմանը հրաշքներ է գործում մինչ օրս*[4]*:*

Երկրորդ ավանդազրույցի համաձայն՝ հղի մի կին գնում է աղբյուր՝ ջրի, և հանկարծ հանդիպում է վիշապին: Վերջինիս տեսնելով՝ կինն ասում է. «Աստվա՛ծ, վերցրու իմ արյունը կամ քարացրու վիշապին», որից հետո վիշապը քարանում է[5]*:*

«Վիշապային քարի» մշակութաբանական համատեքստը

Հանձին Խարբերդի «վիշապային քարի»՝ գործ ունենք բնական ժայռաբեկորի՝ լավային գոյացության հետ, որի հատվածները նման են ձկան կամ օձի, կողային և վերին մասերում կարող են մասամբ մշակված լինել, ունենալ փորվածքներ / առվակներ, սակայն, ընդհանուր առմամբ, խոսքը բնական քարի մասին է[6]*: Այս իմաստով՝ քննարկվող օբյեկտն առավելապես բնական հուշար-*

---

[1] *Համացանցային աղբյուր 1–11:*

[2] Kardaş. 2019, 205.

[3] Kabaklı. 2022.

[4] *Համացանցային աղբյուր 1, 5, 8, 9:*

[5] *Համացանցային աղբյուր 11: Սրան բովանդակությամբ մոտ է մեկ այլ ավանդազրույց, ըստ որի Խարբերդում մի վիշապ է ապրել, որն ամեն տարի Խարբերդից մի աղջկա է տարել՝ մարդկանց ջուր տալու փոխարեն: Երբ հերթը հասնում է Խարբերդի իշխանի երիտասարդ աղջկան, վերջինս, չցանկանալով զոհաբերվել վիշապին, աղոթում է Աստծուն. «Աստվա՛ծ իմ, քարացրու վիշապին՝ նրան ինձանով կերակրելու փոխարեն»: Աստված ընդունում է աղջկա աղոթքը և վիշապին վերածում քարերի սև կույտի: Այսօր Խարբերդի Բուզլուկ քարանձավ գնացողները կարող են տեսնել քարացած վիշապին (տե՛ս* Kardaş. 2019, 208*):*

[6] *Որոշ հեղինակներ բնական վիշապանման քարերը խառնում են «վիշապաքար» կոչվող մեգալիթյան կոթողների հետ (տե՛ս Գանձակեցի. 1982, 61-րդ ծանոթ., Եգանյան. 2011, 34–39): Իրականում, որպես հուշարձաններ, դրանք*

ճան է, որը նմանեցվելով առասպելական ամորֆ կամ պոլիմորֆ կենդանու՝ համապատասխանաբար նույնականացվել է բանավոր ավանդության և օնոմաստիկոնի մեջ: Նման բնական հուշարձանի ուղղակի զուգահեռներն են՝ ներկայիս ՀՀ տարածքում գտնվող Արդվի (Լոռու մարզ)[7] և Մեծ Սեպասար (Շիրակի մարզ)[8] գյուղերի «վիշապաձև» ժայռերը, որոնց մասին ևս նմանատիպ ավանդազրույցներ են պատմվում: Սակայն, ի տարբերություն վերջինների, որոնք ժայռային գոյացություններ են ապառաժի ուղղահայաց մակերեսին, Խարբերդի օրինակը հորիզոնական մակերեսի վրա է:

Եթե փորձենք վերլուծել հիշյալ ավանդազրույցներում արտահայտված «քար – վիշապ – խժռում / զոհաբերում – միջնորդող սուրբ – քարացում – աղբյուր / ջուր – աղջիկ / հարս / հղի կին – սրբի հրաշք պարգևող գերեզման /քարանձավ» իմաստաբանական բույլը, ապա ակնհայտ է՝ գործ ունենք քարացման առասպելույթի հետ, որը քաջ հայտնի է հայ բանահյուսության մեջ: Մասնավորապես, հայոց ավանդազրույցներում վիշապներին քարացնում են Սբ. Բարդուղիմեոսը, Սբ. Հովհան Օձնեցին և այլ սրբեր կամ սրբակենցաղ անձինք: Ընդ որում, քարացումը ծառայում է որպես կարևոր հիշատակ՝ տեղի ունեցած հրաշալի իրադարձության: Վիշապ քարացնողների՝ սրբավայր դարձած գերեզմանները կամ կից մատուռները հրաշքներ են գործում մինչ օրս[9]:

Հարկ է նշել, որ Խարբերդի մուսուլմանների մեջ կենցաղավարող ավանդազրույցներում ոչ թե բովանդակային, այլ մասնակի դրվագային տարբերություններ կան հայկական նյութի համեմատ: Այսպես, եթե հայկական ավանդազրույցներում հարսն է քարանում՝ փրկվելով վիշապից[10], ապա այստեղ հարսը միջնորդում է, որ քարանա վիշապը: Ինչ վերաբերում է սրբի կերպարին, ապա Խարբերդի տարբերակում քրիստոնեական սուրբը փոխակերպվում է սուֆիական սրբի: Տարբեր ժողովրդական պատումներում հանդիպող Ֆեթհի Ահմեթ Բաբան պատմականորեն փաստված անձ է, որը ծնվել է աֆղանական Բալխ քաղաքում XIII դ. կեսերին և եղել է սուֆիական մտածող Ալի Ռամիթանիի

իրար հետ կապ չունեն. վիշապաքարերը ոչ թե բնական ժայռաբեկորներ են, այլ մարդու կողմից կերտված կլոր քանդակներ (ուշագրավ է, որ Վարդան Արևելցին Սբ. Հովհաննես Օձնեցու՝ վիշապներին քարացնելու պատմության մեջ «քարացնել» բառի փոխարեն օգտագործում է «արձանացուցանել» բառը, որը գրաբարում նշանակել է հենց «քարացնել». Արեւելցի. 2000, 360–361): Այսուհանդերձ, ժողովրդական ստուգաբանությունը երկու տարբեր հուշարձանները կարող էր միացնել իրար՝ տալով դրանց ձկնաօձային հատկանիշներ և առնչելով հսկայի, տարերային վիշապի կամ ջրի հետ: Սույն հոդվածում Խարբերդի բնական հուշարձանն անվանում ենք «վիշապային քար»՝ թարգմանելով այն թուրքերենից: Նշենք, որ Արդվիի քարը հայտնի է «օձի պորտ» անվամբ (Լալայան. 2004, 203), սակայն հնագույն հիշատակումը «վիշապի պորտ» ձևով է (Գանձակեցի. 1982, 61):

[7] *Լալայան. 2004, 203:*

[8] *Եգանյան. 2011:*

[9] Симонян. 2015, 362–372; *Սիմոնյան. 2019, 412–425: Ներկայիս Թուրքիայի տարածքում տարածված քարացման առասպելների մասին հմմտ.* Oğuz, Ersoy. 2007*: Արևմտյան Հայաստանի շրջանների վերաբերյալ տե՛ս էջ 130–135:*

[10] *Հմմտ. Բոբոխյան. 2021, 20–35:*

գաղափարների հետևորդ: 1335 թ. իլխանական բանակի հետ հասել է Խարբերդ և քաղաքը գրավելու ընթացքում զոհվել: Նրա գերեզման-սրբավայրը գտնվում է Խարբերդից 1,5 կմ հեռավորության վրա[11]*:*

«Վիշապային քարի» առասպելաբանական համատեքստը

Տարբեր ժողովուրդների դիցաբանություններում վիշապը, թերևս, «ստորին առասպելաբանությունը» ներկայացնող էակներից ամենատարածված կերպարն է: Սյուժեների բազմազանությամբ և տարաբնույթ նկարագրություններով հանդերձ՝ վիշապային կերպարներն ամբողջ աշխարհում բնութագրվում են մեծաթիվ միանման հատկանիշներով: Նրանք ամենուր հանդես են գալիս որպես օդերևութաբանական (պտտահողմ, հրացոլք, ամպրոպ, փոթորիկ և այլն) ու բնական այլ գործընթացների (հրաբուխ, երկրաշարժ, լուսատուների խավարում և այլն) մարմնավորումներ, ուստի և ի սկզբանե պատկերանում են որպես որոշակի կայուն ձև չունեցող, բազմաձև ու բազմակերպարանք արարածներ, որոնց հիմնական գործառույթն ավերիչ տարերքն է, ինչն էլ, ամենայն հավանականությամբ, արտացոլված է վիշապ բառի ստուգաբանության մեջ[12]*:*

Զոոմորֆ պատկերագրության դարաշրջանում վիշապները սկսում են ներկայացվել իբրև սողունի կամ երկկենցաղի և այլ կենդանիների մարմնի մասերի համադրություններ: Հենց սողունն ու երկկենցաղը տրամաբանորեն պայմանավորում են վիշապների առնչությունը ստորերկրայքին, և, հետևաբար, տարբեր ժողովուրդների պատկերացումներում վիշապներն անմիջականորեն առնչվում են պտղաբերության ու ջրի պաշտամունքին՝ խորհրդանշելով իգականություն: Նախնական բոլոր պատկերացումներում, ըստ երևույթին, վիշապների բնակատեղին ջուրն է՝ ծովը կամ լիճը, որտեղից նրանք կարող են տեղափոխվել այլ վայրեր, աստիճանաբար բարձրանալ երկինք: Սակայն այստեղից էլ նրանք սպառնում են մարդկանց, ինչպես երևում է, օրինակ, մի ավանդազրույցում, որը 1965 թ. Գառնի գյուղից ծագումով մակվեցի բանասացը պատմել է հնագետ Գրիգոր Կարախանյանին. «Էստեղ չորսը խատ վիշապի քար կա՝ գնջլներ վրեն քցուկ: Ոնց որ օձը գա պառկի: Մեծերն ասում ին՝ վիշապ էրկնքից իջե, որ ժողովուրթը վերչացնե, ըդրա խամար աստվածությունը ըդրանց դարցրեր ա քար»[13]*: Հետաքրքրական է՝ զրույցում խոսքը չորս վիշապաքար կոթողների մասին է, որոնք հայտնաբերվել են Գեղամա լեռների ստորոտում՝ Աժդահա-յուրտ կոչվող արոտավայրում: Նշված ավանդազրույցը, կարծես, Խարբերդում գրանցված առաջին զրույցի համառոտված տարբերակը լինի:*

Նման մեկ այլ ավանդազրույց էլ գրանցվել է Սյունիքում՝ Սև լճի առնչությամբ. այստեղ երկնքից իջած վիշապը խմել է լճի կեսը, սակայն Աստծո հրամանով սարերը խոյացել են վեր՝ լճի մնացած կեսը հասցնելով մինչև երկինք, իսկ վիշապը, մնալով ներքևում, ցամաքել, ճաքճքել և ցրիվ է եկել[14]*: 1956 թ. Արենի գյուղում բանագետ Սարգիս Հարությունյանի գրանցած ավանդազրույցում Աստծուն փոխարինում է քահանան, որը սարի գագաթին կանգնած՝*

[11] Özbolat. 2013, 78.
[12] *Տե՛ս Դալալյան. 2019:*
[13] *Ղանալանյան. 1969, 60, № 161:*
[14] *Ղանալանյան. 1969, 79, № 214ա:*

աղոթքով քարացնում է վիշապին. վերջինս պատրաստվում էր կուլ տալ տեր-հոր աղջկան[15]: Խարբերդից հյուսիս-արևելք՝ Արածանիի աջ վտակ Քղիի արևելյան կողմում է գտնվել Աժդահա քարաժայռը, որի անունը, ըստ ավանդազրույցի, առաջացել է քարացած վիշապի մասին պատկերացումից. վերջինս ցանկանում էր խժռել ոչխարների հոտը, սակայն հովվի աղերսագին խնդրանքը լսելով՝ հոտի պահապան փիրը (սուրբը) քարացնում է վիշապին[16]:

Ըստ Արցախում պահպանված մի ավանդազրույցի՝ ժամանակին մի վիշապ, Քափաս լեռան վրայից վերցնելով հսկայական մի քարաժայռ, ցանկանում էր կործանել Գետաշեն գյուղը, սակայն Աստված բարկանալով՝ տեղնուտեղը ապառաժը շալակին քար է դարձնում վիշապին[17]: Նույն ավանդազրույցի մեկ այլ տարբերակում՝ վիշապը ցանկանում էր կնության առնել գետաշենցի մի աղջկա, սակայն ամպրոպային հերոս Պանտը նիզակահարում է վիշապին՝ նրան բևեռելով այն ժայռին, որը նա շալակած տանում էր[18]: Արդվիի ավանդազրույցում էլ Հովհան Օձնեցին է քարացնում երկու վիշապօձերին, ընդ որում նրանց պորտից աղբյուր է բխում[19]:

Խարբերդի հովտի պատմամշակութային նշանակությունը

Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհագրական և կլիմայական նույնական պայմաններով բնորոշվող Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանները, առնվազն նոր քարի դարից սկսած, սերտ առնչությունների մեջ են գտնվել՝ ունենալով համանման արժեհամակարգ և լինելով համապարփակ հաղորդակցական համակարգի մասնիկ: Այդ տարածքներում գոյություն ունեցած տարբեր տեղային մշակութային խմբերն իրենց բնորոշ հատկանիշներով (խեցեղեն, կացարանների ձևեր, կենսակերպ, աշխարհայացքի տարրեր և այլն) այդ արժեհամակարգի արտահայտության ձևերն են:

Լեռնաշխարհի ներսում, սակայն, կարելի է առանձնացնել երեք հիմնական պատմամշակութային ենթագոտի. 1. արևմտյան, որ ներառել է Վերին Եփրատի ավազանը (պատմական Ծոփք և Փոքր Հայք նահանգները), որին բնորոշ են եղել աշխույժ առնչություններ դեպի կենտրոնական Փոքր Ասիա ու հյուսիսային Սիրիա, 2. հարավային, որ ներառել է Վանից հարավ ընկած շրջանները (Աղձնիք և Կորդուք նահանգները), որին բնորոշ են եղել կապեր հյուսիսային Սիրիայի ու Միջագետքի ուղղությամբ, և 3. կենտրոնական-հյուսիսարևելյան (Այրարատ, Բարձր Հայք, Վասպուրական, Մոկք, Տուրուբերան, Տայք, Սյունիք, Ուտիք, Գուգարք, Արցախ, Փայտակարան, Պարսկահայք նահանգները), որին բնորոշ են եղել կապեր կովկասյան ուղղությամբ: Խարբերդի «ոսկեղենիկ» հովիտն եղել է առաջին գոտու առանցքային շրջանը[20]:

Ազգագրական և բանահյուսական տվյալները նույնպես խոսում են այս երեք ենթագոտիների արժեհամակարգի ընդհանրության և փոխկապակցվածության մասին: Դա արտահայտվում է, առաջին հերթին, աշխարհայացքային

15 Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1969, 52–53, № 136:
16 Հ ա լ ա ջ յ ա ն. 1960, 1249:
17 Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1969, 59, № 158:
18 Լ ա լ ա յ ա ն. 1988, 434–435:
19 Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1969, 62–63, № 168ա–բ:
20 Տե՛ս B o b o k h y a n. 2008.

իմաստաբանական բույլերի և կայուն բանաձևերի ընդհանրությամբ[21]: Հիշյալ ընդհանրության արտահայտչաձևերից մեկն է՝ վիշապի կերպարը, որն առկա է բոլոր երեք ենթագոտիներում՝ ավանդազրույցների, պատկերագրության ու զարդաձևերի, բնական կամ մարդաստեղծ հուշարձանների ձևով:

Եզրակացություն

Խարբերդի հովտի «վիշապային քարը» բնական հուշարձան է, որն իր արտաքին տեսքի պատճառով տեղադրվել է հնագույն մի առասպելույթի կաղապարում և նույնականացվել որոշակի բանավոր հիշողության հետ: Նման հուշարձանի ուղղակի զուգահեռներից են ներկայիս Հայաստանում գտնվող Արդվինի և Մեծ Սեպասարի համանման քարերը:

Վերլուծելով Խարբերդի «վիշապային քարի» ավանդազրույցներում արտահայտված «քար – վիշապ – խժռում / զոհաբերում – միջնորդող սուրբ – քարացում – աղբյուր / ջուր – աղջիկ / հարս / հղի կին – սրբի հրաշք պարգևող գերեզման / քարանձավ» իմաստաբանական բույլը՝ ակնհայտ է դառնում, որ գործ ունենք հայոց բանահյուսության մեջ քաջ հայտնի վիշապի քարացման առասպելույթի հետ: Ընդ որում, վերոհիշյալ ավանդազրույցներում առկա կերպարները պահպանել են իրենց բնորոշ արխաիկ տարրերը, թեև ներկայումս Խարբերդում և շրջակայքում ապրող մուսուլման բնակչության կողմից ենթարկվել են ձևական (ոչ բովանդակային) տրանսֆորմացիայի: Այդ զրույցների և, ընդհանրապես, վիշապի կերպարի սկզբնաղբյուրը կարող էին լինել հայ-մուսուլմանական շփումները Խարբերդի շրջանում՝ մինչ Հայոց ցեղասպանությունը կամ Խարբերդի ներկայիս (կրոնափոխ) բնակչության մեջ պահպանված հայկական ենթաշերտը[22]:

Եթե հաշվի չառնենք V դարում Մովսես Խորենացու հաղորդած ավանդազրույցը վիշապային Շամիրամի քարացման մասին (Ա. ԺԶ), ապա հայկական աղբյուրներում վիշապի քարացման դրվագն առաջին անգամ հիշատակվում է XIII դ. Սբ. Հովհան Օձնեցու համատեքստում (Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի): Ուշագրավ է, որ Խարբերդի մուսուլմանների մեջ պահպանված ավանդազրույցում վիշապի քարացումը վերագրվում է նույն դարում ապրած սուֆի Ֆեթհի Ահմեթ Բաբային: Ի՞նչ է այստեղ կատարվել: Արդյո՞ք Օձնեցու կերպարն է փոխվել, թե՞ ուղղակի գործ ունենք արքետիպային համընկնության հետ:

Այս հարցի պատասխանը դժվար թե երբևէ իմանանք: Սակայն մի բան է ակնհայտ. վիշապի մասին պատկերացումների առկայությունը Խարբերդի

[21] Խարբերդի շրջանի համար, որպես հայկական ստուգաբանական-բացատրական ավանդազրույցների տարածման մի մասնիկի, հատկապես՝ քարացման առասպելույթի համատեքստում, հմմտ. Խրայեան. 1927, 34, 52, Պարսամեան. 1967, 23–26, Ղանալանյան. 1969, 29, 75, 79–80, Գէորգեան. 1970, 456, 457–460, Մինասեան. 1974, 595–596:

[22] Ներկայիս Թուրքիայի տարածքում վիշապային բնույթի ավանդազրույցները կենտրոնացած են գլխավորապես Արևմտյան Հայաստանում (Դիարբեքիր, Հարփութ, Էրզրում, Բայբուրթ, Սիվաս, Արդվին. տե՛ս Aslan. 2013, 35–39, 41, 43) և իրենց բովանդակությամբ ակնհայտ առնչություններ են ցույց տալիս հայկական ավանդազրույցներին (վիշապամարտ, քարացում, կապ լեռների, ջրերի, սրբերի հետ և այլն):

հովտում և դրանց արխաիկ ենթաշերտը խոսում են քննարկվող տարածաշրջանի բնակչության՝ Հայկական լեռնաշխարհի այլ ենթագոտիների պատմամշակութային զարգացումներում ներառված լինելու մասին: Բոլոր նշված ավանդազրույցներում սրբերը փոխարինում են հայոց հին հեթանոսական կրոնում հայտնի վիշապամարտիկ աստվածությանը, վիշապի պարտությունն էլ կապվում է արգասաբեր ջրերի ազատմանն ու աղբյուրի բխմանը: Մի սյուժե, որն իր արմատներով գնալով հնագույն Հայաստան և, մասնավորապես, հնագույն Իսուվա-Ծոփք[23]*, դարերի ընթացքում ձևափոխվելով ու վերիմաստավորվելով՝ հասել է մեր օրերը:*

Արսեն Բոբոխյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների նյութական ու հոգևոր մշակույթ: Հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 100 հոդվածի: arsen.bobokhyan@sci.am

Սաակ Տարոնցի – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ ուրարտական քաղաքակրթություն, բրոնզե գոտիներ, առասպելաբանություն: Հեղինակ է 7 հոդվածի: saaktaro@gmail.com

Տորք Դալալյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բանագիտության և լեզվաբանության խնդիրներ: Հեղինակ է ավելի քան 100 հոդվածի: torqdal@yahoo.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բոբոխյան Ա. 2021, Կաթքար-վիշապաքար. Երվանդ Լալայանից հարյուր տարի անց. – Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, № 4, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 20–35:

Գէորգեան Գ. 1970, Չնգուշապատում, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 625 էջ:

Դալալյան Տ. 2019, Վիշապ բառի ստուգաբանությունը. – Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին (խմբ. Ա. Բոբոխյան, Ա. Ջիլիբերտ, Պ. Հնիլա), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 242–246:

Եգանյան Լ. 2011, Մեծ Սեպասարի վիշապը. – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, № XIV, էջ 34–39:

Իսրայելյան Հ. Ռ. 1973, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 171 էջ:

[23] *Խնեթական շրջանի Ծոփքի՝ Իսուվայի ջրային, լեռնային, ամպրոպային աստվածությունների և սրբավայրերի մասին տե՛ս Քոսյան. 2002: Հարակից Ազգիի ձկնակերպ և ցլակերպ, ամպրոպի ու ջրի Դատա աստվածության մասին տե՛ս Իսրայելյան. 1973, 98: Քարի և քարացման վերաբերյալ պատկերացումների առանցքային շրջանը առաջավորասիական տարածաշրջանում Հայկական լեռնաշխարհի ու Կովկասի հրաբխային գոտին է, ինչի մասին գրավոր վկայությունները գնում են առնվազն խեթա-խուռիական մշակութային աշխարհ, այն է՝ Ք. ա. II հազ. սկիզբ (հմմտ.* Müller. 1966, 481–515; Haas. 1982, 146–148; Gadjimuradov. 2004, 340–357)*:*

Լալայան Ե. Ա. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 507 էջ:

Լալայան Ե. Ա. 2004, Երկեր, հ. 3, Երևան, «Գիտություն», 381 էջ:

Խրայեան Կ. 1927, Ծովք - Կէօլճիկ, Մարսէյլ, «Արարա», 303 էջ:

Կիրակոս Գանձակեցի. 1982, Հայոց պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող», 351 էջ:

Հալաջյան Գ. 1960, Դերսիմի ազգագրական նյութերը, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, գործ, 12, 105 թերթ:

Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:

Մինասեան Պ. 1974, Պատմագիրք Կիւրինի, Պէյրութ, «Սևան», 823 էջ:

Պարսամեան Ս. 1967, Յուշարձան Ջերմուկի, Պոսթըն, տպ. Հայրենիք, 143 էջ:

Սիմոնյան Լ. 2019, Քարացած վիշապները և վիշապասպան սրբերը հայոց մեջ. առասպել և հիշողություն.– Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին (խմբ.՝ Ա. Բոբոխյան, Ա. Ջիլիբերտո, Պ. Հնիլա), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 412–425:

Վարդան Արեւելցի. 2000, Ճառք, ներբողեանք, աշխատասիրութեամբ Յ. Քեոսէեանի, Երեւան, «Ոսկան Երևանցի», 387 էջ:

Քոյան Ա. Վ. 2002, Իսուվայի կրոնական կենտրոնները խեթական դարաշրջանում. – «Արևելագիտական ժողովածու», № XXI, Երևան, էջ 315–331:

Симонян Л. 2015, Народный культ Ованнеса Одзунского. – Страны и народы Востока, т. XXXVI. М., «Наука», с. 362–372.

Bobokhyan A. 2008, Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v. Chr., British Archaeological Reports 1853, Oxford, Hedges, 674 S.

Aslan F. 2013, The Dragon Motif in Anatolian Legends. – “The Journal of International Social Research”, vol. 7, issue 29, pp. 30–46.

Gadjimuradov I. 2004, Die vulkanische Urheimat der altanatolischen Sukzessions - und Steingeburtsmythen. – “Altorientalische Forschungen” (Berlin), № 31/2, S. 340–357.

Haas V. 1982, Hethitische Berggötter und hurritische Steindämonen, Mainz am Rhein, Philipp von Zabern, 258 S.

Kabaklı A. 2022, Ejderha Taşı, Türk Edebiyatı Vakfı Yayınları, Istanbul, 80 s.

Kardaş C. 2019, Dragon Patterned Legend Samples in Two Cultures: Dragon Stone and Dragon of Krakow. – “Acta Turcica” (Special Issue), pp. 201–208.

Müller K. E. 1966, Zur Problematik der kaukasischen Steingeburt-Mythen. – “Anthropos”, № 61, S. 481–515.

Oğuz M. Ö., Ersoy P. 2007, Yaşayan Taş Kesilme Efsaneleri: Mekânlar ve Anlatılar, Ankara, Gazi Üniversitesi THBMER Yayını, 207 s.

Özbolat A. 2013, Ziyaret Fenomeninden İsim Kültürüne: Fatih Ahmet Baba Türbesi Örneği. – “Türk Kültülrü ve Haci Bektaş Velî Araştırma Dergisi” (Ankara), № 67, s. 71–88.

Համացանցային աղբյուր 1 – https://www.aa.com.tr/tr/kultur-sanat/efsanevi-ejderha-tasi-gun-yuzune-cikarildi/1309783 (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 2 – https://www.birgun.net/haber/ejderha-tasi-nda-kazi-yapan-3-kisi-gozaltina-alindi-253327 (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 3 – https://www.cnnturk.com/turkiye/elazigda-ejderha-tasi-operasyonu (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 4 – https://www.haberelazig.com/haber-efsanelere-konu-olan-ejderha-tasi-ortaya-cikarildi-19142.html (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 5 – https://www.haberturk.com/elazig-haberleri/64665205-efsanelere-konu-olan-ejderha-tasi-ortaya-cikarildi (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 6 – https://www.hurriyet.com.tr/gundem/elazigda-ejderha-tasina-operasyon-sucustu-yakalandilar-41186451 (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 7 – https://www.kulturportali. gov.tr/turkiye /elazig/ kultu ratlasi/ejderha-tasi-efsanesi (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 8 – https://www.milliyet.com.tr/yerel-haberler/elazig/ efsane lere-konu-olan-ejderha-tasi-ortaya-cikarildi-13151943 (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 9 – https://www.mynet.com/efsanelere-konu-olan-ejderha-tasi-elazig-da-bulundu-110104532902 (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 10 – https://www.yeniasya.com.tr/yurt-haber/ejderha-tasi-nda-da-define-aramislar_491304 (ներբեռնված՝ 07. 06. 2023):

Համացանցային աղբյուր 11 – https://harput.web.tr/harputun-tarihi-eserleri/harputtaki-diger-tarihi-eserler/ejderha-tasi/ (ներբեռնված՝ 07. 06. 2023):

«ДРАКОНИЙ КАМЕНЬ» ХАРБЕРДА И ЕГО КУЛЬТУРНО-МИФОЛОГИЧЕСКИЙ КОНТЕКСТ

АРСЕН БОБОХЯН, СААК ТАРОНЦИ, ТОРК ДАЛАЛЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армянское нагорье, Софене, Харберд, дракон, миф об окаменении.

На дороге из Харпута в Элязыг современной Турции, в 2 км к востоку от исторического района Харберд Западной Армении, на краю дороги, ведущей к винограднику Гёлу, в местности, богатой родниками, находится гигантский природный валун. Эта раскидистая скала, наполовину погруженная в землю, напоминает змеевидную скульптуру мифического колоссального животного с двумя идентичными выступами меньшего размера по обе стороны. Местные пожилые жители называют это скальное образование по-турецки "ejderha taşı", что означает «драконий камень».

Анализируя семантический кластер «камень – дракон – пожирание / жертвоприношение – святой посредник – окаменение – источник – вода – девочка / невеста / беременная женщина – чудотворная могила святого / пещера», выраженный в легендах о «драконьем камне» Харберда, становится очевидным, что имеем дело с хорошо известным в армянском фольклоре мифом об окаменении дракона. В то же время, персонажи, присутствующие в упомянутых традициях, сохранили свои типичные архаичные элементы, хотя и претерпели формальную (но не содержательную) трансформацию со стороны мусульманского населения, проживающего в Харберде и его окрестностях. Источником этих мифов и вообще образа дракона могли быть армяно-мусульманские контакты в Харбердской области до Гено-

цида армян или субстрат армянской памяти, сохранившийся в нынешнем (обращенном в мусульманство) населении Харберда.

Наличие образа дракона в Харбердской долине и его архаичный субстрат свидетельствует о том, что население этого региона было существенно интегрировано в общих историко-культурных процессах Армянского нагорья.

Арсен Бобохян – к. и. н., директор Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: материальная и духовная культура ранних обществ Передней Азии и Армянского нагорья. Автор 1 монографии и более 100 статей. arsen.bobokhyan@sci.am

Саак Таронци – аспирант кафедры археологии и этнографии исторического факультета ЕГУ. Научные интересы: урартская цивилизация, бронзовые пояса, мифология. Автор 7 статей. saaktaro@gmail.com

Торк Далалян – к. филол. н., заместитель директора Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: вопросы армянской фольклористики и языкознания. Автор более чем 100 статей. torqdal@yahoo.com

"DRAGON STONE" OF KHARBERD AND ITS CULTURAL AND MYTHOLOGICAL CONTEXT

ARSEN BOBOKHYAN, SAHAK TARONTSI, TORK DALALYAN

Summary

Keywords: Armenian Highland, Sophene, Kharberd, dragon, myth of petrification.

On the way from Harputa to Eliazig, two km east to the historical district of Kharberd in Western Armenia, a giant natural boulder is located on the edge of the road leading to the vineyard Gyolu, in the area rich in springs. This sprawling rock, half buried in the ground, resembles a serpentine sculpture of a mythical colossal animal with two identical smaller protrusions on both sides. Elderly locals call this rock formation in Turkish "'ejderha taşı" which means "dragon stone".

Analyzing the semantic cluster "stone - dragon – devouring / sacrifice – holy - petrification - source - water – girl / bride / pregnant woman – saint's miraculous grave/cave" expressed in the legends of the "dragon stone" of Kharberd, it becomes obvious that we are dealing with the myth of dragon petrification, which is well known in Armenian folklore. At the same time, the characters present in those traditions preserved their typical archaic elements, although they underwent a formal (however not substantive) transformation by the Muslim population living in Kharberd and its environs. The source of these

myths and the image of the dragon in general could be the Armenian-Muslim contacts in the Kharberd region before the Armenian Genocide, or the substratum of Armenian memory preserved in the current (converted) population of Kharberd.

The presence of the dragon image in the Kharberd Valley and its archaic substrate indicates that the population of this region was essentially integrated into the general historical and cultural developments of the Armenian Highlands.

Arsen Bobokhyan – Candidate of Historical Sciences, Director at the Institute of Archaeology and Ethnography, NAS RA. Scientific interests: material and spiritual culture of the early societies of Western Asia and the Armenian Highlands. Author of 1 monograph and more than 100 articles.
arsen.bobokhyan@sci.am

Sahak Tarontsi – Postgraduate student at the Department of Archaeology and Ethnography, Faculty of History, Yerevan State University. Scientific interests: Urartian civilization, bronze belts, mythology. Author of 7 articles.
saaktaro@gmail.com

Tork Dalalyan – Candidate of Philological Sciences, Deputy director at the Institute of Archaeology and Ethnography, NAS RA. Scientific interests: issues of Armenian folklore and linguistics. Author of more than 100 articles.
torqdal@yahoo.com

ՀՏԴ 281.6 + 930.223.64

Doi:10.54503/0135-0536-2023.3-258

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ XIX ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ԿՆԻՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՀՐԱԴՅԱՆ

Բանալի բառեր՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքություն, XIX դ. վավերագրեր, կնիք, եկեղեցական հերալդիկա, արձանագրությունների վերծանում, Հարության տեսարանը կնիքներում:

Նախաբան

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Առաքելական Աթոռի XIX դ. պատրիարքներ Թեոդորոս Վանեցու (1801–1818), Գաբրիել Նիկոմեդացու (1819–1840), Զաքարիա Կոփեցու (1841–1846), Կիրակոս Երուսաղեմացու (1846–1850), Հովհաննես Զմյուռնիացու (1850–1860), Եսայի Թալասցու (1864–1885), Հարություն Վեհապետյանի (1889–1910) կնիքների ներկայացման և վերծանման կարևորությունը բխում է ինչպես դրանց տեղեկատվական արժեքից, այնպես էլ, իբրև արտեֆակտ՝ եկեղեցական հերալդիկայի տեսանկյունից:

Թեև հավաքագրված նյութի ներկայացմամբ հնարավոր չէ լուսաբանել Երուսաղեմի Հայոց պատրիարքների բոլոր կնիքները, այնուամենայնիվ, ուրվագծվել են դրանց ինստիտուցիոնալ և անձնական կիրառման օրինաչափությունները, արձանագրային ու պատկերագրական հիմնական գծերը: Դիտարկվել են Մ. Մաշտոցի անվան մատենադարանում, ինչպես նաև Հայաստանյան գիտական այլ հաստատություններում ու մասնավոր հավաքածուներում պահվող հարյուրավոր վավերագրեր՝ ընտրությունը կատարելով ըստ բնույթի, ժամանակագրության և, որն էական է, կնիքների բազմազանության:

Պատրիարքական կնիքների արձանագրությունները

Դեռևս Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակներից, երբ Երուսաղեմի առաքելական աթոռը գտնվում էր Կիլիկիո թագավորների քաղաքական պաշտպանության և Ամենայն Հայոց Հայրապետության Սսի աթոռի իրավասության ներքո, Երուսաղեմի հայ եկեղեցու վարչական գործունեությունը սկսում է արտահայտվել երբեմն իբրև «օրհնութեան և շնորհակալութեան գիր», երբեմն՝ իբրև «ուղերձ» հիշատակվող կաթողիկոսական կոնդակներով և հրամանագրերով[1]: Այսպես, Երուսաղեմի պատրիարքական կոնդակի

** Ներկայացվել է 20. VI. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. թ. Ա. Զոհրաբյանը (18. VII. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] Տե՛ս Մ ե լ ի ք-Թ ա ն գ յ ա ն. 1905, 129, Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. 1939, 1253:

ճակատագարդը և մի քանի տողով Երուսաղեմի վանքի տիտղոսներն ամփոփող փաստաթուղթը[2] ուշագրավ է իբրև Թղթագրության տեսակ, քանի որ վավերագրի ձևաբանությունը, գեղարվեստական հարդարանքը, կաղապարային արտահայտություններն ու փառատրական տողերին նախորդող կնիք-վավերացումը տիպական են կոնդակների կանոնական ձևաչափին: Կարմիր, բոլորակ կնիքի հայատառ գրությունը հիշատակում է. «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐԲ)Բ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՉ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ» (տե՛ս Նկ. 1, 1 ա)[3]:

Նկ. 1:

Նկ. 1 ա:

Իսկ Օսմանյան իշխանության շրջանում Երուսաղեմի սրբավայրերում Հայոց պատրիարքության իրավասության շրջանակները սահմանող հրամանագրերի, հէօճէթների[4], խաթթերի[5], արտոնագրերի և այլ պաշտոնագրերի կարևորությունը հատկապես նկատելի է դառնում դարասկզբի Թեոդորոս Բ Վանեցի պատրիարքի (1801–1818) աթոռակալության տարիներին[6]: Մասնավո-

[2] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան (այսուհետ՝ ԿԴ), թղթ. 244, վավ. 236:

[3] Ներկայացվող արձանագրությունների ընթերցման համար օգտագործել ենք ընդունված հետևյալ պայմանական նշանները. տողափոխը տրվել է մեկ գծով՝ /, համառոտագրությունները բացվել են կոր փակագծերով՝ ( ), կապգրություններն ու կցագրությունները ընդգծվել են (underline), ուղղագրական սահմանված կանոններից շեղումներն արտահայտվել են շեղ (italic):

[4] Հէօճէթ – արքունի գիր, կալվածաթղթերի արձանագրությունը պետական կտրոնների վրա (տե՛ս Օշական. 1934, 652):

[5] Սուքիասեանց. 1931, հ. Բ, 842: Խաթթեր=խաթ – գրություն, հրամանագիր, արտոնագիր, հրովարտակ (տե՛ս Քեօմիւրճեան. 1982, 352):

[6] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Յակոբեան. 2021, 239–247:

րապես, ուշագրավ է գաղտնի պահված հրովարտակների օգնությամբ[7] 1806 թ. հայերին սեփականությունից զրկելու հույների Անթիմոս պատրիարքի (1788–1808) փորձը: Այս առիթով Թեոդորոս պատրիարքը դիմում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքության օգնությանը, ինչին ի պատասխան Հովհաննես Բաբերդցի պատրիարքը (1802–1813) պահանջում է որպես փաստ ներկայացնել հին հրովարտակները: Երուսաղեմը կարողանում է միայն «թուրալ»[8] հրովարտակների պատճենները տրամադրել, քանի որ Եղիազար Այնթապցու (1651–1625) ժամանակներից ի վեր հրովարտակների բնագրերը պահվում էին Կ. Պոլսում, և դրանք հանձնելու բոլոր փորձերն ապարդյուն էին: Ենթադրելի է, որ ներկայացված պաշտոնագրերի վավերականության նկատմամբ առաջացած կասկածները պայմանավորված էին կնիքների բացակայությամբ, ինչը կարող էր բավարար հիմք լինել դրանց իսկությանը չվստահելու համար: Ի վերջո, հայերի և հույների միջև սեփականության նկատմամբ առաջացած այս վեճը հայերի օգտին չի լուծվում:

Այսպես, վերոհիշյալ պատրիարքին առնչվող որոշ վավերագրեր, թեև առավելապես ուղղված են Սբ. Աթոռի դրամական գործառնությունները վարող պաշտոնյաներին, այդուհանդերձ, փաստագրերի վավերացման համար գործածվել են տարաբնույթ կնիքներ:

Թեոդորոս պատրիարքի՝ 1810 թ. ապրիլի 17-ի ձեռագիր կոնդակում՝ հասցեագրված մահտեսի Եղիազարին, նա նախ շնորհակալություն է հայտնում իրեն ուղարկած նվերի համար, ապա վերջինիս կարգում է Երուսաղեմի Աթոռի գանձապահ[9]: Վավերագիրը հաստատված է կրկնակի կնիքով: Առաջինը, որ հաստատում է վավերագրի ճակատը, հետևյալ արձանագրությամբ է. «Է/ Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(Ա)Յ ԹԷՈԴՈՐՈՍ ՊԱՏՐ(ԻԱՐ)Ք ՍՐԲ(Ո)Յ ԵՐ(ՈՒ)Ս(Ա)Ղ(Ե)ՄԻ ՌՄԽԹ (1800)»: Իսկ դարձերեսին՝ աթոռանիստ եկեղեցու կարմիր գմուռսից կնիքը՝ «Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)ԿՈԲ» արձանագրությամբ (տե՛ս նկ. 2, 3):

Թեոդորոս պատրիարքի՝ 1810 թ. ձեռագիր կոնդակը՝ հասցեագրված պատրիարքարանի գանձապետ մահտեսի աղա Եղիայից, Սահակ վարդապետի կատարած չարաշահությունների և նրա տեղը Ստեփաննոս վարդապետին նշանակելու մասին է: Փաստաթղթի վերին կենտրոնում տեսնում ենք Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի կնիքը՝ «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՉ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ» արձանագրությամբ (տե՛ս նկ. 4):

Մեկ այլ՝ 1814 թ. մարտի 29-ի նամակով Թեոդորոս պատրիարքը խնդրում է Կարին քաղաքի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին՝ օժանդակել նվիրակ Եղիա եպիսկոպոսին ժողովրդից նվերներ հավաքելու հարցում, որպեսզի հնա-

---

[7] *Օ ր մ ա ն ե ա ն. 1960, 3373–3376:*

[8] *Թուրալը=Թուղրալը – սուլթանական կնիքով հրովարտակ (տե՛ս Ս ա ւ ա լ ա ն ե ա ն ց. 1931, հ. Բ, 843):*

[9] *ՄՄ, Ալ. Երիցյանի ֆ., թղթ. 158, վավ. 85:*

րավոր լինի վճարել սրբատեղիների վրա դրված հարկը[10]: Վավերագիրը հաստատված է պատրիարքի փոքր անվանական կնիքով, որն ունի հետևյալ

Նկ. 2:
Կնիքի չափս՝ 3.6 սմ:

Նկ. 3:

Նկ. 4:
Կնիքի չափս՝ 3.6 սմ:

արձանագրությունը. «ԹԷՈԴՈՐՈՍ/ Պ(Ա)Տ(ՐԻԱ)ՐՔ ԵՐ(ՈՒՍԱՂԵ)ՄԻ/ ՌՄԽԹ (1800)» (տե՛ս Նկ. 5): Եռատող արձանագրությունը երկաթագիր է, բացառությունն է միայն մ-ն, որը փոքրատառ է և, հավանաբար, վրիպակ: Դարձերեսին կրկին առկա է Սրբոց Հակոբյանց եկեղեցու գմուռսից կնիքը՝ «Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)ԿՈԲ» գրությամբ (տե՛ս Նկ. 6): Թեոդորոս պատրիարքի ներկայացված անձնական կնիքի գործածման շրջանակը բավական ընդգրկուն է. այն տեղ է

Նկ. 5:
Կնիքի չափս՝ 2.1 x 1.8 սմ:

Նկ. 6:

գտել ոչ միայն վավերագրերում, այլև՝ ձեռագրերում: Այս մասին տեղեկանում ենք Նորայր Պողարյանի կազմած Երուսաղեմի ձեռագրացուցակից, որտեղ նկարագրելով «Հակոբ Նալյան (1758) Հմր. 78 Քարոզագիրքը. –4»-ում հիշատակվում է սույն կնքադրոշմը՝ «Թէոդորոս Պատրիարք Երուսաղէմի, ՌՄԽԹ»[11]: Այն հանդիպում է նաև պոլսահայ պատմաբան, հավաքորդ Կարո Քյուրքմանի մասնավոր հավաքածուում պահվող մի ծախսամատյանում, որտեղ, ի թիվս այլ դրոշմների, տեղ է գտել ներկայացվող կնիքը (տե՛ս Նկ. 7): Այսպիսով, միևնույն կնիքը տարբերնույթ փաստաթղթերում փոխում է իր գործածման նշանակությունը: Եթե վավերագրի սկզբում է դրվում, այն

---

[10] ՄՄ, Կարապետ Բագրատունի արքեպիսկոպոսի ֆ., թղթ. 163 ա, վավ. 81:
[11] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1966, 267:

ստանձնում է անձի նույնականացման գործառույթը, իսկ ֆինանսական հաշիվների մատյանում՝ հաստատում ելից և մտից հաշիվները, ապա ձեռագրում ցուցում է պատկանելիությունը:

Նկ. 7:

Պատրիարքի՝ 1815 թ. օրհնության և շնորհակալության մեծադիր կոնդակը՝ ուղղված Խոյ քաղաքի Սբ. Սարգիս եկեղեցու հոգևորականներին ու գանձապետ մահտեսի Եղիային, 300 ղուրուշ[12] գանձանակի դրամի ստացման մասին է[13]: Փաստաթղթի վերին կենտրոնում առկա է մեծ կնքադրոշմ, որի համեմատաբար ընդարձակ արձանագրությունը հիշատակում է. «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ Է(ՐՈՒՍԱ)Ղ(Ե)ՄԻ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲ(Ո)Ց Յ(Ա)Կ(Ո)ԲԵԱՆՑ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)ՐՈՒ(Թ)Ե(ԱՆ) ԶԷ Պ(Ա)ՐՏԻՑ ԱՅԼ ՕՐՀՆ(Ո)ՒԹԵ(ԱՆ)» (տե՛ս Նկ. 8):

Նկ. 8:
Կնիքի չափս՝ 5.7 սմ:

Թեոդորոս պատրիարքի ներկայացված կնքադրոշմներում, ինչպես համաժամանակյա կառուցվածք, պատկերը զուգորդվում է իր շուրջը դաջված գրության հետ: Բոլորագիծ երկաթագիր արձանագրությունները հիմնականում նույնիմաստ են, ձևակերպման, հապավման կամ կցագրման տարբերություններով: Այդուհանդերձ, նկատելի է մի հետաքրքիր դրվագ: Հիմնականում մեծ կնիքի արձանագրությունները սկսվում են «ԿՆԻՔ» բառով, ինչը նորարարություն է մինչ այս մեզ հանդիպած հայ բարձրաստիճան հոգևորականների

[12] *1815 թ. 1 արծաթե ղուրուշը կշռում էր 5.13 գ՝ արծաթի 73 տոկոս պարունակությամբ (տե՛ս* Pamuk. 2000, 191).
[13] *ՄՄ, ԿԴ, թղթ. 243, վավ. 145:*

կնիքներում: Թեև պաշտոնագրերում անպայման հիշատակվում է վավերագրի հեղինակ բարձրաստիճան հոգևորականը, առկա է համապատասխան ստորագրությունը, այդուհանդերձ, դա հաստատող կնիքը չի նշում կնքատիրոջը, նրա անունը կամ զբաղեցրած դիրքը. փոխարենն արտահայտում է իր պատկանելիությունը տվյալ հաստատությանը, ինչպես արձանագրել է Մաղաքիա Օրմանյանը՝ «Անոնք Երուսաղէմի կնիքով գիր մը կը ցուցնեն …»[14]: Այս դեպքում, արձանագրությունների հիմնական մասը կազմող «ՍՐԲ(Ո)Ց Յ(Ա)Կ(Ո)ԲԵԱՆՑ»-ը, որը Երուսաղեմի Հայոց Առաքելական աթոռի մայր եկեղեցին է, ներկայացնում է պահապան սրբերին՝ Ջեբեթյան Սբ. Հակոբին և Տեառն եղբայր Սբ. Հակոբ առաքյալին, ինչով էլ պայմանավորված է եկեղեցու հոգևոր անվանումը: Իսկ «Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)ՐՈՒ(Թ)Ե(ԱՆ)»-ը որոշ օրինակներում խորհրդանշում է Քրիստոսի հրաշափառ հարությունը, այլ օրինակներում՝ այդ նույն խորհրդի և ամբողջության մեջ՝ Երուսաղեմի Սբ. Հարության տաճարը: Քրիստոսի խաչելությունից և թաղումից հետո Քրիստոսի հարությունը, իբրև կյանքի հաղթանակ մահվան հանդեպ, կնիքներում արտահայտվել է «ՈՋ ՊԱՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ»՝ համբարձավ Աստված օրհնությամբ մեկնաբանությամբ:

Երուսաղեմի իրավահաջորդ պատրիարք Գաբրիել Նիկոմեդացու (1819–1840) կնքված որոշ վավերագրեր, որոնք թեև բնույթով միատեսակ են և առավելապես Սբ. Աթոռի նվիրատվություններն են ներկայացնում, կարևոր են այնքանով՝ հենց այդ նվիրաբերությունների շնորհիվ է պահպանվել Երուսաղեմի Հայոց պատրիարքության կրոնական ու մշակութային ներկայությունը Սբ. Երկրում:

Այսպես, 1820 թ. ապրիլի 4-ին Գաբրիել պատրիարքը գրությամբ հայտնում է Կարին քաղաքի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին, թե Սբ. Աթոռի նախկին նվիրակ Ստեփաննոս եպիսկոպոսը բուժման համար գալու է Կարին և նախազգուշացնում է՝ նրան ոչինչ պետք չէ տալ Երուսաղեմի հավելյալ արդյունքից[15]: Վավերագիրը հաստատված է պատրիարքի անձնական փոքր կնիքով, որի քառատող արձանագրությունը հետևյալն է. «Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(Ա)/ ԳԱԲՐԻԷԼ/ Պ(Ա)ՏՐ(ԻԱՐ)Ք. ԵՐ(ՈՒ)Ս(Ա)Ղ(Ե)Մ(Ի)/ ՌՄԿԸ (1819)» (տե՛ս նկ. 9): Բացի այս, փաստաթղթի դարձերեսին կա ևս մեկը, որը գմուռից է՝ «Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)ԿՈԲ» արձանագրությամբ (տե՛ս նկ. 10):

Ինչպես նախասաց պատրիարքից, այնպես էլ Գաբրիել Նիկոմեդացուց՝ Կարապետ արքեպիսկոպոսին ուղղված գրությունների հաստատման համար կիրառված է կնքադրման միևնույն կարգը. վավերագրի դիմերեսի ձախ անկյունում տեսնում ենք անվանական փոքր կնիքը, իսկ դարձերեսին՝ Սբ. Հակոբ վանքի կարմիր գմուռից դրոշմը:

Գաբրիել պատրիարքի՝ 1825 թ. մարտ 29-ի օրհնության և շնորհակալության ձեռագիր «կոնտակ» մահտեսի Հակոբ ագնիվ աղայի միջոցով հասցեագրված է Ավետիս աղային[16]: Կնիքի երկաթագիր արձանագրությունը նշում է.

[14] *Օ ր մ ա ն ե ա ն. 1960, 2729:*

[15] *ՄՄ, Կ. Բագրատունի արքեպիսկոպոսի ֆ., թղթ. 163 ա, վավ. 340:*

[16] *ՄՄ, 2007 թ. տարեկան ձեռքբերումների անմշակ ֆ., ակտ № 1:*

«ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ Է(ՐՈՒՍԱ)Ղ(Ե)ՄԻ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲ(Ո)Ց Յ(Ա)Կ(Ո)ԲԵԱՆՑ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)Ր(Ո)Ւ(Թ)Ե(ԱՆ) ՉԷ Պ(Ա)ՐՏԻՑ ԱՅԼ ՕՐՀՆ(Ո)ՒԹԵ(ԱՆ)» (տե՛ս Նկ. 11):





Նկ. 9:
Կնիքի չափս՝ 2.3 x 1.9 սմ:

Նկ. 10:

Նկ. 11:
Կնիքի չափս՝ 5.7 սմ:

Մարտի սկզբի (տարեթիվն անընթեռնելի է) Գաբրիել պատրիարքի կոնդակը՝ մահտեսի Ստեփան աղային Սրբոց Հակոբյանց եկեղեցու օգտին արված նվիրատվությունների և հանգանակությունների, ինչպես նաև՝ Երուսաղեմի նվիրակ Կիրակոս արքեպիսկոպոսի վեքիլական արդյունավետ ծառայության մասին է: Կոնդակը հաստատող կնիքի արձանագրությունը հետևյալն է. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) ԳԱԲՐԻԷԼ Պ(Ա)ՏՐ(ԻԱ)ՐՔ ՍՐԲ(Ո)Ց ԵՐ(ՈՒ)Ս(Ա)Ղ(Ե)ՄԻ ՌՄԿԸ»[17] (տե՛ս Նկ. 12):

Նախորդ դարաշրջանի բազմաթիվ պատրիարքական կնքադրոշմներում «պատրիարք» տիտղոսը զուգակցում է «վարդապետ» տիտղոսի հետ, ինչպես փաստում է Երուսաղեմի պատրիարք Պետրոս Եվդոկիացուց (1793–1800) մեզ հասած դրոշմակնիքի արձանագրությունը՝ «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(Ա)Յ Պ(Ե)ՏՐՈՍ Վ(Ա)ՐԴ(ԱՊԵ)Տ Պ(Ա)ՏՐ(ԻԱՐ)Ք Ս(ՈՒՐ)Բ ՅԵ(ՐՈՒՍԱՂ)ՄԻ ՌՄԽԳ (1794)» (տե՛ս Նկ. 13)[18]: Մինչդեռ քննվող ժամանակաշրջանի պատրիարքական կնիքներում այս ավանդույթը սակավ է: Երուսաղեմի Հայոց ա-

Նկ. 12:
Կնիքի չափս՝ 4 սմ:

Նկ. 13
Կնիքի չափս՝ 4 սմ:

ռաջին պատրիարք Աբրահամ փաթրիքով սկսած, որի մասին հիշատակում է ոչ միայն հայ պատմագրությունը, այլև՝ Սբ. Աթոռի Պատրիարքարանի դիվաննե-

---

[17] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 332, ց. 1, գ. 804, թ. 3:
[18] ՄՄ, Ավ. Հովհաննիսյանի անմշակ ֆ., թղթ. 262/2, վավ. 15:

րում պահվող Ալի, Մուհամմադ, Օմար խալիֆաների հրովարտակները[19], Սարգիս արքեպիսկոպոսով (1281–1313) և հաջորդներով չարունակաբար Երուսաղեմի առաջնորդները կրել են պատրիարք տիտղոսը: Վերջինս հայ եկեղեցու վարդապետությունն անսասան պահելու համար Եգիպտոսի մամլուքյան սուլթանի հրովարտակով Երուսաղեմն անկախ է հռչակել Կիլիկիո կաթողիկոսությունից[20]. « …էառ հրովարտակ յամիրայէն Եգիպտոսի՝ իշխել ՚ի վերա իւրոցն անկախ ՚ի կաթողիկոսէն և յարքայէ և ետ կոչել զինքն պատրիարգ եէրուսաղմի և այս եղև յամի տեառն 1311»[21]:

Գաբրիել պատրիարքի՝ 1834 թ. ապրիլի 22-ի ձեռագիր կոնդակը ուղղված է Խոյ քաղաքի Սբ. Սարգիս եկեղեցու քահանաներին, իշխաններին և ժողովրդին 320 ղուրուշ նվիրատվությանը[22]: Փաստաթղթի վերին կենտրոնը զարդարում և հաստատում է կարմիր մեծ կնիքը, որը խիստ հանդիսավոր է: Այն պատկերով է և բոլորաձև «Է/ ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ Ե(ՐՈՒՍԱ)Ղ(Ե)ՄԻ ՍՐԲ(ՈՑ) ՅԱՐ(ՈՒ)ԹԵ(Ա)Ն Ք(ՐԻՍՏՈՍ)Ի ԵՒ ՍՐԲ(Ո)Ց Յ(Ա)Կ(Ո)Բ(Ա)Ց ԱԹՈՌՈՑ ԱՄ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Ց ՕՐՀՆՈՒԹԵ(ԱՆ) ԵՒ ՈՋ ՊԱՐՏՈՒՑ» արձանագրությամբ (տե՛ս Նկ. 14):

Ուսումնասիրության ընթացքում հայտնի է դարձել Գաբրիել Նիկոմեդացու 10 կնիք[23]: Հավանաբար, բարձրաստիճան հոգևորականների կողմից բազմակի կնիքների գործածումը պայմանավորված էր ավելացող վարչական պարտականություններով և պահանջներով[24]: Թեև դրանցում համառոտագրված գրությունները կրկնվում են, սակայն նույնը չեն և ոչ էլ վերանորոգություն են. գուցե փոփոխվել է վարպետը կամ, պարզապես, կնիքը նորովի է պատրաստվել: Որպես կանոն՝ Հայոց պատրիարքությունների կնիքներն ավելի երկար կիրառություն ունեին, քան առանձին պատրիարքներինը: Եթե հոգևորականի անձնական կնիքի գործածումը սահմանափակվում էր մինչև կյանքի վերջ և մահվանից հետո կա՛մ ոչնչացվում էր, կա՛մ արխիվացվում, ապա եկեղեցական հաստատությունների կնիքը գործածվում էր երկար ժամանակ, երբեմն՝ նույնիսկ դարեր, քանի որ փոփոխելու պատճառ առանձնապես չէր լինում: Այս իմաստով հետաքրքրական է Երուսաղեմի Հովակիմ Քանաքեռցի (Ծովածին) պատրիարքի (1775–1793)՝ 1786 թ. մարտի 12-ի տպագիր կոնդակը՝

---

[19] *Ս ա ւ ա լ ա ն ե ա ն ց. 1931, հ. Ա, 271:*

[20] *Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. 1939, 1264: Զուգահեռաբար, Կիլիկիո կաթողիկոսները երկար ժամանակ չէին հրաժարվում Սբ. Աթոռի նկատմամբ իրենց իրավասություններից և «կաթողիկոս» տիտղոսին զուգահեռ, ներկայանում էին նաև իբրև Երուսաղեմի պատրիարքներ, ինչպես Կիլիկիո կաթողիկոս Սահակ Ա Քիլիսցին (1674–1686), որի մասին հիշատակում է Բ. Կյուլեսերյանը՝ մեջբերելով Վատիկանի հայերեն ձեռագրերից թիվ 30-ի էջ 107–108-ից «Յիսուսի Քրիստոսի ծառայ Սահակ Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Պատրիարք Սուրբ Աթոռոյն յԵրուսաղէմայ …», իսկ կնիքին վրայ փորագրուած է. «Քրիստոսի ծառայ Սահակ Կաթողիկոսի Հայոց Պատրիարգ Սուրբ Երուսաղէմայ ՌՃԻԳ (=1674)»:*

[21] *Չ ա մ չ ե ա ն ց. 1786, 313:*

[22] *ՄՄ, ԿԴ, թղթ. 243, վավ. 206:*

[23] *Պատրիարք Գաբրիել Նիկոմեդացու այլ կնիքները տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1537, թ. 1, ՄՄ, ԿԴ, թղթ. 243, վավ. 208, թղթ. 244, վավ. 329:*

[24] D a l t o n. 1992, 4.

ուղղված Կարապետին 1 ղուրուշ լուսագին նվիրաբերելու համար[25]: Վավերագիրը հաստատված է մեզ արդեն հայտնի «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐԲ)Բ ՀԱՐՈՒԹԵ(ԱՆ) ՈՉ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆ(Ո)ՒԹԵ(ԱՆ)» արձանագիր կնիքով (տե՛ս Նկ. 15): Դժվար է ճշգրտությամբ թվագրել պատրիարքարանի կնիքները, քանի որ հիմնականում դրանք թվակիր չեն, ինչպես այս դեպքում կնիք կրող փաստաթուղթն է ժամանակի ճշգրտման միջոցը կամ որոշ դեպքերում թվագրումը հիմնված է պատկերների, արձանագրությունների, գործածված թղթի վրա, որոնք թույլ են տալիս հստակեցնել ժամանակագրությունը[26]:

Միևնույն կնիքի երկարաժամկետ գործածումը կիրառելի էր նաև վարչական մարմինների դեպքում: Հետաքրքրական է Երուսաղեմի Աթոռի փոխանորդ Դավիթ եպիսկոպոսի՝ 1849 թ. ապրիլի 10-ի նամակը կաթողիկոսին, թե Գևորգ եպիսկոպոսի միջոցով ստացել է օրհնության կոնդակը, այս մասին հայտնել է ամիրաներին և միաբաններին, ապա նրանց ողջույնն է հաղորդում Էջմիածնի միաբանությանը[27]: Գրությունը սև թանաքով միակնիք է՝ «Է/ ՎԷՔԻԼԱԿԱՆ ԿՆԻՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԵՐ(ՈՒ)Ս(Ա)ՂԷՄ», իսկ օսմաներեն բաժնում՝ «ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ ՎԵՔԻԼ» արձանագրությամբ (տե՛ս Նկ. 16): Այս կնքադրոշմը հետաքրքիր է իր երկլեզվյան գրությամբ, եթե դիտարկում ենք, պատրիարքարանի գործունեությունը ոչ միայն հայերի, այլև օտարների համատեքստում: Բացի այդ,

Նկ. 14:
Կնիքի չափս՝ 5.4 սմ:

Նկ. 15:
Կնիքի չափս՝ 15 սմ:

Նկ. 16:
Չափս՝ 2.9x 2.6 սմ:

կնիքն անվանական չէ և կարող էր փոխանցվել նրան, ով որպես Երուսաղեմի վեքիլ հանդես կգար: Ուշադրություն դարձնենք նաև «վեքիլ» կոչմանը: Դեռևս 1726 թ. Երուսաղեմի և Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականների կողմից ընդունված կանոններից մեկը, որն առնչվում էր օտարալեզու եգրույթների գործածմանը, հետևյալ վճիռն էր ազդարարում. «Եթէ յայտնհետէ ոք յանդգնեալ համարձակիցի գաշխարհական ոք պապա եւ նազըր անուամբ, եւ կամ այլ ինչ անուանակոչութեամբ ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ վերակացու եւ գլխաւոր գործակալ առնել, եւ նորա գայլեւայլ ճանապարհս ցոյց տալ, յորմէ պատճառի վնասն Սրբոյն Յակոբայ, այնպիսին թէ կարգաւոր իցէ եւ թէ աշխարհական, նզովեալ եղիցի»[28]: Զարմանալի է, թե ինչպես ընդունված կարգը շրջանցելով՝ հնարավոր է դարձել պապա, նազըր, վէքիլ, ղապչի-

---

[25] *ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 140:*
[26] M a n d. 2010, 1.
[27] *ՄՄ, ԿԴ, թղթ. 146, վավ. 372:*
[28] *Օ ր մ ա ն ե ա ն. 1915, 11:*

մալ կոչումները փոխարինել ներկայացուցիչ, մատակարար, կալվածապետ, համարակալ կոչումներով[29]*:*

Երուսաղեմի հաջորդ պատրիարք Զաքարիա Կոփեցու (1841–1846) աթոռակալման կարճ ընթացքից հայտնի է երկու կնքադրոշմ: Առաջինը վավերացրել է 1842 թ. ապրիլի 19-ի Զաքարիա պատրիարքի շնորհակալական կոնդակը՝ ուղղված Նոր Նախիջևանի քաղաքացի Մկրտիչ Մարգարի Օղաբաշովին Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին նվերներ մատուցելու առթիվ[30]*: Կնիքի արձանագրությունը հետևյալն է. «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ Է(ՐՈՒՍԱ)Ղ(Ե)ՄԻ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲ(Ո)Ց Յ(Ա)Կ(Ո)ԲԵԱՆՑ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)Ր(Ո)Ւ(Թ)Ե(ԱՆ) ԶԷ Պ(Ա)ՐՏԻՑ ԱՅԼ ՕՐՀՆ(Ո)ՒԹԵ(ԱՆ)» (տե՛ս նկ. 17): Այստեղ կրկին հանդիպում ենք մեծ կնքադրոշմի, որը, չլինելով անվանակիր, խնդրահարույց է: Այս իմաստով ուշագրավ է հետևյալ պատմական անդրադարձը: 1714–1715 թթ., երբ Կ. Պոլսի Հովհաննես Թ Կոլոտ Բաղիշեցի պատրիարքի (1678–1741) նախաձեռնությամբ Երուսաղեմի փոխանորդ է կարգվում ընչաքաղցությամբ հայտնի Հովհաննես Պալըքէսիրցին, որոշ ժամանակ անց նկատվում է վանական հասույթների վատնում, հայապատկան կալվածքների, ունեցվածքի կողոպուտ, վաճառվում կամ գրավ է դրվում Երուսաղեմի եկեղեցուն պատկանող ունեցվածքը, շարունակ ավելանում են պարտքերը, մինչև իսկ վտանգվում է Սբ. Փրկիչ վանքի պատկանելությունը: Ժողովրդի և միաբանների ուժեղ ընդդիմության արդյունքում Հովհաննես Կոլոտը հեռացնում է փոխանորդին՝ խոստանալով տարիների ընթացքում մարել կուտակված պարտքերը: Ապա նորանոր փոխառությունների վերջը տալու համար պատրիարքը որոշում է. «… ջնջել պաշտօնական կնիքը՝ յորոյ վերայ գրեալ էր անուն սրբոյ աթոռոյն, և որով զմուրհակս պարտուցն կնքէին, և որ հասարակ կնիք կամ օրթայի կնիք կանուանէր, այլ Կոլոտ կնիք պարտուց կանուանէ զայն: Անհատական անուն չկար կնիքին վրայ, որով ոչ ոք անձնապէս պարտական կը սեպուէր, և ի կնքողաց փող մի չէր գնայր, անոր համար ամէն փոխանորդներ և մատակարարներ անխտրապէս զբազում թէմէսիւքս մօհրէին»*[31]*:*

Նկ. 17:
Կնիքի չափս՝
5.7 սմ:

Երկրորդ՝ 1844 թ. ապրիլի 15-ի ձեռագիր գրությամբ Զաքարիա պատրիարքը ոմն սրբազան եղբոր (ենթադրվում է՝ Բարսեղ արքեպիսկոպոսին) հարցնում է Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի (1843–1857)՝ Մայր Աթոռ ժամանելու մասին[32]*: Փաստաթուղթը հաստատված է պատրիարքի անվանական փոքր կնիքով, որի անվան կապգրությամբ կազմված արձանագրությունը հետևյալն է. «Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ)/ ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ/ Ս(ՈՒՐ)Բ Ե(ՐՈՒՍԱ) Ղ(Ե)/ՄԻ/ 1841» (տե՛ս նկ. 18):*

Երուսաղեմի Աթոռի հաջորդ պատրիարք Կիրակոս Երուսաղեմացու (1846–1850)՝ 1847 թ. ապրիլի 1-ի գրությունն ուղղված է կաթողիկոսին (ենթադրելի է՝

---

[29] *Օ ր մ ա ն ե ա ն. 1915, 9:*
[30] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 542, թ. 1:*
[31] *Օ ր մ ա ն ե ա ն. 1960, 2798:*
[32] *ՄՄ, ԿԴ, թղթ. 120, վավ. 444:*

Ներսես Աշտարակեցուն): Նկատի ունենալով, որ միաբան եպիսկոպոսները ծերացել են և նոր հոգևորականների կարիք կա՝ Երուսաղեմի պոլսական փոխանորդ Գևորգ վարդապետին ուղարկում է եպիսկոպոս ձեռնադրելու, իսկ նրան փոխարինելու համար Կ. Պոլիս է ուղարկում Դավիթ ծայրագույն վարդապետին[33]: Գրության ստորին աջ անկյունում առկա է վարդապետական գավազանով արտահայտված կարմիր, ձվածիր կնքադրոշմ, որի արձանագրությունը հիշատակում է. «Է/ ԿԻՐԱԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ 1847» (տե՛ս Նկ. 19):

Նկ. 18:
Չափս՝ 2.9 x 1.4 սմ:



Նկ. 19:
Կնիքի չափս՝ 3.1 x 2.4 սմ:

Այսօրինակ կնիքի գործածման մասին ուշագրավ վկայության ենք հանդիպում դեռևս անցյալ՝ XVIII դարի Երուսաղեմի Գրիգոր Շղթայակիր (1717–1749) պատրիարքի նամականիին ծանոթանալիս: Մասնավորապես, նամականու հրատարակիչ Արայ Գալայճեանի առաջաբանում ասվում է. «Նամակներուն աւարտին գտնուող Շղթայակիրի կնիքը յաճախ վերցուած է, յայտնի չէ թէ որու կողմէ. այսպէս է պարագան նամակներու մօտ կէսին համար: Կնիքը կարմիր մելանով է, հաւկթաձեւ, վարդապետական գաւազանով մը, եւ կը կարդացուի՝ Գրիգոր Վարդապետ»[34]: Գրիգոր պատրիարքի գուցե նույն, գուցե այլ կնիքի մասին ուշագրավ հիշատակության ենք հանդիպում նաև Տ. Սավալանյանցի մի ծանոթագրության մեջ. «Անոր պատրիարքական կնիքը կը կրէ Հայոց ՌՃԿԶ թուականը որ կը համապատասխանէ Քրիստոսի 1717 թուականին ...»[35]:

Կիրակոս պատրիարքի՝ 1850 թ. ապրիլի 23-ի օրհնության տպագիր կոնդակը՝ հասցեագրված պարոն Բարսեղ Արծրունյանին՝ ի նպաստ Երուսաղեմի կատարած հանգանակության առթիվ է[36]: Փաստաթղթի վերին կենտրոնում

---

[33] ՄՄ, ԿԴ, թղթ. 129, վավ. 88:

[34] Գալայճեան. 1971, 353:

[35] Սաւալանեանց. 1931, Հ. Բ, 690:

[36] ՄՄ, ԿԴ, թղթ. 259, վավ. 170:

առկա է կնքադրոշմ: Արձանագրությունը հիշատակում է. «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐԲ)Բ ՀԱՐՈՒԹԵ(ԱՆ) ՈՉ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆ(Ո)Ւ ԹԵ(ԱՆ)» (տե՛ս Նկ. 20):

Թեև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի և նրա բարձրաստիճան հոգևորականների կնիքները փաստաթղթաշրջանառության մեջ գգալիորեն ներկայանում են ընդհանրացված ձևով և, սակայն, անձի ու հղվող տեքստի նույնականացումից զատ, կնքադրոշմներն անհրաժեշտ է դիտարկել իբրև Երուսաղեմում քրիստոնյա հայության վարչական, կրոնական, մշակութային ներկայացուցչության խորհրդանիշ, տվյալ միջավայրի սոցիալ-մշակութային կողմի և ռազմավարության շրջանակում:

Երուսաղեմի պատրիարքական աթոռին հաջորդում է Հովհաննես Մովսիսյան Զմյուռնիացին (1850–1860): 1852 թ. մարտի 30-ին Երուսաղեմի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոսը գրությամբ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին հայտնում է, որ մահտեսի Հարություն աղան, խորին ծերության հասնելով, մահացել է հունվարի 20-ին[37]: Գրության ավարտին՝ աջ անկյունում, առկա է կարմիր թանաքով ձվածիր կնիք՝ «Յ(Ո)ՎՀ(Ա)ՆՆ(Ե)Ս/ Պ(Ա)ՏՐ(ԻԱ)ՐՔ/ Ս.(ՈՒՐԲ) Ե(ՐՈՒՍԱՂ)ԷՄԻ/ 1850» (տե՛ս Նկ. 21):



Նկ. 20:
Կնիքի չափս՝ 5.4 սմ:

Նկ. 21:
Կնիքի չափս՝ 3.1 x 2.4 սմ:

1860 թ. ապրիլի 3-ի՝ Հովհաննես արքեպիսկոպոսի օրհնության տպագիր կոնդակը՝ ուղղված Նախիջևանցի Գրիգոր Նալպանտովին, Երուսաղեմի վանքին նվեր տալու առթիվ է[38]: Ծաղկազարդ կոնդակի վերին կենտրոնում առկա է հստակ փորագրությամբ «Է/ ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ Ե(ՐՈՒՍԱ)Ղ(Ե)ՄԻ ՍՐԲ(Ո)Յ ՅԱՐ(ՈՒ)ԹԵ(Ա)Ն Ք(ՐԻՍՏՈՍ)Ի ԵՒ ՍՐԲ(Ո)ՅՆ Յ(Ա)Կ(Ո)Բ(Ա)Յ ԱԹՈՌՈՅ ԱՄ-(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Ց ՕՐՀՆՈՒ ԹԵ(ԱՆ) ԵՒ ՈՉ ՊԱՐՏՈՒՑ» կնիք, որի կենտրոնը զբաղեցնում է Քրիստոսի Հարության խորհրդապատկերը, իսկ այդ երկուսի միջանկյալ շրջագծում՝ տասներկու առաքյալների գլուխները, որոնք վերին մասում ամբողջանում են աղավնակերպ Սբ. Հոգու, իսկ ցածում՝ Աստծո գառան պատկերով (տե՛ս Նկ. 22):

1863 թ. մարտի 31-ի՝ Հովհաննես արքեպիսկոպոսի օրհնության տպագիր կոնդակը ուղղված է Փերիխան Շահնազարյանին 15 ղուրուշի նվիրատվության դիմաց[39]: Փաստաթղթի վերին կենտրոնում առկա է կնքադրոշմ, որի

[37] ՄՄ, ԿԴ, թղթ. 163, վավ. 3:
[38] ՄՄ, ԿԴ, թղթ. 260, վավ. 97:
[39] ՄՄ, ԿԴ, թղթ. 197, վավ. 142:

եզրային շրջագծով արտահայտված տասներկու առաքյալների գլուխները վերին մասում ամբողջանում են Հայր Աստծո գրկաբաց պատկերով, միջանկյալ հատվածում դաջված է «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐԲ)Բ ՀԱՐՈՒԹԵ(ԱՆ) ՈՉ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆ(Ո)ՒԹԵ(ԱՆ)» արձանագրությունը, իսկ կենտրոնում ներկայացված է Քրիստոսի Հարության տեսարանը (տե՛ս Նկ. 23): Հետաքրքրական է, որ Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում, որտեղ զգալիորեն պահպանվում է կնիքների տարբերակիչ մոտեցումը, երբեմն նկատվում են որոշ ընդհանրություններ: Մասնավորապես, առաքյալներին պատկերելու այս մոտեցումը հանդիպել է[40] ավելի վաղ շրջանի՝ Մելքիսեթ (1593–1624)[41] և Աստվածատուր Ա Համադանցի[42] (1715–1725) կաթողիկոսների կնիքներում՝ վկայելով այս տեսակ կնիքի գործածման ավանդույթի անընդհատությունը (տե՛ս Նկ. 24, 25):

Նկ. 22:
Կնիքի չափս՝ 5.4 սմ:

Նկ. 23:
Կնիքի չափս՝ 5.4 սմ:

Նկ. 24:
Կնիքի չափս՝ 3.8 սմ:



Նկ. 25:
Կնիքի չափս՝ 4.5 սմ:

Պատրիարքական կնիքների պատկերագրությունը

Որքան էլ կնիքի պատկերագրությունն արվեստի գործ չէ, ոչ էլ հիմնական գործառույթը, այդուհանդերձ, Երուսաղեմի պատրիարքական կնիքներում արտահայտված Հիսուս Քրիստոսի Հարության խորհրդապատկերը, հորինվածքային և պատկերապատման առանձնահատկություններով, լրացնում է, առհասարակ, Հարության տեսարանը[43]: Պատկերագրական հիմնական մոտիվների դիտարկումները թույլ են տալիս նկատել, որ դրանց գլխավոր էսքիզը նույնն է, թեև մեկն ավելի պարզ բնույթ ունի, մյուսը հարուստ է դետալներով:

---

[40] *Ֆ ա հ ր ա դ յ ա ն. 2019, 157:*
[41] *ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վավ. 42:*
[42] *ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վավ. 49:*
[43] *Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Մ կ ր տ չ յ ա ն. 2011, 60:*

Տեսարանի դասավորությունը ներկայացնում է լուսապսակով հարություն առնող Փրկչին՝ աջն օրհնության կերպ կամ դեպի երկինք ուղղված դիրքով, ձախը՝ ծածանվող խաչապսակ դրոշով: Քրիստոսի մարմնի կեցվածքը մասնավորապես՝ ոտքերի դիրքը, հուշում է, որ նա թափուր գերեզմանից բարձրանում է վեր[44]: Տերունական այս տեսարանից, որը հայտնի է մի շարք դետալների համադրմամբ, կնիքներում արտահայտվում է հիմնականում սարկոֆագը: Երբեմն այն պատկերվում է բաց, կիսաբաց, թեք վեմով՝ համադրվելով ճարտարապետական կառույցի ակնարկին[45]: Խորհրդանշական ձևով պատկերվում է Հիսուս Քրիստոսի խաչելության հավանական վայրը՝ Գանգ կամ Գագաթ (Ղուկ. ԻԳ. 33) անվանումով Գողգոթայի բարձունքը, որի վրա տեսնում ենք երեք խաչափայտ, մեջտեղինը՝ դիրքով ավելի բարձրը՝ Քրիստոսինն է, իսկ աջ և ձախ կողմերինը՝ երկու ավազակներինը: Բացի այս, կնիքների խորհրդապատկերներն ուղղակիորեն վերարտադրում են պատմական եղելությունն ու Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ձևավորման ընթացքը: Այսպես պատրիարքարանի որոշ կնիքներում նկատելի է Սրբոց Հակոբյանց եկեղեցում գտնվող Գլխադիրի մատուռում ամփոփված Զեբեդէոսի որդու՝ Հակոբոսի (Մտթ. Դ 21) գլուխը:

«Գլխադիր» եզրույթը, որը ցուցում է այն տեղը, ուր դրված է որևէ սրբի գլուխ, ինչպես Մշո Սբ. Կարապետի վանքը, որը համարվում է Հովհաննես Մկրտչի գլխադիրը[46], և, այդուհանդերձ, այս բառն առավել հատկանշական է Երուսաղեմի պատմության համատեքստում: Մեզ հաջողվել է գտնել Գլխադրի պատկանելությամբ կնիքի մի օրինակ՝ Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսաց»-ում ՌՂԸ-Ռճ (1649–1651)[47]: Այլ տեղից կտրված և 170 ա էջում սոսնձված այս կնիքը, որի կենտրոնում կտրված գլուխը զույգ հրեշտակների ձեռքում է, շուրջը մակագրություն՝ «ԿՆԻՔՍ Ս[ՈՒ]րբ Գլխ[ա]դրին է Աթոռի Ամ[ենայն] Հայոց»[48] (տե՛ս նկ. 26), ժամանակին գլխատված պատկերով պայմանավորված, կարծում ենք, սխալմամբ վերագրվել է Հովհաննես Մկրտչին[49]. իրականում ներկայացնում է Հակոբոս Տեառնեղբայր առաքյալին: Այս դատողությունը հիմնված է ինչպես ավանդույթի վրա, համաձայն որի, առաքյալի նահատակությունից հետո նրա գլուխը հրեշտակների ձեռքով բերվել ու դրվել է Աստվածամոր ձեռքերի մեջ, որից հետո Սբ. Աստվածածնի, Սբ. Հակոբ Տեառնեղբոր (Կրտսեր) և Սբ. Հովհաննես Ավետարանչի ձեռքով ամփոփվել է Երուսաղեմում[50], այնպես էլ արձանագրության «Աթոռի Ամ[ենայն] Հայոց»-ով, որը հուշում է՝ կնիքը աթոռապատկան է:

Երուսաղեմի հաջորդ պատրիարք՝ Եսայի Դ Կարապետյան Թալասցու (1864–1885) աթոռակալության 21 տարիներից հաջողվել է գտնել 4 կնքադրոշմ: Եսայի պատրիարքի ձեռագիր կոնդակն ուղղված է Ալեքսանդր ու

---

[44] Casse, Berserik and Hoyle. 1984, 20–24.

[45] *Մաթևոսյան, Ավետիսյան. 1993, 85:*

[46] *Մալխասեանց. 1944–1945, 444:*

[47] *ՄՄ, ձեռ. հմր. 1528:*

[48] *Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի. 2009, 338:*

[49] *Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի. 2009, 338:*

[50] *Ազաւնունի. 1936, 120:*

Ղազար Թաhիրյանցներին և Տեր Սարգիս Հասան Ջալալյանցին: Վավերագիրը հաստատող անվանակիր կնիքի արձանագրությունն է. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ Ս(ՈՒՐ)Բ Ե(ՐՈՒՍԱՂ)ԷՄԻ 1865» (տե՛ս Նկ. 27)[51]: Կնիքի կենտրոնում կրկին պատկերված է Հիսուսի՝ բաց գերեզմանից հարության առնելը:

Նկ. 26:
Կնիքի չափս՝ 4 սմ:

Նկ. 27:
Կնիքի չափսը՝ 4սմ:

Հաջորդ վավերագիրը ներկայացնում է 1869 թ. ապրիլի 20-ի՝ Եսայի արքեպիսկոպոսի օրհնության ձեռագիր կոնդակը՝ հասցեագրված Անդրեաս Օրբելեանցին՝ հույս հայտնելով, որ կօժանդակի Երուսաղեմի վանքին[52]: Փաստաթղթի վերին կենտրոնում տեղ է գտել պաշտոնական կլոր կնքադրոշմը՝ «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՉ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ»: Բացի այս, փաստաթղթի ստորին աջ անկյունում առկա է ևս մեկը, ավելի փոքրը՝ «ՊԱՏՐԻԱՐՔ/ ԵՍԱՅԻ/ Ս.(ՈՒՐԲ) Ե(ՐՈՒՍԱՂ)ԷՄԻ/ 1864» արձանագրությամբ (տե՛ս Նկ. 28, 29):

Նկ. 28:
Կնիքի չափս՝ 4 սմ:

Նկ. 29:
Կնիքի չափս՝ 3.1x 2.6 սմ:

1873 թ. ապրիլի 8-ի՝ Եսայի արքեպիսկոպոսի օրհնության տպագիր կոնդակն ուղղված է Տիրուհի Պալապանյանին՝ նրա կողմից Երուսաղեմի վանքին 20 կոպեկ նվեր տալու առթիվ[53]: Փաստաթղթի վերին կենտրոնը զբաղեցնում է «ԿՆԻՔՍ Ս(ՈՒՐ)Բ Է(ՐՈՒՍԱ)Ղ(Ե)ՄԻ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲ(Ո)Ց Յ(Ա)Կ(Ո)ԲԵԱՆՑ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ Յ(Ա)Ր(Ո)Ի(Թ)Ե(ԱՆ) ՉԷ Պ(Ա)ՐՏԻՑ ԱՅԼ ՕՐՀՆ(Ո)ՒԹԵ(ԱՆ)»

[51] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 804, թ. 14:
[52] ՄՄ, ԿԴ, թղթ. 217, վավ. 76:
[53] ՄՄ, ԿԴ, թղթ. 260, վավ. 122:

արձանագրությամբ, կենտրոնում՝ Հարության տեսարանի պարզ հորինվածքով կնիքը (տե՛ս Նկ. 30):

1885 թ. ապրիլի 17-ին Կ. Պոլսի պատրիարքական աթոռում հաստատված, իսկ արդեն 1885 թ. դեկտեմբերի 6-ին որպես Երուսաղեմի պատրիարք նշանակված Հարություն Վեհապետյանի պատրիարքական աթոռի փոփոխությունը վերջնական հաստատվում է միայն 1889 թ.[54]: Պատմական այս իրադարձության համատեքստում ուշագրավ է պատրիարք Վեհապետյանի 1897 թ. գրությունը՝ ուղղված Գևորգ ծայրագույն վարդապետին եպիսկոպոսության աստիճան շնորհելու առիթով[55]: Գրությունը հաստատող կնիքը՝ «ՊԱՏՐԻԱՐՔ/ ՅԱՐՈՒԹ.(ԻՒՆ) /Ս(ՈՒՐԲ) Ե(ՐՈՒՍԱՂ)ԷՄԻ/ 1888» արձանագրությամբ է, հուշում է, որ նախքան Երուսաղեմում հաստատվելը, Հարություն արքեպիսկոպոսը լիարժեք ստանձնել էր պատրիարքի պաշտոնը (տե՛ս Նկ. 31):

Նկ. 30:
Կնիքի չափս՝ 5.7 սմ:

Նկ. 31:
Կնիքի չափս՝ 3.1 x 2.6 սմ:

Մեկ այլ՝ «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(Ա)Յ ՅԱՐՈՒԹ(ԻՒ)Ն ՊԱՏՐԻԱՐՔ Ս(ՈՒՐ)Բ Ե(ՐՈՒՍԱՂ)ԷՄԻ 1888» արձանագիր կնիքով է հաստատված Հարություն Վեհապետյանի՝ 1889 թ. մայիսի 20-ի կոնդակը՝ հասցեագրված Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանին: Նշվում է, թե Ռուսաստանի և Օսմանյան կայսրության զանազան վայրերում ապրող հայերը բավական նյութական օժանդակություն են տրամադրել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին և հույս հայտնում, որ օգնությունը կշարունակվի[56]: Կնիքի պատկերը կրկին արտացոլում է Հարության տեսարան՝ վարպետի ձեռագրի փոփոխությամբ առավելապես ներկայացնելով լույսերի մեջ ճառագող Փրկչին (տե՛ս Նկ. 32):

1891 թ. փետրվարի 20-ի՝ Հարություն պատրիարքի շնորհակալական նամակը Երուսաղեմի օգտին հավաքված գանձանակադրամի ստացման, Երուսաղեմի միաբան Գաբրիել վարդապետ Անուշյանի լավ ընդունելության և մի շարք այլ հարցերի մասին է[57]: Վավերագրի վերին ձախ անկյունում առկա է դրոշմ, եզրագծով՝ «ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ՅԵՐՈՒ-

[54] Օ ր մ ա ն ե ա ն. 1961, 4610:
[55] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 148, թ. 7:
[56] ՄՄ, ԿԴ, թղթ. 262, վավ. 77:
[57] ՄՄ, ԿԴ, թղթ. 236ը, վավ. 28:

ՍԱՂԷՄ», պատկերի ստորին մասում՝ «Մ.(ԱՅՐԱՎԱՆՔ) Հ.(ԱՅՈՑ) Ս.(ՐԲՈՑ) Յ.(ԱԿՈԲՅԱՆՑ)» (տե՛ս Նկ. 33):

Դարավերջի պատրիարք Հարություն Վեհապետյանի վերոնշյալ մեծ կնիքով (Նկ. 30) ամբողջանում են ժամանակի հաստատված արձանագրային և պատկերազարդման օրինաչափությունները, զուգահեռաբար անվանական կնիքների տարբերությունների համադրությամբ նկատելի են պատկերագրական, ոճական ու արձանագրային փոփոխություններ:

Նկ. 32:
Կնիքի չափս՝ 3.9 սմ:

Նկ. 33:
Կնիքի չափս՝ 4.6 x 3.8 սմ:

Եզրակացություն

XIX դարի տարբեր ժամանակահատվածներին առնչվող դիվանական բնօրինակ փաստաթղթերում արտահայտված կնիքները գործածման սովորույթով, փաստաթղթին դրոշմման ձևով, պատկերագրական առանձնահատկություններով հայկական Երուսաղեմի կարևոր մշակութային շերտ են ներկայացնում:

Հավաքագրված կնիքների՝ առավելապես հայերեն արձանագրությունները, անկախ աշխարհագրական միջավայրից, տարբեր մշակույթների ազդեցության ոլորտներից, ցույցում են, որ դրանք գերազանցապես գործածվել են ներքին փաստաթղթաշրջանառության մեջ: Միևնույն ժամանակ, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի բազմաբնույթ հարաբերությունները թույլ են տալիս ենթադրել, որ, հայատառ կնիքներին զուգահեռ, պետք է կիրառվեին նաև այլալեզու կնիքներ:

Թափուր գերեզմանից Քրիստոսի հարությամբ սկսված անմահության և հավիտենական կյանքի ճանապարհը, իբրև նվիրական գաղափար, դարձել է նաև կնիքների պատկերագրության հիմնական թեմա: Ընդհանուր բնորոշմամբ, Երուսաղեմի պատրիարքական կնիքների պատկերագրությունը պահպանողական է և նկատելի է զգուշություն փոփոխությունների նկատմամբ:

Սիրանուշ Ֆահրադյան – Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ասպիրանտ, արխիվի ավագ ֆոնդապահ: Գիտական հետաքրքրությունները՝ ուշ միջնադարի պատմություն, արխիվագիտություն, մշակութաբանություն, հնագրություն: Հեղինակ է 5 հոդվածի: fahradyansiranush@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղաւնունի Մ. 1936, Սուրբ երկրին սրբավայրերու աւանդութիւնները, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 458 էջ:

Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. 1939, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիո, 1446 էջ:

Գալայճեան Ա. 1971, Նամականի Գրիգոր Շղթայակիր պատրիարքի. – «Սիոն» (Երուսաղէմ), թիւ 9–10, 353 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 56, ց. 14, գ. 148, թ. 7, ֆ. 57, ց. 2, գ. 1537, թ. 1, ֆ. 332, ց. 1, գ. 804, թ. 3, ֆ. 332, ց. 1, գ. 804, թ. 14:

Հայրապետյան Ա. 2011, Օտար բառերի բառարան, Երեւան, Հեղ. հրատ., 643 էջ:

Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ա. 1993, Ավետարանական պատկերներ, Տերունական շարքի 12 գլխավոր պատկերները, Երևան, ԵՊՀ հրատ., 103 էջ:

Մալխասեանց Ստ. 1944–1945, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, ՀՍՍՌ Պետական հրատ., 2409 էջ:

Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի. 2009, հ. Ե, կազմ.՝ Օ. Եգանեան, խմբ. Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, տ. Շահէ քհյ. Հայրապետեանի, Երևան, Նաիրի հրատ., ԵՊՀ հրատ., 740 էջ:

Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1966, հ. 1, կազմ.՝ Պողարեան Ն., Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 676 էջ:

Մելիք-Թանգյան Ն. 1905, Հայոց եկեղեցական իրավունքը, Բ. գիրք, Շուշի, տպ. Բ. Տեր-Սահակեանց, 279 էջ:

Մկրտչյան Զ. 2011, Հարության տեսարանի պատկերագրության ձևավորումը և խորհրդաբանությունը. – «Էջմիածին», ԿԵ տարի, № Ե, էջ 60–68:

ՄՄ, Ալ. Երիցյանի ֆոնդ, թղթ. 158, վավ. 85, ՄՄ, Ավ. Հովհաննիսյանի անմշակ ֆոնդ, թղթ. 262/2, վավ. 15, ՄՄ, Կ. Բազրատունի արք. ֆոնդ, թղթ. 163ա, վավ. 81, վավ. 340, ՄՄ, 2007 թ. տարեկան ձեռք. անմշակ ֆոնդ, ակտ № 1:

ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վավ. 42, վավ. 49, թղթ. 6, վավ. 140, թղթ. 120, վավ. 444, թղթ. 129, վավ. 88, թղթ. 146, վավ. 372, թղթ. 163, վավ. 3, թղթ. 197, վավ. 142, թղթ. 217, վավ. 76, թղթ. 236ը, վավ. 28, թղթ. 243, վավ. 145, վավ. 206, թղթ. 244, վավ. 208, վավ. 236, վավ. 329, թղթ. 259, վավ. 170, թղթ. 262, վավ. 77:

Յակոբեան Տ. 2021, Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան հաւասար իրաւունքներու վերականգնումը Սուրբ Ծննդեան եւ Սուրբ Աստուածածնի տաճարներուն մէջ 1811–1813 թթ. ըստ Թէոդորոս Բ. Վանեցի Պատրիարքի նորայայտ նամակին եւ Մահմուտ Բ. Սուլթանի հրովարտակին. – «Սիոն» (Երուսաղէմ), թիւ 4–7, էջ 239–247:

Չամչեանց Մ. 1786, Պատմութիւն Հայոց: Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հ. Գ, Վենէտիկ, Ի Տպարանի Պետրոսի Վաղվազեանց, 1092 էջ:

Սաւալանեանց Տ. 1931. Պատմութիւն Երուսաղէմի, հ. Ա, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 688 էջ:

Սաւալանեանց Տ. 1931, Պատմութիւն Երուսաղէմի, հ. Բ, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1387 էջ:

Քեօմիւրճեան Ե. 1982, Պատմութիւն համառոտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատ.՝ Ժ, Ավետիսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 413 էջ:

Օշական Հ. 1934, Մնացորդաց, հ. Գ, Արիւնի ճամբով, Հեղինակին կողմէ բացատրուած բառեր, Գահիրէ, տպ. Յուսաբեր, 652 էջ:

Օրմանեան Մ. 1915, Դիտողագիր. Երուսաղէմի համար կազմուած նոր կանոնագիրին զննութիւնն ու լուսաբանութիւնը, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 48 էջ:

Օրմանեան Մ. 1960, Ազգապատում, հ. Բ, մասն Գ, Պէյրութ, 697 էջ:

Օրմանեան Մ. 1961, Ազգապատում, հ. Գ, մասն Ա, Պէյրութ, 637 էջ:

Cassee E., Berserik K. and Hoyle M. 1984, The Iconography of the Resurrection: A Re-Examination of the Risen Christ Hovering above the Tomb. – “The Burlington Magazine”, vol. 126, Jan., № 970, pp. 20–24.

Dalton J. 1992, The Archiepiscopal and Deputed Seals of York, 1114–1500, England, University of York, 81 p.

Mand A. 2010, On two Medieval seal matrices and the guild seals from Tallinn. – “Baltic Journal of Art History” (by the University of Tartu Press), vol. 2, p. 1.

Pamuk S. 2000, A Monetary History of the Ottoman Empire. Cambridge University Press, 276 p.

НАДПИСИ И ИЗОБРАЖЕНИЯ ПЕЧАТЕЙ АРМЯНСКИХ ПАТРИАРХОВ ИЕРУСАЛИМА XIX ВЕКА

СИРАНУШ ФАГРАДЯН

Резюме

Ключевые слова: Армянский патриархат Иерусалима, архивные документы XIX в., печать, церковная геральдика, расшифровка надписей, сцена Воскресения в печатях.

Ряд архивных документов, относящихся к деятельности патриархов XIX века Армянского Апостольского Патриархата Иерусалима – Теодороса Ванеци (1801–1818), Габриила Никомедаци (1819–1840), Закарии Копеци (1841–1846), Киракоса Иерусалимского (1846–1850), Оганнеса Змюрнаци (1850–1860), Есаи Таласци (1864–1885), Арутюна Вехапетяна (1889–1910) – обобщенных в архиве Матенадарана им. Месропа Маштоца, имеют подтверждающие печати.

Формой тиснения на документе, обычаями их использования и изобразительными особенностями сцены Воскресения они представляют важный культурный пласт армянского Иерусалима. Как правило, печати армянских патриархатов использовались дольше, чем печати отдельных патриархов. Если использование личной печати ограничивалось периодом замещения престола патриарха или до конца его жизни, то официальная печать патриархата использовалась длительное время, иногда даже столетия, поскольку особых причин для ее смены не было. Это наблюдение позволяет наметить закономерности и основы использования институциональных и личных печатей.

Преимущественно армянские надписи собранных печатей, вне зависимости от географической среды, сфер влияния разных культур, показывают, что они использовались во внутренней документации. В то же время разно-

сторонние отношения Армянского Патриархата Иерусалима позволяют предположить, что печати на других языках должны были использоваться наряду с армянскими печатями.

Сирануш Фаградян – аспирант Матенадарана им. М. Маштоца, старший хранитель фондов архива. Научные интересы: история позднего средневековья, архивоведение, культурология, археология. Автор 5 статей. fahradyansiranush@gmail.com

INSCRIPTIONS AND IMAGES ON THE SEALS OF THE ARMENIAN PATRIARCHS OF JERUSALEM IN THE XIX CENTURY

SIRANUSH FAHRADYAN

Summary

Keywords: Armenian patriarchate of Jerusalem, archival documents, seal, church heraldry, decoding of seal inscriptions, Resurrection scene in the seals.

A number of archival documents relating to the activities of the XIX century patriarchs of Armenian Apostolic Patriarchate of Jerusalem - Theodoros Vanetsi (1801-1818), Gabriel Nikomedatsi (1819-1840), Zakaria Kopetsi (1841-1846), Kirakos of Jerusalem (1846-1850), Hovhannes Zmyurnatsi (1850-1860), Esai Talastsi (1864-1885), Harutyun Vehapetyan (1889-1910), summarized in the archive of the Matenadaran after Mesrop Mashtots, have confirming seals.

By the form of embossing on the documents, the customs of their use, and with pictorial features of the Resurrection scene, they represent an important cultural layer of Armenian Jerusalem. As a rule, the seals of the Armenian patriarchates were used longer than the seals of individual patriarchs. If the use of the personal seal was limited to the period of replacement of the throne of the patriarch or until the end of his life, then the seal of the patriarchate was used for a long time, sometimes even centuries, since there were no special reasons for its change. This observation allows us to outline the patterns and basis for the use of institutional and personal seals.

The predominantly Armenian inscriptions of the collected seals, regardless of the geographical environment, and spheres of influence of different cultures, show that they were primarily used for internal documentation, while the diversified relations of the Armenian Patriarchate of Jerusalem suggest that seals in the other languages were to be used alongside Armenian seals.

Siranush Fahradyan – PhD student at the Matenadaran after M. Mashtots, senior custodian of archive funds. Scientific interests: history of the late Middle Ages, archival studies, cultural studies, archaeology. Author of 5 articles. fahradyansiranush@gmail.com

ՀՏԴ 397 + 947.9

Doi:10.54503/0135-0536-2023.3-278

ЭТНОНИМ ТАВАСПАР
(К вопросу о происхождении названия табасаранцев)*

АЙКАЗ ГЕВОРГЯН

Ключевые слова: таваспар, табасаранцы, этноним, топоним, племенные названия, Северный Кавказ, кавказские племена, армянская историография, арабские источники, этимология, Каспийский регион, Иран.

Вступление

Табасаранцы, дагестанский народ, чей язык относится к лезгинской группе иберо-кавказской языковой семьи[1], с древнейших времен сконцентрирован в юго-восточной части Большого Кавказского хребта. Нынешний Табасаранский район, входящий в Северо-Кавказский административный округ Российской Федерации носит название этого народа. В течение веков табасаранцы не подвергались крупным этническим перемещениям, и историографические источники, как армянские, так и арабо-персидские, упоминают этот кавказский народ в северокавказских районах, по соседству с Дербендом. И в настоящее время они сосредоточены в основном в Табасаранском и, частично, в Хивском и Дербендском районах[2].

Этноним таваспар в армянских источниках

Самые ранние упоминания табасаранцев относятся к армянской историографии V века, где они свидетельствуются в форме *Թաւասպար-ք* (t‘awaspark‘)[3]. П. Бузанд, описывая поход маскутского царя Санесана в 30-х годах IV века в Армению, перечисляя наименования племен, входящих в войско последнего, упоминает и таваспаров: «В это время царь Санесан ... собрал все войско гуннов, похов, таваспаров [t‘awasparac‘], хечматаков, ижмахов, гатов, глуаров, гугаров, шичбов, чилбов,

---

* Представлена 23. XII. 2022 г., рецензирована 29. XII. 2022 г., принята к печати 29. XI. 2023 г.

[1] Языки народов СССР. 1967, 524, 545–561.

[2] Алимова. 1992, 8.

[3] Ю. Десятчиков в своей статье счел возможным идентифицировать сатарх-спалеев в греко-латинских источниках с армянскими таваспарами (Десятчиков. 1973, 138). Однако, эта точка зрения спорна и не получила распространения.

баласичев, егерсуанов и наместное множество других разношерстных кочевых племен, все множество войск, которым он повелевал»[4]. Судя по представленному Бузандом ряду, А. Акопян замечает, что эти народности перечислены по очередности с севера на юг[5]. Гунны, которые в указанном ряду упоминаются первыми, располагаются севернее Чорского прохода, соответственно таваспары локализуются к югу и юго-западу от Дербенда, в долине реки Рубас.

Другое упоминание имени табасаранцев относится к событиям середины V века. Егише называет войско табасаранцев *(զաւրսն Թաւասպարանն* – zawrsn T‘awasparann) в числе северо-кавказских горских племен, которые собрал Васак Мамиконян и сосредоточил в Чорском проходе с целью перекрытия путей гуннов, чтобы они не смогли прийти на помощь восставшим против персов армянским войскам во главе с Варданом Мамиконяном: «И по великому его злодейству обстоятельства принесли ему еще удачу в делах; ибо никого не нашлось извне в помощь войску Армянскому, кроме тех гуннов, о которых была уже речь моя. Но и против них он собрал многочисленную конницу Ариев, закрыл и запер ворота их прохода, и вовсе не давал покоя царю Персидскому, но посылал и призывал многочисленные отряды в пограничную крепость Чора, провел полный набор в стране Иверов, составил войска Лпинов и Чилбов и Ват, Гав и Глуар и Хрсан и хечматак, Пасх и Посх и Пюкуан и все войско Таваспарана [zawrsn T‘awasparann] – горного и равнинного, и крепостной стороны гор»[6]. В продолжении Егише отмечает, что Васак собрал этих горцев, сосредоточенных в Чорском проходе; некоторых уговаривая и одаривая, другим угрожая карательными действиями Сасанидского двора[7].

В следующем отрывке Егише упоминает это название в словосочетании страна табасаранцев *(աշխարհն Թաւասպարաց* – ashkharhn T‘awasparats‘): «А Мушкана Нюсалавурта со всеми, со всеми оставшимися войсками снарядил в страну Албанов, Лпинов и Чилбов и [в страну] хечматаков, и [в страну] Таваспаров [i T‘awasparats‘], и [в страну] Хибиован, и во все крепости, которые были разорены войсками гуннов по уговору с Армянами»[8]. Это тот отрывок, в котором описывается, как сасанидский военачальник Мушкан Нюсалавурт идет в вышеупомянутые территории для ознакомления с положением вещей на месте, так как гунны, по причине договора с армянами, разрушили Дербендские

---

4 *Բուզանդ. 2003, 284:* При цитировании источников были учтены как оригинальные тексты, так и их переводы. При необходимости в переводах на русский язык были произведены некоторые изменения для наиболее полного соответствия с оригинальными текстами, имеющимися в наличии.

5 Акопян. 1987, 93.

6 *Եղիշէ. 2003, 629:*

7 *Եղիշէ. 2003, 629:*

8 *Եղիշէ. 2003, 670:*

укрепления, имеющие важную значимость для Сасанидов. Горские воинствующие племена Кавказской Албании, которые заселяли территорию от Дербендского коридора до реки Куры, в основном были заняты военными делами и сотрудничали с разными региональными силами за вознаграждение. В частности, табасаранцы, локализованные по соседству с Дербендом, и другие северо-кавказские мелкие племена, в качестве сторожевых гарнизонов, назначались со стороны сасанидских царей для охраны Дербендских укреплений.

Следующий армяноязычный источник, где упоминаются табасаранцы – это «Ашхарацуйц» («Армянская география»). В главе «Азиатская Сарматия» среди перечисленных племен названы и табасаранцы. В разных редакциях «Ашхарацуйца» этот этноним указан в формах *Թաւասպարք* (T‘awaspark‘) и *Թաւասպարոտք* (T‘awasparotk‘). К тому же заметно, что во всех случаях этнонимический ряд, следующий за табасаранцами, одинаков, ср.: «Второя часть (Кавказского хребта) тянется на северо-восток, где проживают Таваспары [T‘awaspark‘], Хечматаки, Ижмахи, Пасхи, Пусхи, Пюканаки, Багани, откуда и берет свое начало длинная стена, называемая Апзут-Кават... К северу от этой стены, на равнине Варданян, вплоть до Каспийского моря, проживает народ Мазкутан»[9].

Таким образом, обобщая вышеупомянутые данные, можно отметить, что таваспар в армянских источниках имеет этнонимическое применение, поскольку в качестве этнонима характеризует войско или землю данного народа.

Название Табарсаран в арабских источниках

Для изучения этнонима табасаранцы большое значение имеют также арабские источники раннего периода. Первые упоминания этого названия в арабоязычных источниках относятся к периоду правления Хосрова I Ануширвана (VI в.). Балазури в своем сочинении «Завоевание стран», в главе «Завоевание Армении», рассказывая историю о возведении Дербендских укреплений и создания сторожевых гарнизонов из локальных кавказских племен в этих областях в доисламский период, до арабских нашествий, упоминает и название Табарсаран словообразованием Табарсараншах: «Ануширван назначил царей в каждую губернию и наделил их царскими полномочиями (шахийя). Среди них хакан Горы, который был хозяином Сарира (трона) и назывался Вахрарзаншах, царь Филана, т. е. Филаншах, Табарсараншах [طبرسرانشاه ṭabarsarānshah], царь ал-Лакзов, который назывался Джаршаншах, царь Маската, царство которого теперь не существует, царь Лирана, который назывался

---

[9] *Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք Նախնեաց. 2003, 2150*, ср.: *Աշխարհացոյց Է դարու. 2003, 2170, Յաղագս աշխարհագրու-թեան սորյգ. 2003, 2186:*

Лираншах и царь Шарвана, который назывался Шарваншах»[10]. О завоевании Анушнрваном Дербенда, Табарсарана и Баланджара пишет и Якуби (IX в.): «Персидский царь завоевал Баб ал-Абваб, Табарсаран [طبرسران - ṭabarsaran, Баланджар и построил город Каликала [قاليقلا] и множество других городов, которые заселил персами [اهل فارس]»[11]. Масуди (X в.), описывая Кавказские горы и отмечая 72 разных племени, проживающих там, каждое из которых имело свой отдельный язык, рассказывает о возведенных Анушнрваном укреплениях Баб ал-Абваба, которые тянулись до укреплений Табарсерана[12]. В продолжении Масуди упомянает кавказских царей, в их числе Табарсерана, который находится по соседству с Шарваном и ближе всех находится к Баб ал-Абвабу: «По соседству с Шарваном в горах Кабх, царь табарсерана, который в настоящее время мусульманин. ... Подвластное ему племя ближе всех находится к городу Баб вал-Абваб»[13].

Титул Табарсараншах упоминает Балазури в связи с событиями VIII века, когда Маслама ибн абд ал-Малик, назначенный управляющим Арменией, подчиняет себе кавказских горных царей, в том числе и Табарсараншаха[14]. О походах Масламы имеются сведения и у Якуби. Он пишет: «Маслама продвинулся в стране хазаров и достиг Джурзана. Завоевал его и разгромил народ, затем двинулся в Шарван, народ которого провозгласил подданство, вошел в Маскат, народ которого также подчинился. Он направил свои ковалерийские полки в страну ал-Лакз, народ которого также присягнул ему, отправил войска в Табарсаран [طبرسران - ṭabarsaran], жители которого также подчинились»[15]. Балазури упоминает Табарсараншаха также в период правления другого управляющего Арменией Марван ибн Мухаммада (738 г.), когда Табарсараншах обязуется ежегодно отправлять десять тысяч мод пшеницы в хранилища Дербенда[16]. История о набегах на северокавказские территории, подчинении локальных мелких княжеств и облажении их данью в период правления Арменией Марвана, содержится и в сочинении Халифа ибн Хайата (VIII–IX вв.). Он, рассказывая о тех же событиях, вместо словосочетания «народ Табарсарана», использует словосочетание أهل طبرستان (ahl ṭabaristān), т. е. народа Табаристана[17], что, несомненно, является результатом путаницы с одноименным районом Ирана (нынешний Мазандаран). О северокавказских походах Марвана пишет

[10] البلاذري. 1901، 204-205

[11] تاريخ اليعقوبي. 2010، المجلد الاول، 223

[12] Сборник материалов для описания местностей и племен Кавказа (далее – СМОПК). 1908. 38, 40–41.

[13] СМОПК. 1908. 38, 43.

[14] البلاذري. 1901، 214

[15] تاريخ اليعقوبي. 2010، المجلد الثاني، 246

[16] البلاذري. 1901، 216

[17] خليفة بن خياط. 1985، 352

и другой арабский историк XIII века ибн ал-Асир: «В 121 году Марван ибн Мухаммад ибн Марван пошел походом [в некоторые районы] Армении, правителем которого являлся. … Затем покорил Киран и подчинил себе Табарсаран [طبرسران - ṭabarsarān] и Филан и все приморские районы, от Армении до Табаристана»[18].

Арабоязычный географ IX века ибн ал-Факих в своем сочинении, в главе «Слово об Армении» упоминает землю Табарсарана [ارض طبرسران - arḍ ṭabarsarān][19], что находится у Баб ал-Абваба (Дербенд), ниже перечисляет находящиеся в кавказских горах крепости. Это перечисление почти полностью совпадает с перечислением другого автора IX века ибн Хордадбеха, ср.: «Это (Абваб) состоит из имеющихся в ущельях Кавказских гор (Кабк). Там имеются крепости, такие как ворота Сула, ворота Аланов, ворота Шапорана, ворота Лазика, ворота Бабика, ворота Самцхе, ворота хозяина Сарира, ворота Филаншаха, ворота Карунана, ворота Табарсараншаха [باب طبرسرانشاه - bāb ṭabarsarānshāh], ворота Лираншаха, ворота Либаншаха, ворота Ануширвана»[20]. То же самое перечисление содержится и у арабского географа XII–XIII вв. Якута ал-Хамави[21].

О Табарсаране и живущем там народе есть сведения у автора X века ал-Истахри, который называет их храбрым народом: «По соседству с Баб-ул-Абвабом к пределам исламских государств на берегу моря есть волость по имени Маскат, а рядом с нею земля Лакзов. Эти последние – племя значительное, мужественное и рослое; у них есть плантации и постоянно обятаемая область. ... Между ними и между Баб-ул-Абвабом страна Табарсаран [بلد طبرسران - balad ṭabarsarān]; жители ея также мужественны и храбры, как Лакзы, и страна их так же густо населена, как и у тех, разве только, что Лакзы превосходят Табарсаранцев числом, и владения их гораздо обширнее»[22]. Эти сведения есть и у Якута ал-Хамави, который, однако, вместо формы Табарсаран приводит форму Табарсараншах[23]. Якут в своем сочинении «Му'джам ал-булдан» посвящает отдельный заголовок Табарсарану, как важной области административной единицы Армения халифата, отмечая его в форме Табарстаран, ср.: «Табарстаран [طبرستاران - ṭabarstarān] – важная область Армении, о которой упоминается в “Книге Завоеваний”. Эту местность завоевал Салман ибн Рабиа в 25-ом году»[24].

Об этнониме табасаранцы важные сведения содержатся у арабского путешественника XI–XII вв. из Гранады Абу Хамид ал-Гарнати, кото-

---

[18] ابن الاثير. 1987، المجلد الرابع،450

[19] ابن الفقيه. 1996، 583

[20] ابن خرداذبه. 1889، 123-124، ابن الفقيه. 1996، 586

[21] ياقوت الحموي. 1977، المجلد الول، 304

[22] الاصطخرى. 1927، 187

[23] ياقوت الحموي. 1977، المجلد الول، 304

[24] ياقوت الحموي. 1977، المجلد الرابع، 16

рый в своем большом путешествии посетил и Дербенд. В сочинении «Тухфат ал-албаб ва нухбат ал-аджаб», рассказывая о Дербенде, он отдельно останавливается на табасаранцах, приводя форму табарсалан: «В стране Дербенда Баб ал-Абваба есть народность, которую называют табарсалан [طبرسلان - ṭabarsalān], у них двадцать четыре рустака, в каждом рустаке имеется большой военачальник, подобный эмиру. Они – мусульмане, принявшие ислам во времена Масламы ибн Абд ал-Малика, когда Хишам ибн Абд ал-Малик, став халифом, послал его и он завоевал Баб ал-Абваб. И приняли из его рук ислам многочисленные народы, в том числе: лакзан, и филан,и хайдак, и заклан, и гумик, и дархах. Всего этих народов – семьдесят, и у каждого народа свой язык»[25].

Таким образом, из арабоязычных источников явствует, что Табарсаран используется в качестве наименования географическо-административной единицы. Исключение составляет арабоязычная хроника «Тар'их ал-баб» (начало XII в.), где упоминается форма الطبرسرانية – al-ṭabarsarāniya (т. е. табарсаранец) в качестве этнонима[26], образована на основе топонима Табарсаран. Параллельно с формой Табарсаран в арабских источниках используются также искаженные формы Табарсалан, Табарстаран и Табаристан. Последний является результатом ошибочного совмещения с иранским прикаспийским Табаристаном. Арабские формы Табарсарана и, особенно, упомянутая Якутом форма Табарстаран, очень схожа с формой *Տապաստաւան* (Tapastawan) (другие варианты – *Տապոտարան* - tapotaran и *Կատապաստիան* - Katapastian), приведенной в «Ашхарацуйце», в отделе описания Азиатской Сарматии, в части, предшествующей имени Таваспар, между этнонимами Лек и Алутакан. Примечательно, что С. Еремян в переводе «Ашхарацуйца» на современный армянский, представил этот этноним в виде *Տապասարան* (Tapasaran), что отождествляется с современной формой Табасаран. Упоминание двух разных форм одного и того же этнонима в одном ряду скорее всего следует объяснять последующими описками[27]. Известно, что разные редакции «Ашхарацуйца» относятся к разным периодам, и редакторы или переписчики не поняли идентичность этих форм и две разные формы одного и того же названия привели в одном ряду[28]. Арабская форма Табарсаран или Табарстаран в армянской письменности с легкостью могла быть перепутана и превратиться в *Tapawstavan, которая, в свою очередь, перешла в Tapastavan. Что касается формы Tapotaran, то она встречается в рукописях более позднего периода. В поздний период староармянского (грабар) дифтонг *աւ* (aw)

[25] أبو حامد الغرناطي. 1993، 109-110

[26] А л и к б е р о в. 2003, 110.

[27] А к о п я н. 1987, 90, прим. 266; 93.

[28] А. Акопян такими же повторяющимися формами считает упомянутые в данном ряду формы Пух/Пусх и Чилбя/Шрванк (А к о п я н. 1987, 93).

в закрытом слоге стал произноситься как о (ср. *աւր (awr) = օր (or)* – день), следовательно, форма *Tapawstavan (Tapastavan) превратилась в Tapostavan, затем – Tapotaran, так же как для формы ***Թաւասպարան*** (T'awasparan) в поздних рукописях Егише, где присутствует форма ***Թօսպարան*** (T'osparan)[29].

Таким образом, учитывая наличие множества искаженных форм этого названия, считается целесообразным употребление формы ***Թաւասպար*** (T'awaspar) или ***Թաւասպար*** + ***ան*** (T'awaspar + an) для армянского и Табарсаран *(طبرسران - ṭabarsaran)* для арабского (которая в дальнейшем, в результате редукции превратилась в Табасаран)[30].

История изучения вопроса

В ходе изучения названия табасаранцев исследователи в основном опирались на арабские источники, при этом не принимались во внимание армянские версии. А. Аликберов, например, считает армянские версии этого названия искаженными[31]. Это можно объяснить тем, что до настоящего времени актуальна именно арабская форма этого топонима. Жители Табасарана сами себя называют табасаранар (табасараны)[32].

Путаница схожих названий Табарсаран и Табаристан, а также сведения средневековых арабоязычных источников, согласно которым царь Сасанидов Хосров Ануширван населил западнокаспийские регионы ираноязычным населением, дали основание некоторым исследователям связать название Табарсаран с иранским Табаристаном. А. К. Бакиханов в своем труде «Гюлистан-и Ирам», в связи с именем табарсаран пишет следующее: «... можно сказать, что жители части Табасарана, западной части Кубинского уезда, Самурского округа и Кюринского владения по большей части состоят из древних народов, смешавшихся с позднейшими пришельцами. Обитатели окрестностей Дербенда, большей части Табасарана, восточной части Кубинского, Шекинского, Бакинского и Ширванского уездов и Сальяна являются потом-

[29] *Եղիշէ. 2003, 629, ծանոթ. 46:*

[30] Аликберов. 2003, 110.

[31] Аликберов. 2003, 110.

[32] П. К. Услар в своем труде «Табасаранский язык» приводит и другой эндоэтноним табасаранцев – *гумгум*. Он в этой связи пишет: «Очевидно, что это удвоения звука, вроде других кавказских этнических названий: керкес (черкес), шешень (чечень), галгай и т. п. Название гум необъяснимо» (Услар. 1979, 43). Учитывая, множественную форму *гумгум – гуннар*, Услар пишет: «Внимание невольно обращается на формы гуннар и гуннуан. Гум и гун так близки друг к другу, что нельзя не предположить, что название гумгум есть гунгун, удвоение названия гун, что прямо напоминает исторических гуннов» (Услар. 1979, 43). Табасаран по-разному называют и соседи. Кюринцы табасаран называли кьабгъан, кайтаги – шилан, агулы – унахар (Гасанов. 1998, 74).

ками персов, арабов, тюрок, монголов и татар», затем в продолжении отмечает: «Так как большая часть жителей Табасарана переселена сюда Ануширваном из Табаристана и Исфахана, то название Табасаран могло произойти от Табаристана»[33]. М. А. Казем-Бек в «Дербенд-наме», комментируя название Табасаран, в отношении этой точки зрения, пишет: «Современная орфография названия этой области Дагестана – Taberseran, что означает «имеющие топорообразную голову», или точнее «топороносцы». Это объяснение предлагается современными исследователями этой местности, которые свою точку зрения обосновывают легендой, согласно которой наименование местности было дано Анушированом той группе людей, которые были назначены охранять Дербендскую крепость»[34]. А. К. Услар в этой связи пишет: «Впрочем, некоторые туземные ученые полагают, что Табасарань есть измененный Табаристан, как некогда назывался край, потому что Нуширван поселил в нем весьма много табаристанцев. Быть может, это и справедливо, потому что и теперь еще в крае находится много селений, жители которых говорят по-татски, т. е. на одном из иранских наречий»[35]. Об этимологии названия Табарсаран Услар также пишет: «Весьма явственно считается, что название это не есть горское кавказское; всего вероятнее можно ему приписать иранское происхождение. Но и при помощи иранского языка, оно, насколько, я могу судить, остается необъяснимым. Вторая половина слова سران значит головы; первая быть может есть تبا порча, разрушение или تبر топор, но все эти предположения не ведут к удовлетворительной разгадне»[36]. Эти точки зрения не исключает и В. Минорский, отмечая: «Табар-сара̄н ‘головы топорком’, по-видимому, иранская этимология названия нынешних табасаранцев. Не исключена и здесь связь имени с гарнизоном тапуров Табаристана (Мазандарана)»[37]. Как отмечает В. Бартольд, название Табаристан является переделанной формой персидского Тапуристан от имени тапуров (Τάπυροι или Τάπουροι)[38]. Следовательно, здесь имеем дело лишь со схожестью наименований. Если бы имя Табарсаран возникло из формы Табаристан, то ничего не мешало бы сохранить его в этой форме, как например, одно из арабских названий Каспийского моря – بحر طبرستان , т. е. Табаристанское море. Кроме этого, временной период возникновения наименования нельзя связывать также с заселением этих краев ираноязычными массами, осуществленными Анушированом, поскольку армянские источники упоминают табасаранцев в свя-

[33] Б а к и х а н о в. 1991, 13–14.
[34] K a z e m-B e g. 1851, 102.
[35] У с л а р. 1979, 42.
[36] У с л а р. 1979, 41–42.
[37] М и н о р с к и й. 1963, 125, прим. 47.
[38] Б а р т о л ь д. 2003, 215.

зи с событиями 30-х годов IV века, задолго до периода правления Ануширвана (VI в.).

Схожость названий Табарсаран и Табаристан не обошел вниманием и А. Новосельцев. Отмечая, что в древние времена в южнокаспийских регионах, до появления иранских языков могли быть распространены и дагестанские языки, и название иранского Табаристана могло произойти от этнонима табасаранцев, последний пишет: «Название Таба + рсаран удивительно напоминает древнее наименование другой прикаспийской области, в пределах современного Ирана, – Табаристан (современный Мазандеран). В исторически обозримую эпоху мазандеранцы говорили на языке иранской группы, но в глубокой древности могло быть иначе, и на южном берегу Каспийского моря могли бытовать другие языки, тем более что в древности дагестанские языки были распространены далеко на юг, в пределах Ирана, да и в раннем средневековье на них говорила большая часть населения Кавказской Албании. Островки этих языков существуют и ныне в Азербайджане и Грузии»[39].

А. К. Аликберов, отрицая связь Табарсарана со словом «топор» и считая эту точку зрения результатом народной этимологии, одновременно принимает за основу арабский корень тбр для этимологии этого названия. Приводя различные образования из этого корня из разных семитских языков, последний приходит к выводу о том, что Табарсаран состоит из частей табар и сар + ан, где сар обозначает управляющий (перс. سر (sar) – голова), а табар – «отряд», ср.: «В последнем случае имеются в виду предводители прикрепленных к определенным крепостям (ас-сугур) отрядов, состоявших из ираноязычных колонистов, в том числе и иудеев, охранявших горные проходы от вторжений с севера»[40].

К происхождению названия табасаранцев обращался и М. Гасанов в статье «К вопросу о происхождении Табасаран». Последний исследует не Табарсаран, а Табасаран, т. е. без первой буквы *р* и объясняет это слово как состоящее из двух частей – таб (холм, возвышенность) и саран (страна)[41].

Заключение

Учитывая вышеперечисленные точки зрения, можно констатировать, что большинство исследователей сходятся во мнении, что наименование табасаранцев имеет иранское происхождение и не объясняется данными кавказских языков. Несмотря на то, что принимается идентичность армянского таваспара и арабского табарсарана, однако для этимологии названия берется за основу арабская форма, а армянская

[39] Новосельцев. 1990, 103.
[40] Аликберов. 2003, 123.
[41] Гасанов. 1998, 76.

форма считается искаженной с арабского[42]. Здесь считаем необходимым внести некоторые поправки. Обычно для этимологии слов берутся за основу самые ранние варианты, а сведения, содержащиеся в армянских источниках на несколько веков старше первых арабских сведений. Армянский дает более широкие возможности для объяснения этого названия на иранской почве. Об этом свидетельствует значительное количество иранских заимствований в армянском языке. Таким образом, для выяснения происхождения названия табасаранцев необходимо учитывать именно армянскую форму этого названия, т. е. таваспар или таваспаран. При изучении армянской формы особенно бросается в глаза вторая часть названия – спар *(սպար)*. Ее можно объяснить иранским spāh < др. перс. spāda (войско, военный отряд), что присутствует в армянском и в других иранских заимствованиях, ср., например, арм. *սպարապետ* (sparapet) < *spādapati, перс. sepahbod (военачальник, глава отряда). Соответственно, первую часть слова – *թաւ* (t'aw) можно идентифицировать с персидской формой tāw/tāb, что означает «сила, могущество», т. е. арм. *թաւասպար* (t'awaspar) < ир. *tāwaspāda «сильный, могучий, оборонительный отряд». Учитывая активное участие табасаранских войск в деле защиты Дербендских укреплений в качестве воинствующих горных племен, данная этимология звучит очень логично. Соответственно, форму табарсаран можно считать арабской адаптацией, которая в дальнейшем, в результате распространения в этих районах ислама и арабской культуры, получила более широкое применение и была воспринята и самими табасаранцами.

Айказ Геворгян – к. филол. н., старший научный сотрудник отдела востоковедения Матенадарана им. М. Маштоца, преподаватель Института востоковедения Армяно-Российского университета. Научные интересы: этнонимика, ономастика, текстология, армянские и арабо-персидские средневековые источники. Автор 15 статей.
haykaz1605@gmail.com

ЛИТЕРАТУРА

Акопян А. 1987, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, АН АрмССР, 304 с.

Аликберов А. 2003, Эпоха классического ислама на Кавказе. М., «Восточная литература», 847 с.

Алимова Б. 1992, Табасаранцы, XIX – начало XX вв. Махачкала, «Дагестанское книжное издательство», 264 с.

Бакиханов А. 1991, Гюлистан-и Ирам. Баку, «Элм», 142 с.

[42] См.: А л и к б е р о в. 2003, 110.

Бартольд В. 2003, Работы по исторической географии и истории Ирана. М., «Восточная литература», 665 с.

Гасанов М. 1998, К вопросу о происхождении Табасаран. – Дагестан в эпоху великого переселения народов. Махачкала, Институт ИАЭ ДНЦ РАН, с. 64–82.

Десятчиков Ю. 1973, Сатархи. – «Вестник древней истории», т. 1, с. 131–144.

Минорский В. 1963, История Ширвана и Дербенда X–XI веков. М., «Издательство Восточной литературы», 265 с.

Новосельцев А. 1990, Хазарское государство и его роль в истории Восточной Европы и Кавказа. М., «Наука», 264 с.

Сборник материалов для описания местностей и племен Кавказа. 1908. Тифлис, вып. 38, отдел второй, «наместника Его Императорскаго Величества на Кавказе», с. 1–57.

Услар П. 1979, Этнография Кавказа, Языкознание, VII, Табасаранский язык. Тбилиси, «Мецниереба», 1072 с.

Языки народов СССР. 1967, т. 4, Иберийско-кавказские языки. М., «Наука», 713 с.

Աշխարհացոյց է դարու. 2003, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 2162–2175:

Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. 2003, «Մատենագիր հայոց», հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 2137–2161:

Եղիշէ. 2003, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, «Մատենագիր հայոց», հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 517–764:

Յաղագս աշխարհագրութեան ստոյգ. 2003, «Մատենագիր հայոց», հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 2177–2192:

Փաւստոս Բուզանդ. 2003, Բուզանդարան Պատմութիւնք, «Մատենագիր հայոց», հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 276–428:

Kazem-Beg Mirza A. 1851, The Derbend-Nameh. St. Petersburg, “Printed for the Imperial Academy of Sciences”, 245 p.

ابن الاثير. 1987، الكامل في التاريخ، المجلد الرابع، دار الكتب العلميه، بيروت-لبنان، 520 ص.

ابن الفقيه. 1996، كتاب البلدان، عالم الكتب، بيروت-لبنان، 759 ص.

ابن خرداذبه. 1889، المسالک والممالک، طبع في مدينة ليدن المحروسة بمطبع بريل، 308 ص.

أبو حامید الغرناطي. 1993 ، تحفة الألباب ونخبة الاعجاب، تحقيق الدكتور اسماعيل العربي، منشورات: دار الافاق الجديدة بالمغرب – الطبعة الأولي، 218 ص.

الاصطخرى. 1927، مسالک الممالک، طبع في مدينة ليدن المحروسة، بمطبعة بريل، 348 ص.

البلاذري. 1901، فتوح البلدان، الطبعة الأولي، بالقاخرة المعوْية، طبع بمطبعة الموسوعات بشارع باب الخلق بمصر، 480 ص.

تاريخ اليعقوبي. 2010، تحقيق عبد الامير مهنا، المجلد الاول، بيروت-لبنان، موسسة الاعلمي للمطبوعات، 409 ص.

تاريخ اليعقوبي. 2010، تحقيق عبد الامير مهنا، المجلد الثاني، بيروت-لبنان، موسسة الاعلمي للمطبوعات، 482 ص.

خليفة بن خياط. 1985، تاريخ، الرياض، دار طيبة، 628 ص.

ياقوت الحموي. 1977، معجم البلدان، المجلد الول، بيروت، دار صادر، 540 ص.

ياقوت الحموي. 1977، معجم البلدان، المجلد الرابع، بيروت، دار صادر، 501 ص.

ԹԱՎԱՍՊԱՐ ՑԵՂԱՆՈՒՆԸ
(Թաբասարանցիների անվան ծագման հարցի շուրջ)

ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա մ փ ո փ ո ւ մ

Բանալի բառեր՝ Թավասպար / Թաւասպար, Թաբասարանցիներ, ցեղանուն, տեղանուն, Հյուսիսային Կովկաս, կովկասյան ցեղեր, Հայ պատմագրություն, արաբական աղբյուրներ, ստուգաբանություն, Կասպիական տարածաշրջան, Իրան:

Թաբասարանցիները (ինքնանվանումը՝ Թաբասարանար) հնագույն ժամանակներից կենտրոնացած են Մեծ Կովկասյան լեռնաշղթայի հարավարևելյան լանջերին: Դաղստանյան այս ժողովուրդը, որի լեզուն պատկանում է իբերո-կովկասյան լեզվաընտանիքի լեզգիական խմբին, «Թաւասպար(ք)» ձևով հիշատակված է V դարի հայ մատենագրության մեջ՝ Մ. Խորենացու, Եղիշեի և Բուզանդի աշխատություններում: Հայկական աղբյուրների հիշատակություններին զուգահեռ՝ Թաբասարանցիների անվան ուսումնասիրության համար կարևոր տեղ են զբաղեցնում միջնադարյան արաբական աղբյուրները, որոնցում նրանց երկիրը հիշատակված է Տաբարսարան, իսկ ժողովուրդը՝ ահլ տաբարսարան (Տաբարսարանի բնակիչ) կամ տաբարսարանիյա (տաբարսարանցի) ձևերով:

Թաբասարանցիների պատմությամբ և նրանց անվան ծագումնաբանության հարցերով զբաղվողները, գրեթե առանց բացառության, հակված են ցեղանվան իրանական ծագման տեսակետին: Թեև նրանք ընդունում են ցեղանվան հայկական և արաբական տարբերակների նույնականությունը, բայց որպես քննության առարկա՝ դիտարկում են անվան արաբական ձևը:

Սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունների համադրումն ու համեմատական քննությունը ցույց են տալիս, որ Թաբասարանցիների անվան ստուգաբանության համար առաջին հերթին պետք է հաշվի առնել հայկական աղբյուրներում վկայված տարբերակը՝ Թաւասպար, քանի որ դրանցում առկա տեղեկությունները ավելի վաղ են:

Հայկազ Գևորգյան – բ. գ. թ., Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արևելագիտության բաժնի ավագ գիտաշխատող, Հայ-ռուսական համալսարանի արևելագիտության ինստիտուտի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ ցեղանվանագիտություն, հատկանվանագիտություն, տեքստաբանություն, հայ և արաբապարսկական միջնադարյան սկզբնաղբյուրներ: Հեղինակ է 15 հոդվածի:
haykaz1605@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

THE ETHNONYM TAVASPAR
(On the problem of the origin of ethnonym of the Tabasaran people)

HAYKAZ GEVORGYAN

Summary

Keywords: T'awaspar, Tabasarans, ethnonym, toponym, North Caucasus, Caucasian tribes, Armenian historiography, Arabic sources, etymology, The Caspian region, Iran.

Tabasarans (endonym – Tabasaranar) are concentrated in the southeastern slopes of the Greater Caucasus Range from ancient times. These Dagestanian people, whose language belongs to the Lezgin group of the Ibero-Caucasian language family, is mentioned in the Armenian bibliography of the V century- in the works of M. Khorenatsi, Yeghishe and Buzand, in the form of "t'awaspar(k')". Along with the Armenian sources, the medieval Arabic historiography plays an important role in the examination of the ethnonym of Tabasaran people, where the country of Tabasarans is mentioned as Tabarsaran and the people are called ahl ṭabarsaran (inhabitant of Tabarsaran) or al-ṭabarsaraniya (Tabarsaranian).

The researchers dealing with the history and the origin of the ethnonym of Tabasaran people, almost without any exception, tend to explain their ethnonym on the basis of Iranian languages. Although they recognize the identity of the Armenian and Arabic versions of the ethnonym, they consider the Arabic form of the name as the object of study.

The comparative analyses and correlation of the information available in the early sources show that for the etymology of the name of the Tabasaran people, first of all, the version attested in the Armenian sources - t'awaspar- should be taken into account, as the information preserved in them is of earlier origin.

Haykaz Gevorgyan – Candidate of Sciences in Philology. Senior Researcher at the Department of Oriental Studies of the Matenadaran after M. Mashtots, Lecturer at the Institute of Oriental Studies of the Armenian-Russian University. The scientific interests: ethnonymy, onomastics, textology, Armenian and Arabo-Persian historical sources. Author of 15 articles.
haykaz1605@gmail.com

ՀՏԴ 39(479) + 32

Doi:10.54503/0135-0536-2023.3-291

COMPARATIVE CHARACTERISTICS OF SOUTH CAUCASIAN ETHNO-POLITICAL CONFLICTS (1990–2020)*

LILIT DALLAKYAN

Keywords: South Caucasian ethno-political conflicts, Nagorno-Karabakh-Artsakh, South Ossetia, Abkhazia, right of self-determination of nations, Georgian-Abkhazian, Georgian-South Ossetian, Russian-Georgian military operations, chauvinism policy, peacekeeping forces, international law.

Introduction

The collapse of the Soviet Union, which had a huge geopolitical significance in recent history, was a stimulus for the outbreak of frozen ethno-political conflicts in its territory, including in the South Caucasus. The "awakening" of the inherited from the USSR and previously hidden conflicts coincided chronologically with the period of Gorbachev's reconstruction and heated up to the maximum after the collapse of the Soviet Union and after the declaration of independence of three new states in the South Caucasus: Armenia, Georgia and Azerbaijan. In the framework of the formation of the modern world order, the world power centers, in particular the Russian Federation and the USA, and the states with a regional role, were actively involved in the multi-layered vortex of the problems of Nagorno Karabakh, Abkhazia and South Ossetia, and naturally, pursuing their interests, they turned the processes of conflict settlement into important tool for managing the situation. The above-mentioned conflicts also had a great impact on the internal political life of Armenia, Azerbaijan and Georgia: one of its prominent examples is the palace coup in Armenia in 1998, when after President Levon Ter-Petrosyan's famous article, supporters of the slogan "no inch of land", accusing him of compromise, took over the leadership of Armenia for nearly two decades.

There are many valuable studies[1] on various aspects of the South Caucasian ethno-political conflicts, which served as the basis for the

* Submitted as of 12. IX. 2023, confirmed by the post-graduate's supervisor Doct. of Sc. in Pol. G. Qeryan on 17. XI. 2023, affirmed for publishing on 29. XI. 2023.

[1] B e r g. 2009.

comparative analysis of the problems of Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia within the framework of this article.

Commonalities of the ethno-political conflicts of Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia

1. Nationalism

There is a national component in all three South Caucasian conflicts. The peoples living in their historical homeland, who were included in the territory of a foreign, historically unfriendly state by the Lenin-Stalin administrative division, could not help but yearn to unite with their relatives and motherland, as in the case of Nagorno Karabakh[2].

2. Political instability due to the collapse of the USSR

Once upon a time, the slogan "divide and rule" which was aimed at creating basis of instability to have permanent leverage over the union republics, such as the division of the Ossetian people into two parts and the annexation of one part to the Soviet Georgia, or the inclusion of Abkhazia as an autonomous entity within Georgia, when initially they were considered two equal union republics, later became the cause of insoluble ethnic problems. The time showed that this policy became destructive for the Soviet Union itself. The territories of Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia were annexed to the metropolis (Azerbaijan, Georgia) arbitrarily in the early years of the Soviet Union. After the infamous decision of the Caucasian Bureau, in 1923 the Nagorno-Karabakh Autonomous Region was included in the Azerbaijan SSR, the South Ossetian Autonomous Region in the Georgian SSR in 1922, the Abkhazia Soviet Socialist Republic in the Georgian SSR in 1931. After the formation of independence movements in these units during the collapse of the USSR, Azerbaijan and Georgia, respectively, adopted illegal decisions regarding the dissolution of the aforementioned statuses of Nagorno Karabakh, South Ossetia, and Abkhazia, respectively, on November 23 1991, on December 10 1990 and on July 23 1992[3].

3. Internal factors: suppression of minorities, policies of amalgamation (merger policy) and chauvinism.

People’s historical past and acquired experience are imprinted in their memory, which is very difficult to give new content and requires years of cooperation. From that point of view, the struggle of the Artsakh Armenians is seen as a struggle against an existential (to their own existence) threat, taking into account the massacres of the Armenian population in Baku (1905, 1918), Shushi (1905, 1920), Sumgait (1988) and again in Baku (1990), as well as the Armenian Genocide in 1915 and Turkey's involvement in the Karabakh conflict. And the infamous thesis of Georgian President Gamsakhurdia,

[2] *Աբրահամյան. 1991, 11–18, Մանասյան. 2005, 7–12, Ավագյան. 2010, 5–10:*

[3] Барсегов. 2009, 15–20; Захаров. 2010, 85–95; *Մանասյան. 2018, 195–200:*

“Georgia for Georgians”[4], was essential for the outbreak of Georgian-Abkhazian and Georgian-South Ossetian ethno-political conflicts, which had further manifestations during the years of power of Shevardnadze and Saakashvili.

4. Various protests and mass peaceful actions took place during all three conflicts, which were accompanied by appeals to the leadership of the Soviet Union, decisions and letters of labor collectives, starting not with Gorbachev's reconstruction, but from the 1950s-1960s. Peaceful demonstrations took place in Nagorno-Karabakh and Armenia in 1967, 1977, 1987–1990, in South Ossetia in 1988–1991, in Abkhazia in 1957, 1967, 1977, 1989–1992[5].

5. In the case of all three conflicts, in response to peaceful protest actions, Azerbaijan and Georgia, committed mass violence, respectively, against the population of Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia, used disproportionate force, using police and national guard units. Moreover, in 1988 in response to peaceful rallies and legal demands for the realization of the right to self-determination of the Artsakh Armenians, mass massacres of Armenians were organized by Azerbaijani gangs in Sumgait (February 27–29), Baku (January 13–20, 1990) and other cities on the instructions of the Azerbaijani authorities, as the result of which more than 60 civilians died, more than 300,000 people became refugees. The Supreme Council of Soviet Armenia On December 1, 1988, responded positively to the application of the Nagorno Karabakh Autonomous Region Council, which was the state unit of Artsakh Armenians, to rejoin the Motherland, which was unprecedented in the history of the Soviet Union and was one of the most important features of the national movement, which adopted classical and various modes of struggle and democracy. This was followed by the successful defense of Nagorno-Karabakh, provoked by Azerbaijan, in 1991–1994. In parallel, in 1991–1993 as a result of Georgia's instigation of military operations, Georgian special units entered the territory of South Ossetia. Starting from August 1992, the Georgian side carried out anti-Abkhaz operations, military clashes took place, after which a 3,000-person unit of the Georgian National Guard was deployed in Abkhazia.

6. Declarations of independence were adopted in the case of the above-mentioned three conflicts: Abkhazia-on August 25 1990, Nagorno Karabakh-on September 2 1991, South Ossetia-on May 29 1992.

7. Large-scale military operations took place during all three conflicts. In the case of Nagorno-Karabakh, the aggression by Azerbaijan was realized by the first (1991–1994) and second (2020) Nagorno-Karabakh wars, as well as the 2016 April armed conflict. Georgia started military operations in South Ossetia in 1991–1993, as well as in 2004 and 2008. And the military clashes

[4] Shirinyan. 2018, 67–80.

[5] Жоржалиани, Тоидзе, Лекшивили. 1995, 67–69; Закарешвили. 2008, 25–29, *Պետրոսյան. 2017 ա, 35–38:*

in Abkhazia in 1992–1993 turned into a war, which was repeated in a unique way in 2008[6].

8. In all three conflicts in question, cease-fire agreements were signed to stop hostilities, in which a number of countries and organizations participated: with Nagorno Karabakh in 1994, 2016 and 2020 (all with the mediation of the Russian Federation), in the case of South Ossetia in 1994 (Sochi agreement between Russia and Georgia) and in 2008 (with the mediation of EU-France), in the case of Abkhazia, in 1994 (UN, OSCE, RF) and in 2008 (with EU-France mediation). Moreover, the protocol signed in Bishkek on May 5 1994 about the cease-fire of the first Karabakh war and the agreement signed in Baku, Yerevan and Stepanakert from May 9 to 11 is the only one among the cease-fires related to the end of the military operations of the ethno-political conflicts in the South Caucasus, which was signed by the legitimate authorities of the three parties directly involved in the conflict: the representatives of Azerbaijan, Armenia and Nagorno-Karabakh.

9. The three conflicts have in common the involvement of peacekeeping forces. Until 2020, 44 -Day War no peacekeeping forces were deployed in the Nagorno-Karabakh conflict zone, although their arrival after the status referendum was included in the document named "Madrid Principles" adopted in 2007. But after war in 2020 Russian peacekeeping operation was deployed to Artsakh. In the case of South Ossetia in 1992, peacekeeping forces were deployed in the border zone, which included Russians and Georgians, and then, based on the Sochi agreement, also soldiers from North Ossetia. In 1993-2009, the UN observation mission was operating, and since 2008 only Russia, which guards the border of South Ossetia, has been carrying out peacekeeping activities. In 1993 UN peacekeeping forces were deployed in Abkhazia, in 1994–2010 such activities were carried out by the CIS peacekeeping mission consisting mainly of Russian military forces. In 2009, Russian border guard forces were deployed in Abkhazia[7].

10. The ethno-political conflicts of the South Caucasus have commonalities in terms of the involvement of the conflict parties in the negotiation process. The representatives of Artsakh were included in the negotiation process within the framework of the OSCE Minsk Group until 1998. And representatives of Abkhazia and South Ossetia participated in the negotiations in the 1990s and in 2008 after the Russian-Georgian war, getting involved in the Geneva process. The study of international experience shows that in order to settle conflicts and achieve long-lasting peace, it is important to involve all parties of the conflict in negotiation processes with the right to equal voice.

11. One of the commonalities of ethno-political conflicts in the South Caucasus is the issue of choosing formats for negotiation processes. In the

[6] Цыганов. 2008, 65–68; *Թորոսյան. 2012, 55–57:*
[7] Macfarlane, Sabanadze. 2013, 609–627; Czachoe. 2015, 151–163.

cases of Abkhazia and South Ossetia, the Geneva format[8] of conflict settlement, and in the case of Nagorno Karabakh, the Minsk Group format was used. It is an unprecedented phenomenon in the international practice of conflict resolution when a special structure was created for the solution of the given conflict (Artsakh-Azerbaijani) and three of the 5 members of the UN Security Council joined it: the USA, France and the Russian Federation, who are the co-chairs of the Minsk Group.

Specificities of the ethno-political conflicts of Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia

1. One of the differences of South Caucasian ethno-political conflicts is that only Nagorno Karabakh had a special status. From January to November 28 1989, by the decision of the Supreme Council of the USSR, the powers of the Nagorno-Karabakh Autonomous Region Council were canceled, instead a special management committee was created (by which the Nagorno-Karabakh Autonomous Region was actually brought out of the control of Azerbaijan) under the direct leadership of Moscow. The committee was headed by A. Volsky. Unlike the Federal District of Columbia in the USA, this was the first unprecedented decision in the history of the Soviet Union. By the way, that step testifies to the uniqueness of the Nagorno-Karabakh problem, as this ethno-political problem was initially regulated by the decisions of the state bodies, the regional and the Supreme Council of the ASSR. Much later, on October 20 1990, and after the decisive steps taken by the Armenian side towards the Union, only the decree of the Presidency of the Central Committee of the USSR restored the state and party power bodies of the autonomous region, although the official Baku did not fulfill that order[9].The activities of the Artsakh Special Management Committee are undoubtedly reminiscent of the only federal district of the USA, Colombia, which is under the direct authority of the central, federal government.

2. One of the features of the ethno-political conflicts in the South Caucasus is that if Abkhazia and South Ossetia, as the homelands of the Abkhaz and Ossetian peoples with a historical past, were annexed to Georgia also with a historical background, then the Azerbaijan place name and a state entity, Azerbaijani people never existed in Transcaucasia, which was once part of the Russian Empire (they were known as the Caucasian Tatars), to which Bolshevik Russia annexed Nakhichevan and Nagorno-Karabakh in 1921. In the context of all that, in the sense of presenting themselves as separate state associations, the cultural orientations, priorities and goals of both sides of the more than 100-year-old Artsakh-Azerbaijani conflict (started in 1918 as the infamous precursor to the 1905–1907 mass atrocities committed by Caucasian Tatars against Armenia incited by Tsarist Russia),

[8] Popescu. 2007, 1–25.

[9] *Պետրոսյան. 2017ք, 12–13, Մանասյան. 2018, 195–200:*

the value system professed by the Armenian and Azerbaijani peoples, the psyche and national peculiarities, the traditions in relation to foreigners and demonstrated political behavior, as well as the path taken cannot but reflect on the resolution of the Artsakh problem.

3. During the Georgian-Abkhazian and Georgian-South Ossetian armed confrontations, Russia participated in military operations and supported the Abkhazians and Ossetians. At the same time, this support was absent during all the wars aimed at protecting Karabakh from Azerbaijani attacks. And if the military operations in Abkhazia and South Ossetia took place only in the conflict zones, then during the first Karabakh war, mass violence and military operations against Armenians also took place in all Armenian-populated areas of Azerbaijan, and in April 2016 also along the borders of Armenia, and in 2020 during the 44-day war, Azerbaijani guerrilla groups penetrated the territory of Armenia.

4. One of the peculiarities of the ethno-political conflicts in the South Caucasus is that the independence of Nagorno Karabakh has not been recognized by any state, though in 2008 after the August war, the Russian Federation recognized the independence of South Ossetia and Abkhazia, after which some UN member states also recognized their independence. Russia is the main political, military and financial-economic donor of Abkhazia and South Ossetia and protects their interests in the international arena. Unfortunately, the Republic of Artsakh does not have external support of this scale.

5. One of the fundamental differences between South Caucasian ethno-political conflicts is the nature of these conflicts. The conflicts of Nagorno-Karabakh and South Ossetia are so-called self-determination conflicts, the legal basis of which is the right of nations to self-determination. Independence referendums were held in both Nagorno-Karabakh and South Ossetia, respectively, in 1991 and 1992(in South Ossetia, "Referendum on the question of independence and (or) reunification with Russia"), by which the absolute majority of the population that participated, more than 99%, expressed their support for independence. On October 3 1999, a referendum on the attitude towards the Constitution of Abkhazia also was held, based on the results of which the Declaration of Independence of Abkhazia was adopted on October 12 (87.6% of votes were in favor). Nevertheless, since the Abkhazians did not form a majority in Abkhazia, and the results of the referendum are too close to the minimum necessary, the question of the nature of the Abkhazian conflict in terms of being considered a so-called self-determination conflict is controversial.

6. The specificities of the ethno-political conflicts of Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia are also remarkable from the point of view of the documents adopted by international organizations, especially in terms of predetermining their future statuses. The UN Security Council adopted 4 resolutions on the Nagorno Karabakh conflict in 1993, 30 resolutions on South Ossetia during 1995–2009, and 6 resolutions on Abkhazia in 1993.

Moreover, the resolutions adopted in 1995–2009 concerning South Ossetia also refer to the events in Abkhazia (about 20 resolutions).It is noteworthy that in the aforementioned resolutions adopted by the UN Security Council, the issues related to the right of self-determination of South Ossetia and Abkhazia are not mentioned. Moreover, they stated that the Georgian-Abkhazian and Georgian-South Ossetian conflicts should be resolved exclusively within the framework of the territorial integrity and sovereignty of Georgia. And the four resolutions of the UN Security Council adopted in 1993 do not propose a clear format for the settlement of the Karabakh problem, but call for pursuing the settlement process implemented within the framework of the PACE, without expressing any approach regarding the status of Nagorno Karabakh. PACE made a number of decisions about Nagorno-Karabakh, the most important of which was the Item 9 of the resolution N 1416 adopted on January 25, 2005. It also touches the issue of the future status of Artsakh and states that the independence and secession of Nagorno Karabakh can be achieved only in a legal and peaceful way. Also the joined statements[10] of the Minsk Group co-chairs from 2009–2013 are important for the future settlement of the NK conflict. Concerning the conflicts of Abkhazia and South Ossetia, in PACE resolutions, they were referred to for the first time in 1999. Those and later adopted resolutions called for resolving these conflicts exclusively within the framework of the territorial integrity and sovereignty of Georgia[11].

7. Unlike Nagorno-Karabakh, Abkhazia declared its independence after the collapse of the Soviet Union (1991) in 1999, despite the fact that on March 30, 1991 on the referendum to withdraw from the USSR, the Abkhaz population which was minority in Abkhazia voted against leaving the union state. And in the case of South Ossetia, the ethnic factor of North Ossetia and the desire of the Ossetians to unite with their brothers in that region is of key importance. In the case of the Georgian-Abkhaz conflict, despite the ethnic difference with the Georgians, Georgia considers it a political conflict, and Abkhazia, as a matter of ethnic identity, self-determination of nations, and sees the reason for the conflict with Georgia not in ethnic conflicts, but in politics, calling Georgians invaders.

8. One of the differences with Nagorno-Karabakh conflict is Russia's policy towards South Ossetia and Abkhazia. Russian Federation issued Russian passports to the population of these unrecognized states (in Abkhazia it started in 2002 and in South Ossetia in 2004), the purpose of which was to legitimize the Russian presence in Abkhazia and South Ossetia and to protect the interests of those who became its citizens, which became one of the justifications for Russia's involvement in the August war in 2008[12]. Abkhazia has no other state inhabited by its relatives and is a neighbor only to Georgia

---

[10] *Մախմուրյան. 2022, 147–148:*

[11] Bartuzi. 2008, 1–8; Gerrits, Bader. 2016, 297–313.

[12] Абдулатипов. 2008, 55–57.

and Russia, and in South Ossetia there has always been an aspiration to unite with their brothers in North Ossetia, which is perhaps possible to be included in Russia and in the form of a unified formation called North Ossetia-Alania as a federal unit of the Russian Federation. Unlike the aforementioned, Artsakh was violently separated from the Motherland, joining which is a completely natural and legal requirement.

Conclusion

Thus, the comparative analysis of the South Caucasian ethno-political conflicts shows that they have certain commonalities and features, which is important for explaining the genealogy, history and chronology of the problems of Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia and for revealing the ways for the resolution of these ethno-political conflicts. These three conflicts remain unresolved, becoming a tool in the hands of the superpowers to serve their geopolitical interests. Experience shows that for the establishment of lasting peace in the South Caucasus, a balanced composition of mediating states is needed so that they can more easily form impartial and fair solutions, the full participation of all parties involved in the conflicts, their constructive and proactive behavior, as well as commitment of all actors to solve the existing problems through cooperation. In the case of the impossibility of such conditions, it is necessary to refer to the norms of international law, clarifying the responsibility of the aggressor, the states violating the laws of war, and those organizing violence against the civilian population. It is also necessary to distinguish the NK conflict from other ethnic problems in the South Caucasus, because in the case of the latter, there is a political and territorial component, and there is no clear international legal basis that would prove the threat to the existence of the given ethnic group.

Lilit Dallakyan – Applicant of the Chair of Political Institutions and Processes of the Faculty of International Relations of the YSU. Scientific interests: South Caucasian ethno-political conflicts in the context of Russian-US geopolitical interests, as well as the competition of regional actors. Author of 5 scientific articles.Dallakyanlilit90@gmail.com

REFERENCES

Shirinyan A. 2018, Political Transition and the conflicts in the South Caucasus. – “Journal of Conflict Transformation” (Yerevan), pp. 140–154.

Bartuzi W., Peczunska-Natecz., Strachota K. 2008, Abkhazia, South Ossetia, Nagorna Karabakh: Unfrozen conflicts between Russia and the west. – “Center for Eastern Studies” (Warszawa), OSW report, pp. 1–7.

Berg E. 2009, Forms of Normalization in the Quest for de Facto Statehood. – “The international Spectator” (UK), № 44, pp. 27–45.

Czachor R. 2015, Between Sustainability and Uncertainty. Political systems of Abkhazia, South Ossetia and Nagorna-karabakh Rebublic-conditions and features. – "POLITOLOGIA" (Poland), vol 12, № 1, pp. 151–163.

Gerrits A., Bader M. 2016, Russian patronage over Abkhazia and South Ossetia: implications for conflict resolution. – "East European Politics" (UK), vol. 2, № 3, pp. 297–313.

Macfarlane N., Sabanadze N. 2013, Sovereignty and self-determination: Where are we?. – "International journal" (UK), vol 68, № 4, pp. 609–627.

Popescu N. 2007, Europe's Unrecognized Neighbours: The EU in Abkhazia and South Ossetia. – "Center for European Studies" (Brussels), pp. 1–25.

Абдулатипов Р. 2008, Кавказ: Кто хозяин на "троне богов".– «Национальный интерес», Москва, № 2, с. 193–203.

Барсегов Ю. Г. 2009, Нагорный Карабах в международном праве и мировой политике. Комментарии к документам. Том II, «Мелихово», Москва, 480 с.

Жоржалиани Г., Тоидзе М., Лекишвили С.1995, Исторические политико-правовие аспекты грузино-осетинского конфликта, «Самшолбло», Тбилиси, 256 с.

Закареишвили П. 2008, Грузия и конфликты на ее территории, Кавказское соседство: Турция и Южний Кавказ, Ереван, «Институт Кавказ», Ереван, 171 с.

Захаров В.А., Арешев А.Е., Семерикова Е. Ф., 2010, Абхазия и Южная Осетия после признания: Исторический и современний контекст, «Русская панорама», Москва, 520 с.

Цыганок А. Д. 2008, Война на Кавказе. русский взгляд. Грузино-осетинская война 8–13 звгуста 2008 года, «АИРО», Москва, 237 с.

Աբրահամյան Հ. 1991, Արցախյան գոյամարտ, Երևան, «Գիտելիք», 175 էջ:

Ավագյան Շ. 2010, Լեռնային Ղարաբաղ. Իրավական ասպեկտներ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ, 88 էջ:

Թորոսյան Տ. 2012, Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. Համեմատություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 408 էջ:

Մախմուրյան Գ. 2022, 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման ներքին և արտաքին քաղաքական նախադրյալները. – Արցախի Հանրապետության և Հայաստանի (երկրորդ) Հանրապետության հռչակման 30-ամյակ (միջազգային գիտաժողովի նյութեր, Ստեփանակերտ–Երևան, 19–23 սեպտեմբեր 2021), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 147–148:

Մանասյան Ա. 2005, Ղարաբաղյան հիմնախնդիր: Փաստարկներ և փաստաթղթեր, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 48 էջ:

Մանասյան Ա. 2018, Արցախ Ադրբեջան հակամարտություն, Հիմնախնդրի իրավական բաղադրիչներ, – «ՎԷՄ» համահայկական հանդես (Երևան), թիվ 2, էջ 195–223:

Պետրոսյան Վ. 2017 ա, Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ, Երևան. – «Հայկական քաղաքագիտական հանդես», (Երևան), 2, էջ 31–64:

Պետրոսյան Վ. 2017 բ, Պետությունների միջազգային իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները: Արցախի և Կոսովոյի դեպքերը. – Շուշիի ազատագրման 25-ամյակին նվիրված գիտաժողովի գիտական ընթերցումներ (հոդվածների ժո-

ղոված), Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարանի հրատարակչություն, 34 էջ:

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1990 – 2020 թթ.)

ԼԻԼԻԹ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Ամփոփում

Բանալի բառեր՝ Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտություններ, Լեռնային Ղարաբաղ-Արցախ, Հարավային Օսիա, Աբխազիա, ազգերի ինքնորոշման իրավունք, վրաց-աբխազական, վրաց-հարավ օսական, ռուս-վրացական, ռազմական գործողություններ, չովինիզմի քաղաքականություն, խաղաղապահ ուժեր, միջազգային իրավունք:

Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն որոշակի առանձնահատկություններ ու ընդհանրություններ, ինչը կարևոր է Լեռնային Ղարաբաղի (ԼՂ), Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնախնդիրների ծագումնաբանությունը, պատմությունն ու ժամանակագրությունը լուսաբանելու և այդ էթնոքաղաքական հակամարտությունների հանգուցալուծման ուղիները բացահայտելու համար: Այս երեք հակամարտությունները մնում են չլուծված՝ դառնալով գերտերությունների ձեռքում գործիք՝ իրենց աշխարհաքաղաքական շահերի սպասարկման համար: Փորձը ցույց է տալիս, որ Հարավային Կովկասում տևական խաղաղության հաստատման համար անհրաժեշտ է միջնորդ պետությունների հավասարակշռված կազմ՝ անկանխակալ և արդարացի լուծումների ձևավորման համար, բանակցություններին ներգրավված բոլոր կողմերի լիարժեք մասնակցություն, նրանց կառուցողական ու նախաձեռնող գործունեություն, ինչպես նաև՝ բոլոր դերակատարների՝ առկա խնդիրները գործակցությամբ լուծելու մղում: Նման պայմանների անհնարինության պարագայում հարկավոր է անդրադառնալ միջազգային իրավունքի նորմերին՝ հստակեցնելով հարձակվողի, պատերազմի օրենքներ խախտող պետությունների և խաղաղ բնակչության դեմ բռնություններ կազմակերպողների պատասխանատվությունը: Անհրաժեշտ է նաև տարբերակել ԼՂ հակամարտությունը մյուս էթնիկ խնդիրներից Հարավային Կովկասում, քանի որ վերջիններիս դեպքում առկա է քաղաքական ու տարածքային բաղադրիչը, և չկա այն հստակ միջազգային իրավական հիմքը, որը կապացուցի տվյալ էթնիկ խմբի գոյությանը սպառնացող վտանգը:

Լիլիթ Դալլաքյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ–ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի, ինչպես նաև՝ տարածաշրջանա-

յին դերակատարների մրցակցության համատեքստում: Հեղինակ է 5 հոդվածի:
Dallakyanlilit90@gmail.com

СРАВНИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА ЮЖНОКАВКАЗСКИХ ЭТНОПОЛИТИЧЕСКИХ КОНФЛИКТОВ (1990 – 2020 гг.)

ЛИЛИТ ДАЛЛАКЯН

Резюме

Ключевые слова: южнокавказские этнополитические конфликты, Нагорный Карабах – Арцах, Южная Осетия, Абхазия, право наций на самоопределение, грузино-абхазские, грузино-югоосетинские, российско-грузинские военные действия, политика шовинизма, миротворческие силы, международное право.

Сравнительный анализ этнополитических конфликтов Южного Кавказа показывает, что они имеют определенные различия и общие черты, что важно для объяснения генезиса, истории и хронологии проблем Нагорного Карабаха, Абхазии и Южной Осетии и выявления путей их разрешения. По сей день эти три конфликта остаются неразрешенными, став инструментом в руках сверхдержав, служащим их геополитическим интересам. Опыт показывает, что для установления прочного мира на Южном Кавказе необходим сбалансированный состав государств-посредников, для формирования беспристрастных и справедливых решений, полноценное участие всех сторон, вовлеченных в конфликты, их конструктивное и активное взаимодействие, а также стремление всех акторов решить существующие проблемы посредством сотрудничества. В случае невозможности таких условий необходимо обратиться к нормам международного права, разъясняющим ответственность государств-агрессоров, нарушающих законы войны и организующих насилие против гражданского населения. Также необходимо отличать Нагорно-Карабахский конфликт от других этнических проблем на Южном Кавказе, поскольку в случае последних присутствуют политическая и территориальная составляющая, а четкая международно-правовая база, которая бы доказывала угрозу существованию данного этноса, отсутствует.

Лилит Даллакян – соискатель кафедры политических институтов и процессов ЕГУ. Научные интересы: южнокавказские этнополитические конфликты в контексте геополитических интересов РФ–США, а также конкуренции региональных акторов. Автор 5 статей.
Dallakyanlilit90@gmail.com

ՀՏԴ 929 :070(479.25) Հակոբյանց

Doi:10.54503/0135-0536-2023.3-302

ПРОЕКТЫ ИЗДАНИЯ ГАЗЕТ АВАКА МАХТЕСИ-АКОПЯНЦА В ГОРОДЕ ШУШИ (1883–1885 гг.)*

Одним из видных очагов печати в Арцахе (Карабах) – Шуши, была армянская типография протестантов Махтеси-Акопянцев (Мугдуси-Акоповых)[1], которая как прогрессивное учреждение на протяжении всей своей деятельности (1877–1905 гг.)[2] играла ведущую роль не только в культурной жизни Арцаха, но и в восточноармянской действительности и печати того времени. В то же время типография Махтеси-Акопянцев удовлетворяла нужды местной печати на иностранном языке[3].

Из рода Махтеси-Акопянцев большую роль в книгоиздательском деле сыграл Авак, благодаря которому деятельность Махтеси-Акопянцев не ограничивалась Шушинской типографией, а развернулась и в Тифлисе. Аваку Махтеси-Акопянцу, по року судьбы, не удалось издавать в Шуши периодические издания, хотя имелись все предпосылки для реализации этой идеи[4]. В начале XX века он, оставив в Шуши свою семейную типографию, переезжает в Тифлис и открывает там другую типографию, которая предоставляла большие возможности для книгоиздательского дела в регионе, особенно, для периодических изданий[5].

---

* Представлена 15. IX. 2023 г., принята к печати 29. XI. 2023 г.

[1] «Махтеси», «Мугдуси» означает, что потомок этого рода ходил на поклон в Святой Иерусалим, и не имеет значение, кто из этого поколения был в Иерусалиме (паломником), род мог носить звание Мугдуси (Махтеси). Отметим, что Акопянц (Акоповы) в письмах и изданных ими книгах на армянском языке подписывались Махтеси-Акопянц, а на русском – Мугдуси-Акопов.

[2] Типография Махтеси-Акопянцев – единственная действующая в Шуши в 1877–1885 гг.

[3] Подробно см.: *Ս. Պետոյան. Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը (1877–1905 թթ.). – «Բանբեր Հայագիտության», 2021, № 2, էջ 107–129:*

[4] Отметим, что в 1887–1888 годах министр внутренних дел, по ходатайству Главного управления по делам печати, не разрешил публикацию в Шуши журнала «Арцах» (подробно см.: С. Петоян. Инициатива В. Дадянца по изданию журнала под названием «Арцах» (1887–1888 гг.). – «ИФЖ», 2023, № 1, с. 196–206).

[5] А. Махтеси-Акопянц издавал в своей типографии в Тифлисе ежедневные армяноязычные газеты *«Հայրենիք» (1915–1918), «Գաղափար» (1916–1917)* и *«Գործաւոր» (1919),* будучи при этом редактором-издателем первых двух

В настоящей публикации впервые представлен ряд документов, касающихся попыток А. Махтеси-Акопянца издавать газеты в Шуши в 1883–1885 гг. Министр внутренних дел, по ходатайству Главного управления по делам печати и Департамента полиции, не выдал ему разрешение, ссылаясь на недостаточное образование и отсутствие опыта. Интересно, что А. Махтеси-Акопянц, которому никак не удавалось получить разрешение на издание газет, попытался привлечь в дело своего зятя, тоже протестанта, Исраэля Маркозова, имеющего соответствующее образование и собственную школу, однако высокопоставленные чиновники так и не пошли навстречу просьбе И. Маркозова[6]. Как показывают документы по делу периодического издания в Шуши А. Махтеси-Акопянца, Главноначальствующий гражданской частью на Кавказе Александр Дондуков-Корсаков не посчитал целесообразным увеличить количество наименований армянских изданий в регионе, но в отличие от последнего, Елисаветпольский губернатор и Шушинский уездный начальник не видели препятствий по этому делу. Это говорит о том, что в начале 1880-х годов в Российской империи ужесточилась цензура[7], а высшие власти, под любым предлогом, препятствовали процессу решения данного вопроса.

газет. В Тифлисе он отличался также изданием русских газет. В 1913–1917 гг. печатались газеты «Знак Тифлиса», «Вечерний звон», «Отклики Тифлиса» и «Свободное слово» (см.: Библиография русской периодики Грузии, ч. 1 (1828–1920), сост. Г. В. Зерцалов. Тбилиси, 1941, с. 122–123, 133, описание № 332, 333, 365; Газеты дореволюционной России 1703–1917 (Каталог), сост. Т. В. Акопян, А. А. Кряжева, Н. П. Седова, И. А. Снигирева, С. А. Фурман. СПб., 2007, с. 331, описание № 4235). Помимо них А. Махтеси-Акопянц в 1916 году обратился с просьбой в Кавказский цензурный комитет разрешить ему публиковать в Тифлисе на грузинском языке газету «ქალაქის ფურცელი» («Городской листок») [см.: Национальный архив Грузии (далее – НАГ), ф. 480, оп. 2, д. 1176, ф. 17, оп. 1 (ч. 2), д. 8016, 8218].

[6] 15 октября 1888 г. И. Маркозов обратился с просьбой к министру внутренних дел о выдаче ему разрешения с 1 января 1889 г. издавать в Шуши армянский журнал «Миутюн», основной целью которого было удовлетворение желания армян-протестантов Кавказа иметь свой журнал. К письму прилагалось содержание журнала. И. Маркозов придерживался мнения, что благодаря простоте содержания журнала никаких трудностей с цензурой не возникнет. Чтобы сделать свою просьбу более весомой, он сообщил, что власти разрешили ему открыть в Шуши частную школу, которая продолжала функционировать. А журнал планировал издавать в типографии шурина – А. Махтеси-Акопянца (см.: Российский государственный исторический архив (далее – РГИА), ф. 776, оп. 12 (1888 г.), д. 71, л. 1–4 и об.).

[7] Об этом подробно см.: С. П е т о я н. Указ. раб., с. 196–197.

Документы освещают позицию высокопоставленных чиновников против добавления наименований армянских изданий и содержат подробности об этих длительных и сложных процессах. Они дают возможность на примере Шуши составить представление о трудностях в процессе издания армянской периодической печати в регионе.

Дополняющие друг друга документы, хранятся в фондах: Национального архива Грузии (Тбилиси) – «Канцелярия Кавказского цензурного комитета» (НАГ, ф. 480), Российского государственного исторического архива (Санкт-Петербург) – «Канцелярия Главного управления по делам печати Министерства внутренних дел» (РГИА, ф. 776) и Государственном архиве Российской Федерации (Москва) – «Канцелярия жандармского Управления Министерства внутренних дел» (ГА РФ, ф. 102).

Документы приведены в соответствие с современной орфографией русского языка, а также восстановлены встречающиеся в них сокращения. При необходимости сделаны комментарии[8].

СТЕПА ПЕТОЯН

– № 1 –

ПРОШЕНИЕ АВАКА МУГДУСИ-АКОПОВА В ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ

23 апреля 1883 г.
от жителя г. Шуши, содержателя типографии
Авака Мирзаджановича Мугдуси-Акопова

Прошение

Желая издавать в гор. Шуши, с дозволения местной полиции повременное издание под названием «Шушинские объявления»[9] под собст-

[8] Для уточнения и аннотации имен, подписей и званий различных должностных лиц была использована официальная информация Кавказского календаря на 1880 гг., а также Цензоры Российской империи, конец XVIII – начало XX века. Библиографический справочник (СПб., 2013) и интернет-ресурсы. Биографические данные о рядовых российских чиновниках большей частью отсутствуют, поэтому по большинству из них дать отдельные примечания не представляется возможным.

[9] В период российского правления издание периодической печати в таком формате было широко распространенным явлением. В Закавказье первое подобное издание было осуществлено в Тифлисе в 1878–1885 годах («Тифлисские объявления»). Г. В. Зерцалов. Библиография русской периодики Грузии, ч. 1 (1828–1920). Тбилиси, 1941, с. 27, описание № 46).

венною ответственностью редактирования их, имею честь покорнейше просить Главное Управление дать мне на то разрешение.

Издание это я предполагаю выпускать по следующей программе:

I. Объявления на русском и местных языках.

II. Местные полицейские городские известия о торговле, распоряжениях начальства, происшествиях и прочее.

III. Перепечатки разных известий из подцензурных русских и других повременных изданий.

IV. Разные разности.

Срок выхода в свет три раза в неделю.

Подписная цена: без пересылки 1 рубль на год, с пересылкою 2 рубля.

Издание будет печататься в собственной типографии моей.

При сем прилагается свидетельство Шушинского Уездного Управления от 5 сего апреля за № 5471[10] о личности моей.

Авак Мирзаджанович Мугдуси-Акопов

НАГ, ф. 480, оп. 1, д. 554 л. 1 и об.

– № 2 –

ПРЕДПИСАНИЕ КАВКАЗСКОГО ЦЕНЗУРНОГО КОМИТЕТА А. МУГДУСИ-АКОПОВУ О ПРЕДСТАВЛЕНИИ ПОДПИСКИ В ИСПОЛНЕНИИ ВСЕХ ЗАКОНОВ И ПРАВИЛ О ПЕЧАТИ

№ 323 1/3 июня 1883 г.

г. шушинскому жителю, содержателю типографии Аваку Мугдуси-Акопову

В дополнение к поданному Вами прошению о дозволении Вам издавать в Шуши «Шушинские объявления», имеете представить в Цензурный комитет установленную цензурным уставом подписку в исполнение Вами всех законов и правил о печати и сведения на каких именно местных языках предполагаете издавать сказанные объявления, с тем

[10] «Дано сие из Шушинского Уездного Управления шушинскому жителю Аваку Мугдуси-Акопову, вследствие прошения его от 31 марта в том, что, как видно из заверения Полицейского пристава I части города Шуши от 2 сего апреля за № 755, он, Мугдуси-Акопов, человек хорошего поведения, в чем удостоверяется подписью и приложением казенной печати» [РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 2].

установленным цензурным уставом подписку об ответственности и об исполнении всех правил законов печати.

НАГ, ф. 480, оп. 1, д. 554, л. 3 и об.

– № 3 –

ОБЪЯВЛЕНИЕ А. МУГДУСИ-АКОПОВА В КАВКАЗСКИЙ ЦЕНЗУРНЫЙ КОМИТЕТ

11 июня 1883 г.,
от шушинского жителя
Авака Мугдуси-Акопова

ОБЪЯВЛЕНИЕ

Во исполнение уведомления Комитета от 1/3 июня за № 323, имею честь представить при сем требуемую оным подписку, присовокупляя для сведения Комитета, что «Шушинские объявления» я предполагаю издавать на армянском языке, с правом печатания в оных и разного рода объявлений, извещений, известий и на русском, и татарском языках.

Авак Мугдуси-Акопов

НАГ, ф. 480, оп. 1, д. 554, л. 2.

– № 4 –

РАПОРТ КАВКАЗСКОГО ЦЕНЗУРНОГО КОМИТЕТА НАЧАЛЬНИКУ ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО НА КАВКАЗЕ О ПРОШЕНИИ А. МУГДУСИ-АКОПОВА

№ 372 30 июня 1883 г.,

Житель г. Шуши, содержатель типографии Авак Мирзаджанов Мугдуси-Акопов, в поданном в Цензурный комитет на имя его Сиятельства Главноначальствующего на Кавказе прошении, просит разрешить ему издавать в городе Шуши, с дозволения местной полиции, повременное издание под названием «Шушинские объявления», под собственною ответственностью редактирования их на русском, армянском и татарском языках.

Почтительнейше представляя при сем на благоусмотрение Вашему Превосходительству упомянутое прошение Мугдуси-Акопова, с изложенною в нем программою издания, подписку его и свидетельство, выданное ему из Шушинского Уездного Управления 5 апреля 1883г. за № 5471. Цензурный Комитет имеет честь донести, что издание просимой Мугдуси-Акоповым газеты, по сказанной программе, может быть разрешено, только подвергнув оную просмотру общей цензуры, а не полиции, которая просматривает предварительно не литературные статьи, а только мелкие объявления.

НАГ, ф. 480, оп. 1, д. 554, л. 4 и об.

– № 5 –

ПРЕДПИСАНИЕ КАНЦЕЛЯРИИ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ В КАВКАЗСКИЙ ЦЕНЗУРНЫЙ КОМИТЕТ

№ 568 24/26 июля 1883 г.
Тифлис

Возвращая при сем приложенное к представлению Цензурного Комитета, от 30 прошлого июня за № 372, объявление с подпискою шушинского жителя Авака Мугдуси-Акопова, который желает издавать в г. Шуши газету «Шушинские объявления», Канцелярия Главноначальствующего имеет честь уведомить, что удовлетворение просьбы просителя зависит ныне от Министра внутренних дел[11].

Директор, Генерал-майор А. Шепелев[12]
Приписано:
Прошу в среду 3 августа переговорить в заседании Комитета подпись К.[13] с делом.

НАГ, ф. 480, оп. 1, д. 554, л. 5.

---

[11] 26 апреля 1883 г. Кавказский Цензурный комитет, находящийся ранее в подчинении сформированного вместо Кавказского Наместничества Главнокомандующего гражданской частью на Кавказе, был передан в ведомство Главного управления по делам печати Министерства внутренних дел.

[12] Александр Александрович Шепелев (1840–1887) – военный историк. В 1882 г. Шепелев произведен в генерал-майоры, а в следующем году назначен директором канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе.

[13] Подпись неразборчива.

– № 6 –

ПРЕДПИСАНИЕ КАВКАЗСКОГО ЦЕНЗУРНОГО КОМИТЕТА А. МУГДУСИ-АКОПОВУ

№ 437 10 августа 1883 г.

Вследствие прошения Вашего, Цензурный комитет входил с представлением к бывшему Начальнику Главного управления Главноначальствующего о дозволении Вам издавать в Шуши газету «Шушинские объявления», но на это Канцелярия Его Сиятельства бывшего господина Главноначальствующего, отношением от 24/26 июля № 568, отозвалась Комитету, что удовлетворение Вашей просьбы зависит ныне от Министра Внутренних дел.

Об этом Цензурный комитет Вас уведомляет, возвращая при сем представленные Вами свидетельство Шушинского Уездного Управления и подписку Вашу.

НАГ, ф. 480, оп. 1, д. 554, л. 6 и об.

– № 7 –

ПРОШЕНИЕ А. МУГДУСИ-АКОПОВА В ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ

жителя Елисаветпольской губернии,
содержателя типографии и книгопродавца
Авака Мирзаджановича Мугдуси-Акопова.
10 сентября 1883 г.
Шуши

Прошение

Желая издавать в городе Шуши повременное издание, с дозволения местной (административной) цензуры, под названием «Шушинские объявления», имею честь покорнейше просить Главное Управление, испросить на то разрешение господина Министра Внутренних дел. Издание это я предполагаю выпускать по следующей программе.

I. Объявления.

II. Местные полицейские – городские известия о торговле, распоряжениях начальства, происшествиях и прочее.

III. Перепечатки разных известий из подцензурных русских изданий.

IV. Разные разности.

«Шушинские объявления» выйдут на армянском языке, с правом помещения в них разного рода объявлений, извещений, известий и на русском, и на татарском языках.

Срок выхода в свет три раза в неделю.

Подписная цена: без пересылки 1 рубль на год, с пересылкою 2 рубля.

Издание будет печататься в собственной типографии моей.

При сем прилагаются: свидетельство Шушинского Уездного Управления от 5 апреля за № 5471 о личности моей и подписка об исполнении цензурных правил и законов о печати.

Авак Мугдуси-Акопов.

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 1 и об.

– № 8 –

ПОДПИСКА А. МУГДУСИ-АКОПОВА ОБ ОБЯЗАТЕЛЬСТВЕ ИСПОЛНЯТЬ ТРЕБОВАНИЯ ВСЕХ ЗАКОНОВ И ПРАВИЛ О ПЕЧАТИ

1883 года сентября 10 дня, я нижеподписавшийся житель г. Шуши Авак Мугдуси-Акопов, даю сию подписку в том, что при редактировании мною предполагаемых к изданию с разрешения подлежащей цензуры «Шушинских объявлений», обязываюсь вполне исполнять требования всех законов и правил о печати.

В чем подписуюсь Авак Мугдуси-Акопов

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 3.

– № 9 –

ОТНОШЕНИЕ ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ В ДЕПАРТАМЕНТ ПОЛИЦИИ О СООБЩЕНИИ СВЕДЕНИЙ ОТНОСИТЕЛЬНО БЛАГОНАДЕЖНОСТИ, В ПОЛИТИЧЕСКОМ ОТНОШЕНИИ, А. МУГДУСИ-АКОПОВА

№ 3548 3 октября 1883 г.
конфиденциально

Проживающий в г. Шуше содержатель типографии и книгопродавец Авак Мугдуси-Акопов обратился в Главное Управление по делам печати, с ходатайством о разрешении ему издавать в этом городе, с дозво-

ления предварительной цензуры, под его редакторством, газету на армянском языке под названием «Шушинские объявления».

Вследствие сего, Главное Управление по делам печати имеет честь покорнейше просить Департамент Полиции об уведомлении, заслуживает ли проситель в политическом отношении доверие Правительства настолько, чтобы разрешение нового повременного издания не могло иметь вредных последствий.

Начальник Главного управления
по делам печати Е. Феоктистов[14]
Заведующий делопроизводством
Член Совета В. Адикаевский[15]

ГА РФ, ф. 102, оп. 276, Часть секретаря (1883), д. 18, ч. 62, л. 1 и об[16].

– № 10 –

ПРЕДПИСАНИЕ ДЕПАРТАМЕНТА ПОЛИЦИИ О ПРОСЬБЕ ДЕЛОПРОИЗВОДСТВА ПО ЧАСТИ СЕКРЕТАРЯ ОТМЕТИТЬ ИМЕЮЩИЕСЯ СВЕДЕНИЯ О А. МУГДУСИ-АКОПОВЕ

5 октября 1883 г.

Делопроизводство по Части секретаря просит отметить на сем же, имеются ли какие-либо сведения о проживающем в Шуше содержателе типографии и книгопродавце Аваке Мугдуси-Акопове (об издании газеты)

[14] Феоктистов Евгений Михайлович (1828–1898) – писатель, журналист, сотрудник журналов «Современник», «Отечественные записки», редактор журналов «Русская речь» и «Журнала Министерства народного просвещения» (1871–1883), затем цензор, с 1883 г. – тайный советник и в 1883–1896 – начальник Главного управления по делам печати Министерства внутренних дел (главный цензор России).

[15] Адикаевский Василий Семенович (1835 –1907) – тайный советник, цензор Главного управления по делам печати МВД. Службу начал в 1855 г. в департаменте общих дел, а в 1865 г. перешел в канцелярию Главного управления по делам печати. В 1877 г. назначен исполняющим должность правителя дел Главного управления по делам печати. С 1881 г. член совета Главного управления по делам печати. С 1898 по 1906 гг. занимал должность исполняющего обязанности начальника Главного управления по делам печати.

[16] Копию документа см.: РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 4 и об.

По 1-му Делопроизводству	сведений нет	
По 2-му Делопроизводству		
По 3-му Делопроизводству	Литера А	
	Литера Б	с 1881 г. сведений нет
По Судебному отделу	4-е Делопроизводство сведений нет	
	5-е Делопроизводство сведений нет	

ГА РФ, ф. 102, оп. 276, Часть секретаря (1883), д. 18, ч. 62, л. 2.

– № 11 –

ПРЕДПИСАНИЕ ДИРЕКТОРА ДЕПАРТАМЕНТА ПОЛИЦИИ НАЧАЛЬНИКУ ТИФЛИССКОГО ГУБЕРНСКОГО ЖАНДАРМСКОГО УПРАВЛЕНИЯ О СООБЩЕНИИ СВЕДЕНИЙ О НРАВСТВЕННЫХ КАЧЕСТВАХ И ПОЛИТИЧЕСКОЙ БЛАГОНАДЕЖНОСТИ А. МУГДУСИ-АКОПОВА

№ 1484 6 октября 1883 г.
секретно

Проживающий в г. Шуши содержатель типографии и книгопродавец Авак Мугдуси-Акопов ходатайствует о разрешении ему издавать под его редакторством в г. Шуши, с дозволения предварительной цензуры, газету на армянском языке, под названием «Шушинские объявления».

Вследствие сего, покорнейше прошу Ваше Высокоблагородие сообщить мне сведения о нравственных качествах и политической благонадежности просителя Мугдуси-Акопова

Подписал	Директор	Плеве[17]
Скрепил	За Секретаря	Гнездов
Верно	Губернский Секретарь	Андреев

ГА РФ, ф. 102, оп. 276, Часть секретаря (1883), д. 18, ч. 62, л. 3.

[17] Вячеслав Константинович фон Плеве (1846–1904) – министр внутренних дел и шеф жандармов в России. С 1881 г. – директор департамента полиции, в 1884–1894 гг. – сенатор, с 1902 г. – министр внутренних дел.

– № 12 –

РАПОРТ НАЧАЛЬНИКА ТИФЛИССКОГО ГУБЕРНСКОГО ЖАНДАРМСКОГО УПРАВЛЕНИЯ В ДЕПАРТАМЕНТ ПОЛИЦИИ

№ 636 24 октября 1883 г.
секретно Тифлис

На предписание от 6-го сего октября за № 1484-м, имею честь донести Департаменту Полиции, что по собранным сведениям, житель города Шуши Авак Мугдуси-Акопов имеет в г. Шуши собственную типографию, состоит агентом Общества, для распространения Лютеранизма между армянами, никакого образования не получил, ни к каким делам политического характера не привлекался и в неблагонадежности политической не подозревается; насколько известно, желание его, изданием газеты на армянском языке под названием «Шушинские объявления», поддержать существование своей собственной типографии.

Полковник Пекарский

ГА РФ, ф. 102, оп. 276, Часть секретаря (1883), д. 18, ч. 62, л. 4.

– № 13 –

РАПОРТ НАЧАЛЬНИКА ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕМУ ГРАЖДАНСКОЙ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ

№ 3549 [30 октября 1883 г.][18]
конфиденциально

Вследствие сего Главное Управление по делам печати имеет честь покорнейше просить Ваше Сиятельство почтить Вашим заключением по изложенному ходатайству.

Начальник Е. Феоктистов
Зав. делопроизводством Член Совета В. Адикаевский

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 4 об.

[18] Датируется по документу № 815 от 1 октября 1884 г. (см. док. № 17).

– № 14 –

ПРЕДПИСАНИЕ ДИРЕКТОРА ДЕПАРТАМЕНТА ПОЛИЦИИ
В ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ О НАМЕРЕНИИ
ОТКЛОНЕНИИ ХОДАТАЙСТВА А. МУГДУСИ-АКОПОВА ПО ИЗДАНИЮ
ГАЗЕТЫ «ШУШИНСКИЕ ОБЪЯВЛЕНИЯ»

№ 1650 7 ноября 1883 г.
секретно

Вследствие отношения от 3-го минувшего октября за № 3548, имею честь уведомить Главное Управление по делам печати, что проживающий в г. Шуши, содержатель типографии и книгопродавец, Авак Мугдуси-Акопов, как оказалось по собранным о нем сведениям, не получил никакого образования и не имеет надлежащей подготовки к литературной деятельности, ввиду чего полагалось бы ходатайство его о разрешении издавать газету «Шушинские объявления» – отклонить.

Директор Плеве

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 5 и об[19].

– № 15 –

ПРЕДПИСАНИЕ КАНЦЕЛЯРИИ ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ В
ШУШИНСКОЕ УЕЗДНОЕ ПОЛИЦЕЙСКОЕ УПРАВЛЕНИЕ О НЕСОГЛАСИИ
МИНИСТРА ВНУТРЕННИХ ДЕЛ НА ИЗДАНИЕ А. МУГДУСИ-АКОПОВЫМ
ГАЗЕТЫ «ШУШИНСКИЕ ОБЪЯВЛЕНИЯ»

№ 1387 4 марта 1884 г.

Канцелярия Главного Управление по делам печати, по приказанию начальника этого управления имеет честь покорнейше просить Шушинское Уездное Полицейское управление объявить содержателю типографии и книгопродавцу в городе Шуши Аваку Мугдуси-Акопову, что на удовлетворение ходатайства его о разрешении издавать, с дозволения предварительной цензуры, под его редакторством газету на армянском языке, под названием «Шушинские объявления», согласия г. Министра внутренних дел не последовало.

[19] Копию документа см.: ГА РФ, ф. 102, оп. 276, Часть секретаря (1883), д. 18, ч. 62, л. 5.

Заведующий делопроизводством
Член Совета В. Адикаевский
За помощника производства дел подпись[20]

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 7 и об.

– № 16 –

ПРЕДПИСАНИЕ НАЧАЛЬНИКА ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ МИНИСТРУ ВНУТРЕННИХ ДЕЛ, ПО ХОДАТАЙСТВУ ОБ ОТКАЗЕ А. МУГДУСИ-АКОПОВУ ИЗДАВАТЬ ГАЗЕТУ «ШУШИНСКИЕ ОБЪЯВЛЕНИЯ»

Об отказе г. Аваку Мугдуси-Акопову издавать в. г. Шуши на армянском языке газету под названием «Шушинские объявления»

№ 1351 24 марта 1884 г.

Содержатель типографии и книгопродавец в г. Шуши Авак Мугдуси-Акопов ходатайствует о разрешении ему издавать в этом городе, с дозволения предварительной цензуры, под его редакторством, газету на армянском языке, под названием «Шушинские объявления».

Принимая во внимание, что Департамент Полиции высказался против удовлетворения этого ходатайства, ввиду того, что проситель, как оказалось по собранным о нем справкам, не получил никакого образования и не имеет надлежащей подготовки к литературной деятельности, Главное Управление по делам печати полагало бы настоящее ходатайство г. Авака Мугдиси-Акопова отклонить, о чем имею честь представить на благоусмотрение Вашего Сиятельства.

Начальник Главного Управления
по делам печати Е. Феоктистов
Приписано: *Согласен.* Д. Толстой[21]

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 6 и об.

[20] Подпись неразборчива.

[21] Дмитрий Андреевич Толстой (1823–1889) – русский государственный деятель и историк, обер-прокурор Святейшего правительствующего синода (1865 – 1880), министр народного просвещения (1866 – 1880), министр внутренних дел и шеф жандармов (1882 – 1889). Также член Государственного совета (с 1866), сенатор.

– № 17 –

ОТНОШЕНИЕ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЙ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ НАЧАЛЬНИКУ ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ

№ 815 1 октября 1884 г.

Тифлис

Приписано: *Доклад об отказе 10 октября*

Вследствие отношения Вашего Превосходительства от 30 октября прошлого года за № 3549, были собраны сведения о проживающем в городе Шуши содержателе типографии и книгопродавце Аваке Акопове, испрашивающем разрешение издавать в городе Шуши газету на армянском языке, под названием «Шушинские объявления».

Из полученного, вследствие сего, от Елисаветпольского губернатора отзыва, оказывается, что Акопов не замечен ни в чем, что могло бы свидетельствовать о его неблагонадежности, и что он, губернатор, не находит препятствий к удовлетворению просьбы Акопова.

Уведомляя об этом Ваше Превосходительство, имею честь, со своей стороны присовокупить, что, хотя за приведенным отзывом губернатора, я не встречаю, с формальной стороны, препятствий к разрешению Акопову издавать «Шушинские объявления», но вместе с тем, считаю нужным заявить, что ввиду недостаточной подготовки подобных лиц к печатному делу и недолгого, как обнаруживает опыт, вследствие этого, существования таких органов печати, едва ли желательно распространение их, в особенности по случаю обнаруженного среди эриванских армян движения[22].

[22] По всей вероятности, здесь имеется в виду выделяющаяся широкой деятельностью в начале 1880-х годов в Эривани тайная организация «Айасэр-азгасэр» (*«Հայասեր-ազգասեր»,* «армянофил-патриот»), основной целью которой было распространение идеи национально-освободительной борьбы среди армянского народа. В 1883 г. власти выявили ее, в результате чего было запрещено издание первой эриванской периодической газеты «Псак» (1880–1883) (см.: *Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII–XIX դդ., Հ. 1, Գահիրե, 2006, էջ 451–459).*

Генерал-адъютант подпись Дондуков-Корсаков[23]
За Директора канцелярии
Вице-директор[24]

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 8 и об.

– № 18 –

ПРОШЕНИЕ А. МУГДУСИ-АКОПОВА В ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ О РАЗРЕШЕНИИ НА ИЗДАНИЕ ГАЗЕТЫ «КУРЬЕР» («СУРХАНДАК»)

жителя Елисаветпольской губернии
города Шуши содержателя типографии
Авака Мириджановича Мугдуси-Акопова
октябрь 1885 г.[25]
Шуши

Прошение

Ввиду многолюдности города Шуши, где насчитывается до 35 тысяч жителей, и развития торгово-промышленной жизни ее, в ней чувствуется большой недостаток дешевой местной газеты, служащей справочным листком, и отсутствие возможности печатать в ней различные местные объявления.

При помощи собственной типографии мне предоставляется особое удобство, для своей выгоды взяться за это дело и тем более удовлетворить одну из главных общественных потребностей местного населения.

Представляя на благоусмотрение Главного Управления программу предполагаемой к изданию мною газеты на армянском языке, под названием «Курьер» («Сурхандак»), имею честь покорнейше просить разрешить мне издание и редакцию этой газеты с 1 января 1886 г. раз в неделю в формате листа обыкновенной писчей бумаги. Причем считаю нужным доложить, что ввиду существования в городе Шуши нескольких учебных заведений: Реального и городского училищ и Духовной семинарии цензурование газеты не представляет трудности, не говоря уже о

[23] Александр Михайлович Дондуков-Корсаков (1820 –1893) – князь, военный и государственный деятель, участник Кавказских походов и Крымской войны, генерал-губернатор Юго-Западного края (1869–1878), главноначальствующий на Кавказе (1882–1890).

[24] Подпись неразборчива.

[25] День даты документа неразборчив.

том, что местная полиция могла бы, ввиду не сложности содержания газеты, наняться цензурованием ее.

При сем представляю свидетельство Шушинского Уездного Управления за № 15888[26] о личности моей и подписку о соблюдении цензурных правил и законов о печати.

Авак Мугдуси-Акопов

ПРОГРАММА

ГАЗЕТЫ «СУРХАНДАК» (КУРЬЕР) НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

I. Объявления на русском и местном языках.

II. Местные полицейские и городские известия о торговле, распоряжениях начальства, происшествиях и прочее.

III. Перепечатка разных имеющих местный интерес известий из подцензурных русских изданий.

IV. Справочный указатель о погоде, делах, назначенных в судах, недоставленных телеграммах, времени прихода и отхода почт и прочее.

V. Смесь. Легкие сценки из газет, имеющие характер развлечений (анекдоты, остроты).

Срок выхода в свет один раз в неделю, по воскресеньям.

Подписная цена на год без пересылки – один рубль, с пересылкою – 1 рубль 60 копеек, на другие срока не полагается.

Издание будет печататься в типографии книгопродавца Мугдуси-Акопова в гор. Шуши Елисаветпольской губернии.

Ответственным редактором и издателем будет типографщик Авак Мирзаджанович Мугдуси-Акопов.

Авак Мугдуси-Акопов

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, лл. 9–10.

---

[26] Удостоверение выдано 4 октября 1885 г. «Дано сие из Шушинского Уездного Управления Шушинскому жителю типографщику Аваку Мугдуси-Акопову в том, 1. что он отличного поведения, 2. что в политическом отношении благонадежен, 3. что неприкосновен к каким-либо предосудительным делам, 4. что со стороны полиции не встречается препятствий на издание в городе Шуше предполагаемой им еженедельной на армянском языке газеты, под заглавием «*Սուրհանդակ*» (Сурхандак-Курьер) и что Мугдуси-Акопов получил домашнее воспитание. В действительности изложенного свидетельствуется подписью и приложением казенной печати (РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 11).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

– № 19 –

ПОДПИСКА А. МУГДУСИ-АКОПОВ ОБ ИСПОЛНЕНИИ ИМ ТРЕБОВАНИЙ ВСЕХ ЗАКОНОВ И ПРАВИЛ О ПЕЧАТИ

Октябрь 1885 г.[27]
Шуши

Я, нижеподписавшийся, шушинский житель Авак Мирзаджанович Мугдуси-Акопов, даю сию подписку Главному Управлению по делам печати, в том что при радактировании мною предполагаемой к изданию с разрешения надлежащей цензуры газеты «Сурхандак», обязан строго исполнять требования всех законов и правил о печати, придерживаясь в пределах представленной программой, в противном случае подвергаюсь определенной в законах ответственности.

Авак Мирзаджанов

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 12.

– № 20 –

ПРЕДПИСАНИЕ НАЧАЛЬНИКА ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ МИНИСТРУ ВНУТРЕННИХ ДЕЛ, ПО ХОДАТАЙСТВУ ОБ ОТКАЗЕ А. МУГУСИ-АКОПОВУ ИЗДАВАТЬ ГАЗЕТУ НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ «СУРХАНДАК» («КУРЬЕР»)

№ 3884 9 ноября 1885 г.

Об отказе Акопову издавать газету на армянском языке, под названием «Сурхандак» (Курьер)

Содержатель типографии в г. Шуши Авак Мугдуси-Акопов, обратился в Главное Управление по делам печати с ходатайством о разрешении ему издавать в этом городе, с дозволения предварительной цензуры, под его редакторством, еженедельную газету на армянском языке, под названием «Сурхандак» («Курьер»).

Принимая во внимание, что просителю в прошлом году было отказано в подобном же ходатайстве, ввиду отзывов Департамента Полиции и Главноначальствующего гражданскою частью на Кавказе, что Акопов не получил никакого образования и не имеет надлежащей подготовки к литературной деятельности, и что едва ли желательно увели-

---

[27] День даты не указан.

чение числа изданий на армянском языке, особенно ввиду обнаружения среди эриванских армян антиправительственного движения[28], Главное Управление по делам печати полагало бы и настоящее ходатайство Акопова – отклонить.

Таковое заключение имею честь представить на благоусмотрение Вашего Сиятельства.

Начальник Главного Управления
по делам печати Е. Феоктистов

Приписано: *9 ноября: Согласен.* Д. Толстой

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 13 и об.

– № 21 –

ОТНОШЕНИЕ КАНЦЕЛЯРИИ ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ В ШУШИНСКОЕ УЕЗДНОЕ ПОЛИЦЕЙСКОЕ УПРАВЛЕНИЕ О НЕСОГЛАСИИ МИНИСТРА ВНУТРЕННИХ ДЕЛ НА ИЗДАНИЕ А. МУГДУСИ-АКОПОВЫМ ГАЗЕТЫ «СУРХАНДАК» («КУРЬЕР»)

№ 3904 12 ноября 1885 г.

Канцелярия Главного Управления по делам печати, по приказанию г. начальника этого управления имеет честь покорнейше просить Шушинское Уездное Полицейское Управление объявить содержателю типографии и книгопродавцу в городе Шуши Авак Мугдуси-Акопову, что на удовлетворение ходатайства его, о разрешении ему издавать в этом городе, с дозволения предварительной цензуры, под его редакторством еженедельную газету на армянском языке, под названием «Сурхандак» («Курьер»), согласия г. Министра внутренних дел не последовало.

Гербовый сбор уплачен
Заведующий делопроизводством
Член Совета В. Адикаевский
За помощника производства дел Урсати

РГИА, ф. 776, оп. 12 (1883), д. 85, л. 14 и об.

[28] Об этом см. сноску № 12.

ՀՏԴ 929 :947.925 Տեր-Դանիելյան (Դավիթ Անանուն) + 929:882 Բրյուսով

Doi:10.54503/0135-0536-2023.3-320

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԸ ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ինչպես հայտնի է, ռուս նշանավոր բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, գրաքննադատ և պատմաբան Վալերի Բրյուսովը (1873–1924) Մոսկվայի Հայկական կոմիտեի հանձնախմբի խնդրանքով 1915 թ. կեսերից ձեռնամուխ լինելով «Հայաստանի պոեզիան» ժողովածուն կազմելու ու խմբագրելու աշխատանքներին՝ դրան զուգընթաց լայն գործունեություն է ծավալել հայ գրականությունը, մշակույթը, պատմությունը ռուս և հայ լայն հասարակայնության մեջ տարածելու ուղղությամբ: Այդ նպատակով 1915–1917 թթ. նա բազմաթիվ դասախոսություններ է կարդացել ոչ միայն Մոսկվայում, Պետրոգրադում, այլև՝ Անդրկովկասում՝ Բաքվում, Թիֆլիսում, Էջմիածնում ու Երևանում:

Հայ գրասերների ընկերության խորհրդի հրավերով 1916 թ. հունվարի 7-ին Վ. Բրյուսովը ժամանում է Բաքու: Հունվարի 8-ին Մայիլյանների լեփ-լեցուն թատրոնում նա հանդես է գալիս «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով դասախոսությամբ: Այնուհետև՝ հունվարի 13-ին, Հայ գրողների կովկասյան ընկերության հրավերով նույն դասախոսությունը կրկնում է Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում, հունվարի 17-ին հանդես է գալիս Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցչական դահլիճում, հունվարի 18-ին՝ Երևանի քաղաքային ակումբի դահլիճում: Վերադառնալով Թիֆլիս՝ ռուս բանաստեղծը հունվարի 22-ին «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» թեմայով դասախոսություն է կարդում Արտիստական ընկերության դահլիճում: Հունվարի 24-ին նա մեկնում է Մոսկվա[1]:

Վ. Բրյուսովի դասախոսությունների վերաբերյալ հայկական և ռուսական մամուլում եղել են բազմաթիվ արձագանքներ: Դրանց շարքում առանձնանում է Դ. Անանունի խոսքը. Բաքվում կայացած Վ. Բրյուսովի դասախոսության վերաբերյալ նա («Դ. Ա.» ստորագրությամբ) Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի հունվարի 13-ի համարում տպագրում է «Հայ բանաստեղծությունը (Վ. Բրյուսովի դասախոսությունը Բաքվում)» վերնագրով բովանդակալից տեղեկատվություն՝ խոսուն մեկնաբանություններով և դիպուկ գնահատականներով: Ստորև հրապարակում ենք այդ նյութը՝ Վ. Բրյուսովի ծննդյան 150-ամյակի առթիվ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

* *Ներկայացվել է 12. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

[1] *Մանրամասն տե՛ս Ա. Հ. Զ ա ք ա ր յ ա ն. Վալերի Բրյուսովը Անդրկովկասում և հայ գրական կյանքը. – ՊԲՀ, 1983, № 2–3, էջ 74–88,* А н. З а к а р я н. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван, 2016, с. 13–53.

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ
(Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎՈՒՄ)

Հայ Գրասերների Ընկերության գեղեցիկ միտքը՝ հրավիրել Վ. Բրյուսովին Բաքու դասախոսություն կարդալու հայ բանաստեղծության մասին՝ իրագործվեց փառավոր աջողությամբ: Հունվարի 8-ին եղբ. Մայիլյանների Թատրոնը լի էր երկսեռ բազմությամբ, որը ուշադրությամբ լսեց անվանի բանաստեղծին, նրա հետ հրճվեց հայ ստեղծագործությամբ և իր հրճվանքը դարձրեց բուռն ոգևորություն, ծափերի հեղեղ և մեծարանք:

Վ. Բրյուսովի դասախոսությունը բացվեց Հ. Հովհաննիսյանի ողջույնի խոսքով: Մեր սիրված և հեզահամբույր բանաստեղծն իր կարճ խոսքի մեջ ասաց, որ հայերս կրթվում ենք ռուսական գրականության վրա, որ մենք շատ ենք պարտական հոգևոր Ռուսաստանին և ուրախ ենք, որ ռուս բանաստեղծության ականավոր ներկայացուցիչը հայ կյանքի այս դժնդակ օրերին ձեռք է մեկնում մեզ, մխիթարական և ոգեպնդիչ խոսք արտասանում: Ապա Հ. Հովհաննիսյանը կարդում է Բրյուսովին նվիրած սեփական բանաստեղծությունը և ընծայում իր բանաստեղծությունների փառակազմ հատորը: Բերում ենք այստեղ մեր երգչի գրչի նոր արտադրությունը.

Այնտեղ, ուր ցարդ դարավոր
Տեսնում էինք ավերակ
Ու բուերի սգավոր
Լսում ողբերգը մենակ,
Դու, ո՛վ քերթող վշտալի,
Քո հեռավար հյուսիսից
Շունչ զգացիր կենդանի
Ու հնադարյան մեր թախիծ:
Ցույց տվիր, որ աշխարհին
Մենք երգ ունենք երգելու,
Մենք, որ ստրուկ ենք տակավին...
Ո՜հ, այն ճիչն է մեր հոգու –
Շիրիմներից դեպի կյա՛նք
Լուսավոր ու անկապանք:

Վ. Բրյուսովը զգացված շնորհակալություն է հայտնում և ծափերի տարափի տակ համբուրվում Հ. Հովհաննիսյանի հետ:

Սկսվում է բուն դասախոսությունը: Վ. Բրյուսովը գտնում է, որ հին դարերից սկսած երկու սկզբունքներ են բախվում և գոյության իրավունք փնտրում հայ կյանքի ու գրականության մեջ – արևելյան և արևմտյան: Արևելքը հայ կյանքի ու գրականության մեջ արտահայտվել է իբրև պետականության ուրույն ըմբռնում, իբրև ուրույն վարք ու բարք և կրոն: Արևելյան սկզբունք ասելով՝ պիտի հասկանալ պարսկական, պարթևական, ասորական և արաբական ազդեցությունը: Արևմուտքը, որ գեղեցիկ Հելլադան է, Հռոմը, ապա միջնադարյան և նորագույն Եվրոպան, զանազան ուղիներով իր կնիքն է դրել

նույն հայ կյանքի ու գրականության վրա: Այս երկու սկզբունքների միացումը և համադրությունը կազմում է հայ ստեղծագործող ոգու առանձնահատկությունը: Հարկա՛վ, ազդեցությունների ենթարկվելով՝ դեռ չէ նշանակում դիմագուրկ դառնալ: Հայը՝ տոգորվելով Արևելքի և Արևմուտքի հոգևոր կյանքով՝ կարողացել է վերամշակել իր ստացածը և կերտել իր ազգային դեմքը բանաստեղծության մեջ, իր ուրույն խոսքը բովանդակ հոգևոր աշխարհում: Հայ ժողովրդական երգը, որ արտահայտիչն է մասսայի ինքնության ու նկարագրի՝ չունի հարավի տապը և սկանդինավիական հյուսիսի աՀեղությունը: Այդ երգը հեռու է գերմանական կոպտությունից և արաբական տոփասիրությունից: Նա հասուն երգ է, որ միացրել է իր մեջ Արևելքն ու Արևմուտքը: Նա ողջախոհ է, պատկերավոր, խաղաղ, տխրամած, չափազանցություններից խուսափող և չքեղ: Այդ երգը գիտե սիրո թախիծն ու հառաչը, մոր օրհնանքը և կնոջ նկուն լացը: Նա երգ է մի գեղարվեստագետ ժողովրդի:

Հայ ժողովրդական երգին ներբող կարդալուց հետո՝ Վ. Բրյուսովը կանգնում է առանձին երգիչների անվան վրա: Եվ այստեղ նա ցույց է տալիս մի գեղեցիկ իրազեկություն՝ թե հայ պատմության ընդհանրապես և թե զանազան հեղինակների գործերին մասնավորապես: Ունկնդիրը ամփոփ գաղափար է կազմում մեր հին, միջնադարյան և նորագույն բանաստեղծների մասին: Նա իրար ետևից հիշում է Գրիգոր Նարեկացուն, Մկրտիչ Նաղաշին, Ներսես Շնորհալուն, Նաղաշ Հովնաթանին, Նահապետ Քուչակին, Ֆրիկին, Կոստանդին Երզնկացուն, Հովհաննես Երզնկացուն, Հովհաննես Թլկուրանցուն, Գրիգոր Աղթամարցուն, Սայաթ-Նովային, Ջիվանուն և այլն: Ապա գալիս են Ռաֆայել Պատկանյան և Շահ-Ազիզ, Դուրյան և Պեշիկթաշլյան, Հ. Հովհաննիսյան, Հ. Թումանյան և Ավ. Իսահակյան, Ալ. Ծատուրյան, Դ. Դեմիրճյան, Վ. Տերյան, Շ. Կուրղինյան, Ա. Զոպանյան, Վ. Թեքեյան, Մ. Մեծարենց, Սիամանթո, Վարուժան և այլն, և այլն: Հակիրճ կերպով, բայց սրամտորեն ու պատկերավոր բնութագծելով այդ բանաստեղծներին՝ Վ. Բրյուսով իր խոսքն ավելի զգալի դարձնելու համար կարդում է սեփական թարգմանությունները հիշված երգիչներից: Եվ այստեղ նա փայլեցնում է իր բանաստեղծի ու թարգմանիչի բնատուր շնորհքը: Բրյուսովի հայերենից կատարած թարգմանությունները միանգամայն հոյակապ են: Նրան աջողվել է պահպանել մեր բանաստեղծական գործերի ձևը, համն ու հոտը և չքեղությունը: Վ. Բրյուսովի այդ ընթերցանությունները ընդհատվում էին բուռն ծափերով և քաջալերիչ բացականչություններով: Անվանի բանաստեղծը իր դասախոսությունը վերջացրեց համոզված պնդումով, որ անսպառ է հայ ժողովրդի շինարար եռանդը և ստեղծագործող ոգին, որ այդ ժողովուրդը իր գրականությամբ ազնվության վկայագիր է ձեռք բերել, այդ գրականությունը պատվավոր տեղ պիտի գրավե համաշխարհային հոգևոր տաճարում:

Չենք կարող չշեշտել այստեղ, որ Վ. Բրյուսովի գեղեցիկ դասախոսությունը ոչ միայն հրճվանք և հաճույք պատճառեց լսողներին, այլև խարազանի դեր կատարեց հայ անգիտակ բուրժուազիայի և նրա մտավորականության համար: Ամեն անգամ, երբ մեծահարգ հյուրը կրկնում էր, թե՝ «ձեզ հայտնի է» կամ «դուք գիտեք» և այլն բառերը, հանդիսականների շրթունքներին փայլում էր մի ժպիտ, որովհետև տեսնում էին, որ հայրենի անցյալից ու ներկայից ոչինչ

իրանց հայտնի չէ և ոչինչ էլ չգիտեն: Նրանք միայն այդ երեկո էին սովորում և այն էլ … մի օտարազգի բանաստեղծից: Կա՞ ավելի մեծ ողբերգություն …

Դասախոսությունից հետո «Մետրոպոլ» հյուրանոցում տեղի ունեցավ Հայ Գրասերների Ընկերության կողմից կազմակերպված հանդիսավոր ընթրիք ի պատիվ հյուրին և դասախոսին: Ընթրիքին մասնակցեցին 100-ից ավելի անձինք: Սեղանի կառավարիչ ընտրվեց Քր. Վերմիշյանը: Այստեղ ողջույնը և շնորհակալության առաջին խոսքը արտասանեց Հ. Գ. Ը. նախագահ Տ. Հովհաննիսյանը: Ապա ճառեր խոսեցին թե բանաստեղծը և թե մի շարք հյուրեր: Հարկա՛վ, ամենքի բերանից լսվում էր շնորհակալություն և խորին հարգանք դեպի մեծ ռուս ժողովուրդը: Ընթրիքին մասնակցողները, լսելով Վ. Բրյուսովի շրթունքներից՝ թե այժմ հայ գրականության վրա աշխատում են իբրև թարգմանիչներ Մաքսիմ Գորկին, Կոնստ<անդին> Բալմոնտը, Վյաչեսլավ Իվանովը և Ալ. Բլոկը, որոշեցին ողջույնի և գոհունակության հեռագիրներ ուղարկել այդ գրողներին: Ընթրիքի պահուն ողջույնի հեռագիր ստացվեց մեր երիտասարդ գրողներ Վ. Տերյանից և Պ. Մակինցյանից: «Նաիրական երկրից, — հեռագրում են նրանք, — ջերմ և սրտագին ողջունում ենք մեր թանկագին հյուր Վալերի Յակովլևիչին և քնքուշորեն գլուխ խոնարհեցնում Յովհաննա Մատֆեևնայի առջև» (բանաստեղծի կինը, որ հյուր էր եկել իր ամուսնու հետ): Հարկավ, հեռագիրը ընդունվեց ծափահարություններով:

Ծափահարեցինք և մենք, որովհետև քաջ գիտենք, որ հայ գրականության մեծարանքին շատ են նպաստել մեր այդ զույգ բարեկամները և հունվարի 8-ին էլ չէին մոռացել հոգով ներկա գտնվել այնտեղ, ուր խոսվում էր այնքա՜ն գուրգուրված հայ խոսքի բարգավաճման մասին: Այո՛, չմոռանանք, որ Բրյուսովներին դեպի հայության հոգևոր գանձերն են առաջնորդում Տերյաններն ու Մակինցյանները, և շնորհակալության խոսք արտասանենք նաև նրանց հասցեին:

Դ. Ա.

ՀՏԴ 929 :7.03(479.25) Աղասյան

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ. Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք 2, *Երևան, «Արմավ» հրատ., 2022, 306 էջ**:

Բանալի բառեր՝ Արարատ Աղասյան, կերպարվեստ, համաշխարհային, Նախավերածնունդ, Բարձր Վերածնունդ, նկարչություն, քանդակագործություն, արվեստի ուղղություններ, իտալական, եվրոպական, ռուսական, հայկական:

Արարատ Աղասյանի՝ կերպարվեստի պատմության ուսումնական ձեռնարկի 2-րդ գիրքը շարունակությունն է նույն ձեռնարկի 1-ին գրքի: Այն ընդգրկում է համաշխարհային կերպարվեստի բարձրագույն դրսևորման՝ վաղ Վերածննդի դարաշրջանից մինչև XX դարի սկիզբը: Գիրքը նվիրված է եվրոպական և ռուսական կերպարվեստի գլուխգործոցներին: Դրանում տեղ է գտել նաև հայկական կերպարվեստը՝ սկսած հովնաթանյաններից մինչև XX դարասկզբի հայ նկարիչներն ու քանդակագործները:

Ա. Աղասյանը ստեղծել է լիովին ինքնուրույն գործ: Գրքի ծանուցման հատվածում կա տեղեկատվություն, որից իմացվում է, թե հեղինակն ինքնուրույն և ինքնատիպ ձևով է մատուցում գրքում զետեղված նկարիչների ու քանդակագործների գործերը: Սա կարևոր զգուշացում է, որովհետև եվրոպական լեզուներով, նաև ռուսերենով կան նման ձեռնարկներ, որոնք նույնպես ունեն ուսուցողական նպատակներ: Սակայն կերպարվեստի նշանավորագույն դեմքերի կյանքի մանրամասներն ու նրանց գործերի մեկնաբանություններն այս գրքում տրվում են ըստ արվեստագետի հայեցողության ու ընտիր հայերենով և, որ ամենակարևորն է՝ հստակ շարադրությամբ:

Վերածննդի երևույթը, որը սկիզբ առավ Իտալիայում և այնուհետև տարածվեց Եվրոպայի երկրներում, բացատրվում է ճշգրտորեն ու տպավորիչ: Հատկապես առանձնացվում են Իտալիայի այն քաղաքները, որոնցում առ այսօր տեսանելի են Վերածննդի դարաշրջանի պալատները, քրիստոնեական տաճարները, արձանները, եկեղեցիների և մատուռների պատերին եղած որմնանկարները, մեծ ու փոքր կտավների վրա պատկերված Վերածննդի մեծ վարպետների գլուխգործոցները:

Նրանք, ովքեր եղել են գրքում ներկայացված գլուխգործոցների թանգարաններում, հոգեկան բերկրանքի պահեր կապրեն Աղասյանի մեկնաբանութ-

---

* *Ներկայացվել է 24. V. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

յուններով՝ վերհիշելով իրենց տեսած արվեստի հրաշքները, իսկ ովքեր նոր են մտնում արվեստը ճանաչելու կախարդական աշխարհը, կստանան բարձրաճաշակ արվեստը հասկանալու ու տեղյակ լինելու այնքան կարևոր գիտելիքը: Իտալական Վերածննդի կենտրոններն էին Պադուան, Ջենովան, Ֆլորենցիան, Սիենան, Պիզան, Ֆերարան, Միլանը, Վենետիկն ու Հռոմը: Նախավերածնունդը հիանալի է ներկայանում Պադուայի Սանտա Մարիա դել Արենա ոչ մեծ չափերի մատուռի որմնանկարներում, որոնք վրձնել է «իտալական գեղանկարչության իսկական բարենորոգիչ Ջոտտո դի Բոնդոնեն (1266–1337)»:

Այսօր էլ արվեստի սիրահարները իտալական Վերածննդի մասին կատարյալ պատկերացում կազմելու համար իրենց այցը սկսում են Պադուայի այդ մատուռից, որի պատերը երկնագույն ֆոնի վրա պատկերում են աստվածաշնչային ամենատարբեր մոտիվներ: Ջոտտոյի որմնանկարները յուրօրինակ ձևով նախանշում են Վատիկանի Սիքստոսյան տաճարի որմնանկարներում պատկերված Բարձր Վերածնության կատարելությանը: Պադուայի այդ տաճար այցելուներին ներս են թողնում հինգական հոգուց բաղկացած խմբերով:

Ուսումնական ձեռնարկում ներկայացված են իտալական այն արվեստագետները, որոնք կապող օղակ դարձան վաղ Վերածննդի ու բարձր Վերածննդի միջև: Նրանցից մեկը ֆլորենտական դպրոցը ներկայացնող Սանդրո Բոտիչելլին է (1445–1510): Աղասյանը համակիչ ձևով մեկնաբանում է տվել Բոտիչելլիի «Վեներայի ծնունդը» նկարին (1486). «Վեներայի ծնունդը» նկարում ներկայացված է այն պահը, երբ ծովի փրփուրներից ծնվում, լույս աշխարհ է գալիս Վեներան: Նկարիչը մերկ աստվածուհուն պատկերել է դեպի ափ սահող խոշոր խեցու մեջ կանգնած: ... Վեներայի՝ քամուց ծածանվող ոսկե վարսերը նրա կանացի գեղանազ կերպարին չնաշխարհիկ տեսք են հաղորդում» (էջ 16):

Գրքի «Բարձր Վերածնունդ» հատվածն սկսվում է Լեոնարդո դա Վինչիից (1452–1519): Ընդունված կարծիք է, որ Բարձր Վերածննդի նշանավոր ներկայացուցիչները բազմագիտակ ու հանճարեղ էին արվեստի ու գիտության տարբեր բնագավառներում: Այդ բնորոշումն առաջին հերթին ասված է Լեոնարդո դա Վինչիի համար: Նա մեծ գյուտարար էր: Գիտությունը նրան է վերագրում ինքնաթիռի, տանկի, ավտոմեքենայի, ձեռքի ժամացույցի, առանց սյուների մեծ կամուրջներ ստեղծելու գյուտերը: Հայտնի է նաև, որ Լեոնարդոյի նկարչական աշխատանքներից զգալի քանակ մնացել են անավարտ, այդ թվում նաև՝ Մոնա Լիզան:

Իրավացիորեն Աղասյանը Լեոնարդո դա Վինչիին և հետագայում գրքի մեջ մտած հանճարեղ արվեստագետներին նվիրված հատվածները շարադրել է առավել մանրամասն: Ինչպես իր ուսումնական ձեռնարկի առաջին գրքում, այնպես էլ երկրորդում զետեղել է լուսանցքային կարևոր փաստեր, որոնք օգնում են ունենալ ստույգ գիտելիքներ կերպարվեստի իրողությունների կամ կոնկրետ որևէ գործի վերաբերյալ: Դրանց վերաբերյալ գրքում տրված է բազմաթիվ ֆիլմերի դիտման հնարավորություն:

Ի դեպ, Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» որմնանկարը, որը հիմա գտնվում է Միլանում, ժամանակի ընթացքում սկսվում է քայքայվել: Սակայն XX դարում նկարը մասնագետները վերականգնել են ու կասեցրել քայքայումը:

Առավել հանգամանալի ներկայացված է Լեոնարդոյի գլուխգործոցը՝ «Մոնա Լիզան», որը հիմա ցուցադրվում է Փարիզի Լուվր թանգարանում: Կան նաև այդ նկարի հինգ կրկնօրինակները, որոնք չեն տարբերվում բնօրինակից: Եթե Լուվրում «Մոնա Լիզան» ապակու տակ է, ապա կրկնօրինակները, որոնք հաճախ են շրջում աշխարհում, առանց ապակու են: «Մոնա Լիզայի» վերաբերյալ առաջին կարևոր մեկնաբանությունը գրել է նրա կրտսեր ժամանակակից Ջորջո Վազարին (1511–1674), որին համարում են ժամանակակից արվեստագիտության հիմնադիր: Վազարին 1551-ին, սքանչացած «Մոնա Լիզա» նկարով, գրում է. «Մոնա Լիզան եղել է շատ գեղեցիկ, ու Լեոնարդոն դիմանկարը վրձնելու ընթացքում պատվիրել էր մարդկանց նվագել ու երգել, կատակներ անել նրան ուրախացնելու, վերացնելու համար այն մելամաղձոտությունը, որը նկարչությունը տալիս է դիմանկարներին: Լեոնարդոյի այս դեմքն ունի այնքան հիանալի ժպիտ, որ այն ավելի շուտ թվում է աստվածային, քան մարդկային, և համարվել է հոյակապ՝ բնության մի ճշգրիտ պատճեն» (Raymond w Short and Robert deMaria, Subjects and Sources for Research Writing, New York, 1961, p. 5): Աղասյանը Վազարիի մեկնաբանությունից կատարում է հետևյալ ուշագրավ մեջբերումը. «Նկարն ուշադիր զննելու դեպքում կարելի է տեսնել, թե ինչպես է տրոփում նրա պարանոցի (խոսքը Մոնա Լիզայի մասին է – Ա. Դ.) զարկերակը» (էջ 21):

Աղասյանն իրավացիորեն գրում է, թե համաշխարհային կերպարվեստի պատմության մեջ Ռաֆայել Սանտիի (1483–1520) անունը կապվում է կնոջ գեղեցկության իդեալի հետ: Շատ-շատերին է հիացմունք պատճառել Գերմանիայի Դրեզդեն քաղաքի պատկերասրահում ցուցադրվող Սիքստոսյան Տիրամայրը (1513) նկարը:

Փայլուն դիմանկարիչ Ռաֆայելը ստեղծել է հոգեբանական խորք ներկայացնող նշանավոր մարդկանց ռեալիստական դիմանկարներ: 1512 թվականին ստեղծված Հուլիոս II պապի դիմանկարի մասին Վազարին գրել է. «Հուլիոսի յուղաներկ պատկերն այնքան ճշմարտանման է, որ նրան նայելիս սարսափ ես զգում՝ ասես քո առջև իսկապես նստած է կենդանի պապը ...» (էջ 23):

Ռաֆայելն անտիկ աշխարհի մեծերին նկարելիս դեմքերը ներկայացրել է իր ժամանակի նշանավոր արվեստագետների իրական դեմքերի ձևով: Աթենական փիլիսոփաների դպրոցը պատկերող որմնանկարում, որը Վատիկանում է, Պլատոնը Լեոնարդո դա Վինչիի դեմքով է, Դեմոկրիտեսը՝ Միքելանջելոյի, իսկ խմբանկարի աջ կողմում, որպես աստղագետ, Ռաֆայելը պատկերել է ինքն իրեն: Այս հնարանքին դիմել է նաև XX դարի երկրորդ կեսի տաղանդաշատ նկարիչ Գրիգոր Խանջյանն իր Ավարայրի հերոսամարտը ներկայացնող նկարում, ուր Ավարայրի հերոսամարտիկների դեմքերում տեսնում ենք Դանիել Վարուժանին, Պարույր Սևակին, Եղիշե Չարենցին և ուրիշ հայ նվիրյալների, որոնց թվում է նաև հենց իր՝ նկարչի դեմքը:

Փաստահարուստ է նաև Միքելանջելո Բունարոտիին (1475–1564) ներկայացնող բաժինը: Գրքի հեղինակը մեծամասամբ դրել է նշանավոր նկարների ու քանդակների ֆոտոպատճենները՝ հաճախ գունավոր: Վատիկանի Սբ. Պետրոսի տաճարում է դրված երիտասարդ Միքելանջելոյի «Պիետա» քանդակը, որը դիտում ես ապակու հետևից: «Պիետան» վարպետի այն հազվադեպ աշխատանքներից է, որոնց վրա նա թողել է իր ստորագրությունը» (էջ 25): Մարիամի ոտքերի վրա է դրված որդու՝ Հիսուսի անշնչացած մարմինը: Մա-

րիամն արդեն երիտասարդ չէ. որդին խաչվեց 33 տարեկանում: Սակայն մայրական վշտի անսահմանությունը պատկերված է անթերի գեղեցկություն ունեցող երիտասարդ կնոջ դեմքով: Այդ կնոջ քանդակը դիտողին գամում է իր տեղում, ու նա երկար դիտում է և ցնցվում մայրական վշտի ծանրությունից: Տպավորիչ է մեկնաբանվում Միքելանջելոյի Դավիթը, որի երկու օրինակները կան Ֆլորենցիայում և բավականին հաջող կրկնօրինակը Մոսկվայի Պուշկինի անվան պատկերասրահում:

1536–1541 թթ. ընթացքում Միքելանջելոն Հռոմի Պողոս Երրորդ պապի համառ խնդրանքով որմնանկարում է Վատիկանի Սիքստոսյան մատուռի պատերն ու առաստաղը: Աշխատանքն իրականացնում է պառկած վիճակում՝ կրելով բազում անհարմարություններ: Նոր ժամանակներում բոլոր որմնանկարները վերանորոգված են. միայն մի փոքր խունացած հատված թողել են պատկերացնելու համար դարերի ու ժամանակի ավերիչ ուժը:

Գրքում իրենց կարևոր նկարներով ներկայացված են Բարձր Վերածննդի այնպիսի դեմքեր, ինչպիսիք են՝ Ջորջոնեն, Տիցիանը:

«Ուշ Վերածնունդ» բաժնում ծանոթանում ենք Պաոլո Վերոնեզեի (1528-1588) և Յակոբո Տինտորետոյի (1518–1594) գլուխգործոցների հետ: Հատկապես Տինտորետոյի նկարներից շատ են պահպանվել Վենետիկում, ու դրանց մեջ նշանակալին «Խորհրդավոր ընթրիքը», իրոք, խորհրդավոր մուգ ֆոնի վրա ներկայացված նկարն է:

«Հյուսիսային Վերածնունդ» բաժինը ներկայացնում է Նիդեռլանդների, Գերմանիայի արվեստը: Նիդեռլանդների Վերածննդի առեղծվածային նկարիչներից է Հիերոնիմ Բոսխը (1450–1516), որին առանց չափազանցնելու կարելի է համարել գերիրապաշտության (սյուռեալիզմի) հայրը: Բոսխը «Յոթ մահացու մեղքեր» նկարի մեջտեղում պատկերել է Քրիստոսին ու ավելացրել հետևյալ՝ մարդուն սարսափեցնող գրությունը. «Զգուշացի՛ր, զգուշացի՛ր՝ Աստված տեսնում է» (էջ 43):

Նիդեռլանդական Վերածննդի ակնառու նկարիչ է Պիտեր Բրեյգել Ավագը (1525–1569): Ցնցող է 1567-ին նրա կերտած «Մանուկների կոտորած» նկարը, որը ներկայացնում է Ավետարանի՝ Հրեաստանի թագավոր Հերովդեսի հրամանով Բեթհեղեմի մանուկների կոտորածը: Այս թեման առկա է քրիստոնյա տարբեր ժողովուրդների արվեստում և գրականության մեջ: Գրքում դրված են Պիտեր Բրեյգելի մի շարք նշանավոր կտավների գունավոր նկարները, որոնք գտնվում են Լոնդոնի Ազգային պատկերասրահում, Վիեննայի Արվեստի պատմության թանգարանում, նաև Նեապոլի Կապոդիմոնտե թանգարանում:

Գերմանիայի Վերածննդի արվեստի խոշորագույն ներկայացուցիչն է Ալբրեխտ Դյուրերը (1471–1528), ով Գերմանիայի արվեստում մերկ կնոջ առաջին նկարն է ստեղծել: Պահպանված են Դյուրերի մի քանի ինքնանկարները:

Գերմանական Վերածննդի ուշագրավ դեմքերից է նաև Հանս Հոլբայնը, որի շնորհիվ աշխարհին հայտնի է դառնում Վերածննդի մեծագույն մտածողներից մեկի՝ Էրազմ Ռոտերդամցու դիմանկարը (1523):

«XVII դարի եվրոպական կերպարվեստը» բաժինը վերստին բաժանված է տարբեր երկրների՝ Իտալիա, Ֆլանդրիա, Հոլանդիա, Իսպանիա, Ֆրանսիա:

Իտալիայի բաժնում այդ շրջանի քանդակագործության մեջ նշանավորագույնը եղել է Ջովաննի Լորենցո Բերնինին (1598–1680), որի՝ սպիտակ մարմարից կերտած հրաշք արձանները զարդարում են հատկապես Հռոմի թանգա-

րանները: Բերնինիի «Ապոլլոնը և Դափնեն» (1625) ցուցադրվում է Հռոմի Բորգեզեների թանգարանում: Արձանն ստեղծվել է ըստ հունական այն առասպելի, որի պատումը խոր հետք է թողել նաև հայ այն քերականների երկերի վրա, որոնք մեկնել են Դիոնիսիոս Թրակացու քերականությունը: Մուսաների աստված Ապոլլոնը սիրահարվում է գեղեցկուհի Դափնեին: Աղջիկն իր կուսական անմեղությունը պահպանելու համար սարսափահար փախչում է Ապոլլոնից, ու այն պահին, երբ տղան պետք է բռներ աղջկան, հողը պատռում է կուրծքը, և Դափնեն անցնում է հողի տակ: Աղջկա փոխարեն հողից դուրս է գալիս մշտադալար դափնի ծառը: Բերնինին այնքան վարպետորեն է պատկերել այդ պահը, որ թվում է՝ մարմարե երկու արձանները կենդանի են, նրանք հրաշք գեղեցկության տեր մարդիկ են:

XVII դարի իտալական նկարչության խոշոր դեմքերից է Կարավաջոն (1571–1610): Կարավաջոն վրձնել է և՛ իրական կյանքից, և՛ ավետարանական թեմաներից վերցրած նկարներ: Նկարիչն աչքի է ընկել իր՝ ոչ օրինակելի վարքագծով. «Նա վարել է տարօրինակ և անկարգ կյանք, աչքի է ընկել անհավասարակշիռ բնավորությամբ, քանիցս մասնակցել է զինված մենամարտերի» (էջ 67): Մալթայի Վալետա մայրաքաղաքի Սբ. Հովհաննես տաճարը Վալետայի ասպետական ուխտի գլխավոր տաճարն է, որում Եվրոպայի ութ երկրների ասպետներն ունեն իրենց առանձին մատուռները: Այդ տաճարում իրենց քանդակներն ու նկարներն ունեն իտալական մի շարք նշանավոր արվեստագետներ: Դրանցից մեկը Կարավաջոն է, որի վրձնած «Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատումը» դրված է տաճարի մատուռներից մեկում: Հենց այդ նկարի մոտ ասպետները դատել են Կարավաջոյին իր վարքագծի համար ու բանտ նետել:

Պիտեր Պաուլ Ռուբենսի (1577–1640) նկարները ներկայացնում են Ֆլանդրիայի արվեստը: Այդ բեղմնավոր նկարչի գործերը գտնվում են աշխարհի շատ նշանավոր թանգարաններում՝ Բոստոն, Մյունխեն, Սանկտ Պետերբուրգ և այլուր:

XVII դարի հոլանդական արվեստի փառքը Ռեմբրանտ վան Ռեյնն է (1606–1669): Նրա նկարները կան ոչ միայն Եվրոպայի նշանավոր թանգարաններում, Էրմիտաժում, Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում, այլև՝ Կիտոյի ու Հարավային Ամերիկայի թանգարաններում: Աղասյանը յուրօրինակ մեկնաբանություն է տվել Ռեմբրանտի այն ինքնանկարին, որում պատկերված է նրա սիրելի երիտասարդ կինը՝ Սասկիան (1635): Ռեմբրանտի նկարներով հատկապես հարուստ է Էրմիտաժը: Այդ նկարները դրված են ուսումնական ձեռնարկի մեջ:

XVII դ. իսպանական նկարչության փառքերից է Էլ Գրեկոն, որն ազգությամբ եղել է հույն: Նրա և XVII դարի իսպանական արվեստի մեծերի նկարներով հատկապես հարուստ է Մադրիդի Պրադո պատկերասրահը: Այդ դարի իսպանական արվեստի գագաթնակետը Դիեգո Վելասկեսն է. «Նկարիչը ոգևորությամբ էր ուսումնասիրում անտիկ աշխարհի և իտալական Վերածննդի պատմությունն ու հարուստ մշակույթը: Իր կտավներում պահպանելով ազգային ցայտուն հատկանիշները՝ Վելասկեսը միաժամանակ յուրացնում էր եվրոպական կերպարվեստի առավել կենսունակ ավանդույթները» (էջ 101): Վելասկեսը պալատական նկարիչ էր և մեծ դիմանկարիչ: Նկարչի շատ հանրահայտ գլուխգործոցն է «Լաս Մենինաս» խմբանկարը: Նկարն ունի ոչ

միայն գեղագիտական, այլև ճանաչողական մեծ արժեք: Նրանում պատկերված է Իսպանիայի թագավորական ընտանիքի առօրյա կյանքից մի դրվագ: Նկարի կենտրոնում տասնամյա գեղեցիկ արքայադուստր Մարգարիտան է, որի տեսքն աչք է շոյում: Նկարում նաև պալատի թզուկ ծաղրածուն է: Պրադոյի մասնագետները բացատրում են, որ թզուկը, երբ գիտակցել է իր տարբերությանը շրջապատի մարդկանցից, սրտի կաթվածից վախճանվել է: Վելասկեսի արվեստը նշանավորել է իսպանական արվեստի ոսկեդարը:

XVII դ. ֆրանսիական նկարչության մեկնաբանման մեջ կլասիցիզմի դասական օրինակ է Նիկոլա Պուսենը (1594–1665): Նրա նկարներով հատկապես հարուստ է Փարիզի Լուվրը, որտեղ ցուցադրվում է նաև նկարչի ինքնանկարը. «Պուսենի արտաքին նկարագրի մասին սպառիչ պատկերացում է տալիս նրա «Ինքնանկարը» (1650) (էջ 111):

Հարուստ է նաև «XVIII դարի եվրոպական կերպարվեստը» բաժինը, որը սկսվում է Ֆրանսիայից: XVIII դ. ֆրանսիական արվեստում գերիշխող են դառնում կլասիցիզմն ու նեոկլասիցիզմը: Կլասիցիզմի մեծ վարպետներից էր Ժակ Լուի Դավիդը (1748–1825), ով ֆրանսիական հեղափոխության շարժման մասնակիցներից էր, ու պատահական չէ, որ նա կտավին է հանձնել և սերունդներին թողել հեղափոխության առաջնորդներից մեկի դիմանկարը՝ նրա մահվան պահին («Մարատի մահը»): Աղասյանը մանրամասն ներկայացրել է Մարատի մահվան հանգամանքները. վերջինս սպանվել է լոգարանում: Այլանդակված մարմնով Մարատին Դավիդը ներկայացնում է աղետիկ կերպարանքով. «Լոգատաշտն ընկալվում է որպես սարկոֆագ (քարադագաղ), իսկ փայտե արկղը, որի վրա դրված է թանաքամանը, որպես հուշարձանի պատվանդան կամ դամբանաքար՝ կարճառոտ հետևյալ գրությամբ. «Մարատին՝ Դավիդից» (էջ 125):

Գլուխ Դ-ն ներկայացնում է «XIX դարի եվրոպական կերպարվեստը»: Այդ դարում Ֆրանսիայում սկսեց ձևավորվել իմպրեսիոնիզմը, որն ընթացավ արդեն արմատացած ռոմանտիզմի կողքին:

Իսպանիայի նկարչական փառքը եկավ համալրելու Ֆրանցիսկո Գոյան (1746–1828): Նա բազմաթիվ դիմանկարների հեղինակ է, որոնք զարդարում են աշխարհի նշանավոր թանգարանները: Մադրիդի Պրադո թանգարանում է գտնվում Գոյայի հայտնի նկարներից մեկը՝ «Հագնված Մախան» (1805). «Մախա-Գոյայի ապրած ժամանակներում այդպես էին կոչվում քաղաքաբնակ հասարակության միջին խավի երիտասարդ պճնուհիները, որոնք կրում էին իսպանական ազգային տարազներ՝ ցուցադրաբար հակադրվելով ֆրանսիական նորաձևությանը հետևող իսպանացի ազնվազարմ կանանց» (էջ 149):

Պրադոյում է գտնվում նաև «Մադրիդի ապստամբների գնդակահարումը» (1808) նկարը: Գրքի հեղինակը մեկնաբանում է, թե ինչպես նկարի կենտրոնում կանգնած սպիտակ վերնաշապիկով երիտասարդ ապստամբը մահն ընդունում է գիտակցված խիզախությամբ:

Ֆրանսիական նույն ժամանակահատվածի նկարչության մեջ առանձնացված է Էժեն Դելակրուան (1798–1863): Փառաբանելով կյանքը դեպի բարեկեցություն տանող հեղափոխությունը՝ նկարիչը մերժում է որևէ ազգի բռնությունը մեկ այլ ազգի նկատմամբ: 1824-ին է նկարվել Լուվրում գտնվող «Քիոսի կոտորածը» (1824) նկարը. «1821 թվականի սեպտեմբերին թուրք պատժիչները

ըրի քաշեցին Էգեյան ծովում՝ Փոքր Ասիայի ափերի մոտ գտնվող Քիոս կղզու խաղաղ բնակիչներին: Սպանվեց ավելի քան քառասուն հազար մարդ, իսկ շուրջ քսան հազարը մատնվեց գերության» (էջ 156): Դելակրուան նկարներ է վրձնել, որոնք ներկայացնում են Հունաստանի ազատագրական պայքարը թուրքական լծի դեմ:

Դելակրուայի շատ հայտնի նկարը կոչվում է «Ազատությունը բարիկադների վրա» (1830): Ազատությունը լանջաբաց գեղեցիկ ու երիտասարդ կնոջ կերպարանքով կանգնած է բարիկադների վրա՝ ձեռքին Ֆրանսիայի եռագույն դրոշը: Կինը մյուս ձեռքին ունի հրացան: Արվեստագետն Ազատությունը խորհրդանշող կնոջ կողքին տեսնում է Հյուգոյի «Թշվառները» վեպի հերոս Գավրոշի նախատիպին:

Տպավորապաշտ (իմպրեսիոնիստ) նկարիչների մեջ առանձնանում է Կլոդ Մոնեն (1840–1926): Նրա բնանկարները զարդարում են աշխարհի բազմաթիվ թանգարաններ:

Գրքում բավականին մանրամասն մեկնություններ կան Էդուարդ Մանեի (1832–1883), Օգյուստ Ռենուարի (1841–1919), Էդգար Դեգայի (1834–1917), Պոլ Սեզանի (1839–1906) վերաբերյալ:

Աշխարհահռչակ նկարիչ է Պոլ Գոգենը (1848–1903): Նրա նկարները ոճական փոփոխության են ենթարկվել հատկապես Թահիթի տեղափոխվելուց հետո: Գեղագետ Աղասյանը, խոսելով Գոգենի անբուժելի հիվանդության մասին, նրբանկատորեն լռում է, թե այդ ինչ հիվանդություն է եղել:

Հետաքրքիր ձևով է ներկայացված հոլանդացի նկարիչ Վինսենտ վան Գոգի (1853–1890) արվեստը՝ նրա մի շարք հայտնի նկարների պատկերներով: Դրանց թվում է «Ինքնանկար կտրած ականջով և ծխամորճով» կտավը:

Բնականաբար հանգամանալի է ներկայացված ֆրանսիացի քանդակագործ Օգյուստ Ռոդենի (1840–1917) արվեստը: Ռոդենից մեզ հասել են բազմաքանակ քանդակներ: Դրանք ցուցադրվում են մեծ քանակով անգամ բաց երկնքի տակ: Ահա, թե ինչ ինքնատիպ մեկնաբանություն է տալիս Աղասյանը Ռոդենի հանրահայտ «Մտածողը» քանդակին. «Փարիզում՝ Ռոդենի թանգարանի դիմաց ցածր պատվանդանին դրված բրոնզե «Մտածողը» (1882), որը գոյության գաղտնիքների մեջ թափանցել փորձող պրպտուն մտքի ու բանականության գեղարվեստական ինքնատիպ մարմնավորում է: Տիտանի հզոր մարմնով օժտված Մտածողի իրանը կորացել, ճկվել է ծանր խոհերի ճնշող բեռի տակ: Դեմքը թախծոտ է, անժպիտ, խոժոռ: Քանդակն աջ կողմից դիտելու դեպքում հերոսի ձեռքի և ոտքի դիրքն ու կոր թիկունքը կերպարին տալիս են ներքին լարում: Միանգամայն այլ տպավորություն է ստեղծվում արձանը ձախից դիտելու դեպքում՝ Մտածողի ձախ ծնկին դրված՝ կարծես թուլացած ու տկար ձեռքը խոսում է նրա հոգնության մասին» (էջ 193):

Գլուխ Ե-ում ներկայացված է XVIII դ. ռուսական կերպարվեստը, որին հետևում է XIX դ. դարձյալ ռուսական կերպարվեստը: Տեղեկություններ են տրվում այնպիսի նշանավոր նկարիչների մասին, ինչպիսիք են՝ Ալեքսեյ Վենեցիանովը (1780–1847), Կառլ Բրյուլովը (1799–1852), Ալեքսանդր Իվանովը (1806-1858), Վասիլի Պերովը (1833-1882), Իվան Կրամսկոյը (1837–1887), Իվան (Հովհաննես) Այվազովսկին (1817–1900):

Այվազովսկին ծնվել է հայ վաճառականի ընտանիքում: Նշվում է, որ նա արդեն քսանհինգ տարեկանում վայելում էր համաեվրոպական համբավ և

արդեն քանիոր տարեկանում ընտրվում Ռուսաստանի Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ: Այվազովսկու վեց հազար կտավները կան աշխարհի ամենատարբեր երկրներում. «Լինելով փայլուն ծովանկարիչ՝ Այվազովսկին օժտված էր նաև ճարտարապետի, երաժշտի (նա հրաշալի ջութակահար էր), բանաստեղծի ու հնագետի շնորհքներով: Ղրիմի Թերակղզում նրա պեղած անտիկ շրջանի թանկարժեք իրերն ու առարկաները ցայսօր էլ պահվում են և ցուցադրվում Սանկտ Պետերբուրգի հռչակավոր Էրմիտաժ թանգարանում: Այվազովսկին մեծ բարեգործ էր: Նա նյութապես օժանդակել է կարիքավոր բազմաթիվ մարդկանց, իսկ Թեոդոսիան խուլ ծայրագավառից դարձրել գեղեցիկ ու ծաղկուն քաղաք» (էջ 242):

Գրքում ներկայացված են նշանավոր բնանկարիչ Իվան Շիշկինը (1832–1898), Իլյա Ռեպինը (1844–1930), Վասիլի Սուրիկովը (1848–1916), Վիկտոր Վասնեցովը (1848–1926), Միխայիլ Վրուբելը (1856–1910), Վալենտին Սերովը (1865–1911) և ուրիշներ:

Գրքի Է գլուխը նվիրված է XIX դարի ու XX դարասկզբի հայկական կերպարվեստին, որը սկսվում է Հակոբ Հովնաթանյանից (1806–1881) և ավարտվում նշանավոր քանդակագործ Հակոբ Գյուրջյանով: Հանգամանալի ներկայացված են Եղիշե Թադևոսյանը (1870–1936), Փանոս Թերլեմեզյանը (1865–1941), Մարտիրոս Սարյանը (1880–1972), Վարդգես Սուրենյանցը (1860–1921), Հովսեփ Փուշմանը (1877–1966), Էդգար Շահինը (1874–1947), Անդրեաս Տեր-Մարուքյանը (1871–1917): Թվարկվում են այդ շրջանում ստեղծագործած բազում հայ արվեստագետների անուններ: Հայ նկարիչներից ու քանդակագործների գործերից գրքում տեղադրված է ճաշակով ընտրանի: Այդ գործերը հավասարի իրավունքով կանգնած են համաշխարհային արվեստի գլուխգործոցների կողքին:

Արարատ Աղասյանի «Արվեստի պատմություն. կերպարվեստ» գրքի 2-րդ հատորը բոլոր առումներով հանձնարարելի է ոչ միայն երաժշտական և արվեստի դպրոցների սովորողներին, այլև ընդհանրապես այն օգտակար է ավագ դպրոցի աշակերտների ու բուհերի ուսանողության համար: Սպասենք գրքի երրորդ հատորին:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 36 գրքի և շուրջ 760 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

ՀՏԴ 929: 281.6 Բաղումյան վարդապետ

ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ. Կիրակոս Երզնկացու՝ սուրբ Եվագր Պոնտացու երկերի լուծմունքները, *2022, Երևան, ՀԱԻ հրատ., 296 էջ*:*

Բանալի բառեր՝ Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյան, Կիրակոս Երզնկացի, Եվագր Պոնտացու լուծմունքներ, ուսումնասիրություն, գիտաքննական բնագրերի հրապարակում:

2022 թ. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) գիտական խորհրդի որոշմամբ տպագրվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հոգշ. Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանի «Կիրակոս Երզնկացու՝ սուրբ Եվագր Պոնտացու երկերի լուծմունքները» վերնագրով գիրքը: Աշխատության խմբագիրն է Մատենադարանի գլխավոր ավանդապահ, Ձեռագրագիտության և Մայր ցուցակի բաժնի վարիչ, երջանկահիշատակ Գևորգ Տեր-Վարդանյանը:

Գրախոսվող գիրքը կազմված է առաջաբանից, 5 գլխից, իսկ վերջում ներկայացվում են հեղինակի կազմած գիտաքննական բնագրերը, ինչպես նաև՝ օգտագործված աղբյուրների, գրականության ու հատկանունների ցանկերից: Հենց սկզբից նշեմ, որ հեղինակը կատարել է շատ ավելի մեծ աշխատանք, քան գրքի վերնագիրն է, ուստի, կարծում ենք, որ ճիշտ կլիներ աշխատությունն անվանել «Կիրակոս Երզնկացու կյանքը և ստեղծագործությունը», քանի որ Եվագր Պոնտացու երկերի լուծմունքների գիտաքննական բնագրերն ինքնին ներառվում են Կիրակոս Երզնկացու ստեղծագործության ծիրում:

Առաջաբանում (էջ 7–12) հեղինակը համառոտ, սակայն հանգամանորեն ներկայացնում է ուսումնասիրության խնդրո առարկան: 553 թ. Կ. Պոլսի եկեղեցական ժողովում Եվագր Պոնտացին դատապարտվել է իր ուղղափառ հայացքների համար, ինչի արդյունքում նրա երկերի մեծ մասը չեն պահպանվել հունարեն բնագրով, իսկ հայերեն թարգմանություններն ունեն սկզբնաղբյուրի արժեք: Պատահական չէ, որ միջնադարյան համալսարաններում դասավանդել են նաև Եվագր Պոնտացու երկերը, որոնց բարդությունը հաշվի առնելով՝ կատարվել են դրանց մեկնությունները՝ լուծմունքները:

Ինչպես գրում է Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը, իր «առաջնային նպատակն է եղել պատրաստել Ս. Եւագր Պոնտացու «Յաղագս Ը. խորհրդոցն» եւ «Հարիւրաւորք վեցերորդք» երկերի՝ Կիրակոս Երզնկացու լուծմունքների բնա-

---

** Ներկայացվել է 21. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

գրերը՝ առաջին անգամ շրջանառութեան մէջ դնելով յատկապէս հեղինակի երկրորդ լուծմունքը» (էջ 10):

Գրքի առաջաբանում երախտագետ գիտնական-հոգևորականը, գիրքն ընծայագրելով արդեն երջանկահիշատակ պաշտելի հայրիկին՝ Վահե Բաղումյանին, միաժամանակ շնորհակալության խոսք է ուղղել իր ծնողներին, ապա տպագրությանն իրենց նպաստը բերած հոգևորականներին ու գիտնականներին՝ Երուսաղեմի Հայ պատրիարք Ամեն. Տ. Նուրհան արք. Մանուկյանին, Հոգշ. Տ. Շնորհք աբղյ. Պալոյանին, Վենետիկի Մխիթարյան միաբան Հոգշ. Տ. Եղիա ծ. վրդ. Քիլաղպյանին, բ. գ. թ. Լիլիթ Հովսեփյանին (գիրքն ընթերցելու և լեզվաոճական սրբագրումների համար), պ. գ. դ. Գևորգ Տեր-Վարդանյանին (գիրքը խմբագրելու համար) և այլոց, ովքեր իրենց նպաստն են բերել այս գրքի ձևավորման համար:

Գրքի առաջին գլխում քննության է արժանացել հայ միջնադարի մատենագիր, աստվածաբան, մեկնիչ, փիլիսոփա, շարականագիր, տաղասաց, մանկավարժ, տոմարագետ, րաբունապետ Կիրակոս Երզնկացու կյանքն ու գործունեությունը:

Սկզբից հեղինակն իրավացիորեն անդրադառնում է թեմայի գիտական մշակվածությանը՝ նշելով, որ Կ. Երզնկացուն հայագիտության մեջ անդրադարձել են Միքայել Չամչյանցը, Հակոբ վրդ. Շագուրյանը, Հարություն Քյուրտյանը, Արմենուհի Սրապյանը, Հրաչյա Աճառյանը, Նորայր արք. Պողարյանը, Լևոն Խաչերյանը, Ավետիս քհնյ. Դանիելյանը, Հակոբ Քյոսեյանը, Գառնիկ Ստեփանյանը, Էռնա Շիրինյանը՝ գիտական պատշաճ մակարդակով հղում կատարելով հիշյալ հայագետների ուսումնասիրություններին: Ցանկալի էր, որ հեղինակն անդրադառնար նաև Սուքիաս Սոմալյանի «Պատկեր հայոց գրականության» գրքին, որը, ըստ էության, հայ հին գրականության պատմության առաջին ձեռնարկն է, թեև գրված է իտալերեն, իսկ Կ. Երզնկացին առաջին անգամ հիշատակվել է հայ գրականության պատմության մեջ հենց Ս. Սոմալյանի կողմից[1]: Այստեղ հարկ ենք համարում նաև նշել, որ հայ հին գրականության պատմաբան Գարեգին Զարբհանալյանը, ցավոք, չի հիշատակել Երզնկացու անունը, մինչդեռ Կիրակոս Արևելցու անունը, որը հավաքողն է «Ցայսմավուրաց գրոց», առկա է նրա գրականության պատմության մեջ[2]: Ցանկալի էր, որ հեղինակը խոսք բացեր նաև այս հեղինակի մասին:

Ավելին՝ Մաղաքիա արք. Օրմանյանն անդրադարձել է Կ. Երզնկացուն[3]՝ որպես «Արեւելք գերարփին» շարականի և «Ոսկեփորիկ» գրքի հեղինակ, որը հավաքածու է «խրատական գրուածներու եւ ժողովրդական ոտանաւորներու եւ քահանայական հրահանգներու, միջակ եւ աշխարհաբար ոճով»[4], որը ևս դուրս է մնացել ուսումնասիրողի տեսադաշտից:

---

[1] *Տե՛ս* S o m a l i a n P l a c i d o S u k i a s, Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, p. 141.

[2] *Գ. Զ ա ր բ հ ա ն ա լ ե ա ն. Պատմութիւն հայերէն դպրութեանց, հ. Ա, Վենետիկ, 1865, էջ 604, նաև՝ ն ո ւ յ ն ի՝ Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ–ԺԳ դար), Վենետիկ, 1897, էջ 753–754:*

[3] *Տե՛ս Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 2571:*

[4] *Տե՛ս նույն տեղում:*

Կ. Երզնկացուն անդրադարձել են նաև Գ. Հակոբյանը[5], Հ. Բախչինյանը[6], ցանկալի էր, որ թեմայի մշակվածության մեջ այս անդրադարձները ևս տեղ գտնեին:

Հայտնի է, որ XIII–XIV դդ. տաղասաց Կիրակոս Եպիսկոպոսի անունով պահպանվել է «Վասն Թուչնոց» տաղը, որի հեղինակի ժամանակը նույնանում է Երզնկացու ժամանակին, իսկ տաղի մեջ հեղինակը հիշում է՝ ինքը օտար աշխարհում է գրել այս տաղը: Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը Կ. Երզնկացու կենսագրական փաստերի ճշգրտման մեջ հստակեցնում է, որ Կիրակոսը մի որոշ ժամանակ՝ 1328–1341 թթ., գտնվել է օտարության մեջ, իսկ 1341 թ. նա կրկին Երզնկայում էր: Արժե, որ հետագայում ուսումնասիրողը կենտրոնանա նաև այս խնդրի շուրջ՝ պարզելով «Վասն Թուչնոց» տաղի հեղինակի ինքնությունը և կապը նույն դարում ապրող Կ. Երզնկացու հետ, որից ընդամենը մեզ հայտնի է այս միակ տաղը:

Կ. Երզնկացու ծննդյան թվականը ստույգ չէ, այն ընկնում է 1275–1280 թթ. միջև: Հայր Զաքարիան, վկայակոչելով ՄՄ հմր. 1379 ձեռագիրը, փաստում է՝ Կիրակոսը ծնվել է Երզնկա գավառի Ագրակ գյուղում: Կիրակոսի տաղերից մեկում էլ պահպանվել են նրա ծնողների անունները՝ Հովհաննես և Հիպա: Քանի որ 1305 թ. գրված շարականում հեղինակն իրեն անվանում է վարդապետ, ուստի ուսումնասիրողն իրավացիորեն կարծում է, որ Կիրակոսը առնվազն 30 տարեկան է եղել, երբ «վարդապետական գաւազան եւ իշխանութիւն է ստացել հէնց Եսայի Նչեցի րաբունապետից» (էջ 21):

Ուշագրավ է Կ. Երզնկացու մահվան թվականի հստակեցումը հեղինակի կողմից՝ Երուսաղեմի Մատենադարանի հմր. 1236 ձեռագրի հիշատակարանի հիման վրա, այն է՝ 1355 թ. նոյեմբերի 15-ը: Ավելին՝ հետազոտող ծայրագույն վարդապետը նաև հստակեցնում է Կիրակոսի թաղման վայրը՝ Երկանի Սբ. Գևորգ վանք: Կենսագրական այս փաստերը լիովին համոզիչ են և հիմնավորված ձեռագրական տվյալներով:

Ուսումնասիրության երկրորդ գլուխը՝ «Մատենագրական ժառանգութեան ընդհանուր բնութագիրը» ընդգրկում է գրքի 33–51 էջերը: Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը գրում է. «Կիրակոս վրդ. Երզնկացու մատենագրական ժառանգութիւնը բազմաժանր է՝ մեկնողական ճառեր, լուծմունքներ, թղթեր, խրատական-կանոնական երկեր, աղօթքներ, չորս տաղ եւ Տիրամօրը նուիրուած մէկ ներբող» (էջ 33):

Մեզ են հասել Կիրակոսի մեկնողական չորս ճառերը՝ «ԻԸ. 3 սաղմոսի մեկնութիւնը», որի բնագիրը հրատարակել է հեղինակը դեռևս 2012 թ.[7], «ԾԹ. սաղմոսի մեկնութիւնը», որը մեզ է հասել ՄՄ հմր. 4139 միակ ձեռագրով, որից

---

[5] Գ. Հակոբյան. Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V–XV դդ.), Երևան, 1980, էջ 285:

[6] Տե՛ս Հ. Բախչինյան. Շարականի գրապատմական ուղին, 5–14-րդ դարեր, Երևան, 2012, էջ 266–269, նաև՝ նույնի՝ Հայ միջնադարյան բանաստեղծությունը, հ. Գ, Երևան, 2022, էջ 279–281:

[7] Տե՛ս Բաղումեան Զաքարիա աբեղայ. Կիրակոս վարդապետ Երզնկացու ԻԸ. 3 սաղմոսի մեկնութիւնը.– «Էջմիածին», 2012, Է, էջ 71–91:

էլ այն 2011 թ. հրատարակել է Տիգրան սարկավագ Բաղումյանը[8]՝ նույն ինքը այժմ ծայրագույն վարդապետ Զաքարիա Բաղումյանը, ով նույն թվականին տպագրել է նաև Կիրակոսի մյուս՝ «Նախերգան Տեառնընդառաջին» ճառի բնագիրը[9]: Վերջին՝ «Յովհաննէսի Աւետարանի Ա. 1 համարի մեկնութիւնը» ճառը, որը մեզ է հասել երեք ձեռագիր ընդօրինակություններով, որոնցից մեկը թերի է. երկու ամբողջական ձեռագրերի համեմատական քննությամբ բնագիրը կազմել և տպագրել է Զաքարիա աբեղա Բաղումյանը[10]:

Կ. Երզնկացուց մեզ է հասել նաև երեք լուծմունք. դրանից մեկը՝ «Յաղագս Ը. խորհրդոյն»-ը, որը Եվագր Պոնտացու ութ խորհուրդների լուծմունքն է, գրել է Հովհաննես րաբունապետի պատվերով: Սա գրախոսվող գրքում արժանացել է պատշաճ քննության, և հեղինակը կազմել է լուծմունքի գիտաքննական բնագիրը:

Մյուս լուծմունքը Եվագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք»-ին նվիրված միակ մեկնությունն է հայ մատենագրության մեջ, որի բնագիրը ևս այս գրքում ներկայացրել է ուսումնասիրողը:

Կիրակոսի անտիպ երկերից է երրորդ լուծմունքը՝ «Լուծումն բնութեան գրոյն», որը պահպանվել է Ղալաթիոյ Ազգային Մատենադարանի հմր. 92 միակ ձեռագրով, որը գտել է գրքի հեղինակը, և ինչպես ինքն է գրում, պատրաստել է բնագիրը, սակայն այն հրապարակված չէ:

Կիրակոսի գրական ժառանգության մեջ հայտնի են երկու թղթեր, որոնցից մեկը՝ «Թուղթ առ Կարնեցիս» դավանաբանական երկն է, իսկ մյուսը՝ «ՅԱստուծոյ ամենակալէն», խրատական բովանդակությամբ մի շրջաբերական նամակ՝ ուղղված իր հոգևոր զավակներին, որի քննական բնագիրը յոթ ձեռագրերի համեմատությամբ կազմել է Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը, և ինչպես ինքն է գրում, «բնագիրը հրատարակության ընթացքում է» (էջ 43):

Կիրակոս վարդապետի ստեղծագործության մեջ առանձին տեղ ունեն արձակ խրատները՝ «Խրատ վասն խոստովանութեան», «Վասն խոստովանութեան մեղաց», «Բանք խրատական», «Խրատք վասն կրթութեան եւ ազգութեան», որոնց ավելի վաղ իր հոդվածներում անդրադարձել է ուսումնասիրողը՝ ձեռագրերից տպագրելով նաև դրանց բնագրերը[11]:

---

[8] Տե՛ս Բաղումեան Տիգրան սրկ. Կիրակոս վարդապետ Երզնկացու Ծթ. սաղմոսի մեկնութիւնը.– «Էջմիածին», 2011, Դ, էջ 106–119:

[9] Բաղումեան Տիգրան սրկ. Կիրակոս վարդապետ Երզնկացու «Նախերգան Տեառնընդառաջին» ճառը.– «Էջմիածին», 2011, Գ, էջ 82–109:

[10] Բաղումեան Զաքարիա աբեղայ. Կիրակոս վարդապետ Երզնկացու Յովհաննէսի Աւետարանի Ա. 1 համարի մեկնութիւնը.– «Էջմիածին», 2012, Թ, էջ 78–107:

[11] Բաղումեան Զաքարիա աբեղայ. Կիրակոս վարդապետ Երզնկացու խրատները մեղքերի խոստովանության մասին.– «Էջմիածին», 2012, Գ, էջ 91–94, նաև՝ Բաղումեան Զաքարիա վրդ. Կիրակոս վարդապետ Երզնկացու «Բան խրատականք» երկը.– «Էջմիածին», 2013, Ե, էջ 75–87, նաև՝ Բաղումեան Զաքարիա աբեղայ. Կիրակոս վարդապետ Երզնկացու մեղքերի մասին.– «Էջմիածին», 2013, Ա, էջ 55–65:

Վենետիկի Մխիթարյան միաբանության հմր. 75/1292 ձեռագրում պահպանվել է «Բանք աղաւթից խաւսք ընդ Աստուծոյ՝ գրեալ ձեռամբ Կիրակոսի» փոքրիկ աղոթքը, իսկ նույն ձեռագրատան հմր. 1093/1195 ձեռագրում՝ «Աղաւթք Կիրակոսի տիեզերալոյս վարդապետի եւ սուրբ վարդապետի ասացեալ» երկարաշունչ աղոթքը, որոնց ուսումնասիրությունը և բնագրերի հրապարակումը կրկին կապվում է Հայր Զաքարիայի անվան հետ[12]*:*

Կ. Երզնկացին նաև չորս տաղերի ու մեկ ներբողյանի հեղինակ է: Նրա տաղերի բնագրերը հրատարակել է Հարություն Քյուրտյանը[13]*, որոնց արժևորման մասին ուսումնասիրողը գրում է, թե «դրանք չեն փայլում գեղարուեստական արժանիքներով, բայց այս բանիբուն վարդապետի ժառանգութեան մասն են եւ հետաքրքիր են Կիրակոս րապունապետին այլ տեսանկիւնից բացայայտելու առումով» (էջ 49): Ուշագրավ է, որ հիշյալ տաղերում Կիրակոսը դիմել է ծայրակապի, որոնք Կիրակոսի անունը ներառող արտահայտություններ են՝ «ԶԿիրակոս պիտակ սպասաւոր Բանի եւ գծնաւղսն իմ Յոհաննէս», «Սրբոյն Գէորգեայ ի Կիրակոսէ երգ»: Մինչդեռ այբուբենի տառերի հաջորդականությամբ ծայրակապով հորինված ներբողյանը, որ մեզ է հասել ձեռագիր երկու ընդօրինակությամբ, տպագրվել է Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանի կողմից*[14]*:*

Ինչպես արդեն ակնհայտ է, գրախոսվող ուսումնասիրության հեղինակը հետևողականորեն ուսումնասիրել է Կ. Երզնկացու գրական ժառանգությունը, կազմել է դրանց մեծ մասի քննական բնագրերը և դարձրել գիտական հանրության սեփականությունը: Գրքում Հայր Զաքարիան կատարել է գիտական նոր հրապարակումներ. մասնավորապես՝ կազմել ու տպագրել է Եվագր Պոնտացու երկու լուծմունքի բնագրերը, որոնց նախորդում են այդ լուծմունքների մասին ընդարձակ ուսումնասիրությունները՝ տեղ գտած գրքի Դ և Ե գլուխներում:

Բավական է ասել, որ միայն գրախոսվող գրքում բանիբուն գիտնական հեղինակն օգտագործել է ՄՄ-ի հմր. 44, Երուսաղեմի Մատենադարանի հմր. 7, Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի հմր. 3, Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի հմր. 11, Նոր Ջուղայի հմր. 1 և Ղալաթիայի ազգային մատենադարանի հմր. 2 ձեռագրեր, ընդհանուր թվով հմր. 68 ձեռագիր, ինչպես նաև տպագիր մասնագիտական պատկառելի հայալեզու ու օտարալեզու գրականություն, որոնց ցանկերը խնամքով ներկայացվել է ուսումնասիրության վերջում:

Գիտական նույն բարեխիղճ սկզբունքով են կազմվել անձնանունների, տեղանունների, սուրբգրային ցանկերը: Կարևոր է ուսումնասիրության անդ-

---

[12] *Բ ա ղ ու մ ե ա ն Զ ա ք ա ր ի ա ս ր կ. Կիրակոս վարդապետ Երզնկացին աղոթքի մասին.– «Էջմիածին», 2011, Ժ, էջ 59–90:*

[13] *Տե՛ս Հ. Ք ի ւ ր տ ե ա ն. Անտիպ տաղեր Կիրակոս վարդապետ Երզնկացիէ.– «Էջմիածին», 1965, Ը–Թ, էջ 92–99:*

[14] *Տե՛ս Բ ա ղ ու մ ե ա ն Զ ա ք ա ր ի ա վ ր դ. Կիրակոս վարդապետ Երզնկացու Ս. Աստուածածնի ներբողը.– «Էջմիածին», 2013, Թ, էջ 106–109:*

լերեն ընդարձակ ամփոփումը, որը գրքի գիտական հանրայնացման երաշխիքներից մեկն է:

Շնորհաշատ հոգևորական, գիտնական Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը, ով համեստորեն ընթանում է Խրիմյան Հայրիկի ու Գարեգին Հովսեփյանի անցած բավիղներով, այս և մյուս գրքերով ու ավելի վաղ տպագրած հոդվածներով իր մեծագույն նպաստն է բերել հայագիտությանը՝ արժանի ամենաբարձր գնահատականի ու խոնարհումի:

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի գիտաշխատող, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, բնագրագիտություն՝ գրաբար բնագրերի փոխադրությամբ, բանագիտություն, արդի հայ գրականություն և գրական քննադատություն: Հեղինակ է 26 գրքի և 100-ից ավելի հոդվածի: vano.exiazaryan@mail.ru

ՀՏԴ 929: 947.925 Մաթևոսյան +726.5(479.25)

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. Անին և անեցիները, *Երևան, 2021, Մատենադարանի հրատ., 464 էջ (ներդիր 24 էջ)*:*

Բանալի բառեր՝ Անի, Գագիկ Ա, Զաքարյաններ, Գրիգոր Մագիստրոս, Ծառաքար, Հոռոմոս, Բագնայր, Պահլավունիներ:

Ինչպես գրախոսվող մենագրության ներածության հենց սկզբում նկատել է հեղինակը, Անին միջնադարյան Հայաստանի պատմության մեջ բացառիկ դեր



է կատարել ոչ միայն իբրև երկրի քաղաքական ու հոգևոր կենտրոն, իսկ Բագրատունիների օրոք նաև Թագավորանիստ ու կաթողիկոսանիստ, այլև քաղաքային, տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման առաջնակարգ վայր:

Այդ անհերքելի իրողությամբ պայմանավորված՝ Հայոց քաղաքամայր կոչված Անիի պատմամշակութային ժառանգությունը, հատկապես՝ ճարտարապետությունը, հետազոտողների տարբեր սերունդների քննության առարկա է հանդիսացել: Արդյունքում ավելի քան 200 տարվա ընթացքում ստեղծվել է անիագիտական բազմաքանակ գրականություն: Սկսած 1980-ական թվականներից՝ դրա հարստացման շնորհակալ գործում իր շահեկան ավանդն է ներդնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Մաթևոսյանը: Նրա թեկնածուական ատենախոսությունը՝ «Անիի գրչության կենտրոնը» (1989), նվիրված էր քաղաքում ստեղծված ձեռագրերին, իսկ դոկտորականը՝ ԺԲ դարի նշանավոր մատենագիր Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերի աղբյուրագիտական քննությանը (2008): Հեղինակի անիագիտական երկերից են նաև «Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը» (Սբ. Էջմիածին, 1997, 412 էջ), «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները (Երևան, 2009, 224 էջ), «Անի ու Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու)» (Երևան, 2010, 294 էջ), «Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս» (Երևան, 2015, 144 էջ) և այլն: Վաստակաշատ անիագետը հեղինակ է նաև Անիին նվիրված շուրջ 40 գիտական արժեքավոր հոդվածների:

Կ. Մաթևոսյանի խնդրո առարկա աշխատությունը, ի տարբերություն Անիի մասին նախորդ հրատարակությունների, նվիրված է ոչ միայն բուն քաղաքին, այլև նրա հետ սերտորեն կապված շրջակա բնակավայրերին և հոգևոր հաստատություններին ու առանձին մասով Անիի բազմաշերտ բնակչությանը: Բանն այն է, որ վերջինիս մասին վկայությունները պահպանվել են

* *Ներկայացվել է 20. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

Անիի ու մերձակա բնակավայրերի վանքերի արձանագրություններում և դրանցում գրչագրված ձեռագրերի հիշատակարաններում: Դրանից ելնելով՝ հեղինակն իրավացիորեն քաղաքը դիտարկել է վարչատարածքային ավելի լայն ընդգրկումով՝ քննության առարկա դարձնելով իր իսկ պայմանական բնորոշմամբ՝ Մեծ Անին, այսինքն՝ քաղաքն իր մերձակայքով: Ընդարձակ արվարձաններ ունեցող Անին վարչական ու հոգևոր ամբողջություն էր մերձակա մի քանի վանքերի հետ, որոնցից գլխավորը Հոռոմոսն էր: Վերջինս հեղինակ կոչել է Անիի վանք, քանի որ այնտեղ էր Բագրատունի արքաների հանգստարանը:

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է ներածությունից, «Անիի պատմությունից» ու «Անեցիները» խորագրով մասերից, հավելվածից, գրականության ցանկից, պատկերացանկից, անգլերենով ամփոփումից և պատկերազարդ է: Մասերն իրենց հերթին կազմված են առանձին բաժիններից:

«Անի պատմությունից» մասի առաջին երեք բաժինները նվիրված են քաղաքի Բագրատունյաց և հետբագրատունյաց շրջանների պատմության լուսաբանմանն ու մշակութային կյանքի քննությանը: Ընդ որում, շեշտը դրվել է Անիի Բագրատունյաց շրջանի պատմության վրա և քաղաքը դիտարկվել իբրև մայրաքաղաք ու կաթողիկոսանիստ: Հաջորդ երեք բաժինները նվիրված են Անիի քաղաքաշինությանը, կառուցվածքին, հատակագծին, տարածական ընդգրկմանը, հնագույն քաղաքամասերին (Ներքին բերդ, միջնաբերդ, փոքր քաղաք) և փողոցներին: Ընդ որում, վերջիններից շատերի անունները պահպանվել են ինչպես բուն քաղաքի, այնպես էլ մերձակա վանքերի նվիրատվական արձանագրություններում, և այժմ դրանք որոշ դեպքերում հնարավոր է մոտավորապես տեղորոշել:

Այդ բաժիններում առանձին ներկայացվում են միջնադարյան Հայաստանի ամենախոշոր ու նշանավոր վանքերից Հոռոմոսը, ոչ պակաս հայտնի Բագնայրն ու Արջոառիճը, որոնք Անիին շատ մոտ էին գտնվում: Այս մասի վերջին բաժինը նվիրված է Անիի մատույցները համապատասխանաբար հյուսիսից ու հարավից պաշտպանող Տիգնիս բերդին, Ծառաքար-Մաղասբերդ ամրոցին և նրան մոտակա Ծառավան անունը կրող ու «Մեծ Անիի» մաս կազմող ավանին: Ընդ որում, Հոռոմոսի վիմագրերում վկայված Ծառավան անունը Կ. Մաթևոսյանը բացահայտել է հենց այս աշխատության մեջ:

Գրքի երկրորդ մասը հիմք է տալիս պնդելու, որ եթե Անիի պատմության նախորդ հետազոտողները հիմնականում շեշտը դրել են նրա նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրության վրա, ապա Կ. Մաթևոսյանը՝ այդ քաղաքի բնակչության պատմության: Ինչպես ճիշտ նկատել է հեղինակը, սա նորություն է, քանի որ առ այսօր ոչ միայն Անիի, այլև միջնադարյան Հայաստանի որևէ մի քաղաքի բնակչության մասին նման հետազոտություն չի կատարվել: Անին, լինելով երկրի քաղաքական, հոգևոր, առևտրատնտեսական ու մշակութային կենտրոն, ուներ մեծաթիվ ու բազմաշերտ բնակչություն:

Այս մասում հեղինակը նախ անդրադարձել է Անիի ազնվականական տոհմերին, տասնմեկ բաժիններից ինը նվիրելով նրանց: Օրինաչափորեն զգալի տեղ է տվել Անիի (և ոչ միայն) պատմության մեջ մեծ դեր խաղացած և քաղաքի իշխանական տոհմերի մեջ առաջնային դիրք ունեցած Պահլավունիների

նշանավոր տոհմին: Կ. Մաթևոսյանը սկզբում ներկայացրել է հայ միջնադարյան փայլուն գործիչներից մեկին՝ իշխան և գիտնական Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն: Մասնավորապես, լուսաբանել է Անիի թագավորության անկման շրջանում վերջինիս հայրենանվեր գործունեությունը և նախկինում չուսումնասիրված՝ Հայոց կաթողիկոսական աթոռը Պահլավունիների տոհմին փոխանցման նրա հաջողությամբ պսակված ծրագիրը:

Կ. Մաթևոսյանի ուշադրությունից չի վրիպել նաև Անիում Զաքարյանների հաստատվելուց հետո (1198 թ. վերջեր) այնտեղ վերելք ապրած մի տոհմ, որի ներկայացուցիչներն իրենց սերված էին համարում Վահրամ Պահլավունուց: Այդ տոհմին հեղինակը կոչել է Նոր Պահլավունիներ և նրանց պատմության վերհանմանը նվիրել մեկ բաժին:

Հաջորդ բաժնում հեղինակն անդրադարձել է Բագնայրի վանքի հիմնադիր Սմբատ Մագիստրոսի տոհմի՝ Պահլավունիների հետ նույնացմանը և հակվել այն կարծիքին, որ դա չի համապատասխանում իրականությանը: Այս առիթով չի կարելի չհամաձայնվել Կ. Մաթևոսյանի այն դիտարկման հետ, որ Անիի թագավորության մեջ Պահլավունիների բացարձակ դիրք ունենալը չի նշանակում, որ մյուս իշխանատոհմերը պետք է արհեստականորեն կցվեին նրանց:

Ժամանակին նույնը կատարվել է Գագիկ Ա-ի ժամանակներից մինչև ԺԳ դ. սկզբները գործած Հասանյան-Ապիրատյան տոհմի հետ, որին նվիրված է «Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը և Հասանյան-Ապիրատյան տոհմը» խորագրով բաժինը: Այս տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչը Կեչառիսի վանքի Սուրբ Գրիգոր գլխավոր եկեղեցին կառուցած Գրիգոր Ապիրատ Մագիստրոսն է, որին ուսումնասիրողները, բացառությամբ Ն. Ակինյանի, նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ: Կ. Մաթևոսյանն աղբյուրագիտական հյուսակեն քննությամբ հիմնավորել է Պահլավունիների հետ —Հասանյաններ-Ապիրատյանի ազգակցական կապի չգոյությունը, լուսաբանել այդ տոհմի պատմության հետ կապված որոշ հարցեր և համառոտակի անդրադարձել նրա Անիի տոհմաճյուղի մի քանի գործիչների: Անիի ԺԲ դարի պատմության որոշ դեպքերի վերհանմանը նվիրված հաջորդ բաժնում ևս հեղինակը մեծ տեղ է հատկացրել դրանցում կարևոր դեր խաղացած Հասանյան-Ապիրատյանների գործունեությանը, լուսաբանմանը՝ հանգելով ուշագրավ եզրահանգումների:

Կ. Մաթևոսյանն առանձին բաժնով քննության առարկա է դարձրել նաև Անիի թագավորության անկմանն անմիջապես նախորդած շրջանում Վեստ Սարգսի գործունեությանը: Նա առաջ է քաշել այն համոզիչ վարկածը, որ Վեստ Սարգիսը եղել է անժառանգ, ինչը որոշակի դեր է խաղացել 1041 թ. այդ գործիչի գործողությունների ու Անիում նրա նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի մեջ:

Ճիշտ է, Անիում ապրում էին թագավորներն ու իշխանները և նրանց ընտանիքի անդամները, կաթողիկոսներն ու հոգևոր սպասավորությունը, զինվորականներ ու այլ գործիչներ, բայց նրա բնակչությունը հիմնականում կազմված էր արհեստավորներից, առևտրականներից, զանազան գործավորներից ու այլ փոքրաթիվ խմբերից: ԺԱ–ԺԴ դարերի Հայաստանի քաղաքների մեջ Անին առաջատար է այնտեղ ապրած տոհմերի կամ մեծ գերդաստանների մա-

սին մեզ հասած տեղեկություններով: Ուստի պատահական չէ, որ դրանց է նվիրված մենագրության մի մեծ հատվածը: Հեղինակը լիովին իրավացի է, երբ այդ հատվածը համարում է արդի պատմագիտության ուշադրավ ճյուղերից մեկին՝ առօրեականությանը համապատասխանող հետազոտություն, որտեղ ներկայացված են հասարակ մարդկանց կյանքի պատմություններ:

Աշխատությունը եզրափակվում է անեցիներին և քաղաքին առնչված անձանց 783 անուն ընդգրկող անվանացանկով, որի հիմքում ընկած են սկզբնաղբյուրների հավաստի տվյալները: Հարկ է նկատել, որ այն ընդգրկված անունների թվով բավականին գերազանցում է հայկական միջնադարյան մյուս քաղաքների համապատասխան ցուցանիշը:

Աշխատության մեջ ներկայացված են պատմական և մշակութային բազմաթիվ այլ հարցեր ևս: Գրքի թվային տարբերակը տեղադրված է Մատենադարանի կայքում (www.matenadaran.am):

2016 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում ընդգրկված հայոց քաղաքամայրի պատմությանն ու քաղաքաշինությանը, քաղաքամերձ վանքերին ու բերդերին և նրա բնակիչներին նվիրված գրախոսվող աշխատությունը լուրջ ներդրում է անիագիտության մեջ: Այն շարադրված է հայ և օտար տարաբնույթ սկզբնաղբյուրների համադիր քննությամբ ու Անիին նվիրված բազմաքանակ գրականության հաշվառմամբ: Դա հեղինակին թույլ է տվել լրացնելու այդ քաղաքի պատմության հետ կապված որոշ սպիտակ էջեր, և նորովի քննելու մի շարք կարևոր հարցեր: Վստահաբար պնդելի է, որ եթե անիագիտական նախորդ աշխատություններում նոր շունչ են առել այդ քաղաքի գերազանցապես նյութական մշակույթի հուշարձանները, ապա գրախոսվող մենագրությունում նրա բազմաշերտ բնակչությանը:

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XI–XIII դարերի հայոց պատմության հարցեր: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 70 հոդվածի: artashes shahnazaryan.1950@gmail.com

ՀՏԴ 929: 947.925 Մանանդյան

АКОП МАНАНДЯН
(К 150-летию со дня рождения)*

В плеяде арменоведов конца XIX – первой половины XX вв. особое место занимает выдающийся историк, филолог, источниковед, кавказовед, востоковед, действи-тельный член Академии наук СССР и Академии наук Армянской ССР Акоп (Яков) Амазаспович Манандян, научное наследие которого и сегодня занимает свое почетное место в области исторической науки.

А. Манандян родился в городе Ахалцха (Ахалцих) 22 ноября 1873 года. Среднее образование получил в Тифлисе. С 1893 по 1897 гг. учился на историко-философском факультете Йенского университета и защитил свое первое научное исследование «К истории Албании» [издано на немецком языке: “Beiträge zur albanischen Geschichte” (Leipzig, 1897)], получив ученую степень доктора философии. Из Германии переезжает в Петербург, где через год экстерном сдает экзамен на факультете восточных языков Петербургского Императорского университета и получает диплом первой степени.

В 1899 г. по приглашению Эчмиадзинской духовной семинарии А. Манандян переселяется в Армению и преподает древнегреческий язык, литературу и философию, а также немецкий язык. Совместно с выдающимся лингвистом, академиком Грачия Ачаряном в Эчмиадзине издают сборник «Новые армянские мученики», содержащий тексты агиографических памятников XII–XIX вв. В эти же годы изучает литературные памятники так называемой армянской грекофильской школы, пишет о ряде произведений этой школы.

1905–1907 годы проводит в Тифлисе, где преподает немецкий и армянский языки в гимназии. А уже через год экстерном оканчивает юридический факультет Тартуского университета. Однако следующие десять лет он вынужденно проводит в Баку, где работет в окружном

* Представлена 27. XI. 2023 г., принята к печати 29. XI. 2023 г.

суде в качестве присяжного поверенного, параллельно преподает политическую экономию в коммерческом училище.

С установлением советской власти в Армении в ноябре 1920 г. начинается новый период в жизни и творчестве ученого. А. Манандян переезжает в Ереван и вновь, на сей раз – окончательно, посвящает себя научной и педагогической деятельности.

В течение 1920–1930 гг. А. Манандян изучает почти неразработанную до него область социально-экономической истории Армении и издает обобщающую монографию об армянском феодализме. Параллельно занимается исторической географией Армении, исторической метрологией, нумизматикой и издает целый ряд ценных научных трудов.

За плодотворную научную и педагогическую деятельность в 1926 г. А. Манандяну было присвоено звание профессора, в 1935 г. – звание заслуженного деятеля науки Армянской ССР. В 1938 г. ему присуждается ученая степень доктора исторических наук (без защиты диссертации). На следующий год он был избран действительным членом Академии наук СССР, а в 1943 г., с созданием Академии наук Армянской ССР, был включен в первоначальный состав ее действительных членов.

В 1940-е годы маститый ученый обращается к проблемам политической истории Армении и издает монографию об эпохе Тиграна Великого. Затем приступает к созданию многотомного фундаментального труда «Критический обзор истории армянского народа», охватывающего период с древнейших времен до XV в.

Научно-исследовательская работа А. Манандяна долгие годы сочеталась с его педагогической деятельностью: после Эчмиадзинской духовной семинарии, в 1906–1907 гг. преподавал в Нерсисянской школе Тифлиса, в 1911–1913 гг. – в Бакинском народном университете. В декабре 1919 г. был приглашен в Ереванский государственный университет и назначен исполняющим обязанности декана историко-лингвистического факультета, а в 1921–1922 гг. – ректором. В 1921–1923 гг. был деканом востоковедческого и исторического факультетов, в 1921–1925 гг. – заведующим кафедрой истории армянского народа, а в 1925–1931 гг. – профессором того же факультета. А. Манандян был очень предан своей педагогической работе, о которой писал: «Вся моя жизнь связана только с университетом. ...Я живу только идеей создания университета, что считаю самым большим делом для нашей страны и единственным правым путем ее восстановления и возрождения».

В 1925 г. А. Манандян был избран членом Института науки и искусства, а в 1930-м – утвержден в первом составе Института наук Армянской ССР. Он активно участвовал также в общественной жизни страны: в 1940 г. был избран депутатом Ереванского городского Совета депутатов трудящихся. В 1939 г., в дни празднования 1000-летия героическо-

го эпоса «Давид Сасунский», выступил с докладом о народных восстаниях в Армении против арабского владычества. А 20-ю годовщину советской власти в Армении отметил своим трудом «Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность» (Ереван, 1941).

В 1945 г. А. Манандян был награжден орденом Трудового Красного Знамени, а в 1948-м – в Академии наук Армянской ССР был торжественно отмечен 75-летний юбилей знаменитого ученого.

Научное творчество А. Манандяна было многогранным. Особое место в нем занимают исследования по армянской грекофильской школе: «Выдержки из хроники Евсевия Кесарийского в одной древней рукописи» («Андес амсореа», Вена, 1905, №1, на арм. яз.) «Прогимнасмы Феона» (Ереван, 1938, армянский и греческий тексты), «Определения Гермеса Трисмегиста Асклепию» («Вестник Матенадарана», 1956, № 3, на арм. яз.) и др. В этом ряду выделяется его монография «Грекофильская школа и периоды его развития» (Вена, 1928, на арм. яз.), вошедшая в золотой фонд армянской классической филологии.

А. Манандян неоднократно обращался также к вопросу датировки жизни и деятельности Отца армянской историографии Мовсеса Хоренаци, которого очень высоко ценил, однако в своем труде «Разрешение проблемы Мовсеса Хоренаци» (Ереван, 1934) считал его автором не V, а IX века. Он ошибочно полагал и пытался доказать, что именно в это время могла быть создана «География», приписываемая Мовсесу Хоренаци.

Интересны труды А. Манандяна по исторической географии Армении, где основным объектом изучения является римская дорожная карта Tabula Peutingeriana, приписываемая географу IV в. Касторию, в которой, как и в «Географии» Птолемея, отмечена территория исторической Армении. В своих трудах «Древние пути Армении: Artaxata-Satala и Artaxata-Tigranocerta по Tabula Peutingeriana» (Известия Института науки и искусства АрмССР, 1931, № 5, с. 65–89, 1 карта, на арм. яз., резюме на нем. яз.), «Главные пути древней Армении по Tabula Peutingeriana» (Ереван, 1936, резюме на русск. и нем. яз.) и др. автор рассматривает главные торговые и военные дороги римско-парфянского и византийско-сасанидского времени, радиально расходившиеся из Арташата по направлению к Сатале, Тигранакерту, Севастополю и Персии.

А. Манандян уделял также внимание исторической метрологии. В его трудах «Веса и меры в древнейших армянских источниках» (Ереван, 1930, на арм. яз.), «Стадий Эратосфена и персидский аспарез» (Ереван, 1934, резюме на русск. яз.), «О градусных измерениях меридиана и земной поверхности по древнеармянским источникам» («Вестник древ-

ней истории», т. 3, М.–Л., 1950, с. 133–153) рассматриваются вопросы эллинистическо-римско-византийской, а также персидской метрологии.

Особенно плодотворным и многогранным было творчество А. Манандяна в области истории Армении. В книге «О торговле в городах Армении в связи с мировой торговлей древнейших времен (V в. до н. эры – XV в. н. эры)» (Эривань, 1930) впервые в армянской историографии он изучает историю армянских городов – главных торговых центров, через которые проходили транзитные пути, и считает, что расцвет городов Армении был обусловлен оживлением торговли в них, т.е. в основном внешним фактором. О внутреннем факторе развития городов, связанном с социально-экономической историей армянского народа, А. Манандян писал еще в первые годы советской власти в Армении в статье «Заметки о положении шинаканов древней Армении в эпоху марзбанства» (Известия Гос. ун-та АрмССР, 1925, № 1, с. 3–45, на арм. яз.). Затем он написал еще несколько статей на эту тему, которые явились предпосылкой для создания обобщающей монографии «Феодализм в древней Армении (период Аршакидов и марзбанства)» (Эривань, 1934), в которой автор рассматривает структуру и организацию нахарарских владений, их взаимоотношений с царем и духовенством, а также положение других классовых групп – «азатов» и «востаников».

Столь же велик вклад А. Манандяна в политическую историю Армении, в области которой первым его крупным исследованием явилась монография «Тигран Второй и Рим» (Ереван, 1940, русский перевод издан в 1943). В книге показано, что процессы усиления Армении, возникновения городов эллинистического типа начались еще до Тиграна Великого, и что борьба армянского монарха с Римом была не реакцией против цивилизующего влияния Рима, как пытались доказать немецкий историк Т. Моммзен, французский археолог Т. Рейнак и др., а защитой армянского государства и эллинистических традиций в Армении.

А. Манандян обращался также к греческим надписям в Армении: в Армавире – «Армавирские греческие надписи в новом освещении» (Ереван, 1946, текст на арм. и русск. яз.) и в Гарни – «Греческая надпись Гарни и время постройки Гарнийского языческого храма» (Ереван, 1946, краткое содержание на русском). И эта книга стала отправной точкой для капитального многотомного труда А. Манандяна под названием «Критический обзор истории армянского народа», над которым он продолжал работать и в преклонном возрасте. Первый том книги (на арм. яз.) освещает период с древнейших времен до воцарения Аршакидов (Ереван, 1945); часть первая второго тома (издана посмертно в 1957 г.) посвящена периоду правления Аршакидской династии, а вторая часть, которая должна была охватить историю V–X вв., осталась

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

незаконченной. Третий том (был издан тоже посмертно, в 1952 г.), который содержит историю Армении с XI в. до начала XV в., является первым, со времен историка и языковеда М. Чамчяна, развернутым обобщающим трудом по политической истории указанных четырех столетий. Эти три тома до сих пор не утратили свое значение для изучения истории армянского народа.

А. Манандян отправился в вечный путь 4 февраля 1952 г. в возрасте семидесяти девяти лет, оставив глубокий след в советской исторической науке. Его труды до сих пор не утратили свое значение для историков и филологов, кавказоведов и востоковедов, и они будут настольными книгами еще для многих поколений арменоведов.

ГОАР ВАРДУМЯН

К. и. н., доцент, ведущий научный сотрудник отдела истории древних веков Института истории НАН РА. Научные интересы: история и культура древней и раннесредневековой Армении. Автор 1 монографии и около 130 статей. gohar.vardumyan@gmail.com

ՀՏԴ 929:281.6 Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
(Ծննդյան 115-ամյակի առթիվ)*



Լրացավ Ամենայն Հայոց կաթողիկոս, Հայաստանի ազգային հերոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր ակադեմիկոս, երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ծննդյան 115-ամյակը: Նրա ապրած կյանքը և գործունեությունն անգնահատելի են մեր ժողովրդի համար:

Ապագա կաթողիկոսի հայրը՝ Աբրահամ Պալճյանը, բնիկ Թեքիրդաղցի էր, արհեստով՝ կոշկարար, 1895–1896 թվականներին՝ Կոստանդնուպոլսի հայկական ողբերգական իրադարձությունների ժամանակ, եղբայրների և քույրերի հետ գաղթում է Ռումինիա ու հաստատվում Բուխարեստում: 1907 թ. Աբրահամն ամուսնանում է էդիրնեցի օրիորդ Սիրանուշի հետ: 1908 թ. սեպտեմբերի 20-ին Պալճյան ընտանիքում ծնվում է Լևոն-Կարապետը:

1913 թ. Պալճյանները հաստատվում են Կոստանդնուպոլսում, որտեղ Լևոն-Կարապետը հաճախում է Կետիկ-փաշայի ազգային մանկապարտեզը: 1914 թ. գարնանը նա ծնողների հետ վերադառնում է Բուխարեստ: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին Պալճյան ընտանիքն ապաստան է գտնում Օդեսայում, ուր Լևոն-Կարապետը նախնական կրթություն է ստանում Արմեն Շիտանյանի հայկական նախակրթարանում: Երեխայի դաստիարակության հոգսը ստանձնում է մայրը: Տանը Լևոն-Կարապետին միաժամանակ մասնավոր դասեր է տալիս ուսուցիչ և մտավորական Աշոտ Սպանդարյանը:

1919 թ. Պալճյանները կրկին վերադառնում են Բուխարեստ: Ուսումնատենչ Լևոն-Կարապետը ուսումը շարունակում է տեղի Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանում, այնուհետև՝ գերմանական դպրոցում, ապա՝ Բուխարեստի բարձրագույն ուսումնարանում: 1928 թ. նա հաճախում է հայկական վարժարանին կից բացված հայոց լեզվի ու գրականության գիշերօթիկ դասընթացներին՝ դաստիարակ-ուսուցիչ Գևորգ Ղազարյանի ղեկավարությամբ: Առևտրական-հաշվապահական տեխնիկումն ավարտելուց հետո մտածում է իր աշխատանքով թև ու թիկունք լինել ծնողներին: Դեռևս 14 տարեկանից սկսած՝ դպրոցական արձակուրդներին, տարին 2–3 ամիս, նա ստիպված է լինում աշխատել հայ առևտրականների մոտ՝ ապահովելու համար իր դպրոցական տարեկան վճարումները:

---

* *Ներկայացվել է 20. XI. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

Ընտանիքը, դպրոցը և հայկական շրջանակը լրացնում ու ամբողջացնում են պատանի Լևոն-Կարապետի միջնակարգ կրթությունը: Խոստումնալից երիտասարդի առաջ բացվում են գործունեության լայն ասպարեզ: Նա ծանոթ և սիրված դեմք է դառնում Բուխարեստի հայ ազգային շրջանակներում, փնտրված ու ծափահարված «ասմունքի վարպետ» բոլոր հանդեսներում:

1929 թվականից սկսած՝ Լևոն-Կարապետը, ուսուցչի օգնական և քարտուղարի պաշտոն է ստանձնում Բուխարեստի հայոց վարժարանում՝ միաժամանակ շարունակելով իր ուսումը: 1931–1932 ուսումնական տարեշրջանում նա քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո ընդունվում է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետ՝ մասնագիտություն ընտրելով մանկավարժությունը, հոգեբանությունը և հասարակական գիտությունները: Համալսարանը վճռական նշանակություն է ունենում Պալճյանի մտավոր զարգացման, մտահորիզոնի ընդլայնման, մանկավարժական-գիտական, հասարակական-ազգային հայացքների ձևավորման բնագավառում: Երիտասարդ համալսարանականը մեծ սիրով և եռանդով զբաղվում է մանկավարժության, գրականության ու փիլիսոփայության առաջավոր մտքերի ուսումնասիրությամբ: Ուսանողության տարիներին և՛ աշխատում է ազգային վարժարանում, և՛ սովորում՝ միաժամանակ գործուն մասնակցություն բերելով հայ ազգային-հասարակական աշխատանքներում: Այդ շրջանում նա աչքի է ընկնում որպես Բուխարեստի Հայ ուսանողների միության ակտիվ անդամներից մեկը, նաև՝ աշխատակից՝ Հայ մշակույթի բարեկամների ընկերակցության և Հայ մատենադարանի: Մասնակցում է գրաբարի դասընթացների՝ պոլսահայ մտավորական Հակոբ Սիրունու ղեկավարությամբ:

1936 թ. բազմակողմանիորեն զարգացած, կայուն և խոր գիտելիքների տեր Լևոն-Կարապետն ավարտում է պետական համալսարանը՝ ավարտաճառ ներկայացնելով «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» թեման, իսկ 1937 թ.՝ նաև համալսարանի գործնական մանկավարժության բաժինը: Նա բեղմնավոր ու հանրօգուտ ուսուցչական աշխատանք է ունեցել Բուխարեստի հայ կյանքում՝ իր գիտակցական կյանքն ու գիտելիքները նվիրելով ռումինական հողի վրա հասակ առած հայ նոր սերնդի հայեցի դաստիարակության գործին:

1937–1942 թթ. հոգևոր ու մտավորական մտերմություն է ստեղծվում ռումինահայ թեմի առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի և երիտասարդ ուսուցչի միջև: Այս տարիներին է, որ ապագա Հայրապետը ծանոթանում է Հայ եկեղեցու պատմությանը, դավանանքին, իրավունքին, կազմակերպությանը, նրա հոգու և գիտակցության մեջ ամրապնդվում է սերը և պաշտամունքը դեպի Ս. Էջմիածին: Երիտասարդ ուսուցիչն իր ազատ ժամերն անց է կացնում սրբազանի հարուստ գրադարանում, զբաղվում է Հայ եկեղեցու պատմության, աստվածաբանության, իրավունքի ուսումնասիրությամբ:

1942 թ. հոկտեմբերին վախճանվում է Հուսիկ արքեպիսկոպոսը: Առաջնորդական պատասխանատու Աթոռը թափուր է մնում: Այդ օրերին «աչք ամենեցուն ի նա հայէին»: Բոլորի մտքում գտնվել էր, արդեն կար առաջնորդը: Քահանայության պատիվն աստվածատուր է: Նախախնա-

մական տնօրինությամբ Լևոն-Կարապետը կոչվում է այդ բարձր հոգևոր առաքելության նվիրական գործին: Եվ ահա իր ժողովրդի ընտրությամբ, 1943 թ. սեպտեմբերի 30-ին Լևոն-Կարապետն Աթենքում, Տուրդուդի-Ֆիքսի Հայոց Ս. Կարապետ եկեղեցում, Հունաստանի Հայոց առաջնորդ գերաշնորհ Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանի ձեռամբ, վարդապետ է ձեռնադրվում՝ վերանվանվելով Վազգեն վարդապետ. մի օրում բարձրանալով աշխարհական վիճակից մինչև վարդապետություն: Բուխարեստի Հայոց եկեղեցու ավագերեց Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի ընկերակցությամբ դեպի Աթենք կատարած ճանապարհորդությունից վերադառնալուց հետո երիտասարդ վարդապետն իր քառասունօրյա պահեցողության շրջանն անց է կացնում Սուչավայի Հայոց Ս. Հաճկատար պատմական վանքում՝ արմաշական Գնել ավագ քահանա Մանտալյանի հոգևոր վարժողության ներքո:

Իր կոչմանն արժանավայել գիտակցությամբ Վազգեն վարդապետը վերադառնում է Բուխարեստ՝ ստանձնելու թեմի նախ՝ առաջնորդական փոխանորդի, և ապա՝ թեմակալ առաջնորդի պաշտոնը: 1943 թ. դեկտեմբերի 1-ի պետական հրովարտակով ռումինական կառավարությունը հաստատում է նրա ընտրությունը:

Նորընծա Վազգեն վարդապետը, գիտակից իր հոգևոր նոր կոչմանն ու ուսանելու անհագ ծարավով տոգորված, արձանագրվում է իբրև ուսանող Բուխարեստի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում ու 1943 և 1944 թթ. հետևում դասընթացներին:

Իր նոր ու բազմապահանջ առաջնորդական պաշտոնում նա ցուցաբերում է իրեն հատուկ լրջություն, ջերմություն և կազմակերպչական ընդունակություն. իր շուրջն է հավաքում գաղութի ազնիվ ու հայրենասեր տարրերին և նրանց օժանդակությամբ մի գլուխ բարձրացնում է թեմի ազգային-եկեղեցական կյանքը, ստեղծում պատկառանք, մեծ հեղինակություն՝ որպես պատրաստված, խոհուն և հոգեկիր եկեղեցական: Թեմը սիրով ու երախտագիտությամբ է համախմբվում իր հոգևոր հովվի շուրջը՝ թև ու թիկունք հանդիսանալով նրա՝ ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեությանը: Վազգեն վարդապետը գլխավորում է գաղութի՝ ազգային-եկեղեցական և մշակութային ողջ կյանքը՝ իր հոտի ծոցում ուժեղացնելով ազգային-եկեղեցական միասնականության ոգին, ստեղծելով հետաքրքրություն դեպի հայ մշակույթը և արծարծելով բոցավառ սեր՝ մեր պանծալի Հայրենիքի հանդեպ: Նրա առաջնորդական տարիների՝ հիմնական ու գլխավոր գործունեությունը եղել է քարոզչությունն ու հովվությունը. ամրապնդել է թեմի կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի հետ, արժանացել՝ երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի վստահությանը:

Ռումինահայ թեմի անունից Վազգեն վարդապետը, որպես եկեղեցական պատգամավոր, 1945 թ. մասնակցում է Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովին և կաթողիկոսական ընտրությանն՝ իր ձայնը տալով հօգուտ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի:

1948 թ. ռումինահայ թեմի պատգամավորական ժողովը Վազգեն վարդապետին ընտրում է առաջնորդ, իսկ Գևորգ Զ Հայրապետը բարձր գնահատման արժանացնելով նրան՝ իր ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեության համար, մայիսի 23-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հայրապետական օրհնությամբ շնորհվում է ծայրագույն վարդապետական աստիճան:

1951 թ. հուլիսի 8-ին Գևորգ Զ կաթողիկոսը ռումինահայ թեմի ազգային-եկեղեցական իշխանությունների և ժողովրդի համաձայնությամբ՝ Վազգեն ծայրագույն վարդապետին շնորհում է եպիսկոպոսական աստիճան: Նորաօծ սրբազանը, իրեն հատուկ կորովով, անաղմուկ ու շինարար աշխատանքով և անձնվեր ծառայությամբ շարունակում է առաջնորդական պաշտոնը՝ հօգուտ իր թեմի ազգային-եկեղեցական կյանքի զարգացման ու կազմակերպման: 1954 թ. մայիսին, երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի թաղման տխուր առիթով, Վազգեն սրբազանը գլխավորում է ռումինահայ թեմի պատգամավորությունը:

1954 թ. հունիսին Ս. Էջմիածնում գումարված եպիսկոպոսական ժողովում գերաշնորհ Վազգեն եպիսկոպոս Պալճյանն ընտրվում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ: Բուլղարահայ թեմի հատուկ հրավերով 1954 թ. ամռանը, Ս. Էջմիածնից դարձին, սրբազանն այցելում է բուլղարահայ թեմ՝ պատարագելով և քարոզելով գրեթե բոլոր եկեղեցիներում: 1955 թ. հունվարին՝ բուլղարահայ թեմի դիմումով ու Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի հաստատմամբ, Վազգեն եպիսկոպոսը ստանձնում է նաև բուլղարահայ թեմի առաջնորդի պարտականությունները:

1955 թ. սեպտեմբերի 29-ին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը սեպտեմբերի 30-ի երկրորդ նիստում, հանդիսավոր իրադրության մեջ ու խանդավառ մթնոլորտում արտահայտելով Հայրենի Երկրի ու Սփյուռքի մեր ժողովրդի ցանկություններն ու իղձերը՝ Ամենայն Հայոց Հայրապետ ընտրեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի բարեխնամ առաջնորդ ու Հոգևոր Խորհրդի անդամ Վազգեն եպիսկոպոս Պալճյանին: Հոկտեմբերի 2-ին վեհաշուք հանդիսությամբ Մայր Տաճարում կատարվեց նորընտիր Հայրապետի կաթողիկոսական օծումը, որին ներկա էին նաև քրիստոնեական քույր եկեղեցիների բարձրագույն ներկայացուցիչներ: Այդ օրը համազգային ուրախության ու հոգեկան մխիթարության տոն էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և բոլոր հայ հավատացյալ հոգիների համար. Վեհափառ Հայրապետի ընտրությունն ու գահակալությունը հանդիսացավ մեր ազգային-եկեղեցական տարեգրության բացառիկ ու անմոռանալի տարեթվերից մեկը, վերածվեց հայ ժողովրդի սիրո և հարգանքի մի վառ տոնի՝ դեպի Ս. Էջմիածինը և նորընտիր Գահակալը: Ազգընտիր Հայրապետն ընդունեց եկեղեցու և ազգի միահամուռ հավատարմությունն ու հպատակությունը՝ որպես աստվածատրյալ Հայրապետ, և բարձրացավ Ս. Լուսավորչի պատմական Աթոռի վրա:

Անցան Ազգային-եկեղեցական ժողովի գումարման, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և օծման, Սրբալույս Մեռոնի օրհնության ու առաջին 9 եպիսկոպոսների ձեռնադրության խանդավառ և պատմական օրերը: Մայր Աթոռը, իր նորընտիր Հայրապետի գլխավորությամբ, կրկին ներամփոփվեց վանական խաղաղ ու լուռ շրջանակի մեջ: Երիտասարդ կաթողիկոսը, իրեն հատուկ հետևողականությամբ և գործիմացությամբ, առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ Մայր Աթոռի հոգևոր-վանական, մշակութային, տնտեսական կյանքի վերակառուցման ծանր ու պատասխանատու աշխատանքներին: 1957 թ. հունվարի 14-ին հայ հոգևորականությանն ուղղած իր սրբատառ կոնդակում Վեհափառ Հայրապետը գեղեցկորեն գծել էր այն պատկերը, որը պետք է ունենա Մայր Աթոռի միաբանությունն ի մասնավորի և հայ հոգևորականությունն ընդհանրապես:

Վեհափառ Հայրապետի գահակալությունից անմիջապես հետո, նրա ցուցումներով և պահանջով, մեծ ուշադրություն դարձվեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսումնական ծրագրի բարեփոխման ու դասավանդման մեթոդներին և դասախոսական կազմի որակավորմանը:

Հայ Եկեղեցու վերականգնման աշխատանքներում և հայ ժողովրդի կրոնաբարոյական դաստիրակության գործում Վեհափառ Հայրապետը մեծ և պատասխանատու դեր է հատկացրել ընդհանրապես Հայ կրոնական մամուլին, ի մասնավորի՝ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին: Նա ամսագրի խմբագրապետն էր, գլխավորում էր խմբագրական մարմինը և ղեկավարում խմբագրական աշխատանքները, իսկ պարբերականը նրա կենդանի խոսքն էր՝ ուղղված իր զավակներին, Մայր Աթոռի հարազատ որդիներին:

Վեհափառ Հայրապետի գործունեությունը Մայր Աթոռում բազմաոլորտ էր: Հովվապետը չուներ անձնական կյանք. ապրում էր իր Եկեղեցու, իր ժողովրդի ամենօրյա ուրախություններով և տեսիլքներով:

Վազգեն կաթողիկոսը հոգեկան նկարագրի բնորոշ առաջին հատկանիշներն են եղել կարգապահությունը, սկզբունքայնությունը հրահանգների գործադրության մեջ, հետևողականությունը, բայց նաև՝ քրիստոնեական հաշտարար ոգին՝ ելնելով ընդհանուր գործի շահերից: Վեհափառ Հայրապետի հոգևոր նկարագրի առանձնահատկությունն է եղել անկողմնակալությունը: Նա հոգևոր հայրերի հանդեպ, անկախ նրանց դիրքից և աստիճանից, ունեցել է անաչառ ու առարկայական վերաբերմունք:

Եկեղեցական, վարչական ու կրթական գործերից ազատ իր ժամերը Վեհափառ Հայրապետը հատկացրել է ընթերցանությանը: Լայն մտահորիզոնի և հետաքրքրության տեր անձնավորություն է եղել Վազգեն կաթողիկոսը: Նրան հավասարապես հետաքրքրել են գրականությունը, արվեստը, գիտությունը, ի մասնավորի՝ երաժշտությունն ու նկարչությունը:

Վեհափառ Հայրապետը շատ բարձր է գնահատել նաև ժամանակի հայ մշակութային արժեքները: Նրա համար մեծ բավականություն է եղել Վեհարանում շրջապատվել մտավորականներով, որոնց հետ սիրել է զրուցել գիտության և արվեստին վերաբերող հարցերի շուրջ: Նրա օրոք Վեհարանը դարձել է յուրօրինակ «ազգային-եկեղեցական վերնատուն»:

Մեծագործ Հայրապետը ոչ միայն գործի մարդ էր, այլև՝ խոսքի ու գրչի: Դեռևս ուսուցչության տարիներին է դրսևորվել այդ սերը, ինչի վառ վկայություններն են նրա թղթակցությունները մամուլի տարբեր օրգանների հետ, ինչպես նաև՝ նախաձեռնությունը նոր պարբերական հիմնադրելու ուղղությամբ:

Վազգեն Վեհափառն ապրել ու գործել է մի ժամանակաշրջանում, երբ Աստծո խոսքի կարևորությունը մղված էր երկրորդական պլան: Սակայն նա խոհեմ և կշռադատված գործով ու խոսքով կարողանում էր Հայ Առաքելական Եկեղեցին և նրա հետևորդներին առաջնորդել դեպի խաղաղ նավահանգիստ:

Նկատենք, որ Վազգեն Վեհափառն իր գործունեության ընթացքում, հատկապես՝ 1950–1960-ական թվականներին, հետևողականորեն արծարծել է Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի՝ Սովետական Հայաստանին վերամիավորելու գաղափարը: Իսկ թե նա ինչ դերակատարություն է ունեցել Արցախյան շարժման, ապա՝ Հայաստանի երրորդ Հանրապետության հուշակ-

ման գործում, բավական են հետևյալ խոսուն փաստերը. նրան են տրվել նորանկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացու առաջին անձնագիրը, նաև՝ ազգային հերոսի բարձրագույն կոչումը՝ ազգային ու հոգևոր արժեքների պահպանման և բազմապատկման գործում բացառիկ ծառայության համար:

Վազգեն կաթողիկոսն իր գահակալության տարիներին ապրեց և գործեց ոչ միայն որպես ազգի Հայրապետ, այլև՝ Հայ Եկեղեցու պարզ ու համեստ հոգևորական: Թերթելով մամուլի էջերը, ծանոթանալով վավերագրերին, լուսատեսա նյութերին՝ հաճախ նրան կարող ենք տեսնել տարբեր երկրների հայկական կամ օտար եկեղեցիների խորաններից Աստծո խոսքը քարոզելիս: Նրա համար ցանկացած եկեղեցական տոն լավագույն առիթ էր քարոզելու հայրենասիրություն և եկեղեցասիրություն, որոնց միջոցով նա փորձում էր հագուրդ տալ իր ներսում առ հայրենին և եկեղեցին կուտակված մեծ սիրուն: Քարոզները կարդալիս Վեհափառ Հայրապետի համար Հայրենիքից, հայ ժողովրդից ու Ս. Էջմիածնից վեր չկար այլ արժեք. «Մենք իբրև Հայոց Հայրապետ, Մեր սեպուհ պարտքը կնկատենք անդադար հնչեցնել, հազար խոսքերով, հազար ձևերով լսելի դարձնելու համար մեր օրերու հոգևոր-ազգային կյանքի գերագույն ճշմարտությունը. թե՝ հայության միակ ապահով խարիսխը աստվածակառույց Սուրբ Էջմիածինն է, և հայ հողը հայրենի: Հայաստան, հայ ժողովուրդ, հայոց պատմություն, իրարմե անբաժան են, և միասին անբաժան են Սուրբ Էջմիածնեն»:

… Ի վերջո, իր շիրմաքարի արձանագրությունը պատահական ընտրություն չէ, այլ մարգարեաբար արված արձանագրություն, որն այսօր փաստացի արտահայտում է երանաշնորհ Հայրապետի անձի և գործի նկատմամբ ունեցած ողջ հայ ժողովրդի սերը: Վազգեն Վեհափառի նկատմամբ սերը, հարգանքն ու մեծարումը ստիպում են մեզ ասել, որ սիրելի Հայրապետ իսկապես «ՍԷՐ ՈՉ ԵՐԲԵՔ ԱՆԿԱՆԻ»:

ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ

Պ. գ. թ., Ս. Էջմիածնի Մատենադարանի և հրատարակչության տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազատագրական պայքարի պատմություն, հայ եկեղեցու պատմության աղբյուրագիտություն, հայ գրատպության պատմություն: Հեղինակ է ավելի քան 40 հոդվածի:
terararatqahana@gmail.com

ՀՏԴ 929: 891.981.09 Ջրբաշյան

ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*



Լրացավ գրականագետ, ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Էդվարդ Ջրբաշյանի 100-ամյակը: Գիտությամբ ապրելու ու արարելու կեսդարյա արգասավոր ուղին ապահովեցին մեծանուն գրականագետի տեղը հայագիտության դասականների, ազգային մշակույթի ու գիտության երախտավորների շարքում:

Արմատներով վանեցի Էդ. Ջրբաշյանը ծնվել է 1923 թ. սեպտեմբերի 24-ին Երևանում, Վանի հերոսամարտի մասնակից Մկրտիչ աղայի ընտանիքում, որը երկու ակադեմիկոս տվեց ազգային գիտությանը (Էդվարդի եղբայրը ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի հիմնադիր տնօրեն, ակադեմիկոս Մխիթար Ջրբաշյանն է): 1941 թ. ավարտելով Երևանի Շոթա Ռուսթավելու անվան թիվ 23 դպրոցը՝ զորակոչվել է բանակ: Սովորել է Բաքվի հրամանատարական դպրոցում, ապա՝ հրամանատարական կազմի կատարելագործման անդրկովկասյան դասընթացներում (Թբիլիսի): Ապագա գիտնականը խորհրդային բանակի շարքերում լեյտենանտի կոչումով մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին (1943–1944 թթ.): Այն զորամասը, որտեղ ծառայում էր Ջրբաշյանը, 1944 թ. հոկտեմբերին ազատագրեց երկրի սահմանները թշնամուց և մարտնչեց նաև Խորհրդային Միության սահմաններից դուրս: Նա, սակայն, չկարողացավ մնալ մարտի դաշտում մինչև պատերազմի վերջին օրը՝ ոտքը կորցնելու պատճառով:

Զորացրվելուց հետո Էդ. Ջրբաշյանը 1945 թ. ընդունվել ու 1950 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, անմիջապես աշխատանքի անցել նույն ֆակուլտետում որպես դասախոս ու 22 տարի շարունակ դասավանդել մայր բուհում: Դեռ ուսանողական տարիներին սկսվեցին Ջրբաշյանի գիտական որոնումները, որոնք շատ շուտով արդյունք տվեցին: 1954 թ. նա պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ «Պոեմի ժանրը սովետահայ գրականության մեջ» թեմայով: 1956 թ. ԽՍՀՄ գրողների միության անդամ էր և իր մասնակցությունն էր բերել ինչպես հայրենիքի, այնպես էլ խորհրդային մեծ ու բազմազգ երկրի գրական կյանքին: 1953–1954 թթ. զբաղեցրել է «Գրական թերթի» գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոնը, 1961–1962-ին հիմնել ու ղեկավարել է «Սովետական գրականություն» ամսագիրը: 1965-ին նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Թումանյանի պոեմները» թեմայով:

* *Ներկայացվել է 01. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

ԵՊՀ-ում սկսվեց Ջրբաշյանի ոչ միայն գիտական, այլև՝ մանկավարժական գործունեությունը: 1967-ին նա արժանացավ պրոֆեսորի կոչման: Նույն թվին հիմնել ու 10 տարի շարունակ խմբագրել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը: 1972 թ. հիմնել և մինչև 1985 թ. ԵՊՀ-ում ղեկավարել է նաև Գրականության տեսության և գեղագիտության, 1982-ին՝ Գրականության տեսության և արտասահմանյան գրականության ամբիոնները:

Մայր բուհում աշխատելու տարիներին Ջրբաշյանը սերտ կապեր հաստատեց ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ: Այստեղ նա նույնպես դրսևորեց իր նախաձեռնողականությունը և գիտության կազմակերպչի հմտությունները. հիմնեց ու գլխավորեց գրականության տեսության բաժինը (1966–1970), իսկ արդեն 1977-ից դարձավ Գրականության ինստիտուտի տնօրենը և պաշտոնավարեց մինչև իր կյանքի ավարտը՝ 1999 թ. օգոստոսի 11-ը: Հենց այս շրջանում նա հայ գրական ու գիտական կյանքն ուղղորդող ուժն ու ժամանակի գրական և հայագիտական կյանքի գլխավոր դերակատարներից մեկն էր: 1974 թ. ընտրվեց ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ ակադեմիկոս:

Էդ. Ջրբաշյանը հեղինակ է ավելի քան երկու տասնյակ մենագրությունների, հայ և օտար լեզուներով հարյուրավոր հոդվածների: Նրա՝ հատկապես՝ ռուսերենով հրատարակված երկերը [«Թումանյանի պոեզիան» (Մոսկվա, 1969), «Պոետիկան և գրականության զարգացումը» (Երևան, 1985) և այլն] հանրահռչակեցին հայ գրականությունն ու գրականագիտության նվաճումները խորհրդային երկրի վիթխարի տարածքում:

Գրականագետը նախաձեռնել է հայ, ռուս և համաշխարհային դասականների, տեսական քննադատական մտքի մեծանուն հեղինակների երկերի հրատարակություններ՝ հանդես գալով որպես առաջաբանների ու ծանոթագրությունների հեղինակ և խմբագիր (Ն. Բուալո, Յու. Լերմոնտով, Մ. Գորկի, Ալ. Բլոկ, Ալ. Պուշկին, Մ. Նալբանդյան, Հովհ. Թումանյան և այլք): Գրել է մենագրություն Պուշկինի մասին, թարգմանել՝ Ալ. Բլոկի և Պուշկինի հանրահայտ բանաստեղծությունները, որոնք, մասնագետների կարծիքով, եղած թարգմանություններից լավագույնն են[1]:

Նա կրթել է գիտնականների մի քանի սերունդ: Անզուգական էր որպես գիտական ղեկավար. ամեն ինչ անում էր հայագիտական աշխարհի սահմաններն այլ գիտնականների ուսումնասիրություններով ընդլայնելու համար:

Ջրբաշյանի տաղանդը նույն ուժով դրսևորվեց գրականագիտության տարբեր ասպարեզներում՝ գրականության պատմության, թումանյանագիտություն, գրականության տեսության, պոետիկայի հարցեր, աղբյուրագիտություն, տեքստաբանություն, քննադատություն, միջտեքստային ուսումնասիրություններ, գրական կապեր և այլն: Վերջինիս լավագույն դրսևորումն է «Պուշկինը և հայ բանաստեղծները» մենագրությունը (1999):

Ակադեմիկոսի գրականագիտական վաստակի մի խոշոր բաժին են կազմում գրականության ներածության ու տեսության՝ գեղարվեստական մեթոդի, ժանրերի պատմության և տիպաբանության, տաղաչափության խնդիրները: Պատահական չէ, որ ուսանողական նստարանին էր, երբ տպագրվեց նրա «Բալլադի տեսությունը և սովետահայ բալլադը» (1949) գիտական երախայրիքը:

---

[1] Н. Г о н ч а р. Два шедевра русской лирики в переводе Эд. Джрбашяна. – «Вестник Ереванского университета. Арменоведние», 2013, № 1, с. 73–81.

Ավելի ուշ գրական բոլոր ժանրերի մասին հետազոտություն ստեղծվեց՝ «Գրական ժանրեր» (1973)։ Իր «Հայկական ոտանավորի բնույթը» (1972) մեծարժեք ուսումնասիրության մեջ Ջրբաշյանը հաստատեց հայկական տաղաչափության վանկային բնույթը։ «Պոետիկայի հարցեր» (1976) աշխատության մեջ առաջին անգամ հայ գրականագիտության պատմության մեջ արծարծելով գրական երկի պոետիկայի տարաբնույթ հարցեր՝ նոր էջ բացեց երկի գեղարվեստականության վերլուծության ոլորտում։ Ամենայն ճշգրտությամբ հիմնավորեց գեղագիտական մտքի պատմության՝ որպես ուսումնասիրության առարկայի ընկալումը[2]։

Ջրբաշյանի դերն անգնահատելի է առաջին հերթին գրականագիտության գիտականացման տեսանկյունից։ Հայ գրականագիտության մեջ տեսական-մասնագիտական ուղղության ստեղծման գործում նա միանգամայն առանձնահատուկ ավանդ ունի։ Գրական մեթոդների քննությանը նվիրվեցին անկյունաքարային հոդվածներ ու մենագրություն [«Հայկական ռեալիզմի տեսության և պատմության հարցեր» (1987)]։ Ջրբաշյանի հեղինակած գրականության ներածության, տեսության, բանարվեստի մասին դասագրքերը (1961, 1962, 1984, 1993, 1996, 2011 թթ. ...) ուսանողների սերունդներ են կրթել և այսօր էլ չեն կորցրել իրենց գործառական նշանակությունը։ Նա է հեղինակել մեզանում «Գրականագիտական բառարանը» (1972, 1980)։ Թեև գրականության տեսական խնդիրների արծարծումներ եղել էին մինչև Ջրբաշյանը, բայց հայ գրականագիտական մտքի պատմության մեջ որպես գրականության տեսության դպրոցի հիմնադիր արձանագրվեց հենց նրա անունը։

Մեր մշակույթի պատմության մեջ վիթխարի է գրականության պատմաբան Էդ. Ջրբաշյանի ավանդը։ Նրա ուշադրության կենտրոնում եղել է հայ բազմադարյան ողջ գրականությունը՝ բոլոր շրջափուլերով՝ հին, նոր և ժամանակակից, արևելահայ ու արևմտահայ [«Միսաք Մեծարենց (կյանքը և ստեղծագործությունը)» (1958, 1977), «Թումանյանի պոեմները» (1964, 1986), «Ռուբեն Սևակ. ստեղծագործության համառոտ ակնարկ» (1965), «Պետրոս Դուրյան. կյանքը և գործը» (1972), «Չորս գագաթ. Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց (գրականագիտական ուսումնասիրություն)» (1982) և այլն]։ Դասականներից առանձնակի ուսումնասիրությունների նյութ են դարձել նաև Մ. Նալբանդյանը, Գ. Սունդուկյանը, Դ. Վարուժանը, Ե. Չարենցը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը և այլք։ Ջրբաշյանը դասական գրականության խոր ուսումնասիրող է։ Ակադեմիկոսն այն գրականագետներից է, որոնց հետազոտությունները վճռական նշանակություն ունեցան գրական կյանքի և հայագիտության տարբեր ոլորտների հետագա զարգացման համար՝ միանգամայն նոր որակ ապահովելով այդ ասպարեզներում։ Նրա երկերում գրականության պատմության խնդիրները, հայ դասականները լուսաբանվում էին համաշխարհային գրականության գեղարվեստական փորձի զուգահեռների վրա։ Գրականագետը նորովի էր մեկնաբանում յուրաքանչյուր գրողի երկերի ազգային ակունքների, ստեղծագործական պատմության հարցերը, բովանդակության և գեղարվեստական կերտվածքի յուրահատկությունները։ Իր ժամանակի գրա-

[2] Э. Джрбашян. Предмет исследования – история эстетической мысли. – «Вопросы литературы» (Москва), 1978, № 9, с. 270–277.

կանագետներից ամենից շատ Ջրբաշյանն անդրադարձավ գրական ավանդույթների, ազդեցությունների խնդրին:

Ջրբաշյանը հանդես էր գալիս նաև որպես քննադատ՝ ձեռքը պահելով ժամանակակից գրականության զարկերակին: Ուշագրավ են նրա հոդվածները Մարո Մարգարյանի, Սիլվա Կապուտիկյանի, Հրաչյա Հովհաննիսյանի և այլոց մասին: Ակադեմիկոսի տեսադաշտում եղել է նաև սփյուռքահայ գրականությունը, բանահյուսության խնդիրները և այլն:

Գրականագետի ամենամեծ ներդրումը Թումանյանագիտության ասպարեզում էր: Ինչպես XX դարի երկրորդ կեսի, այնպես էլ արդի Թումանյանագիտությունն անհնար է պատկերացնել առանց ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի: Ուսանողական նստարանից սկսվեցին նրա առաջին քայլերը Թումանյանագիտության ասպարեզում, որոնցից էր բանաստեղծի գեղագիտական հայացքների մասին զեկուցումը, իսկ 1949 թ. Ա. Ս. Պուշկինի ծննդյան 150-ամյակի առիթով գրեց «Թումանյանը և Պուշկինը» ուսումնասիրությունը (1956): Ամենայն հայոց բանաստեղծի՝ բոլոր ժանրերի ստեղծագործությունները՝ պոեմները, բալլադները, արձակը, քնարերգությունը, դարձան գրականագետի ուսումնասիրության նյութ: Ջրբաշյանը ուսանողական նստարանից մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց Թումանյանագիտությանը: Նա վստահ էր, որ գրականության ու մշակույթի ուժը գիտնականի և մարդկային գիտակցության վրա կարևոր նշանակություն ունի: Գիտական թեմային հավատարմությունը, մանավանդ, եթե այն կապ ունի արվեստի ու գրականության հետ, սկզբունքային էր գիտնականի համար: Ջրբաշյանի շնորհիվ XX դարի 60-ական թվականներից Թումանյանագիտությունը լուրջ զարգացում ապրեց և թևակոխեց մենագրական հետազոտությունների շրջան: 1964 թ. ընթերցողի սեղանին դրվեց «Թումանյանի պոեմները» հիմնարար աշխատությունը, այնուհետև՝ «Թումանյանի բալլադները» (1969), «Թումանյան. ստեղծագործության պրոբլեմներ» (1988), «Թումանյանը և հայ գրականության ավանդույթները» (1994), նաև բազմաթիվ արժեքավոր հոդվածներ շրջադարձային դեր ունեցան: Ամենուր բանաստեղծը ներկայացվում էր միջազգային գրականության լայն համապատկերի վրա: Մինչ Ջրբաշյանը մեզանում գրական ավանդույթները գիտական այդպիսի մակարդակով, այդպիսի խորությամբ ու փաստարկվածությամբ, այդքան հանգամանորեն չէին ուսումնասիրվել: Նա կոտրեց Թումանյանի երկերի վերլուծության՝ ավելի քան երեք տասնամյակ իշխող գռեհիկ-սոցիոլոգիական կարծրատիպը և դուրս բերեց բանաստեղծին գաղափարական կաղապարներից՝ առաջնային դարձնելով նրա երկերի գեղագիտական կողմը, պոետիկան: Անվանի գրականագետը բացահայտեց գրողի ժառանգության պատմական ու արդիական նշանակությունը և դա արեց ոչ թե դրվատանքի գեղեցիկ ու վերամբարձ խոսքերով, այլ՝ գրողի վարպետության յուրահատկությունները մեկնելով: Թումանյանի երկերի՝ մինչ Ջրբաշյանը իշխող պարզունակ վերլուծությունը վերաճեց լուրջ գիտական խոսքի, և նրա շնորհիվ Թումանյանագիտությունը զարգացման նոր փուլ թևակոխեց, որը կարելի է անվանել ջրբաշյանական: Հմուտ բանասերն ու հետազոտողը բազմաթիվ արժեքավոր հրապարակումների հեղինակ է. առաջին անգամ արխիվներից ու ժամանակի մամուլից հայտնաբերեց գրողի ստորագրված և անստորագիր մի շարք հոդվածներ: 1991-ից մինչև 1996-ի մայիսը ծնվում է Թումանյանի մասին Ջրբաշյանի գրած վերջին մենագրությունը՝ «Թումանյանի գրական ժառանգությունը», որը լույս տեսավ նրա մահից հետո՝ 2000 թ.:

Ակադեմիկոսն ուներ բարդ ու դժվարին նյութի գիտական հետազոտության հունը բացելու ունակություն: Ցանկացած ասպարեզում նա նոր ուղիներ է բացում հետագա ուսումնասիրողի համար: Ջրբաշյանի տեսակետները, տեսական արծարծումները և կռահումներն այնքան ինքնատիպ ու բովանդակալից են, որ կարող են լինել շատ հարցերի գրականագիտական մեկնության ստույգ և յուրօրինակ բանալիներ՝ բացելով նորանոր ուսումնասիրությունների հնարավորություններ:

Մեծանուն գրականագետի վաստակը բարձր գնահատանքի է արժանացել թե՛ ժամանակակիցների, թե՛ հետագա սերունդների կողմից: Գիտական աշխարհը բազմիցս անդրադարձել է նրա ժառանգությանը. գրվել է ավելի քան 100 ուսումնասիրություն: Այդ մասին է վկայում նրա 1995 թ. կենսամատենագիտության «Գրականություն Էդ. Մ. Ջրբաշյանի կյանքի և ստեղծագործության մասին» բաժինը[3]: Գիտնականի մասին գրված մոտ չորս տասնյակ ուսումնասիրություններում առաջին հերթին ընդգծվում է ակադեմիկոսի գիտական հետաքրքրությունների բազմակողմանի ուղղվածությունը, տեսական և գրապատմական կողմերի միասնությունը: Վաստակաշատ գիտնականն իր արգասաբեր գործունեության և հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանների և բազմաթիվ հուշամեդալների:

Եվ, իրոք, Ջրբաշյանը XX դարի երկրորդ կեսի հայ գրականագիտության ամենանշանավոր դեմքերից էր, պատկառազդու մեծություն, դասական՝ բառի լայն իմաստով: Իր կոչմանը միշտ հավատարիմ անձնավորություն, որի գիտական ժառանգությունը մշտական տեղ է ունենալու հայ մշակույթի պատմության մեջ՝ որպես հայ գրականագիտության պատմության լավագույն էջերից մեկը: Նա այսօր էլ ուսանելի է գիտնականի իր նկարագրով, շարադրանքի հստակ, մաթեմատիկական ճշգրիտ կառույցով ու ոճով, բանավիճելու մշակույթով, նորարարության, գիտական յուրաքանչյուր ժանրում ճիշտ մեթոդ ընտրելու համար ճանապարհ հարթելու, ուղիներ մատնանշելու անդադրում ջանքերով:

Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը եղել և մնում է հայ գիտության ու մշակույթի ինքնատիպ դեմքերից մեկը: Նրա տեսական ընկալումներն ուրույն են և ուշագրավ հայ գրականագիտական մտքի ողջ պատմության համապատկերում: Նրա գիտական ողջ ժառանգությունը մեր գրականագիտության նշանակալից նվաճումն է:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 15 մենագրության և ավելի քան 200 գիտական հոդվածի: sushovh@mail.ru, susannahovhannisyan@litinst.sci.am

[3] Տե՛ս Э. М. Джрбашян. Материалы к биобиблиографии ученых Армении. Вступительная статья А. К. Егиазаряна, В. А. Киракосяна. Составитель Р. А. Карапетян. Ереван, 1995, с. 34–43.

ՀՏԴ 929: 891.981.09 Չուգասզյան + 008(479.25)

ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

XX դարի երկրորդ կեսի հայագիտության մեջ իր կարևոր տեղն ունի անվանի հայագետ-արևելագետ Բաբկեն Լևոնի Չուգասզյանը: Նրա գիտական, ժառանգությունը բաղկացած է հայ միջնադարյան և ավելի նոր ժամանակների գրականությանը, արևելագիտությանը, մանավանդ՝ իրանագիտությանը նվիրված հոդվածներից, գրքերից, բնագրերի հրատարակություններից, ձեռագրերի ցուցակներից: Բ. Չուգասզյանի ուսումնասիրությունները լույս են տեսել ինչպես առանձին գրքերով, այնպես էլ՝ հայաստանյան և արտասահմանյան գիտական ժողովածուներում ու պարբերականներում:

Բ. Չուգասզյանը ծնվել է Թավրիզում 1923 թ. մարտի 18-ին: Տարրական կրթությունը ստացել է Թավրիզի «Հայկազյան-Թամարյան» և «Արամյան», իսկ միջնակարգը՝ ամերիկյան «Իբն Սինա», պարսկական «Սաադի» ու «Ֆերդովսի» դպրոցներում:

Հայագետն աշխատանքային գործունեությունը սկսել է 1942 թ. և մինչև 1945-ը, որպես գրագիր-թարգմանիչ, նախ աշխատել է Թավրիզի անգլիական փոխադրական ընկերությունում, ապա՝ Թեհրանում՝ Պարսից ծոցի ամերիկյան հրամանատարության երկաթուղային ծառայության մեջ: 1943 թ. Բ. Չուգասզյանը մի խումբ ընկերներով Թավրիզում հիմնադրել ու հրատարակել է «Հակաֆաշիստական թերթիկ» (1944 թվականից՝ «Արևելք» եռօրյա) լրագիրը, որի խմբագրի տեղակալն է եղել մինչև 1946-ը: Այդ թվականին նա ծնողների հետ ներգաղթել է Հայաստան: Նույն տարին Բ. Չուգասզյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը, որն ավարտել է 1951 թ.: Համալսարանական առաջին օրվանից նա ծանոթանում ու մտերմանում է իր ապագա կնոջ՝ Վեներա Մանուկյանի[1] հետ, ով սովորում էր բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնում: Ուսմանը զուգահեռ՝ Բ. Չուգասզյանը

* Ներկայացվել է 10. VII. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:

[1] Վեներա Մանուկյանը հուսալի հենարան է դառնում գիտնական ամուսնուն՝ ամենայն նվիրվածությամբ սատարելով նրան: Համալսարանն ավարտելուց հետո՝ Վ. Մանուկյանը ռուսաց լեզու է դասավանդել Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում և շուրջ երեք տասնամյակ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում, այդ ծանրաբեռնվածությանը զուգահեռ, լինելով հոգատար կին իր ամուսնու և հոգատար մայր զավակների՝ Լևոնի ու Գարեգինի համար:

1946–1947 թթ., որպես մատենագետ, աշխատել է Հանրային գրադարանի գրապալատում, իսկ 1950–1954 թթ.՝ ԵՊՀ-ի հրատարակչությունում՝ որպես սրբագրիչ, ապա՝ խմբագիր:

1954–1957 թթ. Բ. Զուգասզյանը եղել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ, որն ավարտելուց հետո՝ 1958 թ., նույն ինստիտուտում աշխատանքի է անցել՝ սկզբում որպես գիտական քարտուղար, այնուհետև՝ գիտական գծով փոխտնօրեն: 1962 թ. նա պաշտպանել է «Հայ-իրանական գրական առնչությունները 5–18-րդ դարերում» խորագրով ատենախոսությունը, որի համար նրան շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանը: 1963 թ. այդ աշխատությունը Երևանում լույս է տեսել առանձին գրքով:

1965-ին Բ. Զուգասզյանը աշխատանքի է հրավիրվել Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարան, որտեղ մինչև 1994 թ. զբաղեցրել է փոխտնօրենի պաշտոնը: Այստեղ նա ամենայն նվիրվածությամբ կարողացել է իր նշանակալից ավանդը ներդնել Մատենադարանի՝ որպես գիտական կենտրոնի միջազգային մեծ հեղինակությունը ստեղծելու գործում: Կազմակերպչական պատասխանատու, վարչական աշխատանքներին զուգահեռ՝ նա առաջ է տարել նաև իր գիտահետազոտական գործունեությունը: 1994 թ. հետո նույն հիմնարկում մինչև կյանքի վերջը շարունակել է աշխատել որպես ավագ գիտաշխատող: Իր աշխատանքային բեղմնավոր գործունեության համար նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչումը (1984 թ.): Բ. Զուգասզյանը մահացել է 1997 թ. նոյեմբերի 5-ին Երևանում:

Տարբեր ժամանակներում հայագետն եղել է Հայաստանի մի շարք հաստատությունների (Գիտությունների ազգային ակադեմիայի գրականության, արևելագիտության ինստիտուտների, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի, Պատմության թանգարանների, Հայաստանի ազգային գրադարանի) գիտական խորհուրդների անդամ:

Ստալինյան բռնաճնշումների տարիներին ու նաև դրանից հետո նրա առաջխաղացումը զգալի չափով խոչընդոտվել է հայրենադարձների նկատմամբ խորհրդային իշխանությունների ստեղծած սահմանափակումներով. ուստի Բ. Զուգասզյանի կյանքը չի ուղեկցվել սրընթաց վերելքով: Նա, բարեբախտաբար, կարողացել է խուսափել սիբիրյան աքսորներից, որոնց ենթարկվեցին բազմաթիվ հայրենադարձներ, բայց ճաշակել է հեռավոր աքսորավայրերում հայտնված ընկերներին ու հարևաններին կորցնելու դառնությունը: Ճակատագիրը, այդուհանդերձ, բարեգութ է գտնվել նրա նկատմամբ, որովհետև իր կյանքի ճանապարհին հանդիպել է նաև մարդկանց, ովքեր գնահատել են նրա ունակությունները ու ձեռք մեկնել: Այդ անձանց շարքում հատկապես հարկ է հիշատակել ականավոր հայագետ, լեզվաբան Հրաչյա Աճառյանին:

ԵՊՀ-ի հրատարակչությունում աշխատելու բերումով և այնտեղ Հր. Աճառյանի «Քննություն Վանի բարբառի» գրքի սրբագրության առիթով, 1952 թ. գարնանը Բ. Զուգասզյանը ծանոթանում է լեզվաբանի հետ, որը բախտորոշ է դառնում նրա համար, քանի որ ինքը՝ մեծ գիտնականը, տեսնելով երիտասարդի՝ զանազան լեզուների իմացությունը, լեզվաբանական իրողությունների նկատմամբ հետաքրքրությունն ու ուշադրությունը, նաև՝ ջանասիրությունը, նրան առաջարկում է գալ իր տուն և առանց վարձատրության աշակերտել

իրեն: Այդպիսով, ապագա ակադեմիկոս Էդ. Աղայանից ու Հր. Աճառյանի՝ ոչ պաշտոնական ասպիրանտ, ապագայում անվանի լեզվաբան դարձած Գ. Գարեգինյանից հետո, Բ. Զուգասզյանը դառնում է մեծ գիտնականի տան ուսանողը, նրա՝ երկրորդ, ոչ պաշտոնական ասպիրանտը և աշխատությունների պատրաստման գործում օգնողը, երրորդ լեզվաբան աշակերտը: Նա նաև գրի է առնում Հր. Աճառյանի թելադրած՝ կյանքի հուշերի մի հատվածը, որը վերաբերում էր Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի շրջանին: Շուրջ մեկ տարի՝ մինչև մեծ գիտնականի մահը՝ 1953 թ. ապրիլի 16-ը, տևում է ուսուցչի ու աշակերտի համագործակցությունը:

Հր. Աճառյանի վախճանից հետո՝ քաղաքական «ձնհալի» շրջանում, Էդ. Աղայանի առաջարկով Բ. Զուգասզյանին հանձնարարվում է վերանայել ու հրատարակության պատրաստել մեծ գիտնականի՝ ավելի վաղ գրաքննության կողմից տպագրության չթույլատրված «Լիակատար քերականության» ընդարձակ «Ներածությունը»: Բ. Զուգասզյանն աշխատության մեքենագիր օրինակը համեմատում է Աճառյանի ձեռագիր բնագրի հետ և վերականգնում տարիներ առաջ որոշ գաղտնի գրախոսների և հրատարակչական վայ խմբագիրների կատարած կրճատումներն ու ավելորդ միջամտությունները: Այդ հատորը լույս է տեսնում 1955 թ.:

Հր. Աճառյանի նկատմամբ ողջ կյանքում պահած երախտագիտության դրսևորումն են նրա մասին իր սանի գրած հուշերը, որոնք ընդգրկված են Բ. Զուգասզյանի՝ 2022 թ. հրատարակված երկերի ժողովածուի առաջին հատորի մեջ, ով ուսուցչից ժառանգում է ոչ միայն նրա լեզվաբանական գիտելիքներն ու կողմնորոշումները, այլև, առհասարակ, պատմաբանասիրական հետաքրքրությունները, ինչպես նաև՝ գիտական առաջին քայլերն անող խոստումնալից երիտասարդներին օգնելու և կողմնորոշելու մշտական պատրաստակամությունը, որոնք ուղենիշներ են դառնում նրա գիտական ողջ գործունեության ընթացքում:

Բ. Զուգասզյանի գրական ժառանգությանն ընդհանուր ակնարկ նետելիս հարկ է անդրադառնալ նրա՝ մի քանի առավել աչքի ընկնող գիտական աշխատություններին, որոնք բացառիկ նշանակություն ունեն ոչ միայն հայագիտության, այլև, առհասարակ, միջնադարագիտության համար:

Հայագետն առաջին հոդվածներից մեկում քննության առարկա դարձրեց XI դ. առաջին կեսին ապրած հայ ականավոր քաղաքական գործիչ և նշանավոր մտավորական Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում» պահպանված իրանական վիպական զրույցների արձագանքները, որոնք չէին նկատվել հայագետների կողմից: Ֆերդովսիի «Շահնամեի» բնագրի ամբողջացման առումով այդ հրապարակումը բացառիկ երևույթ էր և լուրջ գնահատանքի արժանացավ արևելագիտական միջազգային շրջանակներում: Հիշյալ հայերեն հոդվածը թարգմանվեց ու հրատարակվեց թե՛ ռուսերեն և թե՛ ֆրանսերեն[2]: Բ. Զու-

[2] Տե՛ս Բ. Զուգասզյան. Իրանական վիպական զրույցների արձագանքները Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում». – Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1958, № 12, էջ 63–75, նույնի՝ Отзвуки иранских эпических сказаний в «Письмах» Григора Магистроса. – «Проблемы востоковедения» (Москва),1960, № 3, с. 150–155; նույնի՝ Echos des legendes epiques iraniennes dans les “Lettres“ de Grigor Magistros. – “Revue des Etudes Armeniennes” (Paris), N. S., 1964, Tome 1, pp. 321–329.

գասգյանը կարողացավ նկատել՝ իբրև իր ժամանակի բազմակողմանի զարգացած անձնավորություն, որ Գրիգոր Մագիստրոսը տեղյակ է եղել այնպիսի մանրամասնությունների, որոնք չեն հանդիպում «Շահնամեում» և հայտնի իրանական էպիկական այլ պոեմներում:

Այս հոդվածում Բ. Զուգասգյանի ուսումնասիրության առարկան դարձավ Ֆերդովսիի «Շահնամեի» «Ռոստամի յոթ արկածները» բաժնի «երրորդ արկածը», ուր պատմվում է Ռոստամի և վիշապի մենամարտի մասին: Մագիստրոսն իր պատմածում անդրադառնում է այդ դրվագին՝ նշելով, որ տվյալ իրադարձությունը տեղի է ունեցել Դաբավանդ (Դամավանդ) լեռան մոտ, ինչը չի հիշատակված Ֆերդովսիի երկում: Բացի այդ, հայ հեղինակի պատմածից պարզվում է, որ վիշապը ինքը Դյուզեղն է, այսինքն՝ Դժոխքը: Այսպիսով, Մագիստրոսի շնորհիվ լրացվում է «Շահնամեի» հիշյալ հատվածը: Ըստ Բ. Զուգասգյանի, խնդրո առարկա առասպելը չկա Խորենացու երկում, և հայ գրականության մեջ պահպանել է միայն Գրիգոր Մագիստրոսը: Վերջինս, գիտնականի կարծիքով, այն քաղել է իր ձեռքի տակ եղած աղբյուրներից կամ լսել ու գրի առել ժողովրդից՝ դրա հետ մեկտեղ ծանոթ լինելով Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված իրանական առասպելներին:

Մագիստրոսն հիշատակում է նաև Ռոստամի ու վիշապի մենամարտի առասպելին հաջորդող մյուս հատվածը, ուր պատմվում է Ռոստամի և Սպանդիարի (Ասֆանդիարի) պայքարի պահերից մեկը: Հայ հեղինակն այդտեղ արտահայտում է իր համակրանքը Ռոստամի նկատմամբ՝ նրան համեմատելով Հոմերոսի Կռոնոսի հետ, որի գլխի մազերի շարժումից անգամ ցնցվում էր Օլիմպոսը: Ըստ Բ. Զուգասգյանի, հերոս Սպանդիարի հիշատակությունը Մագիստրոսից և Ֆերդովսուց շատ առաջ հանդիպում է նաև VI–VII դդ. հայ նշանավոր պատմիչ Սեբեոսի Պատմության մեջ:

Մագիստրոսի ԼԶ. թղթում Բ. Զուգասգյանը նկատում է Բյուրասպի Աժդահակի, Սպանդիարի և Հայոց արքա Արտավազդի՝ լեռների վիհերում շղթայված լինելու մասին գրառումը: Այդտեղ հայ հեղինակը, վերցնելով Խորենացու՝ պարսկական առասպելներին վերաբերող հատվածից Աժդահակի անվան համար գործածված Կենտավրոս Պյուրիդա (որոշ ձեռագրերում՝ Պույուդյայ, Պուիդա) անունը (այս փաստը հիշատակված չէ ոչ մի այլ աղբյուրում ու նաև «Շահնամեում»), հայտնում է, որ Աժդահակը Դաբավանդ լեռան մեջ էր, Սպանդիարի՝ Սաբալան, իսկ Արտավազդը՝ Մասիսում: Բ. Զուգասգյանը գտնում է, որ Սպանդիարի՝ Սաբալան լեռան մեջ փակված լինելու մասին փաստը նույնպես չկա ոչ մի այլ աղբյուրում: Այս կապակցությամբ գիտնականը մեջբերում է Սավալան (Սաբալան մարգարեի հետ առնչվող) նույնանուն լեռան մասին իրանական զրույցը և նշում, որ Սաբալան լեռը գտնվում է Հայաստանի սահմանների մոտ՝ իրանական Ադրբեջանի արևելյան մասում:

Բ. Զուգասգյանի կարծիքով, մարգարեին վերաբերող զրույցը միաձուլվել է իրանական էպոսի առանձին մի փաստի հետ, և Մագիստրոսն օգտվել է դրանից: Հայաստանի մերձակա երկրներում տարածված են եղել իրանական էպոսի առանձին զրույցների տարբեր պատումները, նաև՝ Սպանդիարի պաշտամունքը, որի մասին է վկայում Մագիստրոսի մոտ գիտնականի հայտնաբերած փաստը՝ այն է, որ պարթևները Սաբալանի մայրի փայտից պատրաստում էին Սպանդիարի արձանը: Խնդրո առարկա հոդվածը խիստ շահեկան է «Շահնամեի» իրանական բնագրի ամբողջացման առումով և, հետևաբար,

բացառիկ կարևորություն ունի այն ուսումնասիրող այլ ազգերի գիտնականների համար:

Բ. Զուգասզյանի տեսադաշտում հայտնված հայ գրականության կարևոր դեմքերից է եղել նաև Սայաթ-Նովան: Գիտնականի համար ասես ի վերուստ կանխորոշված էր Սայաթ-Նովայի գեղարվեստական ժառանգության ու կենսագրության անհայտ դրվագների հայտնաբերումը, քանի որ 1963 թ. նրա և հայագետ Պ. Մուրադյանի համատեղ ջանքերով լույս էր տեսել մեծ բանաստեղծի ու երգահանի «Խաղերի» (հայտնի «Դավթարի») նմանահանության (ֆաքսիմիլե) եղանակով պատրաստված հրատարակությունը: Ճակատագրի բերումով Բ. Զուգասզյանին էր վիճակված Սայաթ-Նովայի ձեռքով 1761 թ. Պարսկաստանի Գիլանի նահանգի Էնզելի (Անզալի) նավահանգստում ընդօրինակած մատյանի հայտնաբերումը և ուսումնասիրությունը: Այդ մասին նրա հոդվածը լույս տեսավ 1981 թ.: Մինչ այդ և XIX դ. սկսած՝ հայագիտության մեջ Սայաթ-Նովայի գրչին պատկանող միայն երկու մատյան էր հայտնի: Բ. Զուգասզյանն իր այս հոդվածի մեջ, ըստ ամենայնի քննության առնելով Էնզելիի ձեռագիրը, կարողանում է երևան հանել մեծ բանաստեղծի ու երգահանի կյանքի՝ մինչ այդ անծանոթ փաստերը:

Միջանկյալ հարկ է նշել, որ տարիներ անց Բ. Զուգասզյանը նմանահանության (facsimile) եղանակով իրականացրեց նաև այլ հատորների հրատարակությունը: Խոսքը հայերեն առաջին տպագիր գրքերից «Ուրբաթագրքի», «Տաղարանի» (1975) և «Պարզատումարի» (1996), ինչպես նաև Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության» երկի՝ XIII դ. ձեռագրի (1980) մասին է:

Արևելագիտական ու հայագիտական միջազգային շրջանակների համար իսկական հայտնություն եղավ Բ. Զուգասզյանի «Բժշկարան ձիո եւ առհասարակ գրաստոյ» գիրքը: Վերջինս տասնամյակներ շարունակ համարվում էր կորած: Բ. Զուգասզյանը հայտնաբերեց այն Լոս Անջելեսում ապրող նախկին իրանահայեր Զարեհ և Ադրինե Սարաջյանների ընտանիքում: Այդ հատորով նրան բախտ վիճակվեց փայլուն իրականացնել իր ուսուցչի՝ Հր. Աճառյանի՝ դեռևս Թավրիզում աշխատելու ժամանակ սկսած կարևորագույն ձեռագրերից մեկի ուսումնասիրությունը: Այս երկին նվիրված Բ. Զուգասզյանի գիրքը նրա գիտական ժառանգության մեջ բացառիկ տեղ է գրավում, քանի որ նվիրված է միջին հայերենի եզակի հուշարձաններից մեկին: Անասնաբուժական այդ մատյանը մշակութային կարևոր երևույթ է. ի տարբերություն մեզ հասած հազարավոր ձեռագրերի, այն գրված է ոչ թե գրաբարով, այլ՝ ժամանակի խոսակցական լեզվով: Իր բժշկարանային բովանդակությամբ, մանավանդ՝ բառագանձով՝ հայերեն անծանոթ նոր բարդություններով, օտար, հիմնականում՝ արաբերեն ու պարսկերեն բառերի և եզրերի փոխառություններով այս երկը յուրահատուկ գյուտ է գիտնականների համար:

1296–1298 թթ. Կիլիկիայի Սմբատ թագավորի հրամանով հայազգի Թորոս քահանայի օժանդակությամբ ասորի բժիշկ Ֆարաջի կազմած «Բժշկարանի» բնագիրը Բ. Զուգասզյանի կողմից պատրաստվել է ամենայն խնամքով: Ձեռագիրը հատուկ կարևորություն ունի նաև պատմական առումով, քանի որ գաղափար է տալիս Սմբատ թագավորի ուժեղ հեծելազոր ստեղծելու մտադրության մասին: Աշխատությունը օժտված է հին Հայաստանում, անտիկ աշխարհում, միջնադարում ձիագիտությանը վերաբերող համապատասխան տեղեկություններ պարունակող առաջաբանով, որտեղ համեմատություններ են

կատարված արաբերեն ու պարսկերեն նմանօրինակ երկերի հետ, և քննված է խնդրո առարկա երկի լեզուն:

Բ. Զուգասզյանի այս գրքի հրատարակումից հետո այն թարգմանվեց գերմաներեն և հրատարակվեց առանձին գրքով[3]: Այն իրականացրած ավստրիացի «գիտնական» Ժ. Դում-Թրագութը, դժբախտաբար, հրատարակության ու զեկուցումների մեջ անարդարացիորեն միշտ խուսափել է նշել և կարևորել Բ. Զուգասզյանի ուսումնասիրությունը՝ անտեսելով այն փաստը, որ առանց հայ գիտնականի աշխատության, մանավանդ՝ ձեռագրի տեքստն ուղեկցող օտար բառերի ստուգաբանությունների, իրեն հազիվ թե հաջողվեր հասկանալ «Բժշկարանի» բնագիրը, առավել ևս՝ թարգմանել այն: Ավստրիացի «գիտնականը» նշում է, որ Բ. Զուգասզյանի գիրքն ընդամենը օժանդակ միջոց (Hilfsmittel) է եղել իր համար (տե՛ս էջ 20): Նա օգտագործում է հայագետ-արևելագետի բերած փաստերը, հունական, արաբական, պարսկական աղբյուրները և գրականության ցանկը ու չի նշում հայ գիտնականի անունը: Բ. Զուգասզյանի և Ժ. Դում-Թրագութի գրքերի համեմատությունից հայտնի են դառնում ավստրիացի հեղինակի կողմից արված գրագողության բազմաթիվ փաստեր[4]: «Բժշկարանի»՝ օտար լեզուներից փոխառված բառերի ստուգաբանությունները, որոնք կատարել է հայագետը և կազմել գրքի վերջում կցված բառարանը, ասես, գոյություն չունեն նորաթուխ «հայագետ-լեզվաբանի» համար: Այդ բառարանը յուրացնելով՝ ավստրիացի «գիտնականը» ճոխացրել է այն հայագետներին ծանոթ բառերով ու հորինել նոր բառարան իր հատորի համար (տե՛ս 215–282 էջերը), անշուշտ, հարկ չհամարելով նշել՝ հիմնական դժվար աշխատանքն արդեն արվել է: Բերված փաստերը վկայում են, որ այստեղ գործ ունենք արևմտյան գիտնականների մի մասի մոտ արմատացած տիպիկ գաղութատիրական վերաբերմունքի հետ, երբ անբարեխիղճ ձևով, անամոթաբար յուրացվում են ոչ եվրոպական լեզուներով հրատարակված գիտական աշխատությունների արդյունքները:

Բ. Զուգասզյանի յուրահատուկ նշանակություն ունեցող երկերից է «Գեորգ Դպիր Պալատեցու կյանքի և գործունեության տարեգրություն, 1737–1811» գիրքը: Իր բնույթով այն հիշեցնում է Ա. Ինճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի ու գրական գործունեության տարեգրությունը» (1954), Խ. Սամվելյանի «Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրություն» (1969, թ. 10-ից մինչև 1975, թ. 9), Ա. Մ. Շարուրյանի «Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն» (1984), Սուրեն Շ. Վանեցու «Վազգեն առաջին կաթողիկոս ամենայն հայոց: Համառոտ տարեգրություն (1908–1955)» (1986) աշխատությունները և գալիս է լրացնելու վերջիններիս շարքը: Գևորգ Դպիր Պալատեցուն նվիրված գիրքը լուսաբանում է մեծանուն գիտնականի՝ բանասերի, հայ արևելագիտության հիմնադրի կյանքի անծանոթ էջերը, որն իր անխոնջ գործունեությամբ նպաստել է Մխիթարյան միաբանության

---

[3] Տե՛ս J. Dum-Tragut. Kilikische Heilkunst für Pferde, Das Vermächtnis der Armenier, Kommentar. Űberzetzung-Glossar, Georg Olms Verlag, Hildesheim-Zürich. New York, 2005.

[4] Տե՛ս Բ. Զուգասզեան. Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար), Երևան, 1980, էջ 6, 7, 8, 9, 10, 11, 12, 15, 16, 19, 20, 21–22, 23, 26, 77, հմմտ. J. Dum-Tragut. Նշվ. աշխ., էջ 22, 31, 43, 21, 44, 22, 23, 25, 26, 19–20, 26, 77–81:

անդամների ուսումնասիրություններին, մանավանդ՝ բազմաթիվ ձեռագրեր ուղարկել ու առաջ տարել իր աշխատանքները՝ վայելելով նրանց նյութական օժանդակությունը: Վերջիններիս հետ Դպիրը երեսուն տարի սերտ հարաբերություններ է ունեցել՝ իրեն չվտանգելու համար ամենայն միջոց ձեռք առնելով, քանի որ XVIII դ. երկրորդ կեսին Պոլսում կաթոլիկների նկատմամբ գոյություն ուներ խիստ անհանդուրժողական, անգամ թշնամական վերաբերմունք: Փաստորեն, Դպիրը հայ լուսավորչականների և Մխիթարյանների միջև այդ անջրպետի վերացնողն է՝ նպաստելով ժամանակի հայ հասարակության միավորմանը:

Այս գրքի ավարտը և հրատարակությունը Բ. Զուգասզյանն իրականացրեց, երբ ծանր վիրահատության պատճառով նրա հասարակական ակտիվությունը զգալիորեն կրճատվեց և ստիպված եղավ ավելի շատ աշխատել տանը: «Հայրենադարձ իրանահայ դեմքեր» գիրքը (1997) ծնվեց այդ պայմաններում: Հայագետն իրականացրեց այն հանդիպումներ ունենալով և հարցախույզ իրականացնելով բազմաթիվ իրանահայերի ու նրանց հարազատների հետ, ովքեր այցի էին գալիս իրեն:

Ինչպես Բ. Զուգասզյանի նախորդ հրատարակությունները, այս գիրքը նույնպես յուրահատուկ երևույթ է: Այն նվիրված է մեծ հայրենադարձության հիսնամյակին և իր բնույթով եզակի աշխատություն է, քանի որ ապացուցում է այդ իրադարձության պատմական կարևորությունն ու արտացոլում նրա հակասական կողմերը: Կենսագրական բառարանի բնույթ ունեցող գիրքը գաղափար է տալիս այն մարդկանց մասին, ովքեր, ծնված լինելով Իրանում, եկան Խորհրդային Հայաստան և արժեքավոր ներդրումն ունեցան հայրենիքի շենացման գործում, կրթական, մշակութային իրականության մեջ՝ հաղթահարելով հետպատերազմյան երկրի դժվարությունները, ոմանք անգամ հանիրավի աքսորվելով Սիբիր կամ գնդակահարվելով ստալինյան գնդաններում: «Հայրենադարձ իրանահայ դեմքերը», փաստորեն, յուրահատուկ հուշարձան է, որը հավերժակոչում է այդ մարդկանց հիշատակը:

ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ԵՊՀ-ի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, Միլանի (Իտալիա) Ամբրոզիան ակադեմիայի անդամ, Մոնպելյեի (Ֆրանսիա) Ակադեմիայի թղթակից-անդամ: Գիտական հետաքրքրությունները՝ նոր և միջնադարյան արվեստի պատմություն: Հեղինակ է 5 մենագրության և շուրջ 350 հոդվածի: levonch@yahoo.com

ՀՏԴ 929: 008(479.25) Զեքիյան + 1 +2

ԼԵՎՈՆ ԶԵՔԻՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Հանրաճանաչ հայագետ, պատմաբան, բանասեր, աստվածաբան և ազգային-մշակութային խոշոր գործիչ Լևոն Զեքիյանը բոլորեց իր կենսագրության 8-րդ տասնամյակը: Նրա անցած վաստակաշատ ուղին փաստորեն Սփյուռքի հայագիտության հանրագումարային արդյունքներից մեկն է հոբելյարի բազմաբովանդակ գործունեության համատեքստում:

Լ. Զեքիյանը ծնվել է Կոստանդնուպոլսում, 1943 թ. հոկտեմբերի 21-ին, մանկությունն ու պատանեկությունն անցկացրել է հայաբնակ Բերա թաղամասում, ուսումնառության հերթական փուլերն անցնելով Բերայի Մխիթարյանների վարժարանում և միջնակարգ կրթությունը՝ նույն թաղամասի իտալական վարժարանում: Այնուհետև տեղափոխվել է Իտալիա՝ սովորելու Ս. Ղազար դպրեվանքում: Դրան հետևած կրթությունը Հռոմի Գրիգորյան համալսարանում՝ մի հայտնի չափով ձևավորեցին նրա նախասիրությունները, երբ 1966 թ. նա այստեղ ստացավ իմաստասիրության և աստվածաբանության մագիստրոսի աստիճան: Իր ուսումնառության շրջանը նա ավարտել է՝ մասնագիտական իմացությունը խորացնելով նշված համալսարանում ու Արևելյան ուսումնասիրությունների քահանայապետական ինստիտուտի մասնագիտացված դասընթացներում: Երկու տարի անց՝ 1968 թ., Լ. Զեքիյանը վերստին իր ծննդավայրում էր, որտեղ մտավոր լայն հետաքրքրությունների ու հագեցած աշխատանքի շնորհիվ ճանաչում պետք է գտնեին նրա գիտահետազոտական կարողությունների ակնառու որակները: 1973 թ. Ստամբուլի պետական համալսարանում նրան տրվում է փիլիսոփայության դոկտորի աստիճան: Ատենախոսության թեման էր՝ «Օգոստինոսի իմացաբանական տեսության մեջ ներգոյացության սկզբունքը և ենթակայի ինքնաճանաչումը»՝ ըստ էության, նրա աշխատանքն աստվածաբանական և իմաստասիրական սկիզբների փոխառնչություններին նվիրված մի յուրահատուկ հետազոտություն էր, դեռևս ցայսօր չուսումնասիրված՝ հոգեմտավոր աղերսների համադրության մեջ: Երիտասարդ հետազոտողի գիտական որոնումները զուգորդվում էին մանկավարժական գործունեությամբ՝ տարիներ շարունակ ծննդավայրի Մխիթարյան և այլ վարժարաններում դասավանդում էր հայոց լեզու, տրամաբանություն ու բարոյագիտություն:

1964 թ. Լ. Զեքիյանին տեսնում ենք Վենետիկի Մխիթարյանների մոտ, որտեղ Ս. Ղազարի վանքում երիտասարդական ավյունով կատարում է «Հայ

* *Ներկայացվել է 13. X. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

ընտանիք» պարբերականի խմբագրի և այնուհետև հայկական ավագագույն «Բազմավեպ» հանդեսի խմբագրի օգնականի և ապա խմբագրի (1980–1985) պարտականությունները: Նրա խմբագրության տարիներին «Բազմավեպն» առավել արդիական է դառնում պատմաբանասիրական թեմատիկայի ու դրա իմաստավորման, ինչպես և լրատվական ուղղությունների ընդլայնման առանձնահատկություններով: Խմբագրական աշխատանքները նա զուգորդում է Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում դասական հունարեն և հայագիտական առարկաների դասավանդումով, որտեղ և 1982–1985 թթ. վարում է այդ վարժարանի տնօրենի՝ նույնպես տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ պահանջող պաշտոնը: Վկայակոչում են, ի դեպ, սկիզբ առնում նրա կազմակերպած և համազգային նշանակություն ունեցող ամառային խտացված դասընթացները, որ հետամտում էին հայոց լեզվի և մշակույթի իմացությունն ընդլայնելուն ու այն հայագիտական լայնահուն ընթացքին հաղորդակցելու գործին: Նույն ազնիվ նպատակն էին հետապնդում 1976 թ. սկսված նրա դասախոսությունները Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանում՝ հայոց լեզվի և գրականության թեմաներով: Այստեղից է սկսվում նաև նրա ինքնատիպ ու հայագիտության ընդերքում շարունակ վերարտադրվող մի երևույթի նպաստող առաքելությունը՝ օտարազգի հայագետներ պատրաստելու և դրան կազմակերպական հուն բանալու գործը: Գործնականում դրան պետք է նպաստեր նաև հիշյալ համալսարանի՝ փաստորեն հայագիտական ամբիոնը: Դրանից առաջ՝ 1985 թ., ավարտվում է Լ. Զեքիյանի կենսագրության վենետիկյան էջը. նա թողնում է միաբանությունը, սակայն, միշտ մնալով մեծն Մխիթարի գաղափարաբանության հաստատուն շառավիղը: Դեռևս 1976 թ. նա իտալական անվանի մասնագետ, պրոֆեսոր Ադրիանո Ալպագո Նովելլոյի հետ հիմնում է Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրումի կենտրոնը, որին աշխատակցում է մինչև 1991 թ., իսկ 1988 թ. սկսած՝ տասնամյակներ շարունակ, հայ եկեղեցու պատմություն և աստվածաբանություն է դասավանդում Վատիկանի Արևելագիտական ինստիտուտում:

Ընդլայնելով իր հայագիտական գործունեության սահմանները՝ Լ. Զեքիյանը 1982–1990-ին մասն է կազմում Հայագիտական ուսմանց միջազգային ընկերակցության վարչական մարմնի, իսկ 1988–1992-ին նրան տեսնում ենք այցելու դասախոսի զբաղվածության մեջ Կալիֆորնիայի Լա Վերն համալսարանի Ամերիկյան հայկական միջազգային ուսումնարանում: Դրանից առաջ՝ 1987 թ., իր երեք համախոհների և մյուս գործընկերների հետ (Գաբրիելա Ուլուհոջյան, Ֆրանկա Օլիվերի Մանուկյան, Հայկանույշ Մժիկյան) Լ. Զեքիյանը կազմակերպում է Պրո-Արաքս մշակութային ընկերակցությունը, որի ձեռք բերած հաջողությունները դրսևորվում են նաև 1991 թ. կազմված ամերիկյան ճյուղի ստեղծումով: Այստեղ ավելացնենք, որ այդ ընկերակցությունը հետամտում էր հայոց լեզվի պահպանության և տարածման նպատակը՝ մասնավորապես, հենվելով Վենետիկի համալսարանի ամառային խորացյալ դասընթացների փորձի վրա:

Հայ-իտալական մշակութային առնչություններին կազմակերպված ուղղություն տալու ասպարեզում երևույթ դարձան «Հայերը իտալական մշակույթի մեջ» խորագրով միօրյա հանդիպումները 1982–1987 թթ., որ նշանավորվեց այս շրջանակներում այնպիսի դեմքերի կյանքի ու գործունեության

վերհանմամբ, որպիսիք են Կլաուքո Վիացի Յուսիկ Աշրաֆյանը, Էդուարդ Ալյանը, Անջելո Էփրիկյանը, Վիկտորիա Աղանուրը, Հրանտ Նազարյանցը:

Հայագիտության մեր նվիրյալի գործունեության մեջ առանձին տեղ է զբաղեցնում հայ արվեստին նվիրված՝ նրա կազմակերպած ու մասնակցություն բերած միջոցառումների տևական շարքն իր միջազգային ընդգրկումներով, որի ոչ լրիվ ցանկից այստեղ հիշենք մի քանի տասնյակի չափ գիտաժողովները, բազմաթիվ դասախոսություններն Իտալիայում և Սփյուռքի այլ կենտրոններում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Ֆրանսիայում, Սիրիայում, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում և այլուր: 1992 թ. Լ. Զեքիյանն անդամակցում է գիտությունների, արվեստների և գրականության վենետիկյան հաստատությանը: 1993 թ. նա լրացնում է Վենետիկի լատին պատրիարքության թեմի հոգևորական գործիչների շարքերը:

Հայրենիքը ևս բարձր է գնահատել հայագիտության այս անդաստանում մշակի ծանրաբեռն վաստակը: 1994 թ. ի վեր նա ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ է: Ամենուրեք Լ. Զեքիյանը հայ ազգային մշակույթի և գիտության քարոզիչն ու մունետիկն է, ազգային բարձր իմացականության դրսևորումն ու ազնվագույն կրողը: Ի թիվս այլ գործոնների, նրա հետազոտական և գործնական փայլուն ձիրքը հենվում է նաև բազմալեզվագիտական կարելիությունների վրա. բացի մայրենի լեզվից (հին և արդի՝ երկճյուղ), նա տիրապետում է իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, լատիներեն, թուրքերեն, դասական հունարեն և տարրական եբրայերեն լեզուներին: Նկատի առնելով նրա ամբողջական գործունեության մարդասիրական արժեքը իր դրսևորման բոլոր բնագավառներում, Հռոմի Ֆրանցիսկոս պապը Լևոն Զեքիյանին շնորհել է եպիսկոպոսության աստիճան՝ ճանաչելով նրան Կ. Պոլսի հայ կաթողիկե արքեպիսկոպոսական աթոռի Առաքելական կառավարիչ:

Լ. Զեքիյանի գործունեությունն ընդգրկում է նրա գիտամանկավարժական, հայագիտական ու աստվածաբանական-իմաստասիրական ուղղությունների բովանդակությունն ու դրանց միասնությունը: Իր մտավոր կարողությունները ի հայտ են եկել անկասելի աշխատունակությամբ: Նրա տպագիր արտադրության չափելի քանակը կազմում է 14 մենագրություն և շուրջ 200 հոդված և այս ամենը միայն մոտավոր պատկերացում են տալիս նրա բազմակողմանի հետաքրքրությունների մասին: Նկատի ունենք նաև նրա հայագիտական-կազմակերպչական աշխատանքների անվերջ ընթացքը, հատկապես Հայ շարժանկարի փառատոնը (Վենետիկ, 1883), Հայ արվեստի միջազգային գիտաժողովը (Իտալիա, 1988), «Հայերը Իտալիոյ մէջ» ցուցահանդեսը (Վենետիկ, 1990), հայ տպագրության 500-ամյակին նվիրված ցուցահանդեսը՝ «Հայաստան՝ քաղաքակրթության դրոշմներ» խորագրով (Իտալիա, 2011) և այլն:

Լ. Զեքիյանի աշխատություններից կարելի է հիշատակել արվեստագիտական-վերլուծական բնույթի գործերը, ինչպես «Հայ թատրոնի առաջին քայլերը և հայ վերածննդի առաջին շարժումը», «Համամիութենական տրամախոսութիւն մը ԺԲ դարուն», «Օգոստինյան ներգոյապաշտությունը» (իտալերեն), «Հումանիզմ. ներհղացային բովանդակություններ ու պատմական արմատներ» (թուրքերեն), «Տրամասությունը արժեքի և պատահականության միջև. մշակութային երևութաբանությունից դեպի արժեաբանական վերահիմնավորում», «Հայաստան և հայերը. հերձատած ոստան և «Հոգևոր հայրենիք»

վերապրումի մարտահրավերը» (իտալերեն), «Ինքնության խճանկար», «Հայաստան» և այլն: Եթե համառոտենք Լ. Զեքիյանի գիտական արգասիքի բնութագիրն ու իր աշխատությունների իմաստավորումը, պետք է նկատի առնենք նրա հետազոտությունների մի պատկառելի շերտը, որն ընդգրկում է բուն հայագիտական հիմնահարցերը՝ ազգային արվեստ, պատմություն, լեզու, գրականություն, դրանց տեղն ու նշանակությունը հայութ-յան հարատևման ընթացքում, որի գլխավոր հայտանիշներից մեկը մեր հոբելյարը համարում է նրա ինքնության վերահաստատումը՝ պատմական փորձությունների շարունակական ընթացքում: Երջանկահիշատակ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, ով ի մոտո գիտեր և անվրեպ ճանաչում էր Լ. Զեքիյանին՝ բարձր գնահատելով նրա ավանդը հայոց պետականության նկատմամբ, միաժամանակ նկատում էր, որ «Հայ ժողովրդի պատմական անցյալի իրողություններով պրոֆ. Լ. Զեքիյանը հիմնավոր մերժում է գրականության մեջ արծարծվող այն տեսակետները, թե «ազգ» հասկացությունը ենթադրում է պետականության առկայություն … Նա իրավացիորեն գտնում է, որ հայ ժողովուրդը պետական կարգավիճակ չունենալով, կբնորոշվի, գոնե V դարից սկսած, պատմամշակութային իր ստեղծած արժեքներով, դրա գիտակցությամբ և ժողովրդի ճակատագրի հանդեպ հասարակության մտահոգությամբ և նվիրվածությամբ»:

Լ. Զեքիյանի գիտական նախասիրությունների մասին խոսելիս հարկ է ուշադրություն դարձնել հետևյալին. վաղ երիտասարդական տարիներից առնչվելով Իտալիայի և իտալական գիտության ու արվեստի հետ, նա լուրջ ներդրում ունի հայ-իտալական հարաբերությունների հնամենի անդաստանում, սիրով ու ջերմությամբ՝ իր հերթին անձամբ հարստացնելով այդ հոգևոր կապերը: Նրա մի շարք աշխատություններ նվիրված են Իտալիայի հայկական գաղթավայրերին (Հռոմ, Վենետիկ, Լիվոռնո) և հայ-իտալական պատմամշակութային ու տնտեսական հարաբերություններին, ինչպես «Միջին դարու Իտալիո հայ գաղութները և հայ-իտալական մշակութային կապերը», «Հայերը Վենետիկի մեջ», «Խոջա Սաֆար՝ Շահ Աբասի դեսպան Վենետիկի մեջ»: Այս և այլ ուսումնասիրությունները հայ-իտալական աղերսների վերաբերյալ, գիտաժողովներում և այլուր ներկայացրած իր ելույթներում Լ. Զեքիյանը հաղթահարել է զուտ պատմականի սահմանները և միշտ կամ գրեթե միշտ անդրադարձել Սփյուռքին, նրա արդի իրականության ու ազգապահպանության մտահոգիչ խնդիրներին: Այս թեմայի բացառիկ կարևորության մասին կարելի է հավելել, որ Սփյուռքը կենդանի օրգանիզմ է իր շնչառության յուրահատուկ առանձնահատկություններով և անհատականության դրսևորումներով մշտապես կապված մայր-հայրենիքի հետ՝ անկախ քաղաքական նախասիրություններից ու անհատական պատկերացումներից: Ավելացնենք, որ եթե այսօր այդ կապերն այնքան են թուլացել, որ հասել են ոչ բավարար մակարդակի՝ երկկողմանի կառուցվածքային փոխհարաբերություններում, ապա առաջին հերթին հայրենիքն իր մեջ պետք է ուժ գտնի կտրականապես փոխելու իրավիճակը՝ առաջ քաշելով Սփյուռքի կենսապահովման նոր, արդիական հնարավորություններ և դրանց համարժեք ձևեր:

Հայրենիք-Սփյուռք կապերի միասնականության և ամբողջականության հանգրվաններից մեկը Լ. Զեքիյանը համարում է նրանց լեզվական հաղորդակցության խնդիրը: Նա լայն հայեցվածքով է դիտարկում ազգային մտքի

զարգացման ընթացքն իր խոհական-իմաստասիրական բնույթի գործերում և այս համատեքստում էլ բնութագրում է Մխիթարյան միաբանության տեղն ու նշանակությունը մեր ժողովրդի պատմության մեջ: Մխիթարյանների գործունեությունը և նրանց անչափելի մեծ ներդրումները հայ իմացականության անընդհատ զարգացումներում՝ նա համարում է ազգային մշակույթի վերաձևման ու կենսունակության կարևոր հիմք և նախապայման: Իր «Մխիթարյան միաբանության նպաստը հայ մշակույթին և հայագիտությանը» հոդվածում նա հիմնավորում է Մխիթարյանների հսկայական ներդրումները ազգային ոգու շարժման անհրաժեշտության տեսանկյունից և այն համադրում հայ եկեղեցու ուղղափառության առաջմղիչ կարողունակությանը: Ազգային ինքնության արտահայտման այս զուգահեռ ընթացքը Ջեքիյան-իմաստասերը համարում է ազգային ինքնագիտակցության դրսևորման ձև ու միաժամանակ, այս հակասականությամբ պայմանավորված ոգու գոյատևման վիճակ: Իմաստասիրական մտածումը, կարծում է նա, հարկ է ըմբռնել նախ իր բուն՝ «սեղմ իմաստով, իբր գիտականօրէն մշակուած տեսաբանութիւն մը, որու ձգտումն է իրականութեան խորագոյն բացատրութեան մը որոնումը բոլոր մասնակի հորիզոններէն անդին, իր բացարձակ ընդհանրութեան մէջ»: Մեջբերելով այս տողերը հոբելյարի «Հայ մշակոյթ և իմաստասիրական մտածում» հոդվածից, ցանկացանք ցույց տալ, որ հայ մտքի և մշակույթի վերաբերյալ իր բնութագրական դատումները հենվում են դասական և նոր ժամանակների իմաստասիրական մտքի վրա և մասնավորեցվում ազգային-պատմական ընթացքի ու մտածողության հանգրվաններում՝ սկսած պատմահայր Խորենացուց մինչև Դավիթ Անհաղթ, Նարեկացի մինչև մեր ժամանակները: Այս վերջինների շրջագծում նա հատկապես արժեքավորում է Մխիթարյան միաբանության լուրջ վաստակը նաև գրաբարի լեզվական զարգացումների, գրաբարից մինչև արդի գրական հայերենի գնահատումների ու մշակման ասպարեզում, ի դեմս այնպիսի երախտավորների, որպիսիք են ինքը՝ միաբանության հիմնադիր Մ. Սեբաստացին, Մ. Ջամչյանը, Ա. Այտընյանը, Ղ. Ինճիճյանը, Մ. Գարագաշյանը և ուրիշներ:

Հոբելյարի ուսումնասիրությունները, սկսած իր հետազոտական ընթացքի վաղորդայնից առ այսօր, մշտապես աչքի են ընկել իրենց արդիականությամբ, ասել կուզի՝ միշտ պահանջված՝ հայ հանրությունների կողմից, որտեղ էլ որ նրանք գտնվեն: Եվ այս իմաստով կարելի է հիշել տակավին 1990-ականին մեր մտավորականության համար օրակարգային դարձած լեզվական միասնության, համազգային լեզվի խնդիրը: Չխորանալով մանրամասների մեջ, այստեղ նշենք միայն, որ նա շատ ուշագրավ վերհանումներ է արել հատկապես հնչյունաբանության բնագավառում՝ միշտ ելնելով լեզվական միության գաղափարից, այս գործընթացում դասական լեզվի (գրաբար) մտածված միջամտությունը հաշվի առնելով և երկու գրական լեզուների անհաղթահարելի տարբերությունները (ինչպես, օրինակ, տառադարձության իրողությունը) պահպանելու մոտեցմամբ:

Լ. Ջեքիյանին, որպես անհատականության, կարելի է բնութագրել նաև զուտ իր մարդկային կեցվածքով՝ բացառիկ անբասիր վերաբերմունքով ու մարդասիրական լայնախոհությամբ՝ իր ազգի, միջավայրի ու անհատների նկատմամբ: Նրա գործունեության գնահատականն այս իմաստով նրան վերա-

դարձվող գնահատականն է՝ հիացմունքի և ջերմության անստգյուտ պաշարով առ վաստակաշատ գործիչը, հայ մարդը և մտածողը: Ժամանակին, 20 տարի առաջ, Հայ բարեգործական ընդհանուր միության ատենապետ Ե. Ազատյանը գնահատանքի ու մեծարման հանրագումարն էր անվրեպ արտահայտում հոբելյարի մասին. «Ալիշաններու հզօր միտքով, ազգային ջերմեռանդութեամբ և խուզարկու միտքով, Հայր Ջէքիյան այսօրուան նիւթապաշտ աշխարհին մէջ կը շարունակէ ստեղծագործել ու պահպանել հայ մշակոյթը, հայ պատմութիւնը և հայ տեսիլքը՝ մխիթարեան սրբազան աւանդութեամբ: Հայր Լևոն հոգևոր է՝ իր պաշտամունքին մէջ և աշխարհական է՝ իր գործնականութեան մէջ»:

Այսօր էլ Լ. Զեքիյանը շռայլորեն իր ազգին ու հայագիտությանն է մատուցում Աստծո կողմից բազմապատկված իր շնորհներն ու միաժամանակ, հագեցնելով նրա և բոլորիս ակնկալիքները, որովհետև տակավին շատ բան է անելու և՛ մեկի, և՛ մյուսի համար: Ջերմորեն շնորհավորում եմ նրա ծննդյան տարեդարձը, բարի շարունակություն Ձեր անկանգ երթին, սիրելի հոբելյար:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՏԴ 929: 781(479.25) Քուշնարյան

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՀՀ ԳԱԱ – 80. ՀԱՅ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՔՈՒՇՆԱՐՅԱՆ»*

ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյա հոբելյանի շրջանակներում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (ԱԻ) նախաձեռնել է «ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները» գիտական կոնֆերանսների շարքը, որի նպատակն է բացահայտել ՀՀ ԳԱԱ ծանրակշիռ դերը հայ արվեստագիտության զարգացման գործում: Շարքի՝ երաժշտագետներին նվիրված կոնֆերանսները, կազմակերպվելու են Հայաստանի կոմպոզիտորների միության (ՀԿՄ) հետ, քանի որ նրանց գործունեությունը սերտորեն կապված է եղել վերջինիս հետ:

Շարքի 1-ին միջոցառումը «ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները. Քրիստափոր Քուշնարյան» երկօրյա գիտական կոնֆերանսն էր, որի երեք նիստերը տեղի ունեցան 2023 թ. հունիսի 27-ին և 28-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում:

Հայ ականավոր երաժշտագետ, կոմպոզիտոր ու մանկավարժ, Հայկական ՍՍՀ և Ուզբեկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆ. Ք. Քուշնարյանը (1890–1960) կանգնած էր հայկական ակադեմիական արվեստագիտության ակունքներում, 1944–1948 թթ. ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ երաժշտության պատմության և տեսության նորաստեղծ սեկտորը: Հենց այդ սեկտորի հիման վրա էլ 1948-ին ստեղծվեց ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորը, իսկ 1958-ին՝ ՀՍՍՀ ԳԱ ԱԻ-ը: Գիտնականի «Вопросы истории и теории армянской монодической музыки» *հիմնարար աշխատությունը (1958, Լենինգրադ) յուրաքանչյուր երաժշտագետի սեղանի գիրքն է:*

Ք. Քուշնարյանը միևնույն ժամանակ կարևոր տեղ է զբաղեցնում սովետական երաժշտարվեստի կայացման ու զարգացման գործում մեծ դեր կատարած ականավոր գործիչների շարքում (երկար տարիներ դասավանդել է Լենինգրադի կոնսերվատորիայում): Լինելով երաժիշտ-մտածող, գիտական և երաժշտական հետաքրքրությունների լայն շրջանակի տեր անձնավորություն՝ նա նաև խոշոր տեսաբան էր ու տաղանդավոր կոմպոզիտոր, ականավոր գիտնական-պոլիֆոնիստ և հրաշալի մանկավարժ, հետազոտող-ֆոլկլորիստ ու երաժշտական-հասարակական անխոնջ գործիչ:

Ք. Քուշնարյանի անունով է անվանակոչվել Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանում գտնվող արվեստի դպրոցը, որի հետ ՀՀ ԳԱԱ ԱԻ-ն ամենօրյա սերտ կապերի մեջ է, իսկ դպրոցի տնօրեն Էդգար Գյանջումյանը ՀԿՄ վարչության անդամ է:

Գիտական նստաշրջանի բացումը և լիագումար նիստը տեղի ունեցավ հունիսի 27-ին: Նստաշրջանի մասնակիցներին և հյուրերին ողջունեց ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադե-

* *Ներկայացվել է 21. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

միկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Նա մասնավորապես նշեց. «Քուշնարյանը Լենինգրադի թատրոնի և երաժշտության ինստիտուտից գործուղվել էր Հայաստան՝ որպես գիտարշավի ղեկավար: Նա ուսումնասիրեց հայ երաժշտության զարգացման ընթացքը, ինչը հիմք դարձավ հետագայում իր նշանավոր հրապարակումների համար: Ակադեմիական արվեստագիտության ասպարեզում առաջին քայլերը կատարվել են Քուշնարյանի ղեկավարությամբ, և այս գիտաժողովն արժևորելու է նրա մեծ ավանդը երաժշտության տեսության և պատմության զարգացման գործում»:

Իր ողջույնի խոսքում ՀԿՄ նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Արամ Սաթյանը նկատեց. «Կարևոր է՝ լինի միասնականություն երաժշտագետի և ստեղծագործողի միջև: Ես հիշում եմ, որ 1960–70-ականներին երաժշտագետներն արձագանքում էին բոլոր ստեղծագործություններին: Այժմ այդ գործընթացը վերականգնվում է: Դրա հիմքում ընկած է ստեղծագործողը և վերլուծությունը: Այսօր, շնորհիվ Քուշնարյանի, կարող ենք հավաստիացնել, որ ունենք մի դպրոց, որը հիմնվում է այդ համակարգի վրա»:

Այնուհետև տեղի ունեցավ Ք. Քուշնարյանի սան՝ ԱԻ-ի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ (1984–2005), ՀԿՄ երաժշտագիտական մասնաճյուղի նախագահ (1975–1981), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվ. թ. Կարինե Խուդաբաշյանի (1929–2015) «Կենսամատենագիտության» շնորհանդեսը (ներածականը՝ Անահիտ Բաղդասարյանի):

Գիտական նստաշրջանի լիագումար նիստը մեկնարկեց ԱԻ-ի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀԿՄ վարչության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվ. դ., պրոֆ. Աննա Արևշատյանի «Քրիստափոր Քուշնարյանը՝ նշանավոր գիտնական երաժշտագետ», ԱԻ-ի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվ. դ., պրոֆ. Մհեր Նավոյանի՝ «Ք. Քուշնարյանի ձայնակարգային տեսության որոշ առանձնահատկությունների շուրջ» զեկուցումներով:

Քուշնարյանը գիտական դպրոցի հիմնադիր է. նրա ասպիրանտներն իրենց հետագա գործունեությամբ մեծապես նպաստեցին հայ երաժշտագիտության առաջընթացին: Հաջորդ 3 զեկուցումում ուրվագծվեցին Քուշնարյանի սաների գիտամանկավարժական դիմանկարները, և բացահայտվեց նրանցից յուրաքանչյուրի ներդրումը հայ երաժշտագիտության մեջ:

Զեկուցումներով հանդես եկան ԱԻ-ի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, ՀԿՄ անդամ, արվ. թ., դոցենտ Անահիտ Բաղդասարյանը՝ «Երաժշտագիտական մտքի զարգացումը Հայաստանում. Քրիստափոր Քուշնարյանի սաները՝ Գայանե Չեբոտարյան և Կարինե Խուդաբաշյան», ԱԻ-ի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մարիաննա Տիգրանյանը՝ «Քրիստափոր Քուշնարյան և Մարգարիտ Բրուտյան», Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) «Երաժշտական Հայաստան» գիտական պարբերականի գլխավոր խմբագիր, ՀԿՄ վարչության անդամ, երաժշտագետ Գոհար Շագոյանը՝ «Ք. Քուշնարյանի ասպիրանտը՝ Նիկողոս Թահմիզյան»: Նիստը եզրափակվեց ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դոցենտ Հասմիկ Հարությունյանի «Քրիստափոր Քուշնարյանը՝ էթնոերաժշտագետ» զեկուցմամբ:

Գիտական նստաշրջանի առաջին նիստում (համանախագահներ՝ Աննա Արևշատյան, Էդգար Գյանջումյան) ԱԻ-ի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀԿՄ վարչության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվ. դ., պրոֆ. Լիլիթ Երնջակյանը հանդես եկավ «Քրիստափոր Քուշնարյան՝ արևելագետ» զեկուցումով: ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի դոցենտ Ռիտա Աղայանը բացահայտեց Ք. Քուշնարյանի ներդրումը սովետական երաժշտագիտության զարգացման գործում: Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն, ՀԿՄ վարչության անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Էդգար Գյանջումյանն ուրվագծեց Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի անցած կեսդարյա ուղին, ներկայացրեց դպրոցի ձեռքբերումներն ու նվաճումները: ԱԻ-ի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող, արվ. թ. Անի Հակոբյանը քննության առավ հայկական ավանդական օրորները Ք. Քուշնարյանի բանահավաքչական գրառումներում: Նիստը եզրափակվեց ԱԻ-ի երաժշտության բաժնի գիտաշխատող, արվ. թ. Հովհաննես Մանուկյանի «Ք. Քուշնարյանի Սոնատը երգեհոնի համար» զեկուցումով:

Երկրորդ նիստում (համանախագահներ՝ Լիլիթ Երնջակյան, Արամ Սաթյան), որը տեղի ունեցավ հունիսի 28-ին, ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվ. թ., դոցենտ Լուսինե Սահակյանը հանդես եկավ «Քրիստափոր Քուշնարյանի նորահայտ նամակները Ռոբերտ Աթայանին» զեկուցումով: Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն, բ. գ. թ. Ռուզան Սարյանն անդրադարձավ Քրիստափոր Քուշնարյանի և Մարտիրոս Սարյանի մարդկային ու ստեղծագործական շփումներին: ԱԻ-ի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Հռիփսիմե Պիկիչյանը ներկայացրեց «Թաղման ծեսի երաժշտախոսքային տեքստերի գրանցման և կենցաղավարման խնդիրների շուրջ (Ք. Քուշնարյանի հավաքածուի օրինակով)» հետազոտության արդյունքները: ԱԻ-ի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Գայանե Ամիրաղյանը բացահայտեց Ք. Քուշնարյանի ձայնակարգային տեսության որոշ առանձնահատկությունները հայ հոգևոր երգարվեստի համատեքստում: ԱԻ-ի տնօրեն, ՀԿՄ վարչության անդամ, ՀԿՄ երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվ. դ., պրոֆ. Աննա Ասատրյանը «Քրիստափոր Քուշնարյանը՝ Հայաստանում ակադեմիական երաժշտագիտության հիմնադիր» զեկուցման մեջ հակիրճ ներկայացրեց կոմպոզիտորի վաստակը որպես երաժշտագետ-գիտնականի, գիտության կազմակերպչի և երաժշտագիտական դպրոցի սկզբնավորողի: Այդ երեք ուղղությունով էլ հետագայում Հայաստանում ընթացավ ակադեմիական երաժշտագիտության զարգացումը:

Գիտական կոնֆերանսը եզրափակվեց Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի սաների տարեկան հաշվետու համերգով (գեղարվեստական ղեկավար՝ Է. Գյանջումյան), որը տեղի ունեցավ հունիսի 28-ին Հայաստանի կոմպոզիտորների տան համերգասրահում: Համերգի սկզբում հնչեց Ք. Քուշնարյանի «Սոնատը» երգեհոնի համար՝ կոմպոզիտոր և երգեհոնահար Հովհաննես Մանուկյանի կատարմամբ:

Գիտական կոնֆերանսի արդյունքները կարևոր քայլ դարձան հայ երաժշտագիտական մտքի ուսումնասիրության ասպարեզում:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 3

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ «ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ–120»*

2023 թ. սեպտեմբերի 12–14-ը ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան–120» միջազգային գիտական կոնֆերանսը, որը ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի համաֆինանսավորմամբ կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (ԱԻ)՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի ու Հայաստանի կոմպոզիտորների միության (ՀԿՄ) հետ:

Իր բացման խոսքում ԱԻ-ի տնօրեն, արվ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԿՄ երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար Աննա Ասատրյանը *նկատեց, որ գիտական միջոցառումը գումարվում է հայ ժողովրդի համար դրամատիկ ժամանակահատվածում. «Վերջին ամիսներին արցախահայությունը գտնվում է շրջափակման մեջ: Մեր ժողովուրդը երկար ժամանակ փորձում է հաղթահարել 44-օրյա պատերազմի աղետալի հետևանքները: Նման պայմաններում Խաչատրյանի անձը և նրա՝ լավատեսությամբ և հումանիստական ուղղվածությամբ աչքի ընկնող երաժշտությունը կարող են կարևոր դեր ունենալ մեր ժողովրդի կյանքում: Պատահական չէ, որ 1943 թ.՝ Հայրենական մեծ պատերազմի դաժան օրերին, երբ ողջ Եվրոպան ծնկի բերած ֆաշիստական բանակը շարունակում էր իր հաղթարշավը Սովետական Միության տարածքում, կոմպոզիտորն իր Երկրորդ սիմֆոնիան ավարտեց լավատեսական ֆինալով: Նա հավատում էր իր ժողովրդի հաղթանակին: Ու չսխալվեց: Վստահ լինելով, որ մեր կոնֆերանսի արդյունքները շատ կարևոր հանգրվան կդառնան միջազգային խաչատրյանագիտության ասպարեզում, առհասարակ, երաժշտագիտության մեջ՝ ուզում եմ հավատալ, որ Ա. Խաչատրյանի երաժշտությունը, անձն ու գործը կօգնեն հայ ժողովրդին հաղթահարել իր պատմության այս դժվարին փուլը և թևակոխել լուսավոր ու պայծառ ապագա»:*

Ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը*, մասնավորապես, նկատեց. «Աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ, արվեստագիտության դոկտոր Արամ Խաչատրյանը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա պատմության ընթացքում միակ երաժիշտ ակադեմիկոսն է: Նա ակադեմիկոս է ընտրվել ուղիղ 60 տարի առաջ՝ 1963 թ. մարտի 9-ին՝ Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ և առաջարկությամբ: Այդ օրվանից մինչև կյանքի վերջն Ա. Խաչատրյանը սերտորեն կապված էր Ակադեմիայի, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտի հետ: Եվ պատահական չէ, որ նա ցանկացել է, որպեսզի իր թանգարանը բացվի և գործի Արվեստի ինստիտուտին կից: Գիտությունների ակադեմիան, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտը, հետագայում իրենց կարևոր ավանդը բերեցին միջազգային խաչատրյանագիտության կայացման ու զարգացման գործում:*

Ա. Խաչատրյանի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության հարցերին նվիրված ակադեմիական առաջին գիտական նստաշրջանը գումար-

* *Ներկայացվել է 02. X. 2023 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2023 թ.:*

վեց այս դահլիճում՝ 1974 թ. հոկտեմբերի 22-ին, որին մասնակցում էր հենց ինքը՝ Ա. Խաչատրյանը: ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած միացյալ գիտական նստաշրջանը համախմբեց համամիութենական երաժշտագիտական մտքի առաջատար ուժերին: Կոնֆերանսի ծրագրին ծանոթանալիս ինձ հաճելիորեն զարմացրեց զեկուցումների թեմատիկ ընդգրկումը և բանախոսների աշխարհագրությունը: 40 մասնակից աշխարհի 3 մայրցամաքներից՝ 8 երկրներից: Սա վկայում է այն մասին, որ անցած տարիների ու տասնամյակների ընթացքում աշխարհում ոչ միայն չի նվազում հետաքրքրությունն Ա. Խաչատրյանի հանճարեղ երաժշտության հանդեպ, այլև նրա ստեղծագործական գործունեությունը շարունակում է մնալ հայ ու օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում: Վստահ եմ, որ եռօրյա գիտաժողովի ընթացքում մեզ սպասում են հետաքրքիր ու բովանդակալից զեկուցումներ և աշխույժ բանավեճեր: Համոզված եմ նաև, որ կոնֆերանսի արդյունքները կդառնան կարևոր և նշանակալի ներդրում միջազգային խաչատրյանագիտության ասպարեզում»:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը *նշեց. «2023 թ. ԿԳՄՍ նախարարության իրականացրած մշակութային միջոցառումների շարքում, բնականաբար, հատկապես կարևոր տեղ է գրավում Արամ Խաչատրյանի երաժշտության հանրահռչակումը: Ինչ խոսք՝ կոմպոզիտորն ապրում է այնքան, որքան հնչում է նրա երաժշտությունը: Կատարվելով ու բեմադրվելով ողջ աշխարհում՝ արդեն վաղուց Ա. Խաչատրյանը դարձել է հայ ժողովրդի երաժշտական այցեքարտերից մեկը, եթե չասենք՝ այցեքարտը: Տրամաբանական է և ուրախալի, որ կոնֆերանսի նախաձեռնողն ու հիմնական կազմակերպիչը ՀՀ ԳԱԱ-ն է, մասնավորապես՝ Արվեստի ինստիտուտը: Շնորհավորում եմ բոլորիս՝ Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ, իսկ գիտական կոնֆերանսին՝ մաղթում հաջող ընթացք և հետաքրքիր քննարկումներ»:*

Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն, դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) պրոֆ. Արմինե Գրիգորյանը *նշեց, որ Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների նկատմամբ երաժշտագետների կողմից հետաքրքրությունը տարիների ընթացքում միայն մեծանում է: Շնորհակալություն հայտնելով կոնֆերանսին մասնակցելու նպատակով Երևան ժամանած հյուրերին, այդ թվում՝ Ա. Խաչատրյանի թոռնուհուն՝ Օլգա Կուզինային՝ նա հրապարակեց կոմպոզիտորի որդու՝ Կարեն Խաչատրյանի ողջույնի խոսքը՝ ուղղված գիտական միջոցառման մասնակիցներին: «Մենք չպետք է մոռանանք, որ պատկանում ենք այն ազգին, որը համաշխարհային մշակույթին նվիրեց այնպիսի մեծություն, ինչպիսին է Արամ Խաչատրյանը, ով դարձավ մի ամբողջ դարաշրջանի սիմվոլ», – նշեց Արմինե Գրիգորյանը:*

ՀԿՄ նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Սաթյանը *կարևորեց Ա. Խաչատրյանի ստեղծած կոմպոզիտորական դպրոցը: «Արամ Խաչատրյանը ստեղծագործական իմաստով մեծ ազդեցություն ունեցավ մեր սերնդի վրա: Այս նստաշրջանը հնարավորություն կտա նորովի մեկնաբանել Խաչատրյանի երաժշտությունը և նրա մոտեցումները դեպի երաժշտություն», – ասաց նա:*

Առավոտյան կայացած լիագումար նիստում (12 սեպտեմբերի) Ա. Խաչատրյանի Թոռնուհի, Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանի փաստաթղթերի և անձնական արխիվների բաժնի ավագ գիտաշխատող Օլգա Կուզինան (Մոսկվա) ներկայացրեց «Նամակներ մոսկովյան թղթակիցներին» զեկուցումը, իսկ արվ. դ., պրոֆ., Ուկրաինայի արվեստի վաստակավոր գործիչ, Կիևի մշակույթի և արվեստների ազգային համալսարանի խորեոգրաֆիկ արվեստի ամբիոնի վարիչ Ալեքսանդր Զեպալովը՝ «Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի բեմական մեկնաբանությունների կոմպարատիվ վերլուծությունը», Աննա Ասատրյանը՝ «Արամ Խաչատրյանը՝ երաժշտության մեջ ազգային ինքնատիպության հիմնախնդրի մասին», Եղ. Ֆ. Գնեսինայի Մեմորիալ թանգարան-բնակարանի տնօրեն Անդրեյ Գապոնովը (Ռուսաստան, Մոսկվա) և ֆոնդապահ Աննա Ավդեևան (Ռուսաստան, Մոսկվա)՝ ««Հավերժ երախտապարտ Արամ Խաչատրյանից (Արամ Խաչատրյանը Գնեսինների տանը)», արվ. դ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԱԻ-ի առաջատար գիտաշխատող, ՀԿՄ անդամ Մարգարիտա Ռուխկյանը՝ «Արամ Խաչատրյանն իր նամակների հայելիում», արվ. դ., Սանկտ Պետերբուրգի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության տեսության ամբիոնի պրոֆ. Իգոր Վորոբյովը (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ «Կանտատա-օրատորիալ ժանրը 1930–1950-ականների սովետական երաժշտության մեջ որպես ստալինյան ժամանակի գաղափարա-առասպելաբանական պարադիգմայի արտացոլում (Արամ Խաչատրյանի և Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործության օրինակով)», արվ. դ., ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ԵՊԿ պրոֆ., ՀԿՄ անդամ Իրինա Զոլոտովան (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանը և ազգային դաշնամուրի բնույթը» և երաժշտ. դ., Կաուֆմանի երաժշտական կենտրոնի պրոֆ. Նունե Մելիքյանը (ԱՄՆ, Նյու Յորք)՝ «Արամ Խաչատրյան և Առնո Բաբաջանյան. տարբեր սերունդների երկու կոմպոզիտորների հարաբերությունների դինամիկան» զեկուցումները:

Լիագումար նիստն ընդմիջվեց Մարգարիտա Ռուխկյանի «Հնչող երաժշտությունը դարաշրջանի կենդանի տարեգրությունն է (1990–2020)» հոդվածների ժողովածուի շնորհանդեսով: Աշխատությունը ներկայացրեցին հեղինակն ու ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, խմբավար ու երաժշտագետ Սարինա Ավթանդիլյանը:

Երեկոյան կայացած լիագումար նիստում (համանախագահներ՝ Արմինե Գրիգորյան, Անդրեյ Գապոնով) հանդես եկան՝ Արմինե Գրիգորյանը «Մաեստրոյի տունը: Տուն-թանգարանի և Արամ Խաչատրյանի անվան տրիոյի հոբելյանական նախագծերը», արվ. թ., դոցենտ, Սանկտ Պետերբուրգի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի դեկան Անդրեյ Իվանովը՝ «Արամ Խաչատրյանի թավջութակի ժառանգությունը», արվ. թ., Սախա Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Մ. Կ. Ամմոսովի անվան Հյուսիսարևելյան ֆեդերալ համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ Տատյանա Պավլովա-Բորիսովան (Ռուսաստան, Յակուտսկ)՝ «Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը յակուտական բեմում», արվ. թ., Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, ԵՊԿ պրոֆ., ՀԿՄ անդամ Միխայիլ Կոկժաևը (Հայաստան, Երևան)՝ «Միկրոկառուցվածքների՝ միաձուլման կամ փոխադարձ դիրքային վերադասավորման ունակությունը Արամ Խաչատրյանի ստեղծագործություններում», արվ. դ., Ուֆայի Զագիր Իսմագիլովի անվան արվեստի պետական ինստիտու-

տի դոցենտ, Բաշկորտոստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Գուլնազ Գալինան՝ ««Սալավաթ Յուլաև» կինոնկարի համար գրված Արամ Խաչատրյանի երաժշտությունը», արվ. թ., դոցենտ, ԵՊԿ կրթության որակի ապահովման բաժնի ղեկավար, ՀԿՄ անդամ Նարինե Ավետիսյանը՝ «Արամ Խաչատրյանի դաշնամուրային երաժշտությունը XX դարի 60-ական թվականներին», արվ. դ., պրոֆ., Լատվիայի վաստակավոր արտիստ, Լատվիայի Ի. Կոզակևիչի անվան ազգային մշակութային ընկերությունների Ասոցիացիայի նախագահ Ռաֆֆի Խարաջանյանը (Լատվիա, Ռիգա)՝ «Արամ Խաչատրյանն իմ հիշողություններում», «Արումենիա-Նիպոն» հայ-ճապոնական գիտամշակութային միության հիմնադիր-նախագահ, տնտ. թ., ճապոնագետ-միջազգայնագետ Աննա Վարդանյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյան. մեծանուն Սենսեյը Տերահարայի հուշերում» և արվ. թ., Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ Վյաչեսլավ Եղիգարյանը՝ «Խաչատրյանական պիանիզմի կայացման ինքնատիպությունը և առանձնահատկությունները» զեկուցումներով:

Կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց սեպտեմբերի 13-ին: Առաջին նիստում (համանախագահներ՝ Լիլիթ Արտեմյան, Արսեն Համբարձումով), իրենց զեկուցումները ներկայացրեցին՝ արվ. թ., դոցենտ, ԵՊԿ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը՝ «“Солнцем его музыки…” (Արամ Խաչատրյան - Էդգար Հովհաննիսյան ստեղծագործական աղերսներ)», ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆ., Կոմիտասի թանգարան-ինստիտուտի աշխատակից Դանիել Երաժիշտը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի Սովետական Հայաստանի Պետական հիմնի երաժշտության գաղտնագրությունը և արդիականությունը», դաշնակահար, մանկավարժ, Կալիֆոռնիայի Երաժշտության ուսուցիչների ասոցիացիայի անդամ Սուսաննա Տարոնցին (ԱՄՆ, Լոս Անջելես)՝ «Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմի» նոր հրատարակության նպատակը և կարևորությունը», երաժշտագետ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր, ՀԿՄ վարչության անդամ Գոհար Շագոյանը (Հայաստան, Երևան)՝ «Արամ Խաչատրյանի արվեստի ազդեցիկ նշանակությունը երաժշտագիտական մտքի վրա «Երաժշտական Հայաստանի» էջերում», արվ. թ., դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, ԱԻ-ի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, ՀԿՄ վարչության անդամ Լիլիթ Արտեմյանը՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործության հանրահռչակումը ՀՀ անկախության շրջանում», արվ. թ., դոցենտ, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տնօրեն Հասմիկ Հարությունյանը՝ «Ավանդական պարը Արամ Խաչատրյանի ստեղծագործական տեսադաշտում», Բեյրութի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր, Լիբանանյան Ամերիկյան համալսարանի դասախոս, ԱԻ-ի ասպիրանտ Կարապետ Ավեսյանը (Լիբանան, Բեյրութ)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության լիբանանյան էջը», ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի փոխտնօրեն Անի Ասատրյանը՝ «Գեորգի Տիգրանովը Ա. Խաչատրյանի բալետներում հումանիստական գաղափարների արտահայտման մասին» և ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի դասախոս Նվարդ Եղոյանը՝ «Պրոֆեսոր Մարգարիտա Գաբրիելի Հարությունյանի ներդրումը խաչատրյանագիտության մեջ»:

Նիստի եզրափակիչ մասում ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը ներկայացրեց Ա. Խաչատրյանի մասին իր արտակարգ հետաքրքիր հուշերը:

Երկրորդ նիստում (համանախագահներ՝ Մարգարիտա Քամալյան, Կարապետ Ավեսյան) զեկուցումներով հանդես եկան՝ արվ. թ., ԱԻ-ի ավագ գիտաշխատող Արսեն Համբարձումովը՝ «Արամ Խաչատրյանի երաժշտության դերը «Պեպո» և «Զանգեզուր» ֆիլմերում», արվ. դ., Ռուսաստանի Պետական ակադեմիական Փոքր թատրոնին կից Մ. Ս. Շչեպկինի անվան բարձրագույն թատերական ուսումնարանի (ինստիտուտի) պրոֆ. Գալինա Պոժիդայևան (Ռուսաստան, Մոսկվայի մարզ, Կրասնոգորսկ)՝ «Արամ Խաչատրյանի ստեղծագործական սկզբունքները նրա սաների ստեղծագործություններում. Վլադիմիր Պոժիդաևի (1946–2009) երկերը», արվ. թ., դոցենտ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Սաթենիկ Մելիքյանը՝ «Արամ Խաչատրյանի կերպարը հայ կերպարվեստում», արվ. թ., կոմպոզիտոր, երգեհոնահար, միջազգային մրցույթների դափնեկիր, ԱԻ-ի գիտաշխատող, ՀԿՄ անդամ Հովհաննես Մանուկյանը՝ «Արամ Խաչատրյանի ինքնատիպ և եզակի սիմֆոնիզմը», ԱԻ-ի հայցորդ, Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիայի երգչախմբի ղեկավար, Հանրային ռադիո-ընկերության «Արևիկ» մանկապատանեկան անսամբլի վոկալի մասնագետ Նաիրա Մելիքյանը՝ «Կոնստանտին Օրբելյան. «Я его любил как божество»», տնտ. թ., Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող Լիանա Կարապետյանը՝ «ՀՀ ազգային բրենդի հետքերով. մշակութային դիվանագիտության զարգացման հեռանկարներն ու Արամ Խաչատրյանը», Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի գիտաշխատող, ԵՊԿ դասախոս Մարինա Մարտիկյանը՝ «Արամ Խաչատրյանի գործիքային կոնցերտները» և ԵՊԿ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Հեղինե Սարգսյանը՝ «Արամ Խաչատրյանի և Արա Սևանյանի ստեղծագործական համագործակցությունը»:

Կոնֆերանսի եզրափակիչ՝ երրորդ նիստում (համանախագահներ՝ Աննա Ասատրյան, Անդրեյ Իվանով) լսվեցին արվ. թ., Ա. Ի. Գերցենի անվան ռուսաստանյան պետական մանկավարժական համալսարանի երաժշտության, թատրոնի և խորեոգրաֆիայի ինստիտուտի երաժշտական-գործիքային պատրաստման ամբիոնի դոցենտ Նադեժդա Մեդվեդևայի (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ «Ռաֆֆի Խարաջանյանի «խաչատրյանապատումը»», երաժշտագետ Նունե Պողոսյան-Զելցբուրգի (UWC Maastricht, MA, Նիդեռլանդներ, Մաաստրիխտ)՝ «Արամ Խաչատրյան. մարդն աշխարհի երաժշտության մեջ (էթնոերաժշտագիտական դիտարկումներ)» և արվ. թ., դոցենտ, Սանկտ Պետերբուրգի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի ազգային երաժշտական մշակույթների պատմության կաբինետի վարիչ Տատյանա Բրոսլավսկայայի (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ «Նյութեր Ա. Ի. Խաչատրյանի հասցեատերերի որոշ նամակներից (համառոտ տարբերակ)՝ լրացված նախկինների կարևոր ձեռքբերումների մասին խորհրդածություններով» բանախոսությունները:

«Արամ Խաչատրյան–120» միջազգային գիտական կոնֆերանսի արդյունքները դարձան կարևոր հանգրվան երաժշտագիտության, մասնավորապես՝ խաչատրյանագիտության ասպարեզում:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՏԴ 929: 947.925 Հովհաննիսյան + 32(73)

ՌԻՉԱՐԴ ԳԱՍՊԱՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հայ պատմագիտական ընտանիքը ծանր և անդառնալի կորուստ ունեցավ: Հուլիսի 10-ին ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում 90 տարեկան հասակում կյանքից հեռացավ աշխարհահռչակ գիտնական, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Կալիֆորնիայի պետական համալսարանի Արդի հայոց պատմության ամբիոնի հիմնադիր ու առաջին վարիչ, «Հայաստանի Հանրապետություն» կոթողային անգլերեն քառահատոր աշխատության և Հայոց ցեղասպանության ու պատմական հայրենիքի վերաբերյալ բազմաթիվ գրքերի հեղինակ Ռիչարդ Գ. Հովհաննիսյանը: Վաստակաշատ գիտնականը հայ պատմագիտության մեջ թողեց իր անջնջելի և բեղմնավոր հետագիծն ու արժանավոր տեղը զբաղեցրեց Ղ. Ալիշանի, Ն. Ադոնցի, Լեոյի, Աշ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Լ. Խուրշուդյանի (բոլորին հնարավոր չէ թվարկել) փաղանգում: Ռ. Հովհաննիսյանը մեծ ճանաչում ուներ ամերիկյան գիտակրթական ոլորտում՝ որպես հայագիտական հետազոտությունների ռահվիրաներից մեկը:

Ծնվել (09. IX. 1932) ու մեծացել է Կալիֆորնիայում՝ Ֆրեզնոյի մոտ գտնվող Թուլարում, Հայոց ցեղասպանությունը վերապրածների ընտանիքում: Հայրը՝ Գասպար Գավրոյանը (հարգանքի տուրք մատուցելով հոր՝ Հովհաննեսի հիշատակին՝ փոխել է ազգանունը), Արևմտյան Հայաստանի Խարբերդի մոտ գտնվող Բազմաշեն գյուղից էր: Պատմագիտության բակալավրի կոչումը ստացել է 1954-ին Կալիֆորնիայի համալսարանում (Բերկլի), իսկ փիլիսոփայության դոկտորինը՝ 1966-ին Կալիֆորնիայի պետական համալսարանի Լոս Անջելեսի մասնաճյուղում (UCLA): Երիտասարդ գիտնականը UCLA-ի դասախոսական կազմին է միացել 1962 թ., իսկ 1986-ին նշանակվել է Լոս Անջելեսի համալսարանում հիմնադրված Արդի հայոց պատմության ամբիոնի առաջին վարիչ: 1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Ժամանակի առումով տևական ու հարուստ ժամանակաշրջան ապրելով՝ վաստակաշատ գիտնականը երբեք որևէ քաղաքական կոնյունկտուրայի չենթարկվեց և եղավ ու մնաց ազգային ուղղվածության անաչառ պատմաբան: Անշուշտ, նա կմնա հայ պատմագիտական մտքի անդաստանում: Հովհաննիսյանի՝ վաղ գիտական աշխատանքի առանցքում Հայաստանի առաջին Հանրապետության (1918–1920 թթ.) պատմությունն էր: Փիլիսոփայության դոկտորի նրա թեզը՝ «Հայաստանն անկախության ճանապարհին» ("Armenia on the Road to Independence"), լույս է տեսել 1967 թ.: Այն նախա-

բանի դեր կատարեց քառահատոր աշխատության համար, որն առայսօր համարվում է այս թեմայի վերաբերյալ առավել հանգամանալի ու ճանաչում գտածը:

Ռ. Հովհաննիսյանը Guggenheim-ի կրթաթոշակառու էր և արժանացել է բազմաթիվ պարգևների գիտական գործունեության ու հայագիտական հետազոտությունների առաջխաղացման մեջ ունեցած ավանդի համար: Նրա կենսագրական տվյալները, ի թիվս այլ տեղեկատվական հրատարակությունների, ներառված են «Ով ով է Ամերիկայում» (“Who’s Who in America”) և «Ով ով է աշխարհում» (“Who’s Who in the World”) գրքերում: Ռ. Հովհաննիսյանը բազմաթիվ գիտական ու հասարակական կազմակերպությունների տնօրենների խորհրդի անդամ էր, այդ թվում՝ «Առերեսում պատմության ու մեզ հետ» (“Facing History and Ourselves Foundation”) հիմնադրամի, Հոլոքոստի և ցեղասպանության միջազգայիին ինստիտուտի, Հայկական ճարտարապետության ուսումնասիրության հիմնադրամի, Կլերմոնթ Մքքեննա քոլեջի մարդու իրավունքների “Mgrublian” կենտրոնի և Հայագիտական հետազոտությունների ընկերակցության, որը նախաձեռնել է 1970-ականներին: 2011 թ. Հովհաննիսյանն արժանացավ Լոս Անջելեսի համալսարանի շրջանավարտների ասոցիացիայի «Ամենաոգեշնչող ուսուցիչ» մրցանակին: Քաջ հայտնի է հայկական քաղաքացիական ու քաղաքական գործողություններում իր ներգրավվածությամբ, ինչպես նաև՝ Հայոց ցեղասպանությունը Շոայի հիմնադրամում ինտեգրելու աշխատանքում: Ռ. Հովհաննիսյանը Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար, քաղաքական գործիչ Րաֆֆի Հովհաննիսյանի հայրն է: Նշենք, որ 1993 թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի թիվ մեկ դպրոցն անվանակոչված է վաստակաշատ գիտնական Ռ. Հովհաննիսյանի անունով:

Լինելով Հայոց ցեղասպանությունը վերապրածների ժառանգ՝ նա իր ողջ կյանքը նվիրեց հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրելու և աշխարհին ներկայացնելու շնորհակալ գործին: Հսկայական է նրա ներդրումը հայ ժողովրդի պատմության և հայագիտական հետազոտությունների ոլորտներում: Ապրելով հայրենիքից հեռու և մեծ ճանաչում ունենալով ամերիկյան գիտակրթական ասպարեզում՝ Ռ. Հովհաննիսյանը սերտորեն կապված էր հայրենիքի հետ: Լինելով ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ՝ իր կապերով ու գործունեությամբ մեծապես նպաստում էր Հայաստանում պատմագիտության զարգացմանը: «Պատմությունը կարող է մեռնել, եթե մոռացվի», — հաճախ շեշտում էր գիտնականը և դա թույլ չտալու առաքելությամբ հեղինակեց մի շարք կոթողային աշխատություններ: Նրա նման գիտնականներն են «կենդանի պահել» մեր պատմությունը և այն փոխանցել սերունդներին: Ռ. Հովհաննիսյանը հայկական խոր արմատներ ուներ և իր զավակներին էլ դաստիարակել է որպես իսկական հայրենասերների:

Հայագիտության բնագավառի նվիրյալն ակադեմիական կարգապահություն ուներ, որը ձևավորվել էր պրոֆեսիոնալիզմի շնորհիվ: Հայոց ցեղասպանության՝ որպես XX դ. գլխավոր ոճրագործության ուսումնասիրությանը նպաստելու առաքելությամբ պատմաբանի դժվարին ուղին ընտրած Հովհաննիսյանի ուսումնասիրություններն ու հրապարակումներն ամրագրեցին Հայաստանի առաջին Հանրապետության տեղը Հայաստանի և համաշխարհային պատմության մեջ: Բազմավաստակ պրոֆեսորը նաև ձևավորեց մի քա-

նի սերունդների գաղափարներն ու աշխարհայացքն այն մասին, թե ինչ է նշանակում Սփյուռքում հայ լինել: Իր իսկ հիմնադրած Հայոց պատմության ասպիրանտական ծրագրի շնորհիվ Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանում Ռ. Հովհաննիսյանի անմիջական ղեկավարությամբ ծնվեց ու հասունացավ նոր գիտնականների մի ողջ սերունդ:

Ռ. Հովհաննիսյանի հիմնարար աշխատությունները վերաբերում են Այսրկովկասի և Միջին Արևելքի պատմության հարցերին՝ հատկապես՝ Հայաստանի՝ XX դարասկզբի (1918–1920) պատմությանը, որտեղ անաչառ հետազոտողը լուսաբանել է եվրոպական տերությունների, ԱՄՆ-ի, ինչպես նաև՝ Ռուսաստանի ու Թուրքիայի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և Այսրկովկասում: Նրա գրչին են պատկանում նաև մի քանի հիմնարար աշխատություններ, որոնք նվիրված են Հայոց ցեղասպանության պատմությանն ու պատմագրությանը: Ռ. Հովհաննիսյանի հեղինակած հիմնական աշխատություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն» չորս հատորով ["The Republic of Armenia", հ. I (1971, 604 էջ), հ. II (1982, 708 էջ), հ. III և IV (1996, 628 էջ և 571 էջ)], "The Armenian Holocaust" (1980, 391 էջ), "The Armenian People from Ancient to Modern Times, 2 vols" (1997, 493 էջ), "Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide" (1999, 328 էջ):

Ռ. Հովհաննիսյանը վերը նշված քառհատոր կոթողային աշխատությունում Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունն այնքան հիմնավոր է ներկայացրել, որ երբ գործընկերներից մեկը նրան ասում է՝ այնքան մանրամասնորեն է գրել 1918–1920 թթ. դեպքերը, որ հայ պատմաբանների ու հետազոտողների համար բան չի թողել, նա համեստորեն պատասխանում է՝ «… չէ՛, շատ բան, դեռ շատ բան կա գրելու»:

Անվանի պատմաբանն իր ընթերցողների առաջ բացել է հայ-թուրքական հարաբերությունների չգրված դրվագները: Հայաստանի Հանրապետության պատմությունը, նրա թողած գրքերի հղումներով շատ ուսումնասիրողներ են մուտք գործել Հայոց պատմության մանրամասների մեջ: Նրա՝ հաստափոր, կոթողային հատորները շատերի սեղանի գրքերն են տարիներ շարունակ: Այն սակավաթիվ հայ պատմաբաններից էր, որի հրապարակած փաստերը և հղումները ճշգրտելու կարիք երբեք չի եղել: Նա ակադեմիական էր ուղղն ու ծուծով: Ազնիվ, անկողմնակալ պատմաբան էր. երբեք չէր թաքցնում սեփական ժողովրդի դեմ աղաղակող փաստերը՝ արժանանալով ազգայնականների ու կեղծ հայրենասերների դատափետումներին:

Գիտական բեղմնավոր գործունեությանը զուգընթաց՝ վաստակաշատ գիտնականը 1997-ից UCLA-ում կազմակերպել ու ղեկավարել է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի պատմական մարզերին նվիրված մի շարք ուշագրավ խորհրդաժողովներ, որոնք համախմբել են առաջատար գիտնականների ողջ աշխարհից՝ ներկայացնելու բազմադիսցիպլինար աշխատություններ վայրագորեն ոչնչացված հայկական աշխարհի վերաբերյալ: Ինչպես նաև ամենաակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանում և Սփյուռքի տարբեր գաղթօջախներում տեղի ունեցած գիտաժողովներին, հանդես է եկել Հայոց պատմության XX դարասկզբի մի շարք խրթին հարցերի լուսաբանմամբ:

Ապրելով Սփյուռքում՝ վաստակաշատ գիտնականն ու մեծանուն հայը իր անուրանալի նպաստն է բերել նաև հայապահպանության գործին: Անմիջական ականատեսը լինելով Սփյուռքում ընթացող համահարթեցման գործըն-

թացին՝ Ռ. Հովհաննիսյանն առավել քան արդիական էր համարում հայ մնալու և վտանգված արևմտահայերենի հիմնախնդիրները: «Վտանգված լեզու է, մեր գեղեցիկ արևմտահայ բարբառները, որով ես մեծացա: Մեր արևմտահայ գրականությունը շատ հարուստ գրականություն է, բայց այսօր դժբախտաբար նահանջի մեջ ենք, որովհետև արդեն 100 տարի Սփյուռքի մեջ ենք և հետզհետե մեր սերունդները կդժվարանան», — ցավով արձանագրում էր նա: Պատմաբանը միանգամայն իրավացի էր, քանի որ ի տարբերություն Հայաստանում և շատ այլ վայրերում գործածվող արևելահայերենի՝ «Արևմտահայերենը մնացել է միայն որպես Սփյուռքի լեզու, կապված է Սփյուռքի հետ»: «ԱՄՆ-ում մենք ունեինք միայն արևմտահայերենը մեր բարբառներով՝ Խարբերդի, Վանի և այլն», — մի առիթով ասել է Ռ. Հովհաննիսյանը և ընդգծել, որ վերջին քառորդ դարի ընթացքում նորանկախ Հայաստանից արտերկիր գաղթած հարյուր հազարավոր հայերը փոխեցին Սփյուռքի լեզուն՝ իրենց հետ բերելով արևելահայերենը: Եվ Ամերիկայում հայերենը փոխվեց, և այսօր ամերիկահայությունը, եթե հայերեն է խոսում, ապա՝ արևելահայերեն: Դա էլ իր հերթին իր ազդեցությունն է թողնում մնացած ամեն բնագավառի վրա: Ստեղծված այդ իրավիճակում Ռ. Հովհաննիսյանը կարևոր էր համարում, որ Սփյուռքում միաժամանակ զարգանան և՛ արևելահայերենը, և՛ արևմտահայերենը. «Կարելի է երկու լեզուներով հանգիստ խոսել և ապրել ու չզգալ, որ միայն միալեզու դառնամ կամ միամշակույթ լինեմ»:

Ցեղասպանության արհավիրքը խորապես ընկալող գիտնականը մշտապես շարունակական պայքար էր մղում դրա միջազգայնորեն ճանաչման և պահանջատիրությունն իրագործելու համար: Ռ. Հովհաննիսյանը մի առիթով ասել է՝ իհարկե, գիտենք, որ ապրիլի 24-ից հետո պետք է գա 25-ը: Դա բնական է. գիտենք նաև, որ որոշ ժամանակ անց կարող է միջազգային հետաքրքրությունը մի փոքր նվազի. անընդհատ չի կարող այդօրվա պես լինել: Բայց տեսնում ենք, որ վերջին տարիների կատարած աշխատանքներն որոշ արդյունք են տալիս, և պետք է շարունակենք այդպես, և հույս ունենանք, որ թուրքերն էլ պետք է զգան՝ լավ է իրենք լուծում գտնեն այս հարցին, որովհետև հետզհետե աշխարհն ավելի հստակ կդարձնի՝ իրենց ժխտողական քաղաքականությունը սուտ է և մարդիկ չեն հավատում: Դրա համար էլ պետք է այլ ելք գտնեն, որպեսզի անցյալի բեռից «թե՛ իրենք ազատվեն և թե՛ մենք ազատվենք»: Իսկ ինչ վերաբերում է պահանջատիրությանը, մեծանուն գիտնականը նշում էր՝ ինքը պահանջների մասին միշտ էլ խոսել է և ասել, որ հայերը կարող են ամեն տեսակ պահանջ էլ դնել, բայց, ի վերջո, նրանք ունեն պետություն ու իշխանություն, պետությունը պետք է խորհրդակցի ամբողջ աշխարհի հայության և սփյուռքահայության հետ ու ինքը պետք է կազմի հայության առավելագույն և նվազագույն պահանջները: Գիտնականի կարծիքով՝ վաղուց դա պետք է արդեն տեղի ունեցած լիներ, բայց երբեք էլ ուշ չէ և միշտ էլ ժամանակն է, քանի դեռ աշխարհն այդ ամենը վերագնահատելու շարժման մեջ է:

Մի առիթով էլ անդրադառնալով Եվրախորհրդարանի ընդունած բանաձևին և մի շարք երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստին՝ Ռ. Հովհաննիսյանը նշում է, որ դրանք, իհարկե, հուսադրող են ու ոգևորող, բայց միաժամանակ դրանով պայքարը չի վերջանում և պետք է շարու-

նակվի: Ափսոսելով՝ իր կյանքի ընթացքում դա չի տեսնի՝ հուսադրող էր համարում այն իրողությունը, որ այդ ուղղությամբ հատկապես երիտասարդների ու մտավորականների շրջանում որոշ շարժում կա նաև Թուրքիայում: Մի բան, որը քսան-երեսուն տարի առաջ չկար և գնալով՝ ավելի է ընդլայնվում: Անմնացորդ հայասեր Ռ. Հովհաննիսյանն այն կարծիքին էր, որ պետք է Թուրք ժողովրդի և մտավորականության կողմից ներքին, ինչպես նաև՝ արտաքին ճնշում, որպիսիք էին, օրինակ, Հռոմի պապի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ավստրիայի ու մյուս երկրների հայտարարությունները. նրանք կարող են հետ կանչել իրենց դեսպաններին…

Լայնախոհ մտավորականը չեշտում էր, որ անցյալի փորձից ելնելով՝ ինքը տեսնում է՝ Ռուսաստանի կարիքն ունենք, ռուսամետ ենք, և այդ երկիրը կարևոր ներդրում ունի մեր տարածաշրջանում: Բայց պատմությունից պետք է դասեր քաղենք, քանի որ քիչ դեպքեր չեն եղել, երբ Ռուսաստանը վճռական պահերի հայերին լքել է:

Տասնամյակներ շարունակ Ռ. Հովհաննիսյանը նշանային, ոգեղեն ներկայություն էր Հայաստանի ու Սփյուռքի համար: Խելացի ու ժպտառատ հայացքը, սահուն և քաղցրահունչ հայերենը, մասնագիտական դիպուկ արտահայտություններն ու գնահատող խոսքերն անտարբեր չէին թողնում և մագնիսի նման ձգում էին դեպի իրեն: Միջազգային ամենաբարձր գիտական հարթակներում բազմաբեղուն գիտնականի և անբասիր հայի իր տեսակով նա արժանապատիվ ներշնչանքի աղբյուր էր մի քանի սերնդի համար:

Ամփոփենք. Հայաստանի առաջին Հանրապետությանը նվիրված նրա կոթողային աշխատությունը մեր պատմության բարդագույն ժամանակաշրջանին նվիրված առաջին համապարփակ, ակադեմիական մենագրությունն էր, որը պրպտումների և բացահայտումների նոր հանգրվան էր տասնյակ ուսումնասիրողների համար: Հայաստանի, Այսրկովկասի ու Միջին Արևելքի պատմության հարցերին, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված նրա աշխատություններն արժեքավոր ու վավերական խոսք են հայ և միջազգային պատմագրության մեջ: Մեծ է Ռ. Հովհաննիսյանի վաստակը՝ իբրև անխոնջ ուսուցիչ, հայ մտավորական: Սփյուռքյան տարբեր համայնքներում նրա բազմաթիվ դասախոսությունները սերունդների համար եղել են սեփական ինքնության բացահայտման և պահպանման ակունք:

Մեծ պատմաբանի, վաստակաշատ ուսուցչի և Հայ Մարդու կորուստն համահայկական է, իրապես՝ անդառնալի: Կորուստը մեծ է, կորուստը հայ ժողովրդինն է, հայ պատմագիտական ընտանիքինը, նաև՝ իմը: Մի քանի անգամ առիթ եմ ունեցել ավագ գրչընկերոջս՝ Ռ. Հովհաննիսյանի ներկայությունը վայելելու, Երևանում ու Բեյրութում գիտաժողովների մասնակցելու և, վերջապես, սուրճի սեղանակից լինելու: Ցավում եմ և ցավակցում ընտանիքի անդամներին, հարազատ-բարեկամներին, ընկերներին, պատմաբանների հանրությին և հայ ժողովրդին՝ այս մեծ կորստի համար:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ի
65-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Լիլիթ Հովհաննիսյան – Անմնացորդ նվիրում (անգլ.) 3

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Խառատյան – Հովհաննես Հաննայի երկը՝ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունների պատմության սկզբնաղբյուր ………...12
Քրիստինե Կոստիկյան – Քրիստոնյաները Շաքիի շրջանում և մահմեդականացած ուդի հայերի խնդրագիրը (IX–XIX դդ.)..30
Արարատ Հակոբյան – Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հիմնահարցի պատմագիտական գնահատականը խորհրդահայ պատմագրության մեջ 46
Գեղամ Հովհաննիսյան – Ազգային խնդիրները Լոնդոնի «Նոր կյանք» պարբերականում (1898–1902 թթ.)…...59
Միքայել Մարտիրոսյան – Գրիգոր Զոհրապի դերը 1913 թ. ռուս-գերմանական համաձայնության կայացման գործում 72
Ռուբեն Սահակյան – Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատը փաստաթղթերում (քննական դիտարկումներ և վերլուծություն) 93
Համո Սուքիասյան, Գայանե Ղազարյան – Գարեջրագործությունը Երևանի նահանգում (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ) ……..................................124

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Պետրոս Դեմիրճյան – Վալերի Բրյուսովը հայ գրական-գիտական մտքի գնահատմամբ ……………………………………………………….............139
Սիրանուշ Մարգարյան – Կուլտուր-պատմական դպրոցը և նրա ազդեցությունը Հայր Ղևոնդ Ալիշանի և Գարեգին Սրվանձտյանցի գործերի վրա ………….163
Հասմիկ Հովսեփյան – Գրիգոր Մագիստրոսի քերականական դասագրքի դերը Սյունյաց դպրոցում 180

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նարինե Դիլբարյան – Ծննդոց գրքի գրաբար թարգմանության՝ մարդ հասկացույթի իմաստային դաշտի հիմնաբառերը 188

Գայանե Չոփուրյան – Երկբարբառների և եռաբարբառների հնչյունափոխության արտահայտությունը հայերեն վիմական արձանագրություններում (XII–XVI դդ.) 203

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տաթևիկ Շախկուլյան – Սասունցի Դավթի կերպարի երաժշտական մարմնավորումը 218

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արսեն Հարությունյան – Տաթևի վանքի պարսպակից մուտքերի և աղբյուրի կառուցման ժամանակը 230
Արսեն Բոբոխյան, Սաակ Տարոնցի, Տորք Դալալյան – Խարբերդի «Վիշապային քարը» և դրա մշակութաառասպելաբանական համատեքստը 246
Սիրանուշ Ֆահրադյան – Երուսաղեմի XIX դարի հայ պատրիարքների կնիքների արձանագրությունները և պատկերագրությունը 258

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայկազ Գևորգյան – Թավասպար ցեղանունը (թաբասարանցիների անվան ծագման հարցի շուրջ) (ռուս.) 278
Լիլիթ Դալլաքյան – Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական բնութագիրը (1990–2020 թթ.) (անգլ.) 291

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ստյոպա Պետոյան – Ավագ Մահտեսի-Հակոբյանցի՝ Շուշի քաղաքում թերթեր հրատարակելու փորձերը (1883–1885 թթ.) (ռուս.) 302
Անուշավան Զաքարյան – Դավիթ Անանունը Վալերի Բրյուսովի դասախոսության մասին 320

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աելիտա Դոլուխանյան – Արարատ Աղասյան. Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք 2 324
Վանո Եղիազարյան – Զաքարիա Ծ. վրդ. Բաղումյան. Կիրակոս Երզնկացու՝ սուրբ Եվագր Պոնտացու երկերի լուծմունքները 332
Արտաշես Շահնազարյան – Կարեն Մաթևոսյան. Անին և անեցիները 338

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Գոհար Վարդումյան – Հակոբ Մանանդյան (ծննդյան 150-ամյակի առթիվ) (ռուս.) 342

Արարատ քհն. Պողոսյան – Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս (ծննդյան 115-ամյակի առթիվ) 347
Սուսաննա Հովհաննիսյան – Էդվարդ Ջրբաշյան (ծննդյան 100-ամյակի առթիվ).......353
Լևոն Չուգասզյան – Բաբկեն Չուգասզյան (ծննդյան 100-ամյակի առթիվ)................358

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Ալբերտ Խառատյան – Լևոն Ջեքիյան (ծննդյան 80-ամյակի առթիվ) 365

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Աննա Ասատրյան – Գիտաժողով՝ «ՀՀ ԳԱԱ – 80. հայ ակադեմիական արվեստագիտության երախտավորները. Քրիստափոր Քուշնարյան»: Միջազգային գիտաժողով՝ «Արամ Խաչատրյան–120»..............................371

ԼՐԱՏՈՒ

Սուրեն Սարգսյան – Ռիչարդ Գասպարի Հովհաննիսյան 379

СОДЕРЖАНИЕ

К 65-ЛЕТИЮ
«ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОГО ЖУРНАЛА»

Лилит Оганисян – Беззаветная преданность (на англ. яз.)..................................3

ИСТОРИЯ

Альберт Харатян – Труд Ованеса Ханны как первоисточник по истории армянских патриаршеств Иерусалима и Константинополя 12
Кристине Костикян – Христиане в Шекинской области и петиция исламизированных армян-удинов (IX–XIX вв.) 30
Арарат Акопян – Историческая оценка проблемы присоединения Восточной Армении к России в советской армянской историографии 46
Гегам Ованнисян – Национальные вопросы в лондонском периодическом издании «Новая жизнь» (1898–1902 гг.) 59
Микаел Мартиросян – Роль Григора Зограпа в заключении российско-германского соглашения 1913 г. 72
Рубен Саакян – Кавказский фронт Первой мировой войны в документах (критические замечания и анализ)..93
Амо Сукиасян, Гаяне Казарян – Пивоварение в Ереванской губернии (конец XIX – начало XX века) 124

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
ВАЛЕРИЯ БРЮСОВА

Петрос Демирчян – Валерий Брюсов в оценке армянской литературно-научной мысли ……139
Сирануш Маргарян – Культурно-историческая школа и ее влияние на произведения Отца Гевонда Алишана и Гарегина Сркандзтянца ……163
Асмик Овсепян – Роль учебника грамматики Григора Магистроса в Сюникской школе ……180

ЛИНГВИСТИКА

Нарине Дилбарян – Ключевые слова семантического поля концепта «человек» в древнеармянском переводе Книги Бытия ……188
Гаяне Чопурян – Отражение фонетических изменений дифтонгов и трифтонгов в армянских эпиграфических надписях (XII–XVI вв.) ……203

ИСКУССТВОВЕДЕНИЕ

Татевик Шахкулян – Музыкальное воплощение образа Давида Сасунского ……218

АРХЕОЛОГИЯ

Арсен Арутюнян – Время сооружения входов у ограды и родника Татевского монастыря ……230
Арсен Бобохян, Саак Таронци, Торк Далалян – «Драконий камень» Харберда и его культурно-мифологический контекст ……246
Сирануш Фаградян – Надписи и изображения печатей армянских патриархов Иерусалима XIX века ……258

ОБСУЖДЕНИЯ

Айказ Геворгян – Этноним таваспар (к вопросу о происхождении названия табасаранцев) (на русск. яз.) ……278
Лилит Даллакян – Сравнительная характеристика южнокавказских этнополитических конфликтов (1990 – 2020 гг.) (на англ. яз.) ……291

ПУБЛИКАЦИИ

Степа Петоян – Проекты издания газет Авака Махтеси-Акопянца в городе Шуши (1883–1885 гг.) (на русск. яз.) ……302

Анушаван Закарян – Давид Ананун о лекции Валерий Брюсова …………………..320

РЕЦЕНЗИИ

Аэлита Долуханян – Арарат Агасян: История искусства: изобразительное искусство, книга 2...324
Вано Егиазарян – Протоархимандрит Захария Багумян: Толкования Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского...332
Арташес Шахназарян – Карен Матевосян: Ани и анийцы...338

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Гоар Вардумян – Акоп Манандян (к 150- летию со дня рождения) (на русск. яз.) ...342
Арарат свящ. Погосян – Католикос всех армян Вазген I (к 115-летию со дня рождения) 347
Сусанна Ованесян – Эдвард Джрбашян (к 100-летию со дня рождения) 353
Левон Чугасзян – Бабкен Чугасзян (к 100-летию со дня рождения)..........................358

НАШИ ЮБИЛЯРЫ

Альберт Харатян – Левон Зекиян (к 80-летию со дня рождения) 365

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Анна Асатрян – Научная конференция «НАН РА–80: заслуженные деятели армянского академического искусствоведения: Христофор Кушнарян». Международная научная конференция «Арам Хачатрян–120»……..........371

ХРОНИКА

Сурен Саргсян – **Ричард Гаспарович Ованнисян** 379

CONTENTS

TO THE 65TH ANNIVERSARY OF THE
“HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL”'

Lilit Hovhannisyan – Unfailing devotion (in Eng.)...3

HISTORY

Albert Kharatyan – The writings of Hovhannes Hanna as a primary source on the history of the Armenian Patriarchies of Jerusalem and Constantinople …………12

Kristine Kostikyan – Christians in the Sheki region and the petition of the Islamized Armenian-Udins (IX–XIX centuries) ……………………………………………30
Ararat Hakobyan – Historical assessment of the issue of joining Eastern Armenia to Russia in the Soviet Armenian historiography ……………………………………46
Gegham Hovhannisyan – National issues in the London periodical "New Life" (1898–1902) ……………………………………………………………………59
Mikael Martirosyan – The role of Grigor Zohrap in the conclusion of the Russian-German Agreement of 1913 ……………………………………………72
Ruben Sahakyan – The Caucasus front of the First World War in the documents (critical remarks and analysis) ……………………………………………………93
Hamo Sukiasyan, Gayane Ghazaryan – Brewing in the Yerevan province (End of the 19th century – beginning of the 20th century) ……………………………………124

LITERARY STUDIES

TO THE 150TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF VALERY BRYUSOV

Petros Demirchyan – Assessment of Valery Bryusov in the Armenian literary and scientific thought ………………………………………………………………...139
Siranush Margaryan – Cultural and historical school and its influence on the works of Father Ghevond Alishan and Garegin Srvandztyants ………………………….163
Hasmik Hovsepyan – The role of the grammar textbook by Grigor Magistros in the Syunik school …………………………………………………………………....180

LINGUISTICS

Narine Dilbaryan – The basic words of the semantic field denoting the concept "Man" in the Ancient Armenian translation of the Book of Genesis …………………...188
Gayane Chopuryan – Phonetic changes of diphthongs and triphthongs in the Armenian epigraphic inscriptions (12–16th centuries) ……………………………………...203

ART

Tatevik Shakhkulyan – Musical embodiment of the character of David of Sassoun …...218

ARCHAEOLOGY

Arsen Harutyunyan – The period of construction of the entrances at the fortification and spring of Tatev Monastery ……………………………………………………230
Arsen Bobokhyan, Sahak Tarontsi, Tork Dalalyan – "Dragon Stone" of Kharberd and its Cultural and Mythological context ……………………………………246
Siranush Fahradyan – Inscriptions and images on the seals of the Armenian Patriarchs of Jerusalem in the XIX century ………………………………………………...258

DISCUSSIONS

Haykaz Gevorgyan – The ethnonym Tavaspar (On the problem of the origin of ethnonym of the Tabasaran people) (in Russ.)......278
Lilit Dallakyan – Comparative characteristics of South Caucasian ethno-political conflicts (1990–2020) (in Eng.) 291

PUBLICATIONS

Stepa Petoyan – Avag Mahtesy-Hakobyants' attempts to publish newspapers in the city of Shushi (1883–1885)......302
Anushavan Zakaryan – David Ananun on the lecture of Valeriy Bryusov......320

REVIEWS

Aelita Dolukhanyan – Ararat Aghasyan. History of art: fine arts, book 2......324
Vano Yeghiazaryan – Proto-Archimandrite Zacharia Baghumyan, Kirakos Erznkatsʿi's commentaries on St. Evagrius Ponticus' Works 332
Artashes Shahnazaryan – Karen Matevosyan. Ani and the residents of Ani 338

OUR HONOURED SCHOLARS

Gohar Vardumyan – Hakob Manandyan (on the occasion of his 150th birthday) (in Russ.) 342
Ararat priest Poghosyan – Vazgen I, Catholicos of All Armenians (on the occasion of his 115th birthday) 347
Susanna Hovhannisyan – Edward Jrbashyan (on the occasion of his 100th birthday)......353
Levon Chugaszyan – Babken Chugaszyan (on the occasion of his 100th birthday)......358

OUR JUBILEES

Albert Kharatyan – Levon Zekiyan (on the occasion of his 80th birthday) 365

SCIENTIFIC LIFE

Anna Asatryan – Scientific Conference "NAS RA-80". Honored artists of Armenian Academic Art Criticism. Christopher Kushnarian". International Scientific Conference "Aram Khachatryan–120"......371

NEWS

Suren Sargsyan – **Richard Gaspar Hovhannisyan** 379

Հայերեն բաժնի խմբագիրներ	Թամար Զաքարյան
	Լիանա Օհանյան
Ռուսերեն բաժնի խմբագիր	Կարինե Ալեքսանյան
Հայերենի սրբագրիչ	Աղավնի Շահինյան
Անգլերենի խմբագիր	Մարինե Ժամկոչյան
Համակարգչային ձևավորում և էջադրում	Գոհար Հովհաննիսյան

Редакторы армянского отдела	Тамар Закарян
	Лиана Оганян
Редактор русского отдела	Карине Алексанян
Корректор армянского отдела	Агавни Шагинян
Редактор английского отдела	Марине Жамкочян
Компьютерный дизайн и пагинация	Гоар Оганнисян

Editors of Armenian segment	Tamar Zakaryan
	Liana Ohanyan
Editor of Russian segment	Karine Aleksanyan
Proofreader of Armenian segment	Aghavni Shahinyan
Editor of English segment	Marine Zhamkochyan
Computer design and pagination	Gohar Hovhannisyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872
Address: 24G Marshal Baghramian av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Официальный сайт журнала: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Official site of the journal: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
E-mail of the journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

---

Հրատ. պատվեր № 1279
Ստորագրված է տպագրության 05. 12. 2023 թ.:
Տպագրական 24,5 մամուլ: Թուղթ № 1, 70x100:
Տպաքանակը՝ 250:

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 1279
Подписано к печати 05. 12. 2023 г.
Печ. 24.5 л. Бумага № 1, 70x100.
Тираж –250.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.